ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
10-ԱՄՅԱԿԻ ԱՌԻՎ:
ՎԵՐԱՆԱՏԵՍՎԱԾ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ
ՏԱՐԵԼԱԿ:

ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ



ՉՈՆ ԲԻՎԵՐ

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ» «DVD» ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Թանկագի՛ն ընկեր,

Սաղմոս 90.12-ում Մովսեսն աղաղակում է Աստծուն. «Սովորեցրո՛ւ մեզ, որ... համարենք մեր օրերը»: Որքան էլ լինի մարդու օրերի թիվն այս երկրի վրա, այն իսկապես որ ոչինչ է՝ հավիտենության համեմատ: Բայց և այնպես, այն, թե ինչպես մենք կտնտեսենք մեզ շնորհված կարճատև ժամանակն այս աշխարհում, որոշելու է այն վարձատրությունը, որը կստանանք, երբ դուրս գանք ժամանակային սահմաններից:

«Հավիտենությամբ շարժվողները» գրքի ուղերձն ամենաազդեցիկ և վերափոխող հայտնություններից է, որոնք ես ստացել եմ Տիրոջ Հոգուց: Այն եկեղեցիները, առաջնորդները և մարդիկ, ովքեր բացահայտել են այս ճշմարտությունները, ձեռք են բերել նոր նպատակներ, հեռանկարներ և վճռականություն՝ Աստծո թագավորությանը ծառայելու համար: Այս ուղերձը ձեզ փոխանցելը պատիվ է ինձ համար:

Ես ուղարկում եմ այս գիրքը ձեզ և այլ քրիստոնյա առաջնորդների ամբողջ աշխարհում՝ որպես իմ սիրո և աջակցության փոքր նշան: Խնդրո՛ւմ եմ, ուսումնասիրե՛ք այս թեման և այլ նյութերը, որոնք հասանելի են առցանց, և փոխանցե՛ք նրանց, ում ճանաչում եք: Ցանկանում եմ, որ ուսումնասիրելով այս էջերում զետեղված ճշմարտությունները՝ հասկանաք այն մեծ ծրագիրը, նպատակը և կոչումը, որոնք Աստված որոշել է ձեզ համար, և մուտք գործեք դրանց մեջ:

Իմ ընկե՛ր, աղոթում եմ, որ ձեր կյանքը վերափոխվի նույն չափով, որով վերափոխվեց իմ կյանքը, երբ ստացա այս ուղերձը: Համոզված եմ, որ եթե ջանասիրաբար ձգտեք ապրել ըստ այս հայտնության, ձեր կյանքը, ընտանիքը և ծառայությունը նույնը չեն մնա: Մեծ սիրով ցանկանում եմ լսել, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ այս ուղերձը ձեր և ձեր հոգատարության ներքո գտնվող մարդկանց կյանքում:

Ձեր եղբայրը Քրիստոսում՝

Ջոն Բիվեր
JohnBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

ՀԱՎԻՏԵՆՈՒՆՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

ՉՈՒ ԲԻՎԵՐ

«Այնքա՜ն հեշտ է խճճվել մեր առօրյա հոգսերի մեջ և չապրել հանուն ամենակարևորի: Ջոն Բիվերի ազդեցիկ գիրքը, որը կոչվում է *«Հավիտենությամբ շարժվողները»*, կխրախուսի, կոգեշնչի և կսպառազինի ձեզ, որպեսզի ձեր կյանքը հավիտենական ազդեցություն ունենա»:

— Քրեյգ Գրոյշել, «Լայֆ.Չրչ» եկեղեցու հովիվ, նաև «#Պայքարներ. հետևել Հիսուսին սելֆիակենտրոն աշխարհում» գրքի հեղինակ

«Եթե փնտրում եք ձեր կյանքի նպատակը, *«Հավիտենությամբ շարժվողները»* գիրքը՝ ձեր պատասխանն է: Շնորհիվ այս կարևորագույն ուղերձի՝ ձեր միտքը վեր կբարձրանա ձեր առօրյայից: Այս գիրքը պարտադիր է ընթերցման համար»:

— Ջոն Կ. Մաքսվել, հանրաճանաչ հեղինակ և քարոզիչ

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գրքի տասնամյակին նվիրված հոբելյանական հրատարակությունը, որի հեղինակն իմ ընկեր Ջոն Բիվերն է, մեծ հիշեցում է այն մասին, որ կյանքն ավելին է, քան մեր օրերի համագումարը: Կարդալով այս գիրքը՝ դուք խաղաղություն և հույս կգտնեք, քանի որ այն հիշեցնում է, որ համաձայնեցնեք ձեր կյանքը վերին կոչման հետ»:

— Սթիվեն Ֆարթիք, «Էլեվեյշն Չրչ» եկեղեցու հովիվ և հանրաճանաչ հեղինակ՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»* ամսագրի

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գրքում Ջոնը, հիմնվելով Աստծո Խոսքի վրա, բացատրում է, թե որքան վճռորոշ է հավիտենության վրա կենտրոնացած մտածելակերպ ունենալը: Համոզված եմ, որ այս ուսմունքը կօգնի Քրիստոսին հավատացողներին՝ ավելի մեծ իմաստություն ձեռք բերել և ավելի լավ հասկանալ, թե ինչպես ապրել այսօր հավիտենության համար»:

— Ջոյս Մայեր, հանրաճանաչ գրող և քրիստոնյա ուսուցիչ

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գիրքը համարձակ կերպով անդրադառնում է մարդու գոյության մեծագույն առեղծվածներից մեկին՝ հավիտենությանը: Իրեն հատուկ պարզ և հիմնավոր մոտեցմամբ Ջոն Բիվերը հետազոտում է Աստվածաշնչում հայտնված իմաստությունն այս մասին և ոգեշնչում է իր ընթերցողներին՝ ապրել հավիտենության համար և ընդլայնել իրենց ազդեցությունը՝ դուրս գալով իրենց կյանքի սահմաններից»:

— Բրայան Հյուսթոն, «Հիլսոնգ» եկեղեցու ավագ հովիվ

«Յուրաքանչյուրը, ով ցանկանում է հավիտենական ժառանգություն կառուցել և առաջանալ Աստծո թագավորության մեջ, պետք է ընդգրկի *«Հավիտենությամբ շարժվողները»* գիրքն իր ամենամյա ընթերցանության ցուցակում: Տրամադրելով ծանրակշիռ աստվածաշնչյան հիմնավորում՝ Ջոնը կոչ է անում և ոգեշնչում է ընթերցողներին առավելագույնս օգտա-

գործել այս երկրի վրա ունեցած ամենամեծ հարստությունը՝ ժամանակը, և հնարավորինս մեծ ազդեցություն թողնել հավիտենության համար: Այս գիրքը ժամանակակից դասական աշխատություն է»:

— Քրիս Հոջիս, «Չրչ ով Հայլենդս» եկեղեցու գլխավոր հովիվ, նաև՝ «Թարմ օդ» և «Չորս գավաթ» գրքերի հեղինակ

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գրքում Զոն Բիվերը հեռացնում է առեղծվածային քողը հավիտենությունից և պատկերավոր բացատրում է, թե ինչպիսի ազդեցություն են ունենալու մեր այսօրվա որոշումներն այն ժամանակ, երբ հեռանանք այս աշխարհից: Դուք չեք կարող թույլ տալ ձեզ՝ անտեսել այս գիրքը»:

— Մարկ Բեթերսոն, «Շրջաններ գծողը» գրքի հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և «Նեյշնլ Քոմյունիթի Չրչ» եկեղեցու գլխավոր հովիվ

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գրքում Զոն Բիվերը կոչ է անում ընթերցողներին մշտապես հավիտենական հեռանկար ունենալ: Զոնը իմ լավ ընկերներից է, և ինձ համար պատիվ է ներկայացնել այս գիրքը»:

— Զենթեզեն Ֆրանկլին, Զորջիա նահանգի Գեյնսվիլ քաղաքում գտնվող «Ֆրի Չեյփել» եկեղեցու ավագ հովիվ և հանրաճանաչ հեղինակ՝ ըստ *«Նյու Յորք Թայմս»* ամսագրի

«*«Հավիտենությամբ շարժվողները»* գիրքը կփոխի ձեր պատկերացումը ժամանակի և այն օգտագործելու մասին: Զոնը փայլուն կերպով մեկնում է մի շարք աստվածաշնչյան ճշմարտություններ, որոնք կօգնեն ձեզ ամեն օրը ապրել՝ ունենալով այնպիսի նպատակ, որը գերազանցում է ձեր ժամանակավոր իրականությունը»:

— Եպիսկոպոս Թի Դի Զեյքս, հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և «ԹիԴիԶեյ էնթերփրայսիս» ընկերության գլխավոր տնօրեն

«Ազդեցիկ, ուշագրավ և խոնարհեցնող գիրք: Ես չէի կարողանում ցած դնել այն: Ուզում եմ, որ ամեն մեկը կարդա: Խնդրում եմ, ժամանա՛կ հատկացրեք դրա համար»:

— Բիլլ ՄակԿարտնի, «Փրոմիս Քիփերս» ծառայություն

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ

ՀՈՒԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝
ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ:
ՎԵՐՄՆԱՏՎԱԾ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ
ՏԱՐԵԼԻԿ:

ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

ՉՈՍ ԲԻՎԵՐ

Driven by Eternity by John Bevere, Armenian
© 2017 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Driven by Eternity
Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: JohnBevere@ymail.com

«Հավիտենությամբ շարժվողները», Ջոն Բիվեր, հայերենով
© 2017 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով,
«Driven by Eternity» վերնագրով:
Ջոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը նվիրում եմ...
նրանց, ովքեր անխոնջ աշխատանք են
կատարում՝ կառուցելով մարդկանց կյանքերը
հավիտենության համար:
Խրախուսվե՛ք ձեր ընթացքի մեջ:
Նրա գալուստը հաստա՛տ է,
և Նրա վարձատրությունն Իր հետ է:
«Եվ սա է հավիտենական կյանքը,
որ ճանաչեն Քեզ՝ միայն ճշմարիտ Աստված,
և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրքի մասին 11

Նախաբան 13

Ներածություն 15

ԲԱԺԻՆ ՄԵԿ

Գլուխ 1. Հավիտենություն 19

Գլուխ 2. *Աֆաբելի թագավորությունը. կյանքն էնդելում* 35

Գլուխ 3. *Աֆաբելի թագավորությունը. Դատաստանի օրը Ա* 55

ԲԱԺԻՆ ԵՐԿՈՒ

Գլուխ 4. Մահացածների հավիտենական տունը 77

Գլուխ 5. Խաբվածների դատաստանը 95

ԲԱԺԻՆ ԵՐԵՔ

Գլուխ 6. Մեծ նահանջը 123

Գլուխ 7. Հիմքը 147

ԲԱԺԻՆ ՉՈՐՍ

Գլուխ 8. *Աֆաբելի թագավորությունը. Դատաստանի օրը Բ* 159

Գլուխ 9. Երկինք 183

Գլուխ 10. Քրիստոսի ատյանը 201

ԲԱԺԻՆ ՀԻՆԳ

Գլուխ 11. Աստծո տունը.....217

Գլուխ 12. Կանչված՝ Աստծուց.....229

ԲԱԺԻՆ ՎԵՑ

Գլուխ 13. Բազմապատկում.....253

Գլուխ 14. Անձնական ազդեցություն.....279

Հավելված. Ինչպես փրկություն ստանալ.....295

Նշումներ.....297

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Դուք կարող եք ընթերցել այս գիրքը սկզբից մինչև վերջ՝ ինչպես և ցանկացած այլ գիրք: Այնուամենայնիվ, նրանց համար, ովքեր ցանկանում են օգտագործել այս գիրքը անհատական կամ խմբային ուսուցման համար, այն բաժանված է վեց բաժինների, որոնցից ամեն մեկին հետևում են հարցեր՝ քննարկման համար: Այս դասընթացը նախատեսված է վեցշաբաթյա ուսուցման համար, բայց դուք ազատորեն կարող եք հարմարեցնել այն ձեր առօրյային:

Ամեն բաժին պարունակում է հետևյալ գլուխները.

Բաժին Մեկ	Գլուխներ 1–3
Բաժին Երկու	Գլուխներ 4–5
Բաժին Երեք	Գլուխներ 6–7
Բաժին Չորս	Գլուխներ 8–10
Բաժին Հինգ	Գլուխներ 11–12
Բաժին Վեց	Գլուխներ 13–14

Եթե դուք ընթերցում եք այս գիրքը *«Հավիտենությամբ շարժվողները»* դասընթացի շրջանակներում, մենք առաջարկում ենք ձեզ դիտել կամ ունկնդրել ամեն շաբաթվա ուսումնական տեսանյութը և պատասխանել ամեն բաժնի համար նախատեսված քննարկման հարցերին ձեր փոքր խմբում: Խնդրե՛ք ձեր խմբի բոլոր անդամներին ընթերցել գրքի համապատասխան գլուխները՝ մինչև ձեր հաջորդ հավաքույթը: Ամեն շաբաթվա համար նախատեսված է մեկական ուսումնական տեսանյութ:

«Հավիտենությամբ շարժվողները» գրքի ուսուցումն առավել պատկերավոր դարձնելու համար Զոնն ընդգրկել է հետաքրքրական և առականման պատմություն Աֆաբելի թագավորության մասին, որում իշխում է ակնառու Զեյլոն թագավորը, իսկ նրա հպատակները նման են մեզ և մեզ շրջապատող մարդկանց: Այն տպավորիչ կերպով պատկերում է *«Հավիտենությամբ շարժվողները»* գրքի ուղերձը: Այս պատմության հերոսները, որոնք թեև հորինված են, բայց իրական մարդկանց նման են, կօգնեն ձեզ՝ ընթերցողին, ավելի լավ ճանաչել և հասկանալ Աստծո թագավորության գաղտնիքները և խորհուրդները:

Դուք կարող եք գտնել Աֆաբելի պատմությունն այս գրքի 2,3,8 գլուխներում: Դրանք նշված են հետևյալ նշանակով ( ) Բովանդակության մեջ:

Բացի այդ՝ այս պատմության հիման վրա պատրաստվել է շատ ազդեցիկ ներկայացում՝ *Աֆաբել աուդիո թատրոնը*, որը հասանելի է Ջոն Բիվերի «CloudLibrary.org» կայքում:

Այս ամենը ձե՛զ համար է:

ՆԱԽԱԲԱՆ

Կգա այն օրը, երբ ամեն մեկս կկանգնի Աստծո առջև: Հարցն այն է, թե արդյո՞ք մենք պատրաստ կլինենք:

Աստվածաշունչը հորդորում է մեզ. «Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ամեն ջանք արե՛ք, որ *համոզված* լինեք ձեր կոչման և ընտրության մեջ» (Բ Պետրոս 1.10, NET):

Պատահե՞լ է, որ համոզված լինեք ինչ-որ բանում, իսկ հետո պարզվի, որ սխալվում էիք: Դա տհաճ բան է: Ինչպես և տղամարդկանց մեծ մասը, ես հաճախ եմ համոզված լինում, որ ընտրել եմ ճիշտ ճանապարհը, ցուցումները, ընթացակարգը, բանաձևը կամ մեթոդները: Այնուամենայնիվ, պատահում է, որ հայտնվում եմ սխալ վայրում կամ ստիպված եմ կրկին սկսել իմ նախագիծը, հավաքակցումը կամ բանաձևը, այս անգամ՝ պատշաճ կերպով հետևելով ցուցումներին: Եվ դա ամեն անգամ հիասթափություն է առաջացնում: Ես զուր տեղը վատնեցի մեքենայիս վառելիքը, իմ ժամանակը, միջոցները և փողը: Ես *համոզված* էի, որ գիտեի ճիշտը, բայց, փաստորեն, չգիտեի:

Ես չեմ ցանկանում կրկնել նույն սխալը հավիտենության հարցում:

Բոլոր գրքերից, որոնք ես գրել եմ, «Հավիտենությամբ շարժվողները» ամենամեծ ազդեցությունն է թողել իմ կյանքում: Առաջին անգամ այն լույս տեսավ մեկ տասնամյակ առաջ, և դրանից հետո ես և իմ թիմն անթիվ վկայություններ ենք ստացել փոխված կյանքերի մասին: Այս գիրքը վերանայելը և թարմացնելը հեշտ առաջադրանք չէր. այնուամենայնիվ, երբ քննարկում էինք գրքի վերահրատարակությունը, ես գիտեի, որ մենք պետք է անեինք դա: Ուժգին զգացում ունեի, որ այս էջերում զետեղված ուղերձը և՛ հրատապ է, և՛ խիստ կարևոր: Մեր՝ Ավետարանի տնտեսների մեծագույն կոչումն է՝ շնորհքով և ճշմարտությամբ պատրաստել մարդկանց հավիտենության համար: Ես ցանկանում եմ, որ դուք հավիտենական *վստահություն* ունենաք:

Գոյություն ունի մի սթափեցնող ճշմարտություն. երբ մենք կանգնենք մեր Արարչի առջև, *շատ ուշ կլինի ամեն ինչ կրկին սկսելու համար:* Հու-

սով եմ և աղոթում եմ, որ երբ ընթերցեք և վերընթերցեք այս ուղերձը, Սուրբ Հոգին կօգտագործի այն, որպեսզի օգնի ձեզ լիարժեք կերպով իրագործեք ձեր հավիտենական ներուժը, և հավիտյան կփոխի ձեզ Իր շնորհքով և ողորմությամբ:

Անկեղծորեն՝
Ջոն Բիվեր,
Մայիս, 2017թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ *առանձնահատուկ բան կա «հավիտենություն»* բառի մեջ, որը գրավում է մեր ուշադրությունը, և նույնիսկ կարող է ազդեցություն թողնել մի ամբողջ պետության վրա: Կա մի պատմություն Արթուր Սթեյսի մասին: Նա ծնվել է Ավստրալիայում, քսաներորդ դարի սկզբին, և նրա կյանքը լի էր անհուսությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի և Մեծ Դեպրեսիայի միջև ընկած ժամանակահատվածում նա անտուն թափառական էր, ով հարբեցողությամբ էր զբաղվում և մանր գողություններ էր անում: 1930 թվականի օգոստոսի 6-ին հանդիպեց Հիսուսին, և նրա կյանքն անդառնալիորեն փոխվեց: Կարճ ժամանակ անց նա լսեց իր հովվի աղաղակը. «Երանի՜ ես կարողանայի գոչել *«հավիտենություն»* բառը Սիդնեյ քաղաքի բոլոր փողոցներում»: Եվ նա այդ աղաղակն ի կատար ածելու մղում զգաց:

Արթուրն ամեն օր արթնանում էր շատ վաղ: Նա մեկ ժամ աղոթում էր, իսկ հետո դուրս էր գալիս տնից՝ ժամը 05:00–05:30-ին, և ճանապարհվում էր այնտեղ, որտեղ Աստված առաջնորդում էր իրեն: Ժամեր շարունակ Սիդնեյ քաղաքի փողոցների մայթերին նա գրում էր մեկ բառ՝ *«հավիտենություն»*, մոտավորապես յուրաքանչյուր 30 մետրի վրա: Ավելի քան քսան տարի նրա գործն առեղծված մնաց բոլորի համար. ո՞վ էր գրում այդ բառը, որը դրդում էր հազարավոր մարդկանց կանգ առնել և մտորել իր՝ թե՛ անմիջական, թե՛ երկարաժամկետ նշանակության մասին: Մի՞թե այս անհայտ մարդը հասկացել էր այս բառի ազդեցությունը և դերը: Այս հանելուկը լուծվեց միայն 1956 թվականին:

Արթուրի մահից երկու տարի անց՝ 1967 թվականին, սիդնեյցի բանաստեղծ Դագլաս Ստյուարտը հրատարակեց այս տողերը՝ անմահացնելով փողոցային որմնանկարիչ-քարոզչի միակ բառը.

Բանաստեղծ Արթուր Սթեյսը՝ երկչոտ, խորհրդավոր,
Ում գործը մեկ զորավոր բառ էր միայն,
Անցավ ժամանակի և տարածության խորքերով,
Որտեղ հնչեց իր բառը, և նա այն լսեց.
«ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ»՝ նման մի զանգի,
Քաղցր ղողանջող՝ երկնքից, մռայլ՝ դժոխքից:

Այս մեկ բառից բաղկացած քարոզը հպվեց ամբողջ Ավստրալիային: Արթուրի ուղերձը պահպանվեց սերունդների համար՝ ճարտարապետ

Ռիդլի Սմիթի կողմից, ով փորագրեց այն պղնձե տախտակի վրա, և նրա աշխատանքը տեղադրվեց Սիդնեյի հրապարակում: Հետագայում այն ցուցադրվեց ավելի քան չորս միլիարդ հեռուստադիտողի: Առաջին անգամ դա տեղի ունեցավ Սիդնեյի Օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ: Երկրորդ անգամ այն երևաց հեռուստադիտողին նոր հազարամյակի նախօրեին՝ զարդարված Սիդնեյի Հարբոր Բրիջ կամրջի հրավառության լույսերով:

Հավիտենությունը գրավում է մարդկանց ուշադրությունը: Ոչ մի ռասա, ցեղ և սեռ չի կարող հակառակվել դրա ձգողությանը: Հավիտենությունը մեր սրտում է մեր ստեղծվելուց ի վեր, և մենք զգում ենք, որ այն մեր գոյության ներհատուկ, թեև՝ անհայտ չափումն է: Այդ իսկ պատճառով, իմաստությամբ կվարվենք, եթե խորապես ուսումնասիրենք այն ամենը, ինչ մեր Արարիչն ասում է հավիտենության մասին: Ի վերջո, Նրա Խոսքը պնդում է. «Հավիտենից հավիտյան Ես Աստված եմ: Ոչ ոք չի կարող հակառակվել այն բանին, ինչ Ես անում եմ» (Եսայի 43.13, TLB): Դուք ընտրել եք այս գիրքը հենց այս պատճառով, և ես հավատում եմ, որ դուք իմաստուն որոշում եք կայացրել:

Աղոթենք՝ մինչև սկսելը: Ես բարձրաձայն աղոթել եմ այս աղոթքն իմ աշխատասենյակում՝ ակնկալելով, որ հիմա դուք կաղոթեք այն ինձ հետ.

> «Հավիտենակա՛ն Աստված, ամեն ինչի Արարի՛չ և տիեզերքի Տե՛ր, ես գալիս եմ Քո առջև Քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով: Ես խնդրում եմ՝ համաձայնելով Քո ծառա Զոն Բիվերի հետ, որ այսօր Դու օծես իմ աչքերը՝ տեսնելու համար, և իմ ականջները՝ լսելու համար, որ տաս ինձ այնպիսի սիրտ, որը կընկալի և կհասկանա այն ամենը, ինչ Դու ասում ես այս ուղերձի միջոցով: Ես գիտակցում եմ, որ Սուրբ Հոգու օգնության կարիքն ունեմ, որպեսզի ճանաչեմ Քո կամքը և ճանապարհներն ինձ համար: Ես ցանկանում եմ հաճեցնել Քեզ իմ կյանքի բոլոր օրերում, ինչպես նաև՝ ամբողջ հավիտենության ընթացքում: Ցո՛ւյց տուր ոչ միայն Քո ճանապարհները, այլև Քո սիրտը, որպեսզի ես ճանաչեմ Քեզ, որովհետև սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեմ Քեզ՝ իմ Երկնային Հորը: Շնորհակալություն Քո զարմանալի հավատարմության, շնորհքի և ողորմության համար»:

Եկե՛ք սկսենք՝ գիտակցելով, որ Սուրբ Հոգին կտա ձեզ այնպիսի խորաթափանցություն և հասկացողություն, որը ինքներդ անկարող եք ձեռք բերել: Սա այնքա՛ն ոգեշնչող է:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋ

ԳԼՈՒԽ 1

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ

«Սովորեցրո՛ւ մեզ առավելագույնս օգտագործել մեր ժամանակը... և մեր ջանքերն արդյունավե՛տ դարձրու: Այո՛, մեր ջանքերն արդյունավե՛տ դարձրու»:
— Սաղմոս 90.12,17, NLT

Գրեթե բոլորը ցանկանում են նշանակալի կյանք ունենալ: Սա ճիշտ և աստվածահաճո ձգտում է: Մովսեսը հենց սա էր խնդրում վերևում բերված հատվածում: Նա սկսեց՝ իմաստություն խնդրելով, որպեսզի առավելագույնս օգտագործեր իր ժամանակը: Շատ բաներ, որոնք կորսված են կյանքում, կարելի է վերականգնել, բայց անհնար է վերադարձնել սխալ կերպով վատնած ժամանակը: Արևը մայր մտնելուն պես՝ օրն անդառնալիորեն հեռանում է:

Մովսեսն ավարտեց իր աղոթքը՝ խնդրելով. «Մեր ջանքերն արդյունավե՛տ դարձրու»: Այս խնդրանքը նույնությամբ կրկնվում է, և պատճառն այն չէ, որ Մովսեսը լավ չէր տիրապետում քերականությանը կամ վատ հիշողություն ուներ: Կրկնությունը՝ շեշտադրման ձևերից մեկն է. սա մի հնար է, որն օգտագործվում էր հին եբրայերեն գրավոր խոսքում: Այսօր, երբ մենք ցանկանում ենք շեշտադրել որևէ բառ կամ արտահայտություն, կարող ենք օգտվել մի քանի հնարներից: Մենք կարող ենք գրել այդ բառը կամ արտահայտությունը թավատառով կամ շեղագրով, ընդգծել այն, ամբողջովին գրել գլխատառերով, շեշտ կամ բացականչական նշան դնել: Այս ամենի նպատակն է՝ ուղղել ընթերցողի ուշադրությունը շատ կարևոր մտքերի վրա: Հրեա գրողները կրկնակի էին գրում որևէ բառ կամ արտահայտություն՝ այն շեշտադրելու համար: Նրանք ընդհանրապես հակված չէին չափազանցություններ անելուն, այլ մեծ զգուշությամբ էին ընտրում իրենց խոսքերը: Այն, որ Մովսեսի խոսքերը կրկնվում են Աստվածաշնչում, ցույց է տալիս, որ հաջողությունը ոչ միայն Աստծո կամքն է մեզ համար, այլև՝ որ Նա ի սրտե ցանկանում է դա: Հենց Նա է շեշտադրել այս արտահայտությունը:

Մենք ստեղծված ենք հաջողությունների համար: Աստված ցանկանում է, որ մեր կյանքը նշանակալի լինի: Սա, նախ և առաջ, եղել է Աստծո ցանկությունը, ոչ թե մերը: Նա հայտնել է Իր ցանկությունն Աստվածաշնչի միջոցով: Թույլ տվեք ընդամենը երկու օրինակ բերել: Առաջինը՝ «Քո Տեր Աստված *հաջողակ* կդարձնի քեզ՝ քո բոլոր գործերում» (Երկրորդ Օրինաց 30.9, NLT): Ուշադրություն դարձրեք, որ գրված է «*բոլոր»,* ոչ թե «*որոշ»* գործերում:

Մեկ այլ հատվածում գրված է. «Այս օրենքի գիրքը քո բերանից չհեռանա, այլ գիշեր և ցերեկ նրա վրա մտածես, որ պահես և կատարես բոլոր նրա միջի գրվածի պես, որովհետև այն ժամանակ *ճանապարհները հաջողակ կանես*, և այն ժամանակ *խելամուտ կլինես»* (Հեսու 1.8):

Անհրաժեշտ է աստվածային իմաստություն՝ հաջողությունը վայելելու համար: Աստվածաշունչը պնդում է. «Նա, ով իմաստություն է սիրում, իր շահն է սիրում, և հաջողակ կլինի» (Առակաց 19.8, TLB): Իմաստությունը տալիս է մեզ անհրաժեշտ գիտելիք և կարողություն՝ պատշաճ ժամանակին ճիշտ ընտրություններ կատարելու համար: Իմաստությունը պարզապես խելամիտ մարդկանց հատուկ հատկանիշ չէ. այն պատկանում է նրանց, ովքեր ունեն Տիրոջ երկյուղը և Քրիստոսի մեջ են: Եթե դուք ձգտում եք հավիտենական նշանակություն ունեցող կյանք կառուցել, պետք է անեք դա աստվածային իմաստությամբ, և այս ուղերձը հենց դրա մասին է:

Իմաստությունից ծնվում է հաջողությունը, որն իր հերթին բերում է հարատև բավականություն և վարձատրություններ. «Եթե դու իմաստուն ես, քո իմաստությունը կվարձատրի քեզ» (Առակաց 9.12, NIV): Տերը ոչ միայն ցանկանում է, որ դուք իմաստուն լինեք, այլև փափագում է վարձատրել ձեզ դրա համար: Մեկ այլ խոսքում գրված է. «Տերը օրեցօր տեսնում է աստվածապաշտ մարդկանց բարի գործերը և հավիտենական վարձատրություններ է տալիս նրանց» (Սաղմոս 37.18, TLB):

Այն, որ Աստված ցանկանում է մեր հաջողությունը, վերջին տարիներին շեշտադրվել է եկեղեցու մեծամասնության մեջ, և դա ճիշտ է: Այնուամենայնիվ, հաճախ հաջողությունն ընկալվում է՝ ըստ հասարակության բնորոշման, ոչ թե՝ Աստծո կարծիքի: Այն դիտարկվում է ժամանակավոր, ոչ թե հավիտենական տեսանկյունից: Արդյունքում՝ մեր տեսիլքը և պատկերացումներն անորոշ են դառնում, և մենք սկսում ենք ձգտել սխալ բաների:

Մեկ օր բոլորս կանգնելու ենք տիեզերքի Դատավորի՝ Հիսուս Քրիստոսի առջև: Եթե մենք ապրել ենք աստվածային իմաստությամբ

և պտղաբեր ենք եղել, մենք հավիտենական վարձատրություն կստանանք: Եթե շեղվել ենք մեր ընթացքից, մենք կա՛մ կպատժվենք, կա՛մ հավիտենական կորուստ կկրենք: Այնպես որ, դուք իմաստությամբ կվարվեք, եթե մի քանի ժամ տրամադրեք, որպեսզի իմանաք Աստծո չափանիշների մասին:

Այս գրքում խոսելու ենք այն մասին, թե ինչպես դարձնեք ձեր կյանքը նշանակալի ոչ միայն այսօր, այլև ամբողջ հավիտենության ընթացքում: Աստվածաշունչը պարզորեն խոսում է այս մասին: Եթե մենք պետք է հավիտենական հեռանկար ունենանք, նախ՝ հասկանանք, թե ինչ է հավիտենությունը:

Հավիտենություն

Ուշադրությա՛մբ կարդացեք այս երկու խոսքերը.

«Ոչ ոք չի կարող սկսել հասկանալ հավիտենությունը» (Հոբ 36.26, TLB):

«...հավիտենությունը դրել է նրանց սրտում» (Ժողովող 3.11):

Հավիտենություն... Ի՞նչ է այն: Ինչպե՞ս կարելի է սահմանել այն: Եվ ինչպե՞ս կարելի է հասկանալ այն: Մի բառարան այն սահմանում է որպես *«անսահմանափակ ժամանակ»*[1], իսկ մյուսը՝ *«գոյության վիճակ՝ ժամանակից դուրս»*[2]: Ինչպե՞ս մի բառարանը կարող է սահմանել հավիտենությունը՝ որպես գոյություն ժամանակի մեջ, իսկ մյուսը՝ որպես գոյություն ժամանակից դուրս: Եվ ինչո՞ւ ոչ ոք չի անդրադարձել սրան: Մի՞թե մենք կասկածի չէինք ենթարկի երկու տարբեր գիտական գրքեր, եթե դրանք, սահմանելով ինչ-որ երևույթ այս աշխարհում, նշեին, որ այն գոյություն ունի տարբեր պայմաններում: Օրինակ՝ եթե մի գիրք սահմաներ ձկանը որպես ողնաշարավոր, որն ապրում է ջրում, իսկ մյուսը նշեր, որ այն ապրում է անջուր միջավայրում, մենք անմիջապես կեզրակացնեինք, որ դրանցից մեկը սխալ է, և կհրաժարվեինք սխալ սահմանումից: Այդ դեպքում, ինչո՞ւ մենք կասկածի չենք ենթարկում հավիտենության սահմանումներն այս բառարաններում և չենք հրաժարվում դրանցից մեկից:

Բանն այն է, որ հավիտենությունը չի կարող մտովի ընկալվել: Մեր միտքը սահմանափակ է. այն անկարող է ընկալել հասկացություններ, որոնք վերաբերում են անվերջությանը կամ հավիտենությանը:

Թույլ տվեք բացատրել: Փորձեք պատկերացնել, թե որտեղ է ավարտվում տիեզերքը: Մտածե՛ք դրա սահմանների մասին: Եթե կարող եք պատկերացնել դա, ապա ի՞նչ կգտնեիք տիեզերքի եզրին:

Պա՞տ: Ինչի՞ց այն պատրաստված կլիներ: Որքա՞ն կլիներ դրա հաստությունը: Մի՞թե այդ պատի մյուս կողմը կլիներ տիեզերքի վերջնական սահմանը: Եթե այո, ի՞նչ կլիներ այդ սահմանից դուրս: Կրկի՞ն՝ տարածություն: Իսկ մի՞թե այն չէր կարող համարվել տիեզերքի շարունակությունը: Եվ որտե՞ղ կլիներ դրա ավարտը: Կարո՞ղ է ձեր միտքն ընկալել տիեզերքի անսահմանությունը: Պարզապես մի պահ մտածե՛ք այս մասին:

Կամ՝ պատկերացրեք հատակ չունեցող փոս: Կարո՞ղ եք պատկերացնել, որ ընկնելով փոսը՝ երբեք չեք ընկնի: Դուք երբեք չեք հասնի հատակին, և ո՛չ էլ կտեսնեք այն: Դուք պարզապես հավիտյան կընկնեք: Այս օրինակի մեջ կա ոչ թե մեկ, այլ երկու բան, որոնք չեն կարող ընկալվել մեր կողմից: Առաջինը՝ այն, որ փոսը հատակ չունի, և երկրորդը՝ այն, որ մենք անվերջ կընկնենք: Սա դժվար է ընկալել և նման է գիտական ֆանտաստիկայի. այնուամենայնիվ, Աստվածաշունչը յոթ անգամ խոսում է նման մի վայրի մասին:

Իսկ Աստվա՞ծ՝ մարդու Արարիչը: Մի պահ մտածե՛ք Նրա սկզբի կամ, ավելի ճիշտ, անսկիզբ լինելու մասին: Աստվածաշունչը հռչակում է, որ Նա «հավիտենից հավիտյան» է: Եթե Նա ծնված չէ, և եթե ոչ ոք չի ստեղծել Նրան, ինչպե՞ս է սկիզբ առել Նրա գոյությունը, և ինչպե՞ս է Նա Աստված դարձել:

Իրականում, Նա չի դարձել Աստված, քանի որ սաղմոսերգուն հռչակում է. «Դեռ որ սարերը չէին ծնված, և երկիրս ու աշխարհս չէիր ստեղծել, հավիտենից մինչև հավիտյան Դու ես Աստված» (Սաղմոս 90.2): Մի պահ մտորե՛ք սրա շուրջ: Եթե շարունակեք մտորել, ձեր մտավոր դատողությունները կկանգնեն փակուղու առջև, քանի որ Հոբի գրքում գրված է. «Ոչ ոք չի կարող սկսել հասկանալ հավիտենությունը»:

Դրված՝ մեր սրտերում

Այն, ինչն իսկապես անհասանելի է մեր մտքի համար, Արարիչը դրել է մեր սրտում: Հավիտենությունը հայտնի է մեր սրտին: Այն ամեն մարդու հետ է՝ նրա ծնվելու պահից ի վեր: Ահա թե ինչու է գրված. «Անզգամն ասաց իր *սրտում*, թե Աստված չկա» (Սաղմոս 14.1): Ուշադրություն դարձրեք, որ Աստվածաշնչում գրված չէ. «Անզգամն ասաց իր *մտքում»:* Կան շատ աթեիստներ, ովքեր կտրականապես մերժում են Աստծո գոյությունը, բայց իրենց սրտում գիտեն, որ Նա գոյություն ունի, որովհետև հավիտենությունը դրված է այնտեղ: Նրանք դեռևս այլասերության աստիճան չեն խստացրել իրենց սրտերը:

Ես մի ընկեր ունեի, ով տարիներ առաջ համառ աթեիստ էր. ամեն դեպքում, իրեն այդպիսին էր համարում: Նա թույլ չէր տալիս ոչ ոքի՝ վկայել իրեն: Մեկ անգամ նա նույնիսկ իր աշխատակիցներից մեկի ձեռքից խլեց Աստվածաշունչը, գետնին գցեց և սկսեց տրորել՝ անիծելով այդ մարդուն և նրա Աստվածաշունչը: Նա թույլ ու անմիտ անվանեց այդ քրիստոնյային:

Որոշ ժամանակ անց՝ տարիներ շարունակ աթեիստական հայացքներ դավանելուց հետո, այդ մարդու մոտ կրծքավանդակի սուր ցավեր սկսվեցին: Բժիշկները հետազոտական վիրահատություն կատարեցին կրծքավանդակի վրա: Նրանք բացեցին և անմիջապես փակեցին այն՝ ասելով, որ նա չի ապրի նույնիսկ քսանչորս ժամ:

Այդ գիշեր նա մահճակալին պառկած՝ հասկացավ, որ գնում է դեպի իր հավիտենական բնակավայրը՝ այնտեղ, որտեղ բոլորովին չէր ցանկանա հայտնվել: Որտեղի՞ց նա գիտեր այդ մասին, եթե ոչ ոքի թույլ չէր տալիս կիսվել իր հետ Աստծո Խոսքով: Միգուցե պատճառն այն է, որ հավիտենությունը դրված էր նրա սրտո՞ւմ: Աստվածաշունչը հայտնում է հետևյալը ամբողջ մարդկության մասին. «Որովհետև ճշմարտությունն Աստծո մասին՝ բնազդաբար հայտնի է նրանց. Աստված դրել է գիտելիքն այդ մասին նրանց սրտերում» (Հռոմեացիների 1.19, TLB):

Այդ գիշեր իմ ընկերոջ սիրտը դադարեց բաբախել: Նա հեռացավ իր մարմնից և իջավ թավ խավարի մեջ: Խավարն այնքա՜ն թավ էր, որ նրան թվաց, թե հագել էր այն. նա չէր տեսնում նույնիսկ լույսի նշույլ: Բավականին երկար տևեց նրա ընկնելու ընթացքը, հետո նա չարչարվող մարդկանց սարսռեցնող ճիչեր լսեց: Մի մեծ ուժ ձգում էր նրան դեպի դժոխքի դարպասը, բայց հանկարծ նա վերադարձավ իր մարմնի մեջ. նա կրկին ողջ էր:

Հաջորդ առավոտյան նա կանչեց միակ քրիստոնյային, որին ճանաչում էր: Նրա ընկերը եկավ և քարոզեց Հիսուս Քրիստոսի շնորհած փրկության Բարի լուրը: Հենց որ այդ մարդն ընդունեց Հիսուս Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ, նրա ընկերն աղոթեց նրա բժշկության համար: Երեք շաբաթ անց նա դուրս գրվեց հիվանդանոցից: Նա ապրեց ևս մի քանի տասնամյակ, մինչև որ գնաց դեպի իր հավիտենական կյանքը. այդ մարդը քայլող հրաշք էր:

Աթեիստ եղած ժամանակ նա պնդում էր, որ Աստված չկա, սակայն հավիտենությունը նրա սրտում էր: Անզգամը կամ հիմարը այն մարդն է, ով ոչ միայն մտովի է մերժում Աստծուն, այլև հակառակվում է իր սրտում այն աստիճան, որ նրա խիղճը լիովին բթանում է: Նման մարդուն անկարելի է հասնել: Այլ բան է, երբ մարդը հարում է ինչ-որ

համոզմունքի, որին նա հավատում է իր մտքում. դա կարելի է փոխել: Այնուամենայնիվ, բոլորովին այլ բան է, երբ նրա սիրտը լիովին խստացած է: *«Անգերի նոր աստվածաշնչյան բառարանը»* սահմանում է «անզգամ» կամ «հիմար» բառը հետևյալ կերպով. «Աստվածաշնչում «հիմարը» առաջին հերթին այն մարդն է, ով թողնում է Տիրոջ երկյուղը և մտածում ու վարվում է այնպես, ասես անպատիժ կերպով կարող է անարգել Աստծո արդարության հավիտենական սկզբունքները»[3]:

Իրականում, հիմարը կարող է մտովի ընդունել Աստծուն, բայց նա հերքում է Նրա գոյությունն իր սրտում, և նրա կյանքն արտացոլում է դա: Հենց Աստծո երկյուղի շնորհիվ է, որ Սուրբ Հոգին կարող է հաղորդակցվել մեր սրտի հետ: Երբ մենք կորցնում ենք այն, մեզ համար այլևս հույս չի մնում: Պողոսն ասաց. «Մարդիկ եղբայրնե՛ր, Աբրահամի ցեղի որդինե՛ր, և ով որ ձեզանում *աստվածավախ է*. ձեզ ուղարկվեց այս փրկության խոսքը» (Գործք 13.26): Միայն Աստծո երկյուղն ունեցող մարդիկ կարող են լսել հավիտենական կյանքի խոսքերը:

Հավիտենության սահմանումը

Հավիտենությունը դրվել է մեր սրտերում, թեև մենք չենք կարող հասկանալ այն մեր մտքով: Այնպես որ, այն սահմանելիս՝ կխնդրեմ ձեզ, որ ընկալեք իմ խոսքերը ձեր սրտով: Իրականում, դուք պետք է անեք դա այս գիրքն ուսումնասիրելու ընթացքում, եթե ցանկանում եք օգուտ ստանալ դրանից: Իսկ ինչպե՞ս անել դա: Առաջին հերթին, ընդունե՛ք, որ ունեք Սուրբ Հոգու օգնության կարիքը և խնդրե՛ք Նրան օգնել ձեզ: Նա հաղորդակցվում է ձեր ներսի մարդու հետ, ոչ թե՝ ձեր մտքի: Երկրորդը՝ երբ որևէ խոսք այս գրքում հպվի ձեր սրտին, կա՛նգ առեք և մտորե՛ք: Արագորեն մի՛ ընթերցեք ամբողջ գիրքը: Եթե այդպես վարվեք, այն օգտակարությունը, որը կարող եք ստանալ այս գրքից, սահմանափակ կլինի:

Կիրառե՛ք այս երկու պարզ քայլերը, որպեսզի ընդունեք Աստծո հավիտենական խոսքի ամբողջական ազդեցությունը ձեր կյանքում, և դուք հավիտյան փոխված կլինեք: Դավիթը գրում է. «Իմ սրտում թաքցրի Քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (Սաղմոս 119.11): Մի՛ ընթերցեք այս գիրքը՝ պարզապես մտովի հասկանալու համար, քանի որ դուք հեշտորեն կարող եք մոռանալ կամ կորցնել ձեր ստացած գիտելիքը: Թույլ տվեք, որ Աստծո Խոսքը թաքնվի ձեր սրտում՝ մտորումների և աղոթքների միջոցով:

Հավիտենությունը մշտատև է. այն վերջ չունի: Այնուամենայնիվ, հավիտենությունը՝ պարզապես անվերջ ժամանակ չէ, քանի որ այն ենթա-

կա չէ ժամանակին: Հավիտենությունը վեր է ժամանակից: Եթե մենք պատկերացնենք հավիտենությունը միայն որպես անվերջ տևող մի բան, մենք ամբողջությամբ չենք ընկալի այն:

Հավիտենությունը լավագույնս հասկանալու համար պետք է նայենք Աստծուն: Նա անսահման է զորությամբ, գիտելիքով, իմաստությամբ, փառքով և այլն: Նա ինքնագո է. Նա հավիտյան Աստված է եղել և հավիտյան Աստված կլինի: Նրա անուններից մեկը «Հավիտենության Հայր» է (Եսայի 9.6), իսկ այլ թարգմանությունների մեջ՝ «Հավիտենական Հայր»: Նա կոչվում է «Հավիտենից Թագավոր» (Ա Տիմոթեոս 1.17, AMP): Այն ամենը, ինչը հավիտենական է, Նրանում է: Իրականում, հավիտենությունն իսկ գտնվում է Նրանում: Այն ամենը, ինչը Նրանից դուրս է, ժամանակավոր է և ենթակա է փոփոխման: Որքան էլ այն բարի, ազնիվ, հզոր կամ մնայուն թվա, ի վերջո հասնելու է ավարտին: Նույնիսկ երկիրը և տիեզերքը կփոխվեն, բայց Նա՝ ոչ:

> «Տե՛ր, սկզբում Դու դրեցիր երկրի հիմքը, և երկինքները Քո ձեռքերի գործն են: Նույնիսկ դրանք կկործանվեն, բայց Դու կմնաս հավիտյան: Դրանք կմաշվեն հին հագուստի պես: Դու կգալարես դրանք հին վերարկուի պես: Դրանք կանհայտանան հին հագուստի պես, բայց Դու միշտ նույնն ես. Դու երբեք չես ծերանա» (Եբրայեցիների 1.10–12, NLT):

Բացի այն, որ Նրա գոյությունը երբեք չի դադարի, Նա հավիտյան նույնն է: Աստվածաշունչը հայտնում է.

> «Ամեն մարմին խոտի պես է, և մարդու ամեն փառքը՝ խոտի ծաղկի պես: Խոտը չորացավ, և նրա ծաղիկը թափվեց, իսկ Տիրոջ Խոսքը մնում է հավիտյան, և սա այն խոսքն է, որ ձեզ ավետարանվեց» (Ա Պետրոս 1.24,25):

Աստված հավիտենական է. նշանակում է՝ այն, ինչ Նա խոսում է, նույնպես հավիտենական է: Նա չի կարող ստել, և Նրա ասածը չի կարող չկատարվել: Հակառակ դեպքում, ամեն ինչ կընկղմվեր բացարձակ խավարի մեջ, որովհետև Նա լույս է և ամեն ինչ պահում է Իր Խոսքով: Այն, ինչ Նա ասում է, երբեք չի կարող փոփոխվել. հակառակ դեպքում, Նա այլևս հավիտենական չէր լինի: Սա հաստատ հիմք է, որի վրա մենք կարող ենք կառուցել մեր կյանքը:

Հավիտենական դատաստաններ

Շատերն այսօր չեն կառուցում իրենց կյանքը հավիտենության (Աստծո Խոսքի) վրա. նրանց հիմքը՝ մշակութային մտածելակերպը, ավանդությունը, ենթադրությունները և պատկերացումներն են այն մա-

սին, թե ով է Աստված: Սա չի վերաբերում միայն ոչ քրիստոնյաներին, այլև՝ շատ հավատացյալների: Սարսափելի է, երբ մարդը հավատում է ժամանակավոր սկզբունքների՝ դրանք հավիտենական ճշմարտություններ համարելով: Նման համոզմունքներ ունեցող մարդու կյանքը երերուն հիմք ունի և, իհարկե, նրան անկում է սպասվում: Նա հավատում է ստի և խաբված է:

Ես զարմացած եմ, թե որքան մարդկանց եմ հանդիպել, որոնց կյանքը կառուցված չէ հավիտենական արժեքների վրա: Ոմանք ասում են, որ հավատում են Աստծուն և Նրա Որդուն, բայց այն անձը, ում նրանք դավանում են, Նա չէ, Ով հայտնված է Իր Խոսքում: Խաբեությունը խորը արմատներ ունի: Ինչպե՞ս նրանք կարող են հավատալ իրենց մտքից բխող պատկերացումներին և հասարակության կողմից ձևավորված գաղափարներին, եթե, համաձայն Սուրբ գրքի, դրանք բացահայտ կերպով հակառակ են Աստծո էությանը: Հիսուսն ասաց.

> «…Իմ խոսքերը չընդունողը ունի իրեն դատողին. այն խոսքը, որ Ես խոսեցի, նա կդատի նրան հետին օրը: Որովհետև Ես Իմ անձից չխոսեցի, բայց Ինձ ուղարկող Հայրը, Նա պատվեր տվեց Ինձ, թե ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խոսեմ» (Հովհաննես 12.48,49):

Գոյություն ունի Դատաստանի օր, որը հաստատվել է աշխարհի հիմնադրման ժամանակվանից (տե՛ս Գործք 17.31): Այդ օրը չի բերելու նոր հայտնություններ ճշմարտության մասին. այն պարզապես կորոշի ամեն ինչ՝ համաձայն արդեն իսկ հայտնված ճշմարտության: Աստծո Խոսքը, որը մենք հիմա ունենք, կդատի մեզ այդ վերջին օրը: Այդ դատաստանը հավիտենական է: Այդ դատավճիռները վերջնական են: Չի լինելու ոչ մի բացառություն, փոփոխություն կամ վերանայում: Մի՞թե ավելի լավ չէ իմանալ, թե ինչ է Նա ասում, և ապրել համաձայն Նրա խոսքերի, քան ենթադրություններ անել:

Այդ օրվա դատավճիռները կոչվում են *հավիտենական դատաստաններ* (տե՛ս Եբր. 6.2): Այլ կերպ ասած՝ այդ օրը կայացրած որոշումները (հիմնված այն բանի վրա, թե որքանով ենք մենք համապատասխանեցրել մեր կյանքն Աստծո հավիտենական Խոսքին) կորոշեն, թե ինչպես ենք անցկացնելու ամբողջ հավիտենությունը: Այդ որոշումները երբեք չեն փոփոխվելու, քանի որ դրանք *հավիտենական դատաստաններ* են:

Շատ-շատերը՝ թե՛ հավատացյալներ, և թե՛ անհավատներ, տգիտորեն թույլ են տալիս, որ այս հաստատված դատաստանը վրա հասնի՝ առանց դրա մասին որևէ բան իմանալու: Նրանք կեղծ հույսեր են փայ-

փայում՝ հավատալով այնպիսի բաների, որոնց մասին Աստվածաշունչը չի խոսում: Ոմանք մտածում են, որ Աստված հաշվի կառնի իրենց բարի գործերը, և եթե դրանք չար գործերից շատ լինեն, նրանք բարեհաճություն կստանան: Մյուսները, ովքեր դավանում են, որ վերստին ծնված են, մտածում են, որ չեն կանգնելու Հիսուսի առջև՝ որպես իրենց Դատավորի, որովհետև Նա իրենց Փրկիչն է: Նրանք հավատում են, որ ազատված են ամեն տեսակի դատաստանից, և հենց նրանք են ամենից շատ անակնկալի գալու: Կան նաև մարդիկ, ովքեր մտածում են, որ վերջում ամեն ինչ լավ է լինելու. նրանք հավատում են ոչ սուրբգրային ողորմության:

Նոր կտակարանը չի ներկայացնում և չի սովորեցնում այս բաները: Այս և բազմաթիվ այլ հասկացություններ, որոնք մարդիկ կազմել են իրենց մտքում, ժամանակավոր են, և այդ օրը դրանք անզոր կլինեն: Դատաստանի օրը լինելու են բազմաթիվ ապշած տղամարդիկ և կանայք, և անձամբ ես կարծում եմ, որ ավելի շատ անակնկալի կգան մարդիկ, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, քան՝ անհավատները:

Վստահություն Դատաստանի ժամանակ

Այնպես չէ, որ մենք պետք է վախով համակված լինենք Դատաստանի օրը: Մենք կարող ենք վստահությամբ կանգնել Դատաստանի առջև:

> «Եվ Աստծո մեջ ապրելով՝ մեր սերն ավելի կատարյալ է դառնում: Այնպես որ, մենք չենք վախենա Դատաստանի օրը, այլ կարող ենք վստահությամբ կանգնել Նրա առջև, որովհետև մենք նման ենք Քրիստոսին այստեղ՝ այս աշխարհում» (Ա Հովհաննես 4.17, NLT):

Ուշադրություն դարձրեք այս հատվածին. «Աստծո մեջ ապրելով՝ մեր սերն ավելի կատարյալ է դառնում»: Մենք վստահություն կունենանք Դատաստանի օրը այն դեպքում, եթե Աստծո սերը կատարյալ դառնա (կամ՝ հասունանա) մեզանում:

Շատերը եկեղեցում սայթաքում են հենց այս հարցում: Նրանք դիտարկում են Աստծո սերը ժամանակավոր, ոչ թե հավիտենական կյանքի լույսի ներքո: Գոյություն ունի պատկերացում սիրո և բարության մասին, որը հիացմունք է պատճառում թե՛ մեր հասարակությանը, թե՛ շատերին եկեղեցում, բայց այն հիմնված է մարդկային չափանիշների վրա, որոնք իրականում հակառակ են Աստծո սիրուն: Թույլ տվեք մի քանի տարածված օրինակներ բերել:

«Մենք շատ ենք սիրում իրար և ծրագրում ենք ամուսնանալ»: Այս պատճառաբանությունը հաճախ կարելի է լսել, երբ զույգն ապրում է սեռական կյանքով՝ նախքան ամուսնանալը: Սա մեղք է նույնիսկ այն դեպքում, եթե նրանք պահեն իրենց խոստումը և ամուսնանան: Այնուամենայնիվ, հաճախ ես տեսել եմ, որ նման զույգերն այդպես էլ չեն ամուսնացել: Նրանք մոռացել են պարզ հորդորն Աստծո Խոսքից. «Ամուսնությունը պետք է պատիվ ստանա բոլորի կողմից, և ամուսնական անկողինը պետք է անարատ պահվի, որովհետև Աստված կդատի ամուսնական դավաճանություն թույլ տվողներին և սեռականորեն անբարո մարդկանց» (Եբրայեցիների 13.4, NIV): Ուշադրություն դարձրեք, որ Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը չի գրում. «...ամուսնական դավաճանություն թույլ տվողներին և բոլոր սեռականորեն անբարո մարդկանց, ովքեր եկեղեցի չեն հաճախում»: Ո՛չ, այս խոսքը վերաբերում է նրանց, ովքեր նման կերպով են ապրում:

«Ես գիտեմ, որ չասացի ամբողջ ճշմարտությունը, բայց այսպես մենք գործարք կկնքենք, իսկ հետո պատշաճ կերպով կսպասարկենք նրանց»: Այս արդարացումը հաճախ կարելի է լսել գործարար մարդկանցից, ովքեր ցանկանում են վաճառք ունենալ, որը, իրենց համոզմամբ, շահավետ է հաճախորդի համար, բայց նրանք պետք է մի փոքր աղավաղեն փաստերը, որպեսզի հաճախորդը որոշում կայացնի ընդունել իրենց առաջարկը: Նրանք մեղք են գործում, քանի որ ստում են, և բացի այդ՝ գործարքը միշտ ավելի շահավետ է լինում հենց իրենց համար: Մի՞թե նրանք մոռացել են Աստծո Խոսքում արված զգուշացումը. «Բոլոր ստախոսների (ովքեր գիտակցաբար սուտ են ասում խոսքով կամ գործով) [բոլոր այս մարդկանց] բաժինը կրակով և ծծումբով բորբոքված լճի մեջ է» (Հայտնություն 21.8, AMP):

«Այն, ինչ ես ասել եմ նրա մասին, ճշմարտություն է»: Այս խոսքերը հաճախ կարելի է լսել այն մարդկանցից, ովքեր վատ են խոսում (բամբասում են կամ չարախոսում) իրենց աշխատակցի, ընկերոջ, տնօրենի և այլոց մասին: Իրականում, դուք կարող եք հարյուր տոկոսով ճիշտ լինել, բայց և սխալվել՝ համաձայն հավիտենական չափանիշների: Ինչպես հիշում եք, Նոյի կրտսեր որդին՝ Քամը, ճշտորեն հայտնեց իր եղբայրներին իր հոր մերկության և արբածության մասին: Այնուամենայնիվ, իր հորն անարգելու արդյունքում նա անեծք բերեց իր ցեղի վրա, որը տևեց սերունդներ շարունակ: Մի՞թե բամբասողները կամ չարախոսողները մոռացել են հավատացյալներին ուղղված հորդորն Աստծո Խոսքից. «Մի՛ տրտնջացեք իրարից, իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, որ Աստված չդատի ձեզ: Որովհետև ահա, մեծ Դատավորը գալիս է: Նա կանգնած է դռան մոտ» (Հակոբոս 5.9, NLT):

Կարելի է անթիվ նման օրինակներ բերել, բայց դրանց ընդհանրությունն այն է, որ դրանք հակառակ են Աստծո հավիտենական կամքին: Սարսափելին այն է, որ շատերը, ովքեր այս կերպով են ապրում և նման անմեղ թվացող արդարացումներ ունեն, կարող են եկեղեցի հաճախել, հաճելի վարք ունենալ և օրինակելի քաղաքացիներ համարվել: Բայց որքանո՞վ են նրանք համապատասխանում Աստծո հավիտենական չափանիշներին:

Ավելի վաղ իր նամակում Հովհաննեսը ցույց տվեց, թե ինչպես կատարելագործել (հասունացնել) Աստծո սերը.

> «Ով որ ասում է՝ ես գիտեմ Նրան [ես ըմբռնում եմ, ճանաչում եմ, հասկանում եմ Նրան և ծանոթ եմ Նրա հետ (Հիսուս Քրիստոսի)], բայց չի պահում Նրա պատվիրանները (ուսմունքները) և չի հնազանդվում դրանց, ստախոս է, և (Ավետարանի) Ճշմարտությունը նրանում չէ: Բայց նա, ով պահում է (գանձի պես) Նրա Խոսքը [ով պահում է իր մտքում Նրա կանոնները, ով պահում է Նրա ուղերձը ամբողջությամբ], Աստծո սերը ճշմարտապես և սերը Աստծո հանդեպ, կատարյալ է դառնում նրանում...» (Ա Հովհաննես 2.4,5, AMP):

Հիշե՛ք, որ Աստծո կատարյալ (կամ՝ հասունացած) սիրո պատճառով է, որ մենք կարող ենք վստահաբար կանգնել մեր Դատավորի առջև: Հովհաննեսը պարզ ասում է, որ Աստծո սերը կատարյալ է դառնում Նրա պատվիրանները պահելով, ոչ թե հասարակության համար ընդունելի վարք ունենալով: Ուշադրություն դարձրեք, որ Եվային չգրավեց բարու և չարի գիտության ծառի *չար* կողմը. նա հրապուրվեց դրա *բարի* կողմով: «Կինը տեսավ, թե որքան *գեղեցիկ* էր ծառը, և որքան *ախորժելի* կլիներ դրա պտուղը» (Ծննդոց 3.6, TEV): Մարդկային դատողությունը կարող է ստեղծել այնպիսի գեղեցկություն և բարություն, որը հակառակ է Աստծո կատարյալ կամքին:

Աստվածաշունչը նույնպես պնդում է, որ մենք չենք կարող պահել Աստծո պատվիրանների մի մասը և հավատալ, որ վստահություն կունենանք Դատաստանի օրը: Աստծո սերը հասունանում է մեզանում, երբ մենք զգուշորեն պահում ենք Աստծո Խոսքն ամբողջությամբ: Սա է պատճառը, որ Աստված շնորհք է տալիս մեզ. շնորհքը զորացնում է մեզ, որ կարողանանք լիովին հնազանդվել Աստծո Խոսքին՝ Նրա համար ընդունելի կերպով: «Ուստի, անշարժ թագավորություն ընդունած լինելով՝ պինդ բռնենք այն շնորհքը, որով պաշտում ենք հաճությամբ Աստծուն՝ ահով և երկյուղածությամբ» (Եբրայեցիների 12.28):

Կարևորն այն է, որ իմանանք, թե ինչ է Թագավորը ցանկանում և փնտրում մեզանում, ոչ թե այն, ինչ մեր հասարակությունը կամ մարդ-

կային դատողությունը լավ է համարում: Այս պատճառով Աստված ասում է մեզ. «Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ի՞նչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը» (Հռոմեացիների 12.2): Այն, ինչը բարի է թվում մեր մշակույթին, կարող է ընդդիմանալ Աստծո ցանկություններին՝ հավիտենականին:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Այս պահին նստած եմ հյուրանոցային համարում՝ Սինգապուրում: Այս շաբաթավերջին ես քարոզելու եմ մոտավորապես քսան հազար մարդու: Ես շատ անգամներ եմ եղել այս հրաշալի երկրում, նույնպես մի քանի անգամ քարոզել եմ Ավետարանը Նիդերլանդներում: Նիդերլանդներում մարիխուանա ունենալը հակառակ չէ օրենքին: Մարդիկ կարող են ազատորեն ծխել այն՝ առանց վախենալու, որ կպատժվեն: Այնուամենայնիվ, եթե Սինգապուրում ձեզ մոտ թմրանյութեր գտնեն (խոսքը շատ փոքր քանակության մասին է), ձեզ կձերբակալեն և խիստ կպատժեն: Եթե ձեզ մոտ գտնեն ծանր թմրանյութեր, ձեզ մահապատժի կենթարկեն՝ կախաղան հանելով: Երբ Սինգապուր եք թռչում, այս օրենքի մասին գրված է անմիջապես ձեր մուտքի քարտի վրա. «Համաձայն Սինգապուրի օրենքների՝ թմրանյութեր վաճառողներին մահապատիժ է սպառնում»:

Իսկ հիմա պատկերացրեք, որ մի երիտասարդ հոլանդացի, ով պարբերաբար մարիխուանա է օգտագործում, Սինգապուր է գնում և առաջարկում է այն սինգապուրցիներին: Նա զվարթորեն ասում է իր նոր ընկերներին. «Լսե՛ք, սա արտակարգ բան է: Դուք կհանգստանաք, ձեր նյարդերը հաճելիորեն կգրգռվեն, իսկ վատ տրամադրությունը կհեռանա: Կուզե՞ք փորձել: Սիրով կկիսվեմ ձեզ հետ»:

Այդ երիտասարդին անմիջապես ձերբակալում են: Նա ցնցված է: Առաջին հարցը, որը նա տալիս է ոստիկաններին, հետևյալն է. «Ինչո՞ւ եք ձերբակալում ինձ»:

Գալիս է դատավարության օրը: Հոլանդացին կանգնած է դատարանում՝ դատավորի առջև, և ի սրտե հավատում է, որ այս ամենը պարզապես պատահականություն է: Դատավորը մեղավոր է ճանաչում նրան և ազդարարում է նրա պատիժը:

Ցնցված երիտասարդն ասում է. «Պարոն դատավո՛ր, այն երկրում, որտեղից ես եկել եմ, ընկերներին մարիխուանա առաջարկելը հանցագործություն չի համարվում»:

Դատավորը պատասխանում է. «Դուք Նիդերլանդներում չեք, այլ՝ Սինգապուրում, և այս երկրում դա օրենքին հակառակ է»:

Հոլանդացու վստահությունն ի չիք է դառնում. նա չունի ոչ մի հիմք՝ իրեն արդարացնելու համար: Ոչինչ չի կարող օգնել նրան: Նա անպաշտպան կանգնած է այդ երկրի գերագույն ատյանի առջև, որը դատապարտել է նրան:

Մի քանի տարի առաջ, երբ կրկին Սինգապուրում էի, մի երիտասարդ ամերիկացի ձերբակալվել էր՝ մեկ այլ մարդու մեքենայի արտաքին տեսքը դիտավորյալ փչացնելու համար: Նա ձերբակալվել էր, մեղավոր էր ճանաչվել և դատապարտվել էր ռոտանգի մի քանի հարվածների: Այս պատիժը, որի դեպքում մարդու մեջքին հարվածներ են հասցնում քիմիական նյութերով մշակված բամբուկի որևէ տեսակով, կարող է անդառնալի մարմնական վնասվածքներ պատճառել: Դատավճիռը չափազանց ծանր էր թվում: Նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը փորձեց միջամտել՝ այդ երիտասարդի պատիժը մեղմացնելու համար, բայց՝ ապարդյուն: Այդ երիտասարդը խախտել էր Սինգապուրի օրենքները և պետք է կրեր իր պատիժը:

Բոլորս պետք է կանգնենք տիեզերքի գերագույն ատյանի առջև: Այս ատյանի որոշումները *հավիտենական* և անփոփոխ են լինելու: Շատերը կցնցվեն՝ լսելով իրենց կյանքի դատավճիռը, բայց այդպես չպետք է լիներ: Այդպես չպետք է լինի նաև ձեր դեպքում:

Դուք պատրա՞ստ եք: Համաձայն Աստծո Խոսքի՝ մենք կարող ենք վստահությամբ մոտենալ տիեզերքի Դատավորին: Այս գրքի նպատակն է՝ օգնել ձեզ, որ պատրաստվեք: Եթե երիտասարդ հոլանդացին մեր օրինակում ժամանակ հատկացներ, որ սովորեր և պատրաստվեր Սինգապուր գնալու համար, նա կխուսափեր այդ խիստ պատժից: Որքա՛ն ավելի կարևոր է, որ մենք պատրաստվենք մեր իսկ դատաստանին, քանի որ դատավճիռները, որոնք կկայացվեն Դատաստանի գահի առջև, հավիտենական են լինելու:

Վարձատրություններ

Հավիտենության մեջ լինելու է ավելի քան մեկ դատաստան: Լինելու է դատաստան՝ անհավատների համար, դատաստան՝ հավատացյալների համար, և նույնիսկ դատաստան՝ հրեշտակների համար: Դրանցում կայացվելու են շատ տարբեր դատավճիռներ: Ոմանք կորուստ կամ պատիժ են կրելու, իսկ մյուսները վարձատրություններ են ստանալու: Մենք ավելի մանրամասն կխոսենք այս մասին հաջորդ գլուխներում, բայց թույլ տվեք կրկին նշել, որ այդ դատավճիռները հավիտենական են լինելու: Այս փաստն անկարելի է չափից շատ շեշտադրել:

Փորձեք կրկին մտովի պատկերացնել այն, ինչը չի ավարտվում: Աստծո կամքն է, որ մենք նախապես իմանանք այս մասին և ջանք անենք, որ վարձատրություն ստանանք Նրա Խոսքին հետևելու համար: Պողոսը գրում է.

> «Չգիտե՞ք, որ մրցավազքի մեջ մրցում են բոլոր վազողները, բայց [միայն] մեկն է ստանում մրցանակը: Այնպե՛ս վազեք [ձեր ընթացքը], որ տիրանաք [մրցանակին] և ձերը դարձնեք այն: Ամեն մարզիկ, ով մրցումների է պատրաստվում, զուսպ է վարվում և սահմանափակում է իրեն ամեն ինչում: Նա անում է դա, որպեսզի շահի մի ծաղկեպսակ, որը շուտով թառամելու է, բայց մենք [այդպես ենք վարվում, որ հավիտենական երանության թագ ստանանք]՝ այնպիսին, որը չի թառամի: Այդ իսկ պատճառով, ես չեմ վազում անորոշ կերպով (առանց հստակ նպատակի): Ես նման չեմ բռնցքամարտիկի, որը ծեծում է օդը և հարվածում է՝ առանց թշնամի ունենալու: Այլ [բռնցքամարտիկի պես] ես ծեծում եմ իմ մարմինը [խստորեն եմ վերաբերվում դրան, խրատում եմ այն դժվարություններով] և հնազանդեցնում եմ...» (Ա Կորնթացիների 9.24–27, AMP):

Պողոսը պարզորեն ասում է. «Ես չեմ վազում անորոշ կերպով (առանց հստակ նպատակի)»: Մեկ այլ թարգմանության մեջ այսպես է գրված. «Այնպես որ, ես վազում եմ ուղիղ դեպի նպատակը, և իմ ամեն քայլը նպատակաուղղված է» (Խոսք 26, NLT): Ամեն մարդ պետք է հենց այսպես վարվի. ամեն մեկը պետք է վստահաբար վազի և հաղթելու նպատակ ունենա: Մենք չենք մրցում ուրիշների հետ, այլ՝ ինքներս մեզ հետ:

Հավիտենությամբ շարժվողները

Մենք չենք կարող պարզապես մտածել, որ Դատաստանի գահի առջև ամեն բան ինչ-որ կերպով կհարթվի: Մենք չունենք ոչ մի արդարացում, որովհետև Աստված հայտնի է դարձրել մեզ Իր կամքը: Շատերը, ովքեր կկանգնեն Դատաստանի առջև, ամբողջ կյանքում համոզված են եղել, որ ավելի լավ են ապրել իրենց շրջապատող մարդկանցից, բայց նրանք երբեք թույլ չեն տվել, որ հավիտենությունը լինի իրենց շարժիչ ուժը և առաջնորդի իրենց: Այստեղից էլ ծագել է այս գրքի վերնագիրը՝ *«Հավիտենությամբ շարժվողները»*:

«Շարժել» բառը կարող է նշանակել «բարձրացնել», «առաջնորդել», «վերահսկել», «ուղղորդել» կամ նույնիսկ՝ «շարժիչ ուժ հաղորդել»: Ի՞նչն է առաջնորդում և խթանում մեզ այս երկրի վրա: Հավիտենակա՞նը, թե՞ ժամանակավորը: Մենք վարվում ենք աստվածային իմաստությա՞մբ, թե՞ համեմատում ենք մեզ ուրիշների հետ: Հնարա-

վո՞ր է, որ մենք ականջ ենք դրել շողոքորթության, ավանդությունների կամ առասպելների, որոնք ուսուցանվում են որոշ եկեղեցիներում կամ դպրոցներում: Արդյո՞ք այն, ինչի վրա կառուցել ենք մեր կյանքը, կանգուն կմնա Աստծո Դատաստանի գահի առջև, թե՞ մեր ջանքերը հավիտյան կկորսվեն: Հիշեք՝ մենք արդեն գիտենք, թե որն է լինելու մեր դատաստանի չափանիշը. «Այն խոսքը, որ Ես խոսեցի, այն կդատի նրան հետին օրը» (Հովհաննես 12.48):

Շատ մարդիկ, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, ցնցված կլինեն, երբ կանգնեն Հիսուս Քրիստոսի ատյանի առջև: Նրանք ապահովություն են կառուցել Նոր կտակարանի որոշ ուսմունքների հիման վրա, բայց ջանք չեն գործադրել, որ իմանան Աստծո Խոսքի ամբողջական խորհուրդը: Իմ հարցը ձեզ հետևյալն է՝ դուք ուզում եք իմանալ ճշմարտությունը *հավիտենական* դատավճռից հետո՞, երբ արդեն շատ ուշ կլինի և անկարելի կլինի որևէ բան փոխել, թե՞ հիմա եք ուզում իմանալ այն չափանիշը, որով դատվելու եք:

Հաջորդ գլխում կսկսվի մի այլաբանական պատմություն, որը կշարունակվի նաև մյուս գլխում: Ուշադրությա՛մբ կարդացեք այն և փորձե՛ք, որքան կարելի է, լավ հիշել, որովհետև մենք հաճախ ենք անդրադառնալու դրան: Թե ինչպես ավարտվեց այդ պատմությունը, մենք կկարդանք 8-րդ գլխում, և մինչև գրքի ավարտը կխոսենք դրանում գտնվող ճշմարտությունների մասին: Ամբողջ գիրքը կառուցված է այդ այլաբանական պատմության շուրջ. այնպես որ, խնդրում եմ, մի՛ կարդացեք այն թռուցիկ կերպով: Դուք կարող եք կրկին անդրադառնալ դրան այս ուսուցման ընթացքում:

Աստված աշխատանք է կատարել ինձ հետ այս գրքում ներկայացված նյութի մեծ մասի վերաբերյալ: Ես կպատմեմ իմ կյանքում տեղի ունեցած բազմաթիվ ձախողումների մասին, որոնք Սուրբ Հոգին հանգամանորեն ցույց է տվել ինձ Իր ճշմարտության «մանրադիտակով»: Հուսով եմ՝ սա կդրդի ձեզ ջանասիրաբար ուսումնասիրել Աստվածաշունչը, որպեսզի Դատաստանի օրը դուք կանգնած լինեք հաստատ հիմքի վրա: Ես կներկայացնեմ մեր հասարակության մեծագույն թյուրըմբռնումներից մի քանիսը, որոնց պատճառով մարդիկ հեռանում են Նրանից, Ում իրենց Փրկիչն են անվանում: Ժամանակ առ ժամանակ դուք կզարմանաք, կհանդիմանվեք և կխրատվեք, բայց այդ ամենին կհետևեն խոստումները, հույսը և մխիթարությունը:

Եթե դուք խիզախ եք, ցանկանում եք իմանալ ճշմարտությունը և ի սրտե ձգտում եք Աստծուն, ուրեմն, առաջ գնանք: Դուք ուրախ կլինեք, երբ անցնեք այս ճանապարհը: Ընդունե՛ք հետևյալ հորդորը.

«Աստծո պարգևը վերականգնել է մեր հարաբերությունները Նրա հետ և մեր կյանքը վերադարձրել է մեզ: Եվ ավելին՝ հավիտենական կյանքը դեռ առջևո՛ւմ է: Կարող ես վստահ լինել սրանում: Ես ուզում եմ, որ հաստատ դիրքորոշում ունենաս: Վճռական դիրքորոշո՛ւմ ունեցիր այս հարցերում, որպեսզի այն մարդիկ, ովքեր վստահում են Աստծուն, կենտրոնանան այն հիմքային ճշմարտությունների վրա, որոնք օգտակար են բոլորի համար» (Տիտոս 3.7,8, MSG):

ԳԼՈՒԽ 2

ԱՖԱԲԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ԿՅԱՆՔԻՆ ԷՆԴԵԼՈՒՄ

«Եվ [Հիսուսը] սովորեցնում էր նրանց շատ բաներ առակներով (օրինակներով կամ համեմատություններով, որոնք օգտագործվում էին ճշմարտությունների հետ մեկտեղ՝ դրանք բացատրելու համար)...»:
— Մարկոս 4.2, AMP

Ա՛ի ժամանակ կար մի աշխարհ, որը նման էր մեր աշխարհին, բայց և տարբեր էր շատ առումներով: Այդ աշխարհում չկային առանձին պետություններ. կար միայն մեկ մեծ թագավորություն, որը կոչվում էր Աֆաբել: Թեև այն սփռված էր ամբողջ հայտնի աշխարհով, ուներ միայն մեկ մայրաքաղաք, որը ղեկավարում էր ամբողջ թագավորությունը: Այն կոչվում էր Աֆաբելի Մեծ քաղաք, որը մենք պարզապես Աֆաբել կանվանենք:

Այդ աներևակայելի քաղաքի տիրակալը մեծանուն թագավոր Զեյլոնն էր: Զեյլոն թագավորի հպատակները մեծ սիրով և հիացմունքով էին վերաբերվում նրան: Նա ցուցաբերում էր խորը սեր բոլորի հանդեպ, որը, թվում էր, անսպառ էր: Թագավորն ուժեղ և իմաստուն էր, բայց միևնույն ժամանակ հումորի մեծ զգացում ուներ: Թեև նա թագավորական կեցվածք ուներ, նա նույնպես սիրում էր շփվել իր հպատակների հետ: Նրա հետ շփվելիս մարդիկ պարուրվում էին բարության մթնոլորտով: Նրա ներկայությունը բարձրացնում էր կյանքի բոլոր ոլորտները նոր մակարդակի: Նա զարմանալիորեն խորաթափանց էր և հեռատես, և նայելով մարդկանց գործերին՝ անբացատրելի կերպով կարողանում էր տեսնել նրանց սրտի դրդապատճառները:

Զեյլոնի հայրը, ով հիմնադրել էր Աֆաբելը, հայտնի էր Հիմնադիր Հայր թագավոր անունով: Քաղաքում կարգ ու կանոն հաստատելուն պես, նա փոխանցեց թագավորության կառավարումն իր որդուն: Այս մեծ քաղաքի բնակիչներն օգնում էին Զեյլոնին կառավարել իր թագավորության արտաքին շրջանները: Կառավարումն իրականացվում էր

իշխանության աստիճանական համակարգով, ինչպես նաև՝ մայրաքաղաքում գտնվող կառավարիչների միջոցով:

Քաղաքն անասելիորեն մեծ էր. տարածքը հավասար էր մոտավորապես 520 քառակուսի կիլոմետրի: Քաղաքն այնքան լավ էր նախագծված, որ թեև այն խիտ բնակչություն ուներ, չէր կարելի գերբնակեցված անվանել: Այն բաղկացած էր արվարձաններից, քաղաքային բնակելի տարածքներից և առանձնատներից:

Աֆաբելի արևմտյան շրջանի հարթավայրերում աշխատավորների համեստ տներն էին (որոնք աննկարագրելիորեն ճոխ կհամարվեին մեր աշխարհում): Թեև այդ մարդիկ ծանր աշխատանք էին կատարում, նրանք շնորհակալ էին պարզապես թագավորի քաղաքում ապրելու հնարավորության համար:

Քաղաքի հյուսիսային և հարավային սահմանների լեռնային շրջանները բնակեցված էին արհեստագործ և արվեստագետ վարպետների՝ երաժիշտների, գրողների, նկարիչների և գեղագիտական աշխատանքներ կատարող մարդկանցով: Նրանց տները գեղեցիկ տեսարաններ ունեին և ավելի ընդարձակ էին աշխատավորների տներից:

Քաղաքի ամենագրավիչ մասը արևելյան շրջանն էր, որում բազմաթիվ գեղեցիկ առանձնատներ կային: Այս հատվածը կոչվում էր Թագավորական կենտրոն: Թագավորն ապրում և իր ժամանակի մեծ մասը անցկացնում էր հենց այստեղ: Թագավորական կենտրոնում նույնպես ապրում էին մարդիկ, ովքեր աշխատում էին անմիջապես թագավորի հետ: Այստեղ նրա վարչակազմը և տեղակալները հաղորդակցվում և աշխատում էին:

Թագավորական կենտրոնն ասես թանկարժեք քար լիներ՝ դրված բարձրադիր ժայռի վրա, որտեղից տեսարան էր բացվում դեպի Մեծ ծովի ափերը: Կապտավուն ծովից մշտապես մեղմ զեփյուռ էր փչում՝ թարմություն բերելով քաղաքին: Այս ջրերը շրջապատված էին չաղտոտված սպիտակ լողափերով, որոնց գեղեցկությանը գերազանցում էին միայն թագավորական պարտեզները: Այդ պարտեզները տնկված էին ամենուր Թագավորական կենտրոնում և գունեղություն ու պայծառություն էին հաղորդում ամեն ինչին: Անկասկած՝ սա ամենացանկալի բնակավայրն էր Աֆաբելում: Քաղաքի այս մասում գտնվող ամեն մի տուն իր վայելչությամբ զիջում էր միայն թագավորի պալատին:

Աֆաբելի մեջտեղում գտնվում էր կյանքի ծառը: Միայն թագավորի ենթականերն էին արտոնված ճաշակելու դրա հրաշալի պտղից: Այդ պտուղը հիանալի համ և հաճելի տեսք ուներ, իսկ դրա բուրումնավետ պտղամիսն օժտված էր հրաշագործ զորությամբ:

Էնդելի բնակիչները

Աֆաբելի հարթավայրերից դեպի արևմուտք գտնվում էր Արտաքին անապատը, որը տարածվում էր գրեթե հարյուր կիլոմետր՝ մինչև Ադոնգա մեծ գետը: Անցնելով Ադոնգա գետը՝ դուք կհայտնվեիք թագավորության մյուս մասում, որը կոչվում էր Էնդել: Ծնվելուն պես Աֆաբելի քաղաքացիների երեխաներն անմիջապես բերվում էին Էնդել: Մինչև նրանց առաջին շաբաթը լրանալը, նրանք հանձնվում էին թագավորի դայակների խնամքին: Երբ այս նոր քաղաքացիները, որոնք արդեն Էնդելցիներն էին, հինգ տարեկան էին դառնում, նրանց ուղարկում էին Էնդելի դպրոց, որտեղ նրանք սովորում էին տասը տարի: Նրանց սովորեցնում էին Աֆաբելի կյանքի և մեծ թագավոր Զեյլոնի մասին:

Միայն թագավորի դայակները և ուսուցիչներն էին արտոնված հանդիպելու Զեյլոնին: Հինգ տարին մեկ նա գաղտնաբար Էնդել էր այցելում և ցուցումներ էր տալիս դպրոցի և երեխաների վերաբերյալ՝ ըստ այն ամենի, ինչ կար իր սրտում: Նա երբեք չէր հայտնում իր ներկայությունը բոլորին, բայց նույնիսկ այդ դեպքում նրա բարությունն ակնհայտորեն երևում էր Էնդելի կյանքի ամեն բնագավառում:

Տասնամյա կրթությունն Էնդելի դպրոցում պատրաստում էր աշակերտներին իրենց հետագա կյանքի համար: Տասնհինգ տարեկան հասակում նրանց տրվում էր կարճ ժամանակահատված՝ կիրառելու համար այն ամենը, ինչ նրանք սովորել էին: Այդ ընթացքում նրանց վստահվելու էր հարստություն և պատասխանատվություն: Նրանց կյանքի տևողությունը հարյուր հիսուն տարի էր, և այն, թե ինչպես էին տնօրինելու իրենց երիտասարդ տարիները և միջոցները, որոշելու էր, թե ինչպես և որտեղ էին նրանք անցկացնելու իրենց կյանքի մնացած մասը: Թեև փորձաշրջանը տևելու էր հինգ տարի, աշակերտներից ոչ մեկը չգիտեր այդ մասին: Նրանց պարզապես ասել էին, որ այն չի գերազանցելու տասը տարին: Երբ այդ ժամանակահատվածն ավարտվեր, նրանցից յուրաքանչյուրը կանգնելու էր թագավորի առջև, որպեսզի հաշիվ տար իր կայացրած որոշումների համար:

Այդ փորձաշրջանը որոշելու էր, թե արդյո՞ք աշակերտները հավատարիմ էին: Նրանք, ովքեր կհետևեին Զեյլոնի հրամաններին՝ խոսքով և գործով, և կճանաչեին նրա իշխանությունը, կընդունվեին Աֆաբելում՝ որպես քաղաքացիներ: Այդ աշակերտները վարձատրություններ կստանային ըստ իրենց կայացրած որոշումների:

Այնուամենայնիվ, եթե աշակերտներն ամբողջ փորձաշրջանի ընթացքում ապստամբեին և ապրեին միայն իրենց համար, նրանք կար-

տաքսվեին Լոն երկիր: Լոնն անապատային տարածք էր, որում բացարձակ խավար, միայնություն և անհուսություն էր տիրում: Ապստամբները կբանտարկվեին այդտեղ և տառապանք կկրեին մինչև իրենց կյանքի ավարտը:

Առաջին մարդը, ով արտաքսվել էր այդ լքված վայրը, Դագոնն էր. նա դարձավ Լոնի հիմնադիրը և չար տիրակալը: Թեև նա ապստամբել էր Զեյլոնի դեմ շատ տարիներ առաջ, նրա ազդեցությունը շարունակում էր մնալ էնդելում: Այն էնդելցիները, ովքեր ընդունեցին Զեյլոնի իշխանությունը, ազատվեցին Դագոնի չար ազդեցությունից, իսկ նրանք, ովքեր հրաժարվեցին ծառայել Զեյլոնին, մնացին այդ անկում ապրած տիրակալի ազդեցության ներքո:

Որպեսզի խավարը չշարունակեր թափանցել իր թագավորության մեջ, մեծ թագավոր Զեյլոնն ստիպված էր օրենք ընդունել՝ պաշտպանելու համար Աֆաբելի տարածքային ամբողջականությունը և բնակիչներին: Ովքեր հետևում էին Դագոնին և չէին ընդունում Զեյլոնի իշխանությունը խոսքով և գործով, արտաքսվելու էին Լոն երկիր՝ մինչև իրենց կյանքի ավարտը:

Այսպես սկսվում է մեր պատմությունը: Մենք կհետևենք էնդելի հինգ աշակերտների կյանքին: Նրանց անուններն են՝ Անկախ, Խաբված, Հուսահատ սիրտ, Եսասեր և Բարեգործ: Թույլ տվեք ներկայացնել յուրաքանչյուրին:

Անկախ

Անկախը մշտապես վիճարկում է Աֆաբելի գոյությունը: Նա իսկապես չի կարողանում հավատալ, որ Զեյլոն անունով մի անձնավորություն, ում նա երբեք չի հանդիպել և չի տեսել, պահանջում է հավատարիմ լինել Իրեն, ինչպես նաև՝ խստորեն հետևել մի շարք կանոնների: Նա մտածում է, որ պատմությունը Զեյլոնի մասին խաբեություն է, որի նպատակն է՝ պահել իրեն և մյուս աշակերտներին ուսուցիչների վերահսկողության ներքո: Նա արհամարհանքով հրաժարվում է դպրոց հաճախել և սովորել այդ երևակայական թագավորության մասին:

Անկախը ծաղրում է մյուսներին՝ նման անհեթեթությանը հավատալու համար: Նա որոշում է ապրել այնպես, ինչպես ճիշտ է համարում, և ազատ լինել Զեյլոնի օրենքներից: Նա պատրաստ է բացառություն անել միայն՝ եթե թագավորի կարգադրությունները ձեռնտու են իրեն: Այդ դեպքում նա հետևում է դրանց, բայց միայն՝ որովհետև ինքն է ցանկանում դա: Նա վստահաբար ասում է բոլորին, որ չի պատրաստվում հնազանդվել ինչ-որ մեկի կամքին:

Խաբված

Խաբվածը չի վիճարկում Աֆաբելի գոյությունը: Նա հավատում է Զեյլոն թագավորին և նույնիսկ հիացմունքով է վերաբերվում նրա խոստումներին: Նա մտովի և բերանացի համաձայնում է դպրոցի ուսմունքներին և կանոններին, բայց նրա կյանքը հիմնականում հակասում է այդ ուսմունքներին: Նա պատրաստակամորեն խոսում է այն մասին, որ հավատարիմ է թագավորին և նրա ուսմունքներին, և մասնակցում է դպրոցի ծրագրերին, երբ դրանք հաճելի են իրեն, բայց երբ նա անձնական շահ չի տեսնում դրանցում, նրա կարծիքն արագորեն փոխվում է: Նրա կենսառճը հակասում է Զեյլոնի ճշմարիտ հետևորդի նկարագրին, բայց շնորհիվ իր ազդեցիկ անհատականության՝ նա աննկատ գրավում է ուրիշներին դեպի իր ճանապարհը: Նա երբեք լրջորեն չի մտածում իր փորձաշրջանի և մոտալուտ դատաստանի մասին:

Խաբվածը շատ լավ հարաբերություններ ունի Անկախի հետ, թեև նրանք տարաձայնություններ ունեն Զեյլոնի գոյության վերաբերյալ: Խաբվածն ուրախ ու կատակասեր անձնավորություն է, և Անկախին դուր է գալիս շփվել նրա հետ:

Հուսահատ սիրտ

Հուսահատ սիրտն ամենախանդավառ աշակերտն է դպրոցում: Նա հաճախ է պատասխանում դասերին և մշտապես ստանում է ամենաբարձր գնահատականները: Նա շատ ակտիվ է և սովորաբար արտադպրոցական միջոցառումներ է նախաձեռնում, որպեսզի օգնի դպրոցականներին՝ ներգրավվել հասարակության մեջ: Նայելով դպրոցի աշակերտներին՝ կարելի է վստահաբար ասել, որ նա բոլորից շատ է ձգտում ծառայել Զեյլոնին:

Եսասեր

Եսասերը նույնպես հավատում է Զեյլոնին և նրա ուսմունքներին: Նա չի կասկածում Աֆաբելի գոյությանը և բացահայտ խոսում է այդ մասին՝ ինչպես և իր ընկերները: Նա հավատում է, որ Զեյլոնն այնքա՛ն հրաշալի իշխան է և այնքա՛ն բարի թագավոր է, որ ողորմած կլինի նրանց հանդեպ, ովքեր դավանում են, որ հավատարիմ են իրեն: Այնուամենայնիվ, նրա պատկերացումը Զեյլոնի ուսմունքների և բնավորության մասին թերի է: Նա մոռանում է, որ Զեյլոնը արդար և սուրբ թագավոր է, միաժամանակ՝ սիրող և ողորմած: Այնպես որ, իր ներսում

Եսասերը աղավաղված պատկերացում է ձևավորել Զեյլոնի մասին: Նա համոզված է, որ Խաբվածը, Հուսահատ սիրտը և Բարեգործը կընդունվեն Զեյլոնի փառավոր թագավորության մեջ. նա որոշ մտահոգություններ ունի միայն Անկախի վերաբերյալ՝ նրա բացահայտ հակառակության պատճառով:

Եսասերը համոզված է, որ նրանք, ովքեր բերանացի ընդունում են Զեյլոնին և այնպես են ապրում, որ չխախտեն նրա գլխավոր օրենքները, մուտք կգործեն Աֆաբել: Այնուամենայնիվ, ինչպես իր անունը հուշում է մեզ, նա հիմնականում եսակենտրոն է, և հաճախ բարի գործեր է անում իր իսկ օգտի համար: Երբեմն Եսասերն առաջնորդվում է գթասրտությամբ, բայց վճռական պահերին նա գործում է համաձայն իր շահերի:

Բարեգործ

Եվ վերջինը՝ Բարեգործ անունով աղջիկը, ով ի սրտե ընդունում է Զեյլոն թագավորի օրենքները և հնազանդվում: Նա ոչ միայն սովորում է Զեյլոնի սկզբունքները, այլև ձգտում է իմանալ, թե ինչ կա դրանք կարգադրողի սրտում: Նա շատ ժամանակ է անցկացնում՝ Զեյլոնի կամքը փնտրելու և հասկանալու համար: Նա ժամեր շարունակ ուսումնասիրություններ է կատարում և անձնվիրաբար ծառայում է էնդելի դպրոցի և համայնքի բարօրության համար: Նա գիտի, որ տասնհինգ տարեկան դառնալուց հետո ինքը քիչ ժամանակ կունենա՝ մեծ թագավորի ցանկությունները կատարելու համար: Նրա նպատակն է՝ լիարժեք կերպով ապրել Զեյլոնի փառքի համար, և նա թույլ չի տալիս, որ իր շահերը խանգարեն իր գլխավոր նպատակին:

Բարեգործը սիրում է Զեյլոնին և փափագում է այն օրվան, երբ հանդիպելու է նրան: Նա ջերմեռանդորեն հնազանդվում է նրան և հաճախ է խոսում մարդկանց հետ նրա բարության մասին: Այս պատճառով շատերը ծաղրում են նրան և դադարում են շփվել նրա հետ: Թեև նա տուժել է իր դիրքորոշման, այսինքն՝ Զեյլոնի հանդեպ իր անսասան հավատարմության պատճառով, ոչինչ չի կարող ետ պահել նրան թագավորին հավատարիմ մնալուց:

Շրջանավարտները

Այս հինգ էնդելցիներն էլ տասնհինգ տարեկան դարձան: Եկավ որոշված օրը, և նրանք ավարտեցին դպրոցը երկու հազար այլ աշակերտների հետ: Ամեն մեկին վստահվեց հատուկ հանձնարարություն

և սկզբնական գումար, որի չափը որոշված էր Զեյլոնի կողմից: Ավարտական երեկոյին դպրոցի տնօրենը ամեն մեկին հանձնեց իր գումարը:

Մեր հինգ ուսանողներից յուրաքանչյուրն ստացավ հետևյալը. Անկախը՝ հիսունհինգ հազար ավանդ: Խաբվածը և Հուսահատ սիրտը՝ յուրաքանչյուրն ստացավ քառասուն հազար ավանդ: Եսասերն ստացավ ամենամեծ գումարը՝ յոթանասունհինգ հազար ավանդ, իսկ Բարեգործը՝ քսանհինգ հազար ավանդ: Վերցնելով իրենց գումարները և ստանալով վերջին հրահանգները՝ երիտասարդ քաղաքացիներն արձակվեցին դպրոցից:

Առևտրականը

Թեև Անկախը հազվադեպ էր հաճախում դասերին, միևնույն է, հիշում էր որոշ ուսուցումներ: Երբեմն նա մտածում էր, թե կարո՞ղ էին արդյոք դպրոցի անհեթեթությունները ճիշտ լինել: Եթե այդպես էր, նա հույս ուներ, որ իր վարքը չէր ազդի այն բանի վրա, թե որքան գումար էր ստանալու դպրոցն ավարտելուն պես:

Անկախի ձեռքերը դողում էին, երբ նա վերցնում էր իր ավանդներով ծրարը: Այն բացելուն պես նա պետք է զսպեր իր զարմանքը և թեթևության զգացումը՝ հասկանալով, թե որքան գումար էր տրվել իրեն: Նա նույնիսկ ավելի ոգեշնչվեց, երբ իմացավ, որ ստացել էր տասնհինգ հազարով ավելի, քան Հուսահատ սիրտը, և ավելին էր, քան Բարեգործի գումարի կրկնակին: Նա մտածեց. *«Ժամանակի և ուժերի ինչպիսի՜ վատնում: Բարեգործը և Հուսահատ սիրտն իրենց ամբողջ ժամանակն անցկացրին՝ նստելով այդ անիմաստ դասերին, և այնքա՜ն ավելորդ ժամեր տրամադրեցին դպրոցին: Եվ ի՞նչ ստացան նրանք դրա փոխարեն»:*

Այս միջադեպն ավելի ամրապնդեց Անկախի համոզմունքն այն մասին, որ Զեյլոնը գոյություն չուներ: Նա որոշեց, որ այդ գումարը թողել էին ուսանողների ծնողները, ովքեր անհայտացել էին շատ տարիներ առաջ: Սա ավելի հաստատեց նրա կարծիքն այն մասին, որ պատմությունը Զեյլոն թագավորի մասին կեղծիք էր, որը դպրոցը հորինել էր, որպեսզի վերահսկեր երիտասարդներին և սահմանափակեր նրանց ազատամտությունը:

Ուսման ավարտը մի քանի շաբաթ տոնելուց հետո Անկախը հասկացավ, որ պետք է ինչ-որ գործ սկսեր: Նա արդեն խուճապի էր մատնվում՝ տեսնելով, թե որքան արագորեն էր զրկվում իր ավանդներից:

Անկախն զբաղվեց մեքենաների առևտրով և հասկացավ, որ ինքն օժտված առևտրական է: Գործը զարմանալիորեն լավ էր ընթանում:

Նորավարտ աշակերտներից շատերն օգտագործեցին իրենց սկզբնական գումարի մի մասը՝ Անկախի մոտից գնելով օգտագործված և նույնիսկ նոր մեքենաներ: Նրա միջոցներն ավելացան: Նա ընդլայնվեց՝ նոր գործեր ձեռնարկելով, և դրանցում նույնպես հաջողության հասավ: Իր շահույթների ավելացման հետ մեկտեղ նա բարելավեց իր անձնական կյանքը: Եվ արագ հասկացավ, որ փողը՝ ազդեցության զարմանալի միջոց է, որով, թվում է, կարող էր երջանկություն գնել: Նրա հարստությունը, ունեցվածքը և արագորեն ընդլայնվող կյանքը գրավում էին կանանց, ինչը է՛լ ավելի ոգևորեց նրան:

Անկախը չէր հաճախում իր համայնքի շաբաթական հավաքույթներին, բայց միևնույն է՝ էնդելցիների մեծ մասը շատ լավ քաղաքացի էր համարում նրան, քանի որ նա աջակցություն էր ցուցաբերում տարբեր համայնքային նախագծերի: Թվում էր՝ այս քրտնաջան աշխատող էնդելցու կյանքը չէր կարող ավելի լավ դասավորվել:

Շինարար և հողատարածքներ յուրացնող

Խաբվածը մեծ ուրախությամբ մի քանի շաբաթ շարունակ տոնեց ուսման ավարտն Անկախի հետ: Թեև նա մյուսների պես շատ չէր ստացել, նա ուրախ էր, որ ուներ ավելին, քան Բարեգործը: Դա հաստատեց նրա աղավաղված պատկերացումն այն մասին, որ Զեյլոնն այնքա՛ն ողորմած էր, որ որոշ հարցեր կարևոր չէին նրա համար:

Դպրոցում Խաբվածը սեռական կապեր ուներ մի քանի աղջիկների հետ, թեև դա հակասում էր այն ուսմունքներին, որոնք նա ստանում էր: Նա խնդիր չէր տեսնում դրանում, որովհետև սրտանց հավատում էր Զեյլոնին և նրա թագավորությանը: Նա ձևավորել էր կյանքի նկատմամբ իր ուրույն մոտեցումը. *«Քանի դեռ ես ասում եմ, որ հավատարիմ եմ Զեյլոնին, և մեծ ցավ չեմ պատճառում մարդկանց, ես արդար դիրք կունենամ թագավորի առջև»:* Ըստ նրա դատողության՝ Զեյլոնը հասկանում էր, որ բոլորը կարիքներ ունեն, և որ ոչ ոք կատարյալ չէ: Նա համոզված էր, որ դատաստանի ժամանակ իր բոլոր ծախողումները ծածկվելու էին Զեյլոնի ողորմությամբ և շնորհքով, որովհետև նա ամբողջ սրտով հավատում էր թագավորին:

Ավարտելուց մի քանի շաբաթ անց Խաբվածն սկսեց իր գործը: Նա տներ էր կառուցում: Սկզբում դժվարանում էր հաճախորդներ գտնել: Նրա կառուցած տները գերազանց էին ամեն առումով, բայց ոչ ոք չէր գնում դրանք: Ոմանք մտածում էին, որ նրա գները շատ թանկ էին, մյուսները պարզապես չէին կարող թույլ տալ իրենց նման գեղեցիկ տներ ձեռք բերել: Հուսահատվելով՝ Խաբվածն իջեցրեց գները:

Նա շարունակեց տներ կառուցել նույն գեղեցիկ ոճով՝ հաճախորդներ գրավելու համար: Նա տալիս էր նույն խոստումները, ինչպես նախկինում, բայց օգտագործում էր շատ ավելի ցածրորակ նյութեր, քան ներկայացնում էր կամ խոստանում: Նրա օգտագործած նյութերի մի մասն արգելված էր էնդելի օրենքներով և չէր համապատասխանում էնդելի չափանիշներին: Խաբվածն արդարացնում էր իրեն՝ մտածելով, որ էնդելի օրենսդիրները, ովքեր որոշել էին այդ չափանիշները, չափից դուրս զգուշավոր էին: Նա համոզված էր, որ իր ընտրած նյութերը կդիմանային ցանկացած ճնշումների և եղանակային պայմանների: Քանի որ Խաբվածի տները շատ գեղեցիկ տեսք ունեին՝ իրենց գնի համեմատ, շահագրգռված էնդելցիներն սկսեցին պայմանագրեր կնքել նրա հետ ավելի արագ, քան նա հասցնում էր կառուցել դրանք: Նրա գործը վերջապես թափ հավաքեց:

Մի քանի տարի անց Խաբվածը որոշեց զբաղվել հողատարածքների յուրացմամբ: Նա հոգնել էր բողոքող հաճախորդներից: Նա մտածեց, որ այս դեպքում, հողատարածքը վաճառելուց հետո, ազատ կլիներ բոլոր պարտավորություններից, և արդեն ստիպված չէր լինի երաշխիքային վերանորոգման աշխատանքներ կատարել:

Խաբվածի ոգևորությանը չափ չկար, երբ նա գտավ մի հողատարածք, որի արժեքն ընդամենը հազար ավանդ էր՝ մեկ ակրի համար: Նման ձեռնտու պայմանները գրեթե անհնարին էին թվում: Այնուամենայնիվ, պարզվեց, որ հողատարածքը գտնվում էր ջրհեղեղի ենթակա հարթավայրում: Այս մասին գիտեին միայն մի քանիսը, և բոլորը Խաբվածի ընկերներն էին: Նա համոզեց քաղաքի խորհրդի անդամներից մեկին, ով Անկախի ընկերն էր, հաստատել իր յուրացման ծրագիրը՝ առանց պատշաճ երկրաբանական ստուգման: Ի վերջո, նրա ամբողջ կյանքի ընթացքում այնտեղ նույնիսկ մեկ անգամ ջրհեղեղ չէր եղել. այնպես որ, իրականում ոչ մի խնդիր չկար: Այդ գործարքը կայացավ առանց որևէ խոչընդոտի: Դրանից հետո, թվում էր, կյանքը չէր կարող ավելի լավ դասավորվել երիտասարդ ձեռնարկատիրոջ համար:

Ուսուցչի օգնականը

Անմիջապես ավարտելուց հետո, Հուսահատ սիրտը մի քանի ընկերուհիների հետ, ամբողջ շաբաթավերջը նվիրեց գնումներ կատարելուն: Նա մտածեց, որ արժեր անել դա երկու պատճառով. առաջինը՝ նա ժամանակ կանցկացներ իր մտերիմ ընկերուհիների հետ, և երկրորդը՝ կկարողանար հագուստ և աքսեսուարներ գնել, որոնց կարիքը կունենար՝ աշխատանքային կարիերա սկսելու համար: Հուսահատ սիրտն ամենից

շատ ցանկանում էր ուսուցչի օգնական դառնալ էնդելի դպրոցում: Որքան նա հիշում էր իրեն, դա իր մեծագույն ցանկությունն էր: Նա պետք է հարցազրույցի ներկայանար գալիք շաբաթվա ուրբաթ օրը:

Գնումների երկրորդ օրը Հուսահատ սրտի ընկերուհիներից մեկը՝ Բամբասողը, պատմեց նրան, թե ինչպես իրենց ընդհանուր ընկերուհի Չարախոսողն ասել էր տնօրենին, որ Հուսահատ սիրտը սեռական կապ էր ունեցել աշակերտներից մեկի հետ: Հուսահատ սրտի բարկությունը բռնկվեց: Նման մեղադրանքը կարող էր շատ մեծ խոչընդոտ դառնալ ուսուցչի օգնականի աշխատանքն ստանալու համար: Դա անհեթեթ սուտ էր, որում նույնիսկ ճշմարտության նշույլ չկար: Նա անարատ էր պահել իրեն ուսման ամբողջ ընթացքում: Հուսահատ սիրտը համոզված էր, որ Չարախոսողն արել էր դա նախանձից և գուցե նաև ատելությունից դրդված:

Հուսահատ սրտի բարկությանը չափ չկար: Նա խորապես վիրավորվեց, և մինչև նոր շաբաթվա սկիզբը նրա միտքը կլանված էր Չարախոսողի դավաճանությամբ, ում նա իր ընկերն էր համարում: Նա երդվեց, որ ստիպելու էր Չարախոսողին՝ վճարել իր արածի համար:

Եկավ հարցազրույցի օրը, և ի զարմանս Հուսահատ սրտի՝ նա ընդունվեց իր ցանկալի աշխատանքին: Տնօրենը տեղեկացրեց նրան, որ այդ ասեկոսեներն իսկապես հասել էին իրեն, բայց որոշակի քննությունից հետո պարզվեց, որ դրանք ճիշտ չէին: Բացի այն, որ Հուսահատ սիրտն աշխատանք ստացավ, նա նշանակվեց իր ամենասիրելի ուսուցիչներից մեկի մոտ: Երկակի կյանքը դպրոցի ամենատաղանդավոր ուսուցիչներից էր: Նա քսանհինգ տարեկան էր և արդեն տարիներ շարունակ սովորեցնում էր երիտասարդ էնդելցիներին: (Ուսուցիչների դատաստանը չէր գալիս քսան տարեկանում, ինչպես մյուս էնդելցիներինը, այլ՝ երեսուն տարեկանում): Հուսահատ սիրտը զարմացավ, որ ընտրվել էր՝ աշխատելու նման եռանդուն առաջնորդի հետ:

Ուսումնական կիսամյակն սկսվեց, և ամեն ինչ շատ լավ էր ընթանում, բայց Հուսահատ սիրտը թունոտ ոխ էր պահում իր նախկին ընկերուհու դեմ: Անկախ այն բանից, թե ինչպես ամեն ինչ դասավորվեց՝ նա, թվում էր, չէր կարողանում մոռանալ Չարախոսողի սուտը:

Թեև ամեն ինչ հիասքանչ էր թվում, վտանգը հասունանում էր աննկատ: Երկակի կյանքի անունը լիովին սազական էր իրեն: Հասարակության առջև նա ուսուցիչ էր, բայց նրա անձնական կյանքը բոլորովին այլ էր: Նրա դատաստանն ամենախիստն էր լինելու, քանի որ ուսուցիչ լինելով՝ Երկակի կյանքն անձամբ Ձեյլոնին տեսնելու արտոնություն էր ունեցել:

Մի երեկո, երբ Հուսահատ սիրտը և Երկակի կյանքը մենակ էին, նա փորձեց գայթակղել իր օգնականին: Ապշած և բարկացած՝ Հուսահատ սիրտն անմիջապես հեռացավ: Երկակի կյանքը չհանձնվեց, այլ շարունակեց հետամուտ լինել նրան հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում: Հուսահատ սիրտն սկսեց փոխել իր դիրքորոշումը և լսել իր ուսուցչի համոզիչ խոսքերը, քանի որ նա հայտնի և խելացի անձնավորություն էր: Հուսահատ սրտին դուր էր գալիս Երկակի կյանքի ուշադրությունը: Նա հաճելի վարք ուներ, բարի էր, և բացի այդ՝ համարվում էր ամբողջ քաղաքի ամենագեղեցիկ տղամարդկանցից մեկը: Երկարատև ներքին պայքարից հետո Հուսահատ սիրտը տվեց իր կուսությունը Երկակի կյանքին, և նրանց միջև բուռն սիրավեպ սկսվեց:

Հուսահատ սրտին մինչ այդ անծանոթ էին տենչանքի և սիրո ոգևորիչ զգացումները: Ամեն անգամ, երբ նա տեսնում էր Երկակի կյանքին, նրա սիրտն արագորեն բաբախում էր: Նրա միտքն ամբողջովին կլանված էր Երկակի կյանքի հետ անցկացրած երեկոներով: Իր նոր մտքերի պատճառով, նա ժամանակավորապես մոռացել էր իր խորը և թաքնված վիրավորանքը Չարախոսողի հանդեպ:

Այնուամենայնիվ, չորս ամիս անց Երկակի կյանքն անսպասելի թողեց նրան: Հուսահատ սիրտը շփոթություն և դատարկություն էր զգում. նա պետք է իմանար, թե որն էր պատճառը: Նա մտովի վերհիշեց իրենց բոլոր հանդիպումները և ստիպեց Երկակի կյանքին՝ ասել իր որոշման պատճառը: Ի վերջո, Երկակի կյանքն ասաց, որ լսել էր Չարախոսողի պատմությունն այն մասին, որ Հուսահատ սիրտը սիրավեպ էր ունեցել մի աշակերտի հետ: Իրականում, դա չէր նրա զգացմունքների փոփոխության իրական պատճառը. Երկակի կյանքը կորցրել էր հետաքրքրությունը Հուսահատ սրտի հանդեպ: Նա արդեն հաճոյախոսում էր մեկ այլ աղջկա: Երիտասարդ կանայք հեշտորեն հրապուրվում էին այդ ակնառու ուսուցչով:

Հուսահատ սիրտը խիստ վիրավորված էր: Նրա համար անտանելի էր միտքն այն մասին, որ նա ամեն օր տեսնելու էր Երկակի կյանքին: Չկարողանալով դիմանալ դրան՝ նա անմիջապես հեռացավ աշխատանքից:

Մի քանի օր վիրավորանքից տանջվելուց հետո Հուսահատ սիրտը գեղեցկության սրահ բացեց իրեն վստահված քառասուն հազար ավանդի մնացորդով: Նա դադարեց հաճախել դպրոցի շաբաթական հավաքույթներին, թեև Ձեյլոնը կարգադրել էր, որ իր ենթակաները չթողնեին այդ հավաքույթները: Հուսահատ սիրտը չէր ցանկանում կապ ունենալ կեղծավորների հետ, իսկ մարդկանց մեծ մասն այդ հավաքույթներին հենց այդպիսին էր թվում նրան:

Հուսահատ սիրտն օրեցօր ավելի էր խստանում: Նա հազվադեպ էր հիշատակում Զեյլոնի դպրոցը: Այն ջերմեռանդությունը, որը նա մի ժամանակ ազատորեն արտահայտում էր, փոխարինվեց անտարբերությամբ և ցինիզմով: Երբ Հուսահատ սրտին հարցնում էին այդ մասին, նա դավանում էր իր հավատարմությունը Զեյլոնին, բայց սրտի խորքում նա մեղադրում էր նրան, քանի որ թույլ էր տվել Երկակի կյանքի պես այլասերված մարդու՝ ուսուցիչ լինել իր դպրոցում:

Երբ Հուսահատ սրտի փորձաշրջանը մոտենում էր ավարտին, նա արդեն խիստ վիրավորված և դառնացած կին էր, թեև ինքը կտրականապես կհերքեր դա, եթե նրան հարցնեին այդ մասին: Նա անցկացրեց իր մնացած օրերը՝ փորձելով հաշվեհարդար տեսնել նրանց հետ, ովքեր խորը վիրավորանք էին հասցրել իրեն:

Էնդելի քաղաքապետը

Այժմ մենք կպատմենք Եսասերի մասին: Նա պարզապես զարմացած էր իր ստացած գումարի չափից: Նա նույնպես տոնեց իր ուսման ավարտը, բայց բավականաչափ տեղյակ էր Զեյլոնի ուսմունքներից, որպեսզի հեռու մնար անզուսպ քայլերից: Մի քանի օր հանգստանալուց հետո նա սկսեց ներդրումներ անել: Նրա ներդրումները շահավետ էին, և նա արագորեն ավելացրեց իր սկզբնական միջոցները: Իր դրամական միջոցների աճի հետ մեկտեղ նա ավելի հայտնի էր դառնում իր հասակակիցների միջև:

Եսասերը տուն գնեց Էնդելի լավագույն թաղամասերից մեկում և հրավիրեց ազդեցիկ և իշխանություն ունեցող մարդկանց: Պետական պաշտոնյաները, պրոֆեսիոնալ մարզիկները, ընկերությունների գործադիր տնօրենները և այլ ակնառու անձիք վայելում էին նրա առատաձեռն հյուրասիրությունը: Նա արագորեն դառնում էր ամենամեծ կապերն ունեցող մարդը ամբողջ քաղաքում:

Երեք տարի անց Եսասերը որոշեց առաջադրել իր թեկնածությունը Էնդելի քաղաքապետի պաշտոնի համար և հեշտորեն հաղթեց ընտրությունները՝ շնորհիվ իր ֆինանսական ազդեցության և հասարակական կապերի: Իր պաշտոնավարության հենց ամենասկզբում նա ստիպված էր բազմաթիվ որոշումներ կայացնել: Դրանցից մեկը վերաբերում էր դպրոցին: Քաղաքի բնակչության աճի պատճառով դպրոցն ավելի մեծ տարածքի կարիք ուներ: Դպրոցը պետք է հողատարածք գներ, պայմանագրեր կնքեր կապալառուների հետ, զգալի ծախսեր աներ, ինչպես նաև ձեռք բերեր անհրաժեշտ գույք և սարքավորումներ:

Առաջին քայլը՝ միջոցներ հանգանակելն էր: Շաբաթական հավաքույթի ժամանակ Եսասերը լսեց, որ դպրոցին միջոցներ էին անհրաժեշտ: Մինչև հանգանակության ավարտը, նա հազար ավանդից ընդամենը մի փոքր պակաս գումար էր նվիրաբերել:

Եվ ահա եկավ կարևոր որոշում կայացնելու պահը: Դպրոցը բավականաչափ գումար էր հանգանակել՝ գնելու համար մի հողատարածք, որն ընտրել էր: Այդ հողատարածքը շատ հարմար էր, և դպրոցի ունեցած գումարը բավական էր դրա համար: Այնուամենայնիվ, նույն հողատարածքը ցանկանում էր գնել մի մեծ հանրախանութների ցանց: Քաղաքային խորհուրդը բաժանված էր դպրոցի և հանրախանութների ցանցի միջև: Դպրոցը շահույթ չհետապնդող կազմակերպություն էր, ինչը նշանակում էր, որ ընդլայնվելով՝ այն չէր ավելացնի քաղաքի հարկային եկամուտները: Իսկ նոր հանրախանութը մեծ հարկային եկամուտներ կբերեր և հավելյալ աշխատատեղեր կստեղծեր քաղաքացիների համար:

Քաղաքային խորհրդի ձայները կիսվեցին, և որոշիչ ձայնը պատկանում էր քաղաքապետին: Եսասերը հակասական զգացմունքներ ուներ: Հանրախանութների ցանցի սեփականատերերը մեծապես աջակցել էին նրա նախընտրական արշավին՝ տրամադրելով մեծ գումարներ, ինչպես նաև օգտագործելով իրենց ազդեցությունը նրա համար: Նրանք հաճախ էին հյուրընկալվում Եսասերի տանը՝ տարբեր առիթներով:

Եսասերը քվեարկեց նոր հանրախանութի օգտին: Նա արդարացրեց իր որոշումը հանրության առջև՝ պնդելով, որ այն մեծ օգուտ կբերի էնդելի քաղաքացիներին: Նա ասաց, որ հնարավորություն ստեղծեց նոր աշխատատեղերի համար և ավելացրեց քաղաքի շահույթը: Նա առաջարկեց դպրոցին փորձել ընդլայնել իր ներկա շինությունը, թեև գիտեր, որ նրանք չէին կարող անել դա: Նրա որոշումը հիասթափեցրեց Ձեյլոնի անկեղծ հետևորդներին, բայց քաղաքացիների մեծ մասն ի սրտե ողջունեց այն:

Եսասերի երկամյա պաշտոնավարությունը մոտենում էր ավարտին, և նա պատրաստվում էր նախընտրական արշավ սկսել վերընտրվելու համար: Խղճի խայթ զգալով՝ նա հինգ հազար ավանդ նվիրաբերեց էնդելի դպրոցին: Դրա հետ մեկտեղ, խոստացավ տրամադրել մեկ այլ հողատարածք, որի վրա դպրոցը կարող էր կառուցել իր նոր մասնաշենքը: Սա օգնեց նրան վերստանալ Ձեյլոնի հետևորդների մեծ մասի վստահությունը: Թվում էր՝ երիտասարդ առաջնորդը հեշտորեն կվերընտրվեր իր պաշտոնին:

Ռեստորանի տիրուհին

Ավարտելուն պես Բարեգործն իր քսանհինգ հազար ավանդից երեքը նվիրաբերեց՝ Էնդելի դպրոցի նոր մասնաշենքի շինարարությանը: Նա շնորհակալ էր այն ամենի համար, ինչ սովորել էր իր ուսուցիչներից, և ցանկանում էր ինչ-որ կերպով հայտնել իր երախտագիտությունը: Մնացած քսաներկու հազարով Բարեգործը ռեստորան բացեց:

Բարեգործը սիրում էր զբաղվել խոհարարությամբ: Հաշվի առնելով իր նախասիրությունը և գործարար ձիրքը՝ ռեստորան բացելը իր պարգևները գործածելու և իր համայնքին ծառայելու լավագույն ձևը թվաց նրան: Նա հրավիրեց Էնդելի լավագույն խոհարարներից մի քանիսին: Համակարգելով նրանց գիտելիքները՝ նա գերազանց ճաշացանկ պատրաստեց: Նրա ռեստորանն անմիջապես հաջողություն ունեցավ:

Թեև Բարեգործը բազմաթիվ մրցանակներ ստացավ իր ռեստորանի համար, նա միշտ վերագրում էր իր հաջողությունը Զեյլոնի իմաստությանը: Բոլոր հարցազրույցներում նա մշտապես շնորհակալություն էր հայտնում իր նախկին ուսուցիչներին և գովում էր իր աշխատակազմին: Նա հրաժարվում էր պարծենալ իր ջանքերով և պնդել, որ իր ուժերով է հաջողության հասել: Նա գիտեր, որ այդ ամենը միայն Զեյլոնի շնորհիվ էր:

Բարեգործն օգտագործեց իր շահույթները՝ օգնելու համար և՛ իր համայնքին, և՛ Էնդելի դպրոցին: Նա անվճար սնունդ էր տրամադրում դպրոցի բարեգործական ճաշարանին, որը կերակրում էր կարիքավոր մարդկանց: Հաճախ նա ինքն էր երեկոներ կազմակերպում, որպեսզի սնունդ բաժաներ այդ բարեգործական ճաշարանում: Նա սիրով էր տաք կերակուր տալիս աղքատներին: Նա որոշում էր կայացրել իր ռեստորանի բոլոր եկամուտների 25 տոկոսը նվիրաբերել Էնդելի դպրոցին: Իր հնգամյա փորձաշրջանի ավարտին նա դպրոցին արդեն նվիրաբերել էր ավելի քան երկու հարյուր հազար ավանդ:

Բարեգործը միշտ օգնում էր նրանց, ովքեր շատ էին աշխատում, բայց չէին կարողանում հոգալ իրենց ծախսերը: Ֆինանսական օգնության հետ մեկտեղ, նա պատրաստակամորեն կիսվում էր մարդկանց հետ Զեյլոնի իմաստության և հաջողության սկզբունքներով: Նա շարունակ ասում էր նրանց, ում օգնություն էր ցուցաբերում, որ պարտական է Զեյլոնին իր բոլոր ձեռքբերումների համար:

Թեև Բարեգործի ռեստորանը հաջողություն ուներ, նրան ոչ մի անգամ չհրավիրեցին մասնակցելու Եսասերի տանը տեղի ունեցող հասարակական միջոցառումներին, և ո՛չ էլ խնդրեցին որևէ ղեկավարող

դիրք զբաղեցնել քաղաքում: Նա չափազանց ծայրահեղ էր համարվում՝ Ձեյլոնին հետևելու պատճառով: Ազդեցիկ էնդելցիների կողմից մերժվելը բնավ չէր հիասթափեցնում Բարեգործին: Նա ձգտում էր հասնել կարիքավորներին: Նա սիրում էր շաբաթական հավաքույթները դպրոցում և մշտապես առաջարկում էր իր օգնությունը՝ նվիրատվություններ կատարելով կամ տարբեր ծառայություններ մատուցելով: Բարեգործը կայացած երիտասարդ կին էր:

Դատաստանի որոշված օրը

Եկավ փորձաշրջանի վերջին օրը: Նրանք, ովքեր պետք է կանգնեին դատաստանի առջև, մտածում էին, որ դա տեղի էր ունենալու հաջորդ հինգ տարիների ընթացքում, որովհետև առաջին հինգ տարին արդեն անցել էր: Ոչ ոք չէր պատկերացնում, որ դատաստանն այդքան շուտ էր գալու:

Այդ օրն սկսվեց սովորականի պես, բայց ավարտվեց շատ անսպասելի: Ուշ գիշերով Աֆաբելի Թագավորական պահապանները տարան երկու հազար նախկին աշակերտներին: Նրանց գաղտնի ելքը քաղաքից տեղի ունեցավ, երբ մնացած բոլոր էնդելցիները քնած էին: Այս երկու հազար երիտասարդ քաղաքացիներին տարան գաղտնի անցումով: Դա խորը թունել էր, որն անցնում էր Ադոնգա գետի ներքևով: Այդ անցումից դուրս գալուն պես նրանք ևս երկու օրվա ճանապարհ անցան անջուր անապատով: Ամբողջ ճանապարհին Գլխավոր պահապանը հոգում էր նրանց ամեն մի կարիքը՝ տրամադրելով սնունդ, ջուր և այլ իրեր՝ հատուկ պահեստից:

Պահապանները սիրալիր էին, բայց՝ զուսպ: Նրանք ամբողջովին կենտրոնացած էին իրենց առաջադրանքը կատարելու վրա: Թեև նրանք պատասխանում էին էնդելցիների որոշ հարցերին, կային հարցեր, որոնց լիազորված չէին պատասխանելու: Պահապանների սովորական պատասխանը նման հարցերին՝ «Ամեն ինչ հայտնի կլինի իր ժամանակին», միայն ավելի էր բորբոքում էնդելցիների հետաքրքրությունը:

Էնդելցիները գրեթե չէին նկատում անապատի դժվարությունները՝ երկար սպասված քաղաքն ուղևորվելիս: Երրորդ օրվա արևածագին նրանք հասան մի բլրի գագաթին: Այդտեղից՝ վաղորդայնի արևի ներքո երևաց վեհաշուք քաղաքը: Աֆաբելը նույնիսկ ավելի փառահեղ էր, քան նրանցից որևէ մեկը համարձակվում էր պատկերացնել:

Քաղաքին մոտենալիս՝ հայտնությունն այդ քաղաքի վեհության մասին ավելանում և ընդլայնվում էր: Նույնիսկ նայելով Աֆաբելին հարթա-

վայրերի կողմից՝ ակնհայտ էր, որ այն անզուգական էր: Այդ քաղաքի արվարձանների համեմատ էնդելն անշուք էր:

Հասնելով քաղաքի կենտրոնական մասին՝ էնդելցիները բացահայտեցին, որ Աֆաբելի ամեն ինչում կենդանություն կար: Այդ աներևակայելի վայրում թռչունները ոչ միայն երգում էին, այլև խոսում էին: Նրանց հիասքանչ և քաղցրաձայն երգերն արտացոլում էին այն գեղեցկությունը, որը նրանք տեսնում էին, և է՛լ ավելի էին փառավորում այդ քաղաքը:

Սա այնքան էլ չզարմացրեց էնդելցիներին, քանի որ նրանք արդեն նկատել էին, որ Թագավորական պահապանների ձիերը խոսում էին: Այդ ազնիվ արարածները հաղորդակցվում էին ոչ միայն իրար հետ, այլև՝ իրենց հեծյալների: Ակնհայտ էր, որ ձիերը և հեծյալները ջերմ հարաբերություններ ունեին: Նրանք հասկացան, որ բոլոր արարածներն Աֆաբելում օժտված էին խոսելու, ինչպես նաև սեր և ուրախություն զգալու ունակությամբ:

Որտեղ էլ դառնային երիտասարդ էնդելցիները, նրանց առջև հափշտակիչ տեսարաններ էին բացվում: Նրանք ակնածանքով էին համակվում Աֆաբելի հանդեպ: Նույնիսկ քաղաքի օդը թարմություն էր բերում: Այն հաղորդում էր և՛ պարզություն նրանց մտքերին, և՛ ուժ՝ ճանապարհից հոգնած մարմիններին: Ամենից շատ նրանց հետաքրքրում էր ամբողջ քաղաքով հոսող գետը: Թվում էր՝ այն կենդանի էր, ասես դրանում կյանք էր առկայծում: Թովիչ մեղեդիները միահյուսվում էին օդի հետ և հանդարտեցնում էին նրանց հոգնած անձերը հարատև խաղաղության զգացումով: Ամեն ինչը՝ ամենափոքր բույսերից մինչև օդը, ավելի քան կյանքով լեցուն էր թվում. ամեն ինչ այդտեղ կյանք պարգևելու կարողություն ուներ: Այդ հրաշալի վայրում ամեն ինչ համակված էր լեցունությամբ:

Երիտասարդ քաղաքացիները, չկարողանալով զսպել իրենց, պարզում էին իրենց ձեռքերը և հպվում այն ամենին, ինչ տեսնում էին՝ անցնելով այդ մեծ քաղաքով: Նրանք ուզում էին աննկատ փախչել և անձամբ հետազոտել ամեն ինչ, բայց հասկանում էին, որ այդ պահին դա անթույլատրելի էր:

Նրանց առաջնորդեցին դեպի մի հսկայական դահլիճի մեծ նախասրահ: Այստեղ տղամարդկանց և կանանց առանձնացրին: Այն գերկառույցը, որտեղ ուղեկցեցին երիտասարդ էնդելցիներին, այնքա՜ն մեծ էր, որ անսահման էր թվում: Առնվազն հարյուր հազար մարդ ազատորեն կարող էր տեղավորվել ներսում:

Նախասրահում գտնվող բաժիններում էնդելցիներին թույլ տվեցին թարմանալ անուշաբույր լոգարաններում կամ ցնցուղների ներքո, ին-

չից հետո բոլորին տրվեցին զգեստներ, որոնցով նրանք պետք է հանդիպեին թագավորին: Բոլորը ուրախությամբ հանեցին էնդելի փոշոտ հագուստները: Նրանց հին զգեստներն անհարմար և տարօրինակ կերպով անտեղի էին թվում այդ լուսապայծառ քաղաքում: Աֆաբելում բնակվելու խորը ցանկությունը միահյուսվում էր ամեն էնդելցու էության մեջ: Նրանք տունդարձի խիստ տարօրինակ զգացում ունեին:

Լողանալուց և հագնվելուց հետո բոլորը կրկին միացան՝ նախաճաշի համար: Նրանց հանդիսավոր նախաճաշը տեղի էր ունենում հոյակապ բացօթյա բակում, որտեղ նրանց կարճ ժամանակով թույլ տվեցին սնվել և շփվել իրար հետ: Նախաճաշելուց հետո նրանց կրկին բաժանեցին, այս անգամ՝ անուններով: Բարեգործը, Եսասերը և գրեթե հինգ հարյուր այլ էնդելցիներ տարվեցին բակի աջ կողմում գտնվող մի սրահ: Հուսահատ սիրտը, Խաբվածը և Անկախը մնացած հազար հինգ հարյուրի հետ տարվեցին մեկ այլ սրահ, որը գտնվում էր ձախ կողմում: Մուտք գործելով սրահները՝ նրանք նկատեցին, որ ամեն սրահի դռների շրջանակների վերևում անվանում էր գրված: Այդ անվանումները գրված էին տարօրինակ լեզվով, որը հայտնի չէր երիտասարդ էնդելցիներին: Սրահներից մեկի անունը «Կյանքի սրահ» էր, իսկ մյուսինը՝ «Արդարադատության սրահ»:

Կյանքի և Արդարադատության սրահները

Մուտք գործելով ձախ կողմում գտնվող սրահի շեմից՝ Անկախը տարօրինակ անհանգստություն զգաց, որը գրեթե սարսափի էր հասնում: Նա մտովի վերադարձավ իր դպրոցական տարիներին և փորձեց մխիթարել իրեն այն բաներով, որոնք հպանցիկ լսել էր Ձեյլոնի մասին: Հիմա այդ ամենն այնքա՜ն շփոթեցնող էր թվում: Նա զղջաց, որ այդքան շատ դասեր էր բաց թողել:

Ակնհայտ է, որ նա սխալ էր. թե՛ քաղաքը, թե՛ թագավորը, որոնց մասին պատմում էին դպրոցում, գոյություն ունեին: Նա փորձեց զսպել ուժգնացող վախը և կենտրոնանալ այն ամենի վրա, ինչ հիշում էր Ձեյլոնի սիրո և ողորմության մասին: Այդ պահին նա չէր ցանկանում մտածել Ձեյլոնի արդարության և սրբության մասին, թեև հենց դրանք էին պայքարում իր ուշադրության համար: Նա փորձեց հանգստացնել իրեն այն բանով, որ նա լավ քաղաքացի էր և աջակցում էր քաղաքի կամավորական նախաձեռնություններին:

Անկախը խորը շունչ քաշեց և նայեց շուրջը՝ գնահատելու համար այն շրջապատը, որտեղ գտնվում էր: Առանց որևէ ջանք անելու նկա-

տեց, որ գտնվում էր էնդելի ամենավատ բնակիչների միջև: Նա ճանաչեց գողերի, խաբեբաների և հարբեցողների: Այդտեղ էին այնպիսի մարդիկ, ովքեր հազվադեպ էին աշխատում, նաև նրանք, ովքեր աշխատում էին ամեն ինչ իրենց ուզածով անել: Նրա վախն ավելանում էր, բայց հենց այն պահին, երբ այն արդեն սպառնում էր կլանել նրան, նա նկատեց Հուսահատ սրտին: Անկախը փակեց աչքերը և թեթևության հոգոց հանեց: Նա անմիջապես հիշեց, որ Հուսահատ սիրտը Ձեյլոնի ամենաանկեղծ և խանդավառ հետևորդն էր իրենց դասարանում: Նա կարծես նույնիսկ լսել էր, որ Հուսահատ սիրտն աշխատում էր դպրոցում: Եթե նա այս սրահում է՝ իր հետ, ամենայն հավանականությամբ, ամեն ինչ լավ կավարտվի:

Քայլելով դեպի Հուսահատ սիրտը՝ Անկախը բախվեց Խաբվածին: Եվս մեկ լավ նշան: Դպրոցից հետո Անկախն այլևս չէր շփվել Հուսահատ սրտի հետ, բայց նա նվիրված հավատացյալ էր համարում Խաբվածին: Նրանք նույնիսկ վիճում էին Ձեյլոնի մասին: Հին ընկերոջը գտնելուց հետո Անկախի տրամադրությունը լիովին փոխվեց:

Խաբվածն աշխույժ էր և դրականորեն էր տրամադրված: Նրանք սկսեցին զրուցել, և Անկախը դադարեց վախենալ: Հավանաբար, Ձեյլոնի ողորմությունն ավելին է, քան նա կարծում էր: Չէ՞ որ նա ներել է բոլորին այդ սրահում, թեև նույնիսկ իր մտքով չէր անցնի, որ այդ մարդիկ կարող էին փրկված լինել: Իհարկե, սա ճշմարիտ է: Չէ՞ որ նույնիսկ մեծ ուսուցիչ Երկակի կյանքը կանգնած էր ընդամենը մի փոքր հեռվում: Անկախը ավելի վստահ զգաց իրեն, որ ամեն ինչ լավ է լինելու: Այնուամենայնիվ, նա մի փոքր մտահոգված էր Բարեգործի և Եսասերի բացակայությամբ: Նա նույնպես չէր կարող անտեսել, որ մի քանիսը լաց էին լինում սրահի անկյուններում: Բայց միգուցե նրանք պարզապես տպավորված էին Ձեյլոնի բարությա՞մբ:

Մյուս սրահը նույնպես լի էր բուռն զգացմունքներով: Այն ընկերները, ովքեր դպրոցն ավարտելուց հետո կորցրել էին կապն իրար հետ, ոգևորվել էին, քանի որ կրկին միացել էին իրար: Բոլոր զրույցները լի էին ոգեշնչմամբ, քանի որ շուտով նրանք տեսնելու էին Ձեյլոնին: Եկել էր ժամանակը, երբ իրենք մուտք էին գործելու իրենց ճշմարիտ կոչման և նախասահմանության մեջ:

Բոլորն աշխուժորեն քննարկում էին վեհաշուք քաղաքի մասին: Նրանք միշտ գիտեին, որ այն ավելի լավն էր լինելու էնդելից, բայց առաջին տպավորությունը գերազանցել էր իրենց սպասումները: Նրանց տեսածն ավելին էր, քան իրենք կարող էին ընկալել: Հնարավո՞ր է արդյոք, որ նրանք անցկացնելու էին իրենց կյանքի մնացած

մասն այդ փառավոր վայրում: Նրանցից ամեն մեկը պատրաստ էր հատակներ մաքրել՝ նման պատվին արժանանալու համար: Ովքեր սպասում էին այդ սրահում, գիտեին, որ իրենք հետևել էին Ձեյլոնին, բայց աստիճանաբար ներկաներն ավելի լրջախոհ դարձան: Արդյո՞ք նրանք հավատարիմ էին եղել: Շուտով կիմանային այդ մասին: Ոգևորությունը որոշ չափով խառնվեց վախի հետ, մինչ այդ խոնարհ ծառաներն սպասում էին՝ տեսնելու իրենց Թագավորին:

Առաջինը պետք է դատվեին Կյանքի սրահում գտնվող մարդիկ: Այնուամենայնիվ, մենք կանդրադառնանք նրանց ավելի ուշ: Իսկ այժմ տեսնենք, թե ինչ տեղի ունեցավ Արդարադատության սրահում:

Կանչերը

Արդեն կեսօր էր: Արդարադատության սրահում գտնվողները հասցրել էին մխիթարություն և վստահություն ձեռք բերել՝ մտածելով, որ ամեն ինչ լավ է լինելու: Այն ամենը, ինչը շփոթեցնող կամ սխալ էր թվում իրենց կյանքում, նրանք վերագրում էին Ձեյլոնի ողորմությանը կամ Նրա առեղծվածային ճանապարհներին: Այս մտքերը մխիթարում էին նրանց:

Հազար հինգ հարյուր էնդելցիներից առաջինը կանչվեց Անկախը: Չորս Թագավորական պահապաններ եկան, որպեսզի ուղեկցեին նրան դեպի Դատաստանի մեծ սրահը: Սենյակից դուրս գալիս՝ փորձելով թեթևացնել ծանր մթնոլորտը, նա ժպտաց և աչքով արեց պահապաններից մեկին, ով պատահաբար նայեց իր աչքերին: Ի զարմանս նրան՝ պահապանը բոլորովին չարձագանքեց:

Իր ետևում լսելով սրահի դռների փակվելու ձայնը՝ Անկախի հարցերն սկսեցին վերադառնալ: Նրա սիրտը թմբուկի պես բաբախում էր կրծքավանդակում: Սրտի հարվածներն այնքան բարձր էին, որ նրա կարծիքով՝ պահապանները նույնպես լսում էին դրանք, բայց նույնիսկ այդ դեպքում որևէ կերպով ցույց չէին տալիս դա: Նա այնքա՜ն կցանկանար, որ Խաբվածն իր հետ գար: Շուտով նա կանգնելու էր Դատավորի առջև և կգերադասեր մենակ չլինել: Անկախն արագորեն կորցնում էր իր վստահությունը:

Մինչև Մեծ սրահը մտնելը, պահապաններից մեկն արագորեն ծանոթացրեց նրան Դատաստանի սրահում պատշաճ պահվածքի կանոններին: Անկախը գլխով արեց, թեև վախենում էր, որ չէր հիշի նրա ասածները: Նրա զարկերակը գրեթե հարվածում էր ականջների մեջ՝ սպառնալով վնասել նրա լսողությունը: Պահապանը գլխով արեց՝ ի

նշան, որ Անկախը հասկացավ ընթացակարգը, և սրահի դռները լայն բացվեցին:

Անելով առաջին քայլը դեպի այդ ահռելի սրահը՝ Անկախը նկատեց, որ իր մարմինը դողում է: Քրտինքի կաթիլները կուտակվեցին նրա՝ սովորաբար հանդարտ հոնքերին: Նա լիովին շփոթված էր, որովհետև այն, ինչ տեսավ, խորապես ցնցեց իրեն:

ԳԼՈՒԽ 3

ԱՖԱԲԵԼԻ ԴԱՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ Ա

«Հիսուսը շարունակ օգտագործում էր այս օրինակները, երբ խոսում էր բազմությունների հետ: Իրականում, քանի որ մարգարեներն ասել էին, որ Նա բազմաթիվ օրինակներ էր օգտագործելու, նա երբեք չէր խոսում նրանց հետ առանց՝ գոնե մեկ օրինակի: Որովհետև այսպիսի մարգարեություն է եղել. «Ես կխոսեմ առակներով. Ես կբացատրեմ ժամանակվա սկզբից թաքնված խորհուրդները»»:

— Մատթեոս 13.34,35, TLB

Մինչև մեր այլաբանական պատմությունը շարունակելը, ուզում եմ ևս մեկ անգամ ընդգծել Հիսուսի խոսքերը գալիք դատաստանի մասին: Հովհաննես 12.28-ում Նա հայտնում է. «Այն խոսքը, որ Ես խոսեցի, նա կդատի նրան հետին օրը»: Մենք արդեն գիտենք այն չափանիշը, որով դատվելու ենք Նրա գահի առջև: Այդ չափանիշը՝ Սուրբ գիրքն է:

Այդ իսկ պատճառով, Զեյլոնի խոսքերից շատերը, որոնք նա կասի Դատաստանի սրահում, վերտողային նշումներ կունենան՝ թվերի տեսքով: Դրանք աստվածաշնչյան հատվածների մեջբերումներ են՝ տարբեր թարգմանություններով, որոնք դուք կարող եք գտնել այս գրքի վերջում: Զեյլոնի խոսքերի մեծ մասը բաղկացած է աստվածաշնչյան հատվածներից, որոնք օգտագործվում են մեր պատմության հերոսներից ամեն մեկի վերաբերյալ:

Մտապահե՛ք սա և եկեք վերադառնանք Աֆաբել:

Անկախի դատաստանը

Մեծ սրահը շատ ավելի տպավորիչ էր, քան Անկախը կարող էր պատկերացնել: Եթե նրան հնարավորություն տրվեր պատմելու իր տպավորությունների մասին այն հազար հինգ հարյուր մարդկանց,

ովքեր դեռ սպասում էին, նա չէր կարողանա օգտագործել ոչ մի բառ, կամ օրինակ՝ դրա վեհությունը նկարագրելու համար: Այն ամենը, ինչ նա տեսել էր էնդելում, հնացած էր այդ սրահի ճարտարապետության համեմատ: Սրահում, ամենայն հավանականությամբ, ներկա էր ավելի քան հարյուր հազար մարդ: Անկախը երբեք չէր տեսել այդքան շատ մարդկանց՝ միաժամանակ և մեկ վայրում:

Առաջ քայլելով՝ Անկախը նկատեց Աֆաբելի քաղաքացիների դեմքերը: Առաջինը՝ նա ուշադրություն դարձրեց, որ նրանք արքայական կեցվածք և պայծառ դեմքեր ունեին: Բացի այդ՝ նրան մի կողմնակի միտք այցելեց. նա ապշած էր այդ մարդկանց զարմանալի գեղեցկությունից: Նրանք ասես այլ աշխարհից լինեին: Այս վերափոխման պատճառն այն էր, որ բոլորին թույլատրված էր ուտել Կյանքի ծառից:

Անկախը մտածեց. *«Հնարավո՞ր է, որ այս մարդիկ նախկին էնդելցիները լինեն»*: Հանկարծ նա տեսավ մի ծանոթ կնոջ: Նրա անունը Բարություն էր, և նա մի քանի տարով մեծ էր Անկախից: Նա հիշեց, որ Բարությանը մշտապես ծաղրում էին նրա անբարետես արտաքինի համար: Այժմ նա հոյակապ տեսք ուներ: Նրա դիմագծերը նույնն էին՝ այնպես, որ Անկախը հեշտորեն ճանաչեց, բայց ինչ-որ կերպով նա ավելի գեղեցիկ էր, քան ցանկացած մարդ, ում նա ճանաչում էր էնդելում: Իրականում, ում նա տեսնում էր, նույնիսկ՝ ամենապակաս գեղեցիկ մարդիկ, շատ ավելի գրավիչ էին իր ծննդավայրի մարդկանցից:

Ուշքի գալով՝ Անկախը նկատեց, որ բոլոր ներկաների հայացքներն ուղղված էին մի տեղ, որը գտնվում էր անմիջապես իր առջև: Նա երբեք նման բան չէր տեսել:

Սրահի վերջում մի գահ էր դրված, բայց «գահ» բառը չի կարող արդարացիորեն նկարագրել այն: Հիրավի՝ դա ամենափառավոր գահն էր: Տեսնելով դրա վրա նստողին՝ Անկախն անմիջապես հասկացավ, որ հենց նա էր այդ քաղաքի վեհության աղբյուրը: Ամեն բան բխում էր գահի վրա նստած մարդուց: *«Երևի թե՝ նա Ձեյլոնն է»*,– մտածեց Անկախը: Հանկարծ նա խորապես հավատաց նրան, ում գոյությունը կտրականապես հերքում էր:

Ձեյլոնի դիմագծերը գեղեցիկ էին, բայց և՝ խիստ, համենայն դեպս, այդ պահին: Ավելի ճիշտ կլինի ասել՝ հրաշալի, բայց վախեցնող: Ձեյլոնի տեսքը գերող և տպավորիչ էր, սակայն՝ որքան ավելի էր Անկախը մոտենում նրան, այնքան սարսափն ավելանում էր իր սրտում: Այն վստահությունը, որը նա մինչև այդ ուներ, լիովին ի չիք էր դարձել: Ի՞նչ կլինի իր հետ:

Անկախը փորձում էր պահպանել ինքնատիրապետումը՝ կրկնելով ինքն իրեն, որ նա մոտենում է ողորմած առաջնորդի: Նրա ներսում

պայքար էր ընթանում. նա սկսեց կասկածել, որ դրական դատավճռի կարժանանա:

Շարունակելով մոտենալ՝ Անկախը հասավ մի նեղ հարթակի, որտեղ նրան պատվիրեցին կանգ առնել: Նրա վերևում՝ գահի վրա, խոյանում էր Զեյլոնը: Նա ինքը վճռականության մարմնավորումն էր, երբ դիմեց հավաքվածներին.

– Բոլորը... պետք է ճանաչեն և հասկանան, որ Ես Նա եմ, Ով քննում է մտքերը (մտածմունքները, զգացմունքները և մտադրությունները) և սրտերը [սրտի խորքերը], և Ես կտամ ձեզնից ամեն մեկին այն [վարձատրությունը ձեր կատարածի համար], ինչին ձեր գործն արժանի է[1]:

Անկախը մյուսների հետ լսում էր, երբ հանկարծ Զեյլոնը նայեց ուղիղ նրա աչքերին և հրամայեց.

– Հաշի՛վ տուր քո տնտեսության համար[2]:

Մինչև Անկախը կհասցներ մի բառ ասել, հայտնվեց հոլոգրաֆիկ պատկեր, որը ցուցադրում էր նրա կյանքն էնդելում՝ դպրոցի առաջին օրվանից մինչև նախորդ օրը: Ամեն մի գործ, խոսք և դրդապատճառ երևաց և հայտնվեց ներկա գտնվող վկաների բազմությանը: Անկախը երկյուղած էր այն հայտնությունից, որը նա ստացավ Զեյլոնի մասին. «Չկա ոչ մի էակ, որը ծածկված է Նրանից, այլ ամեն ինչ բաց և բացահայտ է, մերկ և անպաշտպան է Նրա աչքերի առջև, ում մենք պետք է հաշիվ տանք»[3]:

Անկախը կծկվեց՝ դիտելով իր հիմար, անբարո և եսասեր արարքները: Այս ամենին բախվելը նման բազմամարդ հավաքույթի առջև՝ անակնկալի բերեց, շփոթեցրեց և ապշեցրեց նրան: Այն, ինչն անկարևոր և նույնիսկ անվնաս էր թվում էնդելում, այժմ գարշելի էր թվում այդ փառավոր դատավորի և Աֆաբելի թագավորական քաղաքացիների առջև: Նա զարհուրեց իր իսկ վարքից: Ինչպե՞ս կարող էր այդքան սխալ, անզգա և անխելք լինել: Նա մտովի ճիգ գործադրեց՝ հույսի մի նշույլ գտնելու համար, և գտավ այն. նրան թվաց, որ իր բարի գործերն ավելի շատ էին չար գործերից:

Երբ նրա կյանքի դիտումն ամբողջությամբ ավարտվեց, նա թեթևություն զգաց, թեև սպասում էր շատ խիստ հանդիմանության կամ այլ տեսակի պատժի: Նա երջանիկ կլիներ, եթե համարվեր փոքրագույնն այդ ժողովում: Նա համոզված էր՝ Զեյլոնը կտեսներ, որ իր բարի գործերն ավելին են իր չար գործերից:

Դրանից հետո Զեյլոնը հարցրեց Գլխավոր դպիրին.

– Անկախի անունը գրվա՞ծ է Կյանքի գրքում:

– Ո՛չ, իմ տե՛ր,– անվարան պատասխանեց Գլխավոր դպիրը:

Դրանից հետո Զեյլոնը խոսեց.

– Անկա՛խ, դու մեղավոր ես՝ չար բնությունն ընտրելու մեջ: Դու տարվելու ես Լոն լքված երկիրը, որտեղ կանցկացնես կյանքիդ մնացած մասը՝ չարչարվելով բացարձակ խավարի, անհուսության և միայնության մեջ:

Ցնցված՝ Անկախը բացականչեց.

– Տե՛ր, ինչո՞ւ:

– Դու չէիր հավատում ինձ,– պատասխանեց Զեյլոնը:– Քո ուսուցիչները սովորեցնում էին. «Եթե չհավատաք, որ Ես Եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք»[4]: Նույնպես և սովորեցնում էին. «Եվ էլ ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի տակ մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ՝ փրկվել»[5]:

Անկախը կրկին խոսեց.

– Տե՛ր Զեյլոն, իսկ իմ բարի գործե՞րը: Մի՞թե դրանք չեն գերակշռում իմ չար գործերը:

Տեր Զեյլոնը պատասխանեց.

– Հարցն այն չէ՝ մարդը քի՞չ է խախտում օրենքը, թե՞ շատ, որովհետև «նա, ով պահում է Զեյլոնի օրենքն ամբողջությամբ, բայց մի փոքր սայթաքում է, նույնքան մեղավոր է, որքան նա, ով խախտել է բոլոր օրենքները»[6]:

Անկախը, մի փոքր համարձակություն ձեռք բերելով, պատասխանեց.

– Այդ դեպքում, ինչպե՞ս կարելի է փրկվել:

Զեյլոնն անմիջապես չպատասխանեց այդ հարցին: Նա նայեց Աֆաբելի քաղաքացիներից մի կնոջ: Այդ կինը, հավանաբար, Զեյլոնի կառավարիչներից մեկն էր, քանի որ նա նստած էր գահի վրա, որը նման էր Զեյլոնի գահին, բայց ավելի փոքր էր: Այդ կինը խոսեց.

Մի՞թե քո ուսուցիչները չեն սովորեցրել քեզ. «Զեյլոնը փրկեց ձեզ իր հատուկ բարեհաճությամբ, երբ դուք հավատացիք: Եվ դուք չեք կարող համարել, որ դա ձեր արժանիքն է: Դա պարգև է Զեյլոնից: Փրկությունը՝ վարձատրություն չէ մեր բարի գործերի համար, որպեսզի մեզնից ոչ ոք չպարծենա դրանով»[7]:

– Շատ վաղուց ես գին վճարեցի այն օրինազանցությունների համար, որոնք էնդելի քաղաքացիները գործել էին և գործելու էին: Անհնար էր, որ որևէ մեկն անմեղ մնար իմ առջև, կամ փրկեր իրեն իր դավաճանություններից: Բայց քանի որ ես սիրեցի բոլորին, ինքս վճարեցի նրանց անօրինությունների գինը: Իմ փրկությունը՝ պարգև է, որն անկարելի է վաստակել: Անհնար էր կատարել բավականաչափ բարի գործեր՝ Աֆաբելի քաղաքացիությանն արժանանալու համար. այն

տրվում է ինձ հավատալու միջոցով: Սակայն դու մերժեցիր այն, ինչ ես արել էի՝ քո կյանքը փրկելու համար:

Ցնցված՝ Անկախը լուռ էր մի քանի վայրկյան, իսկ հետո սթափ կերպով պատասխանեց.

– Ես հասկանում եմ:

Նա այնպիսի զգացողություն ուներ, ասես խորտակվելու էր անհուսության ծովում: Փորձելով ինչ-որ փաստարկ գտնել՝ նա հարցրեց.

– Ուրեմն իմ բոլոր գործերը զո՞ւր էին:

Ձեյլոնը պատասխանեց.

– Կրկին գրված է. «Մահացածները ոչինչ չգիտեն: Նրանք չունեն վարձատրություն ապագայում, և ո՛չ էլ հիշվում են: Այն, ինչ նրանք գործել են իրենց կյանքում՝ նրանց սերը, ատելությունը, նախանձը՝ ամենը անցել-գնացել է: Նրանք այլևս բաժին չունեն որևէ բանում»[8]: Եվ կրկին. «Որովհետև չարերն ապագա չունեն: Նրանց լույսը կհանգցվի»[9]:

Անկախը հանկարծակիի եկավ Ձեյլոնի խոսքերից՝ չկարողանալով ոչինչ պատասխանել: Նա զղջաց բոլոր բաց թողած դասերի համար: Միգուցե, եթե հաճախեր այդ դասերին, նա կլսեր ճշմարտությունը և չէր անի այն սխալը, որը ճակատագրական դարձավ իր համար:

Դրան հետևող լռության վայրկյաններին Անկախը մտաբերեց այն, ինչով նա մխիթարում էր իրեն ամբողջ օրը: Նա կրկին զինվեց համարձակությամբ և ասաց.

– Այո՛, այն, ինչ դու ասում ես, ճշմարիտ է, բայց Ձեյլո՛ն, դու ողորմա՛ծ թագավոր ես: Եթե դա ճիշտ է, ինչպե՞ս կարող ես արտաքսել ինձ:

Ձեյլոնը պատասխանեց.

– Ես ողորմած թագավոր եմ, և հենց այդ պատճառով եմ արտաքսում քեզ: Որոշելով ապրել էնդելում այնպես, ինչպես դու ապրեցիր՝ դու ընդմիշտ ընտրեցիր քո բնությունը, որը չար տիրակալ Դագոնի բնությունն է: Ինչպե՞ս ես կարող էի ողորմած, արդար և սիրող լինել, եթե թույլ տայի քո անբարո բնությանը՝ պղծել այս մեծ քաղաքի մաքրությունը: Ես վտանգի կենթարկեի Աֆաբելի անմեղ բնակիչներին: Կարճ ժամանակ անց այն էությունը, որը դու ընտրել ես, կարտահայտվեր և կապականեր հազարավոր մաքուր մարդկանց: Դու ընտրել ես քո ճանապարհը: Եվ կստանաս նույն հատուցումը, ինչ ստացավ Դագոնը, ում դու հետևել ես: Եթե այն պատիժը, որը տվեցի քեզ, պակաս լիներ նրա պատժից, ես անարդար իշխան կլինեի: Իսկ ես այդպիսին չե՛մ:

Ձեյլոնը դիմեց բազմությանը և մեջբերեց իր հոր վաղեմի խոսքերից.

– Նա, ով անարգում է խոսքը, կկործանվի, բայց նա, ով վախենում է պատվիրանից, կվարձատրվի[10]:

Բազմությունը հանդիսավոր լռությամբ ընդունեց այն, ինչ կատարվեց դրանից հետո: Թագավորը պատվիրեց իր ծառաներին.

– Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք: Վե՛ր առեք դրան, դրսի խավա՛-ը գցեք: Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը: Որովհետև շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված[11]:

Անկախը սարսափով և զարհուրանքով լի ճիչեր էր արձակում, մինչ Գլխավոր պահապանը կապեց նրան և դուրս տարավ սրահի կողքի դռնից: Հազարավոր ներկաներից նույնիսկ մեկ ձայն չլսվեց: Նրանք ափսոսանքով հետևում էին իր կյանքն անմտորեն վատնած մարդուն, ով տարվում էր դեպի իր ցմահ պատիժը:

Սրահից դուրս բերելուն պես՝ Անկախին տարան մի մեծ սպասասրահ: Այնտեղ կային հազարավոր փոքրիկ ճաղապատ բանտախցեր, որոնցում պահվում էին դատապարտվածները, մինչև որ լրանար արտաքսվողների թիվը: Սպասասրահի մուտքի վերևում գրված էին հետևյալ բառերը.

> «Երանելի՜ են Նրա պատվիրանները պահողները, որ նրանցը կլինի իշխանությունը կյանքի ծառի վրա, և քաղաքի դռնով ներս կմտնեն: Բայց դուրսն են շները և կախարդները և պոռնիկները և սպանողները և կռապաշտները և ամեն ստություն սիրողն ու գործողը»[12]:

Անկախը հառեց իր հայացքն այդ խոսքերին: Կատաղությունն սկսեց եռալ նրանում: Այժմ նա լիովին գտնվում էր իր էության ազդեցության ներքո: Ցանկացած լավ բան, որը դեռ կար նրա բնավորության մեջ, կլանվել էր այն բարոյական կեցվածքով, որը նա ընտրել էր: Նրա վարքն արագորեն վատթարանում էր, և նա կատաղած շան էր նմանվում: Առանց թագավորի ազդեցության՝ նա ամբողջովին թողնված էր իր անբարո մտքին:

Խաբվածը Զեյլոնի առջև

Անցավ մի քանի ժամ: Շատերն էին կանչվել Դատաստանի սրահը: Մի քանի հարյուր սպասողների թվում էին Խաբվածը, Հուսահատ սիրտը և Երկակի կյանքը: Խաբվածը դեռ դրական էր տրամադրված, և նրա կեցվածքը հույս էր հաղորդում մյուսներին:

Դռները բացվեցին, և չորս պահապանները կրկին հայտնվեցին՝ այս անգամ կանչելով Խաբվածին: Նա ամբողջովին լարվեց և սկսեց դողալ: Եկել էր նրա ժամանակը: Իր լարվածությունը թաքցնելու համար (ինչը նրա մոտ լավ էր ստացվում) նա ասաց մնացողներին.

– Դե՛ ինչ, իմ հերթը հասավ:

Այն բանից հետո, երբ Խաբվածին արագ ծանոթացրին պատշաճ պահվածքի կանոններին, Դատաստանի սրահի դռները բացվեցին, և նրան ուղեկցեցին գլխավոր անցումով: Նա զգաց գրեթե նույնը, ինչ զգաց Անկախը: Նա նույնպես տեսավ սրահի չափը և գեղեցկությունը, ինչպես նաև՝ քաղաքացիների դեմքերը: Քայլելով գլխավոր անցումով՝ նա ճանաչեց մի քանի մարդու, որոնց գիտեր Էնդելի դպրոցից, ովքեր ավարտել էին իրենից մեկ կամ երկու տարի առաջ: Խաբվածը ճանաչեց ավելի շատ քաղաքացիների, քան Անկախը, քանի որ նա գրեթե բաց չէր թողնում դպրոցի հավաքույթները:

Նա ճանաչեց մի մարդու, ով բոլորովին չէր հաճախում դպրոցի դասերին: Նրա անունն Անողորմ էր: Նա ամենաչար և անպիտան մարդկանցից էր ամբողջ քաղաքում: Խաբվածը կանգ առավ՝ մտածելով. *«Ի՞նչ է նա անում այստեղ»:* Գլխավոր պահապանը գլխով արեց Խաբվածին՝ ցույց տալով, որ նա կարող էր խոսել այդ մարդու հետ:

Խաբվածը մոտեցավ նրան և հարցրեց.

– Դու Անողո՞րմն ես:

– Մի ժամանակ ես հայտնի էի Անողորմ անունով,– պատասխանեց նա,– բայց Տեր Զեյլոնը փոխեց իմ անունն իր Դատաստանի գահի առջև՝ ինձ Հաշտված անվանելով:

Խաբվածն առանց մտածելու հարցրեց.

– Ինչպե՞ս ես դու հայտնվել այստեղ: Քաղաքի մեծ մասը քեզ չար մարդ էր համարում: Դու ոչ մի անգամ չէիր լինում դպրոցում և ավելի շատ էիր հակառակվում Զեյլոնին, քան ցանկացած մարդ, ում ես ճանաչել եմ:

– Այո՛, ճի՛շտ է,– պատասխանեց Հաշտվածը:– Բայց ես ատում էի ինձ և այն, ինչ անում էի: Քանի որ ես դպրոց չէի հաճախում, երբեք չէի լսել Զեյլոնի խոսքը, որ կյանքեր է փոխում: Այնուամենայնիվ, իմ Դատաստանի օրվանից մեկ շաբաթ առաջ ես գնացի Բարեգործի ռեստորանը՝ ճաշելու համար: Նա գիտեր, որ իմ կյանքը խորտակված էր, և ինչ-որ կերպով հասկացավ իմ ցավը: Նա վճարեց իմ ճաշի համար մեկ պայմանով՝ որ ես մնայի և զրուցեի նրա հետ: Նա երկու ժամ շարունակ պատմեց ինձ Զեյլոնի, նրա բարության, նրա փրկության և այս վայրի՝ Աֆաբելի մասին:

Հաշտվածը շարունակեց.

– Նա ասաց ինձ, որ դեռ ուշ չէ, որ կյանքս նվիրեմ այդ մեծ իշխանին: Ես դեռ կարող էի անպայմանական ներում ստանալ և ընդունվել՝ որպես նրա թագավորության քաղաքացի: Թեև ես կարողացա ծառայել նրան Էնդելում միայն մեկ շաբաթ, ես արեցի դա ամբողջ սրտով: Գնա-

ցի նրանց մոտ, ում զրկել էի կամ ումից գողացել էի, և ներում խնդրեցի: Եղան դեպքեր, որ ես վերադարձրի ավելի շատ, քան խլել էի:

Խաբվածը զարմանքից լռել էր: Նա ետ նայեց պահապանին, ով գլխով արեց՝ ի նշան համաձայնության: Հաշտվածը ետ գնաց իր տեղը, իսկ Խաբվածը շարունակեց մոտենալ գահին:

Առաջ գնալով՝ Խաբվածը չէր կարողանում չմտածել այն մասին, ինչ հենց նոր լսեց: Նրան պատմել էին Զեյլոնի մեծ ողորմության մասին, բայց այն, ինչի ականատեսը նա եղավ քիչ առաջ, ապշեցուցիչ էր: Անողորմն ամենավատ մարդկանցից էր, ում ինքը երբևէ ճանաչել էր, և այժմ նա ստացել էր նույն արքայական դիրքը, ինչ մյուսները: Խաբվածը է՛լ ավելի համոզվեց, որ բարեհաճություն կգտնի Զեյլոնի առջև, որովհետև սրտանց հավատում էր նրան:

Հենց որ Խաբվածը կանգնեց գահի առջև, նրան տրվեց միևնույն պատվերը, ինչ տրվեց Անկախին.

– Հաշի՛վ տուր քո տնտեսության համար:

Ինչպես և Անկախը, Խաբվածը ևս տեսավ իր կյանքը՝ դպրոցի առաջին օրվանից մինչև նախորդ օրը՝ եռաչափ հոլոգրաֆիկ պատկերով: Ինչպիսի՜ թեթևություն էր՝ տեսնել, որ ինքը հավատարիմ կերպով դպրոց էր հաճախում և բացահայտ սատարում էր Զեյլոնին:

Այնուամենայնիվ, շուտով Խաբվածը գունատվեց: Նրա կյանքը մեղադրում էր իրեն: Նա արդարացնում էր իր ճանապարհները, բայց երբ դրանք ի հայտ եկան վեհ դատավորի և սուրբ վկաների առջև, նա շփոթություն և ամոթ զգաց: Երբ իր սեռական այլազանությունը հայտնի դարձավ այդ թագավորական ժողովի առջև, նա ցանկացավ սողալ մի փոսի մեջ և թաքնվել:

Ի հայտ էին գալիս ոչ միայն նրա գործերը, այլև՝ մտադրությունները և դրդապատճառները: Որտեղի՞ց Զեյլոնը գիտեր այդ բաները: Ինչպե՞ս նա կարող էր դատել իրեն՝ Խաբվածին, այն բաների համար, որոնք հայտնի չէին ոչ ոքի: Նրա ամենախորը գաղտնիքներն այլևս ծածուկ չէին: Ամբողջ ժողովը տեսնում էր նրա շահամոլությունը գործարքների, կառուցած տների վաճառքի և հողատարածքների յուրացման մեջ: Նրանք տեսնում էին, որ նա մշտապես դիմում էր չարախոսության և բամբասանքի՝ իր ուզածն ստանալու համար: Թվում էր՝ այն ամենը, ինչ նա անում էր, դրդված էր ավելին ունենալու ցանկությամբ: Նա ձգտում էր իր ուզածին ամեն ինչում և ձգտում էր ստանալ ամեն ինչ միմիայն իր համար: Անհնար էր վիճել փաստերի հետ: Խաբվածը մխիթարում էր իրեն, որ այդ ամենը կարևոր չէր, քանի որ ինքը հավատում էր Զեյլոնին և դավանում էր, որ հավատարիմ էր նրան:

Երբ Խաբվածի կյանքն ամբողջությամբ դիտեցին, Զեյլոնը նայեց Գլխավոր դպիրին և հարցրեց.

– Խաբվածի անունը գրվա՞ծ է Կյանքի գրքում:

– Ո՛չ, իմ տե՛ր,– պատասխանեց նա:

Զեյլոնն ազդարարեց.

– Խաբվա՛ծ, դու մեղավոր ես ինձ ուրանալու մեջ: Դու տարվելու ես Լոն լքված երկիրը, որտեղ կանցկացնես քո կյանքի մնացած մասը՝ չարչարվելով բացարձակ խավարի, անհուսության և միայնության մեջ:

Խաբվածը զարմանքից քարացավ: Նրա մտքերը խառնվեցին. *«Ո՛չ, սա սխալմո՛ւնք է: Այսպես չի՛ կարող լինել: Ես հավատում եմ Զեյլոնին: Ի՞նչ է նշանակում «ինձ ուրանալը»»:* Հանկարծ նա հարցրեց.

– Ինչպե՞ս եմ ես ուրացել քեզ:

Զեյլոնն ասաց.

– Մի՞թե դու չէիր լսում, երբ քո ուսուցիչներն զգուշացնում էին նրանց մասին, ովքեր «ասում են, թե ճանաչում են Զեյլոնին, բայց ուրանում են նրան իրենց կյանքով»[13]:

– Բայց, մե՛ծ թագավոր,– ընդդիմացավ Խաբվածը,– ես հաճախում էի քո դպրոցը: Ես հավատարմորեն բաց չէի թողնում դասերը և ներգրավված էի դպրոցի շատ գործերի մեջ: Ես նույնիսկ տեր էի անվանում քեզ:

Զեյլոնն անմիջապես պատասխանեց.

– Ինչո՞ւ ես կանչում ինձ «Տե՛ր, Տե՛ր», բայց չես կատարում այն, ինչ ես պատվիրում եմ քեզ»[14]: Դու չե՞ս լսել իմ խոսքերը, երբ ասացի, որ ոչ բոլոր կրոնական կեցվածք ունեցողներն են իրականում աստվածապաշտ: Նրանք կարող են «Տեր» անվանել ինձ, բայց Աֆաբել չեն մտնի, քանի որ որոշիչ գործոնը՝ իմ Հորը հնազանդվելն է: Դատաստանի ժամանակ շատերը կասեն ինձ. «Տե՛ր, Տե՛ր, մենք պատմել ենք մարդկանց քո մասին և դավանել ենք քո անունը»: Բայց ես կպատասխանեմ. «Դուք երբեք իմը չե՛ք եղել: Հեռացե՛ք, որովհետև ձեր գործերը չար են»[15]:

Խաբվածը խելահեղության աստիճանի հասավ.

– Բայց ես հավա՛տք ունեի: Ես հավատո՛ւմ էի քեզ: Ուրեմն, համաձայն քո խոսքի՝ ես պետք է փրկվա՛ծ լինեմ:

Զեյլոնը համբերատար էր, բայց և՝ վճռական: Նա նայեց ժողովի մեջ նստած Աֆաբելի քաղաքացիներից մեկին, ով դպրոցի նախկին ուսուցիչներից էր և նստած էր ավելի փոքր գահի վրա.

– Կարդա՛ Խաբվածին այն, ինչ սովորեցրել ես քո դասերին:

Այս մարդը կարդաց սրբազան գրվածքներից.

– Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, ի՞նչ օգուտ, որ ասեք, թե հավատք ունեք, եթե չեք ապացուցում այն ձեր գործերով: Այդ տեսակի հավատքը չի կարող փրկել ոչ ոքի: Բավական չէ պարզապես հավատք ունենալ: Հավատքը, որը չի արտահայտվում բարի գործերով, բոլորովին հավատք չէ. այն մահացած և անօգուտ է: Ինչ-որ մեկը կարող է վիճել. «Որոշ մարդիկ հավատք ունեն, իսկ մյուսները՝ բարի գործեր»: Ես կասեմ. «Ես չեմ կարող տեսնել քո հավատքը, եթե դու չունես բարի գործեր, բայց ես ցույց կտամ քեզ իմ հավատքը իմ բարի գործերով»: Դուք դեռ մտածում եք, որ բավական է պարզապես հավատա՞լ, որ Զեյլոնը մեկ է: Նույնիսկ դևերն են հավատում դրան, և նրանք սարսափից դողում են: Հիմա՛ր: Ե՞րբ դու ի վերջո կսովորես, որ հավատքը, որի արդյունքը բարի գործերը չեն, անօգուտ է[16]:

Զեյլոնը կրկնեց.

– Դու ասում ես, որ հավատք ունես, բայց հավատքը՝ հավատք չէ, եթե չի ուղեկցվում հնազանդության քայլերով: Բավական չէ ասել, որ դու հավատում ես, որովհետև նույնիսկ դևերն են հավատում, բայց նրանք, իհարկե, փրկված չեն: Ովքեր ճշմարտապես հավատում են, կարտահայտեն իրենց փոխված բնությունը և այլևս չարի պտուղը չեն բերի: Դու շարունակ բերում էիր չար տիրակալ Դագոնի պտուղը, ինչը միայն վկայում է, որ դու երբեք ճշմարտապես չես հավատացել ինձ քո ամբողջ սրտով:

Խաբվածի համար դժվար էր ընկալել այն ամենը, ինչ նա ասաց: Նա ընդդիմացավ.

– Իսկ այն չար Անողո՞րմը: Ես ավելի լա՛վն էի, քան նա: Ինչպե՞ս դու կարող ես ընդունել նրան և վտարել ինձ: Դու արդար չե՛ս:

– Դու ասում ես, որ Զեյլոնն անարդա՞ր է,– պատասխանեց Զեյլոնը:– Լսի՛ր ինձ: Ե՞ս եմ անարդարը, թե՞ դու: «Եթե անօրեն մարդը շրջվի իր անօրինությունից, հնազանդվի օրենքին և արդարություն գործի, նա կփրկի իր անձը, որովհետև նա կշռադատել է ամեն ինչ և որոշել է դառնալ իր մեղքերից և ապրել լավ կյանքով: Նա անպատճառ կապրի. նա չի՛ մահանա»[17]:

Հուսահատված և բարկացած՝ Խաբվածը շարունակեց.

– Բայց ես կիսվել եմ քո խոսքով և վկայել եմ մարդկանց քո մասին: Ես նույնիսկ կամավոր հիմունքներով փոխարինող ուսուցիչ եմ եղել քո դպրոցում:

Զեյլոնը, արդեն՝ խստությամբ, պատասխանեց.

– Այլևս մի՛ կրկնիր իմ օրենքները և հերի՛ք է ազդարարես իմ խոստումները, որովհետև դու մերժել ես իմ խրատը՝ անարգելով իմ օրենք-

ները: Դու գողի ես տեսնում և օգնում ես նրան և քո ժամանակն անցկացնում ես չար և անբարո մարդկանց հետ: Դու անիծում և ստում ես, և պիղծ խոսքերը բխում են քո բերանից: Դու չարախոսում ես քո իսկ եղբորը: Ես լուռ մնացի, և դու մտածեցիր, որ ես անտարբեր եմ դրա հանդեպ: Բայց հիմա եկել է քո պատժի ժամը, և ես թվարկում եմ բոլոր վերը նշված մեղադրանքները քո դեմ[18]:

Խաբվածը լուռ էր: Նրա միտքը պտտվում էր, բայց նա ասելու ոչինչ չուներ, որ պաշտպաներ իրեն:

Անցավ մի քանի վայրկյան: Թագավորն ասաց իր ծառաներին.

– Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք: Վե՛ր առեք դրան, դրսի խավա՛-ը գցեք: Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը[19]:

Երբ Գլխավոր պահապանը մոտեցավ, Խաբվածը սկսեց անվերահսկելիորեն հայհոյել Զեյլոնին, պահապաններին և Աֆաբելի քաղաքացիներին: Նա խիստ բարկացավ և կատաղորեն հակառակվում էր: Ամեն բարի բան նրանում կլանվեց նրա բացահայտված իրական էությամբ:

Խաբվածի ձեռքերը և ոտքերը կապեցին, և նա դուրս տարվեց սրահից՝ հայհոյելով ամբողջ ընթացքում: Ինչպես և Անկախը, նա պահվեց բանտախցում՝ մինչև դատաստանի ավարտը:

Հենց որ Խաբվածն արդեն սրահում չէր, Զեյլոնը դիմեց վկաների բազմությանը. «Ազգ կա, որ իր աչքին մաքուր է երևում, բայց իր աղբից մաքրված չէ»[20]:

Հուսահատ սիրտը Զեյլոնի առջև

Արդարադատության սրահում արդեն հարյուր հոգի էլ չէր մնացել: Հուսահատ սիրտը և Երկակի կյանքը նրանց թվում էին: Հուսահատ սիրտն այնքան հեռու էր մնում Երկակի կյանքից, քանի որ դեռևս դառնություն և վրդովմունք էր զգում նրա հանդեպ: Վերջինս նույնպես խուսափում էր Հուսահատ սրտից:

Չորս Թագավորական պահապանները ներս եկան և կանչեցին Հուսահատ սրտին: Նա անհանգիստ էր իր գնալու կապակցությամբ, բայց շնորհակալ էր, որ հեռանում էր Երկակի կյանքից: Ինչպես և մյուսները նրանից առաջ, նրան նույնպես մոտեցրին Մեծ սրահի դռանը, արագ ծանոթացրին պատշաճ պահվածքի կանոններին և ներս տարան:

Անցնելով Աֆաբելի քաղաքացիների մոտով՝ նա նույնպես ճանաչեց շատերին, ովքեր գնացել էին իրենից առաջ: Նրանց մեծ մասը դպրոցում այնքան ակնառու և ջերմեռանդ վերաբերմունք չուներ հավատքի հանդեպ, որքան ինքը: Հուսահատ սիրտը զարմացավ՝ տեսնելով մի

շարք մարդկանց, ովքեր, իր կարծիքով, ոչ մի դեպքում չպետք է այդտեղ լինեին:

Հուսահատ սիրտը մոտեցավ մեծ գահին և նկատեց ավելի փոքր գահեր, որոնք շրջապատում էին այն: Նա ճանաչեց մի քանի ուսուցիչների և այլ մարդկանց, որոնց նա սպասում էր տեսնել առաջնորդների շարքում այդ թագավորության մեջ: Այնուամենայնիվ, նա զարմացավ՝ տեսնելով շատ այլ մարդկանց այդ գահերին: Այդ մարդիկ այնքան էլ հայտնի չէին էնդելում: Ներկաների թվում նույնպես հարուստ մարդիկ կային: «Ինչպե՞ս հարուստները կարող են նման պատվավոր տեղեր զբաղեցնել»,– մտածեց նա:

Մինչ նա կհասցներ պատասխանել իր իսկ հարցին, լսեց Ձեյլոնի ձայնը.

– Հաշի՛վ տուր քո տնտեսության համար:

Հոլոգրաֆիկ պատկերը ցուցադրեց նրա կյանքը: Հուսահատ սիրտը հիացմունքով էր դիտում իր դպրոցական շրջանը: Նրա ամբողջ կամավորական աշխատանքը, լրացուցիչ դասերը և ավագությունը դասարանում՝ դրական կերպով էին ներկայացնում նրան: Նա հպարտանում էր իր համարձակությամբ և աշխատասիրությամբ: Այնուամենայնիվ, նրա տրամադրությունը փոխվեց, երբ երևաց նրա արձագանքը Չարախոսողի ստին: Ակնհայտ էր, որ նա հրաժարվում էր թողնել իր վիրավորանքը: Նրա սրտի եղածը բացահայտվեց, և դա բնավ հաճելի չէր:

Դրան հետևեց նրա կապը Երկակի կյանքի հետ: Նա այդպես էլ չէր ապաշխարել այդ հարաբերության համար: Նա միշտ տեսնում էր իրեն զոհի դերում և բարդում էր ամբողջ մեղքը Չարախոսողի և Երկակի կյանքի վրա: Այդ իսկ պատճառով, նա այդպես էլ պատասխանատվություն չստանձնեց իր կայացրած որոշումների համար: Շարունակելով հետևել իր կյանքին՝ նա տեսավ, թե ինչպես էին բարկությունը, դառնությունը և վրիժառության զգացումն ավելանում իրենում: Թեև նրան հաջողվել էր ճնշել այդ խնդիրներից մի քանիսը, նա այդպես էլ չէր հեռացրել դրանց արմատը: Արդյունքում նա ոչ միայն մշտապես վիրավորված էր Երկակի կյանքից և Չարախոսողից, այլև մեղադրում էր Ձեյլոնին իր դժվարությունների համար: Ինչպե՞ս Ձեյլոնը կարող էր թույլ տալ, որ Երկակի կյանքի պես մարդը դասավանդեր իր դպրոցում: Նրա խիստ վրդովմունքը և անզիջում կերպով չներելը բացահայտված էին:

Երբ դիտարկումն ավարտվեց, ակնհայտ էր, որ Հուսահատ սիրտը՝ դառնացած կին էր, ով բարություն չէր տածում մարդկանց հանդեպ: Այնուամենայնիվ, թեև այս ամենը հայտնվեց մեծ բազմության առջև, նա վստահ էր, որ իր առաջվա նվիրումը պետք է ապահովեր թագավորի

բարեհաճությունն իր հանդեպ: Նա վախենում էր մի փոքր հանդիմանությունից, բայց չէր էլ կարող պատկերացնել, թե ինչ էր տեղի ունենալու:

Զեյլոնը նայեց Գլխավոր դպիրին.

– Հուսահատ սրտի անունը գրվա՞ծ է Կյանքի գրքում:

– Ո՛չ, իմ տե՛ր,– պատասխանեց նա:

Զեյլոնն ազդարարեց իր դատաստանը.

– Հուսահատ սի՛րտ, դու մեղավոր ես արդարությունից ընկնելու և ինձ դավաճանաբար ուրանալու մեջ: Դու տարվելու ես Լոն լքված երկիրը, որտեղ կանցկացնես քո կյանքի մնացած մասը՝ չարչարվելով բացարձակ խավարի, անհուսության և միայնության մեջ:

Հուսահատ սրտի ցնցումն անկարելի էր նկարագրել: Նա ավելի խորն էր ցնցված, քան նրանից առաջ եկածները: Այդպիսի բան չի կարող տեղի ունենալ: Նա վատ երազ էր տեսնում. ո՛չ, սա մղձավանջ էր, և նա պետք է արագ արթնացներ ինքն իրեն: Միգուցե նա սխա՞լ հասկացավ:

Չհավատալով լսածին՝ նա հարցրեց.

– Զեյլո՛ն, դու ասացիր, որ ինձ պետք է տանեն սարսափելի Լոն երկի՞րը:

– Այո՛, Հուսահատ սի՛րտ, դու ճիշտ լսեցիր,– պատասխանեց թագավորը:

– Ինչպե՞ս թե, Տե՛ր Զեյլոն: Ես հավատում եմ քեզ: Դա հստակ երևաց իմ կյանքից: Ես ունեցել եմ օրինակելի կյանք, որը սատարում է իմ համոզմունքները: Ես գիտեմ, որ իմ սիրտը խստացավ, և սերն իմ ներսում մահացավ, բայց դա իմ մեղքը չէր: Մեղավոր էին Չարախոսողը և Երկակի կյանքը: Իմ սիրտը սառչեց նրանց դավաճանության պատճառով:

– Դու մոռացե՞լ էիր իմ զգուշացումը քո ուսուցիչների միջոցով,– պատասխանեց Զեյլոնը,– «Չարությունն այնքան կտարածվի, որ շատերի սերը կսառչի: Բայց ով որ մինչև վերջ դիմանա, կփրկվի»[21]: Դու չդիմացար մինչև վերջ:

– Բայց, Տե՛ր Զեյլոն,– շարունակեց Հուսահատ սիրտը,– ես արդար եմ, քանի որ հավատում եմ քեզ: Միգուցե ես կորցրի իմ վկայությունը, բայց հավատում էի, որ փրկվելուն պես մարդը մշտապես փրկված կմնա և երբեք չի կորցնի իր փրկությունը: Նույնիսկ մեր ուսուցիչներից մի քանիսը սովորեցնում էին այդ մասին: Նրանք ասում էին, որ ոչ ոք չի կարող խլել ինձ քո ձեռքից:

– Այո՛, ճի՛շտ է,– պատասխանեց Զեյլոնը:– Ոչ ոք չի կարող խլել քեզ իմ ձեռքից, բայց ես երբեք չեմ ասել, որ դու չես կարող ինքդ հեռանալ: Այդ իշխանությունը միայն քո ձեռքում է: Մի՞թե չես կարդացել Սրբազան

գրվածքներում. «Եթե մարդիկ փախչեն այս աշխարհի ապականող ուժերից՝ մեր Տեր և Փրկիչ Զեյլոնի մասին ունեցած գիտելիքի միջոցով, իսկ հետո կրկին բռնվեն և հաղթվեն դրանցով, նման մարդիկ ավելի վատ վիճակում կլինեն վերջում, քան սկզբում էին: Շատ ավելի լավ կլիներ, որ նրանք երբեք չիմանային արդարության ճանապարհը, քան իմանային և հետո շրջվեին այն սուրբ պատվիրանից, որը տրվեց նրանց»[22]: Ես ասացի, որ ավելի լավ կլիներ՝ նրանք երբեք չիմանային արդարության ճանապարհը, որովհետև այժմ նրանք ավելի վատ վիճակում են, քան մինչև փրկվելը: Ուրեմն, ինչպե՞ս դու կարող էիր հավատալ, որ փրկությունն անկարելի է կորցնել: Եթե այն անկարելի էր կորցնել, ինչպե՞ս նրանք կարող էին առաջվանից ավելի վատ վիճակում հայտնվել:

Ինչո՞ւ էիր լսում այն ուսուցիչներին, որոնք սովորեցնում էին հակառակ իմ խոսքին: Ես ճշգրտորեն գրի եմ առել այն, որպեսզի բոլորն իմանան արդարության ճանապարհը: Ինչո՞ւ դու թույլ տվեցիր քեզ՝ խաբվել: Եթե հավատայիր իմ խոսքերին, դու կպայքարեիր քո սրտի դառնության դեմ: Փոխարենը, քանի որ դու կեղծ մխիթարություն գտար անպայմանական ապահովության մեջ, դու թույլ տվեցիր, որ դառնությունն անարգել ավելանա քո մեջ: Եվ հիմա կանգնած ես դատաստանի առջև, որը հնարավոր էր կանխել:

– Իսկ իմ բոլոր բարի գործե՞րը, որոնք արեցի էնդելում,– աղաչեց Հուսահատ սիրտը:

Տեր Զեյլոնը պատասխանեց.

– Կրկին, դու չե՞ս կարդացել, թե ինչ ցույց տվեցի իմ մարգարեի միջոցով. «Եթե արդար մարդիկ մեղավոր ճանապարհներին դառնան և սկսեն վարվել մյուս մեղավորների պես, մի՞թե նրանց թույլ կտրվի ապրել: Ո՛չ. իհարկե՝ ո՛չ: Նրանց նախկին բարությունը լիովին կմոռացվի, և նրանք կմահանան իրենց մեղքերի մեջ: Սակայն դուք ասում եք. «Տերն արդար չէ»: Լսե՛ք ինձ... Ե՞ս եմ անարդարը, թե՞ դուք: Եթե արդար մարդիկ դառնան բարի լինելուց և սկսեն մեղք գործել, նրանք կմահանան դրա պատճառով: Այո՛, նրանք կմահանան իրենց մեղավոր գործերի պատճառով»[23]: Քեզ հետ պատահել է այն, ինչ գրված է. քո բարությունը և արդար գործերը մոռացվել են և չեն հաշվեգրվի քեզ:

Դեռևս հրաժարվելով հանձնվել՝ Հուսահատ սիրտն ասաց.

– Բայց տե՛ր, դու ասացիր, որ եթե ես դավանեմ քեզ որպես իմ փրկիչ, իմ անունը կգրվի Կյանքի գրքում: Ինչպե՞ս է, որ իմ անունն այլևս այդ գրքում չէ: Ինչո՞ւ քո դպիրը չի կարողանում գտնել այն: Մի՞թե այն կարող էր ջնջվել:

Տեր Զեյլոնը համբերությամբ, բայց՝ վճռականորեն պատասխանեց.

– Մի՞թե դու չլսեցիր այն, ինչ արդեն ասվեց: «Ով որ մինչև վերջ դիմանա, կփրկվի»[24]: Մինչև դատաստանը դիմացողները այն մարդիկ են, որոնք հաղթում են, և ես պարզ ասացի. «Նա, ով հաղթում է, այսպես սպիտակ հանդերձներ կհագնի, և ես չեմ ջնջի նրա անունը Կյանքի գրքից»[25]: Եթե ես ասացի, որ չեմ ջնջի ինչ-որ մեկի անունը Կյանքի գրքից, նշանակում է՝ այն կարող է ջնջվել: Հակառակ դեպքում, կասեի. «Եթե դու դավանես ինձ որպես տեր, քո անունը հավիտյան կմնա Կյանքի գրքում»:

Հուսահատ սիրտն աղաչեց.

– Ինչպե՞ս դու կարող ես Լոն ուղարկել ինձ՝ այն վայրը, որտեղ ուղարկվում են կենդանի մահացածները:

Զեյլոնը նայեց իր կառավարիչներից մեկին.

– Կարդա՛ այն Հին գրվածքները, որոնք հայտնի են դարձել էնդելի քաղաքացիներին:

Կառավարիչը կարդաց.

– «Այն մարդը, ով մոլորվում է խոհեմության ճանապարհից, կբնակվի մահացածների ժողովի մեջ»[26]:

Հուսահատ սիրտն այլևս ասելու ոչինչ չուներ: Թագավորն ասաց ծառաներին.

– Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք: Վե՛ր առեք դրան, դրսի խավա՛-րը գցեք: Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը: Որովհետև շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված[27]:

Երբ Գլխավոր պահապանը մոտենում էր Հուսահատ սրտին, նա անիծեց Զեյլոնին: Նա համակվեց դաժանությամբ, որի պատճառը նրա ներսի դառնությունը և երկու անգամ մահացած բնությունն էր (տե՛ս Հուդա 12): Նա նման էր արմատախիլ արած աշնանային ծառի, որի վրա ոչ մի արդարության պտուղ չէր մնացել:

Հուսահատ սրտի ոտքերը և ձեռքերը կապեցին, և նա դուրս տարվեց սրահի կողքի դռնով: Նրան նույնպես փակեցին խցերից մեկում: Հենց որ դուրս եկան լսարանից, Գլխավոր դպիրն է՛լ ավելի պարզորեն բացատրեց կատարվածը վկաների բազմությանը.

– «Սիրելի՛ ընկերներ, եթե մենք գիտակցաբար շարունակենք մեղք գործել այն բանից հետո, երբ ստացանք ամբողջական գիտելիքը ճշմարտության մասին, այլևս չի լինի ոչ մի զոհ, որը կծածկի այդ մեղքերը: Այլևս չի լինի ոչ մի ակնկալիք, այլ միայն Զեյլոնի դատաստանի և նրա թշնամիներին կլանող բորբոքված կրակի սարսափելի սպասումը: Որովհետև մենք գիտենք նրան, որ ասաց. «Ես վրեժ կլուծեմ: Ես կհատուցեմ նրանց, ովքեր արժանի են դրան»: Նա նույնպես ասաց. «Զեյլոնը կդատի իր ժողովրդին»: Սարսափելի բան է կենդանի Զեյլոնի ձեռքն ընկնելը»[28]:

Երկակի կյանքի դատաստանը

Վերջին մարդը, որը պետք է կանչվեր Արդարադատության սրահից, Երկակի կյանքն էր: Նա գիտեր Ձեյլոնի օրենքները և տեղյակ էր, որ իր դատաստանը նպաստավոր չէր լինելու: Շուտով նա պարզելու էր, թե իր անօրինությունները որքա՜ն թանկ էին նստելու իր վրա:

Երկակի կյանքը թուլություն էր զգում՝ տարվելով Դատաստանի սրահը, և պահապանները պետք է օգնեին նրան, որպեսզի նա մոտենար Ձեյլոնի Դատաստանի գահին: Նրա կյանքը վերանայվեց, և նա նույնպես լսեց սարսափելի բառերն այն մասին, որ նրա անունը չի գտնվել Կյանքի գրքում:

Ձեյլոնը հաստատակամորեն հայտարարեց.

– Երկակի կյա՛նք, դու մեղավոր ես դավաճանության մեջ, արդարությունից ընկնելու մեջ և գլորման քար լինելու մեջ: Դու տարվելու ես Լոն երկիրը, որտեղ կստանաս ծանրագույն պատիժը և չարչարանքները:

Երկակի կյանքը սարսափով լսեց, ինչից հետո աղաչեց.

– Բայց տե՛ր, ես ուսուցիչ էի քո դպրոցում: Ես տվեցի իմ կյանքը քո գործի համար:

Ձեյլոնը պատասխանեց.

– Մի՞թե դու, ուսուցիչ լինելով, չես կարդացել այն գրքերը, որոնցով սովորեցնում էիր: «Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ձեզնից ոչ բոլորը պետք է ուսուցիչներ դառնան դպրոցում, որովհետև մենք՝ ուսուցիչներս, կդատվենք Ձեյլոնի կողմից ավելի մեծ խստությամբ»[29]:

Երկակի կյանքը շարունակեց.

– Ինչպե՞ս թե ես գլորման քար էի:

Ձեյլոնի ձայնն ավելի խստացավ.

– Դու դրդեցիր իմ փոքրերից շատերին սայթաքել և հավիտյան ընկնել: Հուսահատ սիրտն ընդամենը նրանցից մեկն է: Նա վստահված էր քո հոգատարությանը: Ես տվեցի քեզ իշխանություն, որպեսզի պաշտպանեիր նրան, ոչ թե օգտագործեիր: Դու շահագործեցիր քո ազդեցությունը՝ հագեցնելով քո կիրքը, և վնասեցիր թե՛ նրան, թե՛ ուրիշներին: Նա արդեն խոցված էր մի քրոջ կողմից, և դու, փոխարենը բժշկություն բերեիր նրան, օգուտ քաղեցիր նրա վիճակից: Դու նավաբեկության ենթարկեցիր նրա հավատքը: Եվ հիմա նա դատապարտված է Լոն գնալու: Իհարկե դու կհիշես այն զգուշացումը, որը ես արել էի. «Ով որ սայթաքելու դրդի այս փոքրերից մեկին, որոնք հավատում են ինձ, ավելի լավ կլիներ նրա համար, որ մի ջաղացքար կապվեր նրա վզից, և նրան նետեին ծովի մեջ»[30]:

Երկակի կյանքն աղաչեց.

– Զեյլո՛ն, ես գիտեի, որ Լոն եմ արտաքսվելու, բայց ինչո՞ւ պետք է ստանամ ծանրագույն չարչարանքները: Ինչո՞ւ ես դու այդքան խստորեն վարվում ինձ հետ: Ես անհավատ չէի, այլ քո ծառաներից էի: Ես Անկախի նման չէի, ով չէր ցանկանում գործ ունենալ քեզ հետ: Ինչո՞ւ:

Զեյլոնը կրկին անդրդվելիորեն ասաց.

– Դու գիտես և սովորեցրել ես Հին գրվածքները: Ինչո՞ւ ես հարցնում ինձ այդ մասին: Ես կհիշեցնեմ քեզ, որ հիշես այս խոսքերը: Հին գրվածքները պարզորեն ասում են. «Բայց եթե ծառան մտածի՝ իմ տերը երկար ժամանակ չի վերադառնալու, և սկսի ճնշել մյուս ծառաներին... տերը կվերադառնա առանց նախազգուշացման և անսպասելի: Նա կտորկտոր կանի այդ ծառային և կարտաքսի նրան անհավատարիմների հետ: Այդ ծառան դաժանորեն կպատժվի, որովհետև թեև նա գիտեր իր պարտականությունը, նա հրաժարվեց կատարել այն: Բայց մարդիկ, ովքեր չգիտեն, որ սխալ են գործում, միայն մի փոքր կպատժվեն: Շատ է պահանջվում նրանցից, ում շատ է տրված, և շատ ավելին է պահանջվում նրանցից, ում շատ ավելին է տրված»[31]:

Անկախը շատ ավելի քիչ էր հասկանում իր անօրինությունները,– շարունակեց Զեյլոնը:– Իսկ դու և՛ հասկանում էիր, և՛ գիտեիր: Թեև նրա պատիժը խիստ է, այն ավելի թեթև կլինի, քան քոնը: Քեզ համար ես տեղ եմ պահել... «խավարի մթի մեջ[32]»:

Զեյլոնը պատվիրեց Գլխավոր պահապանին.

– Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք: Վե՛ր առեք դրան, դրսի խավա՛-րը գցեք: Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը: Որովհետև շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված[33]:

Երբ Գլխավոր պահապանը մոտենում էր, Երկակի կյանքը սկսեց հայհոյել Զեյլոնին, պահապաններին և Աֆաբելի քաղաքացիներին: Նա կատաղորեն պայքարում էր և նույնիսկ փորձեց ազատվել պահապաններից՝ անձամբ Զեյլոնի վրա հարձակվելու համար: Նրա ճշմարիտ բնությունը լիովին արտահայտվեց: Ցանկացած բարի բան, որը կար նրանում, կլանվել էր նրա կեղծավորությամբ: Պահապանները կապեցին Երկակի կյանքի ոտքերը և ձեռքերը և դուրս տարան նրան սրահի կողքի դռնով: Ամբողջ այդ ընթացքում նա հայհոյանքներ էր տեղում: Նա միացավ մյուս հազար հինգ հարյուր մարդկանց, ովքեր անմիջապես տարվեցին Լոն երկիր:

Հենց որ Երկակի կյանքը դուրս տարվեց լսարանից, Գլխավոր դպիրը փակեց գիրքը և գոչեց.

– Քո դատաստաններն արդա՛ր են: Նրանք ստացան այն, ինչին արժանի էին:

Խորանի մոտից մի ձայն պատասխանեց.

– Հիրավի ճշմարիտ և արդար են քո դատաստանները[34]:

Լոն լքված երկիրը

Հազար հինգ հարյուր դատապարտված և բանտախցերում պահված էնդելցիներ տարվեցին Թագավորական պահապանների կողմից երկու շաբաթ տևող ճանապարհորդության՝ դեպի կործանված Լոն երկիրը: Նրանք հասան Կրակի մեծ անապատը, որտեղ այրված հողից բարձրացող տաքությունն անտանելի էր: Հանկարծ, հասկանալի չէ, թե որտեղից, հեռվում մի խոշոր և չարագույժ կառույց երևաց: Երբ նրանք մոտենում էին, դատապարտվածները կարդացին ճանապարհին փակցված ցուցանակը՝ «Լոն լքված երկիր»:

Ավելի ուշադիր նայելով՝ նրանք հասկացան, որ այդ խոշոր կառույցը չունի ոչ մի պատուհան կամ այլ բացվածք՝ բացի մի վիթխարի դարպասից ստորին մասում: Դռնից մտնելով՝ նրանք լսեցին ներսից եկող ձայներ, որոնք նման էին տասնյակ հազարավոր ճիչերի: Մի քանի վայրկյանների ընթացքում նրանք լսեցին մուտքի մոտ գտնվող բանտարկյալների աղերսանքները՝ ուղղված Գլխավոր պահապանին.

– Մի՞թե բավական չէ: Խնդրում ենք, ողորմությո՛ւն խնդրեք մեր փոխարեն: Մեր պատիժն անտանելի՛ է:

– Որքա՞ն ժամանակ է, որ նրանք այստեղ են,– հարցրեց Անկախը պահապաններից մեկին:

– Մեկից մինչև հարյուր քսանինը տարի:

Խաբվածը ցնցվեց: Նա դեռ հույս ուներ, որ այդ ամենն անցնելու էր մի քանի շաբաթից և պարզվելու էր, որ դա մղձավանջ էր կամ հատուկ մարտավարություն՝ իրենց վախեցնելու համար: Նա հարցրեց նույն պահապանից.

– Մի՞թե ես այստեղ եմ անցկացնելու իմ կյանքի մնացած մասը:

– Այո՛, ինչպես որ քեզ զգուշացրել էին էնդելում:

Շատերը, որոնց համար ավելի խիստ պատիժ էր որոշված, տարվեցին այդ մետաղե շինության ավելի բարձր բաժինները, որտեղ տաքությունն ավելի ուժգին էր: Նրանք, ովքեր չգիտեին ճշմարտությունը, բայց, միևնույն է, արտաքսվելու արժանի արարքներ էին գործել, տարվեցին այդ ահռելի կառույցի ավելի ցածր բաժինները: Բայց նույնիսկ, թեկուզ մեկ օրով, նրանց տեղն անտանելի էր, էլ ի՞նչ խոսք՝ հարյուրից ավելի տարիների մասին:

Երկակի կյանքի տանջանքն աննկարագրելի էր՝ ավելի սարսափելի, քան շենքի ամենավերին բաժնում գտնվողներինը: Նա տարվեց մի ստորգետնյա զնդան՝ տաք ծծմբաբեկորների մոտ: Միայն այդ հոտն անտանելի էր, և քանի որ օդափոխություն չկար, տաքությունն այդտեղ ավելի

ուժգին էր, քան ցանկացած այլ տեղ Լոնում: Այդ վայրն ահռելի մետաղե շենքում չէր, այլ՝ երկրի խորքերում: Անկասկած՝ այն չարչարանքի և տանջանքների ամենասարսափելի վայրն էր: Այդտեղ Երկակի կյանքը տանջվելու էր միայնության մեջ: Այդ վայրը բավականին մեծ էր՝ մեկուսացնելու համար նրանց, ովքեր դատապարտված էին նույնպիսի ծանր հանցանքների համար: Միակ ձայնը, որը նրանք լսելու էին, իրենց իսկ ձայնն էր:

Հենց որ դատապարտվածները բանտարկվեցին, Գլխավոր պահապանը քայլեց դեպի մուտքը: Երբ վիթխարի մետաղե դարպասը փակվեց, ամբողջ շինության մեջ չկար նույնիսկ լույսի մեկ նշույլ: Ներսում գտնվող թշվառներն անցկացնելու էին ավելի քան 125 տարի բացարձակ խավարի և միայնության մեջ: Լույս տեսնելու միակ հույսն այն ժամանակ էր, երբ տարին մեկ անգամ նոր բանտարկյալներ էին բերվում: Այնուամենայնիվ, այդ լույսը տեսանելի էր ոչ բոլորին, այլ միայն նրանց, ովքեր մոտ էին վիթխարի դարպասին: Մյուսները, ինչպես Երկակի կյանքը, այլևս չէին տեսնելու ցերեկվա լույսը: Նրա պատիժը՝ նրա համար պահված խավարի մութն էր:

Խորհրդածություններ

Էնդելի այս չորս քաղաքացիները զղջում էին մինչև իրենց գոյության ավարտը, որ որոշում էին կայացրել չլսել Ճշմարտությունը: Միայնության մեջ նրանք շարունակ մտածում էին իրենց հիմարության մասին, քանի որ ուշադրությամբ չէին լսում Ձեյլոնի խոսքերն Էնդելում: Նրանք կանեին ամեն ինչ՝ վերադառնալու և իրենց ճակատագիրը փոխելու հնարավորության համար: Նրանք այնքա՛ն էին զղջում, որ ականջ դրեցին մարդկանց մեծամասնությանը և իրենց օրերի ընդունված կարծիքներին: Եթե նրանք ևս մեկ հնարավորություն ունենային, յուրաքանչյուրն արհամարհանքով կմերժեր իր անմիտ դատողությունը և ի սրտե կհարեր հին գրվածքներին, որոնք երբեք չեն փոխվել և չեն կարող չկատարվել:

Դատապարտվածները տառապանք էին ապրում, երբ հիշում էին պատկերներ Աֆաբելից՝ ամենաակնառու թագավորությունից: Իրենց մշտական տանջանքի մեջ նրանք դեռ հիշում էին այդ քաղաքի գեղեցկությունը, որն այնքա՛ն կարճ վայելեցին: Այդ հակադրությունն է՛լ ավելի էր ծանրացնում նրանց չարչարանքը: Լոնի կիզիչ տաքությունը, կծու գարշահոտությունը և խավարը է՛լ ավելի էին ընդգծում այդ Ճշմարտությունը: Այդ հրաշքն իրենցը կլիներ, միայն՝ եթե նրանք ընտրեին այն. այնուամենայնիվ, նրանք կորցրին Աֆաբելն իրենց հիմարության պատճառով:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՄԵԿ, ԳԼՈՒԽՆԵՐ 1-3

1. Մինչև այս գիրքը կարդալը, ինչպե՞ս կսահմանեիք *«հաջողություն»* բառը: Ինչպե՞ս էին ձեր նպատակները, առաջնահերթությունները և սովորություններն արտացոլում այդ սահմանումը: Արդյո՞ք ձեր տեսանկյունը փոխվեց կամ հաստատվեց՝ այս բաժինն ընթերցելուց հետո:

2. Մտածելով հավիտենության լրջության մասին՝ գրեթե անմտություն է թվում, որ ինչ-որ մեկը կարող է վստահ լինել դատաստանի ժամանակ, որը որոշում է իր հավիտենական ճակատագիրը: Այնուամենայնիվ, Հովհաննես 4.17-ը հենց սա է խոստանում մեզ: Մենք կանդրադառնանք այս գաղափարին հետագա բաժինների ընթացքում: Այնուամենայնիվ, ձեր ներկա գիտելիքների հիման վրա կարո՞ղ եք բացատրել, թե որտեղից է, ձեր համոզմամբ, բխում այդ վստահությունը:

3. Այս բաժնում դուք ծանոթացաք Աֆաբելի թագավորությանը, որը խորհրդանշում է մեր կյանքն այս երկրում և մեր հավիտենական ճակատագիրը: Ի՞նչն ամենից շատ տպավորեց ձեզ այս թագավորության և դրա կառավարման մեջ: Կա՞ր արդյոք այնպիսի բան, ինչը ոգեշնչեց կամ զարմացրեց ձեզ: Արդյո՞ք Աստվածաշունչը խոսում է այդ բաների մասին:

4. Խոսենք էնդելի բնակիչների մասին: Ինչպե՞ս արձագանքեցիք առաջին չորս դատաստաններին: Դուք սպասում էիք, որ դրանք ա՞յլ կերպ լինեին: Եթե այո, ինչո՞ւ:

5. Այս պահին ո՞րն է ձեր ամենամտահոգիչ հարցը մեր ուսուցման շրջանակներում:

ԲԱԺԻՆ ԵՐԿՈՒ

ԳԼՈՒԽ 4

ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՏՈՒՆՔ

«Եվ երբ Նրա աշակերտները հարցրին Նրան այս առակի իմաստը, Նա ասաց նրանց. «Ձեզ տրվել է, որ [աստիճանաբար] իմանաք (ճանաչեք և հասկանաք ավելի ազդեցիկ և պարզ կերպով) Աստծո թագավորության խորհուրդները և գաղտնիքները...»:

— Ղուկաս 8.9,10, AMP

Հաջորդ չորս գլուխներում մենք կթողնենք մեր այլաբանական պատմությունը և կկենտրոնանանք այն ճշմարտությունների վրա, որոնք հայտնվեցին Անկախի, Խաբվածի, Հուսահատ սրտի և Երկակի կյանքի դատաստանների ժամանակ: Դրանից հետո մենք կավարտենք մեր պատմությունը՝ խոսելով Եսասերի և Բարեգործի մասին, և մինչև գրքի ավարտը կկենտրոնանանք այն ճշմարտությունների վրա, որոնք հայտնվում են նրանց կյանքերում: Գրքի վերջին՝ լավագույն մասում, մենք խոսելու ենք Հիսուս Քրիստոսի հետևորդների հավիտենական վարձատրությունների մասին:

Հիմնարար ճշմարտություն

Մեր այլաբանության մեջ Ձեյլոնը խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին, Հայր Թագավորը՝ Ամենակարող Հայր Աստծուն, Դագոնը՝ սատանային: Կյանքն էնդելում խորհրդանշում է մարդկանց կյանքն այս երկրի վրա, իսկ Աֆաբելը՝ Աստծո երկնային քաղաքը: Լոն լքված երկիրը խորհրդանշում է Կրակի լիճը, որտեղ հավիտենությունը կանցկացնի նա, ով չունի Հիսուս Քրիստոսի փրկարար շնորհքը: Նախորդ գլխում ներկայացված օրինակները ցույց են տալիս տարբեր մարդկանց, ովքեր հավիտյան դատապարտվելու են, քանի որ Աստծո Խոսքը շատ պարզ խոսում է այս մասին:

Այո՛, դուք ճիշտ կարդացիք՝ հավիտյան դատապարտվելու են: Պատրաստվելով գրել այս ուղերձը՝ իմ ներսում պայքար էր. ես մտածում էի, թե ինչպե՞ս բացատրեմ ձեզ՝ ընթերցողին այն, ինչ Աստվածա-

շունչն անվանում է «հավիտենական դատաստան»: Ուշադրությամբ կարդացե՛ք հետևյալ հատվածը:

> «Ուրեմն, եկեք առաջ գնանք և անցնենք Քրիստոսի (Մեսիայի) ուսմունքների տարրական փուլից՝ հաստատուն կերպով առաջանալով դեպի ամբողջականությունը և կատարելությունը, որոնք հատուկ են հոգևոր հասունությանը: Եկեք կրկին չդնենք... հավիտենական դատաստանի և պատժի հիմքը: [Այս ամենը բաներ են, որոնց մասին դուք պետք է լիովին տեղյակ լինեիք շա՛տ, շա՛տ վաղուց]» (Եբրայեցիների 6.1,2, AMP):

Ինչպես տեսնում եք, ես բաց թողեցի մյուս հինգ հիմնարար վարդապետությունները, որոնց թվում են՝ ապաշխարությունը մեռած գործերից և հավատքն Աստծո հանդեպ, որպեսզի շեշտադրեմ, որ հավիտենական դատաստանը և պատիժը՝ Քրիստոսի *տարրական* ուսմունքներն են:

Մի բառարան սահմանում է «տարրական» բառը հետևյալ կերպով. «պարզագույն, էական կամ հիմնարար մասը կազմող»[1]: Սա այն էական մասն է, որի վրա մենք պետք է կառուցենք հենց ամենասկզբից. սա հիմք է: Որպեսզի հասկանանք այս պնդումը, դիտարկենք մեր կրթական համակարգը: Տարրական դպրոցում մենք ստանում ենք հիմնարար գիտելիքներ, որոնք օգտագործվում են մեր հետագա կրթությունը ձևավորելու համար՝ գրելը, կարդալը և թվաբանությունը: Եթե այս գիտելիքները չլինեն մեր ուսման հիմքում, մենք ոչ մի դեպքում չենք կարողանա զարգացնել մեր ուսումը: Նույնը վերաբերում է հավատացյալներին: Եթե մենք պատշաճ կերպով չհասկանանք վարդապետությունը հավիտենական դատաստանների մասին, չենք կարողանա ճիշտ կյանք կառուցել Քրիստոսում: Սա կարելի է համեմատել այն բանի հետ, որ ինչ-որ մեկը փորձում է զարգացնել իր կրթությունը՝ չիմանալով գրել և կարդալ, և չկարողանալով գումարում և հանում անել:

Այնուամենայնիվ, գրեթե քսան տարի տարբեր երկրներում ծառայելու ընթացքում հայտնաբերել եմ, որ շատերը (ես նաև խոսում եմ Հիսուս Քրիստոսի նվիրված հետևորդների մասին) տեղյակ չեն այս մասին: Ուշադրություն դարձրեք, որ հեղինակը պնդում է. «Այս ամենը բաներ են, որոնց մասին դուք պետք է լիովին տեղյակ լինեիք շա՛տ, շա՛տ վաղուց»: Նա չի ասում, որ մենք պետք է պարզապես պատկերացում ունենանք դրանց մասին, այլ՝ որ պետք է *լիարժեք* կամ *ամբողջական* տեղեկություն ունենանք: «Շատ, շատ վաղուց» բառերը միայն ընդգծում են, որ այս ճշմարտությունները հիմքային նշանակություն ունեն մեր հավատքի համար, ինչպես որ գրելը և կարդալը՝ մեր կրթության համար:

Շուտով կտեսնենք, թե ինչու է «հավիտենական դատաստանը» տարրական վարդապետություն, որը մենք պետք է հասկանանք, որպեսզի առողջ քրիստոնեական կյանք կառուցենք: Շարունակեք ընթերցել՝ մտապահելով սա: Առանց այս բանը հասկանալու՝ ձեզ համար շատ դժվար կլինի յուրացնել այն, ինչի մասին խոսելու ենք, և միգուցե սկսեք մտածել. «Ո՞րն է այս ամենի իմաստը»:

Դժոխք. փոխաբերակա՞ն, թե՞ իրական

Նախքան այս գիրքը գրելը՝ ես պայքարում էի իմ մտքում. *«Ինչպե՞ս բացատրել մի սերնդի, որն «ապրում է այսօրվա օրով», որ գոյություն ունեն հավիտենական որոշումներ, որոնք տիեզերքի Դատավորը կարճ ժամանակ անց կայացնելու է մեր մասին»:* Մի քանի օր տևող մտավոր պայքարից հետո աղոթքի ժամանակ մի միտք ծագեց: Ես հասկացա, որ Հիսուսը պատմություններ էր պատմում, որպեսզի հասկանալի դարձներ հոգևոր ճշմարտությունները մարդկային մտքի համար: Այսպես ծնվեց «Աֆաբել» այլաբանական պատմության գաղափարը:

Երբ գրում էի Աֆաբելի բնակիչների դատաստանի և Լոն երկրում նրանց ցմահ պատժի մասին, ես դողում էի ներսումս: Ես գրում էի նախորդ գլխի վերջին մասը, երբ տուն էի վերադառնում մի կիրակի երեկոյան: Այդ օրը երեք անգամ քարոզել էի: Իմ օգնականները խորը քնած էին, բայց ես չէի կարողանում կանգ առնել այդ հատվածը համակարգչով գրի առնելուց: Ես տուն էի հասել կեսգիշերից շատ ուշ, բայց չէի կարողանում քնել՝ վախենալով այն մարդկանց համար, ովքեր հայտնվելու էին անասելիորեն ավելի վատ վայրում, որը կոչվում է Կրակի լիճ, և համաձայն Հիսուսի խոսքերի՝ այդտեղ է հայտնվելու մարդկության մեծ մասը:

> «Նե՛րս մտեք նեղ դռնով, որովհետև դուռը դեպի դժոխքը լայն է, և ճանապարհը, որը տանում է այնտեղ, հեշտ է, և շատերն են գնում դրանով: Բայց դուռը դեպի կյանքը՝ նեղ է, և ճանապարհը, որը տանում է այնտեղ, դժվար է, և քիչ մարդիկ են, որ գտնում են այն» (Մատթեոս 7.13,14, TEV):

Այդ գիշեր անկողնում պառկած՝ ես հիշեցի, որ մի քանի տարի առաջ ինձ խնդրեցին քարոզել հատուկ ռեժիմով տղամարդկանց կալանավայրում, որը Հարավային Աֆրիկայում էր: Հիշում եմ, որ գնալով այդ սարսափելի վայրը՝ ականատես եղա զարհուրելի բաների, որոնց թվում էին անտանելի գարշահոտությունը, կյանքի զզվելի պայմաններ-

ը, բանտախցերը, որոնցում պահվում էին քսանից երեսուն տղամարդիկ՝ մի քանի տասնյակ սանտիմետր հեռավորությամբ դրված մահճակալներով, և նույնիսկ պահպանակներ՝ կախված բանտախցերի պատերից: Ես ծառայել էի մի քանի ամերիկյան բանտերում, բայց իմ կյանքում նման անհուսալի պայմաններ չէի տեսել: Մեր բանտերը նման են գյուղական ակումբների՝ այդ վայրի համեմատ:

Ես չէի կարող պատկերացնել, թե ինչպես էր հնարավոր ապրել այդ վայրում նույնիսկ մեկ շաբաթ, էլ ի՛նչ խոսք քառասունից հիսուն տարվա մասին: Կարելի էր բացարձակ հուսահատություն տեսնել այն մարդկանց դեմքերին, ովքեր չէին հավատում Հիսուսին: Ես գրեթե լսում էի նրանց մտքերը. *«Գոնե մեկ օր ես կազատվեմ այստեղից, երբ մահանամ»:* Միևնույն ժամանակ նրանք սարսափում էին մահվան անհայտությունից: Նրանք սարսափելի վիճակում էին և բացարձակ անհուսության մեջ: Եթե ազատության մեջ ապրելուց հետո դուք հարկադրված լինեիք մինչև ձեր կյանքի ավարտը ապրել նման վայրում, դա իսկական տանջանք կլիներ: Այդ բանտարկյալները հենց այդպիսի վիճակում էին:

Երբ այդտեղ էի, ես մտածեցի, որ որքան էլ այդ վայրը զարհուրելի լիներ, այն հրաշալի էր՝ դժոխքի համեմատ: Այդ բանտարկյալները գոնե ընկերակիցներ ունեին և տեսնում էին արևի լույսը, որը ներս էր թափանցում բանտի մի քանի ճաղապատ պատուհաններով: Դժոխքում չկան ո՛չ ընկերակիցներ, ո՛չ լույս, այլ միայն՝ կրակ, որը երբեք չի մարելու: Կրակի լճում հավիտյան թեթևություն չի լինելու: Մարդիկ լինելու են մշտական տանջանքի մեջ: Դժոխքում մարդիկ չեն կարող մտածել. *«Մեկ օր ես կազատվեմ այստեղից»:* Նրանք *հավիտենական* պատիժ են ստացել:

Քանի որ դժոխքը Հիսուսի տարրական ուսմունքներից մեկն է, Նա հաճախ էր խոսում այդ մասին՝ շատ ավելի հաճախ, քան խոսվում է մեր օրերի եկեղեցական ամբիոններից: Նա չէր կարծում, որ դժոխքը նկարագրելը (այն, որ մարդանց տանջանքներն այդտեղ երբեք չեն վերջանալու) գթասրտության պակաս է նշանակում: Ընդհակառակը՝ որպես Բարի Հովիվ, Նա անհրաժեշտ էր համարում սովորեցնել մեզ այդ մասին: Այսպիսով, դժոխքի մասին հիշատակելու և սովորեցնելու պատճառը սերն էր, քանի որ այն ամենը, ինչ Նա անում և սովորեցնում էր, դրդված էր գթասրտությունից: Ես ցանկանում եմ տալ հետևյալ հարցը. արդյո՞ք այսօր մենք ծառայություն ենք մատուցում մարդկանց՝ չհիշատակելով դժոխքը մեր ամբիոններից: Մի՞թե դա ճշմարիտ սեր է:

Աստվածաշնչում դժոխքը մի քանի անվանում ունի: *Շեոլը* (միայն Հին կտակարանում), *Հադեսը* և *գերեզմանը* մահվան միջանկյալ վայ-

ների անվանումներն են: *Գեհենը* և *Կրակի լիճը* հավիտենական տանջանքի վայրի անվանումներն են: Շուտով ցույց կտանք տարբերությունը միջանկյալի և հավիտենականի միջև:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ դժոխքն իրական վայր է, ոչ թե վերացական, ինչպես մեր հասարակությունը ձգտում է ներկայացնել: Թվոց 16-րդ գլխում երկիրը բացվեց, և բազմաթիվ վկաների առջև Շեոլը կենդանի-կենդանի կուլ տվեց երեք ամբողջական ընտանիքի: Նոր կտակարանում գրված է Հակաքրիստոսի և նրա Սուտ մարգարեի մասին. «Երկուսն էլ ողջ-ողջ նետվեցին կրակի լիճը, որը բորբոքված այրվում է ծծումբով» (Հայտնություն 19.20, AMP): Այնպես չէր, որ նրանք մահացան, և միայն նրանց անձերը տարվեցին այդ վայրը. նրանք գցվեցին Կրակի լիճը՝ իրենց մարմիններով և անձերով հանդերձ:

Ղազարոսը և հարուստը

Ղուկասի Ավետարանում Հիսուսը պատմում է իրականում տեղի ունեցած մի դեպք հարուստ մարդու մասին, ով ապրում էր լիովին իր համար՝ անտեսելով մի աղքատի, ով ամեն օր պառկած էր իր տան առջև: Մենք գիտենք, որ այս պատմությունն առակ չէ, քանի որ Հիսուսն այն սկսեց՝ ասելով. «...մի հարուստ մարդ կար...»: Բացի այդ՝ Նա օգտագործեց Աբրահամի անունը և աղքատին Ղազարոս անվանեց: Իր առակներում Հիսուսն անուններ չէր տալիս և չէր խոսում իրական մարդկանց մասին:

Ղազարոսը մահացավ, և հրեշտակները տարան նրան Աբրահամի գոգը, որը մի վայր էր, որտեղ պահվում և մխիթարվում էին Հին կտակարանի սրբերը, մինչև որ Հիսուսը ճանապարհ բացեց նրանց համար դեպի Աստծո ներկայությունը Երկնքում: Հարուստ մարդը մահացավ և հայտնվեց դժոխքում (Հադեսում): Գրված է.

> «...Եվ Հադեսում, որտեղ նա մեծ ցավի մեջ էր, նա վեր նայեց և հեռվում տեսավ Աբրահամին, և Ղազարոսին՝ նրա կողքին: Նա կանչեց. «Հայր Աբրահա՛մ: Խղճա՛ ինձ և ուղարկի՛ր Ղազարոսին, որ թաթախի իր մատը ջրի մեջ և սառեցնի իմ լեզուն, որովհետև ես մեծ ցավի մեջ եմ այս կրակի մեջ»» (Ղուկաս 16.23,24, TEV):

Ուշադրություն դարձրեք, որ հարուստը մեծ ցավի մեջ էր: Այլ թարգմանություններում օգտագործվում են «տանջանք», «տառապանք» կամ «չարչարանք» բառերը: Այլ կերպ ասած՝ նա սարսափելի տանջանքի մեջ էր: Դժոխքը՝ գիտակցված չարչարանքների վայր է: Նույն-

պես ուշադրություն դարձրեք, որ այդ մարդը ճանաչեց Աբրահամին և Ղազարոսին, իսկ նրանք ճանաչեցին նրան: Դժոխքում գտնվող մարդիկ լիարժեք մարդ են, նրանք պահպանում են իրենց մտավոր կարողությունները, զգացմունքները, կամքը, արտաքին տեսքը և զգայարանները: Այդ մարդը տեսնում էր, լսում էր և ցավ էր զգում: Մարդիկ այդտեղ նույնպես ինչ-որ տեսակի մարմին ունեն: Մենք տեսնում ենք, որ հարուստը ուժգին ցանկանում էր պարզապես հովացնել լեզուն: Հիսուսն ասում է, որ և՛ մարմինը, և՛ անձը հավիտյան կործանվում են դժոխքում (տե՛ս Մատթ. 10.28): Այլ կերպ ասած՝ մարդկային մարմինը մշտապես փչանալու և ապականվելու է կրակի և որդերի կողմից:

Նույնպես ուշադրություն դարձրեք, որ հարուստը ողորմություն էր խնդրում իր հանդեպ, ինչպես և Լոնի զնդանում գտնվողները՝ մեր պատմության մեջ: Դժոխքը վայր է, որտեղից *հավիտյան* ազատում չկա: Ոչ ոք երբեք չի գա դժոխք՝ այդտեղ բնակվողներին մխիթարելու համար, թեև նրանք մեծապես փափագում են սփոփանք ստանալ: Նույնպես թվում է, թե մարդը երբեք լիովին չի գիտակցում դժոխքի իրականությունը: Աբրահամը պետք է հիշեցներ հարուստին. «Կա մեծ անդունդ, որը բաժանում է մեզ: Ցանկացած մարդ, ով կուզեր անցնել այդտեղով և գալ քեզ մոտ *[մխիթարություն բերելու համար]*, կանգնեցվում է դրա եզրին, և ոչ ոք այդտեղից չի կարող հատել դրա սահմանը և գալ մեզ մոտ» (Ղուկաս 16.26, NLT): Ես ճանաչում եմ մի մարդու, ով եղել է դժոխքում: Նա պատմում էր, որ նրանց, ում նա տեսել է, աղաղակում էին, որ այն չափազանց ծանր է՝ կրելու համար: Նույնը գոչում էր այս պատմության հարուստ մարդը:

Շարունակենք կարդալ.

> «Բայց Աբրահամն ասաց. «Հիշի՛ր, որդի՛ս, որ քո կյանքի ընթացքում դու ստացար բոլոր բարի բաները, իսկ Ղազարոսն ստացավ բոլոր վատ բաները: Բայց հիմա նա վայելում է այստեղ, մինչ դու ցավի մեջ ես...»:
>
> Հարուստը պատասխանեց. «Այդ դեպքում, աղաչո՛ւմ եմ, հա՛յր Աբրահամ, ուղարկի՛ր Ղազարոսին իմ հոր տունը, որտեղ ես հինգ եղբայր ունեմ: Թող նա գնա և զգուշացնի, որ գոնե նրանք չգան այս տանջանքների վայրը»» (Ղուկաս 16.25,27,28):

Դուք լսած կլինեք մի հին ասացվածք. «Մահն ընկերների հետ՝ երանություն է»: Ինչո՞ւ այն չգործեց այս դեպքում: Ինչո՞ւ հարուստը չէր ցանկանում, որ իր եղբայրներն իր հետ լինեին: Պատասխանը հետևյալն է՝ դժոխքում չկա ընկերակցություն և շփում: Ոմանք մտածում են, որ դժոխքում երեկույթներ են լինելու: Մյուսները մտածում են, որ այն-

տեղ նրանք լինելու են իրենց ընկերների հետ: Եթե այդպես լիներ, հարուստը կուզեր, որ իր բոլոր մտերիմները միանային իրեն, բայց նա հուսահատորեն ձգտում էր, որ նրանք չգային այդ չարչարանքի վայրը: Դժոխքը բացարձակ միայնության և անհուսության վայր է: Այն նույնպես հավերժ հուշերի վայր է, ինչը, իմ համոզմամբ, դժոխքի մեծագույն չարչարանքներից մեկն է:

Կարդացե՛ք, թե ինչպես է Աբրահամն արձագանքում հարուստի խնդրանքին՝ իր եղբայրների համար.

> «Աբրահամն ասաց. «Քո եղբայրներն ունեն Մովսեսին և մարգարեներին՝ նրանց զգուշացնելու համար. քո եղբայրները պետք է լսեն նրանց խոսքերին»:
>
> Հարուստը պատասխանեց. «Դա բավական չէ, հա՛յր Աբրահամ, բայց եթե ինչ-որ մեկը մահից հարություն առներ և գնար նրանց մոտ, նրանք կշրջվեին իրենց մեղքերից»:
>
> Բայց Աբրահամն ասաց. «Եթե նրանք չեն լսում Մովսեսին և մարգարեներին, չեն էլ համոզվի, եթե նույնիսկ ինչ-որ մեկը հարություն առներ մահից»» (Ղուկաս 16.29–31, TEV):

Այստեղ գրված է մի շատ կարևոր ճշմարտություն: Շատերը ձգտում են արտասովոր վերապրումների, որպեսզի համոզվեն Ավետարանի վավերականության մեջ կամ համոզեն դրանում այլ մարդկանց: Այնուամենայնիվ, Հիսուսը ցույց է տալիս, որ չկա ավելի մեծ բան, քան Աստծո Խոսքը, որը կարող է հավատք ծնել մարդու մեջ՝ դրդելով նրան լիարժեք կերպով հետևել Աստծուն մինչև վերջ: Սխալ մի՛ հասկացեք ինձ: Նրանք, ովքեր գերբնական դրսևորումներ են տեսնում, մեծ զարմանք են ապրում և փոխվում են կարճ ժամանակով, բայց այդ փորձառությունները մշտական համոզվածություն չեն առաջացնում նրանց սրտում:

Երբ ես դեռահաս էի (հայհոյող և երեկույթների մշտական մասնակից), հայրս տարավ ինձ դիտելու «Տասը պատվիրանները» ֆիլմը, որի գլխավոր դերում Չարլտոն Հեսթոնն էր: Ես պարզ հիշում եմ, որ հայացքս հառել էի կինոթատրոնի մեծ էկրանին, երբ երկիրը բացվեց և կուլ տվեց մարդկանց՝ դժոխք տանելով: Դա անասելիորեն ցնցեց ինձ: Երբ դուրս եկա կինոթատրոնից, կյանքս փոխված էր: Ես սկսեցի այլ կերպ վարվել և գրեթե մեկ շաբաթ այդ մասին էի խոսում, ինչից հետո կրկին վերադարձա իմ հին սովորություններին: Ո՞րն էր պատճառը. ես չէի լսել Աստծո Խոսքը, չէի ապաշխարել իմ ճանապարհներից և կյանքս լիովին չէի նվիրել Հիսուսին՝ թույլ տալով, որ Նրա շնորհքը փոխեր ինձ:

Ընկերներս և ես այլ արտասովոր վերապրումներ էինք ունեցել, որոնք նույնպես ցնցում էին առաջացրել ինձանում. այնուամենայնիվ, գերբնական վերապրումները չփոխեցին ինձ: Իմ կյանքը փոխվեց այն ժամանակ, երբ համալսարանում էի, և մեր տղաների հանրակացարանի ուսանողներից մեկը եկավ իմ սենյակ և ծանոթացրեց ինձ Աստծո Խոսքին՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով: Աստծո Խոսքը հատկապես ասում է մեզ. «Հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստծո Խոսքից» (Հռոմեացիների 10.17), և «Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապական սերմից՝ Աստծո կենդանի և հավիտենական Խոսքով» (Ա Պետրոս 1.23): Այս պատճառով, շատ կարևոր է, որ մենք սովորեցնենք և քարոզենք Աստծո Խոսքը, ոչ թե միայն մեր վերապրումները:

Այնուամենայնիվ, այս ճշմարտությունը պարզորեն ներկայացնելուց հետո, թույլ տվեք շեշտել հետևյալը. *եթե վերապրումները լրացնում են Աստծո Խոսքը կամ մեծացնում են Աստծո Խոսքի ազդեցությունը, դրանք շատ տեղին են և նույնիսկ՝ անհրաժեշտ:* Վկայությունները մեծ դեր են կատարում Ավետարանը ներկայացնելու մեջ, բայց մենք հավիտենական կյանք ենք ստանում՝ ընդունելով Աստծո Խոսքը և հավատալով Աստծո Խոսքին:

«Ինչո՞ւ եմ ես այստեղ գնում»

Այժմ թույլ տվեք ինձ մի վկայություն պատմել, որը կլրացնի այն աստվածաշնչյան ճշմարտությունները, որոնց մասին մենք խոսեցինք: Մի երեկո կինս և ես հյուր էինք մեր ընկերոջ տանը, և երբ միասին նստած էինք նրա հյուրասենյակում, նա պատմեց մի դեպք, որը տեղի էր ունեցել իր երիտասարդ տարիներին: Նա մեծացել էր Կարիբյան կղզիներում և մի անձրևոտ եղանակի ժամանակ ընկել էր այն փոսի մեջ, որում անձրևաջրեր էին հավաքում՝ շինարարության մեջ օգտագործելու համար: Նրա եղբայրը ցատկել էր փոսը և փորձել օգնել նրան, բայց չէր կարողացել. նա վազել էր՝ օգնություն կանչելու, քանի որ մեր ընկերը լողալ չգիտեր: Մինչ օգնություն կցուցաբերվեր, նա արդեն երեսուն րոպե մահացած էր:

Նա պատմում էր մեզ, որ երբ դուրս է եկել մարմնից, նրա բոլոր զգայարանները գործել են, և մեծ արագությամբ իջել է ներքև՝ շատ թանձր խավարի մեջ: Նա ասաց, որ խավարն այնքան թանձր էր, որ չէր կարողանում տեսնել իր ձեռքը: Այնպիսի՜ խավար էր, որ նրան թվում էր, թե ինքը հագել է այն: Եվ նա ասաց.

– Ես այնքա՜ն վախեցած էի, որ մտածում էի՝ *ավելի վատ արդեն չի կարող լինել:* Բայց որքան ավելի էի ընկնում, այնքան ավելի էր իմ վախն ուժգնանում: Ես երբեք նման վախ չէի զգացել երկրի վրա: Այն անկարելի է նկարագրել բառերով:

Նա շարունակեց.

– Դրանից հետո ես առկայծող լույսեր տեսա. գիտեի, որ դժոխք էի գնում և սկսեցի գոչել. «Ինչո՞ւ եմ ես այստեղ գնում: Ես քրիստոնյա՜ եմ»:

Մեր ընկերոջ մայրը և հայրը նվիրված հավատացյալներ էին, բայց նա պարզապես եկեղեցի էր հաճախում, քանի որ չէր կարող չհնազանդվել իր ծնողներին:

Նա պատմում էր, որ դրանից հետո վախի և տառապանքի ճիչեր է լսել: Ես վառ կերպով հիշում եմ, թե ինչպես նա ասաց.

– Ձո՛ն, Լի՛զա, կան հասարակ ճիչեր, բայց կան ճիչեր, որոնցից արյունդ սառչում է երակներիդ մեջ: Ես հենց այդպիսի ճիչեր լսեցի:

Նա շարունակեց.

– Դրանից հետո ես երես առ երես բախվեցի մի թեփուկավոր արարածի, ով շարունակ ասում էր ինձ. «Ե՛կ այստեղ, դու ի՜մն ես»: Ես կռվում էի նրա հետ: Սկզբում վախից չէի կարողանում խոսել, բայց հետո բղավեցի. «Թո՛ղ ինձ, թո՛ղ ինձ»:

Հանկարծ հայտնվեցի մարմնումս: Ես բղավում էի, և նույնիսկ կծեցի այն բժշկի ձեռքը, ով մատը կոկորդս էր մտցրել: Մայրս ասաց ինձ այդ մասին, երբ պատմեցի նրան, թե ինչ էի վերապրել: Ամբողջ այդ ընթացքում մայրս նստած է եղել վիրահատարանի միջանցքում և աղաղակել է Աստծուն. «Հա՜յր, եթե վերադարձնես որդուս, նրան ընդմիշտ կընծայեմ Քեզ»:

Տարիներ անց իմ ընկերը ծառայություն սկսեց Կարիբյան կղզիներում:

Դուք կարող եք վիճարկել այն, ինչ նա վերապրել էր. այնուամենայնիվ, կան բազմաթիվ տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնց հետ նման դեպքեր են պատահել: Մահամերձ փորձառությունները չափազանց հաճախ են տեղի ունենում բժիշկների ներկայությամբ, բայց քչերն են զբաղվել դրանց հետազոտմամբ:

Նման հետազոտողներից մեկը՝ Մելվին Մորզե անունով մի բժիշկ, ընդարձակ հետազոտություն է անցկացրել՝ ներգրավելով երեխաների, ովքեր մահամերձ փորձառություն են ունեցել: Դոկտոր Մորզեն ուսումնասիրել է երեխաների երկու խումբ: Առաջին խումբը բաղկացած էր 3–16 տարեկան 121 երեխաներից, ովքեր ծանր հիվանդ էին, բայց մա-

համերձ չէին: Նրանց մարմինը միացված էր արհեստական շնչառական սարքերին, նրանք ինտենսիվ խնամք էին ստանում կամ բարձր չափաբաժիններով դեղորայք էին ընդունում: Այս խմբի երեխաներից ոչ ոք չհայտնեց իր մարմնից դուրս գալու մասին:

Երկրորդ խումբը բաղկացած էր նույն տարիքային խմբի 12 երեխաներից: Այս խմբում եղել էին սրտի աշխատանքի դադարեցման, ավտովթարների, ջրում խեղդվելու և այլ դեպքեր: Այս փոքր խմբում յուրաքանչյուրն իր մարմնից դուրս գալու վերապրում էր ունեցել: Մի քանիսը կարճ ժամանակով տեսել էին իրենց մարմինները և պատմել էին բժիշկներին այն, թե ինչ էին անում, երբ նրանք աշխատում էին իրենց մարմնի հետ:

Ոմանք կարող են մտածել, որ մեր ընկերոջ վերապրումը՝ պատրանքի արդյունք էր: Այնուամենայնիվ, այս երեխաների հետ կատարված դեպքերը համոզիչ կերպով ցույց են տալիս հակառակը: Բացի այդ՝ ինչպե՞ս նա կարող էր պատրանքներ ունենալ իր մտքում, երբ գրեթե երեսուն րոպե կլինիկապես մահացած է եղել:

Դժոխքը (Հադեսը) և Կրակի լիճը

Իմ ընկերը, ինչպես նաև ինձ ծանոթ այլ մարդիկ, տեսել էին չարչարանքների այն միջանկյալ վայրը, որը կոչվում է դժոխք (կամ՝ Հադես): Սա փրկություն չստացած մարդկանց հավիտենական բնակավայրը չէ: Այն չարչարանքներով լի սպասելավայր է, որտեղ չփրկվածները պահվում են՝ մինչև Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Մշտական վայրը, որտեղ մարդիկ, դևերը և ընկած հրեշտակները կանցկացնեն հավիտենությունն իրենց դատաստանից հետո, կոչվում է *Կրակի լիճ*: Սա ակնհայտորեն երևում է հետևյալ աստվածաշնչյան հատվածից.

> «Դրանից հետո ես տեսա Մեծ Սպիտակ գահը և Նրան, Ով նստած էր դրա վրա... Եվ ծովը տվեց այն մեռելներին, որոնք իրենում էին, մահը և Հադեսը (դժոխքը) հանձնեցին իրենցում եղած մեռելներին, և բոլորը քննվեցին, և նրանց գործերը վճռվեցին՝ ըստ այն ամենի, ինչ նրանք արել են [համաձայն նրանց դրդապատճառների, նպատակների և գործերի]: Դրանից հետո մահը և Հադեսը գցվեցին կրակի լճի մեջ: Սա երկրորդ մահն է՝ կրակի լիճը: Եվ եթե ինչ-որ մեկի [անունը] չէր գտնվում գրանցված Կյանքի գրքում, նրան գցում էին կրակի լիճը» (Հայտնություն 20.11,13–15, AMP. երկու հատված քառակուսի փակագծերի մեջ բաց է թողնված՝ պարզության համար):

Նախ՝ ցանկանում եմ նշել, որ նրանք, ովքեր գտնվում էին չարչարանքների միջանկյալ վայրում՝ դժոխքում (Հադեսում), բերվելու են դա-

տաստանի առջև: Հենց որ այս դատաստանն ավարտվի, բոլոր գայթակղությունները և բոլոր անօրինություն գործողները գցվելու են Կրակի լիճը՝ ներառյալ դևերը, ընկած հրեշտակները և, իհարկե, հենց ինքը՝ դժոխքը (Հադեսը):

Տեսիլք Կրակի լճի մասին

Կինս և ես ունենք ընկերներ, որոնք ազգությամբ հույն են: Այդ ամուսնական զույգի կինը՝ Ձոյը, երրորդ սերնդի ծառայող է: Նրա տատը ծնվել և մեծացել է Հունաստանում, և երիտասարդ տարիքից փնտրել է Աստծուն: Նրա հարցերը՝ ուղղված իրեն շրջապատող մարդկանց, ընդունվում էին անտարբերությամբ և ծաղրանքի առարկա էին դառնում: Նա ուզում էր որևէ եկեղեցի գնալ, բայց նրան ասում էին, որ Աստված չկա, և նա պետք է դադարի խոսել այդ անմտության մասին:

Մեկ օր, երբ Ձոյի տատը, ազգային տոներից մեկի ժամանակ իր ընկերուհիների հետ ազգային պարեր էր պարում իրենց գյուղի հրապարակում, մի ձայն խոսեց նրա հետ. «Եփրոսինի՛, ձգտի՛ր հավիտենական պարին»:

Նա հանկարծակիի եկավ: *«Ո՞վ խոսեց ինձ հետ»*,– մտածեց նա և անմիջապես դադարեց պարել ու տուն վազեց՝ հուսալով, որ կստանա իր հարցի պատասխանը: Վազելու ընթացքում նրա վրա անասելի բեռ եկավ, ասես մեջքին մեծ ծանրություն լիներ:

Տուն մտնելուն պես Եփրոսինին անմիջապես գնաց իր ննջասենյակ, ծնկի եկավ և սկսեց լաց լինել: Նա ցանկանում էր խոսել այդ ձայնի հետ: Ո՞վ էր խոսում իր հետ: Ի՞նչ խոսքեր էին, որ ասվեցին նրան: Ի՞նչ է Նա փորձում ասել դրանով: Այս հարցերը տանջում էին նրա միտքը, ինչը, սակայն, երկար չտևեց: Հազիվ էին Եփրոսինիի ծնկները դիպչել գետնին, երբ նա զգաց, որ կրակի պես մի բան մտավ իր սենյակ՝ կլանելով իրեն: Նա ետ ընկավ և հայտնվեց տեսիլքի մեջ:

Տեսիլքի մեջ տեսավ սպիտակ հագած մի հրեշտակի, ով մոտեցավ իրեն: Նա բարձրացրեց Եփրոսինիին և տեղափոխեց մի վայր, որտեղ աղոտ լույս էր: Հրեշտակն այդտեղ թողեց նրան: Ուշադիր նայելով՝ նա զարմանքով հասկացավ, որ կանգնած էր Գողգոթայի տեսարանի առջև: Տերը խաչի վրա էր. արյունը կաթում էր Նրա վերքերից: Նա տեսավ կտտանքների ենթարկվող Տիրոջ տառապյալ դեմքը:

Միևնույն ժամանակ Եփրոսինին հեռվից եկող ճիչեր լսեց: Նա շրջվեց՝ տեսնելու համար, թե որտեղից էին դրանք գալիս, և տեսավ մի մեծ անդունդ, որը գտնվում էր խաչի և այդ վայրի միջև: Այն վայրը, որ-

տեղից լսվում էին ճիչերը, անդունդի մյուս կողմում էր: Գետնից կրակի մեծ ալիքներ էին դուրս թռչում. դա կրակե օվկիանոս էր: Նա լսում էր ճիչեր, որոնք արձակում էին այնտեղ գտնվող մարդկանց մեծ բազմությունները: Նրանք անիծում էին Աստծուն: Ադ պահին նա մի ուժ զգաց, որը հրում էր իր գլուխը դեպի բաժանող անդունդի մյուս կողմը, և այն ձայնը, որը նա արդեն լսել էր, խոսեց իր հետ. «Դու նույնպես պետք է այս վայրում լինես»:

Նա զարհուրեց և սկսեց լաց լինել ու ողորմություն խնդրել իր համար: Նա ընկավ խաչափայտի մոտ՝ կրելով իր մեջքին այն ծանր բեռը, որն զգացել էր դրանից առաջ, և մնաց այդտեղ՝ որոշ ժամանակ լաց լինելով: Այդ ձայնը՝ լի սիրով և գթասրտությամբ, կրկին խոսեց իր հետ. «Նա արեց դա քե՛զ համար: Նա մահացավ քե՛զ համար: Եթե ներում խնդրես և ընդունես այն զոհը, որը Նա արեց քեզ համար, դու ստիպված չես լինի գնալ այդտեղ (Կրակի լիճը)»:

Դրանից հետո Եփրոսինին ավելի ուժգնորեն լաց եղավ՝ անմիջապես արձագանքելով այդ ձայնի խոսքերին: Նա ներում խնդրեց, և այն բեռը, որը կրում էր, անմիջապես վեր բարձրացվեց և գլորվեց դեպի խաչը:

Նա վեր նայեց ու իր առջև տեսավ Տեր Հիսուսին՝ կանգնած Իր փառավոր կերպարանքով: Տեր Հիսուսը բարձրացրեց նրան և տարավ մի անչափ գեղեցիկ կանաչ սարի վրա: Այժմ Եփրոսինին կարող էր շփվել Նրա հետ իր մտքում: Նա հարցեր էր տալիս, իսկ Հիսուսը պատասխանում էր: Դա զարմանալի՞ էր: Նա հարցրեց, թե ուր էին նրանք գնում, և Հիսուսը պատասխանեց. «Հանդիպելու քո Երկնային Հորը»:

Մինչ նրանք մոտենում էին սարի գագաթին, նա տեսավ մի դարպաս, որտեղից լույս էր ճառագում: Ծաղիկներից և ծառերից բխող գեղեցիկ հրեշտակային երաժշտությունը և երգեցողությունը ստեղվում էր ամենուր: Նրանք հասան գագաթին և ներս մտան այդ դարպասով: Դա անհավատալի՞ էր: Այդ գեղեցկությունն աննկարագրելի՞ էր:

Նրանք գնացին ուղիղ դեպի գահը: Եփրոսինին չտեսավ Աստծո երեսը, քանի որ այն ծածկված էր, բայց տեսավ մի մեծ գիրք և մի ձեռք, որը դուրս եկավ ամպերից: Այն սկսեց գրել: Նա առաջ ձգվեց՝ տեսնելու, թե ինչ էր գրվում, և ի զարմանս իրեն՝ տեսավ իր անունը Կյանքի գրքում (թեև այդ ժամանակ նա չգիտեր, որ դա Կյանքի գիրքն էր):

Երբ երկնային Հայրը գրեց նրա անունը Կյանքի գրքում, Նա ասաց. «Բարի գալո՛ւստ ընտանիք», և համբուրեց Եփրոսինիի ճակատը: Այդ պահին նա տեսավ շրջան կազմած հրեշտակների, ովքեր մեծ ուրախությամբ երգում և պարում էին: Նա միացավ նրանց: Այդ տեսիլքից

շատ ժամանակ անց նա իմացավ, որ հրեշտակներն անում էին դա ի պատիվ իրեն, քանի որ ինքը փրկվել էր:

Որոշ ժամանակ անց Տերը խոսեց նրա հետ և ասաց, որ ժամանակն է, որ նա երկիր վերադառնա, որովհետև Ինքը մեծ գործ էր ծրագրել նրա համար: Եփրոսինին պետք է անցներ կրակե փորձություններով Նրա անվան համար, բայց Տերը նրա հետ էր լինելու, և երբ այդ ամենն ավարտվեր, նա վերադառնալու էր, որպեսզի հավիտյան Տիրոջ հետ լիներ:

Այդ պահին Եփրոսինին կրկին հայտնվեց տանը: Նա մեծապես հիասթափված էր, որ երկիր էր վերադարձել իր երկնային ճանապարհորդությունից, բայց չէր կարող փոխել դա:

Երբ գյուղում տարածվեց Եփրոսինիի վերապրման մասին լուրը, հալածանք սկսվեց: Այն սկսվեց նրա հորից, ով սպառնաց, որ կացնով կսպանի նրան, եթե չուրանա իր հավատքը: Եփրոսինին ասաց, որ երբեք չի կարող ուրանալ այն, ինչ վերապրել է:

Մի երեկո հալածանքն է՛լ ավելի խստացավ: Եփրոսինիի քույրն զգուշացրեց նրան, որ հաջորդ առավոտյան մի քանի մարդիկ որոշել էին նրանց տուն գալ և տանել նրան գյուղի հրապարակ, որտեղ Հույն ուղղափառ եկեղեցի կար: Նրանք դուրս էին բերելու Մարիամի սրբապատկերը, և եթե նա չխոնարհվեր՝ ի նշան երկրպագության, և չհամբուրեր այն, նրանք բենզին էին լցնելու նրա մարմնի վրա և այրելու էին:

Եփրոսինին չէր հավատում, որ մարդիկ այդքան հեռու կգնային, բայց, հավանաբար, նրանք որոշել էին անել դա, քանի որ այդ գիշեր մի հրեշտակ՝ Տիրոջից ուղարկված եկավ երիտասարդ Եփրոսինիի մոտ և արթնացրեց նրան՝ հրելով նրա ուսը: Հենց որ նա արթնացավ, հրեշտակը պատվիրեց նրան հագնվել և մոտենալ իր տան մուտքի դռանը: Նա հնազանդվեց, և հասնելով մուտքին՝ զգաց, որ ինչ-որ մեկը բարձրացրեց իրեն գետնից: Նա ֆիզիկապես տեղափոխվեց իր տնից և իջավ մի քանի կիլոմետր հեռու գտնվող մի գյուղ, որտեղ նրան ոչինչ չէր սպառնում:

Աննկարագրելի չարչարանք

Զոյի տատիկը չէր տեսել դժոխքը (Հադեսը): Նա տեսել էր Կրակի լիճը, որը նույնպես կոչվում է «երկրորդ մահ»: Նրա կյանքը փոխվել էր, որովհետև նա ի սրտե որոշել էր հետևել Հիսուս Քրիստոսին: Աստվածաշունչը պատվիրում է մեզ.

> «Բայց վախկոտները, ովքեր շրջվում են Ինձ (Հիսուսին) հետևելուց, և նրանք, ովքեր անհավատարիմ են Ինձ, և՛ պիղծերը, և՛ մարդասպան-

ները, և՛ անբարոները, և՛ նրանք, ովքեր շփվում են դևերի հետ, և՛ կուռք պաշտողները, և՛ բոլոր ստախոսները՝ նրանց վիճակված է Կրակի լիճը, որը վառվում է կրակով և ծծումբով: Սա երկրորդ մահն է» (Հայտնություն 21.8, TLB):

Ուշադրություն դարձրեք, որ այդ լիճը «վառվում է կրակով և ծծումբով»: Ծծումբը՝ ոչ մետաղական նյութ է, որն այրվելիս ուժգին ջերմություն է արտադրում և տհաճ հոտ է արձակում: Նրանք, ովքեր նկարագրում էին դժոխքը, պատմում էին դրա սարսափելի գարշահոտության մասին: Նրանք ասում էին, որ այն «անտանելի» է: Այդ վայրում եղած մարդիկ, որոնց ես ճանաչում եմ, ասում են ինձ, որ անհնար է մարդկային բառերով նկարագրել այն տառապանքը և սարսուռը, որը վերապրում են մարդու զգայարանները:

Նույնպես, ուշադրություն դարձրեք «երկրորդ մահը» տերմինին: Հիսուսն ասում է. «Ով որ ականջ ունի, թող լսի՝ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին: Ով որ հաղթում է, երկրորդ մահից չի վնասվի» (Հայտնություն 2.11):

Միգուցե ձեզ տարօրինակ թվա, որ Հիսուսն ասում է սա եկեղեցիներին: Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք, որ վերևի խոսքում գրված է երեք տեսակի մարդկանց մասին, ովքեր վառվելու են Կրակի լճում: Առաջինը նրանք են, ովքեր դադարել են Աստծուն հետևելուց: Երկրորդը նրանք են, ովքեր անհավատարիմ են եղել Նրան: Երրորդը՝ մեղավորներն են, ովքեր երբեք չեն ապրել Նրա հետ: Առաջին երկու խմբերը, որոնց մասին գրված է այս խոսքում, մի ժամանակ եկեղեցում են եղել:

Հիշե՛ք առաջին երեք հերոսներին, որոնց մասին մենք խոսում էինք մեր այլաբանական պատմության մեջ՝ Հուսահատ սրտին, Խաբվածին և Անկախին: Նրանցից երկուսն ակտիվ էին էնդելի դպրոցում, որը եկեղեցու խորհրդապատկերն է: Շուտով մենք ավելի խորը կանդրադառնանք այս հարցին:

Երկրորդ մահը՝ Կրակի լճում հավիտյան չարչարվելն է: Կրկի՛ն հիշեք առաջին գլուխը, որում մենք խոսում էինք հավիտենության մասին. հավիտյանս հավիտենից՝ առանց ավարտի, առանց թեթևության կամ առանց ազատվելու հնարավորության: Ոմանք կարծում են, որ այս չարչարանքն ի վերջո կավարտվի, բայց սա պարզորեն հակասում է Աստծո Խոսքին: Սուրբ գիրքը պնդում է. «Եվ կչարչարվեն գիշեր և ցերեկ հավիտյանս հավիտենից» (Հայտնություն 20.10):

Ավելի հստակ ցույց տալու համար, որ այս չարչարանքն անվերջ է, Հիսուսն ասում է հետևյալ խոսքերը այն մարդկանց մասին, ովքեր չեն

հնազանդվում Իր Խոսքին. «Եվ սրանք կգնան հավիտենական տանջանքը, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը» (Մատթեոս 25.46):

Ուշադրություն դարձրեք «հավիտենական տանջանք» բառերին: Այլ կերպ ասած՝ այդ տանջանքը երբեք չի ավարտվում: Այն հավիտենակա՛ն է: Հիսուսն ասում է մեզ.

> «Եվ եթե քո աչքը դրդում է քեզ սայթաքել և մեղք գործել, հանի՛ր այն: Քեզ համար ավելի օգտակար և բարերար է, որ մտնես Աստծո թագավորությունը մեկ աչքով, քան երկու աչքով գցվես դժոխքը (Գեհենը)» (Մարկոս 9.47, AMP):

Ինչպես տեսնում եք, Հիսուսը խոսում է Գեհենի՝ Կրակի լճի մասին: Այժմ տեսեք, թե ինչպես է գրված այս հատվածը մեկ այլ թարգմանության մեջ:

> «Եվ եթե քո աչքը դրդում է քեզ կորցնել քո հավատքը, հանի՛ր այն: Ավելի լավ է, որ մտնես Աստծո թագավորությունը միայն մեկ աչքով, քան պահես երկու աչքերդ և դժոխքը գցվես: Այդտեղ «որդերը, որոնք ուտում են նրանց, երբեք չեն մեռնում, և կրակը, որն այրում է նրանց, երբեք չի մարում»» (Մարկոս 9.47,48, TEV):

Ուշադրություն դարձրեք, որ նրանց ուտող որդերը երբեք չեն մեռնում, ինչը նշանակում է, որ նրանք մշտապես կերակուր ունեն: Եկեք համեմատենք սա բնական աշխարհում տեղի ունեցածի հետ: Հենց որ մարդը ֆիզիկապես մահանում է, որդերն ուտում են նրա մարմինը, մինչև որ այն սպառվում է, և մնում են միայն ոսկորները: Դրանից հետո որդերը մահանում են: Գեհենում գտնվող որդերը չեն մահանում, քանի որ այն, ինչ նրանք սպառում են, երբեք չի դադարում գոյություն ունենալ: Մի մարդ, ով եղել էր դժոխքում, պատմում էր, որ տեսել է մեծ որդերի, որոնք ուտում էին մարդկանց միսը, բայց կարևոր չէ, թե որքան ժամանակ էին այդ մարդիկ դժոխքում. նրանց վրա միշտ միս կար, որը կարելի էր ուտել:

Այո՛, դուք ճիշտ եք հասկանում. այդ վայրն աննկարագրելի է: Դուք պետք է մտապահեք, որ Աստված չէր ստեղծել Կրակի լիճը մարդկանց համար: Ահա թե ինչ է Հիսուսն ասում այն մարդկանց, ովքեր գցվում են այդ ահարկու վայրը.

> «Այն ժամանակ կասի ձախ կողմիններին էլ. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»» (Մատթեոս 25.41):

Կրակի լիճն ստեղծված էր ոչ թե մարդկության, այլ սատանայի և նրա անկում ապրած հրեշտակների համար: Այնուամենայնիվ, սատանան խաբում է շատերին՝ իր հետ հավիտենական դատաստանի տանելով: Սա նման է մեր այլաբանությանը. Դագոնի ազդեցության արդյունքում շատերը խաբվեցին, և Զեյլոնի բարկությունը, որը նախատեսված էր Դագոնի համար, պետք է գործադրվեր նաև այն մարդկանց հանդեպ, ովքեր տեղի էին տվել նրա ազդեցությանը: Հակառակ դեպքում, Զեյլոնն արդար չէր լինի:

Հավիտենական բարեկեցություն

Նախորդ գլխում մենք տեսանք, թե որքան ուժգնորեն է արտահայտվում Զեյլոնի բարկությունը: Աստվածաշունչը հայտնում է, որ այն տղամարդը կամ կինը, ով «Աստծո սրտմտության գինուց պիտի խմի... պիտի տանջվի կրակի և ծծմբի մեջ սուրբ հրեշտակների և Գառան առջև: Եվ նրանց տանջանքի ծուխը վեր է ելնում հավիտյանս հավիտենից» (Հայտնություն 14.10,11):

Եվս մեկ անգամ՝ «հավիտյանս հավիտենից»: Հիշո՞ւմ եք, երբ այս գրքի առաջին գլխում խոսում էինք հավիտենության մասին, այսինքն՝ այն մասին, որ մենք փորձում ենք ընկալել այն, ինչը երբեք չի ավարտվում: Դուք չեք կարող ընկալել դա ձեր մտքով, բայց կարող եք հասկանալ ձեր սրտով: Այս պատճառով Աստված սգում էր մի ամբողջ սերնդի համար, որը չլսեց Իրեն.

> «Երանի՜ թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ, որպեսզի իրենց համար բարի լիներ և իրենց որդիներին էլ՝ հավիտյան» (Երկրորդ Օրինաց 5.29):

Ուշադրություն դարձրեք *«հավիտյան»* բառին: Երանի՜ այդ մարդիկ առաջնորդվեին մնայուն բաներով. երանի՜ նրանք հավիտենությամբ շարժվեին:

Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ Աստված ասաց. «Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ»: Նա չասաց. «Իմ բոլոր պատվիրանները պահեին *որոշ ժամանակ»,* և ո՛չ էլ՝ «Իմ պատվիրանների *մի մասը* պահեին ամեն ժամանակ»: Ո՛չ, գրված է՝ *մշտապես* պահել *բոլոր* պատվիրանները: Մեզ պատվիրված է լիովին և մշտապես հնազանդվել Աստծուն:

Միգուցե մտածեք. *«Ես չեմ պահել Նրա բոլոր պատվիրանները: Ես մեղավոր կգտնվեմ դատաստանի ժամանակ»*: Այո՛, դուք լիովին ճիշտ

եք: Աստծո օրենքը ցույց է տալիս և ապացուցում է, որ ոչ մի մարդ չի համապատասխանում Աստծո արդար չափանիշին, և որ բոլորը մեղավոր են գտնվելու դատաստանի ժամանակ: Ոչ մի մարդ չի կարողանա կանգնել Աստծո առջև և ասել. «Ես այնպես եմ ապրել, որ արժանի եմ Քո թագավորությանը, և արժանի չեմ հավիտենական պատիժ ստանալուն»:

Մեր սխալմունքների պատճառն այն է, որ ամենասկզբում՝ պարտեզում, մարդը գիտակցաբար անհնազանդություն թույլ տվեց Աստծո հանդեպ: Որպես հետևանք՝ նա ձեռք բերեց մեղավոր բնությունը: Իր դավաճանության արդյունքում նա դարձրեց իրեն սատանայի ստրուկը և նրա տիրույթի գերին: Նա ոչ մի կերպով չէր կարող փրկել կամ ազատել ինքն իրեն: Այս անկում ապրած բնությունը փոխանցվեց Ադամի և Եվայի ամեն մի ժառանգին, այսինքն՝ ամբողջ մարդկությանը, քանի որ մենք ծնվում ենք մեր ծնողների բնությամբ:

Միմիայն Իր սիրո շնորհիվ Աստված խոստում տվեց, որ թեև մարդկությունը լիովին պատասխանատու էր իր անկում ապրած վիճակի համար, Նա Փրկիչ էր ուղարկելու՝ մեզ ազատելու համար: Այդ Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսն է: Նրա ծնվելուց հարյուրավոր տարիներ առաջ մարգարեություն էր եղել այն մասին, որ Նա ծնվելու էր կույսից (տե՛ս Եսայի 7.14): Նրա Հայրը լինելու էր Աստված, իսկ մայրը՝ Մարիամ անունով մի կույս աղջիկ, ով Դավիթ թագավորի ցեղից էր: Այսպես պետք է լիներ, քանի որ եթե Հիսուսի երկու ծնողներն էլ մարդիկ լինեին, Նա նույնպես ադամական բնության գերին կլիներ: Նա մեղքի ստրուկ կլիներ: Նա չէր կարողանա ապրել կատարյալ կյանքով, և նշանակում է՝ չէր կարողանա փրկել մեզ: Բայց և այնպես, Նա պետք է ծնվեր կնոջից, քանի որ մարդն էր անկում ապրել, և մարդն էլ պետք է վճարեր մեր դավաճանության գինը: Այսպիսով, Հիսուսը՝ հարյուրտոկոսանոց Աստված և հարյուրտոկոսանոց մարդ էր:

Խաչվելով՝ Հիսուսը կրեց մեր բոլոր մեղքերն Իր վրա: Նա մահացավ և թափեց Իր արյունը՝ վճարելով մեր մեղքերի գինը: Այնուամենայնիվ, քանի որ Նա ապրեց կատարելապես արդար կյանքով, Հայրը հարություն տվեց Նրան մեռելներից և նստեցրեց Իր աջ կողմը: Դավիթ թագավորը, ով նաև մարգարե էր և Հիսուսի նախահայրերից մեկը, կանխասեց այն, ինչ պետք է տեղի ունենար Հիսուսի խաչելությունից հետո՝ այդ դեպքերից ավելի քան հազար տարի առաջ: Պետրոսը հիշատակեց նրա խոսքերը Պենտեկոստեի օրը՝ հռչակելով.

> «Իսկ որովհետև [Դավիթ թագավորը] մարգարե էր և գիտեր, որ Աստված երդումով երդվեց նրան, որ նրա երանքի պտղից մարմնի կողմից հարություն տա Քրիստոսին՝ Նրա աթոռի վրա նստեցնելու համար,

առաջուց իմացած՝ խոսեց Քրիստոսի հարության համար, թե Նրա անձը գերեզմանում (կամ՝ դժոխքում, Հադեսում) չթողվեց, և ո՛չ էլ Նրա մարմինն ապականություն տեսավ: Սույն այս Հիսուսին Աստված հարություն տվեց, որի վկաներն ենք մենք ամենքս» (Գործք 2.30–32):

Աստված հարություն տվեց Հիսուսին մեռելներից՝ մեզ ազատելու համար: Ուշադրություն դարձրեք Պետրոսի խոսքերին. նա ասում է, որ Հիսուսը չթողվեց Հադեսում, ինչը նշանակում է, որ Նա այնտեղ էր: Ե՞րբ էր Նա այնտեղ: Ինչ-որ ժամանակ խաչի և հարության միջև: Հիսուսը բոլորիս փոխարեն ճաշակեց մահը կամ դժոխքը, որպեսզի մենք ստիպված չլինենք ստանալ մեր արդար հավիտենական պատիժը: Երբ ուրանում ենք մեր եսակենտրոն կյանքը և լիովին անձնատուր ենք լինում Քրիստոսի իշխանությանը, Նրա կատարած աշխատանքը՝ Իր արյունը թափելը և մահը ճաշակելը, դառնում է և՛ մեր փրկագինը, որն ազատում է մեզ, և՛ արդարացումն Աստծո առջև: Մենք արդար դիրք ենք ձեռք բերում Նրա արդարությամբ և կարող ենք վստահաբար կանգնել Նրա դատաստանի գահի առջև: Փա՛ռք Աստծուն հավիտյան:

Այդ իսկ պատճառով, Աստծո Խոսքը հստակորեն հայտնում է. «Աստված փրկեց ձեզ Իր հատուկ բարեհաճությամբ, երբ դուք հավատացիք: Եվ դուք չեք կարող համարել, որ դա ձեր արժանիքն է. դա պարգև է Աստծուց: Փրկությունը վարձատրություն չէ այն բարի գործերի համար, որոնք մենք արել ենք, որպեսզի մեզնից ոչ ոք չպարծենա դրանով» (Եփեսացիների 2.8,9, NLT):

Եթե դուք երբեք չեք ապաշխարել Աստծուց անկախ ապրելու համար, չեք ուրացել ձեր մեղավոր ճանապարհները և լիովին չեք հանձնել ձեր կյանքը Հիսուսի իշխանությանը, հենց հիմա բացե՛ք գրքի վերջի Հավելվածը: Այդ բաժնում ես կբացատրեմ Աստծո ծրագիրը ձեր փրկության համար և կաղոթեմ ձեզ հետ, որպեսզի ընդունեք Հիսուս Քրիստոսին՝ որպես ձեր Տեր և Փրկիչ:

Շատ հավատացյալներ քաջատեղյակ են այն մասին, ինչը ներկայացրի վերջին մի քանի էջերում: Այնուամենայնիվ, ես հայտնաբերել եմ, որ նրանք լիովին չեն հասկանում այն, ինչի մասին ես խոսելու եմ առաջիկա երկու գլուխներում: Իրականում, շատ մարդիկ, ովքեր դավանում են, որ քրիստոնյա են, ցնցված կլինեն այն պարզ աստվածաշնչյան ճշմարտություններից, որոնք մենք կդիտարկենք հաջորդ էջերում: Առաջիկա գլուխներում մենք նույնպես կխոսենք այն մասին, թե ինչու է հավիտենական պատժի մասին ճշմարտությունը համարվում հիմնարար գիտելիք, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր հավատացյալի՝ առողջ հոգևոր աճ ունենալու համար:

ԳԼՈՒԽ 5

ԽԱՐՎԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

«Մենք գիտենք, որ Աստծո դատաստանը ճշմարտությամբ է...»:
— Հռոմեացիների 2.2

Հիսուսը եկավ՝ փրկելու մեզ մեղքի հավիտենական պատժից, որն սկզբում նախատեսված էր միայն սատանայի և նրա դևերի համար: Տալով իր կյանքը մեզ համար՝ Նա հայտնեց Աստծո զարմանալի սերը:

Մտածե՛ք հետևյալի մասին. սկզբում, երբ Տերն ստեղծեց մարդկանց, կենդանիներին, թռչուններին, միջատներին, ծովային կենդանիներին, այն ամենը, ինչ կա երկրի վրա, և նույնիսկ՝ մթնոլորտը, ամեն ինչ կատարյալ էր: Գրված է. «Եվ Աստված տեսավ բոլորը, ինչ որ արել էր, և ահա շատ բարի էր» (Ծննդոց 1.31): Այնուհետև Նա վստահեց Իր կատարյալ ստեղծագործությունը մարդուն, որպեսզի հսկեր և պահպաներ այն: Համաձայն սաղմոսերգուի հռչակման՝ «Երկինքը պատկանում է միայն Տիրոջը, բայց Նա տվեց երկիրը մարդուն» (Սաղմոս 115.16, TEV): Ադամը պարտավոր էր պաշտպանել ոչ միայն իրեն, այլև՝ ամբողջ ստեղծագործությունը Աստծո գլխավոր թշնամի Լյուցիֆերից:

Աստված չէր ցանկանում ռոբոտների, ովքեր չէին ունենա Իրեն սիրելու, հնազանդվելու և Իր հետ հաղորդակցվելու ազատ ընտրություն: Այնպես որ, Նա տվեց հետևյալ պատվերը պարտեզում գտնվող անթիվ ծառերից մեկի վերաբերյալ. «Դու կարող ես ուտել պարտեզում գտնվող ցանկացած ծառի պտուղը՝ բացի այն ծառից, որը տալիս է գիտելիք բարու և չարի մասին: Դուք չպետք է ուտեք այդ ծառի պտուղը. եթե ուտեք, կմահանաք նույն օրը» (Ծննդոց 2.16,17, TEV):

Աստված չէր խոսում ֆիզիկական մահվան մասին, որովհետև Ադամը մահացավ այդ պատվիրանը խախտելուց շատ տարիներ անց (թեև դա նույնպես նրա անհնազանդության հետևանքներից մեկն էր): Փոխարենը՝ Տերը ցույց տվեց մարդուն, որ նա կառանձնանա Աստծո կյանքից և ձեռք կբերի Լյուցիֆերի բնությունը, ինչը հենց մահ է:

Որոշ ժամանակ անց Լյուցիֆերը խաբեց Եվային՝ աղավաղելով Աստծո բնավորությունը նրա մտքում: Նա կարողացավ շեղել Եվայի

ուշադրությունը բոլոր հասանելի ծառերից դեպի մեկ արգելվածը: Հենց որ Եվան որոշեց, որ այդ ծառը բարի, օգտակար և հաճելի էր, նա կերավ դրանից: Պատճառն այն էր, որ իր մտքում նա համարեց, որ Տերը զրկող է, ոչ թե ամեն ինչ առատապես շնորհող: Այնուամենայնիվ, այդ պահին մարդկությունը դեռ անկում չէր ապրել: Աստծո ստեղծագործությունը ձեռք չբերեց մահվան բնությունը մինչև այն պահը, երբ Եվայի ամուսինը կերավ արգելված ծառի պտղից: Այս պատճառով, Ադամի մեղքն ավելի մեծ էր: Եվան խաբվել էր, իսկ նա՝ ոչ (տե՛ս Ա Տիմոթ. 2.14):

Հետևաբար, ոչ միայն Ադամը, այլև՝ ամբողջ ստեղծագործությունը, որի վրա նա կարգված էր, անմիջապես ձեռք բերեց մահվան բնությունը: Մինչև Ադամի դավաճանությունը, կենդանիները չէին սպանում մեկը մյուսին, չէին ուտում իրար միս, և ո՛չ էլ մահանում էին: Պտտահողմեր, երկրաշարժեր, փոթորիկներ, սովեր, հիվանդություններ և համաճարակներ գոյություն չունեին: Այդ ամենը առաջացավ, քանի որ մարդը չհսկեց այն, ինչ Աստված վստահել էր իրեն: Գրված է.

> «Ամեն բան երկրի վրա ենթարկվեց Աստծո անեծքին՝ սեփական կամքին հակառակ: Ամբողջ ստեղծագործությունն ակնկալում է այն օրվան, երբ այն կմիանա Աստծո զավակներին՝ փառավոր ազատության մեջ մահից և քայքայումից» (Հռոմեացիների 8.20,21, NLT):

Բնությունը չի կրում մահվան անեծքն իր ընտրությամբ, այլ՝ մարդու անհնազանդության պատճառով: Ադամը չպաշտպանեց այն, ինչը վստահված էր իրեն: Նրա պատճառով ոչ միայն բնությունը, այլև՝ ինքը, իր կինը և իրենց ապագա սերունդները կրեցին այն անեծքը, որն սկզբում կրում էր միայն Լյուցիֆերը: Այդ անեծքն Աստծուց առանձնացված լինելն է: Ինչպիսի՜ դավադրություն: Ինչպիսի՜ դավաճանություն:

Երբ դա տեղի ունեցավ, Աստված կարող էր ասել. «Մարդկությունը, ում Ես սիրեցի, օրհնեցի և ստեղծեցի կատարյալ ձևով, թողեց Ինձ՝ գերադասելով Լյուցիֆերին: Թող որ բոլորը գնան Կրակի լիճը, իսկ Մենք (Հայրը, Որդին և Սուրբ Հոգին) ամեն ինչ նորից կսկսենք: Մենք կստեղծենք մեկ այլ տիեզերք՝ այնպիսի արարածներով, ովքեր հավատարիմ կմնան Մեզ և կսիրեն Մեզ՝ ինչպես Մենք ենք սիրում նրանց:

Եթե Աստված այդպես վարվեր, Նա լիովին արդար կլիներ Իր որոշման մեջ: Այնուամենայնիվ, Իր զարմանալի սիրո շնորհիվ՝ Նա խոստացավ մարդկությանը, որ Փրկիչ կուղարկի, որպեսզի ազատի մեզ այն գերությունից, որում մենք հայտնվեցինք: Այդ Փրկիչը լինելու էր Իր Որդին, Ում հետ Նա ստեղծեց երկինքը և երկիրը: Այլ կերպ ասած՝ Որդին վճարելու էր մեր մեղքի, ինչպես նաև՝ մահվան բնության սարսա-

փելի գինը, թեև սկզբից ի վեր Նա չէր արել ոչինչ՝ մարդկությանը սիրելուց բացի: Աստծո սերը զարմանալի՛ է:

Ահա թե ինչու Հիսուսը խաչվեց Գողգոթայում: Ես զարմանում եմ, որ քրիստոնյաները չեն կարողանում պատասխանել, երբ որևէ անհավատ հարցնում է. «Ինչպե՞ս կարող է սիրող Աստված դժոխք ուղարկել այն մարդկանց, ովքեր չեն լսել Ավետարանը»: Ես մի պարզ պատասխան ունեմ. «Դա ոչ թե Աստծո մեղավորությունն է, այլ՝ մերը»: Հիսուսը սարսափելի գին վճարեց՝ մարդկությանն ազատ արձակելու համար: Դրանից հետո Նա պատվիրեց այն մարդկանց, ովքեր արդեն գիտեն այս բարի լուրը, գնալ ամբողջ աշխարհով և պատմել նրանց, ովքեր չգիտեն, որ մենք փրկագնվել ենք այն անեծքից, որը բերել ենք թե՛ մեր, թե՛ ամբողջ ստեղծագործության վրա: Մենք պետք է հաշիվ տանք մեր սերնդի համար: Աստված կատարե՛լ է Իր մասը մարդկության փրկության գործում:

Մենք ստանում ենք Աստծո բնությունը

Բացի այն, որ Հիսուսը կրեց մեր մեղքերի պատիժը, Նրանում մենք նոր բնություն ստացանք՝ Աստծո բնության նմանությամբ: Մենք այլևս մեղքի ստրուկներ չենք: Երբ մարդն ամբողջովին նվիրում է իր կյանքը Հիսուսին, նա լիովին նոր ստեղծված է դառնում:

> «Երբ ինչ-որ մեկը քրիստոնյա է դառնում, նա լիովին նոր մարդ է դառնում իր ներսում: Նա այլևս նույնը չէ: Սկսվել է նո՛ր կյանք» (Բ Կորնթացիների 5.17, TLB):

Մենք բառացիորեն մահանում ենք, երբ ընդունում ենք Հիսուս Քրիստոսին՝ որպես Տեր: Աստծո համար մեր հին բնությունն սպանվում է՝ խաչվելով Քրիստոսի հետ: Այս կերպով մենք վերստին ծնվում ենք: Այժմ մենք ազատ ենք այն բնությունից, որը մի ժամանակ ղեկավարում էր մեր կյանքը: Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս. «Եվ ինչպես որ Քրիստոսը հարություն առավ մահացածներից Հոր փառավոր զորությամբ, այժմ մենք նույնպես կարող ենք նոր կյանք ունենալ... Մեր հին անձերը խաչվեցին Քրիստոսի հետ, որպեսզի մեղքը կորցնի իր իշխանությունը մեր կյանքում: Մենք այլևս մեղքի ստրուկներ չենք: Որովհետև երբ մահացանք Քրիստոսի հետ, ազատվեցինք մեղքի իշխանությունից» (Հռոմեացիների 6.4, 6–8, NLT): Այժմ կարող ենք ապրել՝ համաձայն Քրիստոսի բնության, ոչ թե այն բնության, որին մենք գերված էինք Ադամի ուխտադրժության պատճառով:

Բացարձակ տգիտություն է, երբ քրիստոնյան անարգում է ինչ-որ մեկին, ով չի ընդունել Հիսուսին որպես իր Տեր, նրա կյանքի ոճի պատճառով: Նման մարդու հոգևոր ԴՆԹ-ն ծրագրված է մեղք գործելու համար, և նա հենց այդպես էլ վարվում է: Տարօրինակ և անբնական երևույթն այն է, որ «հավատացյալ» մարդն է շարունակ և հոժարակամ մեղանչում: Այն մարդը, ով շարունակ մեղանչում է, կարող է դավանել, որ Հիսուսն իր Տերն ու Փրկիչն է, բայց իրականում այդպես չէ. ահա թե ինչու ես չակերտների մեջ վերցրի *հավատացյալ* բառը: Եթե Հիսուսն իրականում այդ մարդու Տերը լիներ, նրա կյանքում կարտահայտվեր աստվածային բնությունը: Հիսուսը պարզորեն ներկայացրեց այս սկզբունքը.

> «Կարելի է արագորեն որոշել տարբեր տեսակի պտղատու ծառերը՝ ստուգելով դրանց պտուղը: Այն տեսակը, որը համեղ պտուղ է տալիս, երբեք անուտելի արդյունք չի տա: Եվ այն ծառը, որն անուտելի արդյունք է տալիս, չի կարող բարի պտուղ տալ: Անուտելի պտուղ ունեցող ծառերը կտրվում և գցվում են կրակի մեջ: Այո՛, ծառը կամ մարդուն որոշում են նրանց տված պտղով» (Մատթեոս 7.17–20, TLB):

Հիսուսի պնդումն այս հատվածում դժվար չէ հասկանալ, և այն անշուշտ փոփոխման ենթակա չէ: Պտղի ձևը չի որոշվում իրենով. այն որոշվում է ծառի տեսակով: Այնուամենայնիվ, հենց պտուղն է ցույց տալիս ծառի տեսակը:

Եթե մոտենաք մի թփի, որի վրա առողջ հատապտուղներ կան, դուք կիմանաք, որ այդ թփի պտուղն ուտելի է: Այնուամենայնիվ, եթե դուք թունավոր հատապտուղներ գտնեք, նշանակում է՝ այդ թուփը լավը չէ: Այն, թե արդյո՞ք ծառը լավն է կամ թունավոր, որոշվում է դրա պտղով: Նույն կերպով, Հիսուսն ասում է, որ ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ քրիստոնյաներին որոշում են ոչ թե նրանց խոսքերով, ոչ թե այն բանով, թե որքան կրոնական են նրանք թվում, կամ որքան հաճախ են մասնակցում քրիստոնեական հավաքույթների, այլ՝ նրանց գործերով: Արդյո՞ք նրանք անձնազոհ են և կենտրոնացած են Երկնքի թագավորության վրա, թե՞ նրանք եսասեր են և կենտրոնացած են այս աշխարհի վրա, ինչպես Հովհաննես առաքյալը նկարագրում է իր նամակում.

> «Մի՛ սիրեք այս աշխարհի բարքերը: Մի՛ սիրեք այս աշխարհի բարիքները: Այս աշխարհի սերը քամում է ձեզնից սերը՝ Հոր հանդեպ: Ըստ էության, այն ամենը, ինչը տեղի է ունենում այս աշխարհում՝ ձեր ուզածն անելու ցանկությունը, ամեն ինչ ձեզ համար ստանալու ցանկությունը և կարևոր թվալու ցանկությունը, որևէ առնչություն չունեն Հոր հետ:

Այդ ամենը միայն մեկուսացնում է ձեզ Նրանից: Այս աշխարհը և իր բոլոր ցանկությունները, ցանկությունները, ցանկությունները կանցնեն, բայց նա, ով կատարում է Աստծո կամքը, հավիտյան հաստատ կմնա» (Ա Հովհաննես 2.15–17, MSG):

Լիզայից և ինձնից երկար ժամանակ պահանջվեց, որ համոզեինք մեր երեխաներին սրանում: Նրանք հաճախում էին քրիստոնեական դպրոցներ և տեսնում էին բազմաթիվ համադասարանցիների, ովքեր կանոնավոր կերպով եկեղեցի էին հաճախում իրենց ծնողների հետ և դավանում էին, որ քրիստոնյա էին, բայց շարունակ գոհացնում էին իրենց անձերը, ինչպես գրված է վերևում բերված հատվածում: Նրանց կյանքի պտուղը՝ Քրիստոսին նմանվելը չէր: Մեր երեխաների համադասարանցիներն ապրում էին իրենց համար, փոխարենը ցանկանային և ձգտեին կատարել Աստծո կամքը և բերկրանք զգային դրանում:

Այն, ինչ մեր երեխաները տեսնում էին դպրոցում, ընդամենը մեկն է այն անթիվ օրինակներից, որոնք ես կարող էի բերել: Այս խնդիրն առկա է ընտանիքներում, գործարար աշխարհում և նույնիսկ՝ եկեղեցիներում քրիստոնեական ծառայությունների մեջ: Շատերն են դավանում, որ քրիստոնյա են, բայց նրանց կյանքի պտուղն ակնհայտորեն ցույց է տալիս հակառակը:

Սովորական «դարձը»

Մենք քարոզել ենք Ավետարանը ոչ հավասարակշռված կերպով: Հիսուսին ընդունելը շեշտադրել ենք մեղավորի աղոթքն աղոթելու միջոցով: Անհրաժեշտ է դավանել Նրան որպես «Տեր», ինչից հետո մենք հավիտյան կփրկվենք: Այնուամենայնիվ, Հիսուսն այսպես չի սովորեցնում: Նա ասում է. «Ոչ թե ամեն ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը» (Մատթեոս 7.21):

Եթե մենք պարզապես լսենք Հիսուսի ասածը՝ առանց զտելու այն տարիներ շարունակ յուրացրած անզուգակշիռ քարոզներով, ուսմունքներով, գրքերով և երգերով, մենք կհասկանանք, որ մեր ժամանակակից Ավետարանը հակասում է դրան: Հիսուսը չէր կարող ավելի պարզ արտահայտվել. ոչ բոլորը, ովքեր աղոթել են մեղավորի աղոթքը և Տեր են դավանել Նրան, Երկինք են գնալու: Իսկ եթե նրանք Երկինք չեն գնալու, կա միայն մեկ այլընտրանք, ինչպես տեսանք նախորդ գլխում:

Ամփոփենք սովորական ավետարանչական ծառայությունը: Քարոզիչը խոսում է «Հիսուսին ընդունելու և օրհնություններ ստանալու» մասին: Նա ասում է, որ Հիսուսը կտա մեզ ուրախություն, խաղաղություն,

բարգավաճում, երջանկություն, առողջություն, Երկինքը և այլն: Սխալ մի՛ հասկացեք ինձ. Աստված ցանկանում է օրհնել մեզ: Բայց Հիսուսը ոչ մի անգամ չօգտագործեց Իր օրհնությունները, որ գրավեր մարդկանց՝ Իրեն հետևելու համար:

Իր վաճառքի առարկան մոտավորապես երեսունհինգ րոպե ներկայացնելուց հետո այդ ծառայողը խնդրում է լսարանին խոնարհեցնել գլուխները: Նա հարց է տալիս՝ եթե նրանք մահանային այս գիշեր, կհայտնվեի՞ն Երկնքում: Որոշ հավաքույթներում ծառայողը խրախուսում է ներկաներին՝ նայել իրենց ձախ և աջ կողմում գտնվող մարդկանց և տալ միևնույն հարցը՝ ներգրավելով նրանց: Եթե նրանք մահանային այս երեկո, կհայտնվեի՞ն Երկնքում: «Եթե նրանք չեն կարող «այո» ասել,– շարունակում է ծառայողը,– բռնեք նրանց ձեռքը և առաջ բերեք»:

Մինչ նոր թեկնածուները մոտենում են, երգչախումբը երգում է այդ պահին համապատասխան երգեր, օրինակ՝ ինքնասնական թվականներին սիրված «Ինչպես որ կամ» երգը: Այլ դեպքերում ներկաները պարզապես ծափահարում և ժպտում են, իսկ երաժիշտները հաղթական մեղեդի են նվագում առաջ եկողների համար:

Երբ բոլորը գալիս են, ծառայողը խնդրում է նրանց խոնարհեցնել գլուխները և կրկնել մի հասարակ աղոթք. «Հա՛յր, ես խոստովանում եմ, որ մեղավոր եմ: Ների՛ր իմ մեղքերը: Այսօր ես խնդրում եմ Հիսուսին՝ գալ իմ կյանքի մեջ՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Շնորհակա՛լ եմ՝ ինձ Քո զավակը դարձնելու համար: Հիսուսի անունով, ամե՛ն»:

Լսարանը ցնծում է, երաժիշտները նվագում են, և նոր «դարձի եկածները» հեռանում են հավաքույթից՝ «ինչպես որ կային», միայն թե հիմա նրանք խաբված են: Նրանք ոչինչ չլսեցին անհնազանդությունից ապաշխարելու, սեփական ցանկություններն ուրանալու, Աստծո կամքը կատարելու, ինչպես նաև՝ իրենց կյանքը Քրիստոսի գործին նվիրելու մասին: Նրանք դավանեցին Հիսուսին՝ որպես Տեր, բայց նրանց սիրտը չփոխվեց: Այժմ Հիսուսը պարզապես նրանց կյանքի մի մասն է:

Թույլ տվեք ասել ձեզ, որ թագավորների Թագավորը և տերերի Տերը չի գա մարդու կյանքի մեջ, եթե Նա պետք է լինի երկրորդը կամ, նույնիսկ, առաջինը՝ այլ սիրեկանների թվում: Նա միայն կգա՝ որպես մեր լիարժեք և միակ Թագավոր, երբ ոչ մի մարդ, առարկա, երևույթ կամ գործունեություն չի մրցակցի Նրա դիրքի հետ մեր սրտում: Նա պետք է լինի Տերը, ինչը նշանակում է, որ Նա մեր գերագույն տիրակալն ու իշխանն է, և որ մեր կյանքն այլևս չի պատկանում մեզ:

Մտածե՛ք այս մասին. դուք կամուսնանայի՞ք ինչ-որ մեկի հետ, ով հավատարիմ կլիներ և՛ ձեզ, և՛ իր մյուս սիրեկաններին, բայց որ դուք

առաջինը կլինեիք: Որքա՜ն ավելի անմտություն է նույնը ասել տիեզերքի Թագավորին: Մի՞թե Նա կընդունի այնպիսի հարսնացուի, ով ասում է. «Դու առաջինն ես իմ բոլոր սիրեկաններից»: Նման պայմաններում չի կարող լինել ո՛չ ուխտի հարաբերություններ, ո՛չ մեկացում: Ինչպիսի՜ խաբեություն:

Այս «նորադարձները» թույլ չեն տվել, որ խաչը սպանի իրենց եսասեր, աշխարհիկ կյանքերը և տեղ ազատի, որ Քրիստոսի բնությունը ձևավորվի նրանցում: Նրանք պարզապես համաձայնել են ստանալ ավելի լավ կյանք այս աշխարհում և երկնային խոստումը: Որքա՜ն հետաքրքրական է: Բազմաթիվ երկրներում, որտեղ քրիստոնյաները հալածվում են, նրանք ընդունում են Հիսուսին՝ գիտակցելով, որ կորցնելու են իրենց կյանքը: Այսօր Արևմտյան երկրներում մենք ընդունում ենք Հիսուսին՝ ավելի լավ կյանք ունենալու և Երկինք գնալու համար: Բայց մենք նույնպես պետք է կորցնենք մեր կյանքը՝ հանուն Նրա:

Այսօր բազմաթիվ Ավետարանական եկեղեցիների հավատացյալներ մեր երկրում խաբված են այն Ավետարանի պատճառով, որը մենք քարոզել ենք: Նորադարձները կարող են ոգևորվել իրենց նորագյուտ «հավատքով», մասնակցել քրիստոնեական միջոցառումների, եկեղեցի հաճախել և նույնիսկ ընդգրկվել ավետարանչական նախագծերի մեջ, քանի որ նրանք նոր են և խանդավառված են: Դա նման է նոր ակումբ հաճախելուն, նոր դպրոց գնալուն կամ նոր աշխատանքի ընդունվելուն. դրանում թարմություն կա: Բայց այս քրիստոնյաները չեն արել այն, ինչ Հիսուսը պատվիրել է Իր բոլոր ճշմարիտ հետևորդներին. հաշվել Իրեն հետևելու գինը, իսկ հետո մինչև վերջ Իրեն ծառայելու որոշում կայացնել (տե՛ս Ղուկաս 14.27–33):

Կորցնել՝ գտնելու համար

Սա փոխանակում է: Մենք պետք է տանք մեր ամբողջ կյանքը, և դրա փոխարեն ստանանք Նրա կյանքը (բնությունը): Հիսուսը շարունակ խոսում է այս մասին: Նա ասում է.

> «Եթե ինչ-որ մեկը մտադրված է Իմ ետևից գալ, թող ուրանա իրեն [մոռանա, անտեսի, մերժի, անուշադրության մատնի իրեն և իր հետաքրքրությունները], վերցնի իր խաչը և [որպես աշակերտ միանա Ինձ և աջակցի Իմ թիմին], հետևի Ինձ [շարունակ, ամուր կապված լինելով Ինձ]» (Մարկոս 8.34, AMP):

Մենք պետք է շարունակ ամուր կապված լինենք Նրան: Փրկությունը պարզապես մեկանգամյա աղոթք չէ, ինչից հետո կյանքն ընթա-

նում է իր հունով՝ այն տարբերությամբ միայն, որ այժմ դուք «քրիստոնեական» ակումբում եք և Երկինք եք գնում: Հիսուսը շարունակում է. «Եթե փորձեք պահել ձեր կյանքը ձեզ համար, դուք կկորցնեք այն: Բայց եթե հրաժարվեք ձեր կյանքից՝ հանուն Ինձ և հանուն Բարի լուրի, դուք ճշմարիտ կյանք կգտնեք» (Մարկոս 8.35, NLT): Աստվածաշնչի «էմփլիֆայդ» թարգմանության մեջ այսպես է գրված. «Ով որ թողնում է իր կյանքը [որն ապրում են միայն այս երկրի վրա] հանուն Ինձ և Ավետարանի, կփրկի այն [իր բարձրագույն հոգևոր կյանքը Աստծո հավիտենական թագավորության մեջ]»:

Սա հստակ փոխանակում է: Մենք հրաժարվում ենք մեր կյանքի տերը լինելու իրավունքից: Անելով դա՝ մենք կարողություն ենք ստանում կատարելու Նրա ցանկությունները և, ի պատասխան, ստանում ենք Նրա հավիտենական կյանքը: Այն Ավետարանում, որը քարոզվում է այսօր, չի շեշտադրվում Հիսուսին հետևելու այս անչափ կարևոր կողմը: Մենք միայն լսում ենք առավելությունների մասին: Ըստ էության, մենք քարոզել ենք *հարության խոստումները*՝ չհիշատակելով *խաչի ազդեցությունը և կանչը:*

Պատկերացրեք, որ մի երիտասարդ հեռուստացույցով զինվորական հավաքագրման գովազդ է դիտում: Նա տեսնում է մի տպավորիչ տեսք ունեցող նավաստու, ով մոտավորապես իր տարիքի է՝ կանգնած շատ մեծ և գեղեցիկ նավի տախտակամածին: Նավը դուրս է գալիս բաց ծով՝ բյուրեղի պես պարզ երկնքի ներքո, և նավաստին ժպտում է իր ընկերների հետ: Դրանից հետո այդ նավաստին պատկերվում է աշխարհով մեկ գտնվող տարբեր նավահանգիստներում, և գովազդի մեջ նշվում է, որ բոլոր այդ ճանապարհորդություններն անվճար են:

Երիտասարդն անմիջապես գնում է հավաքագրման կենտրոն և գրանցվում է: Նա չի կարդում ռազմական նավատորմին միանալու պայմանները, քանի որ լիովին կլանված է առավելություններով: Նա այնքա՜ն ուրախ է: Նրա կյանքում իսկական արկած է սկսվելու. նա տեսնելու է ամբողջ աշխարհը, դառնալու է ռազմական նավատորմի մասնիկը և բազմաթիվ նոր ընկերներ է ձեռք բերելու:

Այնուամենայնիվ, արդեն նախնական պատրաստության փուլում նա պարզում է, որ չի կարող քնել մինչև ժամը ինը՝ ըստ իր սովորության: Նրան պատվիրում են կտրել իր փայփայած երկար մազերը: Նա չի կարող մասնակցել տարբեր միջոցառումների, քանի որ նրան չի թույլատրվում մեկ ամսվա ընթացքում լքել իր զորամասը երկու օրից ավելի: Ամենավատն այն է, որ նրա ամբողջ օրը ցուցակագրված է, ինչը թույլ չի տալիս նրան շփվել մյուսների հետ: Ամբողջ օրը նա զուգա-

ռաններ և ճաշարաններ է մաքրում, կատարում է հրումներ գետնից և այլ բարդ վարժություններ: Նա գրեթե չունի ազատ ժամանակ, և ամեն երեկո խիստ հոգնած պառկում է քնելու:

Այս երիտասարդը դեռ հույսեր ունի, քանի որ գիտի, որ շուտով հայտնվելու է նավի վրա: Նախնական պատրաստություններն ավարտելուն պես նրան նշանակում են մի նավի անձնակազմում, բայց նա կատարում է նույն աշխատանքը, միայն թե այժմ նա բաց ծովում է: Հանկարծ պատերազմ է սկսվում, և նա հասկանում է, որ ստիպված է մասնակցել մարտերի, թեև ինքը չէր հավաքագրվել դրա համար:

Այդ երիտասարդը հավաքագրվել էր, քանի որ զինվորական ծառայությունն առաջարկում էր այնպիսի կյանք, որն ինքը չէր կարող թույլ տալ իրեն, և այն էլ՝ անվճար: Նա ուշադրություն չէր դարձրել հավաքագրման կենտրոնի բոլոր պայմաններին: Այո, այդ կյանքն անվճար էր, բայց նա պետք է վճարեր դրա համար իր ազատությամբ: Շատ առումներով, հիմա այս երիտասարդը վիրավորված և խաբված է զգում իրեն: Նրա կարծիքով՝ իրեն ցույց էին տվել միայն առավելությունները, բայց չէին տեղեկացրել այն գնի մասին, որն ինքը պետք է վճարեր:

Մենք քարոզել ենք այնպիսի Ավետարան, ըստ որի փրկությունը ձրի է, և սա բացարձակ ճշմարտություն է. այնուամենայնիվ, մենք չենք ասել «փրկության թեկնածուներին», որ իրենք պետք է զոհեն իրենց ազատությունը: Խոսելով ազատության մասին՝ ես նկատի ունեմ ոչ թե իրական, այլ թվացյալ ազատությունը, քանի որ առանց Քրիստոսի բոլոր մարդիկ մեղքի ստրուկներ են: Նրանք ստրուկներ են, թեև կարող են լիովին համոզված լինել, որ ազատ են:

Սա կարելի է համեմատել *«Մատրիցա»* ֆիլմի հետ: Տարիներ առաջ իմ ավագ որդին վարձեց այդ ֆիլմի խմբագրված տարբերակը, և մի երեկո մենք ամբողջ ընտանիքով դիտեցինք այն: Ես զարմանալի զուգահեռներ նկատեցի այդ ֆիլմում:

«Մատրիցա» ֆիլմում մի հետաքրքիր հարցադրում կա. «Ինչպե՞ս կտարբերեք երազը իրականությունից, եթե դեռ չեք արթնացել երազից»[1]:

Այս ֆիլմում պատկերվում է քսաներորդ դարի կյանքի սովորական ընթացքը, ինչն ընդամենը պատրանք է: Իրականում, այս պատմությունն սկսվում է քսանմեկերորդ դարի վերջում: Մարդկությունն արհեստական ինտելեկտ է ստեղծում, որը նրանք պարզապես Մեքենաներ են անվանում: Մեքենաները վերահսկողություն են ստանձնում երկրի վրա, և մարդիկ պատերազմ են սկսում դրանց դեմ: Այդ պատերազմը կործանարար ազդեցություն է ունենում ամբողջ երկրագնդի համար, և արդյունքում Մեքենաները հաղթում են:

Մեքենաները հայտնաբերում են, որ կարող են պահպանել իրենց գոյությունը՝ օգտագործելով մարդկանց մարմնից առաջացող էլեկտրական հոսանքը, և ստեղծում են ահռելի պատրանք՝ խաբելով և ծառայեցնելով մարդկանց: Թվում է՝ աշխարհում ամեն ինչ սովորականի պես է, և որ դեռ 20-րդ դարն է, բայց իրականում մարդկանց մարմինները պահվում են հատուկ խցիկներում, և նրանց բառացիորեն աճեցնում են հսկայական «ֆերմաներում»: Նրանց միտքը միացված է համաշխարհային վիրտուալ իրականության ծրագրին, որը կոչվում է «Մատրիցա» և ներկայացնում է սովորական կյանքը: Մարդկության թվացյալ ազատությունն իրական չէ. իրականում, նրանք ստրուկներ են:

Ֆիլմը պատմում է մի խումբ ընտրյալների մասին, ովքեր, կոտրելով Մատրիցան և դուրս գալով դրանից, հայտնաբերում են իրենց իրական ինքնությունը: Նրանք «Սիոն» անունով մի գաղութ են կազմում իրական աշխարհում, որտեղ այլևս ոչ մի կենդանություն չկա: Նրանցից մի քանիսը պարբերաբար Մատրիցա են վերադառնում, որպեսզի պայքարեն Մեքենաների դեմ և ազատ արձակեն մարդկությանը: Նրանք լարված պայքարների մեջ են, և նրանց կյանքը հեշտ չէ, բայց այս մարդիկ ավելի ձգտում են իրական ազատությանը, քան կեղծ ճշմարտության մեջ ապրելուն: Նրանք գերադասում են իրական ազատությունը՝ դժվարությունների հետ, քան ստրկությունը՝ խաբուսիկ հարմարավետության մեջ:

Զուգահեռը հետևյալն է. շատ անհավատներ համարում են, որ քրիստոնյաները ստրուկներ, գերիներ և ազատություն չունեցող մարդիկ են, իսկ իրենք ազատ են: Այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ առանց Քրիստոսի բոլորը գերիներ են՝ նման պատրանքի մեջ ապրող մարդկանց, որոնք ստրկացված են Մեքենաների կողմից: Մարդիկ մեղքի ստրուկներ են:

Քրիստոնյա լինելը դժվար է

Գերության մեջ են ոչ միայն նրանք, ովքեր երբեք չեն լսել Ավետարանը կամ հրաժարվում են հավատալ դրան: Շատ «դարձի եկածներ» մեր օրերում նույնպես մեղքի գերության մեջ են: Մենք ստեղծել ենք այս երկվությունը՝ հրաժարվելով ազդարարել ամբողջ ուղերձն այն մասին, թե ինչ է նշանակում ճշմարտապես հետևել Հիսուսին: Շատերը ենթադրում են, որ իրենք ազատ են, այնինչ, իրականում, նրանք գերության մեջ են, և նրանց կյանքն ապացուցում է դա: Հիսուսն ասում է.

> «Ես հավաստիացնում եմ ձեզ և խիստ հանդիսավոր կերպով ասում եմ՝ նա, ով մեղք է գործում և շարունակ մեղքի մեջ է, մեղքի ստրուկն է:

Ստրուկը մշտապես [հավիտյան] չի մնում տանը. [տան] որդին է մնում հավիտյան: Այնպես որ, եթե Որդին ազատ արձակի [ազատ մարդ դարձնի] ձեզ, դուք իսկապես և անվիճարկելիորեն ազատ կլինեք» (Հովհաննես 8.34–36, AMP):

Այս խոսքերը կրկնում են այն ճշմարտությունը, որը մենք տեսանք պտղատու ծառի օրինակով: Եթե ինչ-որ մեկը շարունակ մեղանչում է, դա վկայում է այն մասին, որ նա դեռ մեղքի ստրուկ է: Նա որդի չէ, որովհետև նրա ներքին էությունը չի փոխվել: Այդ մարդը կարող է մտածել, որ ինքն ազատ է, քանի որ աղոթել է մեղավորի աղոթքը, բայց նա չի հրաժարվել իր «իրավունքներից»՝ Հիսուսին հետևելու համար: Նա դեռ ուզում է պահպանել իր ազատությունը (որը կեղծ է)՝ փրկության առավելությունների հետ մեկտեղ: Այնուամենայնիվ, անկարելի է ունենալ և՛ մեկը, և՛ մյուսը:

Ինչպես արդեն նշվեց, այս մարդիկ կարող են սկսել իրենց «վերստին ծնված» կյանքն ուրախությամբ, ոգեշնչմամբ և եռանդով, քանի որ այն թարմ և նոր է: Այնուամենայնիվ, ի վերջո նրանց չփոխված էությունն ի հայտ է գալու, բայց դա տեղի է ունենալու քրիստոնեական շրջանակներում և քողարկված է լինելու ավետարանական լեզվով և կենսառճով: Եվ հենց այս պատճառով են նրանց գործերը խաբուսիկ: Այնուամենայնիվ, Նոր կտակարանն զգուշացնում է հատկապես այս խաբեության մասին:

Պողոսը գրում է. «Վերջին օրերում քրիստոնյա լինելը շատ դժվար է լինելու» (Բ Տիմոթեոս 3.1, TLB): Մենք ապրում ենք հենց վերջին օրերում: Դրանում նույնիսկ կասկած չկա: Բոլոր աստվածաշնչյան մարգարեությունները հայտնում են, որ Հիսուսը շուտով վերադառնալու է: Պողոսն անվանեց մեր օրերը ամենադժվար ժամանակահատվածը քրիստոնյա լինելու համար:

Այլ թարգմանություններում օգտագործվում են «չար» և «սարսափելի» բառերը՝ մեր օրերը նկարագրելու համար: Ո՞րն է պատճառը: Ուսումնասիրելով այն ժամանակահատվածը, որում ապրում էր Պողոսը՝ մենք տեսնում ենք, որ նա մեծ հակառակության էր բախվում: Նա հինգ անգամ երեսունինը մտրակ էր ստացել իր մեջքին: Եվս երեք անգամ նրան փայտերով ծեծել էին: Մեկ անգամ նրան քարկոծել էին, և նա տարիներ էր անցկացրել բանտերում: Ուր էլ գնար, նա բախվում էր կատաղի հալածանքների: Այնուամենայնիվ, նա գրում է, որ մեր օրերում քրիստոնյա լինելը ավելի դժվար է լինելու: Եվ հայտնում է դրա պատճառը.

«Մարդիկ կլինեն ինքնասեր, արծաթասեր, ամբարտավան, հպարտ, հայհոյիչ, ծնողներին անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսեր, մատնիչ, հանդուգն, գոռոզ, ավելի ցանկասեր, քան թե աստվածասեր...» (Բ Տիմոթեոս 3.2–4):

Քննելով այս հատվածը՝ դուք միգուցե այդպես էլ չհասկանաք, թե ինչ է ցանկանում ասել Պողոսը: Մի՞թե նրա ժամանակ ամեն ինչ այլ կերպ էր: Մարդիկ նրա հասարակության մեջ ունեին բոլոր այս հատկանիշները: Նրանք ինքնասեր և արծաթասեր էին: Նրանք անսուրբ էին, չներող և այլն: Պետրոսը նույնիսկ ասաց Հոգեգալստի օրը. «Փրկվե՛ք այս թյուր (արատավոր, չար, անարդար) ազգից» (Գործք 2.40, AMP): Ուրեմն, ինչո՞ւ է Պողոսն առանձնացնում այս սերունդը և մատնանշում այս հատկանիշները՝ անվանելով սա ամենադժվար ժամանակը քրիստոնյա լինելու համար:

Նա շարունակում է՝ գրելով. «Որովհետև [թեև] նրանք աստվածապաշտության [ճշմարիտ կրոնի] ձև ունեն, նրանք ուրանում և մերժում են դրա զորությունը և օտար են դրան [նրանց վարքը հակասում է նրանց դավանանքի իրական լինելուն]» (Բ Տիմոթեոս 3.5, AMP), կամ՝ «...որոնք աստվածապաշտության կերպարանք ունեն, բայց ուրացել են դրա զորությունը»:

Այժմ դուք հասկանում եք, թե ինչու է դժվար քրիստոնյա լինելը մեր օրերում: Լինելու են շատերը (համաձայն այլ հղումների՝ Նոր կտակարանում), ովքեր դավանելու են, որ *վերստին ծնված* են, *փրկված* են և *քրիստոնյա* են, սակայն նրանք թույլ չեն տալու, որ խաչն սպանի իրենց եսակենտրոն կյանքը: Նրանք չեն թողել իրենց բոլոր իրավունքները և կրքերը՝ Հիսուսին հետևելու համար: Այդ մարդիկ սրտանց հավատում են, որ Նա իրենց Փրկիչն է, բայց ուզում են Հիսուսի հետ լինել, քանի որ հրապուրված են Նրա օրհնություններով, ոչ թե Նրա Անձով: Սա կարելի է համեմատել այն բանի հետ, երբ կինն ամուսնանում է տղամարդու հետ նրա հարստության համար: Միգուցե նա ամուսնանում է սիրելով, բայց նրա սիրո դրդապատճառները սխալ են: Նույն կերպով, շատերն են փնտրելու Հիսուսին, որպեսզի ստանան փրկություն, պատկանելիություն, հաջողություն այս կյանքում և մուտք դեպի Երկինք՝ հանդերձյալ կյանքում: Նրանք անկեղծորեն հավատալու են, որ Քրիստոսն իրենց Փրկիչն է, բայց երբեք չեն դադարելու անձամբ տնօրինել իրենց կյանքը:

Պողոսը շարունակում է՝ ասելով, որ այս «հավատացյալները» «...ամեն ժամանակ սովորում են, և երբեք դեպի ճշմարտության գիտությանը չեն կարողանում գալ» (խոսք 7): Նրանք հաճախում են եկե-

ղեցական ծառայությունների, տնային խմբակների և այլ հավաքույթների, լսում են Աստծո Խոսքը, բայց չեն փոխվում:

Ոչ հստակ սահմաններ

Դժվարությունն առաջանում է այն պատճառով, որ այլևս հստակ սահմաններ չկան: Պատկերացրեք այնպիսի մարդու, ով եսակենտրոն ձգտումներ ունի, բայց դավանում է, որ վերստին ծնվել է, խոսում է ճշմարիտ հավատացյալի լեզվով, ընկերություն է անում աստվածապաշտ մարդկանց հետ և նույնիսկ խանդավառությամբ մասնակցում է հավատացյալների հավաքույթներին, բայց նրա բնությունը չի փոխվում: Փաստորեն, այդ մարդը խաբեբա է, թեև ինքն էլ չի գիտակցում դա, և դժվարությունն առաջանում է այն պատճառով, որ այդպիսի մարդկանց ինքնախաբեությունը տարածվում է հիվանդության պես:

Մյուսները կառուցում են իրենց կյանքը քրիստոնեական մշակույթի «նորմերի» հիման վրա, բայց նույնիսկ այդ նորմերը չեն համապատասխանում երկնային չափանիշներին: Արդյունքում այդ մարդկանց համար դժվար է լինել ճշմարիտ հավատացյալ: Պողոսի օրերում, եթե դուք քրիստոնյա էիք, ձեր կյանքն ամեն րոպե վտանգված էր: Դա նույնիսկ չէր վիճարկվում. որոշելով հավատարիմ լինել Հիսուսին՝ դուք այդ հերթի մեջ էիք:

Բ Տիմոթեոս 3-րդ գլխում Պողոսը շարունակում է.

> «Բայց դու գիտես, թե ինչ եմ ես սովորեցնում, Տիմոթեո՛ս, և թե ինչպես եմ ես ապրում, և թե որն է իմ կյանքի նպատակը: Դու գիտես իմ հավատքը, և թե որքան եմ ես չարչարվել: Դու գիտես իմ սերը, իմ համբերությունն ու տոկունությունը: Դու գիտես, թե որքան հալածանք և տառապանք եմ կրել: Դու գիտես ամեն ինչ այն մասին, թե ինչպես եմ ես հալածվել Անտիոքում, Իկոնիոնում և Լյուստրայում, բայց Տերն ազատեց ինձ այդ ամենից: Այո՛, և ամեն մեկը, ով կամենում է աստվածահաճո կյանք վարել Քրիստոս Հիսուսում, հալածանք է կրելու: Բայց չար մարդիկ և խաբեբաներն առաջ կգնան: Նրանք կշարունակեն խաբել մարդկանց, և իրենք էլ խաբված կլինեն» (Բ Տիմոթեոս 3.10–13, NLT):

Պողոսը պարզ ցույց տվեց, որ Տիմոթեոսը կարող էր վստահել իրեն ոչ միայն իր սովորեցրածի պատճառով: Պողոսը վստահելի էր նաև իր ապրելակերպի և իր կյանքի նպատակի պատճառով (նա հավիտենությամբ շարժվող մարդ էր, ինչի մասին մենք կխոսենք ավելի ուշ): Պողոսի վկայությունը բաղկացած չէր իր պատասխանված աղոթքներից, իրեն հետևող նշաններից, իր ծառայության համբավից, և ո՛չ էլ Աստծո

Խոսքն ուսուցանելու գերազանց կարողությունից: Ո՛չ, նա չմատնանշեց այս բաները: Նա խոսեց իր կյանքի մասին: Ահա թե ինչն է միշտ եղել որոշիչ գործոնը հավատացյալի կյանքում, և միշտ էլ կլինի:

Պողոսը շարունակեց՝ ասելով, որ «չար մարդիկ և խաբեբաներն առաջ կգնան»: Բոլորս գիտենք, որ պետք է հեռու մնալ չար մարդկանցից: Այնուամենայնիվ, խաբեբաները՝ այն մարդիկ, որոնց արտաքին կերպարանքը չի համապատասխանում նրանց ճշմարիտ էությանը, ամենից վտանգավորն են: Նրանք դավանում են, որ քրիստոնյա են, և քրիստոնյայի կերպարանք ունեն, բայց նրանց վարքի մեջ չկա ոչ մի վկայություն՝ Աստծո շնորհքով կյանքեր փոխող զորության մասին: Ուշադրություն դարձրեք՝ Պողոսն ասում է, որ նրանք ոչ միայն խաբում են ուրիշներին, այլև իրենք են խաբված:

Այս նկարագրությունը լիովին համապատասխանում է Խաբվածին մեր այլաբանության մեջ: Այս երիտասարդն ակտիվ էր էնդելի դպրոցում, նվիրված հետևորդ էր համարում իրեն և սրտանց հավատում էր, որ ճիշտ դիրք ուներ թագավորի առջև: Նա դավանում էր իր հավատարմությունը թագավորին, բայց չէր ձգտում ցույց տալ դա իր կյանքով: Նա ոչ միայն խաբված էր, այլև խաբում էր այլ մարդկանց: Խաբվածի չափանիշների պատճառով շատերը փոխզիջման գնացին՝ սկսած այն աղջիկներից, որոնց հետ նա կապեր ուներ, մինչև այն բազմաթիվ աշակերտները, որոնց վրա նա ազդեցություն թողեց իր *ուղերձով:*

Միգուցե հարցնեք. «Ուղերձո՞վ: Չէ՞ որ նա ուսուցիչ չէր»: Ճիշտ է, բայց ես նկատի ունեմ, որ մեր կյանքը շատ ավելի բարձր է քարոզում, քան մեր խոսքերը: Այն աշակերտներն էնդելում, ովքեր հավատարիմ էին Զեյլոնին, պետք է պայքարեին, որ չենթարկվեին Խաբվածի ուժեղ անհատականությանը և ազդեցիկ կենսաոճին: Նրանք, ովքեր հաստատ կանգնած չէին, ենթարկվեցին նրա ազդեցությանը:

Այս պայքարի մասին զգուշացնում է ոչ միայն Պողոսը, այլև Նոր կտակարանի հեղինակներից շատերը: Հուդան գրում է՝

> «Իմ թանկագին ընկերնե՛ր, ես ամեն ջանք անում էի, որ գրեի ձեզ բոլորիս փրկության մասին, երբ զգացի, որ կարիք կա ևս մեկ անգամ գրել ձեզ՝ խրախուսելով պայքարել այն հավատքի համար, որն Աստված մեկընդմիշտ տվեց Իր ժողովրդին» (Հուդա 3, TEV):

Ուշադրություն դարձրեք նրա խոսքերի հրատապությանը: Հուդան ցանկանում էր խոսել այն հրաշալի բաների մասին, որոնց բոլորս բաժնեկցում ենք փրկության մեջ, բայց հարկադրված էր գրել մեկ այլ թեմայով: Նա պետք է խրախուսեր Աստծո ժողովրդին պայքարել հավատքի համար: Ի՞նչ պայքարի մասին է խոսքը: Նա բացատրում է՝ գրելով.

«Որովհետև որոշ անաստված մարդիկ աննկատ թափանցեցին մեր մեջ՝ մարդիկ, ովքեր աղավաղում են ուղերձը մեր Աստծո շնորհքի մասին՝ իրենց անբարո ճանապարհներն արդարացնելու համար, և ովքեր մերժում են Հիսուս Քրիստոսին՝ մեր միակ Տիրոջը և Իշխանին: Շատ վաղուց Սուրբ գրքերը կանխասել են այն դատապարտությունը, որը նրանք ընդունել են» (Հուդա 4, TEV):

Այս պայքարն ուղղված է անբարո մարդկանց ազդեցությանը, ովքեր աղավաղել են Աստծո շնորհքը՝ իրենց մեղավոր կյանքն արդարացնելու համար: Այս հարձակումն ավելի մահացու է, քան համաշխարհային հալածանքը եկեղեցու դեմ: Այն ավելի վտանգավոր է, քան աստվածաշնչյան սկզբունքներին հակասող օրենքները, օրինակ՝ արհեստական վիժեցման, թույլ թմրամիջոցների օգտագործման և միասեռ ամուսնությունների օրինականացումը, կամ էվոլյուցիայի տեսության դասավանդումը դպրոցներում: Այն շատ ավելի կորստաբեր է, քան ցանկացած աղանդ կամ սուտ կրոն: Այն հավիտյան կործանում է մարդկանց:

Միգուցե հարցնեք, թե ի՞նչ կապ ունի սա եկեղեցու մարդկանց հետ: Այն մարդիկ, ում մասին Հուդան խոսում էր, ժխտում կամ ուրանում են Հիսուս Քրիստոսին: Ոչ ոք չի կարող անել դա մեր եկեղեցիներում և դեռ քրիստոնյա համարվել:

Այնուամենայնիվ, ի՞նչն է դրդում ձեզ մտածել, որ հավատացյալներն ավելի պարզամիտ էին Հուդայի օրերում, քան այսօր: Կրկին ուշադիր կարդացեք: Այս մարդիկ *աննկատ* թափանցում են մեր շրջանակները: Ոչ ոք չի կարող կանգնել մեր հավաքույթներին այսօր (կամ Հուդայի օրերում), դավանել իր բերանով, որ ուրանում է Հիսուս Քրիստոսին և աննկատ մնալ: Ուրեմն, ինչպե՞ս են այդ մարդիկ ուրանում Նրան: Պատասխանը մեկ այլ նորկտակարանյան գրքի մեջ է. «Նման մարդիկ *պնդում են, որ ճանաչում են Աստծուն*, բայց իրենց կյանքով *ուրանում են Նրան»* (Տիտոս 1.16, NLT): Նրանք ուրանում են Աստծուն իրենց կյանքով, ոչ թե խոսքերով: Այդ մարդիկ ասում են, որ ճանաչում են Աստծուն: Նրանք դավանում են, որ Հիսուսն իրենց Տերն է: Բայց նրանց գործերն այլ բան են ցույց տալիս: Հիշեք՝ նրանք ոչ միայն խաբում են ուրիշներին, այլև իրենք էլ խաբված են. նրանք ամբողջ սրտով հավատում են, որ քրիստոնյա են:

Աստծո ճշմարիտ շնորհքը

Հուդան պնդում է, որ այս մարդիկ աղավաղում են Աստծո շնորհքի ուղերձը: Այս վերջին օրերում դա լայնորեն տարածված է, որովհետև մեր ուսմունքները դուռ են բացել դրա համար: Մենք սովորեցրել ենք, որ շնորհքը՝ Աստծո ծածկոցն է, որը ներում է աշխարհիկ և նույ-

նիսկ՝ անաստված կենսաոճը: Այս մտածելակերպը եկեղեցում հատուկ է նրանց, ովքեր, ասում են. «Ես գիտեմ, որ չեմ ապրում այնպես, ինչպես պետք է ապրեմ, բայց փա՛ռք Աստծուն Նրա շնորհքի համար»: Սա լուրջ խաբեություն է: Աստվածաշունչը չի սովորեցնում, որ շնորհքը մեծ սպեղանի է. շնորհքը՝ *Աստծո զորությունն է մեր ներսում, որը ճշմարտության պահանջները կատարելու կարողություն է տալիս մեզ:*

Մենք սովորեցրել ենք, որ շնորհքը պարզապես Աստծո անարժանաբար տրվող բարեհաճությունն է: Այո՛, շնորհքն Աստծո բարեհաճությունն է, որն անկարելի է գնել կամ վաստակել: Այնուամենայնիվ, շնորհքը նույնպես զորացնում է մեզ, որ հնազանդվենք Նրան, և ապացույցն այն մասին, որ մենք ճշմարտապես ընդունել ենք Աստծո շնորհքը, մեր աստվածապաշտ կյանքն է: Մեր հնազանդությունն Աստծո Խոսքին հաստատում է, որ շնորհքը գործում է մեր կյանքում: Ահա թե ինչու է Հակոբոսը գրում.

> «…Հավատքը, եթե չունենա գործեր (հնազանդության քայլեր և գործողություններ՝ այն հաստատելու համար), ինքնին զուրկ է զորությունից (անգործունյա է, մահացած է): Բայց ինչ-որ մեկը կասի (ձեզ այդ դեպքում)՝ դու [ասում ես, որ] հավատք ունես, իսկ ես [բարի] գործեր ունեմ: Այդ դեպքում, ցույց տուր ինձ քո [նվիրված] հավատքն առանց որևէ [բարի] գործերի [եթե կարող ես], իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքը՝ [հնազանդության բարի] գործերով: Դու հավատում ես, որ Աստված մեկ է. լավ ես անում: Նույն բանին հավատում են դևերը և դողում են...» (Հակոբոս 2.17–19, AMP):

Հակոբոսը մատնանշում է շատ մեծ բաց մեր ժամանակակից ուսմունքներում: Մենք առանձին համարներ ենք պոկում համատեքստից, օրինակ՝ «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին և կփրկվես» (Գործք 16.31): Եթե փրկություն ստանալու համար պահանջվում է միայն հավատալ, որ Հիսուսը գոյություն ունի, և Նա Աստծո Որդին է, ուրեմն, համաձայն Հակոբոսի խոսքերի՝ դևերը կփրկվեն իրենց հավատքով: Սա անհեթեթությո՛ւն է: Իր ասելիքն է՛լ ավելի հասկանալի դարձնելու համար Հակոբոսը նշում է, որ դևերը դողում են Աստծո առջև: Այլ կերպ ասած՝ դևերն ավելի շատ են վախենում Աստծուց, քան որոշ մարդիկ, ովքեր պնդում են, որ հավատք ունեն, բայց չեն կարող ցույց տալ հնազանդության գործեր, որոնք կհաստատեին իրենց հավատքը:

Ապացույցն այն մասին, որ մենք ճշմարտապես փրկված ենք Հիսուս Քրիստոսի շնորհքով, Աստծո Խոսքին համապատասխան կենսաոճն է: Ահա թե ինչու է Հովհաննես առաքյալը գրում.

> «Եվ սրանով գիտենք, որ ճանաչեցինք Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք: Ով որ ասում է, թե «Ճանաչեցի Նրան» և Նրա պատվի-

> րանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում: Բայց ով որ Նրա խոսքը պահի, հիրավի Աստծո սերը նրանում կատարյալ է. սրանով ճանաչում ենք, որ նրանում ենք: Ով որ ասում է, թե «Նրանում եմ բնակվում», պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա» (Ա Հովհաննես 2.3–6):

Հովհաննեսը պարզորեն նշում է, որ ապացույցն այն մասին, որ մենք իսկապես ճանաչում ենք Հիսուս Քրիստոսին, Նրա պատվիրանները պահելն է: Նա, ով ասում է, որ ճանաչում է Հիսուսին, բայց չի պահում Նրա Խոսքը, խաբված է, ստախոս է և օտարված է ճշմարտությունից, նույնիսկ եթե նա իր բերանով դավանում է Աստծո Խոսքը: Այս պատճառով, Հովհաննեսը գրում է. «Իմ որդյակնե՛ր, սա գրում եմ ձեզ, որ *չմեղանչեք*, և *եթե* մեկը մեղանչի, բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս արդարին» (Ա Հովհաննես 2.1):

Ուշադրություն դարձրեք, որ Հովհաննեսը չի գրում. «...սա գրում եմ ձեզ, որ... *երբ* մեկը մեղանչի, բարեխոս ունենք...»: Ո՛չ: Մեր նպատակը՝ մեղք չգործելն է: Մեր ներսում Աստծո շնորհքի զորությունն է, որպեսզի մեր նպատակը լինի Քրիստոսի պես ապրելը (ինչպես գրված է Ա Հովհաննես 2.6-ում, մենք պետք է գնանք «ինչպես որ Նա գնաց»), քանի որ մենք ազատ ենք մեր անհնազանդ բնության ազդեցությունից: Բայց եթե տեղի տանք մեղքին, մենք Բարեխոս ունենք:

Մենք՝ հավատացյալներս, ուրախանալու պատճառ ունենք, քանի որ այժմ կարող ենք ընդունելի կերպով ծառայել մեր Աստծուն.

> «Ուստի, անշարժ թագավորություն ընդունած լինելով, պինդ բռնենք այն *շնորհքը*, որով *պաշտում ենք հաճությամբ Աստծուն՝* ահով և երկյուղածությամբ» (Եբրայեցիների 12.28):

Ահա և շնորհքի նպատակը: Այն զորացնում է մեզ, որ ընդունելի կամ հաճելի կերպով ծառայենք Աստծուն:

Ինչո՞ւ մենք չենք հռչակել ամբողջական Ավետարանը. ինչո՞ւ ենք պատմել միայն Ավետարանի կեսը: Այո՛, փրկությունը պարգև է. այն անկարելի է գնել կամ վաստակել: Այս ամենը ճշմարիտ է: Այնուամենայնիվ, մենք մոռացել ենք ասել մարդկանց, որ փրկությունը կարելի է ստանալ միայն՝ եթե ուրանանք մեր կյանքը և դավանենք Հիսուսի իշխանությունը: Այդ դեպքում, մենք կունենանք շնորհքի զորությունը, որպեսզի ապրենք Նրա բնության համեմատ: Պետրոսը գրում է.

> «Շնորհք և խաղաղություն շատանա ձեզ վրա Աստծո և մեր Տեր Հիսուսի գիտությամբ: Ինչպես որ Նրա աստվածային զորությունը շնորհեց մեզ

այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է՝ Նրա գիտությամբ, որ մեզ կանչեց փառքով և առաքինությամբ, որոնցով ամենամեծ և պատվական խոստումներ են տրված մեզ, որ նրանցով հաղորդակից լինեք աստվածային բնությանը՝ աշխարհի մեջ ցանկությունից եղած ապականությունից հեռու փախչելով» (Բ Պետրոս 1.2–4):

Ուշադրություն դարձրեք մի քանի պնդումների. մենք ստացել ենք *շնորհքը* Հիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով. շնորհքը՝ Նրա *աստվածային զորությունն* է, որը տալիս է մեզ այն ամենը, ինչի կարիքը ունենք՝ աստվածահաճո կերպով ապրելու համար, և այս աստվածահաճո կյանքը համապատասխանում է Նրա *աստվածային բնությանը:* Մենք փրկվել ենք այն ապականությունից, որը մուտք է գործել այս աշխարհ Ադամի միջոցով և շատացել է մարդկային ցանկությունների պատճառով, որոնք հակառակ են Աստծուն: Այնպես որ, թույլ մի՛ տվեք որևէ մեկին վիատեցնել ձեզ խոսքով կամ գործով, որ չապրեք ըստ աստվածային բնության, որը փոխանցվել է ձեր էության մեջ: Պողոսը պարզորեն նշում է.

«Որովհետև Աստծո շնորհքը, որը փրկություն է բերում, հայտնվել է բոլոր մարդկանց: Այն սովորեցնում է մեզ «ոչ» ասել անօրինությանը և աշխարհի ցանկություններին և ապրել զուսպ, արդար և աստվածապաշտ կերպով այս աշխարհում, մինչ մենք սպասում ենք մեր երանելի հույսին՝ մեր մեծ Աստված և Տեր Հիսուս Քրիստոսի փառավոր հայտնությանը, Ով զոհեց Իրեն մեզ համար, որ փրկի մեզ ամեն անօրինությունից և սրբացնի Իր համար՝ որպես Իր սեփական ժողովուրդ, որը պատրաստակամությամբ բարի է գործում: Սրանք են այն բաները, որոնք դու պետք է սովորեցնես» (Տիտոս 2.11–15, NIV):

Աստծո շնորհքը սովորեցնում է մեզ՝ ուրանալ ամեն ամբարշտություն և այս աշխարհի ցանկությունները և ապրել զուսպ, արդար և աստվածապաշտ կերպով: Աստծո շնորհքը մեր կյանքում նման է ուսուցչի, ով ցուցումներ է տալիս և օժտում է դրանց հետևելու կարողությամբ:

Ուշադրություն դարձրեք, որ մենք պետք է սովորեցնենք այս բաները: Պողոսը շարունակում է. «Այս խոսքը հավաստի է, և ես ուզում եմ, որ դու *մշտապես* հաստատես այս բաները, որ Աստծուն հավատացողները ջանք անեն բարի գործերի մեջ կենալու» (Տիտոս 3.8):

Մենք պետք է շարունակ բարի գործեր անենք մեզանում գտնվող Աստծո շնորհքի զորությամբ: Մենք չունեինք շնորհք մինչև փրկվելը: Հին կտակարանի սրբերը նույնպես չունեին: Այն Աստծո պարգևն է, որը տրվել է մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Այս պատճառով Հիսուսն ասում է մեզ, որ Հին կտակարանի ժամանակաշրջանում դուք մարդասպան կհամարվեիք և դժոխք գնալու

վտանգի ենթակա կլինեիք, եթե խլեիք ինչ-որ մեկի կյանքը: Այնուամենայնիվ, շնորհքի ներքո հերիք է, որ հիմար անվանեք ձեր եղբորը, կանխակալ վերաբերմունք ունենաք, հրաժարվեք ներել կամ այլ տեսակի ատելություն կրեք ձեր մեջ, և դուք դժոխքի կրակն ընկնելու վտանգի մեջ կհայտնվեք (տե՛ս Մատթեոս 5.21,22): Ինչո՞ւ է այդպես: Այժմ մենք կարող ենք ապրել համաձայն Աստծո բնության թե՛ ներքուստ, թե՛ արտաքուստ՝ Նրա շնորհքի զորության միջոցով:

Մշտապես հաստատիր

Ուշադրություն դարձրեք, որ Տիտոս 3.8-ը պատվիրում է *մշտապես* հաստատել կամ սովորեցնել այս բաները: Դուք լսեցի՞ք սա: Ես տեսնում եմ, որ մեր օրերում այս բաները *հազվադեպ* են քարոզվում ամբիոններից, և հավատացյալները հազվադեպ են խոսում այս մասին, էլ ի՞նչ խոսք մշտապես սովորեցնելու մասին: Ահա թե ինչու ենք շեղվել Աստծո շնորհքով շարունակ բարի գործեր անելու կարևորությունից: Ըստ էության, մենք թույլ ենք տվել, որ մեր ներսի զորությունը քնած մնա՝ հավատքի կամ հասկացողության պակասի պատճառով: Մեր հավատքը, որը մուտք ունի դեպի Աստծո շնորհքը, պետք է գործուն մնա՝ մեր համոզմունքների մասին շարունակ խոսելու միջոցով: Պողոսը գրում է. «Որ քո հավատքի հաղորդակցությունը պտղաբեր լինի այն ամեն բարի բաների գիտությամբ, որ ձեզանում է Քրիստոս Հիսուսում» (Փիլիմոն 6):

Եթե մենք մշտապես չհաստատենք այս բաները, կշեղվենք ճշմարտությունից: Սա պարզորեն երևում է Եբրայեցիների նամակում գրված հետևյալ խոսքերից.

> «Նրա համար պետք է մեզ առավել ևս ականջ դնենք այն մեր լսած բաներին, որ միգուցե պակասվենք: Որովհետև, եթե հրեշտակների ձեռքով խոսած բանը հաստատ եղավ, և ամեն հանցանք և անհնազանդություն ընդունեց իր արդար պատիժը, ապա մենք ինչպե՞ս կպրծնենք, եթե անհոգ լինենք այսպիսի մեծ փրկության համար, որ սկիզբն առավ խոսվելու Տիրոջից, և լսողների ձեռքով մեր մեջ հաստատվեց» (Եբրայեցիների 2.1–3):

Մշտապես հաստատելով այս բաները՝ մենք երբեք չենք մոռանա հավիտենության հետ կապված այն կարևոր ճշմարտությունները, որոնք թույլ չեն տա մեզ շեղվել:

Պատանի հասակում ես հաճախ էի ձուկ բռնում: Երբեմն ես և ընկերս մոռանում էինք խարսխել մեր նավակը, և մինչ մենք տարված էինք ձուկ բռնելով, նավակն աննկատ հեռանում էր ափից: Քառասունհինգ րոպե անց, նայելով մեր շուրջը, մենք նույնիսկ չէինք հասկանում, թե որտեղ

էինք հայտնվել: Մենք հեռացել էինք մեր գտնվելու վայրից, քանի որ կենտրոնացել էինք այլ բաների վրա, մեր դեպքում՝ ձկնորսության:

Նման անփութությունը շատ թանկ է նստել որոշ մարդկանց վրա, քանի որ նրանք ձուկ էին բռնում այնպիսի գետերում, որոնք ավարտվում էին մահացու վտանգավոր ջրվեժներով: Շատերը մահացել են գետերի թափման հատվածներում, քանի որ հեռացել են այն վայրից, որտեղ սկզբում գտնվում էին:

Նույնը ճշմարիտ է հավիտենությանը վերաբերող կարևոր հարցերում: Եթե Աստված ասում է, որ մենք պետք է մշտապես հաստատենք այս բաները, նշանակում է՝ մենք պետք է անենք դա: Ինչո՞ւ մենք չենք խոսում շնորհքի զորության մասին, որն աստվածահաճո և հնազանդ կյանք վարելու կարողություն է տալիս մեզ:

Ես պարզել եմ, որ առաջին եկեղեցին այսպես էլ վարվում էր: Ես ուսումնասիրել եմ առաջին եկեղեցու հայրերի գործերից մի քանիսը և տեսել եմ, որ նրանք սովորեցնում էին այնպիսի բաներ, որոնք գրեթե խորթ են թվում մեր այսօրվա ուսմունքների համեմատ, բայց չեն հակասում Աստվածաշնչին: Առաջին դարերում ապրող եկեղեցու հայրերը հավատում էին, որ գործերը խիստ կարևոր ապացույց են մեր փրկության համար: Դիտարկենք մի քանի օրինակ:

Առաջին անձնավորությունը, ում խոսքը կմեջբերեմ, Պոլիկարպոսն է (մ.թ. 69–156թթ.): Նա եպիսկոպոս էր Զմյուռնիայի եկեղեցում և Հովհաննես առաքյալի գործակիցն էր: Տարեց հասակում նրան ձերբակալեցին և այրեցին սյան վրա: Նա գրում է. «Շատերն են ցանկանում մուտք գործել այս ուրախության (փրկության) մեջ՝ իմանալով, որ դուք փրկված եք շնորհքով, ոչ թե գործերով»[2]: Այս արտահայտությունն ընդունված կլիներ այսօրվա ավետարանական շրջանակներում: Մենք շեշտադրել ենք այն փաստը, որ մենք փրկված չենք մեր բարի գործերով: Այնուամենայնիվ, Պոլիկարպոսը նույնպես գրում է հավատացյալներին. «Նա, Ով հարություն տվեց Նրան մեռելներից, նույնպես հարություն կտա մեզ, եթե կատարենք Նրա կամքը, վարվենք ըստ Նրա պատվիրանների և սիրենք այն, ինչ Նա է սիրում՝ հեռու պահելով մեզ ամեն անարդարությունից»[3]: Այսօր դուք հաճախ չեք լսի այս մասին մեր ամբիոններից:

Ուշադրություն դարձրեք «եթե» բառի վրա: Նա ասում էր, որ մենք պետք է կատարենք Աստծո կամքը և վարվենք ըստ Նրա պատվիրանների, որպեսզի հարություն առնենք հավատացյալների հարության ժամանակ: Շուտով կտեսնեք, որ ճիշտ նույն խոսքերն ասում է նաև Հիսուսը:

Հաջորդ անձնավորությունը, ում խոսքը կմեջբերեմ, Կղեմես Հռոմեացին է (մ.թ. 30–100թթ.): Նա եղել է Պողոս և Պետրոս առաքյալների գործա-

կիցը և Հռոմի եկեղեցու վերակացուն: Նա գրում է. «Մենք չենք արդարանում մեզանով, և ո՛չ էլ՝ մեր աստվածապաշտությամբ կամ գործերով, այլ՝ հավատքով, որի միջոցով Ամենակարող Աստված արդարացրեց բոլոր մարդկանց»[4]: Այս արտահայտությունը նույնպես լայնորեն կընդունվեր մեր օրերի քրիստոնեական շրջանակներում: Այնուամենայնիվ, Կղեմեսը նույնպես գրում է հավատացյալներին. «Անհրաժեշտ է, որ մենք բարի գործեր անելու մեծ ձգտում ունենանք: Որովհետև Նա նախազգուշացրեց մեզ. «Ահա Տերը գալիս է, և Նրա վարձատրությունն Իր առջև է, որ հատուցի ամեն մարդու՝ ըստ նրա գործերի» (Հռոմեացիների 2.6–10)»[5]:

Միգուցե հենց այդ պատճառո՞վ էր Պողոսը գրում. «Ես անհնազանդ չեղա այն երկնային տեսիլքին: Այլ առաջ նրանց, որ Դամասկոսում և Երուսաղեմում էին, և ամբողջ Հրեաստանի երկրում, և հեթանոսներին պատմեցի ապաշխարել և դառնալ դեպի Աստծուն՝ *ապաշխարության արժանի գործեր գործելով»* (Գործք 26.19,20): «NLT» թարգմանության մեջ գրված է. «...և ապացուցել, որ նրանք փոխվել են՝ այն բարի գործերով, որ անում են»: Քանի որ Պողոսը շեշտում էր սա, տրամաբանական է թվում, որ նրա գործակիցը՝ Կղեմես Հռոմեացին, անում էր նույնը:

Հաջորդ առաջնորդը, որին ուզում եմ հիշատակել, Կղեմես Ալեքսանդրիացին է (մ.թ. 150–200թթ.): Նա Ալեքսանդրիայում՝ Եգիպտոսում գտնվող եկեղեցու առաջնորդն էր, ինչպես նաև ղեկավարում էր իր եկեղեցում գործող նորադարձների դպրոցը: Անհավատների մասին նա գրում է. «Նույնիսկ եթե հիմա նրանք բարի գործեր անեն, դրանք որևէ օգուտ չեն բերի իրենց մահից հետո, եթե հավատք չունենան»[6]:

Այս խոսքը նույնպես սրտաբաց կընդունվեր մեր օրերի ավետարանական քրիստոնյաների կողմից: Մենք գիտենք, ինչպես արդեն նշեցի վերջին մի քանի գլուխներում, որ անկախ այն բանից, թե որքան բարի գործեր են անում անհավատները՝ նրանք, միևնույն է, չեն կարող մուտք գործել Աստծո հավիտենական թագավորություն: Մենք փրկված ենք Աստծո շնորհքով: Այնուամենայնիվ, ահա թե ինչ է գրում Կղեմեսը հավատացյալներին.

> «Ով որ գտնում է ճշմարտությունը և աչքի է ընկնում բարի գործերով, կստանա հավիտենական կյանքի մրցանակը... Ոմանք ճշգրիտ և պատշաճ կերպով հասկանում են, թե ինչպես է Աստված տալիս անհրաժեշտ զորությունը (փրկվելու համար), բայց քանի որ քիչ են կարևորում այն գործերը, որոնք տանում են դեպի փրկություն, նրանք չեն կարողանում անհրաժեշտ կերպով պատրաստվել՝ իրենց հուսո առարկային հասնելու համար»[7]:

Միգուցե ձեզնից ոմանք մտածեն. *«Երևի թե այս մարդիկ չեն կարդացել Նոր կտակարանը»:* Ո՛չ, նրանք կարդացել են այն: «Վերջնա-

կան վկայություն» աշխատության մեջ Ջոշ ՄաքԴաուելը նշում է, որ Կղեմես Ալեքսանդրիացին օգտագործել է 2.400 մեջբերում ընդամենը Նոր կտակարանի երեք գրքերից»[8]: Նույն կերպով վարվում էին մյուս առաջնորդները, որոնց խոսքերը ես մեջբերեցի: Ի հակադրություն՝ պետք է ասեմ, որ շատ գրքեր մեր ժամանակակից քրիստոնեական գրախանութներում շատ քիչ աստվածաշնչյան հատվածներ են պարունակում: Միգուցե մեր շեղվելու պատճառը հենց այն է, որ մենք մշտապես չե՞նք հաստատել այն, ինչ կարևոր է:

Մեր թերի Ավետարանը

Դժբախտաբար, մենք հիմնականում մեջբերում ենք այնպիսի սուրբգրային հատվածներ, ինչպիսիք են, օրինակ, Հռոմեացիների 10.9-ը. «Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես»: Մենք ասում ենք մարդկանց, որ նրանք պետք է պարզապես կրկնեն այս կախարդական աղոթքը և փրկված կլինեն:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ մենք ուշադրություն չենք դարձնում Հիսուսի խոսքերին և չենք սովորեցնում դրանք: Նա ասաց. «Եվ ինչո՞ւ եք Ինձ «Տե՛ր, Տե՛ր» կոչում, և չեք անում այն, ինչ ասում եմ» (Ղուկաս 6.46): Ինչպես տեսանք, «Տեր» բառը նշանակում է գերագույն իշխան: Այն սեփականատիրության իմաստ է կրում: Այնպես որ, Հիսուսն զգուշացնում է. «Ինձ «Տեր» մի՛ անվանեք, եթե դեռ ինքներդ եք վերահսկում ձեր կյանքը: Ավելի լավ է՝ անվանեք Ինձ «Մեծ մարգարե» կամ «Ուսուցիչ», որպեսզի չխաբեք ինքներդ ձեզ»:

Այժմ կրկին ուսումնասիրենք Հիսուսի խոսքերը, որոնցով սկսեցինք ամբողջ այս քննարկումը. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը» (Մատթեոս 7.21ա):

Ինչպես արդեն ասացինք, ոչ ամեն մեկը, ով *Տեր* է անվանում Հիսուս Քրիստոսին, Երկինք կգնա: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ միայն «մեղավորի աղոթքն» աղոթելը մեզ համար Երկնքում տեղ չի ապահովի: Այդ դեպքում, ես ուզում եմ տալ հետևյալ հարցը. ո՞վ կմտնի Երկնքի թագավորություն:

Հիսուսը պատասխանում է այս հարցին. «Այլ նա, ով կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթեոս 7.21բ):

Հետաքրքիր է, որ Պոլիկարպոսը գրեթե նույնությամբ կրկնում է այս խոսքերը: Այսպիսով, մենք Երկինք չենք գնա, եթե միայն դավանենք Հիսուսին: Մենք Երկինք կգնանք, եթե դավանենք Հիսուսին և կատարենք Աստծո կամքը: Եվ մենք կարող ենք կատարել Աստծո կամքը միայն

Նրա շնորհքով: Աստված տալիս է մեզ Իր շնորհքը, երբ խոնարհվում ենք՝ ուրանալով մեր կյանքը և ընդունելով Նրան՝ որպես Տեր: Դավանելը հեշտ է. դժվար է Նրա իշխանությանը լիովին անձնատուր լինելը:

Իսկ այժմ տեսե՛ք, թե ինչու եմ այսպես շեշտադրում այս ճշմարտությունը.

> «Երբ Դատաստանի օրը գա, շատերը կասեն Ինձ. «Տե՛ր, Տե՛ր: Քո անունով մենք խոսեցինք Աստծո ուղերձը, Քո անունով մենք շատ դևեր հանեցինք և շատ հրաշքներ գործեցինք»: Այդ ժամանակ Ես կասեմ նրանց. «Ես երբեք չեմ ճանաչել ձեզ: Հեռո՛ւ գնացեք Ինձնից, անօրե՛ն մարդիկ»» (Մատթեոս 7.22,23, TEV):

Ուշ 1980-ական թվականներին Աստված մի տեսիլք ցույց տվեց: Ես տեսա այնպիսի մեծ բազմություն, որի վերջը չէր երևում: Այդ բազմությունն ասես մարդկանցից բաղկացած ծով լիներ: Ես գիտեի, որ այդ խմբում չկային աթեիստներ, ինքնավստահ մեղավորներ կամ այլ կրոնների հետևորդներ: Բոլորն այդտեղ դավանում էին, որ քրիստոնյա էին: Այս բազմությունը եկավ Դատաստանի գահի մոտ՝ լիովին ակնկալելով, որ Հիսուսը կասեր իրենց. «Մտե՛ք ձեր Տիրոջ ուրախության մեջ՝ Աստծո թագավորությունը»: Փոխարենը՝ նրանք լսեցին. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթեոս 7.23):

Ես տեսա լիակատար զարմանք և սարսափ նրանց դեմքերին: Կարո՞ղ եք պատկերացնել, որ վստահ եք եղել ձեր փրկության մեջ, այնինչ երբեք փրկված չեք եղել: Պատկերացրեք, որ պետք է հավիտյան աքսորվեք դեպի դժոխքի կրակները, թեև դուք հավատացել եք, որ Երկինք եք գնում: Եվ պետք է հավիտյանս հավիտենից մնաք այն մտքին, որ և՛ դուք, և՛ հավանաբար նրանք, ում դուք քարոզում էիք, շատ թեթևորեն եք վերաբերվել ձեր հավիտենական հանգրվանը հասնելուն:

Մի՞թե մենք կարող ենք դրական ուղերձ քարոզել Աստծուն փնտրողներին՝ չհիշատակելով Հիսուսի հորդորները:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու մենք պետք է ազդարարենք Աստծո ամբողջական խորհուրդը, ոչ թե միայն դրա դրական կողմերը կամ առավելությունները: Այո՛, մեզ դուր են գալիս առավելությունները, և մենք պետք է պատմենք դրանց մասին և ուրախանանք դրանցով: Բայց չպետք է անենք դա՝ Աստծո Խոսքի պատվիրանները և զգուշացումներն անտեսելու հաշվին:

Հիշում եմ, որ մեկ անգամ մի համաժողովի ընթացքում ասացի, որ քարոզում եմ ճշմարտությունը, որովհետև «...չեմ ցանկանում, որ Դատաստանի օրը մարդիկ բղավեն ինձ վրա՝ ասելով. «Ինչո՞ւ դու չասացիր ինձ ճշմարտությունը», և նրանց արյունը կաթկթա իմ ձեռքերից»:

Իմ քարոզից հետո մի հովիվ, ով շատ բարկացած էր, անմիջապես մոտեցավ ինձ: Կարելի է ասել, որ նա եռում էր զայրույթից: Նա ասաց.

– Ինչպե՞ս եք համարձակվում բարդել հինկտակարանյան աստվածաբանությունը մեզ՝ ծառայողներիս վրա: Իմ ձեռքերից չի կաթկթալու ոչ ոքի արյունը՝ ամբողջական Ավետարանը չհռչակելու համար:

Ակնհայտ էր, որ այդ մարդուն դուր էին գալիս Աստծո Խոսքի դրական կողմերը, բայց նա աշխատում էր չհիշատակել վիճարկելի հատվածները:

Ես պատասխանեցի.

– Կարդացե՛ք, թե ինչ ասաց Պողոսը Եփեսոսի առաջնորդներին:

Իմ Աստվածաշունչն ինձ մոտ էր, և ես բացեցի Գործք առաքելոց գիրքը ու խնդրեցի նրան կարդալ. «Սրա համար այս օրը վկայություն եմ դնում ձեզ, որ ես ամենիդ արյունից անմեղ եմ: Որովհետև ես ետ չքաշվեցի Աստծո *ամբողջ* կամքը ձեզ պատմելուց» (Գործք 20.26,27):

Նա բարձրացրեց գլուխը և ցնցված ինձ նայեց. նրա աչքերը և բերանը լայն բացվել էին: Եվ ասաց.

– Ես շատ անգամներ եմ կարդացել Նոր կտակարանը, բայց երբեք չեմ նկատել սա:

Դրանից հետո մենք ընկերաբար զրուցեցինք: Այդ զրույցի ընթացքում ես նշեցի, որ մարդկանց Քրիստոսի մեջ հասուն դարձնելու համար մենք պետք է ոչ միայն սովորեցնենք, այլև զգուշացնենք նրանց (տե՛ս Կողոս. 1.28): Ո՞րն է մեր զգուշացումը: «Մի՛ հեռացեք ճշմարտությունից: Մի՛ շեղվեք խաբեբա մարդկանց ուղերձով, ովքեր խաբեությամբ հեռացնում են աստվածապաշտությունից ոչ միայն իրենց, այլև անթիվ մարդկանց»:

Մինչ Գործք 20-րդ գլխում նկարագրված իրադարձությունը, Պողոսը երկար ժամանակ էր անցկացրել Եփեսոսի հավատացյալների հետ: Նա սրտանց սիրում էր այդ մարդկանց և Աստծո Հոգով գիտեր, որ այլևս չի տեսնելու նրանց՝ մինչև Երկնքում հանդիպելը: Մտածե՛ք, թե որքան զգուշորեն կընտրեիք ձեր խոսքերը, եթե իմանայիք, որ վերջին անգամ եք դիմում նրանց, ովքեր երեխաների պես են եղել ձեզ համար: Պողոսը տվեց հետևյալ հրահանգները նրանց հրաժեշտ տալիս.

> «Արդ զգո՛ւյշ կացեք ձեր անձերին և ամբողջ հոտին, որի մեջ Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ դրեց, որ արածեցնեք Աստծո եկեղեցին, որ Իր արյունով ստացավ: Որովհետև ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո հափշտակող գայլեր կգան ձեր մեջ, որ հոտը չեն խնայի: Եվ հենց ձեզնից մարդիկ վեր կկենան, որ ծուռ բաներ խոսեն, որ աշակերտներին իրենց ետևից քաշեն: Սրա համար արթո՛ւն կացեք՝ հիշելով, որ երեք

տարի գիշեր ու ցերեկ չդադարեցի ամեն մեկիդ արտասուքով խրատելու» (Գործք 20.28–31):

Ինչպե՞ս էին այս մարդիկ աղավաղելու ճշմարտությունը: Հավանաբար՝ խոսքերով, բայց ավելի հավանական է, որ գործերով: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսն այնքան ուժգին էր զգում, որ դա տեղի էր ունենալու, որ երեք տարի գիշեր ու ցերեկ անդադար զգուշացնում էր եփեսացիներին: Կրկին, մենք տեսնում ենք շեշտադրումն այն մասին, որ պետք է մշտապես հաստատենք այս բաները:

Սիրո և արդարության Աստված

Մեր այլաբանության մեջ կարելի էր զգալ Խաբվածի ցնցումը և հոգեվարքը: Դուք հևոց արձակեցիք՝ կանխազգալով նրա բանտարկությունը Լոնում: Դուք կծկվեցիք՝ պատկերացնելով նրա կյանքի մնացած 130 տարին խավարի, անտանելի տաքության և աղտոտված օդի մեջ: Այնուամենայնիվ, դա ոչինչ է՝ համեմատած այն բանին, ինչին բախվելու են անթիվ տղամարդիկ և կանայք, եթե մենք չհռչակենք Աստծո ամբողջական խորհուրդը:

Եթե հիշում եք, Զեյլոնը և՛ սիրող էր, և՛ արդար: Իր դատաստանի մեջ սերը հայտնվեց այն կերպով, որ նա չէր կարող թույլ տալ Դագոնի բնությունը և բնավորությունը ունեցող ոչ մի մարդու մուտք գործել Աֆաբել քաղաքը: Եթե դա պատահեր, այդ մարդը կաղավաղեր և կպղծեր ամբողջ քաղաքը և բոլոր բնակիչներին: Զեյլոնի սերը պաշտպանում էր անմեղ մարդկանց:

Միևնույն ժամանակ Զեյլոնը չէր կարող թույլ տալ, որ Դագոնի բնությունն ունեցող մարդն ստանար ավելի ցածր պատիժ անհնազանդության համար, քան ինքը՝ Դագոնը: Այս պատճառով, ովքեր որոշել էին չհետևել Զեյլոնին, պետք է արտաքսվեին և բանտարկվեին Լոնում՝ ինչպես և նա:

Նույն կերպով, Աստծո սերը չի կարող թույլ տալ որևէ մարդու, ով սատանայի բնությունն ունի, ապրել հավիտենական քաղաքում: Անարդար կլիներ դատապարտել սատանային և նրա զորքերին հավիտյան Կրակի լճում տանջվելուն՝ բացառություն անելով նրանց համար, ովքեր, գտնվելով սատանայի իշխանության ներքո, որոշեցին պահպանել նրա բնությունը: Այն մարդիկ, ովքեր ունեն նրա բնությունը, հավիտյան կդատապարտվեն նրա հետ Կրակի լճում լինելուն: Աստված ողորմած և արդար է, և միշտ էլ այդպիսին կլինի, և Նրա փառքը կհայտնվի ամբողջ աշխարհում:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ԵՐԿՈՒ, ԳԼՈՒԽՆԵՐ 4,5

1. Մինչև այս բաժինը կարդալը դուք համարո՞ւմ էիք, որ հավիտենական դատաստանը հիմնարար վարդապետություն է, որն ամեն քրիստոնյա պետք է հասկանա: Ի՞նչ է կատարվում, երբ մենք աշակերտում ենք մարդկանց՝ առանց խորապես սովորեցնելու այս թեման:

2. Շատ քրիստոնյաներ չեն պատմում մարդկանց դժոխքի մասին, քանի որ վախենում են, որ իրենց կհամարեն բացասական կամ քննադատող անձնավորություն: Այնուամենայնիվ, այս մասին մարդկանց հետ խոսելը գթասրտության քայլ է: Ինչպե՞ս հավատացյալները (թե՛ առանձին մարդիկ, և թե՛ եկեղեցիները) կարող են խոսել այս մասին՝ սիրուց դրդված:

3. Ինչպե՞ս կբացատրեք հավատքի և պտղի (կամ՝ գործերի) կապը: Եթե փրկությունը պարգև է, ինչո՞ւ են մեր գործերը կարևոր մեր հավատքի համար:

4. Հինգերորդ գլխում նշեցինք, որ մենք հակված ենք պատմելու Ավետարանի խոստումների մասին՝ չանդրադառնալով այն բանին, թե ինչ ազդեցություն կունենա Հիսուսին հետևելու որոշումը մարդու կյանքում: Ինչո՞ւ է Քրիստոսին հնազանդ կյանքն ավելի լեցուն, քան այն կյանքը, որը պարզապես տալիս է մեզ հոգևոր արտոնություններ և չի պարտադրում փոխել մեր ապրելակերպը:

5. Մտովի վերհիշե՛ք այն ամենը, ինչ իմացաք մինչև հիմա փրկության և դատաստանի մասին, նաև այն մասին, թե ինչպես է մեր այսօրվա կյանքն ազդում հավիտենության վրա: Արդյո՞ք շնորհքի նկարագրությունը հինգերորդ գլխում օգնեց ձեզ ավելի խորը հասկանալ այս թեմաները:

ԲԱԺԻՆ ԵՐԵՔ

ԳԼՈՒԽ 6

ՄԵԾ ՆԱՀԱՆՁԸ

«Բայց ով որ մինչև վերջ դիմանա, կփրկվի...»:
— Մատթեոս 24.13, TEV

Այս գլխում կխոսենք այն ճշմարտությունների մասին, որոնք ներկայացվել են Երկակի կյանքի և Հուսահատ սրտի կերպարների միջոցով: Մի ժամանակ նրանք ճշմարտապես հետևում էին Զեյլոնին: Այնուամենայնիվ, նրանցից մեկը չէր հետևում նրան ճիշտ դրդապատճառներով, իսկ մյուսն, ի վերջո, լիովին հեռացավ նրա ճանապարհներից: Երկուսի վերջն էլ ողբերգական էր:

«Կարդալ այն, ինչին հավատո՞ւմ ենք», թե՞ «Հավատալ մեր կարդացածին»

Այն ճշմարտությունները, որոնց մասին կխոսենք այս գլխում, վիճարկելի են որոշ ավետարանական շրջանակներում: Այնուամենայնիվ, եթե ցանկանում ենք իմանալ ճշմարտությունը և անկեղծ ենք ինքներս մեզ հետ, Աստվածաշնչի մանրակրկիտ ուսումնասիրությունը կհեռացնի բոլոր հակասությունները: Մինչ կխոսենք այն մասին, թե ինչ է Աստվածաշունչը սովորեցնում Երկակի կյանքի և Հուսահատ սրտի պես մարդկանց մասին, թույլ տվեք խնդրել ձեզ, որ շարունակեք ընթերցանությունը բաց սրտով և բաց մտքով:

Մեծագույն խոչընդոտներից մեկը, որին բախվում ենք, երբ ձգտում ենք ճանաչել Աստծո կամքը, այն է, որ Աստվածաշունչը կարդալիս մենք *կարդում ենք այն, ինչին հավատում* ենք, փոխարենը *հավատանք մեր կարդացածին:* Մենք կարդում ենք այն, ինչին հավատում ենք, երբ որոշում ենք նայել ճշմարտությանը «կեղտոտված ակնոցով»: Պատճառը ոչ ճշգրիտ գիտելիքն է՝ ստացված այլ մարդկանցից կամ մեր հարանվանության ուսմունքներից, և նույնիսկ՝ մեր սեփական կանխակալ պատկերացումները Աստծո և Նրա ճանապարհների մասին: Սա շատ վտանգավոր է, քանի որ կարող է խաբեության տանել մեզ: Նման մի օրինակ կարելի է գտնել Հոբի գրքում:

Վերջերս ես վերցրի Աստվածաշունչս և դեռ չէի հասցրել բացել, երբ Աստծո Հոգին ասաց. «Բացի՛ր Հոբի գիրքը և կարդա՛ երեսուներկուերորդ գլխից»: Ես անմիջապես բացեցի այդ գլուխը և տեսա, որ այն Եղիուսի խոսքի սկիզբն էր:

Մի փոքր նախապատմություն: Հոբը մեծ ողբերգություն կրեց, ինչից հետո նրա պատկերացումն Աստծո մասին արագորեն փոխվեց՝ իր մեծ տառապանքի և տարաբախտության պատճառով: Նա սկսեց դիտարկել Աստծուն իր փորձառության տեսանկյունից, փոխարենը փնտրեր Նրա իմաստությունը (տե՛ս Հակոբ. 1.2–8): Ժամանակի ընթացքում նրա դատողությունները հանգեցրին նրան ինքնաարդարացման: Հոբի երեք ընկերները, ովքեր խոսում էին մինչև այն գլուխը, որից ես սկսեցի կարդալ, վարվեցին սխալական և ինքնակոչ աստվածաբանների պես՝ փորձելով բացատրություն տալ Հոբի ողբերգությանը: Նրանց փորձերն ավելի վատթարացրին իրավիճակը: Չկարողանալով հերքել Հոբի սխալ դատողությունները՝ ընկերները մեղադրեցին նրան:

Եղիուսը, ով ամենաերիտասարդն էր այդ խմբում, երկար սպասեց, որպեսզի լսեր Աստծո իմաստությունը Հոբից և նրա երեք ընկերներից: Ի վերջո, հասկանալով, որ Հոբի երեք ընկերներն այլևս ասելիք չունեին, նա սկսեց խոսել. «Ես համբերատար լսում էի, մինչ դուք խոսում էիք, և սպասում էի, մինչ դուք իմաստուն խոսքեր էիք որոնում: Ես ուշադիր հետևում էի և լսեցի, թե ինչպես ձախողվեցիք. դուք չհերքեցիք Հոբի ասածը: Ինչպե՞ս կարող եք պնդել, որ իմաստություն եք գտել: Աստված պետք է պատասխանի Հոբին, քանի որ դուք ձախողվեցիք» (Հոբ 32.11–13, TEV):

Եղիուսը շարունակեց՝ հանդիմանելով բոլորին: «Մի՞թե Աստված պետք է համապատասխանեցնի Իր արդարությունը ձեր պահանջներին» (Հոբ 34.33, NLT): Որքա՜ն ճշտորեն նա խոսեց մեր օրերում լայնորեն տարածված սխալմունքի մասին: Սա եկեղեցու մոլորված աստվածաբանության գլխավոր արմատներից մեկն է. *մենք թույլ ենք տալիս մեր փորձառությանը մեկնաբանել Աստծո Խոսքը, փոխարենը թույլ տանք Աստծո Խոսքին սահմանել ճշմարտության չափանիշները:*

Եղիուսը չխոսեց մարդկային դատողությամբ, կամ այնպիսի աստվածաբանությամբ, որը ձևավորվել է որոշակի իրադարձությունների, դեպքերի կամ Աստծո մասին կանխակալ կարծիքների հիման վրա: Նա ներկայացրեց Աստծո անարատ Խոսքը՝ առանց կեղծելու ճշմարտությունը: Անմիջապես նրա խոսքի ավարտից հետո կարդում ենք.

> «Եվ փոթորկի միջից Տերը խոսեց Հոբի հետ. «Ո՞վ ես դու, որ վիճարկես Իմ իմաստությունը քո անտեղյակ, դատարկ բառերով: Կանգնի՛ր տղամարդու պես և պատասխանի՛ր այն հարցերին, որոնք Ես կտամ քեզ»» (Հոբ 38.1–3, TEV):

Աստվածաշնչի «Էմփլիֆայդ» թարգմանության մեջ Աստծո հարցն այսպիսին է. «Ո՞վ է սա, որ խավարեցնում է խորհուրդն անիմաստ խոսքերով»: Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ մենք զտում ենք Աստծո խոսքերը մեր փորձառությամբ, այլ մարդկանց կարծիքներով, սխալ աստվածաբանությամբ կամ Աստծո մասին կանխակալ գաղափարներով: Մենք խավարեցնում ենք Նրա խորհուրդը՝ այն դարձնելով անհասանելի մեզ շրջապատող մարդկանց համար: Փաստորեն, մենք թաքցնում ենք ճշմարտությունը նրանցից, ովքեր ցանկանում են իմանալ այն: Ահա թե ինչու էր Աստված այդքան բարկացած Հոբի և նրա ընկերների վրա, և նույնպես խիստ բարկանում է այսօր, երբ մենք սխալմամբ ենք ներկայացնում Նրա ճանապարհները: Մենք թույլ չենք տալիս մարդկանց ճանաչել ճշմարտությունը:

Տերը տրամադրեց չորս գլուխ՝ Հոբին Իր Խոսքը հայտնելու համար: Հենց որ Նա ավարտեց, Հոբը զղջումով ասաց.

> «Ես գիտեմ, Տե՛ր, որ Դու ամենազոր ես, որ Դու կարող ես անել՝ ինչ ուզես: Դու հարցնում ես, թե ինչպես եմ ես համարձակվում վիճարկել Քո իմաստությունը՝ այսքան տգետ լինելով: Ես խոսեցի այն բաների մասին, որոնք չէի հասկանում, սքանչելիքների մասին, որոնք շատ մեծ են իմ իմանալու համար: Դու պատվիրեցիր, որ լսեի, երբ խոսեցիր, և որ փորձեի պատասխանել Քո հարցերին: Անցյալում ես գիտեի ընդամենը այն, ինչ ուրիշներն էին ասել ինձ, բայց հիմա ես տեսա Քեզ իմ աչքերով: Այնպես որ, ես ամաչում եմ այն ամենի պատճառով, ինչ ասել եմ, և ապաշխարում եմ հողի և մոխրի մեջ» (Հոբ 42.2–6, TEV):

Ուշադրություն դարձրեք, որ Հոբն ասաց. «Անցյալում ես գիտեի ընդամենը այն, ինչ ուրիշներն էին ասել ինձ, բայց հիմա ես տեսա Քեզ իմ աչքերով»: Այս խոսքում շատ մեծ ճշմարտություն կա: Աստվածաշունչն ասում է, որ մենք փոխվում ենք փառքից դեպի փառք, երբ *տեսնում ենք* Տիրոջը (տե՛ս Բ Կորնթ. 3.18), ոչ թե՝ երբ *լսում ենք Նրա մասին:* Հիսուսը՝ Աստծո կենդանի Խոսքն է: Նրան տեսնելը նշանակում է՝ ճանաչել Նրան և Նրա ճանապարհները:

Ահա թե ինչ է անում հայտնված ճշմարտությունը մարդու կյանքում: Մենք լսում ենք Աստծո Խոսքը, բայց չենք փոխվի, քանի դեռ *չենք լուսավորվել:* Երբ Աստծո Խոսքի ճշմարտությունը մուտք է գործում մեր սիրտը, մենք աղաղակում ենք. «Ես հասկացա՛: Ես հասկացա՛»: Այդ պահին մենք լուսավորվում և վերափոխվում ենք՝ շարունակելով նմանվել Նրան:

Այս հոգևոր ճշմարտությունը դրդեց Պողոսին աղոթել. «Ես... չեմ դադարում ձեզ համար գոհություն տալուց՝ ձեզ իմ աղոթքներում հիշե-

լով, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստված՝ փառքի Հայրը, տա ձեզ իմաստության և հայտնության հոգի՝ Իր գիտությամբ, *որ ձեր սրտերի աչքերը լուսավորվելով...*» (Եփեսացիների 1.15–18): Հոբը լուսավորվեց ավելի, քան երբևէ, թեև նա աստվածապաշտ կյանք էր վարում իր ողբերգությունից առաջ: Նա ճանաչեց Աստծուն ավելի բարձր մակարդակի վրա:

Հենց որ Աստված ավարտեց Հոբի հետ, Նա դիմեց Եղիփազին՝ Հոբի ընկերներից մեկին. «Ես բարկացած եմ քեզ և քո երկու ընկերների վրա, որովհետև դուք չխոսեցիք ճշմարտությունն Իմ մասին» (Հոբ 42.7, TEV):

Տերը շատ լուրջ է ընդունում, երբ մենք սխալ կերպով ենք ներկայացնում Իրեն և Իր ճանապարհները: Դա խավարեցնում է Նրա խորհուրդը և աղավաղում է Նրա արդարությունը: Ինձ համար շատ տարօրինակ է, որ մարդիկ առանց մտածելու աջակցում են այնպիսի աստվածաբանական ուղղությունների, որոնք չեն հաստատվում Աստծո Խոսքի ամբողջական խորհրդով: Որքա՜ն սարսափելի է: Ինչպե՞ս մենք կարող ենք ասել, որ ճանաչում ենք ճշմարտությունը, եթե չենք ցանկանում խրատվել կամ շտկվել դրանով:

Երբ ավարտեցի Հոբի գիրքը, Տերն այնպիսի բան ասաց ինձ, ինչը շատ հարցերի պատասխան դարձավ: Նա ասաց. «Որդի՛ս, դու նկատեցի՞ր, որ Ես չհայտնվեցի այն ընթացքում, երբ Հոբը և Նրա ընկերները սխալ էին խոսում Իմ մասին: Իմ ներկայությունը չհայտնվեց, քանի դեռ ինչ-որ մեկը չէր կանգնել և չէր խոսել ճշմարտությունը»:

Ես երկյուղ ապրեցի այն բանից, ինչ Աստված խոսեց իմ սրտին, և սկսեցի մտածել Նրա ասածի մասին: Ես կրկին լսեցի Նրան. «Ահա թե ինչու բազմաթիվ մարդիկ, եկեղեցիներ և հարանվանություններ չեն վերապրում Իմ ներկայությունը և կյանքեր փոխող զորությունը: Նրանք չեն հռչակում Իմ անարատ Խոսքը, նրանք զտում են այն իրենց մեկնաբանություններով կամ դատողություններով, և ոչնչով չեն տարբերվում Հոբից և նրա ընկերներից: Նրանք խավարեցնում են Իմ խորհուրդն իրենց անմիտ բառերով»:

Եթե մենք ուզում ենք ճանաչել Աստծո ներկայությունը և զորությունը, պետք է ձգտենք ճանաչել ճշմարտությունը՝ առանց այն կեղծելու: Այնպես որ, երբ շարունակենք ուսումնասիրել Աստվածաշունչն Աստծո դատաստանների վերաբերյալ, թույլ մի՛ տվեք Աստծո մասին կանխակալ պատկերացումներին, սխալ աստվածաբանությանը և ձեր հանգամանքներին փոխել ձեր տեսանկյունն այն բաների մասին, որոնք Նա արդեն պարզորեն հայտնել է: Փոխարենը՝ փնտրե՛ք Նրան՝ հայտնված Աստծո Խոսքով, որպեսզի լուսավորվեք՝ տեսնելով Նրա ճանապարհները:

Հետևել Հիսուսին շահի համար

Եկեք խոսենք Երկակի կյանքի մասին: Մենք կսկսենք՝ վերադառնալով Հիսուսի խոսքերին, որոնց մասին խոսեցինք նախորդ գլխում.

> «Երբ Դատաստանի օրը գա, շատերը կասեն Ինձ. «Տե՛ր, Տե՛ր: Քո անունով մենք խոսեցինք Աստծո ուղերձը, Քո անունով մենք շատ դևեր հանեցինք և շատ հրաշքներ գործեցինք: Այդ ժամանակ Ես կասեմ նրանց. «Ես երբեք չեմ ճանաչել ձեզ: Հեռո՛ւ գնացեք Ինձնից, անօրե՛ն մարդիկ» (Մատթեոս 7.22,23, TEV):

Մեկ այլ թարգմանության մեջ, որն ավելի մոտ է բնագրին, Հիսուսի պատասխանն այսպիսին է. «Երբեք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ *անօրինություն գործողներ»:* «Անօրինություն» բառը հունարենում («անոմիա») նշանակում է գործել հակառակ Աստծո օրենքին կամ կամքին, կամ՝ չհնազանդվել Աստծո իշխանությանը:

Հիսուսը նաև ավելացնում է «գործել» բառը՝ ցույց տալով, որ նկատի չունի այնպիսի մարդկանց, ովքեր ժամանակ առ ժամանակ սայթաքում են, և ո՛չ էլ Քրիստոսի մեջ գտնվող մանուկ հավատացյալների, ովքեր պայքարում են ազատ լինելու համար: Նա խոսում է այնպիսի մարդկանց մասին, ովքեր չեն ապրում Աստծուն հաճելի կերպով և անտեսում են, արդարացնում են կամ պարզապես թաքցնում են իրենց կյանքի ոճը: Այնպես որ, Հիսուսի խոսքերը վերաբերում են թե՛ Խաբվածի պես մոլորված մարդկանց, թե՛ Երկակի կյանքի պես անհավատարիմներին:

Այն բազմությունները, որոնց Հիսուսը դիմում է, կլսեն դատավճիռներ, որոնք հավիտյան հանգիստ չեն թողնի իրենց անիծյալների բնակավայրերում: Անչափ կարևոր է, որ մենք չանտեսենք Տիրոջ զգուշացումը կամ թեթևորեն չվերաբերվենք դրան:

Եկեք մի փոքր ավելի ուշադրություն դարձնենք երկրորդ խմբին, որին Հիսուսը դիմում է վերևում բերված հատվածում: Աստծո թագավորություն մուտք չգործողների թվում լինելու են այնպիսի մարդիկ, ովքեր դևեր են հանում *Հիսուսի անունով:*

Ովքե՞ր են այս մարդիկ: Մի՞թե ինչ-որ մեկը կարող է օգտագործել Հիսուսի անունը՝ դևեր հանելու համար, եթե որևէ կապ չունի Տեր Հիսուսի հետ: Կարդանք մի հատված Գործք առաքելոց գրքից՝ այս հարցի պատասխանն ստանալու համար.

> «Հրեաների մի խումբ, ովքեր քաղաքից քաղաք էին գնում, չար ոգիներ հանելով՝ փորձեցին օգտագործել Տեր Հիսուսի անունը: Նրանք այսպիսի հմայախոսություն արեցին. «Հրամայո՛ւմ եմ քեզ, Հիսուսո՛վ, Ում Պո-

ղոսը քարոզում է՝ դո՛ւրս գնա»: Սկևայի՝ գլխավոր քահանաներից մեկի յոթ որդիներն էին անում սա: Բայց երբ նրանք փորձեցին դա մի մարդու վրա, ով բռնված էր չար ոգով, ոգին պատասխանեց. «Ես գիտեմ Հիսուսին և գիտեմ Պողոսին: Իսկ դո՞ւք ով եք»: Եվ նա ցատկեց նրանց վրա հարձակվեց այնպիսի սաստկությամբ, որ նրանք փախան այդ տնից՝ մերկ և ծանր վերքեր ստացած» (Գործք 19.13–16, NLT):

Այդ երդմնեցուցիչները չէին կարող դևեր հանել Հիսուսի անունով: Այս պատմության մեջ մի ճշմարտություն կա. դևեր հանելու համար բավական չէ ունենալ միայն Հիսուսի անունը: Դուք պետք է շփում ունենաք այդ անունը Կրողի հետ: Դուք պետք է լինեք Քրիստոսի հետևորդների թվում, ոչ թե այն մարդկանց, որոնց մասին մենք խոսեցինք նախորդ գլխում:

Միգուցե մտածեք. «*Չէ՞ որ Հիսուսն ասաց, որ երբեք չէր ճանաչել նրանց: Ինչպե՞ս նրանք կարող էին դևեր հանել և հրաշքներ գործել Նրա անունով: Մի՞թե դա հնարավոր է»:*

Կան մարդիկ, ովքեր սրտանց միացել են Հիսուսին, որպեսզի ստանան փրկության առավելությունները, բայց արել են դա միմիայն իրենց շահի համար: Նրանք երբեք չեն ճանաչել Աստծո սիրտը, այլ միայն ցանկացել են Նրա զորությունը և օրհնությունները: Պողոսն զգուշացնում է, որ նման մարդիկ «մտքով ապականված և ճշմարտությունից հեռացած են, որ աստվածապաշտությունը շահավաճառություն են համարում. այնպիսիներից ե՛տ քաշվիր» (Ա Տիմոթեոս 6.5):

Այս մարդիկ փնտրում էին Հիսուսին իրենց շահի համար: Նշանակում է՝ նրանք ծառայում էին Նրան՝ ոչ թե սիրուց, այլ իրենց շահից դրդված: Հիսուսը չէր ճանաչում նրանց, քանի որ գրված է. «Բայց եթե մեկն Աստծուն սիրի, *նա ճանաչված է Նրանից»* (Ա Կորնթացիների 8.3):

Նա ճանաչված է Աստծուց: «Ճանաչել» բառն այս խոսքում չի նշանակում՝ պարզապես իմանալ ինչ-որ մեկի մասին, քանի որ Աստված գիտի ամեն ինչ բոլորի մասին: Նա ամենագե՛տ է: Այս բառը մտերիմ ճանաչողության իմաստ է կրում: Աստվածաշնչի «Էմփլիֆայդ» թարգմանությունն ի հայտ է բերում այս իմաստը. «Բայց եթե ինչ-որ մեկը ճշմարտապես [սիրող ակնածանքով, արագորեն հնազանդվելով և գոհությամբ ընդունելով Նրա օրհնությունը] սիրում է Աստծուն, նա ճանաչված է Աստծո կողմից [համարվում է արժանի *Նրա մտերմությանը* և սիրուն, և նա պատկանում է Նրան]»:

Հիսուսը Դատաստանի օրը ասելու է այդ բազմություններին. «Երբեք ձեզ չե՛մ *ճանաչել»:* Այնպես որ, նրանք, ովքեր չեն սիրում Աստծուն (ինչն ակնհայտ է, քանի որ նրանք արագորեն չեն հնազանդվում

Նրան և չեն վերաբերվում սիրող ակնածանքով և երկյուղածությամբ), մտերմորեն *ճանաչված* չեն Հոր և Հիսուսի կողմից, նույնիսկ եթե նրանք սպասում են Նրա փրկությանը: Հիսուսին սիրելը նշանակում է, որ դուք դնում եք ձեր կյանքը Նրա համար: Դուք այլևս չեք ապրում ձեզ համար, այլ՝ Նրա:

Հուդան նման մարդու օրինակ է: Նա միացավ Հիսուսին: Քանի որ Հուդան մեծ զոհ արեց՝ Նրան հետևելու համար, թվում էր, թե նա սիրում էր Աստծուն: Հուդան թողեց ամեն ինչ, որպեսզի միանար Հիսուսի ծառայողական թիմին և հետևեր Տիրոջը: Նա դիմացավ թեժ հալածանքներին, նույնիսկ երբ ծառայության մյուս անդամները հեռացան (տե՛ս Հովհ. 6.66): Նա չհանձնվեց: Նա դևեր էր հանում, բժշկում էր հիվանդներին և քարոզում էր Ավետարանը (տե՛ս Ղուկ. 9.1):

Այնուամենայնիվ, Հուդայի դրդապատճառը սկզբից ի վեր ճիշտ չէր: Նա այդպես էլ չապաշխարեց իր եսասիրական շարժառիթներից: Մենք տեսնում ենք նրա բնավորությունը հետևյալ աստվածաշնչյան հատվածներից: Նա ասաց. «Ի՞նչ եք կամենում *ինձ տալ*, և ես...» (Մատթեոս 26.15): Նա ստում և շողոքորթում էր շահի համար (տե՛ս Մատթ. 26.25), փող էր գողանում Հիսուսի ծառայության միջոցներից՝ իր համար (տե՛ս Հովհ. 12.4–6), և այսպես շարունակ: Նա այդպես էլ մտերմորեն չճանաչեց Տիրոջը, թեև երեք ու կես տարի անցկացրեց Նրա ներկայության մեջ՝ լինելով Նրա աշակերտը: Այս պատճառով, Հիսուսն ասաց նրա մասին. ««Չէ՞ որ Ես ձեզ՝ տասներկուսիդ ընտրեցի, և ձեզնից մեկը սատանա է»: Եվ սա Իսկարիովտացի Սիմոնյան Հուդայի մասին էր ասում...» (Հովհաննես 6.71,72բ):

Շատերը չեն տարբերվում Հուդայից: Նրանք մեծ զոհեր են արել ծառայության համար, ազատել են մարդկանց դևերից, բժշկել են հիվանդների, քարոզել են Ավետարանը և հավատացել են Հիսուսին իրենց փրկության համար, բայց երբեք մտերմորեն չեն ճանաչել Նրան: Նրանց բոլոր գործերն արվել են՝ ելնելով անձնական շահից, ոչ թե Աստծո հանդեպ սիրուց: Այս նկարագրությունը լիովին համապատասխանում է Երկակի կյանքին մեր այլաբանության մեջ: Նրան դուր էր գալիս այն իշխանությունը և ազդեցությունը, որ ստանում էր Զեյլոնին հետևելու շնորհիվ: Հենց ամենասկզբից նրա դրդապատճառներն արմատացած չէին Զեյլոնին սիրելու մեջ:

Այդպիսի մարդկանց սպասվում է մեծագույն դատապարտությունը: Հիսուսն ասաց Հուդայի մասին. «Լավ էր նրան, թե այդ մարդը ծնված չլիներ» (Մատթեոս 26.24): Տերն ասաց այն կրոնական առաջնորդներին, ովքեր ծառայում էին Աստծուն իրենց օգտի համար և Տիրոջ անու-

նով շահագործում էին մարդկանց. «Նրա համար ավելի դատապարտություն կստանաք» (Մատթեոս 23.14): Այդ տղամարդիկ և կանայք, ովքեր Երկակի կյանքի պես են, կհայտնվեն դժոխքի ամենախավար և ամենատանջալի վայրերում:

Փրկությունը թողնելը

Այս ամենը մեր այլաբանության մեջ ճշտորեն նկարագրում է Երկակի կյանքին: Իսկ ի՞նչ կարող ենք ասել Հուսահատ սրտի մասին: Նա ճշմարիտ հարաբերություններ ուներ Զեյլոնի հետ և նույնիսկ սիրում էր նրան, սակայն նա նույնպես մինչև վերջ չդիմացավ: Ի՞նչ է խոսում Աստվածաշունչն այս մասին: Սկսենք պատասխանել այս հարցին Եզեկիել մարգարեի խոսքերով.

> «Բայց եթե արդարը ետ դառնա իր արդարությունից և անօրինություն անի և ամբարշտի արած բոլոր պղծությունների պես անի, մի՞թե նա կապրի. նրա արած ամբողջ արդարությունը չպիտի հիշվի. նա նրանցով, այսինքն՝ իր արած հանցանքով և իր արած մեղքով պիտի մեռնի» (Եզեկիել 18.24):

Նախ և առաջ, Աստված խոսում է *արդար* մարդու մասին, ոչ թե այնպիսի մարդու, ով արդար է *համարել* իրեն, բայց երբեք արդար չի եղել: Անկասկած՝ այս մարդուն չի կարելի համեմատել խաբվածների կամ խաբեբաների հետ, որոնց մասին մենք խոսեցինք նախորդ գլխում:

Աստված ասում է, որ *չի հիշելու* այս մարդու արդարությունը: Երբ Աստված ինչ-որ բան է մոռանում, դա ասես երբեք տեղի չի ունեցել: Մենք գիտենք, որ Աստված մոռանում է մեր մեղքերը՝ հեռացնելով այնքան, որքան արևելքը հեռու է արևմուտքից, և թաղելով դրանք մոռացության ծովում: Իհարկե, սա ճիշտ է: Նա հայտարարում է. «Նրանց մեղքերը և նրանց անօրինություններն այլևս չեմ հիշի» (Եբրայեցիների 8.12): Աստված մոռանում է մեր մեղքերը, հենց որ մենք ընդունում ենք Հիսուսին՝ որպես մեր Տեր: Սատանան փորձում է մեղադրել մեզ, բայց Աստված ասել է, որ այլևս չի հիշելու մեր մեղքերը: Այնպես որ, Նրա համար այնպես է, ասես մենք երբեք չենք մեղանչել:

Դե ինչ, հակառակը նույնպես ճշմարիտ է: Երբ Աստված ասում է, որ ինչ-որ մեկի արդարությունը չի հիշվելու, Նա նկատի ունի, որ մոռանալու է, որ երբևէ ճանաչել է այդ մարդուն: Իր հարաբերություններն այդ մարդու հետ ավարտված են: Հակոբոս առաքյալը գրում է.

> «Եղբայրնե՛ր, եթե ձեզնից մեկը մոլորվի ճշմարտության ճանապարհից, և մեկը դարձնի նրան, թող գիտենա, թե մեղավորին իր մոլորության ճա-

նապարհից դարձնողը մի հոգի կփրկի մահից և մեղքերի շատությունը կծածկի» (Հակոբոս 5.19,20):

Առաջին բանը, որ պետք է նշել այս հատվածում, հետևյալն է. «Եղբայրնե՛ր, եթե ձեզնից մեկը...»: Հակոբոսը չի խոսում այն մարդկանց մասին, ովքեր միայն կարծում են, որ քրիստոնյա են: Նա խոսում է *հավատացյալի* մասին, ով մոլորվում է ճշմարտության ճանապարհից: Այս հատվածում այն եղբայրը, ով մոլորվել է ճշմարտությունից, *մեղավոր* է կոչվում: Սա չի նշանակում, որ նա այլևս վերստին ծնված չէ, այլ՝ որ մեղքը նրա կյանքում սովորական է դարձել, և նա պետք է վերադառնա հնազանդությանը: Այնուամենայնիվ, Հակոբոսը պարզ ցույց է տալիս, որ եթե նա համառի իր մոլորության մեջ, արդյունքում նրա անձը կմահանա. եթե նա չվերադառնա Աստծուն (չապաշխարի), նա կկորչի: Առակաց գիրքը հաստատում է սա՝ ասելով. «Այն մարդը, ով *շեղվում է* իմաստության ճանապարհից, կբնակվի (մահացածների) հոգիների ժողովքում» (Առակաց 21.16, AMP):

Առակաց գիրքը հաստատում է Հակոբոսի խոսքերը. այն մարդը, ով շեղվում է Աստծո ճանապարհներից և չի վերադառնում արդարությանը, բնակվում է մահացածների ժողովքում, որը Հադեսն է, և ի վերջո հայտնվում է Կրակի լճում:

Կյանքի գիրքը

Նոր կտակարանում ութ անգամ գրված է Կյանքի գրքի մասին: Պողոսը և Հովհաննեսը գրում են, որ այս գրքում գրված են այն մարդկանց անունները, ովքեր անցկացնելու են հավիտենությունը Հիսուսի հետ: Մեր անունները գրվում են այնտեղ այն պահին, երբ վերստին ծնվում ենք:

Հիշե՛ք Եփրոսինիի վկայությունը չորրորդ գլխում: Հենց որ այդ հույն աղջիկը կյանքը նվիրեց Հիսուսին, Հայր Աստված գրեց նրա անունը Կյանքի գրքում և ասաց. «Բարի գալո՛ւստ ընտանիք»: Նմանապես, Պողոսը գրում է մի հավատացյալի. «Եվ ես խնդրո՛ւմ եմ քեզ, իմ ճշմարի՛տ թիմակից, օգնել այս կանանց, որովհետև նրանք ջանասիրաբար աշխատեցին ինձ հետ՝ պատմելով մարդկանց Բարի լուրը: Եվ նրանք աշխատեցին Կղեմեսի և իմ այն գործակիցների հետ, որոնց անունները գրված են Կյանքի գրքում» (Փիլիպեցիների 4.3, NLT):

Հակառակը նույնպես ճշմարիտ է: Ում անունները գրված չեն Կյանքի գրքում, կորսված են: Լսե՛ք, թե ինչ է ասում Հայտնություն գիրքը. «Եվ եթե մեկը գրված չգտնվեց Կյանքի գրքի մեջ, կրակի լճի մեջ գցվեց» (Հայտնություն 20.15): Մյուսները կհայտնվեն մահացածների ժողովքում:

Հայտնություն գրքի 3-րդ գլխում Հիսուսը դիմում է մի եկեղեցու (ո՛չ թե քաղաքի, ո՛չ թե կորսված մարդկանց խմբի, ո՛չ թե կեղծ աստվածներ պաշտողների, և ո՛չ էլ չակերտավոր եկեղեցու): Նա խոսում է այն մարդկանց հետ, ովքեր ճշմարտապես Իրենն են, և զգուշացնում է. «Ով որ հաղթում է, նա սպիտակ հանդերձներ կհագնի, և նրա անունը Կյանքի գրքից *չեմ ջնջի»* (Հայտնություն 3.5):

Դուք նկատեցի՞ք «ջնջել» բառը: Ձեր անունը կարող է ջնջվել Կյանքի գրքից միայն՝ եթե այն գրված է եղել այնտեղ: Կյանքի գրքում գրված են միայն նրանց անունները, ովքեր վերստին ծնվել են՝ հավատալով Հիսուս Քրիստոսին: Անհավատները և նույնիսկ խաբված մարդիկ, ովքեր երբեք ճշմարտապես չեն քայլել Հիսուսի հետ, չեն եղել այդ Գրքում. այնպես որ, նրանց անունները չեն կարող ջնջվել այնտեղից: Նա դիմում է այն մարդկանց, ովքեր Իր ընտանիքում են:

Սթափեցնող տեսիլք

Այս պատմությունը գրի է առել մի ծառայող, ով քսաներորդ դարի ընթացքում հավատարմորեն ծառայել է Աստծուն գրեթե յոթանասուն տարի շարունակ: Նա ահռելի ազդեցություն է թողել Քրիստոսի ամբողջ մարմնի վրա: Նրա գրքերը տպագրվել են ավելի քան վաթսունհինգ միլիոն օրինակով, իսկ նրա Աստվածաշնչյան դպրոցն ավարտել է ավելի քան 20.000 մարդ:

Նա անդրադառնում է այս թեմային իր գրքերից մեկում: Նա գրում է, որ 1952 թվականին Հիսուսը տեսիլքով հայտնվեց իրեն և ցույց տվեց մի հովվի կնոջ, ում նա ճանաչում էր: Այդ կինը հավատացել էր մի ստի այն մասին, որ ինքը վատնում էր իր տաղանդները և գեղեցկությունը ծառայության մեջ: Ժամանակի ընթացքում նա ընդունել էր մտքեր համբավի, հայտնի լինելու և հարստության մասին, որոնք ինքը կարող էր ունենալ աշխարհում: Ի վերջո, նա տեղի էր տվել այդ մտքերին, լքել էր իր ամուսնուն և սկսել էր փնտրել այն հաջողությունը, որը ցանկանում էր:

Տերը հատուկ ասաց այդ ծառայողին. «*Այդ կինն Իմ զավակն էր»,* և կարգադրեց նրան *չաղոթել* այդ կնոջ համար: Հաջորդ հատվածը մեջբերված է անմիջապես գրքից.

> – Տե՛ր, ի՞նչ կլինի նրա հետ,– հարցրի ես:
>
> – Նա կանցկացնի հավիտենությունը անիծյալների բնակավայրում, որտեղ լաց և ատամների կրճտոց է,– պատասխանեց Աստված:
>
> Այդ տեսիլքի մեջ ես տեսա, թե ինչպես էր նա ընկնում դժոխքի փոսը: Ես լսեցի նրա սարսափած ճիչերը:

– Այդ կինը Քո զավակն էր, Տե՛ր: Նա լցված էր Քո Հոգով և ծառայում էր Քեզ: Չնայած դրան՝ Դու պատվիրեցիր ինձ չաղոթել նրա համար: Ես չեմ հասկանում:

Տերը հիշեցրեց ինձ հետևյալ խոսքը. «Եթե մեկը տեսնի իր եղբորը, որ մեղանչել է, և այնպիսի մեղքով, որ դեպի մահ չէ, թող խնդրի, և Աստված կյանք կտա նրան, այսինքն՝ նրան, որ մեղանչել է ոչ թե դեպի մահ: Կա մեղք, որ դեպի մահ է. նրա համար ես չեմ ասում, որ խնդրես» (Ա Հովհաննես 5.16):

Ես ասացի.

– Բայց Տե՛ր, ես միշտ հավատացել եմ, որ այս խոսքում գրված է այնպիսի մեղքի մասին, որի հետևանքով մահանում է մարմինը, և որ մարդը փրկված է, թեև նա մեղք է գործում:

– Ո՛չ, այս խոսքում գրված չէ մարմնի մահանալու մասին,– նշեց Տերը:– Դու այլ բաներ ես ավելացնում այս խոսքին: Եթե ամբողջությամբ կարդաս Ա Հովհաննեսի հինգերորդ գլուխը, կտեսնես, որ այն խոսում է կյանքի և մահվան մասին՝ հոգևոր կյանքի և հոգևոր մահվան մասին, և այս խոսքում գրված է հենց հոգևոր մահվան մասին: Սա վերաբերում է այն հավատացյալին, ով մեղանչում է դեպի մահ տանող մեղքով. ահա թե ինչու եմ ասում, որ այս դեպքում դու չպետք է աղոթես: Ես ասացի քեզ, որ չաղոթես այդ կնոջ համար, որովհետև նա մեղանչել է դեպի մահ տանող մեղքով:

– Դա լիովին տապալում է իմ աստվածաբանությունը, Տե՛ր: Կարո՞ղ ես ավելի մանրամասնորեն բացատրել,– հարցրի ես (երբեմն մեր աստվածաբանությունը պետք է տապալվի, եթե այն չի համապատասխանում Աստծո Խոսքին):

Հիսուսը հիշեցրեց ինձ հետևյալ խոսքն Աստվածաշնչից.

Եբրայեցիների 6.4–6

4 «Որովհետև անկարելի է նրանց, որ մեկ անգամ լուսավորված, այն երկնավոր պարգևի համն առած և Սուրբ Հոգուն մասնակից եղած,

5 Եվ Աստծո բարի Խոսքի և հանդերձյալ աշխարհի զորությունները ճաշակած են,

6 Եթե կործանվում են, որ նրանք դարձյալ նորոգվեն ապաշխարության համար, որովհետև Աստծո Որդուն իրենց համար կրկին խաչեցին և խայտառակ արին»[1]:

Այս հատվածում թվարկված են մի քանի պայմաններ, որոնց մենք պետք է անդրադառնանք: Առաջինը՝ հավատքից ընկնելու համար մարդը պետք է լուսավորված լինի և ճաշակած լինի երկնային պարգևը: Սա վերաբերում է այն մարդկանց, ովքեր ընդունել են Հիսուսին, քանի որ Նա է երկնային պարգևը: Երկրորդը՝ այդ մարդը պետք է լցված լինի Սուրբ Հոգով: Երրորդը՝ նա պետք է ճաշակած լինի Աստծո

բարի Խոսքը և գալիք աշխարհի զորությունները: Այս ցուցակից պարզ է դառնում, որ սա չի վերաբերում մանուկ քրիստոնյաներին, այլ՝ միայն հասուն հավատացյալներին:

Պատահել է, որ ինձ մոտ մարդիկ են եկել և արցունքն աչքերին պատմել են, որ այլևս չեն ցանկանում ծառայել Տիրոջը: Հետագայում նրանք խորապես զղջացել և ապաշխարել են: Նրանք մեծ վախ են զգացել՝ կարդալով այս և նմանատիպ հատվածներ Աստվածաշնչում: Այնուամենայնիվ, հոգևոր մանուկները երբեմն անմտորեն են վարվում իրենց անգիտության պատճառով, և Տերը գիտի դա: Եբրայեցիների նամակի հեղինակը չի խոսում մանուկ քրիստոնյաների մասին, այլ՝ հասուն հավատացյալների:

Այդ մտահոգված մարդկանց մխիթարելու համար ես ասում եմ, որ եթե նրանք գործած լինեին դեպի մահ տանող մեղք (որի մասին գրված է վերևում բերված հատվածում), նրանք այլևս չէին ցանկանա վերադառնալ Հիսուսի մոտ: Այն փաստը, որ նրանք քաղց են զգացել Նրա հանդեպ և ապաշխարել են, և որ նրանց ապաշխարությունը հոգևոր պտուղ է ունեցել, արդեն իսկ ցույց է տալիս, որ Սուրբ Հոգին վերադարձրել է նրանց դեպի Իր հետ շփումը: Եթե այդ մարդիկ մշտապես հեռացած լինեին Աստծուց, ինչպես մեր պատմության հովվի կինը, նրանք այլևս չէին ցանկանա մտերիմ լինել Հիսուսի հետ և սուրբ կյանք վարել:

Հիսուսն ասաց, որ այդ կինն Աստծո ճշմարիտ զավակ էր: Այն ծառայողը, ով գրել է այս պատմությունը, իր հավատքի ընթացքն սկսել էր այնպիսի հարանվանության մեջ, որտեղ չեն հավատում, որ մարդը կարող է կորցնել իր փրկությունը. նրանք հավատում են անպայմանական հավիտենական ապահովությանը: Ահա թե ինչու նա ասաց. «Դա լիովին տապալում է իմ աստվածաբանությունը»: Այդ կինն Աստծո զավակ էր, և նրա անունը գրվել էր Կյանքի գրքում: Նա չհամբերեց մինչև վերջ, այլ մեկընդմիշտ հեռացավ՝ այս աշխարհ գնալով. այդ իսկ պատճառով, նրա անունը ջնջվեց՝ համաձայն Հայտնություն գրքի երրորդ գլխում նշված Հիսուսի զգուշացման, որն ուղղված էր եկեղեցուն: Նա որոշում կայացրեց մեկընդմիշտ հեռանալ: Նա «հաղթող» չէր: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակը գրում մեզ, որ նման մարդը չի կարող վերականգնվել: Այժմ նա երկու անգամ մահացած էր: Մի ժամանակ նա մահացած էր իր մեղքերի մեջ, դրանից հետո ժառանգեց հավիտենական կյանքը, բայց կրկին մահացավ մեղքի մեջ՝ մեկընդմիշտ Աստծուց հեռանալով (տե՛ս Հուդա 12):

Հենց որ մարդը հայտնվում է այսպիսի վիճակում, նա այլևս չի կարող վերստին ծնվել: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակը

գրում. «...անկարելի է... որ նրանք դարձյալ նորոգվեն ապաշխարության համար»: Այնպես որ, սխալմունք է մտածելը, որ մարդը կարող է նորից վերստին ծնվել:

Թույլ տվեք կրկնել ևս մեկ անգամ. երբ մարդը գործում է այս մեղքը, նա այլևս չունի ապաշխարելու և Հիսուսին նվիրվելու ցանկություն: Ոչ ոք չի կարող Հիսուսի մոտ բերել մեզ՝ բացի Սուրբ Հոգուց: Եթե Նա հեռանա ճշմարիտ հավատացյալից այն պատճառով, որ մարդը նահանջել է՝ ինչպես, օրինակ, մեր պատմության հովվի կնոջ պարագայում, Նա այլևս չի վերադառնա: Սա է պատճառը, որ Սուրբ Հոգին երկայնամիտ է: Նա հեշտորեն չի հանձնվում:

Խավարի մութը

Պետրոս առաքյալը շարունակում է սովորեցնել մեզ.

> «Երբ մարդիկ փախչում են այս աշխարհի չարությունից՝ ճանաչելով մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին...» (Բ Պետրոս 2.20, NLT):

Եկեք կանգ առնենք այստեղ և տեսնենք, թե ում մասին է խոսում Պետրոսը: Եթե մարդիկ փախչում են այս աշխարհի ապականությունից (չարությունից) Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով, նրանք, անկասկած, քրիստոնյա են: Նրանք չեն կարող խաբեբաներ լինել, որոնց մասին մենք խոսեցինք նախորդ գլխում, այսինքն՝ այնպիսի մարդիկ, ովքեր դավանում են, որ ճանաչում են Աստծուն, այնինչ իրականում չեն ճանաչում: Նրանք իսկապես փախել են այս աշխարհի պղծություններից Տեր Հիսուսի փրկարար շնորհքով: Անկասկած՝ Պետրոսը խոսում է ճշմարտապես վերստին ծնված մարդկանց մասին:

Շարունակելով՝ մենք կարդում ենք.

> «...իսկ հետո կրկին խճճվում են մեղքի մեջ և ստրկացվում դրանով, նրանք ավելի վատ վիճակում են, քան նախկինում: Ավելի լավ կլիներ, եթե նրանք երբեք չճանաչեին արդարության ճանապարհը, քան ճանաչեին այն, իսկ հետո մերժեին սուրբ կյանք վարելու պատվերը, որը ստացել էին» (Բ Պետրոս 2.20,21, NLT):

Պետրոսը խոսում է այն քրիստոնյաների մասին, ովքեր կրկին վերադարձել են մեղքի ստրկությանը: Ավելի լավ կլիներ, եթե նրանք երբեք չճաշակեին փրկությունը Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրանք մեկընդմիշտ որոշեցին հետևել հաճույքներին, կրքին և այս կյանքի հպարտությանը՝ մերժելով սուրբ կյանքը:

Ինչո՞ւ ավելի լավ կլիներ, եթե նրանք երբեք չճանաչեին արդարության ճանապարհը: Հուդան պատասխանում է այս հարցին: Ինչպես և Պետրոսը, նա խոսում է փրկությունից հեռացած մարդկանց մասին: Նա գրում է. «Վա՛յ նրանց, որ Կայենի ճանապարհով գնացին, և Բաղաամի մոլորությամբ վարձքին նվիրվեցին և Կորխի հակառակության պես կորան» (Հուդա 11):

Ե՛վ Կայենը, և՛ Բաղաամը, և՛ Կորխը մի ժամանակ հարաբերություններ ունեին Տիրոջ հետ: Նրանցից երկուսը ծառայողներ էին: Կայենի սխալը Աստծուն բացահայտ կերպով չհնազանդվելն էր, Բաղաամի սխալը՝ փողի հանդեպ սերն էր, իսկ Կորխի սխալը՝ ապստամբությունն էր լիազորված իշխանության դեմ:

Հուդան շարունակում է.

> «Սրանք գայթակղության ժայռեր են ձեր սիրո խնջույքներում, որ աներկյուղ միասին ուտել խմելիս իրենց անձերն են արածեցնում: Անջուր ամպեր են՝ քամիներից տատանված, պտղակորույս անպտուղ ծառեր, երկու անգամ մեռած, արմատախիլ եղած: Ծովի կատաղած ալիքներ, որ իրենց անձերի ամոթն են փրփրեցնում, մոլար աստղեր, որոնց պահվում է հավիտյան խավարի մութը» (Հուդա 12,13):

Առաջին եկեղեցում սիրո խնջույքը նշանակում էր երեկոյան ընթրիք, որի ժամանակ եկեղեցու անդամները հավաքվում էին: Այն արտացոլում էր նրանց մտերիմ հարաբերություններն Աստծո և մեկը մյուսի հետ: Սիրո խնջույքը սովորաբար ավարտվում էր սուրբ հաղորդության խորհրդով[2]: Այս հատվածում մենք մի սթափեցնող փաստ ենք տեսնում. ոչ բոլորը, ովքեր հեռանում են հավատքից, կթողնեն եկեղեցին, ինչպես որ վարվեց մեր պատմության հովվի կինը: Նման մարդիկ ամենից վտանգավոր են դառնում, քանի որ նրանք ազդեցություն են թողնում մանուկ հավատացյալների վրա, ովքեր թույլ խղճմտանք ունեն, և նրանցից ստացված վերքերը կարող են մահացու լինել:

Կորխը նման մարդու օրինակ է: Թեև նա Ահարոնի օգնականներից մեկն էր, նա ասաց և՛ Մովսեսին, և՛ Ահարոնին. «Դուք շատ հեռու եք գնացել: Ամբողջ Իսրայելն է առանձնացված Տիրոջ կողմից, և *Նա բոլորիս հետ է:* Ի՞նչ իրավունքով եք այնպես վարվում, ասես ավելի մեծ եք, քան մյուսները Տիրոջ ժողովրդի մեջ» (Թվոց 16.3, NLT): Կորխի ազդեցության պատճառով մահվան դատապարտվեց 250 առաջնորդ և 14.700 մարդ ժողովրդից:

Հուդան ասում է մեզ, որ այդ նահանջողները, որոնց նա *գայթակղության ժայռեր* (այլ թարգմանություններում՝ *արատներ*) է անվանում, մնում

են մեր համայնքներում: Նրանք կեղծ ապահովություն ունեն այն շնորհքի մեջ, որում մի ժամանակ վարվել են, բայց նրանք աղավաղել են այն՝ ապրելով իրենց համար և կորցնելով Աստծո երկյուղը: Ուշադրություն դարձրեք՝ Կորինն ասաց, որ Աստված «բոլորիս հետ է»: Նա նույնպես ապահովության կեղծ զգացում ուներ, քանի որ հաջորդ օրը երկիրը բացվեց և կենդանի-կենդանի կուլ տվեց նրան՝ դժոխք տանելով:

Նշանակում է՝ այդ նահանջողները գիտեն քրիստոնեական բառապաշարը: Նրանք շփվում են այլ հավատացյալների հետ, բայց չեն գտնվի այն հաղթողների թվում, որոնց համար Հիսուսը կվերադառնա: Նա կվերադառնա *արատ* չունեցող եկեղեցու համար (տե՛ս Եփես. 5.27):

Հուդան նշում է, որ այդ մարդիկ *երկու անգամ մահացած* են: Ինչպե՞ս մարդը կարող է երկու անգամ մահանալ: Մի ժամանակ նա մահացած էր մեղքի մեջ. հետո նա հավիտենական կյանք ստացավ վերստին ծնվելու շնորհիվ, բայց ցավոք, կրկին մահացավ՝ շարունակ մեղանչելու և չապաշխարելու պատճառով: Հիշեք՝ Հակոբոսը գրում է, որ եթե քրիստոնյան հեռանա ճշմարտությունից և մնա այդ վիճակում, նրա անձը *կմահանա:* Իսկ Հովհաննեսն ասում է, որ կա մեղք, որը մահվան է տանում հավատացյալներին: Երկուսն էլ խոսում են *երկու անգամ մահանալու* մասին:

Ուշադրություն դարձրեք Հուդայի խոսքերին. «...որոնց պահվում է *հավիտյան խավարի մութը»: Խավարի մութը*՝ վատագույն հավիտենական պատիժն է: Մենք կարող ենք պարզորեն տեսնել սա Հիսուսի խոսքերից Իր գալստյան և դատաստանի մասին: Նա ասում է.

> «Երանի՜ այն ծառաներին, որ տերը գալիս՝ արթուն կգտնի նրանց... Բայց եթե այն ծառան իր սրտում ասի. «Իմ տերն ուշանում է գալ», և սկսի ծառաներին և աղախիններին ծեծել, ուտել ու խմել և արբենալ, կգա այն ծառայի տերը այն օրը, որ նա չի սպասում, և այն ժամին, որ նա չգիտի, և նրան միջից կկտրի և նրա բաժինն անհավատարիմների հետ կդնի: Եվ այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտենալով չի պատրաստել և ոչ էլ արել նրա կամքի պես, շատ ծեծ կուտի: Եվ նա, որ չգիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ կծեծվի» (Ղուկաս 12.37, 45–48):

Այս խոսքերն այնքա՜ն շատ տեղեկություն են պարունակում: Նշենք մի քանի կարևոր փաստ: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ խոսքն այստեղ *ծառայի* մասին է, ոչ թե օտարականի, հեթանոսի կամ մեղավորի: Ծառան *գիտեր իր տիրոջ կամքը*, բայց վարվեց դրան հակառակ: Այս նկարագրությունը չի վերաբերում Անկախին. նա կլինի այն մարդկանց թվում, ովքեր չգիտեին և *քիչ ծեծվեցին:* Այն նույնպես չի վե-

ռաբերում Խաբվածին. նա մտածում էր, որ ծառա էր, բայց ըստ Զեյլոնի՝ երբեք ճշմարիտ ծառա չէր եղել: Այն մարդը, ում մասին Հիսուսը խոսում է այս հատվածում, *ծառա* է կոչվում և լիովին հասկանում է իր տիրոջ կամքը: Ահա թե ով է թողնում իր փրկությունը:

Ուշադրություն դարձրեք, որ այդ մարդը ծեծում էր իր ծառաներին: Խոսքն այլ մարդկանց շահագործելու մասին է՝ սեփական շահի կամ հաճույքների համար: Մենք տեսնում ենք, որ այդ ծառան սկսում է ապրել այսօրվա օրով: Նա ուտում է, խմում է և հարբում է: Նա սկսում է ծառայել ինքն իրեն: Հիշե՛ք Հուդայի խոսքերն այն մասին, որ նահանջած մարդիկ խնջույքի են մասնակցում այլ հավատացյալների հետ՝ առանց Աստծո երկյուղի: Նրանք ծառայում են միայն իրենք իրենց: Նրանց բոլոր որոշումները, նույնիսկ եթե դրանք վեհ թվան, միայն իրենց օգտի համար են:

Ի վերջո, մենք կարդում ենք այս ծառայի դատաստանի մասին, որ նրա բաժինն անհավատների (չփրկված մարդկանց) հետ եղավ: Անհավատները *քիչ ծեծվեցին*, բայց այս ծառան, ով գիտեր իր տիրոջ կամքը և հեռացավ, *շատ ծեծվեց:* Սա նշանակում է, որ նա ստանալու է խստագույն դատապարտությունը Կրակի լճում կամ խավարի մթի մեջ՝ հավիտյան:

Դառը չներում

Անկասկած՝ սա վերաբերում է Հուսահատ սրտին (ինչպես նաև՝ Երկակի կյանքին): Հուսահատ սիրտը գիտեր, որ Զեյլոնի կամքը մարդկանց ներելն էր, բայց հրաժարվեց անել դա: Նա որոշեց պահել իր վիրավորանքը Չարախոսողից: Նրա դառնությունը դուռ բացեց նրա պղծվելու համար: Ահա թե ինչու է Աստծո ժողովրդի մասին գրված. «Զգո՛ւյշ կացեք, որ մեկը ետ մնացող չլինի Աստծո շնորհքից, որ մի դառն արմատ վեր չբուսնի և նեղություն չտա, և նրանով շատերը պղծվեն» (Եբրայեցիների 12.15):

Աստծո Խոսքն ուսումնասիրելու և երկար տարիների ծառայողական փորձառության արդյունքում սովորել եմ, որ մեծագույն ծուղակը, որը հեռացնում է մարդկանց Աստծո հետ ընթացքից, չներումն է: Ինչպես Հուսահատ սրտի դեպքում, չներումը դուռ է բացում ամեն տեսակի սխալ համոզմունքների և վարքի համար:

Մատթեոս 18-րդ գլխում Հիսուսն առակ պատմեց մի թագավորի մասին, ով հաշիվ էր տեսնում իր ծառաների հետ: Նրա մոտ բերվեց մի ծառա, ով տասը հազար քանքար կամ տաղանդ էր պարտք նրան: Տա-

ղանդը ոչ թե ֆինանսական միավոր էր, այլ՝ քաշի: Այն օգտագործվում էր որպես չափման միավոր ոսկու (տե՛ս Բ Թագ. 12.30), արծաթի (տե՛ս Գ Թագ. 20.39) և այլ մետաղների կամ նյութերի համար: Այս առակում տաղանդը խորհրդանշում է պարտքի չափը. այնպես որ, մենք կարող ենք ենթադրել, որ Հիսուսն օգտագործում էր այդ չափը որպես փոխանակման միավոր, և խոսքն արծաթի կամ ոսկու մասին էր: Ենթադրենք՝ խոսքը ոսկու մասին էր:

Տաղանդը հավասար էր մոտավորապես 35 կիլոգրամի: Այն համարվում էր ամբողջական քաշ, որը մեկ մարդը կարող էր կրել (տե՛ս Դ Թագ. 5.23): Տասը հազար տաղանդը հավասար է մոտավորապես 350.000 կիլոգրամի կամ 350 տոննայի: Այնպես որ, այդ ծառան 350 տոննա ոսկի էր պարտք թագավորին: Երբ ես գրում էի այս գիրքը, ոսկու գինը մոտավորապես 40 դոլար էր մեկ գրամի դիմաց: Այնպես որ, փորձե՛ք բազմապատկել: Տասը հազար տաղանդ ոսկին հավասար է մոտավորապես 14 միլիարդ դոլարի: Ահա թե որքան էր այդ ծառան պարտք թագավորին: Հիսուսը շեշտադրում էր, որ այդ ծառան անհաշիվ պարտք ուներ, որը երբեք չէր կարող վճարել:

Թագավորը հրամայեց վաճառել նրան և նրա ընտանիքը՝ պարտքը վճարելու համար: Այդ մարդն ընկավ թագավորի ոտքերի մոտ և աղաչեց ողորմություն ցուցաբերել, և թագավորը շնորհեց նրան իր խնդրանքը՝ ներելով նրա ամբողջ պարտքը:

Այս առակում թագավորը խորհրդանշում է Հայր Աստծուն: Ներված մարդը նա է, ով ստացել է Աստծո ներումը Հիսուս Քրիստոսի միջոցով: Ամեն մարդու կյանքում պարտք է գոյանում ցանկացած անօրինության դիմաց: Դուք լսե՞լ եք, որ մարդիկ ասում են. «Նա կվճարի դրա համար»: Ներումը չեղյալ է դարձնում այդ պարտքը: Այդ մարդը, ինչպես և մենք, անասելի պարտք ուներ, և նրա պարտքը ներվել էր:

Այնուամենայնիվ, գրված է. «Եվ երբ որ այն ծառան դուրս եկավ, իր ծառայակիցներից մեկին գտավ, որ իրեն հարյուր դահեկան էր պարտական, և նրան բռնած խեղդում էր ու ասում. «Վճարի՛ր ինձ՝ ինչ որ պարտական ես»» (Մատթեոս 18.28):

Մեկ դահեկանը՝ մեկ օրվա աշխատավարձ էր: Ենթադրենք, որ այն հավասար է 100 դոլարի՝ ըստ այսօրվա տարադրամի: Ընդհանուր պարտքը կլիներ մոտավորապես 10.000 դոլար: Այնպես որ, խոսքն աննշան վիրավորանքի մասին չէ:

Մենք շարունակում ենք կարդալ. «Հիմա նրա այն ծառայակիցը նրա ոտքերն ընկավ և աղաչում էր ու ասում. «Համբերի՛ր ինձ, և բոլորը կհատուցեմ քեզ»: Բայց նա չէր կամենում, այլ գնաց և նրան գցեց

բանտը, մինչև որ պարտքը վճարի» (Մատթեոս 18.29,30): Նա ներում էր ստացել 14 միլիարդ դոլարի չափով, իսկ նրա ծառայակիցը պարտք էր նրան ընդամենը 10.000 դոլար, բայց նա չթողեց այդ պարտքը: Նա վճռեց հարկադրել դիմացինին վճարել այդ գումարը:

Կարևոր է նշել, որ մեկս մյուսի դեմ ունեցած վիրավորանքները՝ Աստծո դեմ մեր հանցանքի համեմատ, նման են 10.000 դոլարի՝ 14 միլիարդ դոլարի համեմատ: Անկախ այն բանից, թե որքան վատ են վարվել ձեր հանդեպ, մարդկանց հանցանքը չի կարող համեմատվել այն օրինազանցության հետ, որը գործել ենք Աստծո դեմ: Միգուցե ձեզ թվա, որ ոչ ոք այնքան վատ վիճակում չէ, որքան դուք: Այդ դեպքում, դուք չեք հասկանում, թե որքան վատ վարվեցին Հիսուսի հետ: Նա անմեղ էր. Նա անարատ գառ էր, որը մորթվեց՝ վերցնելով Իր վրա մեր 14 միլիարդ դոլարանոց պարտքը:

Այն մարդը, ով չի կարողանում ներել, մոռացել է, թե որքան մեծ պարտք է ներվել իրեն: Երբ գիտակցեք, որ Հիսուսն ազատել է ձեզ մահից և հավիտենական տանջանքից, դուք հեշտորեն կթողնեք մարդկանց հանցանքները: Չկա ավելի վատ բան, քան հավիտենությունը՝ կրակի լճի մեջ: Այնտեղ չկա ոչ մի թեթևություն: Այնտեղ որդը չի մահանում, և կրակը չի մարում: Այն մեր վերջին հանգրվանն էր, մինչև որ Աստված չներեց մեզ Իր Որդի Հիսուս Քրիստոսի մահվան միջոցով: Եթե մարդը չի կարողանում ներել, նա չի գիտակցում, որ դժոխքն իրական է: Նա չի հասկացել Աստծո սերը և ներումը:

Շարունակենք կարդալ այս առակը.

> «Երբ որ նրա ծառայակիցները տեսան եղած բաները, շատ տրտմեցին և եկան, իրենց տիրոջը հայտնեցին բոլոր եղածը: Այն ժամանակ նրա տերը կանչեց նրան և ասաց. «Չա՛ր ծառա, ես այն ամբողջ պարտքը շնորհեցի քեզ, որովհետև դու աղաչեցիր ինձ: Պետք չէ՞ր, որ դու էլ քո ծառայակցին ողորմեիր, ինչպես որ ես էլ քեզ ողորմեցի»» (Մատթեոս 18.31–33):

Ուզում եմ շեշտադրել, որ այս առակում Հիսուսը չի խոսում անհավատների մասին: Նա խոսում է թագավորի ծառաների՝ վերստին ծնված հավատացյալների մասին: Այս մարդն արդեն ստացել էր իր անասելի պարտքի ներումը (փրկությունը) և թագավորի ծառա էր կոչվում: Այն մարդը, ում նա չէր կարողանում ներել, նրա ծառայակիցն էր: Այնպես որ, մենք կարող ենք եզրակացնել, որ այն, ինչ տեղի ունեցավ հետագայում, այն «հավատացյալի» ավարտն է, ով հրաժարվում է ներել:

Այս առակում ես մի զարմանալի փաստ եմ գտնում: Երբ Հիսուսն առակներ էր պատմում, մարդիկ պետք է հարցնեին՝ դրանց մեկնութ-

յունն իմանալու համար: Այնուամենայնիվ, Հիսուսը մեկնում է այս առակը՝ չսպասելով մարդկանց հարցերին: Կարծում եմ՝ պատճառն այն է, որ Նրա ասածն այնքան անհամապատասխան էր մարդկային նորմերին, որ Նա պետք է համոզվեր, որ մարդիկ հասկացան դա: Ահա Նրա մեկնությունը.

> «Եվ նրա Տերը բարկանալով՝ նրան մատնեց դահիճներին, մինչև որ ամբողջ պարտքը վճարի նրան:
>
> Այսպես էլ իմ երկնային Հայրը կանի ձեզ, եթե դուք՝ ամեն մեկն իր եղբորը, ամբողջ սրտից չթողնի նրա հանցանքը» (Մատթեոս 18.34,35):

Գոյություն ունեն երեք կարևոր ճշմարտություններ, որոնք ցանկանում եմ նշել այս երկու խոսքերում: Առաջինը՝ չներող ծառան մատնվեց դահիճների (կամ՝ չարչարողների) ձեռքը: Երկրորդը՝ այժմ նա պետք է վճարեր իր սկզբնական պարտքը, որը 375 տոննա ոսկի էր կազմում: Եվ երրորդը՝ ահա թե ինչպես կվարվի Հայր Աստված նրանց հետ, ով չի ների իր եղբոր վիրավորանքը:

Եկեք արագորեն քննարկենք այս կետերից ամեն մեկը: Առաջինը՝ *չարչարանքը* նշանակում է՝ չափազանց ուժգին ցավ և տառապանք պատճառել մարդու մտքին և մարմնին, ինչպես նաև՝ տեղաշարժել սովորական դիրքից: Դահիճը կամ չարչարողը նա է, ով չարչարանք է պատճառում:

Այն հավատացյալը, ով հրաժարվում է ներել, չարչարվելու է դիվային հոգիների կողմից: Այս դահիճներին թույլատրված է ցավ և տառապանք պատճառել մարդու մտքին և մարմնին՝ իրենց ցանկությամբ: Ես հաճախ եմ աղոթել հավաքույթներին ներկա մարդկանց համար, ովքեր չէին կարողանում բժշկություն, մխիթարություն կամ ազատագրում ստանալ, և միակ պատճառն այն էր, որ նրանք չէին թողնում մարդկանց հանցանքները և ամբողջ սրտից չէին ներում նրանց: Այս դառնությունը գրեթե միշտ հանգեցնում է Աստծո դեմ բարկության և վիրավորանքի: Մարդու հավատքը պղծվում է, և եթե նա չի ապաշխարում և չի ներում, նրա վերջը ողբերգական կլինի:

Երկրորդ կետն այն է, որ այդ ծառան պետք է վճարի իր սկզբնական ահռելի պարտքը: Նրանից անհնարին բան է պահանջվելու: Խոսքն այն պարտքի մասին է, որը Հիսուսը վճարեց Գողգոթայում: Միգուցե դուք կծկվեք, երբ կարդաք սա, բայց ահա թե ինչ է ասում Հիսուսը մեկ այլ խոսքում. «Եվ որ ժամանակ, որ կանգնեք՝ աղոթք անեք, ներե՛ք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ Երկնքում է, ձեր հանցանքը թողնի ձեզ» (Մարկոս 11.25):

Ուշադրություն դարձրեք, թե ում է դիմում Հիսուսն այստեղ: Նա ասում է. «...ձեր Հայրն էլ, որ Երկնքում է...»: Աստված Հայր չէ մեղավորների համար: Նա *Աստված* է մեղավորների համար և *Հայր*՝ հավատացյալների համար: Նույնպես, մեղավորները սովորաբար չեն աղոթում: Այնպես որ, ակնհայտ է, որ Հիսուսը դիմում է Աստծո զավակներին:

Եկեք շարունակենք: Հիսուսն ասում է. «Բայց եթե դուք չներեք, ձեր Հայրն էլ, որ Երկնքում է, ձեր հանցանքը չի ների ձեզ» (Մարկոս 11.26): Ավելի պարզ չէր էլ կարելի ասել: Այստեղից մենք հասնում ենք երրորդ կետին. եթե մարդը հրաժարվի ներել, նա չարչարանք է կրելու, մինչև որ վճարի այն պարտքը, որն անկարելի է վճարել: Դա անհնար է, քանի որ ոչ ոք չի կարող փրկագին տալ իր անձի համար (տե՛ս Սաղմ. 49.7, NLT): Հիսուսն ասում է, որ եթե դուք չներեք, ձեր Հայրը չի ների ձեր անօրինությունները: Մի՞թե արժե այդպես վարվել:

Խոսքն այստեղ այն մարդու մասին չէ, ով աշխատում է հաղթահարել իր վիրավորանքը և աղոթում է, որ կարողանա ներել: Մենք խոսում ենք Հուսահատ սրտի պես մարդկանց մասին, ովքեր համառորեն հրաժարվում են ներել: Ուշադրություն դարձրեք, որ մեր այլաբանության մեջ նրա չներելը դուռ բացեց այլ չարիքների համար, և նա աստիճանաբար դադարեց նվիրված լինել Զեյլոնին: Մի՞թե արժեր պահել վիրավորանքը և նման ողբերգական ավարտ ունենալ: Կրկին, սա է պատճառը, որ Եբրայեցիների նամակի հեղինակը շեշտադրում է, որ զգուշորեն քննենք մեզ և հեռացնենք մեզնից ցանկացած տեսակի դառնություն, քանի որ *շատերը* պղծվում են դրանով:

Այժմ մենք կարող ենք հասկանալ Հիսուսի խոսքերը եկեղեցու վերջին օրերի մասին: Նա ասում է. «Եվ այն ժամանակ շատերը կգայթակղվեն և իրար կմատնեն և իրար կատեն... Եվ անօրինության շատանալու պատճառով շատերի սերը կսառչի: Բայց ով որ մինչև վերջ համբերի, նա կփրկվի» (Մատթեոս 24.10,12,13):

Ուշադրություն դարձրեք, որ այս վերջին օրերում կգայթակղվեն ոչ թե մի քանիսը կամ ոմանք, այլ՝ *շատերը:* «Շատերը» բառը անսահման, շատ մեծ կամ անհաշվելի թիվ է նշանակում: Վիրավորանքը կամ չներումը կհանգեցնի անօրինության, և անթիվ մարդկանց սերը կսառչի:

Այն բառը, որը «սեր» է թարգմանվել այս խոսքում, հունարեն «ագապե»-ն է: Խոսքն Աստծո սիրո մասին է, որն սփռվեց քրիստոնյայի սրտում այն պահին, երբ նա փրկվեց: Հիսուսը չի խոսում խաբվածների մասին, քանի որ նրանք երբեք ճշմարտապես չեն ստացել Աստծո սերը: Նա խոսում է հավատացյալների մասին, քանի որ Նա ասում է. «Բայց ով որ մինչև վերջ համբերի, նա կփրկվի»: Ոչ ոք չի ասի մեղա-

վորին կամ խաբված մարդուն. «Եթե մինչև վերջ համբերես, կփրկվես»: Այդ մարդիկ դեռ չեն սկսել իրենց ընթացքը:

Հավատքից հեռանալը

Աստվածաշունչն զգուշացնում է մեզ մեծ նահանջի մասին, որը տեղի կունենա մեր օրերի հավատացյալների միջև: Պողոսը գրում է. «Մեկը չխաբի ձեզ ոչ մի կերպով, որովհետև Նա (Տերը) չի գա, *եթե սկզբում չգա ապստամբությունը* (կամ՝ նահանջը)» (Բ Թեսաղոնիկեցիների 2.3): Եվ կրկին նա կանխասում է. «Եվ Հոգին հայտնի ասում է, թե հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան» (Ա Տիմոթեոս 4.1):

Ո՞րն է պատճառը: «Որովհետև ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությանը չեն համբերի, այլ իրենց հատուկ ցանկությունների համեմատ վարդապետներ կդիզեն իրենց վրա՝ իրենց լսելիքների մարմաջելու պես: Եվ *իրենց լսելիքը ճշմարտությունից ետ կդարձնեն*» (Բ Տիմոթեոս 4.3,4):

Ուշադրություն դարձրեք, որ վերևի խոսքում Պողոսը գրում է, որ «ոմանք հավատքից կհեռանան»: Նա չի խոսում այստեղ երևակայական հավատքի մասին, այլ՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ճշմարիտ հավատքի: Որպեսզի այս մարդիկ հեռանային հավատքից, նրանք պետք է մի ժամանակ հավատքի մեջ լինեին:

Ես ներկայացրի աստվածաշնչյան հատվածներ գրեթե բոլոր նորկտակարանյան հեղինակներից այն մասին, որ հավատացյալները կարող են հեռանալ հավատքից: Այժմ թույլ տվեք մեջբերել ակնառու եկեղեցական հայրերի աշխատություններից, որոնցից մի քանիսը Նոր կտակարանի հեղինակների գործակիցներն էին: Ես տեսնում եմ, որ նրանց խոսքերը լիովին համապատասխանում են այն աստվածաշնչյան հատվածներին, որոնք մենք ուսումնասիրեցինք:

> «Ուրեմն, եկեք արդարությամբ վարվենք, որ պահպանենք մեր փրկությունը մինչև վերջ»:
>
> – Կղեմես Հռոմեացի[3]

> «Նույնիսկ այն դեպքում, եթե ինչ-որ մեկը կատարած լինի մեծագույն բարի գործերն իր կյանքի ընթացքում, բայց վերջում գլխակորույս անօրինության գիրկն ընկնի, նրա բոլոր նախկին ջանքերն անօգուտ կլինեն նրա համար: Որովհետև նա թողեց իր բաժինն իր կյանքի վերջում»:
>
> – Կղեմես Ալեքսանդրիացի[4]

> «Ոմանք մտածում են, որ Աստված պարտավոր է շնորհել նույնիսկ անարժաններին այն, ինչ խոստացել է [տալ]: Այնպես որ, նրանք կար-

ծում են, որ Նա ստրկացված է Իր իսկ առատաձեռնությանը... Որովհետև՝ չէ՞ որ շատերն են հետագայում ընկնում [շնորհքից]: Մի՞թե այս պարգևը չի վերցվում շատերից»:

– Տերտուղիանոս[5]

«Մարդը կարող է ունենալ ձեռք բերված արդարություն, որից հնարավոր է ընկնել»:

– Օրիգենես[6]

«Նա զրկում է ժառանգությունից այն մարդկանց, ովքեր չեն հնազանդվում Իրեն, և նրանք դադարում են Նրա որդիները լինելուց»:

– Հիրինեոս[7]

Լսելով իմ դիրքորոշումն աստվածաշնչյան ճշմարտությունների վերաբերյալ՝ ոմանք սխալմամբ ասել են ինձ. «Ձո՛ն, դու արմինիական ես»: Այս տերմինը հետևյալ կերպով է սահմանվում բառարանում. «Առնչվող Հակոբոս Արմինիոսի և նրա հետևորդների աստվածաբանության հետ, ովքեր մերժեցին կալվինիստական վարդապետությունները նախասահմանության և ընտրության մասին, և հավատում էին, որ մարդու ազատ կամքը համատեղելի է Աստծո գերիշխանության հետ»[8]:

Ես հասարակ պատասխան եմ տալիս նման մարդկանց. «Ո՛չ, ես ո՛չ կալվինական եմ, ո՛չ արմինիական: Ես քրիստոնյա եմ, ով հավատում է, որ Աստվածաշունչը՝ Աստծո անսխալական Խոսքն է»:

Հակոբոս Արմինիոսն ապրում էր շատ ավելի ուշ Աստվածաշնչի հեղինակներից, և նույնիսկ ավելի ուշ, քան առաջին եկեղեցու առաջնորդները, որոնց մենք մեջբերեցինք վերևում: Մի՞թե դուք կարող եք արմինիական անվանել այդ հեղինակներին: Ակնհայտ է, որ չեք կարող, քանի որ նրանք ապրում էին և գրում էին Արմինիոսի ծնվելուց շատ առաջ: Այն, ինչ ես գրում եմ, անձնական գաղափար, հասկացություն կամ համոզմունք չէ, այլ՝ նորկտակարանյան ճշմարտություն, որը պարզորեն հայտնված է Աստվածաշնչում: Աստված շատ պարզորեն փոխանցել է Իր զգուշացումը մեզ՝ հավատացյալներիս: Մենք պետք է զգույշ լինենք, որ կախված չլինենք աստվածաբանական դպրոցներից, այլ բաց լինենք Աստվածաշնչի համատեքստի համար, որը ներշնչված է Սուրբ Հոգով, որովհետև.

«Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց և օգտակար է՝ սովորեցնելու մեզ այն, ինչը ճշմարիտ է, և հասկացնելու, թե ինչն է սխալ մեր կյանքում: Այն շտկում է մեզ և սովորեցնում է ճիշտ վարվել: Այն Աստծո միջոցն է՝ մեզ ամեն կերպով պատրաստելու համար...» (Բ Տիմոթեոս 3.16,17, NLT):

Հետաքրքիր է նշել, որ այն կեղծ առաջնորդները, որոնց Հիսուսը խստորեն զգուշացնում և հանդիմանում էր, համախմբվել էին տարբեր աստվածաբանական դպրոցների շուրջ և սովորեցնում էին դրանց համաձայն: Այնուամենայնիվ, Աստվածաշնչում բազմիցս գրված է Հովհաննես Մկրտչի, Հիսուսի և այլ մարդկանց մասին, ովքեր խոսում էին ճշմարտությունը, որ նրանք սովորեցնում էին «...իշխանություն ունեցողի պես... և ոչ թե դպիրների պես» (Մատթեոս 7.29): Այս պատճառով Պողոսը խրատում է Տիտոսին. «Այս բաները խոսի՛ր և հորդորի՛ր և հանդիմանի՛ր ամբողջ սաստկությամբ (կամ՝ իշխանությամբ)» (Տիտոս 2.15): Նա նույնպես գրում է Տիմոթեոսին. «...որ Եփեսոսում մնաս... որ պատվիրես ոմանց, որ օտար ուսմունք չսովորեցնեն» (Ա Տիմոթեոս 1.3): Պողոսը նույնպես կարգադրեց Տիմոթեոսին հետևյալը.

> «Ազդարարի՛ր և քարոզի՛ր Խոսքը: Պահի՛ր քո հրատապության զգացումը [եղի՛ր հասանելի, մոտ և պատրաստ], անկախ այն բանից՝ հնարավորությունը բարենպա՞ստ է թվում, թե՞ ոչ [Անկախ այն բանից՝ հարմա՞ր է, թե՞ անհարմար, ցանկալի՞ է, թե՞ անցանկալի, դու՝ որպես Խոսքի քարոզիչ, պետք է ցույց տաս մարդկանց, թե ինչ կերպով են նրանց կյանքերը սխալ]: Եվ համոզի՛ր նրանց՝ հանդիմանելով և շտկելով, զգուշացնելով և հորդորելով և խրախուսելով՝ առանց թուլանալու և հոգնելու, համբերությամբ և վարդապետությամբ» (Բ Տիմոթեոս 4.2, AMP):

Եփեսացիների 6-րդ գլխում Պողոսը խնդրում է աղոթել իր համար, որ՝ «...համարձակ լինեմ, ինչպես որ պետք է ինձ խոսել» (խոսք 20): Կարող եք տեսնել, որ այս հատկությունը բնորոշ է Աստծո բոլոր ճշմարիտ պատգամաբերներին: Նրանց իշխանությունն Աստծո Խոսքի մեջ է: Նրանք չեն համախմբվի անձնական զգացողությունների, աստվածաբանական դպրոցների կամ մեծամասնության կարծիքի շուրջ: Երբեմն մեծամասնությունը կարող է սխալ լինել: Մենք պետք է իմանանք, որ Աստված նկատի ունի այն, ինչ ասում է, և որ Նա ասում է այն, ինչ նկատի ունի:

Անարատ պահեք ձեզ

Ուսմունքը շնորհքից ընկնելու մասին, որն այնքա՜ն ակնհայտ է Աստվածաշնչում, ցնցում է առաջացրել ոմանց մոտ: Նրանք տագնապահար ինձ մոտ են եկել՝ ասելով. «Ես կարծում էի, որ մենք հավիտենական ապահովություն ունենք»:

Նման դեպքերում ես պատասխանում եմ. «Իհա՛րկե, դա ճիշտ է: Մենք ունենք հավիտենական ապահովություն: Հիսուսն ասաց, որ չի

կորցնի նրանց, ում Հայրը տվել է Իրեն (տե՛ս Հովհ. 18.9), քանի որ Նա չի թողնի և չի լքի մեզ: Բայց Նա չասաց, որ մենք չենք կարող թողնել Նրան»: Այս խոսքերից հետո մարդիկ սովորաբար մտահոգված հայացքով նայում են ինձ: Ես շարունակում եմ. «Եթե դուք ճշմարտապես սիրում եք Հիսուս Քրիստոսին, ինչո՞ւ պետք է ուզեք հեռանալ Նրանից: Դուք չեք ուրանա Նրան, եթե ճշմարտապես սիրեք Նրան»:

Եթե դուք սիրում եք Աստծուն, ձեզ համար դժվար չի լինի պահել Նրա պատվիրանները: Եթե Աստծուն ծառայելը պարտավորություն է դառնում, նշանակում է՝ դուք մուտք եք գործել օրինապաշտական հարաբերությունների մեջ, և ձեզ համար դժվար կլինի պահել Նրա պատվիրանները: Մենք չպետք է ծառայենք Աստծուն՝ Նրա հավանությունն ստանալու համար. մենք պետք է ծառայենք Աստծուն, որովհետև սիրահարված ենք Նրան:

Հուդան պատվիրում է մեզ պահել մեր սերը թարմ վիճակում, թեև եկեղեցում վատ ազդեցություններ կան: Նա գրում է. «Ձեր անձերն Աստծո սիրո մեջ պահեք՝ սպասելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմությանը հավիտենական կյանքի համար» (Հուդա 21): Մենք պետք է փնտրենք Տիրոջը ամեն օր և ամեն պահ: Մենք պետք է փափագենք Նրան և շարունակ փնտրենք Նրան, որ Նա ավելի զորավոր կերպով հայտնի Իրեն մեզ, որովհետև «նա, ով այս հույսն ունի Նրանում, սրբում է իր անձը, ինչպես որ Նա սուրբ է» (Ա Հովհաննես 3.3): Հովհաննեսը հատկապես խոսում էր Հիսուս Քրիստոսի հայտնության մասին:

Եթե փնտրեք Նրան և շփվեք Սուրբ Հոգու հետ, դուք երբեք չեք ցանկանա հեռանալ: Այնպես որ, ցնցվելու կարիք չկա: Իմ ամենասիրելի խոստումներից մեկն Աստվածաշնչում գտնվում է Հուդայի նամակի վերջում: Հուդան ասում է նրանց, ովքեր սիրահարված են մնում Աստծուն և փնտրում են Հիսուսի հայտնությունը.

> «Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ և անեղծ կանգնեցնել Իր փառքի առջև՝ անբիծ ցնծությամբ, այն մեկ իմաստուն Աստծուն և մեր Փրկչին փառք և մեծություն, զորություն և իշխանություն, և՛ հիմա, և՛ բոլոր հավիտյաններում: Ամե՛ն» (Հուդա 24,25):

Սա իմ ջերմեռանդ աղոթքն ու ցանկությունն է ձեզ համար:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼ
ԱՍՏՑՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ՄԻՄԻԱՅՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ
ՀՆԱՁԱՆԴՎԵԼՈՎ,

ՈՉ ԹԵ ՄԵՐ
ԲՆԱԿԱՆ ՏԱՂԱՆԴՆԵՐՈՎ։

- ՋՈՆ ԲԻՎԵՐ
#ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ



ՄԵՆՔ ՉԵՆՔ ԳԱԼԻՍ ՀԻՍՈՒՍԻ ՄՈՏ
ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

ՄԵՆՔ ԳԱԼԻՍ ԵՆՔ ՀԻՍՈՒՍԻ ՄՈՏ,
ՈՐՈՎՀԵՏԵՎ ***ՆԱ Է*** ԿՅԱՆՔԸ:

- ՋՈՆ ԲԻՎԵՐ

#ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

ԵԹԵ ԴՈՒՔ ՈՐՈՇԵՔ

ՉԿԱՏԱՐԵԼ ԱՅՆ ԿՈՉՈՒՄԸ,

ՈՐՆ ԱՍՏՎԱԾ ՏՎԵԼ Է **ՁԵՋ...**

...ՆԱ ԿՏԱ ԱՅՆ
ՄԵԿ ՈՒՐԻՇԻՆ:

- ՋՈՆ ԲԻՎԵՐ

#ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

ԵԹԵ **ԿԱՌՈՒՑԵՆՔ** ՄԵՐ ԿՅԱՆՔԸ
ԱՍՏՑՈ **ԽՈՍՔԻ**
ԱՆՓՈՓՈԽ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ,

ՄԵՆՔ **ՊԱՏՐԱՍՏ** ԿԼԻՆԵՆՔ
ՎՍՏԱՀԱԲԱՐ ՔԱՅԼ ԱՆԵԼՈՒ
ԴԵՊԻ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ:

- ՋՈՆ ԲԻՎԵՐ

#ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ

ԱՍՏՎԱԾ ԿԴԱՏԻ ՄԵՋ՝
ՀԱՄԱՁԱՅՆ **ԻՐ ԽՈՍՔԻ**,
*ՈՉ ԹԵ ՀԱՄԱՁԱՅՆ **ՄԵՐ***
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ։

- ՋՈՆ ԲԻՎԵՐ
#ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ



Ինձացե՛ք ավելին CloudLibrary.org կայքում.

ԳԼՈՒԽ 7

ՀԻՄՔԸ

«...Փոխգիջման չգնացող արդարը հավիտենական հիմք ունի»:
– Առակաց 10.25, AMP

Ախքան վերադառնալը Աֆաբելի այլաբանությանը և ներկայացնելը այն դատաստանները և վարձատրությունները, որոնք Եսասերը և Բարեգործն ստանալու են, մենք կամփոփենք այն, ինչի մասին խոսեցինք վերջին երեք գլուխներում: Եկեք վերհիշենք մի աստվածաշնչյան հատված, որը մեջբերված էր չորրորդ գլխում.

> «Ուրեմն, եկեք առաջ գնանք և անցնենք Քրիստոսի (Մեսիայի) ուսմունքների տարրական փուլից՝ հաստատուն կերպով առաջանալով դեպի ամբողջականությունը և կատարելությունը, որոնք հատուկ են հոգևոր հասունությանը: Եկեք կրկին չդնենք... հավիտենական դատաստանի և պատժի հիմքը: [Այս ամենը բաներ են, որոնց մասին դուք պետք է լիովին տեղյակ լինեիք շատ, շատ վաղուց]» (Եբրայեցիների 6.1,2, AMP):

Չունենալով հավիտենական դատաստանի և պատժի հաստատ հիմքը՝ մենք չենք կարողանա ճիշտ կառուցել մեր կյանքը Քրիստոսի մեջ: Որպես համեմատություն՝ պատկերացրեք, որ ինչ-որ մեկը փորձում է լավ կրթություն ստանալ՝ չունենալով հիմնարար գիտելիքներ տարրական դպրոցից, օրինակ՝ չիմանալով գրել և կարդալ:

Եթե ուշադրությամբ ուսումնասիրեք Ավետարանները, կնկատեք, որ Հիսուսն ավելի շատ խոսում էր դժոխքի մասին, քան Երկնքի: Նա անում էր դա, որպեսզի հիմք դներ մեր կյանքում, որը Տիրոջ երկյուղն է: Ահա մեկ օրինակ.

> «Ինչ որ ասել եք խավարում, կլսվի լույսում, և ինչ որ շշնջացել եք փակ դռների ետևում, հրապարակավ կազդարարվի տանիքներից: Թանկագին ընկերնե՛ր, մի՛ վախեցեք նրանցից, ովքեր ուզում են սպանել ձեզ: Նրանք կարող են սպանել միայն մարմինը և ավելին չեն կարող անել ձեզ հետ: Բայց ես կասեմ ձեզ, թե ումից վախենաք: Վախեցե՛ք Աստծուց, Ով ի զորու է սպանելու մարդկանց, իսկ հետո՝ նրանց դժոխք գցելու» (Ղուկաս 12.3–5, NLT):

Այս խոսքերը կտրուկ և հստակ են. երբ մենք հասկանում ենք հավիտենական պատժի և դատաստանի վարդապետությունը, Տիրոջ երկյուղը ամուր հաստատվում և մնում է մեր սրտերում:

Թույլ տվեք բացատրել: Միայն Աստված կարող է հավիտենությունը դժոխքում անցկացնելու դատավճիռ կայացնել: Այն, ինչ մենք խոսել ենք ծածուկում, ի հայտ կգա Նրա փառքի լույսի ներքո՝ դատաստանի ժամանակ: Հայտնի կդառնան ոչ միայն մեր խոսքերը, այլև մեր դրդապատճառները, վերաբերմունքը և գործերը: Աստծո երկյուղը մշտապես հիշեցնում է մեզ, որ ոչինչ չի կարող թաքնվել Նրանից, նույնիսկ՝ ամենածածուկ բաները: Մենք գիտենք, որ ոչինչ չի խուսափի Նրա դատաստանից, և որ Նրա դատաստանն արդար է: Եթե մենք չհասկանանք սա, կխաբվենք՝ հավատալով, որ Աստված անտեսում է կամ նույնիսկ չի տեսնում մեր անօրինությունները, և մխիթարություն կգտնենք ոչ սուրբգրային ողորմության մեջ, որն իրականում գոյություն չունի (ինչպես Խաբվածը, Հուսահատ սիրտը և Երկակի կյանքը): Մենք կարող ենք հեշտորեն դառնալ վերջին օրերի այն բազմաթիվ մարդկանցից մեկը, ովքեր շեղվում են անսասան նվիրումից դեպի անօրինությունը:

Նրանք, ովքեր չունեն այս հիմքը, կընկնեն մարդկանցից վախենալու ծուղակը, իսկ մարդն ի վերջո ծառայում է նրան, ումից վախենում է: Եթե վախենանք Աստծուց, մենք կհնազանդվենք Նրան՝ նույնիսկ ճնշման ներքո: Եթե վախենանք մարդուց, մենք տեղի կտանք մարդկանց, հատկապես՝ ճնշման ներքո, և կշեղվենք դեպի մեր հաճույքները, մարմնի ցանկությունները և հպարտությունը: Մարմնական բնությանը շարունակ տեղի տալը լուրջ հետևանքների կհանգեցնի: Այնպես որ, եթե չհասկանանք հավիտենական դատաստանի և պատժի իրողությունը, մենք կթերանանք Տիրոջ երկյուղի մեջ, քանի որ սուրբ երկյուղածությունը Քրիստոսի դատաստաններից՝ Տիրոջ երկյուղի կողմերից մեկն է: Պողոսը ձևակերպում է այս միտքը հետևյալ կերպով.

> «Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի (կամ՝ հատուցում ստանա) իր մարմնով՝ ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար: Արդ Տիրոջ ահավորությունը գիտենալով՝ մարդկանց համոզում ենք...» (Բ Կորնթացիների 5.10,11):

Պողոսը նկատի չուներ Մեծ Սպիտակ գահի դատաստանը (որի մասին Հիսուսը խոսում էր Ղուկաս 12-րդ գլխում), որի ժամանակ մարդիկ դատապարտվելու են և դժոխք են գնալու: Նա խոսում էր հավատացյալների դատաստանի մասին: Մենք կսկսենք խոսել այս դատաստանի մասին հաջորդ գլխում, բայց ուշադրություն դարձրեք, որ Պողոսը հա-

վասարեցնում է Տիրոջ երկյուղը Քրիստոսի ատյանին: Նա նույնիսկ «Տիրոջ ահավորություն» է անվանում Քրիստոսի ատյանը: Իմաստն այն է, որ անկարելի է առանձնացնել Տիրոջ երկյուղը դատաստանի մասին պատկերացումից, և որ Տիրոջ երկյուղը ողջամիտ կյանքի բանալին է:

Լսե՛ք Եսայի մարգարեի խոսքերը. «Նա կլինի քո ժամանակների հաստատ հիմքը, փրկության, իմաստության և գիտելիքի առատ պաշար. Տիրոջ երկյուղը՝ այս գանձի բանալին է» (Եսայի 33.6, NIV):

Սուրբ երկյուղը՝ Աստծո հաստատ հիմքի բանալին է: Հիշե՛ք Հիսուսի խոսքերը՝ մեջբերված նախորդ գլուխներում, որոնցում Նա խոսում էր այն բազմությունների մասին, որոնք հրաշքներ են գործելու Իր անունով, բայց մերժվելու են՝ գնալով դեպի հավիտենական պատիժը: Զարմանալի չէ, որ Մատթեոս 7-րդ գլխում՝ այդ խոսքերից հետո, Հիսուսն անմիջապես սկսեց բացատրել, որ նրանց անկման պատճառը՝ նրանց հիմքն էր: Նրանք կառուցել էին իրենց կյանքն այնպիսի մտածելակերպերի և համոզմունքների վրա, որոնք չէին կարող դիմանալ կյանքի փոթորիկներին: Հիսուսի խոսքերով՝

> «Ուրեմն, ամեն մեկը, ով լսում է Իմ այս խոսքերը և հնազանդվում է, նման է իմաստուն մարդու, ով կառուցում է իր տունը ժայռի վրա: Անձրևը տեղաց, գետերը վարարեցին, և քամին ուժգնորեն փչեց այդ տան վրա: Բայց այն չընկավ, որովհետև կառուցված էր ժայռի [Աստծո հաստատ հիմքի՝ Տիրոջ երկյուղի] վրա:
>
> Բայց ամեն մեկը, ով լսում է իմ այս խոսքերը և չի հնազանդվում դրանց, նման է հիմար մարդու, ով կառուցեց իր տունն ավազի վրա: Անձրևը տեղաց, գետերը վարարեցին, քամին ուժգնորեն փչեց այդ տան վրա, և այն ընկավ: Եվ որքա՜ն սարսափելի էր այդ անկումը» (Մատթեոս 7.24–27, TEV):

Այն մարդիկ, ովքեր համբերում են մինչև վերջ, դիմանում են փոթորիկներին իրենց ամուր հիմքի շնորհիվ: Այդ հիմքը՝ Տիրոջ երկյուղն է, որը կայունություն է բերում մեր կյանքում: Այն Աստծո հարստության պահոցն է: Նրա փրկությունը, իմաստությունը և գիտելիքը՝ ամեն ինչ պահված է դրանում:

Տիրոջ երկյուղը

Ի՞նչ է Տիրոջ երկյուղը: Մի՞թե այն նշանակում է՝ սարսափ զգալ Աստծո հանդեպ: Իհարկե՝ ոչ: Ինչպե՞ս մենք կարող ենք մտերմություն ունենալ Տիրոջ հետ (ինչը Նրա սրտի ցանկությունն է), եթե վախենանք Նրանից: Երբ Աստված եկավ՝ հայտնելու Իրեն Իսրայելին, Նրա նպա-

տակը՝ ժողովրդի հետ շփվելն էր այնպես, ինչպես Նա շփվում էր Մովսեսի հետ, բայց ամբողջ ժողովուրդը փախավ՝ հրաժարվելով մոտենալ Նրան: Մովսեսն ասաց ժողովրդին. «*Մի՛ վախեցեք*, որովհետև Աստված եկել է, որ փորձի ձեզ, և *որ Նրա վախը ձեր առջև լինի*, որ դուք չմեղանչեք» (Ելից 20.20, NKJV):

Թվում է՝ Մովսեսը հակասում էր ինքն իրեն, բայց այդպես չէ: Նա տարբերակում էր Աստծուց վախենալու և Տիրոջ երկյուղի միջև, քանի որ դրանցում տարբերություն կա: Այն մարդը, ով վախենում է Աստծուց, թաքցնելու բան ունի: Հիշե՛ք, թե ինչ արեց Ադամը, երբ անհնազանդություն ցուցաբերեց Եդեմի պարտեզում. նա թաքնվեց Տիրոջ ներկայությունից: Այնուամենայնիվ, Աստծո երկյուղն ունեցող մարդը վախենում է հեռու լինել Աստծուց և փախչում է անհնազանդությունից: Այնպես որ, սուրբ երկյուղի առաջին սահմանումն է՝ սարսափել Աստծուց հեռու լինելուց:

Եկեք շարունակենք բացատրել Տիրոջ երկյուղը: Տիրոջ երկյուղն ունենալը նշանակում է՝ պատվել, արժևորել, գնահատել, նաև՝ հարգանքով և երկյուղածությամբ վերաբերվել Նրան շատ ավելի, քան ցանկացած մարդու, առարկայի կամ երևույթի: Տիրոջ երկյուղը նշանակում է՝ սիրել այն, ինչ Նա է սիրում, և ատել այն, ինչ Նա է ատում: Այն, ինչը կարևոր է Նրա համար, կարևոր է մեզ համար, և այն, ինչը կարևոր չէ Նրա համար, կարևոր չէ նաև մեզ համար: Երբ ունենք Նրա երկյուղը, մենք *դողում ենք Նրա Խոսքից*, ինչը նշանակում է, որ մենք անմիջապես հնազանդվում ենք Նրան, նույնիսկ երբ դա անիմաստ է թվում, երբ դա ցավ է պատճառում մեզ, և երբ չենք տեսնում ոչ մի շահ դրանից: Եվ մենք հնազանդվում ենք մինչև վերջ: Տիրոջ երկյուղի դրսևորումը՝ Նրա Խոսքին, ճանապարհներին և պատվիրաններին հնազանդվելն է:

Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Տիրոջ երկյուղը իմաստության սկիզբն է: Կարելի է նաև ասել, որ այն իմաստության *հիմքն* է: Իմաստությունը, որի մասին մենք խորապես կխոսենք հաջորդ գլուխներում, նշանակում է հետևյալը. գիտելիք և կարողություն՝ ճիշտ ժամանակին ճիշտ որոշումներ կայացնելու համար: Այն մարդիկ, ովքեր, գտնվելով ճնշման ներքո, սխալ որոշումներ են կայացնում, իմաստության պակաս ունեն, իսկ իմաստության աղբյուրը Տիրոջ երկյուղն է:

Աստվածաշունչը հայտնում է, որ մեր կյանքը կարելի է համեմատել տուն կառուցելու հետ: Նախ դրվում է հիմքը, իսկ հետո կանգնեցվում է հիմնակառույցը: Գրված է. «Տունը կշինվի իմաստությամբ» (Առակաց 24.3): Եթե մենք կառուցենք մեր կյանքը՝ կայացնելով ճիշտ որոշումներ, մենք կապրենք ճիշտ կերպով և վստահությամբ կկանգնենք Քրիստոսի ատյանի առջև: Իմաստության սկիզբը կամ հիմքը՝ Տիրոջ երկյուղն է:

Ինչպե՞ս չշեղվել

Քրիստոնյաները չէին շեղվի, եթե Տիրոջ երկյուղն ամուր տնկված լիներ նրանց սրտերում: Մենք չէինք սայթաքի կամ շեղվի Հիսուսի հանդեպ մեր անսասան նվիրումից: Մենք չէինք թերագնահատի Նրա Խոսքը, և ո՛չ էլ թեթևորեն կվերաբերվեինք դրան: Մենք սիրախաղ չէինք անի մեղքի հետ, ինչի պատճառով հավատացյալի սիրտը խստանում է, և, ի վերջո, նա ընկնում է շնորհքից (տե՛ս Եբր. 3.12,13): Մենք միշտ կիմանայինք, որ այն, ինչ ասված և արված է ծածուկում, հրապարակավ ազդարարվելու է Քրիստոսի ատյանում:

Ահա թե ինչ ասաց Աստված Երեմիային Նոր կտակարանի հավատացյալների մասին.

> «Եվ նրանք ինձ համար կլինեն ժողովուրդ, և Ես կլինեմ նրանց համար Աստված: Եվ Ես կտամ նրանց մեկ սիրտ և մեկ ճանապարհ, որ Ինձնից վախենան ամեն ժամանակ (կամ՝ հավիտյան), որ լավ լինի իրենց համար և իրենցից հետո իրենց որդիների համար: Եվ Ես հավիտենական ուխտ եմ դնում նրանց հետ, որ ետ չդառնամ նրանցից՝ նրանց բարություն անելուց, և Իմ երկյուղը կդնեմ նրանց սրտերում, որ Ինձնից չհեռանան» (Երեմիա 32.38–40):

Ուշադրություն դարձրեք՝ Աստված ասում է Իր ժողովրդի մասին. *«...որ Ինձնից վախենան ամեն ժամանակ (կամ՝ հավիտյան)... որ Ինձնից չհեռանան»:*

Ես հիշում եմ մի հավաքույթ Մալազիայում, որտեղ զորավոր կերպով հայտնվեց Տիրոջ երկյուղի Հոգին: Այդ հավաքույթին ներկա էին մարդիկ երկրագնդի ամբողջ արևելյան կիսագնդից. դահլիճը, որտեղ քարոզում էի, լեփ-լեցուն էր Աստվածաշնչյան դպրոցի ուսանողներով, հովիվներով և շատ այլ մարդկանցով: Արդեն ծառայության ավարտին շատերը պառկած էին հատակին՝ բեմահարթակի մոտ, և անվերահսկելի կերպով լաց էին լինում:

Տիրոջ սարսափն այնքա՜ն զարմանալի էր այդ վայրում: Հանկարծ ես մտածեցի. *«Զոն Բիվեր, եթե մեկ սխալ շարժում անես կամ մեկ սխալ բան ասես, դու կմեռնես այստեղ»*: Արդյո՞ք դա տեղի կունենար: Ես չգիտեմ, բայց կարող եմ ասել, որ Նոր կտակարանում գրված է մի տղամարդու և մի կնոջ մասին, ովքեր սխալ վարվեցին այդպիսի մթնոլորտում և մահացան: Նրանց դատաստանի անմիջական արդյունքն այն էր, որ «մեծ ահ եղավ ամբողջ եկեղեցու վրա և ամենքի վրա, որ այս լսեցին» (Գործք 5.11):

Այդ հավաքույթից հետո մի զույգ Հնդկաստանից մոտեցավ ինձ և ասաց.

– Զո՛ն, մենք այնպիսի՛ մաքրություն ենք զգում մեր ներսում:

– Այո՛, ես՝ նույնպես,– պատասխանեցի:

Հաջորդ առավոտյան իմ հյուրանոցային համարում էի և գտա այս խոսքը. «Տիրոջ վախը սուրբ է, *մնում է հավիտյան»* (Սաղմոս 19.9):

Սուրբ Հոգին անմիջապես խոսեց սրտիս. «Լյուցիֆերը հրեշտակ էր, որը ղեկավարում էր երկնային երկրպագությունը: Նա օծված էր, գեղեցիկ էր և օրհնված էր, բայց չէր վախենում Ինձնից. *նա չմնաց հավիտյան»:*

Ես մտորում էի սրա շուրջ և հանկարծ լսեցի. «Հրեշտակների մեկ երրորդը, ովքեր շրջապատում էին Իմ գահը և տեսնում էին Իմ փառքը, չէին վախենում Ինձնից: *Նրանք չմնացին հավիտյան»:*

Ես ցնցված էի այն բանով, ինչ Աստված հայտնեց ինձ: Ես կրկին լսեցի. «Ադամը և Եվան քայլում էին Իմ փառքի ներկայության մեջ: Նրանք շփվում էին Ինձ հետ, բայց չէին վախենում Ինձնից: *Նրանք չմնացին Իմ ներկայության մեջ հավիտյան»:*

Տիրոջ երկյուղը հարատևելու կարողություն է տալիս մեզ: Դրա շնորհիվ մենք մշտապես հնազանդ ենք Աստծո Խոսքին: Աստվածաշունչն զգուշացնում է հավատացյալներին. «Ուրեմն, քանի դեռ Նրա հանգիստը մտնելու խոստումը մնում է, եկեք *վախենանք*, որ չլինի, թե ձեզնից մեկը զրկվի դրանից» (Եբրայեցիների 4.1, NKJV): Հետաքրքիր է, որ հեղինակն օգտագործել է «վախ» բառը, ոչ թե «սեր»-ը: Աստծո վախն է, որ թույլ չի տալիս մեզ վերադառնալ դեպի մեղքը:

Հայտնի ավետարանիչը

Ես երբեք չեմ մոռանա իմ այցելությունը մի հայտնի ավետարանչի, ով իր հնգամյա ազատազրկման վերջին տարին անցկացնում էր բանտում: Նրա բանտարկությունը հայտնի էր դարձել ամբողջ աշխարհում և մեծ նախատինք էր բերել Աստծո թագավորության վրա: Այնուամենայնիվ, բանտում գտնվելու վերջին տարվա ընթացքում նա իրական հանդիպում էր ունեցել Տիրոջ հետ: Մեր տեսակցության ժամանակ առաջին բաներից մեկը, որ նա ասաց ինձ, հետևյալն էր.

– Զո՛ն, այս բանտը Աստծո դատաստանը չէր ինձ համար, այլ՝ Նրա ողորմությունը:

Եթե ես շարունակեի ապրել այնպես, ինչպես ապրում էի, ես կանցկացնեի հավիտենությունը դժոխքում:

Նա անմիջապես գրավեց իմ ուշադրությունը: Ես հասկացա, որ խոսում էի կոտրված սիրտ ունեցող Աստծո մարդու և Քրիստոսի ճշմարիտ ծառայի հետ: Ես գիտեի, որ նրա ծառայության սկզբում նա շատ էր սի-

ռահարված Հիսուսին: Նրա ջերմեռանդությունն ակնհայտ էր: Ինձ համար հարց էր, թե ինչպե՞ս նա այդքան հեռացավ Տիրոջից՝ լինելով իր ծառայության գագաթնակետին: Ես հարցրի նրան.

– Ե՞րբ դուք դադարեցիք սիրել Հիսուսին:

Նա նայեց ինձ և անվարան պատասխանեց:

– Երբե՛ք:

Ես տարակուսած պատասխանեցի.

– Իսկ ինչպե՞ս կբացատրեք ձեր փոստային խարդախությունները և շնությունը ձեր ծառայության վերջին յոթ տարիների ընթացքում՝ այն ամենը, ինչի համար դուք հիմա բանտում եք:

– Ձո՛ն,– պատասխանեց նա,– ես սիրում էի Հիսուսին ամբողջ այդ ընթացքում, բայց չէի վախենում Աստծուց: Նա իմ կյանքի գերագույն իշխանը չէր:

Դրանից հետո նա ասաց այնպիսի բան, ինչը գրավեց իմ ուշադրությունը.

– Ձո՛ն, Ամերիկայում ինձ նման միլիոնավոր քրիստոնյաներ կան: Նրանք անվանում են Հիսուսին իրենց Փրկիչը և սիրում են Նրան, բայց որպես իրենց գերագույն Տեր՝ չեն վախենում Նրանից:

Իմ ներսում լույս սփռվեց այս հարցում: Ես հասկացա, որ մենք կարող ենք սիրել Հիսուսին, բայց միայն դա ետ չի պահի մեզ անկումից: Մենք պետք է նույնպես վախենանք Աստծուց: Հիշե՛ք Մովսեսի խոսքերը. «Աստված եկել է, որ փորձի ձեզ, և *որ Նրա վախը ձեր առջև լինի, որ դուք չմեղանչեք»* (Ելից 20.20, NKJV): Տիրոջ երկյուղն է, որ հարատևելու կարողություն է տալիս մեզ, որպեսզի չհեռանանք Աստծուն հնազանդվելուց, ինչպես Լյուցիֆերը, հրեշտակների մեկ երրորդը, ինչպես Ադամը, և ինչպես այն մարդիկ եկեղեցում, ովքեր կնահանջեն այս վերջին օրերում:

Կատարե՛ք ձեր փրկությունը

Այս պատճառով Պողոսը պատվիրում է մեզ. «Գործե՛ք (մշակեք, *իրագործեք* և *լիովին ավարտին հասցրեք)* ձեր փրկությունը *երկյուղածությամբ* և *ահով* և *դողալով* (անվստահությամբ սեփական անձի հանդեպ, լուրջ զգուշավորությամբ, խղճի զգայունությամբ, հսկելով ընդդեմ գայթակղությունների, երկչոտությամբ խուսափելով ցանկացած բանից, ինչը կարող է վիրավորել Աստծուն և վարկաբեկել Քրիստոսի անունը)» (Փիլիպեցիների 2.12, AMP): Մենք իրագործում և ավարտին ենք հասցնում մեր փրկությունը երկյուղած *ահով և դողալով:* Մենք պահ-

պանում ենք գիտակցումն այն մասին, որ ամեն մի միտք, խոսք և գործ ի հայտ է գալու դատաստանի ժամանակ: Հիշելով այս մասին՝ մենք մնում ենք խոնարհ, սթափ, զգայուն և տեղյակ անհնազանդության դրդող գայթակղությունների մասին: Գիտակցումն այս մասին դրդում է մեզ մշտապես հեռու մնալ այն ամենից, ինչը կարող է տհաճ լինել Աստծո համար:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չի ասում, որ մենք լիովին ավարտին ենք հասցնում մեր փրկությունը սիրով և բարությամբ: Տիրոջ երկյուղն ուժ է տալիս մեզ, որ չընկնենք Նրա շնորհքից և չգլորվենք անօրինության մեջ: Մյուս կողմից՝ Աստծո սերը հեռու է պահում մեզ օրինապաշտությունից, ինչը նույնպես կործանում է մտերմությունն Աստծո հետ: Մեր սերն Աստծո հանդեպ նույնպես խթանում է մեր դրդապատճառները և մտադրությունները՝ պահելով մեր եռանդը, և օգնելով չշեղվել ճշմարտությունից: Մեր կյանքում պետք է գործեն այս երկու մեծ ուժերը՝ սերը և երկյուղը, որպեսզի առողջ հարաբերություններ ունենանք Աստծո հետ: Այս պատճառով Պողոսն անվանում է Աստծուն մեր երկնային Հայրը և Աբբան (ինչը նշանակում է՝ Հայրիկ), բայց նույնպես ասում է, որ մեր Աստված՝ փչացնող կրակ է (տե՛ս Եբր. 12.29): Նա սեր է, բայց Նա նույնպես արդար և սուրբ Դատավոր է: Եթե չվախենանք Նրանից, մենք չենք հարատևի, իսկ Հիսուսը շարունակ ասում է. «Ով որ համբերի մինչև վերջ, նա կապրի» (Մատթեոս 10.22):

Մեր ազդեցությունը

Մենք պետք է հիմնավոր պատկերացում ունենանք հավիտենական դատաստանի և պատժի վարդապետության մասին ևս մեկ կարևոր պատճառով, որը մեր ազդեցությունն է այլ մարդկանց վրա: Եթե չունենանք Տիրոջ երկյուղը, մենք կփոխանցենք մարդկանց ոչ հավասարակշռված Ավետարան՝ խոսքով կամ գործով: Արդյունքում մեր ազդեցության ներքո գտնվող մարդկանց կարող է նահանջի և նույնիսկ հավիտենական կորստի վտանգ սպառնալ:

Եթե մենք՝ Ավետարանի ուսուցիչներս և հովիվներս, չիմանանք այս հիմնարար վարդապետությունները, մենք չափից շատ կշեշտադրենք օրհնված, բարգավաճ և երջանիկ կյանքի սկզբունքները, որոնց մասին սովորեցնում է Աստվածաշունչը: Այս սկզբունքները կգործեն այնպես, ինչպես նախատեսված է. դրանք կբերեն առողջություն, ֆինանսական հաջողություն, խաղաղություն, ավելի լավ հարաբերություններ մարդկանց հետ և այլն: Այնուամենայնիվ, չունենալով հիմնավոր պատկերա-

ցում հավիտենական դատաստանների մասին՝ մենք կխուսափենք քարոզելուց խաչի մասին և այն գնի մասին, որը պետք է վճարել՝ Հիսուսին հետևելու համար: Մենք ավելի շուտ կքարոզենք ուղերձներ, որոնք հաճելի են մարդկանց, քան կոչ կանենք ամեն գնով դնել մեր կյանքն Աստծո համար:

Եթե մենք չշարժվենք հավիտենությամբ, մենք կապրենք և կհաղորդակցվենք մարդկանց հետ՝ առաջին հերթին փնտրելով մեր օգուտն այս կյանքում, ոչ թե դիտարկելով կյանքը հավիտենական տեսանկյունից: Մենք կսովորեցնենք մարդկանց ապրել այսօրվա օրով, ոչ թե ապրել՝ ինչպես նահապետները, ովքեր սպասում էին «այն հիմունքով հաստատված քաղաքին, որի ճարտարապետը և արարիչն Աստված է» (Եբրայեցիների 11.10):

Այո, այս կյանքում կան վարձատրություններ Աստծո սկզբունքներին հնազանդ լինելու համար, և մենք շատ մանրամասնորեն սովորեցրել ենք այդ մասին: Բայց չմոռանանք, որ մեր կյանքն այս երկրի վրա ժամանակավոր է: Մենք պետք է հաջողության հասնենք այս կյանքում, բայց պետք է անենք դա՝ համաձայն Երկնքի չափանիշների, ոչ թե՝ համաձայն մեր մշակույթի: Մեր իրական տունն այստեղ չէ:

Ուշադրությա՛մբ կարդացեք այն սրբերի դրդապատճառների մասին, ովքեր թողեցին այս աշխարհը՝ Աստծուն հետևելու համար:

> «Սրանք ամենը մեռան հավատքի մեջ՝ առանց խոստումներն ստանալու, այլ հեռվից տեսնում էին նրանց և ուրախանում, և բարևում էին ու դավանում, թե օտարներ և պանդուխտներ են երկրում: Որովհետև այնպիսի բաներ խոսողները հայտնի ցույց են տալիս, որ մի հայրենիք են որոնում: Եվ եթե այն էին հիշում, որից դուրս եկան, ապաքեն ժամանակ ունեին ետ դառնալու: Բայց հիմա ավելի ազնիվն են ցանկանում, այսինքն՝ երկնավորը, և նրա համար Աստված ամոթ չի համարում՝ նրանց Աստվածը կոչվելու, որովհետև մի քաղաք է պատրաստել նրանց համար» (Եբրայեցիների 11.13–16):

Այն հայրենիքը, որն այս սրբերը որոնում էին, Աստծո քաղաքն է՝ Նոր Երուսաղեմը, որին մենք կուղղենք մեր ուշադրությունը մինչև գրքի ավարտը: Այն մարդիկ, ովքեր կապրեն այս քաղաքում, կոչվում են *հաղթողներ:* Նրանց վարձատրությունը կլինի անսահմանորեն ավելին, քան լավագույն կյանքը, որն այս աշխարհը կարող է առաջարկել:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ԵՐԵՔ, ԳԼՈՒԽՆԵՐ 6,7

1. Ձեր կարծիքով՝ Քրիստոսին հետևելու առավելություններից ո՞րը կարող է ավելի գայթակղիչ լինել ձեզ համար, քան մտերմությունն անձամբ Հիսուսի հետ: Ի՞նչը կարող է օգնել ձեզ, որ մշտապես ուղղեք ձեր սիրտն ամենակարևոր նպատակին:

2. Այն միտքը, որ հավատացյալը կարող է իր կամքով հեռանալ հավատքից, սթափեցնող է: Այն հակասո՞ւմ է ձեր համոզմունքներին: Պատասխանե՛ք այս հարցին հետևյալ ճշմարտության լույսի ներքո. որպես հավատացյալներ՝ մենք պետք է ապրենք ոչ թե վախով, այլ՝ Տիրոջ երկյուղով:

3. Մտածե՛ք անողորմ ծառայի առակի մասին, որը գրված է Մատթեոս 18.23–35-ում: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է Աստված այդքան լուրջ վերաբերվում ներմանը:

4. Ձեր բառերով նկարագրե՛ք, թե ինչպես սխալական շեշտադրումն Աստծո ողորմության վրա, որը հավասարակշռված չէ սուրբ երկյուղով, կարող է խաբեության տանել հավատացյալին:

5. Մեր պատկերացումը հավիտենության մասին ազդում է ոչ միայն մեզ վրա, այլև՝ մեզ շրջապատող մարդկանց: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է քարոզել Աստծուն հետևելու երկրային առավելությունների մասին (օրինակ՝ առողջության, հաջողության կամ ներքին բավականության)՝ չշեղվելով մեր ամենակարևոր նպատակից:

ԲԱԺԻՆ ՉՈՐՍ

ԳԼՈՒԽ 8

ԱՖԱԲԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ Բ

«...Ես Նա եմ, Ով քննում է մտքերը (մտածմունքները, զգացմունքները և մտադրությունները) և [ներսի] սրտերը, և Ես կտամ ձեզնից ամեն մեկին [վարձատրությունը ձեր կատարածի համար], ինչին որ ձեր գործն արժանի է»:
— Հայտնություն 2.23, AMP

Վերադառնանք Աֆաբելի թագավորության այլաբանությանը և պարզենք, թե ինչ կատարվեց Եսասերի և Բարեգործի հետ: Նրանց միջոցով մենք կարևոր բացահայտումներ կանենք հավատացյալների դատաստանի մասին, որոնցից մեկն այն է, որ բոլոր հավատացյալները հավասար վարձատրություն չեն ստանա:

Հավատացյալների դատաստանը

Այս դատաստանը տեղի ունեցավ առավոտյան՝ կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ էնդելցիները Մեծ սրահ եկան: Մոտավորապես հինգ հարյուր էնդելցիներ սպասում էին Կյանքի սրահում՝ հուզմունքով ակնկալելով իրենց առաջին հանդիպումը Ձեյլոն թագավորի հետ: Բարեգործը և Եսասերը գտան և՛ հին, և՛ նոր ընկերների և զրուցում էին նրանց հետ, երբ հանկարծ Թագավորական պահապանները սրահ մտան: Բոլոր խոսակցությունները դադարեցին, երբ Գլխավոր պահապանը դիմեց նրանց.

– Շուտով դուք կկանգնեք ձեր թագավորի առջև: Նա միշտ սիրել է ձեզ և փափագել է այս օրվան: Թեև դուք երբեք չեք հանդիպել, Նա տեսել է ձեզ: Նա տեսել է ձեր սիրտը և ձեր պտուղը: Նա գիտի ձեր սիրտը, ձեր դրդապատճառները, ձեր մտքերը և ձեր զգացմունքները, ինչպես նաև՝ ձեր գործերը: Ոչինչ ծածուկ չի եղել: Իմացե՛ք, որ Նրա դատաստանն արդար է: Ոչ ոք չի անտեսվի, և ոչ ոքի կյանքը սխալ չի ներկայացվի:

Գլխավոր պահապանը շարունակեց՝ հրահանգելով նրանց, թե ինչպես պետք է ուղեկցվեին Մեծ սրահ, և թե ինչպիսին էր անհրաժեշտ ընթացակարգը Մեծ սրահում: Հրահանգավորումն ավարտելուց հետո նա հայտարարեց.

– Առաջինը Ձեյլոն թագավորի մոտ է գնալու Եսասերը: Առա՛ջ արի, որ ուղեկցենք քեզ Մեծ սրահ:

Եսասերը և նրա դատաստանը

Եսասերը ենթադրեց, որ առաջինն է կանչվել, քանի որ ինքը քաղաքապետ է եղել էնդելում: Նա վստահ էր, որ առատ վարձատրություն է ստանալու թագավորի արտաքին տիրույթներում ղեկավար լինելու համար: Նա հիշում էր Հին գրվածքների ուսմունքներից, որ նրանք, ովքեր հավատարիմ էին համարվելու էնդելում, վարձատրություններ և իշխանական դիրք էին ստանալու Աֆաբելում: Էնդելը բարգավաճում էր նրա երկամյա պաշտոնավարման ընթացքում: Նա վստահություն էր զգում թագավորի հետ հանդիպման գնալիս:

Մեծ սրահի դռները բացվեցին, և Եսասերն ուղեկցվեց թագավորի ներկայության մեջ: Նրա վրա խիստ տպավորություն գործեց այդ հոյակերտ սրահի մեծությունը: Նա նկատեց, որ այն գրեթե ամբողջովին լի էր մարդկանցով: Բոլոր ներկաները կանգնած էին: Եսասերը զարմացավ՝ դատարկ տեղեր տեսնելով, բայց արագորեն փարատեց այդ միտքը՝ որոշելով, որ քաղաքացիներն զբաղեցրել են տեղերն՝ ըստ իրենց ցանկության:

Սրահի վերջում՝ ամենահեռվում, Ձեյլոնի գահն էր: Այն ավելի վեհ էր, քան Եսասերը կարող էր երևակայել: Նա նույնպես նկատեց փոքր գահեր, որոնք, ինչպես նա ճշտորեն ենթադրեց, պատկանում էին Ձեյլոնի կառավարիչներին: Մի պահ նրա սիրտն ասես կանգ առավ. այդտեղ դեռ մի քանի չզբաղեցրած տեղեր կային: Նա համոզված էր, որ այդ դատարկ գահերից մեկն իր համար էր:

Հին ընկերը

Մինչ Եսասերն առաջ էր քայլում, նա ապշած էր նախկին էնդելցիների տեսքից, ովքեր այժմ Աֆաբելի քաղաքացիներ էին: Ընդամենը մի քանի քայլ անելով դեպի գահը՝ սրահի ետին մասում նա ճանաչեց իր հին ընկերներից մեկին: Նրա անունը Շփվող էր: Նա ռեստորան ուներ, որտեղ Եսասերը հաճախ էր լինում: Նա նայեց Գլխավոր պահապանին՝ ասես հարցնելով, թե արդյո՞ք կարելի է խոսել: Պահապանը գլխով արեց՝ հավանության նշան տալով:

Եսասերը մոտեցավ, և երկուսը գրկախառնվեցին:

– Ինչպե՞ս ես եղել ամբողջ այս ընթացքում, Շփվո՛ղ,– հարցրեց Եսասերը:

– Շատ լա՛վ,– պատասխանեց հին ընկերը,– բայց իմ անունն այլևս Շփվող չէ, այլ՝ Գոհացող: Տեր Զեյլոնը նոր անուն տվեց ինձ. նա նոր անուններ է տալիս իր բոլոր ծառաներին, երբ նրանք կանգնում են իր գահի առջև: Աֆաբելն ավելի հրաշալի վայր է, քան մենք կարող էինք երազել,– շարունակեց Գոհացողը:– Այս Մեծ սրահը՝ միայն մուտքն է դեպի այս փառահեղ, գեղեցիկ, պերճաշուք և հոյակապ քաղաքը: Մեր թագավորն ավելի հրաշալի, սիրող և վեհ է, քան ցանկացած մարդ, որին դու երբևէ հանդիպել ես կամ ճանաչել: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ ճանաչում և ծառայում եմ նրան: Մեծ պատիվ է նրա թագավորության մեջ լինելը: Եթե էնդելում ես իմանայի այն, ինչ գիտեմ հիմա, այլ կերպ կապրեի: Ես ավելի շատ կձգտեի հաճեցնել թագավորին: Ես ավելի լավ քաղաքացի կլինեի էնդելում անցկացրած իմ կարճ ժամանակվա ընթացքում: Եթե այդպես լիներ, հիմա ես ավելի մոտ կլինեի նրան:

– Ի՞նչ նկատի ունես,– ընդդիմացավ Եսասերը:– Դու էնդելի ամենալավ քաղաքացիներից էիր: Քեզ էր պատկանում լավագույն ռեստորաններից մեկը, և դու անթիվ հասարակական միջոցառումներ էիր հովանավորում: Դու բազմիցս դրամական միջոցներ և անվճար ճաշեր էիր տրամադրում դրամահավաքներ կազմակերպող ընկերություններին: Հաճախ նույնիսկ նվիրաբերում էիր քո օրական եկամուտը:

Գոհացողը թափ տվեց գլուխը.

– Ես անում էի այդ ամենը, որպեսզի համբավ ձեռք բերեի և ընդունված լինեի: Ես նույնպես գիտեի, որ այդ կերպով ավելի շատ հաճախորդներ ձեռք կբերեի: Իմ դրդապատճառը ոչ թե մարդկանց օրհնելն էր, այլ՝ իմ հաջողությունը ապահովելը: Ես պետք է լսեի Զեյլոնի խոսքերը: Նա ասել էր մեզ. «Երբ հացկերույթ կամ ընթրիք ես կազմակերպում, մի՛ կանչիր քո բարեկամներին, և ոչ՝ քո եղբայրներին, և ոչ՝ քո ազգականներին, և ոչ՝ քո հարուստ հարևաններին. միգուցե նրանք էլ դրա փոխարեն կանչեն քեզ և հատուցում լինի քեզ: Այլ՝ երբ որ հացկերույթ ես անում, կանչի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին, կույրերին և երանելի կլինես, որովհետև բան չունեն, որ փոխարենը վճարեն քեզ, որովհետև արդարների հարության ժամանակ կլինի քեզ հատուցումը»[1]: Ես նվիրատվություններ էի կատարում իմ շահի, ոչ թե մեր քաղաքի օգտի համար: Ես ուզում էի էնդելի ամենաազդեցիկ մարդկանց թվում լինել:

Եսասերը շարունակեց.

– Բայց դու հաճախ էիր նվիրատվություններ կատարում էնդելի դպրոցի համար: Մի՞թե բարեհաճություն չստացար Զեյլոնի առջև այդ պատճառով:

Գոհացողը պատասխանեց.

– Այո՛, ես նվիրատվություններ էի կատարում էնդելի դպրոցի համար, բայց դրանք իմ եկամուտների շատ փոքր մասն էին կազմում: Ես պահում էի ռեստորանի շահույթի մեծ մասը, որովհետև վախենում էի սնանկանալուց: Ես անում էի դա, քանի որ ցանկանում էի լավ կյանք ունենալ: Իմ իրական շարժառիթը՝ ինքս ինձ պաշտպանելն էր: Այն քիչը, որը ես տալիս էի, իմ խիղճը հանգստացնելու համար էր: Ես հարկադրված էի զգում ինձ, որովհետև մեր ուսուցիչները հաճախ էին ասում, թե որքան կարևոր էր թագավորության համար նվիրատվություններ կատարելը և կարիքավորներին օգնելը: Ես տալիս էի մեղքի զգացումի և հարկադրանքի պատճառով, ոչ թե՝ ելնելով գթասրտությունից և սիրուց:

Գոհացողը շարունակեց.

– Ես մոռացա Զեյլոնի օրինակն այն այրի կնոջ մասին, ով սիրում էր Աֆաբելի թագավորությունը: Հիշի՛ր, որ նա ասաց. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե այս աղքատ որբևայրին գանձանակը գցողներից ամենից ավելին գցեց: Որովհետև ամենքն իրենց ավելորդից գցեցին, բայց սա իր չքավորությունից այն, ինչ որ ուներ, գցեց՝ իր կյանքի ամբողջ ապրուստը»[2]:

Եսասերը մտածեց այն հասարակական միջոցառումների և ընթրիքների մասին, որոնք նա անցկացնում էր իր տանը: Այդտեղ չկար ոչ մի աղքատ կամ նույնիսկ իրենից ավելի ցածր կյենսամակարդակի մարդ: Հետո նա հիշեց այն հինգ հազար ավանդը, որը տվել էր, որպեսզի մեղմեր այն մարդկանց, ովքեր հիասթափվել էին, երբ ինքը որոշել էր տրամադրել վիճելի հողատարածքը հանրախանութների ցանցին, ոչ թե դպրոցին: Այդ պահին նա մտածում էր, որ մեծ գումար էր տվել, բայց այժմ նա ամաչում էր իր տված գումարի փոքր չափի պատճառով: Ինչպե՞ս Զեյլոնը կգնահատի դա:

Նրա մտորումներն ընդհատվեցին Գոհացողի վերջին դիտողություններով.

– Եթե ես իրականում ջերմեռանդ լինեի Զեյլոնի և նրա ժողովրդի համար,– ասաց նա,– ժամանակ կտրամադրեի, որպեսզի ծառայեի դպրոցում: Երբ ամեն մեկը կատարում է իր գործը, բեռը թեթևանում է, այլապես մի քանիսը կրում են ամբողջ բեռը: Եթե բոլորս կատարեինք

Զեյլոնի ծրագիրը, ոչ ոք գերբեռնված չէր լինի: Այն մի քանիսը, ովքեր վերցրել էին ծանր բեռները, մեծ վարձատրություն ստացան դրա համար: Իմաստն այն է, որ նույնիսկ այն քիչը, որը ես տալիս էի, իմ խիղճը թեթևացնելու համար էր, քանի որ գիտեի, որ նվիրված չէի Զեյլոնի թագավորությանը:

Երբ իմ կյանքը վերանայվեց, ակնհայտ էր, որ ես ապրում էի ավելի շատ իմ հարմարավետության, ապահովության և համբավի համար, քան՝ Նրա փառքի: Այժմ ես այս քաղաքի փոքրագույն քաղաքացիներից եմ: Այնուամենայնիվ, չնայած որ այսպես ստացվեց, ես դեռ ցնցված եմ Զեյլոնի բարությամբ և սիրով, որը նա ցուցաբերում է իմ հանդեպ: Ես իրականում արժանի չէի այն ամենին, ինչ ստացա նրանից, բայց ինչպես դու շուտով կհայտնաբերես, նրա սերը և առատաձեռնությունը ամեն մտքից վեր է: Մինչև իմ կյանքի ավարտը ես պարտական եմ նրա շռայլության և բարության համար:

Ցնցված՝ Եսասերը գոչեց.

– Փոքրագույն քաղաքացի՜: Ուզում ես ասել, որ այստեղ դասակարգե՞ր կան:

Գոհացողը ժպտաց և ասաց.

– Այո՛, իհա՛րկե: Էնդելում մեզ սովորեցնում էին այդ մասին, թեև մեզնից շատերը լրջորեն չէին վերաբերվում դրան: Բայց մենք խորապես գիտեինք դա: Իրականում, դու ինքդ էիր մտածում այդ ճշմարտության մասին, երբ մտար այս սրահը: Ես լսեցի քո մտքերը. դու ակնկալում ես, որ կստանաս այստեղի գահերից մեկը: Դու գիտեիր, որ դա հնարավոր է՝ համաձայն հին գրվածքների, որոնք մենք ուսումնասիրում էինք, սակայն երևի թե մեծ ուշադրություն չէիր դարձնում քո համոզմունքներին՝ ապագա դիրքիդ մասին, քանի դեռ էնդելում էիր:

Այն մարդիկ, ովքեր հավատարիմ էին Զեյլոնին այն կարճ ժամանակի ընթացքում, որը մենք անցկացրինք էնդելում, առաջնորդներ են և զբաղեցնում են ամենացանկալի պաշտոններն այս հասարակության մեջ: Նրանք ապրում են քաղաքի ամենագեղեցիկ մասում և թագավորի հետ հաճախակի հաղորդակցվելու արտոնություն ունեն: Ովքեր ապրել են ավելի շատ իրենց համար, երբ էնդելում էին, պաշտոններ են ստացել այս քաղաքի արտաքին մասերում: Դա նույնպես կարելի է տեսնել այս սրահում: Մենք՝ ետին շարքերում նստածներս, ապրում ենք հարթավայրերում և ծանր աշխատանքներ ենք կատարում: Մենք փոքրագույնն ենք այս թագավորության մեջ: Նրանք, ովքեր զբաղեցնում են սրահի մեջտեղի մասը, ապրում են սարերում և զբաղեցնում են ավելի ստեղծագործական պաշտոններ: Իսկ սրահի առջևում և գահերի վրա

նստածներն ապրում են Թագավորական կենտրոնում, որտեղ թագավորի նստավայրն է: Նրանք արտոնված են ապրելու և գործելու նրա հետ: Նրանք մեծագույնն են այս թագավորության մեջ:

Գոհացողն ամփոփեց.

– Իմ ընկեր Եսասե՛ր, իմացի՛ր, որ Ձեյլոնն արդար և սիրող առաջնորդ է: Ինչ էլ նա տա քեզ, վարձատրություն է լինելու: Մեզնից ոչ ոք չէր ապրի նույնիսկ այս քաղաքի ամենաանշան վայրում, եթե չլիներ նա:

Ասելով սա՝ Գոհացողը վերադարձավ իր տեղը: Գլխավոր պահապանը ձեռքի շարժումով պատվիրեց Եսասերին շարունակել իր ճանապարհը դեպի գահը:

Հայտնի ուսուցիչը

Եսասերը ևս մի քանի քայլ արեց և նկատեց մեկ այլ մարդու, ում ճանաչում և համակրում էր: Նրա անունը Խրախուսող էր: Նա ուսուցիչ էր էնդելի դպրոցում, և Եսասերն ակնառու անձնավորություն էր համարում նրան: Նրա ուսուցումները բովանդակալից և պերճախոս էին և միշտ ոգեշնչում էին Եսասերին: Այս անզուգական ուսուցիչն այնպես էր սովորեցնում, որ աշակերտները բարձր և արժեքավոր էին համարում իրենց: Մյուս ուսուցիչները նույնպես ոգեշնչում էին, բայց երբեմն մի փոքր խիստ էին խոսում, և նրանց խոսքը ցավոտ հանդիմանություն էր բերում: Խրախուսողն այդպիսին չէր, երբ նա դասարանից դուրս էր գալիս, բոլորը հրաշալի զգացողություն էին ունենում: Իրականում, մինչև այդ պահը, նա Եսասերի սիրելի ուսուցիչն էր:

Եսասերը կրկին ուղղեց հայացքը Գլխավոր պահապանին՝ իր նախկին ուսուցչի հետ խոսելու թույլտվություն խնդրելով: Պահապանը կրկին գլխով արեց՝ հավանության նշան տալով: Եսասերը մոտեցավ Խրախուսողին, և երկուսը ջերմորեն ողջունեցին իրար:

Չկարողանալով զսպել իրեն՝ Եսասերը հարցրեց.

– Ինչո՞ւ եք դուք այստեղ՝ ետին շարքերում:

– Սա իմ դիրքը և տեղն է: Ես Աֆաբելի փոքրագույն քաղաքացիներից եմ: Ապրում եմ հարթավայրերում և ջրմուղագործ եմ աշխատում:

– Ի՞նչ,– գոչեց Եսասերը:– Դուք Ձեյլոնի լավագույն ուսուցիչներից էիք: Ինչպե՞ս կարող եք լինել փոքրագույն քաղաքացիներից մեկը: Դուք պետք է նստած լինեիք առջևի գահերից մեկի վրա:

– Կան մի քանի պատճառներ, թե ինչու ես չեմ գտնվում ավելի բարձր դիրքում այս մեծ ժողովքում, և թե ինչու ես չեմ իշխում Ձեյլոնի

հետ,– ասաց Խրախուսողը:– Ժամանակը խնայելու համար՝ ես կպատմեմ միայն իմ հիմարության արմատի մասին: Հիշո՞ւմ ես՝ ովքեր նվիրել են իրենց կյանքը Զեյլոնին, համեմատվում են շինարարների հետ: Մեզ սովորեցնում էին սա դպրոցի ամբողջ ընթացքում: Մեր գլխավոր պարտականություններից մեկն էնդելում՝ այլ մարդկանց կյանքերը կառուցելն էր: Մենք անում էինք դա մեր ուղերձների միջոցով, որոնք փոխանցում էինք մեր խոսքով, վարքով կամ գործերով:

Լինելով ուսուցիչ՝ ես ստացել էի և՛ մեծ արտոնություն, և՛ մեծ պատասխանատվություն: Ես սովորեցնում էի աշակերտներին Զեյլոնի սկզբունքները և ճանապարհները: Այնուամենայնիվ, որպես ուսուցիչ՝ ես ձախողվեցի այնքա՛ն շատ առումներով:

Իմ ուսմունքներն անհավասարակշռված էին: Ես շեշտադրում էի միայն Զեյլոնին ծառայելու դրական կողմերը: Ես խրախուսում էի իմ աշակերտներից շատերին՝ ձգտել հաջողության՝ առանց մտածելու հետևանքների մասին: Ես չէի սովորեցնում նրանց, որ կյանքի իրական նպատակը՝ Զեյլոնին հաճելի լինելն է: Ես սովորեցնում էի, թե ինչպես օգտագործել Նրա սկզբունքները՝ կյանքում հաջողության հասնելու համար: Հետևաբար, երբեք չէի զգուշացնում նրանց մեր հասարակության փոսերի և ծուղակների մասին:

Հին գրվածքները պարզ նշում են, որ ես պետք է քարոզեի Զեյլոնի խորհուրդն ամբողջությամբ: Դա ընդգրկում է հետևյալը. «Ամեն մարդու խրատելը և ամեն մարդու սովորեցնելը ամեն իմաստությամբ, որ ամեն մարդու կատարյալ կանգնեցնենք Զեյլոնի առջև»[3]: Ես սովորեցնում էի, բայց չէի զգուշացնում: Քանի որ ես բացառապես դրական ուսուցիչ էի և երբեք ողջամիտ զգուշացումներ չէի անում, ես կառուցեցի անթիվ կյանքեր, որոնք քիչ փառք բերեցին Զեյլոնին:– Այդ պահին նա իջեցրեց գլուխը:– Նրանցից շատերը հիմա նզովված են:

Տեսնելով Եսասերի ցնցվելը՝ ուսուցիչը շեշտադրեց իր ասածը.

– Այո՛, նրանք նզովքի մեջ ընկան: Շատերն այժմ բնակեցնում են Լոն լքված երկիրը՝ մասամբ իմ՝ ոչ հավասարակշռված ուսմունքների պատճառով: Ես չէի տալիս իմ աշակերտներին այն, ինչի կարիքը նրանք ունեին. ես տալիս էի այն, ինչ նրանք ուզում էին: Չէի ուզում կորցնել նրանց հավանությունը և իմ համբավը: Այդ պատճառով, ես սխալ կերպով կառուցեցի: Ես արմատախիլ չէի անում նրանց կյանքի թույլ և արատավոր բնագավառները, այլ փոխանցում էի նրանց գաղափարներ, որոնք միայն բորբոքում էին նրանց եսասիրական ցանկությունները:

Հիշի՛ր այն զգուշացումը հին գրվածքներից, որն ուղղված էր ուսուցիչներին. «Քանի որ նրանք մոլորեցնում են Իմ ժողովրդին՝ ասելով.

«Խաղաղությո՛ւն», երբ խաղաղություն չկա, և քանի որ, երբ անկայուն պատ է կառուցվում, իսկ նրանք այն ծածկում են ծեփով, ուրեմն ասա՛ նրանց, ովքեր այն ծեփով են ծածկում, կընկնի»[4]: Իմ աշակերտներից շատերը կանգնեցրել և պատսպարել էին իրենց կյանքերը ժամանակավոր բաներով: Սրտիս խորքում գիտեի, որ դրանք փխրուն պատեր էին, բայց չէի զգուշացնում նրանց: Ես ասում էի, որ ամեն ինչ լավ էր, երբ այդպես չէր: Ես խրախուսում էի նրանց ընթացքը՝ հաստատելով նրանց խաբեության մեջ:

Ես տրտմում եմ իմ նախկին աշակերտների համար, ովքեր հիմա Լոնում են: Իմ աշակերտներից ոմանք հայտնվեցին Աֆաբելում, բայց նրանցից շատերը, ովքեր ընդունում էին միայն դրական ուսմունքները,– Խրախուսողը ետ նայեց և իջեցրեց իր ձայնը՝ շշնջոցի հասցնելով,– այս ետին շարքերում են: Նրանք վատնեցին իրենց կյանքերը, իսկ նրանց գործերը կրակով այրվեցին այս Դատաստանի գահի առջև:

– Այրվեցին Դատաստանի գահի առջև՞,– հարցրեց Եսասերը:

– Այո՛,– պատասխանեց ուսուցիչը:– Մի՞թե չես հիշում հին գրվածքները. «Ամեն մեկը, ով կառուցում է այդ հիմքի վրա, կարող է օգտագործել ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր, փայտ, հարդ կամ ծղոտ: Բայց գալու է ստուգման ժամանակը՝ դատաստանի օրը, երբ կպարզվի, թե ինչ գործ է կատարել ամեն կառուցող: Ամեն մեկի գործը կանցկացվի կրակով՝ պարզելու համար՝ արդյո՞ք այն պահպանում է իր արժեքը: Եթե գործը դիմանա կրակին, կառուցողը վարձատրություն կստանա: Բայց եթե գործն այրվի, կառուցողը մեծ կորուստ կկրի: Այդ կառուցողը կփրկվի՝ բայց ինչպես մի մարդ, ով հազիվ ազատվել է մեծ կրակից»[5]:

Հայտնի ուսուցիչը շարունակեց.

– Այն հիմքը, որի մասին խոսում էր հին առաքյալը, Զեյլոնի իշխանությունն է, և մենք գիտենք, որ այն միակ ճանապարհն է՝ այս թագավորություն մուտք գործելու համար: Այնուամենայնիվ, երբ մենք ճշմարտապես պատկանում ենք Զեյլոնին, պետք է կառուցենք այս հիմքի վրա:

Ըստ հին գրվածքների՝ իմ կյանքը չէր համապատասխանում Զեյլոնի արդար չափանիշներին. ես ձախողվել էի այն բնագավառում, որտեղ ազդեցիկ էի, և որը սովորեցնելն էր: Ես չէի օգտագործում իմ իշխանությունը, որպեսզի դրդեի աշակերտներիս՝ կատարել Աֆաբելի գործը, և ես անխուսափելիորեն կորցրի իմ վարձատրությունը: Հիշո՞ւմ ես, թե ինչ ասաց հին ժամանակների մեծ ուսուցիչ Պողոսն այն մարդկանց մասին, որոնց կյանքերում նա կանչված էր. «Ի վերջո, ի՞նչն է հույս տալիս և ուրախություն պատճառում ինձ, և ի՞նչն է մեր վար-

ծատրությունը և թագը, որով հպարտանում ենք: Այդ դո՛ւք եք: Այո՛, դուք մեծ ուրախություն կբերեք մեզ, երբ միասին կանգնենք Տիրոջ առջև»[6]:

Ես լավ գիտեի Ձեյլոնի ճշմարտությունները, երբ նոր էի սկսել սովորեցնել, բայց ես թույլ տվեցի, որ անապահովության զգացումը, հավանություն ստանալու ցանկությունը և հպարտությունը շեղեին ինձ: Շատ ժամանակ չանցած ես արդեն շեղվել էի իմ իմացածից: Ի վերջո, ինքս սկսեցի ապրել այնպես, ինչպես քարոզում էի: Շեղվելով՝ ես անտեսեցի Ձեյլոնի զգուշացումները նաև իմ անձնական կյանքում: Ես խաբված էի: Հանրահայտ լինելը և բարեհաճություն վայելելը բոլորովին այլ կերպով է ընկալվում այստեղ, քան էնդելում: Գրեթե այն ամենը, ինչը ես կարևորում էի այնտեղ, աննշան է համարվում այստեղ:

Եսասերը հարցրեց սթափ ձայնով.

– Խրախուսո՛ղ, ընկերս ասաց ինձ, որ Ձեյլոնը փոխում է մեր անունները: Ի՞նչ է քո նոր անունը:

Ուսուցիչը ժպտաց.

– Իմ անունը Խոնարհված է:

Այդ ասելով՝ նա խոնարհեցրեց գլուխը և վերադարձավ իր տեղը: Եսասերը նայեց Գլխավոր պահապանին, ով գլխով արեց՝ հաստատելով, որ այն ամենը, ինչ նա լսեց Խոնարհվածից, ճիշտ էր:

Եսասերը շարունակեց գնալ դեպի գահը: Այժմ նա այնքան վստահ չէր, որքան այն ժամանակ, երբ նոր էր կանչվել այս սրահը: Նա մտածեց իր կյանքի մասին: Ինչպիսի՞ն էին իր դրդապատճառները: Արդյոք ինքն իշխում էր Ձեյլոնի փառքի համա՞ր, թե՞ իր եսասիրական ձգտումների: Ինչպե՞ս էր նա ապրել: Արդյո՞ք նրա կյանքը համապատասխանում էր Ձեյլոնի խոսքերին, թե՞ ինքը նույնպես խաբված էր: Նա կառուցո՞ւմ էր մարդկանց կյանքերը, թե՞ միայն օգտագործում էր նրանց՝ իր կյանքը կառուցելու համար:

Կառավարիչը

Եսասերն անցնում էր Մեծ սրահի մեջտեղով: Նա նկատեց, որ այդտեղի քաղաքացիներն ավելի թագավորական տեսք ունեին: Յուրաքանչյուրը նայում էր նրան այնպիսի՛ սիրով և հավանությամբ: Նրանց հայացքները մխիթարեցին Եսասերին: Նա անգնահատելի օգնություն ստացավ, քանի որ սկսել էր բավականին անվստահ զգալ իրեն և արդեն չգիտեր, թե ինչի սպասեր:

Եսասերին թվում էր, թե դարեր անցան, մինչև որ նա գահի մոտ հասավ: Ամեն քայլն անելիս նա այնքա՛ն բաներ էր հիշում էնդելի իր կյան-

քից: Նա դեռ հույս ուներ, որ կարող էր Ձեյլոնի կառավարիչներից մեկը դառնալ՝ հաջողակ քաղաքապետ լինելու շնորհիվ:

Եսասերը հասավ այնտեղ, որտեղ Ձեյլոնի կառավարիչներն էին: Նա նկատեց նրանց թագավորական հանդերձները և նրանց գլխներին դրված թագերը: Ամեն մեկի ձեռքին գավազան կար: Նրանք իսկապես որ ամենից ազնվագույն կեցվածքն ունեին այս մեծ քաղաքի բոլոր քաղաքացիներից: Նա զարմացած էր՝ տեսնելով, որ մարդը կարող է այդքան փառավոր տեսք ունենալ:

Կառավարիչների թվում Եսասերը նկատեց Քաղաքային խորհրդի անդամներից մեկի քարտուղարուհուն: *«Ինչո՞ւ է նա նստած այս գահերից մեկի վրա»*,– մտածեց Եսասերը: Այդ կինը ոչնչով չէր առանձնանում դպրոցում: Նա ավարտել էր Եսասերից մեկ տարի առաջ: Եսասերն անձամբ չէր ճանաչում նրան, քանի որ նա մի փոքր ինքնամփոփ անձնավորություն էր:

Այդ կինն առաջ եկավ, և Գլխավոր պահապանը կանգ առավ ու խոնարհվեց նրա առջև: Նա ողջունեց Եսասերին գրկախառնությամբ և ջերմ ժպիտով.

– Եսասե՛ր, բարի գալո՛ւստ Աֆաբել: Ես Համբերատարն եմ: Ձեյլոնը խնդրեց ինձ խոսել քեզ հետ, մինչև որ կանգնես Նրա առջև: Ես նրա կառավարիչներից մեկն եմ Աֆաբելում:

Եսասերը պատասխանեց՝ առանց մտածելու.

– Կառավարի՞չ: Ինչպե՞ս դու կարող ես կառավարիչ լինել: Դու երբեք ոչինչ չէիր անում էնդելում:

Նա կարմրեց՝ հասկանալով, թե որքան անտեղի և կոպիտ էր նրա ասածը:

Համբերատարը գլխով արեց՝ ցույց տալով, որ հասկացավ նրան.

– Մի՛ շփոթվիր քո ասածից: Խաբեությունը չի կարող թաքնվել այս սրահում, և ո՛չ էլ՝ այս մեծ քաղաքում: Դու պարզապես անկեղծ էիր: Էնդելում դու մտահոգվում էիր մարդկանց կարծիքներով և քո համբավով: Դա վարժեցնում է շատերին խորամանկորեն խոսել, և նրանք նույնիսկ չեն գիտակցում իրենց անմտությունը: Այստեղ բառերը շատ կարևոր են, բայց դրդապատճառները և մտադրություններն է՛լ ավելի ծանրակշիռ են, քանի որ դրանք միշտ ակնհայտ են: Շատ շուտով դու կիմանաս այդ մասին, երբ դատվես ամեն բառի համար, որն ասել ես էնդելում:

– Ամեն բառի՞,– գոչեց Եսասերը:– Ուզում ես ասել՝ ամեն մի խոսակցության ամեն բառի՞:

– Այո՛,– պատասխանեց Համբերատարը,– ամեն բառի: Հիշի՛ր Տեր Ձեյլոնի խոսքը հին գրվածքներում. «Դուք կարող եք համոզված լինել,

որ Դատաստանի օրը ամեն մեկը պետք է հաշիվ տա ամեն *դատարկ բառի* համար, որը նա երբևէ ասել է: Ձեր բառերը կօգտագործվեն ձեզ դատելու համար՝ հայտարարելու ձեզ կա՛մ անմեղ, կա՛մ մեղավոր»[7]: Դատարկ բառերը՝ ունայն, զուր տեղը կամ թեթևամտորեն ասված բառերն են, որոնք հակառակ են Ձեյլոնի բնությանը:

Եսասերը վիճարկեց դա.

– Ես միշտ կարծում էի, որ մենք պետք է հաշիվ տանք մեծ ստերի կամ մեծ ճշմարտությունների համար, որոնք խոսել ենք, ինչպես նաև՝ մեծ գործերի կամ խոշոր ձեռքբերումների համար:– Նա մի պահ մտածեց, իսկ հետո ավարտեց իր խոսքը.– Ի՞նչ է սպասվում ինձ:

Համբերատարը պատասխանեց.

– Հին գրվածքները պարզ հայտնում են. «Քո վարձատրությունը կախված է քո խոսքերից և քո գործերից»[8]: Այնպես որ, դու դատվելու ես ոչ միայն քո բոլոր գործերի համար, այլև՝ ամեն բառի, որ ասել ես: Սա վերաբերում է չար, բարի և նույնիսկ՝ դատարկ բառերին, որոնք դուրս են եկել քո բերանից: Այնուամենայնիվ, կստուգվեն ոչ միայն քո խոսքերը և գործերը: Դրանց ետևում գտնվող դրդապատճառները նույնպես դատաստանի են ենթարկվելու: Դու նաև դատվելու ես այն մտքերի համար, որոնք ընդունել ես: Մի՛ մոռացիր, որ Ձեյլոնի դատաստանն արդար է. այն «ստուգում է միտքը և սիրտը»[9]: Նա ինքն ասաց. «Ես՝ Ձեյլոնս, քննում եմ բոլոր սրտերը և ստուգում ծածուկ դրդապատճառները: Ես տալիս եմ մարդկանց իրենց արժանի հատուցումը՝ ըստ այն բանի, թե ինչի են արժանի նրանց գործերը»[10]: Նա ստուգում է ոչ միայն ամեն մի խոսքն ու գործը, այլև՝ դրանց ետևում գտնվող դրդապատճառները:

Համբերատարը շարունակեց.

– Ահա թե ինչու դու այդքան զարմացար՝ տեսնելով ինձ գահի վրա: Դու դատում ես իմ ձեռքբերումներն էնդելի լույսի ներքո: Ձեյլոնի դատաստանն այլ կերպով է. հիմա դու սկսում ես տեսնել այն և շուտով կտեսնես շատ ավելի ակնհայտ: Թանկագի՛ն եղբայր, էնդելում դու արդար վարձատրություն կստանաս քո կյանքի համար:

Եսասերին ոչ ոք երբեք նման խիստ ճշմարտություն չէր ասել: Այնուամենայնիվ, այն հագեցած էր այնպիսի՛ սիրով, որը նա երբեք չէր ճանաչել: Այժմ նա գիտեր, որ Ձեյլոնը պետք է սիրող և գթասիրտ իշխան լինի, քանի որ նա որոշ չափով վերապրեց այդ սերը նրա կառավարիչներից մեկի միջոցով: Համբերատարը հանդիմանեց նրան, բայց այդ հանդիմանությունն ամփոփված էր սիրով: Նա հասկացավ, որ սիրո նպատակը ոչ թե այլ մարդկանց հաճեցնելն է, այլ՝ ճշմարտությունը:

Համբերատարը խոնարհեցրեց գլուխը.

– Քո թագավորն սպասում է քեզ:

Այս ասելով՝ նա վերադարձավ դեպի իր գահը, և Գլխավոր պահապանը նշան արեց Եսասերին, որ նա մենակ մոտենար գահին: Պահապանն սպասելու էր հարթակի ստորին հատվածում, որտեղ գտնվում էին կառավարիչները:

Եսասերը՝ Զեյլոնի առջև

Համաձայն իր ստացած հրահանգների՝ Եսասերը զգուշորեն բարձրացավ աստիճաններով դեպի վերնահարթակը, որն անմիջապես վեհաշուք գահի ներքևում էր: Նա վեր նայեց և տեսավ թագավորին: Ոչ ոք ամբողջ այդ ժողովքում չէր հասնի Զեյլոնին գեղեցկությամբ, արքայական կեցվածքով և վեհությամբ: Նա և՛ գերող էր, և՛ սարսափազդու: Եսասերը երբեք չէր տեսել նրա պես մեկին: Նա անմիջապես հասկացավ, որ ոչ ոք չէր կարող հակառակվել նրա իմաստությանը և ուժին:

Առաջին անգամ նայելով Զեյլոնի աչքերին՝ Եսասերը հասկացավ, որ թագավորը շատ ավելի մեղմ և շատ ավելի ահարկու էր, քան ինքը կարող էր երևակայել: Նրա հայացքը թափանցեց անմիջապես Եսասերի միջով, և նա մերկ զգաց իրեն: Ակնհայտ էր, որ ոչինչ իր մասին ծածկված չէր այդտեղ: Եսասերը լիովին կորցրեց վստահությունը բարյացակամ դատաստանի վերաբերյալ, բայց նա այլևս չէր հոգում այդ մասին: Հիմա նա ցանկանում էր ճշմարտությունը ավելի, քան ցանկացած բան:

Զեյլոնն ասաց.

– Բարի գալո՛ւստ իմ թագավորություն, Եսասե՛ր: Ես փափագում էի այս պահին: Դու իշխում էիր իմ ժողովրդին էնդելում: Արդյոք արժանի՞ ես իշխելու և նստելու Աֆաբելի գահերից մեկին:

Համարձակ Եսասերը, ով պատասխան ուներ ամեն իրավիճակում, պապանձվեց: Քիչ առաջ նա զգում էր, որ կարող էր հրաշալի առաջնորդ լինել Աֆաբելում, բայց զրուցելով Աֆաբելի քաղաքացիներից մի քանիսի հետ Մեծ սրահում՝ նա հասկացավ, որ իր մտքերը, ամենայն հավանականությամբ, պարզապես պատրանք էին:

Զեյլոնը հարցրեց իր մոտ գտնվող կառավարիչներից մեկին.

– Քանի՞ քաղաքացու կյանքում է Եսասերն ազդեցություն թողել այս թագավորության համար:

Հնչեցին մի քանի անուններ: Եսասերը ցնցված էր և խոսք չուներ՝ լսելով դա:

Թագավորը հարցրեց նույն կառավարչին.

– Քանի՞ քաղաքացու կյանքում է Համբերատարն ազդեցություն թողել այս թագավորության համար:

– Հինգ հազարից մի փոքր ավելի, իմ տե՛ր,– պատասխանեց կառավարիչը:

– Ինչպե՞ս է դա հնարավոր,– չդիմացավ Եսասերը:– Նա ընդամենը քարտուղար էր, իսկ ես քաղաքապետ էի: Ինչպե՞ս է, որ ես ազդեցություն եմ թողել այդքան քիչ մարդկանց կյանքում, իսկ նա՝ այդքան շատ:

Զեյլոնը հաստատակամորեն պատասխանեց.

– Ես չհարցրի, թե որքան ազդեցություն ես դու ունեցել, այլ թե քանիսի կյանքում ես դու ազդեցություն թողել այս թագավորության համար:

Նրա ձայնը մի փոքր մեղմացավ, բայց նա պահպանեց վճռականությունը.

– Նույնիսկ քո նախկին ուսուցիչ Խրախուսողը, ով այժմ հայտնի է Խոնարհված անունով, ազդեցություն ուներ ավելի շատ մարդկանց կյանքում, քան դու: Այնուամենայնիվ, այդ ազդեցության շատ փոքր մասը հասավ այս թագավորություն: Ահա թե ինչու նա չի իշխում այս քաղաքում: Այն ազդեցությունը, որը մնայուն է համարվում այս Դատաստանի գահի առջև, համապատասխանում է Իմ ճանապարհներին և Իմ թագավորությանը:

Զեյլոնը շարունակեց.

– Թո՛ւյլ տուր պատմել քեզ, թե ինչպես է Համբերատարն ազդեցություն գործել ավելի քան հինգ հազար մարդու կյանքում: Նա ուրախությամբ նվիրատվություններ էր կատարում դպրոցի համար՝ և՛ ֆինանսապես, և՛ ծառայության միջոցով: Այնպես որ, մարդիկ, ովքեր օգուտ ստացան դպրոցի ծառայությունից, հաշվեգրվեցին նրան:

– Բայց ես նույնպես նվիրատվություններ եմ կատարել դպրոցի համար,– ընդդիմացավ Եսասերը:

– Դու նվիրատվություններ էիր կատարում, որպեսզի թեթևացնեիր քո խիղճը, ինչպես նաև՝ պահպանեիր կամ վերականգնեիր քո համբավը,– պատասխանեց Զեյլոնը:– Էնդելում դու ստացար քո լրիվ վարձատրությունը դրա համար: Իսկ Համբերատարը նվիրատվություններ էր կատարում, քանի որ սիրում էր այս թագավորությունը և մարդկանց:

– Համբերատարը դարձի բերեց Դաժան անունով մի մարդու, ով սկսեց ծառայել ինձ: Այս պահին նա Կյանքի սրահում է և սպասում է իր դատաստանին: Ես տալու եմ նրան Ավետարանիչ անունը, քանի որ նա հրաշալի կերպով տարածեց իմ ուղերձը: Նա անձամբ ազդեցություն է թողել ավելի քան հազար մարդու կյանքում՝ այս թագավորության համար: Այն մարդիկ, որոնց կյանքը նա կառուցել է, հաշվեգրվել են

Համբերատարին, քանի որ նա առաջնորդեց այդ մարդուն Ինձ ծառայելու համար, և նա աջակցում էր դպրոցին, որը կրթեց նրան:

Եսասերը հիշում էր Դաժանին էնդելից: Նա համարում էր, որ Դաժանը չափից շատ նախանձավոր էր հավատքի մեջ: Նա տեղական թերթի համահեղինակներից մեկն էր, և հաճախ էր գրում իր սյունյակներում այն մասին, որ քաղաքացիները նվիրված չէին Աֆաբելին: Նա նույնպես միաբանեց բազմաթիվ էնդելցիների՝ դրդելով նրանց կապվել քաղաքային խորհրդի անդամների հետ և պահանջել նրանց աջակցությունը դպրոցի ընդլայնման համար: Նա բացահայտ կերպով արտահայտեց իր տհաճությունը, երբ Եսասերը փոխեց քվեարկության ընթացքը՝ չտրամադրելով հողատարածքը դպրոցին: Եսասերը չէր սիրում Դաժանին այդ ամենի համար: Այժմ նա ամաչում էր՝ հասկանալով, որ այն ամենը, ինչի համար Դաժանը պայքարում էր, կապված էր Աֆաբելի թագավորության տարածման հետ: Ինչպե՞ս ինքը կարող էր այդքան կույր լինել:

Ձեյլոնը շարունակեց ցույց տալ այլ բաներ, որոնց շնորհիվ Համբերատարն ազդեցություն էր թողել էնդելցիների կյանքում՝ Աֆաբելի թագավորության համար: Կային բազմաթիվ փոքր բաներ, որոնք միասին մեծ էին համարվել: Նա վերաբերվում էր բոլորին բարությամբ և մաքուր, սիրով լի սրտով: Նա առատաձեռն էր կարիքավորների հանդեպ և անսասան հետևում էր ճշմարտությանը:

Երբ թագավորն ավարտեց Համբերատարի մասին խոսելը, նա մանրակրկիտ վերանայեց Եսասերի կյանքը: Ինչպես որ ասաց Համբերատարը՝ գնահատվեց ամեն մի դրդապատճառ, խոսք և գործ:

Եսասերը տեսավ այն բարին, որը գործել էր թագավորի անունով, բայց ճնշվեց այն փաստից, որ իր գործերի մեծ մասը դրդված էր իր անձի ապահովությամբ, սեփական համբավով և եսակենտրոն նպատակներով: Մինչև իր կյանքի քննության ավարտը Եսասերը համոզված էր, որ դատապարտվելու էր:

Նա աղաղակեց թագավորի առջև.

– Ես արժանի եմ պատժվելու մինչև իմ կյանքի ավարտը: Ես արժանի եմ Լոնի՛ն: Ես այնքա՛ն բան եմ վատնել, և այնքա՛ն քիչ արդյունք տվել՝ ի հատուցում այն տաղանդների և պարտավորությունների, որոնք ստացել էի:

Եսասերն անտանելի ցավ էր զգում. արցունքներն առատորեն հոսում էին նրա երեսի վրայով: Այն մարդը, ով մեծ վստահություն ուներ, երբ մուտք գործեց Մեծ սրահը, այժմ նույնիսկ մեկ թել էր որոնում՝ կառչելու համար: Միակ բանը, որը մնացել էր, ողորմության հույսն էր, բայց

նա չէր հավատում, որ նույնիսկ դրան էր արժանի: Նա հավաքեց իրեն՝ սպասելով, որ թագավորը կազդարարի իր աքսորը դեպի Լոն:

Մի քանի վայրկյան ծանր լռությունից հետո թագավորը վերջապես խոսեց.

– Եսասե՛ր, դու իմ ծառան ես: Դու հավատացիր ինձ և հնազանդվեցիր իմ իշխանությանը: Թեև այդքան բան վատնեցիր, բայց ես սիրում եմ քեզ և ողջունում եմ իմ թագավորության մեջ՝ մինչև քո կյանքի ավարտը:

Եսասերն ապշած էր: Նա վեր նայեց, իսկ հետո սկսեց անվերահսկելիորեն լաց լինել, ոչ թե տրտմությունից, այլ՝ անսահման ուրախությունից: Նա ցնցված էր այդ մեծ թագավորի ողորմությամբ և բարությամբ: Մեկ ակնթարթում գրեթե այն ամենը, ինչ նա լսել էր Ձեյլոնի բնավորության մասին, պարզ դարձավ նրա համար: Ընդամենը մի քանի վայրկյան առաջ նա այնպիսի՜ դատապարտություն և ցավ էր զգում, որը երբեք չէր կարող երևակայել: Նա արժանի չէր ոչնչի՝ բացի վտարանդի լինելուց: Նա արժանի էր դատապարտության. նրա կյանքի քննությունը ցույց տվեց դա: Այժմ, ամենամեղմ և բարի բառերով, որոնք միայն կարելի էր երևակայել, այս երկյուղ ներշնչող թագավորը ողջունում էր նրան իր անպատմելի քաղաքում. ինչպիսի՜ ողորմություն: Ինչպիսի՜ զարմանալի սեր:

Գրեթե այն ամենը, ինչ Եսասերը գործել էր էնդելում, այրվեց նրա աչքերի առջև, բայց նա դեռ լսում էր թագավորի խոսքերը. «Ես սիրում եմ քեզ և ողջունում եմ իմ թագավորության մեջ»: Նա հասկացավ, որ իր ընկեր Գոհացողը ճիշտ էր. ինչ էլ որ նա ստանար, ավելին էր, քան նա արժանի էր:

Թագավորը կրկին խոսեց.

– Եսասե՛ր, դու այլևս հայտնի չես լինի քո նախկին անունով: Ես նոր անուն եմ տալիս քեզ: Իմ թագավորության մեջ դու հայտնի կլինես Համեստ անունով: Ես բնակարան եմ պատրաստել քեզ համար հարթավայրերում, և դու բնատեսարաններ ձևավորող կլինես: Թեև դու չես իշխի այս քաղաքում, բայց կօգնես ինձ իշխել արտաքին շրջաններում:

Եսասերը հարցրեց.

– Իշխել քեզ հետ արտաքին շրջաններո՞ւմ:

– Նրանք, ովքեր այս քաղաքում են, իշխաններ են,– պատասխանեց Ձեյլոնը:– Իմ թագավորությունը տարածվում է մինչև մոլորակի հեռավոր անկյունները: Այս արտաքին քաղաքների քաղաքացիները չեն կրթվել էնդելում այնպես, ինչպես Աֆաբելի քաղաքացիները, և ո՛չ էլ դատաստանի առջև են կանգնել: Հետևաբար, նրանք չունեն այն գե-

ռազանց հատկությունները, որոնք բնորոշ են այս քաղաքի բնակիչներին: Թեև դու չես իշխի անմիջապես Աֆաբել քաղաքում, բայց կօգնես ինձ՝ տարածել իմ իշխանությունը աշխարհով մեկ: Քո հատուկ առաջադրանքը կլինի ղեկավարել Բենգիլա աշխարհամասի քսան քաղաքների բոլոր բնատեսարաններ ձևավորողներին՝ նրանց ծառայելու և սովորեցնելու միջոցով:

Եսասերը խոնարհեցրեց գլուխը և լաց եղավ. թագավորի բարությունն աներևակայելի էր:

Թագավորը մոտեցավ մի սեղանի և ինչ-որ առարկա վերցրեց, իսկ հետո շրջվեց և քայլեց դեպի Համեստը: Նա հասավ այն հարթակին, որտեղ Համեստը կանգնած էր, և ասաց.

– Իսկ հիմա, վերցրո՛ւ և կե՛ր այս պտուղը:

Համեստը վերցրեց պտուղը Զեյլոնի ձեռքից և կերավ: Այն ամենահամեղ բանն էր, որը նա երբևէ ճաշակել էր: Այն ասես մաքրեց նրա միտքը և սիրտը: Նրա մտքերը համակվեցին մեծ սիրով և ծառայելու ցանկությամբ: Ուտելու ընթացքում նա մաքրվում էր իր նախկին ցավից և խավար մտքերից: Նա զգում էր ոգեշնչում և երջանկություն, լցվում էր հույսով և հավատքով: Նա անմիջապես հասկացավ, որ այդ պտուղը հայտնի Կյանքի ծառից էր, որի մասին ուսուցիչները խոսում էին դպրոցում: Համեստի դեմքին մեծ ժպիտ հայտնվեց՝ մինչ Զեյլոնը հաճույքով նայում էր նրան:

Այնուհետև Զեյլոնն ասաց.

– Շրջվի՛ր և նայի՛ր քո ընտանիքին:

Համեստն զգուշորեն շրջվեց: Նա դեռ մի փոքր ամոթ էր զգում՝ գիտակցելով, որ բոլորը տեսան և լսեցին իր կյանքի մանրամասները: Երբ նա լիովին շրջվեց, բազմությունը ծափահարություններ և ուրախության գոչյուններ արձակեց: Երաժշտություն սկսվեց, և քաղաքացիներից ոմանք նույնիսկ սկսեցին պարել: Համեստը չէր հավատում, որ ինքը նման սիրո և ընդունելության էր արժանանում այդ թագավորական քաղաքացիներից: Դա այն դարմանն էր, որը լիովին բժշկեց նրան էնդելում գործած բոլոր սխալներից:

Համեստը շրջվեց և տեսավ ամենից փառավոր և ուրախ ժպիտը Զեյլոնի դեմքին: Այդ ժամանակ էր, որ նա նկատեց Զեյլոնի աչքերը: Դրանք նայում էին Համեստին այնպիսի սիրով և ջերմությամբ, ինչպիսին նա երբեք չէր տեսել անցյալում: Այժմ նա լսում էր Զեյլոնի մտքերը, ինչպես որ Համբերատարը և մյուսները լսում էին իր մտքերը: Նա լսում էր հավանություն, բերկրանք և երանության տարիների ակնկալիք իր համար, այսինքն՝ այն քաղաքացու, որին Զեյլոնն անչափ սիրում էր:

Համեստն ընկավ ծնկների վրա և գոհացավ թագավորից: Թագավորը ոտքի կանգնեցրեց նրան, ամուր գրկեց և ժպտալով ասաց.

– Բարի գալո՛ւստ, ընկե՛ր:

Այնուհետև Համեստին ուղեկցեցին իր տեղը՝ լսարանի վերջը, որտեղ նա սպասելու էր մյուս էնդելցիների դատաստանին: Ամեն արցունք սրբվել էր: Այլևս չկար տրտմություն, ցավ և լաց: Հին բաներն անցել էին:

Բարեգործի դատաստանը

Առավոտն անցավ. բոլոր քաղաքացիներն արդեն կանչվել էին Կյանքի սրահից՝ բացի Բարեգործից: Թեև նա մենակ էր մնացել, բայց բոլորովին չէր մտահոգվում, քանի որ այդ սրահում կային հրաշալի գրքեր, որոնց հեղինակներն Աֆաբելի քաղաքացիներն էին: Նա կարդում էր *Աֆաբելի Պատմագրությունների երկրորդ գիրքը*, երբ Գլխավոր պահապանը մոտեցավ նրան և մեղմորեն ասաց.

– Բարեգո՛րծ, քո թագավորը սպասում է քեզ:

Նրա սիրտը սկսեց ուրախությունից արագ բաբախել: Ի վերջո նա տեսնելու էր նրան, ում սիրում էր և փափագում էր հանդիպել: Նա տարիներ շարունակ սպասել էր այս վայրկյանին, և այժմ այն հասել էր: Պահապանը ժպտաց, երբ Բարեգործը մոտեցավ նրան, և նրանք միասին քայլեցին դեպի Մեծ սրահը:

Մեծ սրահի դռները բացվելուն պես Բարեգործը համակվեց զգացմունքներով՝ իր տեսածի վեհության պատճառով: Այնուամենայնիվ, նրա ուշադրությունը գրավեց հեռվում գտնվող Ձեյլոնի գահը: Այդ պահին նա միայն տեսնում էր նրա՝ հեռվից երևացող ուրվագծերը: Նա սկսեց նայել Աֆաբելի թագավորության քաղաքացիներին: «Ինչպիսի՜ բացառիկ մարդիկ,– մտածեց նա:– Ինչպե՞ս ես կարող եմ ինձ հավասար համարել նրանց»:

Նա նկատեց, որ բոլոր քաղաքացիները խոնարհվում էին, երբ ինքն անցնում էր: Ինչո՞ւ այս վսեմ մարդիկ պետք է խոնարհվեին իր առջև: Նրանք տպավորիչ և գեղեցիկ էին, և որքան նա մոտենում էր գահին, մարդկանց հանդերձներն է՛լ ավելի փառավոր էին դառնում: Թվում էր՝ նրանք գերմարդիկ էին: Ինչպե՞ս նման մարդիկ կարող են խոնարհվել, հատկապես՝ իր առջև:

Բարեգործը ճանաչեց մի քանի մարդկանց, որոնց նա գիտեր էնդելում: Նրանք ժպտում էին՝ լի ոգևորությամբ և իր հանդեպ սիրով: Նա ուզում էր կանգ առնել և գրկել նրանցից ամեն մեկին, բայց զգաց, որ պատշաճ ժա-

մանակը չէր: Նա նկատեց Անողորմին և չկարողացավ զսպել իրեն: Նա վազեց նրա մոտ և ամուր գրկեց: Երկուսն էլ անչափ ուրախ էին:

Գրկախառնությունից հետո Անողորմը խոնարհվեց նրա առջև և ասաց.

– Բարի գալո՛ւստ քո նոր տուն:

– Ինչո՞ւ ես խոնարհվում իմ առջև,– հարցրեց Բարեգործը:– Ես աստված չեմ, որ երկրպագություն ստանամ:

– Կա տարբերություն երկրպագության և պատվի միջև,– պատասխանեց արքայական քաղաքացին:– Միայն մեր տերն է արժանի երկրպագության, բայց այս թագավորության մեջ մենք պատվում ենք նրանց, ովքեր բարեսրտորեն ծառայել են մեզ էնդելում: Մենք նաև պատվում ենք նրանց, ովքեր իշխում են այստեղ: Էնդելում մենք չէինք հասկանում պատվի կարևորությունը:

Բարեգո՛րծ, դու ծառայեցիր ինձ էնդելում: Եթե չլիներ քո հնազանդությունը թագավորին, ես այստեղ չէի լինի. ես կբնակվեի լքված Լոն երկրում: Նախ և առաջ պարտական և շնորհակալ եմ իմ թագավորին, բայց ես նույնպես պարտական և շնորհակալ եմ քեզ: Ես հաճույքով կծառայեմ և կպատվեմ քեզ՝ մինչև իմ կյանքի ավարտը:

Իմ անունն այլևս Անողորմ չէ,– շարունակեց նա: Տեր Զեյլոնը փոխեց իմ անունը Դատաստանի գահի մոտ՝ ինձ Հաշտված անվանելով: Երևի թե, ես ստացա մեծագույն ողորմությունը մեր թագավորի առջև:

– Հաշտվա՛ծ: Ինչպիսի՛ սքանչելի անուն,– պատասխանեց Բարեգործը:– Սիրելի՛ ընկեր, ես չշահեցի քեզ էնդելում այն բանի համար, որ դու ի պատասխան ծառայես ինձ: Ես արեցի դա, քանի որ սիրում էի քեզ և մտահոգվում էի քո կյանքի համար:

– Ես կպատվեմ և կծառայեմ քեզ հենց քո դրդապատճառների համար: Դու մեծապես կվարձատրվես թագավորի կողմից: Դու աշխատեցիր Զեյլոնին սիրելու շնորհիվ: Դու երբեք ոչինչ չարեցիր, որպեսզի ճանաչում ունենայիր Զեյլոնի հետևորդների մեջ, կամ ինչ-որ վարձատրություն ստանայիր: Զեյլոնը բերկրանք է ապրում այն մարդկանց շնորհիվ, ովքեր շահում են մարդկանց իր սիրով: Երբ մենք էնդելում էինք, այնքան կարևոր էր, որ հասկանայինք նրա սիրտը, ոչ թե՝ միայն նրա տեսիլքը: Դու ունեիր այս երկուսն էլ, թանկագի՛ն քույր, և քո սրտի դրդապատճառները փոխանցվեցին ինձ: Ահա թե ինչու ես մեծ եռանդով շահեցի շատերին՝ էնդելում գտնվելու իմ վերջին շաբաթվա ընթացքում: Այստեղ ես շռայլ վարձատրություն ստացա իմ աշխատանքի համար, թեև այն շատ կարճ էր:

Բարեգործը ժպտաց.

– Հաշտվա՛ծ, ես այնքա՛ն ուրախ եմ քեզ համար: Ես կծառայեմ քեզ մինչև իմ կյանքի ավարտը:

– Բարեգո՛րծ, դու արդեն իսկ այնպես ես խոսում, ասես տարիներ շարունակ ապրել ես Աֆաբելում,– պատասխանեց Հաշտվածը:– Այս մեծ քաղաքում մենք ապրում ենք՝ մեկս մյուսին ծառայելու համար: Իրականում այն մարդիկ, ովքեր առաջնորդում են, մեծագույն ծառաներն են: Մենք ունենք ավելի շատ պարտականություններ և հաճույքով ենք կատարում: Այստեղի կյանքը նման չէ էնդելին: Այստեղ առաջնորդները չեն ձգտում, որ մարդիկ ծառայեն իրենց, այլ ավելի շուտ ուրախանում են, որ իրենց ավելի շատ հնարավորություններ են տրվում՝ ծառայելու համար: Այստեղ ապրող ամեն քաղաքացու մեծագույն ուրախությունը ծառայելն է, նախ՝ մեր թագավորին, իսկ հետո՝ մեր համաքաղաքացիներին, և հատկապես՝ ովքեր ազդեցություն են թողել մեզ վրա էնդելում, և վերջապես՝ արտաքին շրջաններում ապրող քաղաքացիներին, որոնց մասին շուտով կիմանաս:

Հաշտվածն ամփոփեց իր խոսքը.

– Թանկագին քո՛յր, ես հպարտանում եմ քեզնով: Գնա՛ քո թագավորի մոտ: Նա փափագում է տեսնել քեզ և վարձատրել՝ իրեն ծառայելու համար:

Այս խոսքերով՝ երկուսը գրկախառնվեցին: Բարեգործը միացավ պահապանին, և նրանք շարունակեցին մոտենալ գահին:

Բարեգործը՝ Զեյլոնի առջև

Բարեգործն արդեն կարող էր ավելի պարզ տեսնել Զեյլոնին, քանի որ նա ընդամենը քսան մետրով էր հեռու գահից: Անցնելով կառավարիչների կողքով՝ նա նույնիսկ չնկատեց, որ նրանք խոնարհվեցին իր առջև. նրա հայացքն ուղղված էր Զեյլոնին: Նա երկյուղած էր թագավորի վեհաշուք փառքից:

Բարեգործը բարձրացավ աստիճաններով և հասնելով վերնահարթակին՝ երեսնիվայր ընկավ թագավորի առջև: Զեյլոնը վեր կացավ գահից, քայլ արեց և ոտքի կանգնեցրեց նրան: Նա քնքշորեն խոսեց.

– Բարեգո՛րծ, իմ թա՛նկ ծառա, բարի գալո՛ւստ իմ թագավորություն: Ես փափագում էի այս պահին, որպեսզի անձամբ հանդիպեի քեզ:

Բարեգործը պատասխանեց.

– Տե՛ր, ե՛ս էի մեծապես փափագում այս պահին: Դու իմ թագավորն ես: Հիմա հուսով եմ, որ կլինեմ քո ներկայության մեջ՝ մինչև իմ կյանքի ավարտը, և ավելի լիարժեք կերպով կծառայեմ քեզ:

Թագավորն ասաց.

– Ե՛կ և ժառանգի՛ր այն թագավորությունը, որը պատրաստված է եղել քեզ համար, նույնիսկ՝ աշխարհի ստեղծագործությունից առաջ: Ես քաղցած էի, և դու կերակրեցիր ինձ: Ծարավ էի, և դու խմեցրիր ինձ: Ես օտարական էի, և դու ընդունեցիր ինձ քո տանը: Մերկ էի, և դու հագցրիր ինձ: Ես հիվանդ էի, և դու հոգ տարար ինձ համար: Բանտում էի, և դու այցելեցիր ինձ:

Բարեգործը զարմացած պատասխանեց.

– Տե՛ր, ե՞րբ տեսա քեզ քաղցած և կերակրեցի, կամ՝ ծարավ, և խմեցրի: Ե՞րբ ես տեսա, որ դու օտարական էիր, և ողջունեցի քեզ իմ տանը, կամ՝ մերկ, և հագցրի քեզ: Ե՞րբ տեսա քեզ հիվանդ կամ բանտում, և այցելեցի:

Թագավորը պատասխանեց.

– Ասում եմ քեզ՝ երբ դու արեցիր դա իմ փոքր եղբայրների և քույրերի համար, դու արեցիր դա ի՛նձ համար[11]:

Զեյլոնը ցույց տվեց Բարեգործին նրա հրաշալի ծառայությունը, որ ցուցաբերել է իրեն՝ այլ մարդկանց ծառայելու և իր օրենքներին հնազանդվելու միջոցով: Վերանայվեց նրա ամբողջ կյանքը՝ ամեն մի բառը, գործը, միտքը և սրտի դրդապատճառը: Ամեն ինչ ի հայտ եկավ՝ նրա ծառայությունը, նրա նվիրատվությունները դպրոցին, այն սերը, որը նա ցուցաբերել էր իր համաքաղաքացիներին, այն, որ նա հրաժարվել էր մասնակցել անպարկեշտ գործերի և զրույցների, այն հալածանքը, որը նա կրել էր Զեյլոնի համար, այն, թե ինչպես էր նա ծառայել մարդկանց իր ռեստորանի միջոցով, մոլորված մարդկանց հասնելը, նրա՝ ժամեր տևող հառաչանքները և լացը՝ կորածների համար, Զեյլոնի ճանապարհներին խստորեն հետևելու նրա դիրքորոշումը, այն, որ նրան չէին հրավիրում հասարակական միջոցառումների՝ Զեյլոնի հանդեպ նախանձավորության համար, այն, որ նա հրաժարվում էր խոսել իր համաքաղաքացիների դեմ և մասնակցել բամբասանքներին, և այսպես շարունակ:

Բարեգործը ցնցված էր՝ տեսնելով այն բազմաթիվ միջոցները, որոնցով նա ազդեցություն էր գործել մարդկանց վրա: Նրա գործերի մեծ մասը, որոնք նա արել էր՝ Զեյլոնին փառք բերելու համար, ծրագրված և կանխամտածված չէր: Նա պարզապես ջանասիրաբար ձգտում էր ապրել այնպես, ինչպես սովորեցնում էին հին գրվածքները:

Որոշ բաներ, որոնք Բարեգործն արել էր, այրվեցին: Նա մեծ զղջում և կսկիծ ապրեց կորսված հնարավորությունների և իր գործած սխալների համար: Այնուամենայնիվ, կորսվեց ընդամենը նրա կյանքի փոքրիկ մասը:

Բարեգործի վարձատրությունը

Նրա գործերը և խոսքերը վերանայելուց հետո թագավորը նայեց իր մոտ նստած կառավարիչներից մեկին և հարցրեց.

– Քանի՞ մարդու վրա է Բարեգործն ազդեցություն թողել՝ իմ թագավորության համար:

– Իմ տե՛ր, 5183 մարդու,– պատասխանեց կառավարիչը:– Մի փոքր ավելի՝ ամբողջ բնակչության մեկ վեցերորդից:

– Այդքան շա՞տ,– զարմացավ Բարեգործը:

Ձեյլոնը պատասխանեց.

– Հիշո՞ւմ ես, որ հին գրվածքներում ես խոստացա «շատացնել այն սերմը, որը դու ցանել ես, և ավելացնել քո արդարության պտուղը»[12]: Բարեգո՛րծ, իմ թագավորությունը գործում է բազմապատկման սկզբունքով:

Դրանից հետո թագավորն ավելի մանրամասնորեն ցույց տվեց, թե ինչպես նրա հնազանդ գործերը բազմապատկվեցին՝ ազդելով բազմաթիվ մարդկանց վրա, թեև նա ղեկավարի դիրք չէր զբաղեցնում իր համայնքում: Նրա գործերի ալիքային ազդեցությունն ապշեցնող էր: Ձեյլոնն ավելացրեց.

– Ինչպես գրված է. «Առատաձեռնը ցրում և բաժանում է: Նա տալիս է աղքատներին: Նրա արդար, լավ, բարի և առատաձեռն գործերը կհարատևեն և կմնան հավիտյան»[13]: Այն կյանքը, որը հնազանդ է ինձ, բազմապատիկ արդյունք կունենա: Ոչ մի քաղաքացի տեղյակ չի լինի իր կյանքի իրական ազդեցության մասին, քանի դեռ չի կանգնել այս Դատաստանի գահի առջև: Սա է պատճառը, որ շատերը չեն հնազանդվում փոքր բաներում: Մարդիկ անկարևոր են համարում դրանք: Այնուամենայնիվ, շատ հաճախ հենց աննշան թվացող բաներն են, որ ամենամեծ հունձքն են բերում այս թագավորության մեջ: Բանալին քո հնազանդությունն էր՝ անկախ հանգամանքներից:

Ձեյլոնը հարցրեց.

– Բարեգո՛րծ, տեսնո՞ւմ ես այս ազատ գահն իմ աջ կողմում:

– Այո՛, իմ տե՛ր,– պատասխանեց նա:

– Սա կլինի այն գահը, որի վրա դու կնստես: Դու կիշխես ինձ հետ՝ մինչև քո կյանքի ավարտը:

Բարեգործը ցնցված էր.

– Տե՛ր, ես արժանի չեմ իշխելու: Ես ընդամենը ռեստորան ունեի: Կան շատ մարդիկ, ովքեր ավելի օժտված են, քան ես: Ինչպե՞ս ես կարող եմ իշխել նման հրաշալի թագավորության մեջ: Եսասերը մեծ

առաջնորդ էր մեր համայնքում: Մի՞թե նա չի կարող իշխել: Խնդրո՛ւմ եմ, տո՛ւր ինձ այնպիսի աշխատանք, որով ես պարզապես կծառայեմ քեզ և քո ժողովրդին:

Ձեյլոնը պատասխանեց.

– Եսասերը գտնվում է Մեծ սրահի ետնամասում: Նա բնատեսարաններ ձևավորող է աշխատելու մեր քաղաքի «Հարթավայրեր» կոչվող հատվածում: Նա նույնպես կծառայի այլ բնատեսարան ձևավորողների մի շարք արտաքին քաղաքներում: Իսկ դու կառավարիչ կլինես այն սիրո շնորհիվ, որը ցուցաբերել ես իմ և իմ ժողովրդի հանդեպ: Քո համբերությունը, հավատարմությունը և խոնարհությունն արժանացրին քեզ այս պատվին: Չե՞ս հիշում իմ խոսքերը հին գրվածքներից. «Որովհետև ամեն մեկը, ով մեծարում է իրեն, կխոնարհեցվի (կստանա դիրք, որը ցածր է պատիվ ստացած կամ վարձատրված մարդկանցից)[14], և նա, ով խոնարհեցնում է իրեն (համեստ կարծիք է ունենում իր մասին և համապատասխանաբար է վարվում), կմեծարվի (բարձր դիրք կստանա)»[14]: Բացի այն, որ դու կիշխես ինձ հետ, ես մի փառավոր տուն եմ պատրաստել քեզ համար Մեծ ծովի ափին՝ հենց իմ տան մոտ, Թագավորական Կենտրոնում: Ես գիտեմ, թե որքան ես դու ծով սիրում, և որքան ես սիրում ծովի ալիքների ձայնը, և այդ պատճառով ես շնորհել եմ այն, ինչ դու ցանկանում ես, և ինչը բերկրանք է պատճառում քեզ: Յուրաքանչյուր հավատարիմ ծառայի ես շնորհում եմ նրա սրտի ցանկությունները:

Բարեգործը խոսք չուներ:

– Դու կիշխես այս քաղաքի տասը շրջաններում,– պատասխանեց թագավորը:– Տասնմեկ այլ իշխաններ քեզ հետ միասին կվերահսկեն Աֆաբել քաղաքի բոլոր 120 շրջանները: Դու կաշխատես անմիջապես ինձ հետ և մեր քաղաքի մյուս յոթանասունյոթ կառավարիչների հետ, ովքեր նստում են այս գահերի վրա: Մյուս կառավարիչներին վստահված են այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են կրթությունը, արտադրությունը, ժամանցային հաստատությունները, արվեստը և շատ այլ բնագավառներ: Միայն այս յոթանասունյոթ կառավարիչները, իմ Հայրը և ես՝ մենք ենք ծրագրում, որոշում և ղեկավարում Աֆաբելի կյանքը: Դու կլինես իմ վստահելի խորհրդականներից և միջնորդներից մեկը՝ իմ և իմ քաղաքացիների միջև:

Մինչ Ձեյլոնն ասում էր այս ամենը Բարեգործին, Համեստը կանգնած էր սրահի ետևում և սրտանց ուրախանում էր իր համադասարանցու համար: Այնուամենայնիվ, նրա ուրախության մեջ նաև զղջման խայթ կար այն բանի համար, որ ինքը հնարավորություն ուներ ազդե-

ցություն թողնել հազարավոր մարդկանց կյանքերում Աֆաբելի թագավորության համար, բայց այդպես էլ չարեց դա: Նա կարող էր լինել այդ կառավարիչներից մեկը, ովքեր իշխանություն ունեին աշխատելու անմիջապես Զեյլոնի հետ: Նա շնորհակալ էր, որ ընդունվել էր Աֆաբելի թագավորության մեջ, բայց գիտակցում էր, որ վատնել էր իր կարճ ժամանակն էնդելում, և որ դա կազդեր իր կյանքի մնացած 130 տարիների վրա:

Թագավորն ասաց Գլխավոր պահապանին.

– Բե՛ր ինձ Հաղթողի թագը և Իշխանության գավազանը:

Թագը և գավազանը վերցնելուն պես՝ Զեյլոնը դրեց թագը Բարեգործի գլխին:

– Կեցցե՛ս,– բացականչեց թագավորը:– Դու վստահելի ծառա ես: Դու հավատարիմ եղար այն փոքրի մեջ, որը ես վստահել էի քեզ, և այժմ, որպես վարձատրություն, դու տասը շրջանների և տասներկու քաղաքների կառավարիչ կլինես:

Թագավորը տվեց նրան գավազանը և ասաց.

– Քո անունն այլևս չի լինի Բարեգործ, որովհետև ես նոր անուն եմ տալիս քեզ: Քո անունը կլինի Հույսով հաղթող: Չէ՞ որ ես ասել էի էնդելի բոլոր քաղաքացիներին. «Նրան, ով հաղթի և կատարի իմ կամքը մինչև վերջ, ես կտամ իշխանություն շրջանների և ազգերի վրա. նա կիշխի նրանց երկաթե գավազանով, ինչպես որ ես իշխանություն ստացա իմ Հորից»[16]:

Զեյլոնը մոտեցավ այն սեղանին, որտեղ դրված էր վերջին պտուղը: Նա բերեց այն Հույսով հաղթողին և ասաց.

– Իմ թանկագի՛ն ընկեր և իշխանակից, դու կարող ես ճաշակել Կյանքի ծառի պտղից:

Մյուսների պես Հույսով հաղթողն էլ զգաց, թե ինչպես է մաքրվում և սրբվում՝ ճաշակելով այս ամենահամեղ պտուղը: Նրա մտքերը համակվեցին ավելի մեծ սիրով, և նրա ծառայելու ցանկությունն ընդլայնվեց՝ հասնելով այնպիսի չափերի, որոնք անցյալում անհայտ էին իրեն: Նա մաքրվեց էնդելի բոլոր ցավերից և խավար մտքերից: Ամեն ինչ արդեն նոր էր: Նա զգաց ոգեշնչում, երջանկություն, հույս և հավատք: Նա նայեց Զեյլոնին ու ժպտաց: Սա մինչև կյանքի վերջը տևող ընկերակցության սկիզբն էր:

Զեյլոնն ուղեկցեց Հույսով հաղթողին վեր՝ դեպի իր գահը, և ասաց.

– Հույսով հաղթո՛ղ, շրջվի՛ր և նայի՛ր քո ընտանիքին:

Նա շրջվեց՝ հանդիպելով բուռն ծափահարությունների: Ամբողջ սրահը թնդաց ուրախության ձայներով, մարդիկ սկսեցին պարել: Ոգևո-

ությունն ավելին էր, քան ցանկացած այլ մարդու դատաստանի ժամանակ: Մթնոլորտը լի էր ցնծությամբ և տոնակատարության գոչյուններով: Հույսով հաղթողի դեմքը ողողվեց լուսավոր ժպիտով. այդպիսի սիրառատ ընդունելությունը զարմացրեց նրան: Նրա թագավորը գրկեց նրան և ուրախությամբ հայտարարեց.

– Լավ, բարի և հավատարիմ ծառա: Մտի՛ր քո տիրոջ ուրախության մեջ[17]:

Այսպես է ավարտվում մեր պատմությունը մեծ թագավորի, նրա ծառաների և Աֆաբելի թագավորության մասին:

Խրատի և զգուշացման խոսք

Այս գլխում մենք պատկերացում կազմեցինք այն մասին, թե ինչպիսին է լինելու սուրբերի դատաստանը: Անկասկած, Քրիստոսի ատյանի փառքը լինելու է շատ ավելին, քան որևէ բան՝ նկարագրված այս պատմության մեջ: Այնուամենայնիվ, այս այլաբանությունը ներկայացնում է բազմաթիվ ճշմարտություններ Աստծո թագավորության մասին:

Այս պատմության նպատակը ոչ թե ճշմարտությունը հաստատելն է, այլ՝ բացահայտելը և փոխանցելը: Երբ Հիսուսն առակներ էր պատմում, մարդիկ հասկանում էին իմաստը և չէին կենտրոնանում այն մանրուքների վրա, որոնք այնքան էլ էական չէին՝ Նրա կողմից փոխանցվող ճշմարտությունները հասկանալու համար:

Նույն կերպով ես փորձեցի մանրամասնորեն շեշտադրել այն կարևոր գաղափարներն այս պատմության մեջ, որոնք պատկերում են Քրիստոսի հավիտենական թագավորությունը: Մինչև գրքի ավարտը, կարող եք կրկին կարդալ այս այլաբանությունը, ինչի շնորհիվ ավելի խորը կընկալեք այն աստվածաշնչյան ուսմունքները, որոնք գտնվում են այս գրքի մնացած գլուխներում:

ԳԼՈՒԽ 9

ԵՐԿԻՆՔ

«Բայց ես արդարությամբ կտեսնեմ Քո երեսը,
և երբ որ արթնանամ, կկշտանամ Քո նմանությամբ»:
— Սաղմոս 17.15

Այժմ խոսենք այն մասին, թե ինչ է կատարվում, երբ արդարները հեռանում են այս կյանքից: Ինչպես որ գոյություն ունի ժամանակավոր բնակավայր անհավատների համար, որը կոչվում է դժոխք (Հադես), և վերջնական բնակավայր, որը կոչվում է Կրակի լիճ, այնպես էլ գոյություն ունի երկու վայր այս կյանքից հեռացած հավատացյալների համար: Ներկա վայրը, որտեղ նրանք բնակվում են, շատերի կողմից կոչվում է *Երկինք*, բայց ըստ Աստծո Խոսքի՝ այն կոչվում է *երկնային Երուսաղեմ:* Արդարների վերջնական բնակավայրը նույնպես կոչվում է Երուսաղեմ, բայց այն լինելու է այս երկրի վրա: Սա այն քաղաքն է, որը կիջնի Երկնքից վերջնական դատաստանից հետո: Այն կոչվում է *Նոր Երուսաղեմ* (տե՛ս Հայտն. 21.2):

Վերին Երուսաղեմը

> «Այլ՝ մոտեցել եք Սիոն սարին և կենդանի Աստծո քաղաքին, երկնային Երուսաղեմին և բյուրավոր հրեշտակներին և Երկնքում գրված անդրանիկների հանդեսին և եկեղեցուն և ամենի դատավոր Աստծուն և կատարյալ արդարների հոգիներին և Նոր կտակարանի միջնորդ Հիսուսին...» (Եբրայեցիների 12.22–24):

Երկնային Երուսաղեմը կամ «վերին Երուսաղեմը» (տե՛ս Գաղատ. 4.26) քաղաք է, որին մեր այլաբանության մեջ համապատասխանում է ԱՖաբել քաղաքը: Այն կառուցված է Սիոն կոչված սարի վրա: Այդտեղ բնակվում են Հայրը, Որդին և անթիվ հրեշտակներ: Երկնքում գրված անդրանիկների հանդեսը և եկեղեցին, այսինքն՝ հինկտակարանյան սրբերը և Քրիստոսում ննջածները նույնպես բնակվում են այդտեղ:

Ուշադրություն դարձրեք, որ «կատարյալ արդարների հոգիները» նույնպես այս քաղաքում են: Ովքե՞ր են այս մարդիկ, եթե հաշվի առ-

նենք, որ հեղինակն արդեն նշել է և՛ Հին, և՛ Նոր ուխտերի սրբերին, ովքեր գնացել են՝ իրենց վարձատրությունն ստանալու համար:

Հիշե՛ք, որ Աստծո Հոգով ծնվելուց հետո մենք նոր ստեղծվածներ ենք դառնում: Մեր հոգիները դառնում են կատարյալ՝ Քրիստոսի նմանությամբ, և մենք գտնվում ենք Նրանում: Այս խոսքում հեղինակը չի խոսում մարդկանց անձերի և մարմինների մասին, այլ միայն՝ հոգիների: Ես հավատում եմ, որ սա վերաբերում է այն սրբերին, ովքեր ծառայում են Հիսուսին այստեղ՝ երկրի վրա: Մտածե՛ք այս մասին: Եբրայեցիների նամակի հեղինակը դրդում է մեզ. «Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհքի աթոռին...» (Եբրայեցիների 4.16): Շնորհքի աթոռը կամ գահը գտնվում է Աստծո քաղաքի մեջտեղում, և այս հրավերն ուղղված է մեզ՝ այս երկրում գտնվողներիս: Հնարավո՞ր է արդյոք, որ շատերը, ովքեր դեռ ապրում են այս երկրի վրա, քաջ հայտնի են գահի սրահում, որովհետև նրանք հաճախ են գնում այդտեղ՝ աղոթքի միջոցով:

Մենք հոգիներ ենք, ովքեր ունեն անձ՝ բաղկացած մտքից, կամքից և զգացմունքներից, և ներկայումս ապրում ենք ֆիզիկական մարմիններում: Հիսուսն ասաց, որ մենք կարող ենք ճշմարտապես երկրպագել Աստծուն միայն «հոգով և ճշմարտությամբ» (Հովհաննես 4.24): Պողոսը կրկին շեշտադրում է սա. «Որովհետև Աստված ինձ վկա է, որին ես պաշտում եմ իմ հոգով՝ Նրա Որդու Ավետարանում...» (Հռոմեացիների 1.9): Քանի որ մեր հոգիները ստեղծվել են Աստծո պատկերով, և մենք վերստին ծնվել ենք, Հիսուսի արյան և Սուրբ Հոգու զորության միջոցով կարող ենք մուտք գործել Աստծո գահի սրահը՝ երբ երկրպագելու կարիք կամ ցանկություն ունենանք:

Երկինք կատարած այցելություններ

Վերին Երուսաղեմը ներկայումս մի վայրում է, որը կոչվում է երրորդ Երկինք: Սա իրական վայր է, որը Պողոս առաքյալն այցելել էր իր մահվանից առաջ: Նա գրում է.

> «Կգամ Տիրոջ տեսիլքներին և հայտնություններին: Մի մարդ գիտեմ Քրիստոսում տասնչորս տարի առաջ, թե մարմնով էր՝ չգիտեմ, և թե առանց մարմնի էր՝ չգիտեմ, Աստված գիտի. նա հափշտակվեց մինչև երրորդ Երկինք: Եվ գիտեմ այնպիսի մարդուն, թե՛ մարմնով, և թե՛ առանց մարմնի էր՝ չգիտեմ, Աստված գիտի, որ նա հափշտակվեց դրախտի մեջ, և անասելի բաներ լսեց, որ չպետք է մարդուն ասվի» (Բ Կորնթացիների 12.1–4):

Աստվածաբանները համաձայն են, որ Պողոսը խոսում էր իր մասին: «Նյու լիվինգ» թարգմանության մեջ երկրորդ խոսքը գրված է հետևյալ կերպով. «Ես Երկինք հափշտակվեցի տասնչորս տարի առաջ»: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չգիտեր՝ ինքը մարմնո՞վ էր այդտեղ, թե՞ ոչ: Սա կարելի է բացատրել այն բանով, որ Երկինքը՝ իրական և նյութական վայր է: Շատերը մտածում են, որ այն անտեսանելի վայր է, որտեղ մարդիկ սավառնում են ուրվականների պես: Ո՛չ, այն նյութական վայր է, որտեղ կան փողոցներ, ծառեր, կենդանիներ, շենքեր, ջուր և այլն:

Ես ճանաչում եմ մի քանի մարդու, ովքեր Երկինք են գնացել և վերադարձել են, բայց թույլ տվեք պատմել իմ ամենասիրելի պատմություններից մեկը: Ես մի հովիվ ընկեր ունեմ, ում անունը Գրեգ է: 1979 թվականին՝ նրա հովվական ծառայության առաջին օրը, նա տուն վերադարձավ հավաքույթից և տեսավ, որ իր կինը նստած է աստիճաններին և անվերահսկելի կերպով լաց է լինում: Նա անմիջապես հասկացավ, որ շատ վատ բան էր տեղի ունեցել: Նա իմացավ, որ իր տասնամյա որդի Զասթինը[1] փոքրիկ հեռուստացույց էր տարել լոգասենյակ, որպեսզի ֆուտբոլային խաղ դիտեր լոգանքի ժամանակ: Նա պատահաբար գցել էր հեռուստացույցը լոգարանի մեջ և էլեկտրահարվել էր:

Երբ Գրեգը գնաց որդու մոտ, Զասթինի զարկերակը չէր աշխատում: Նրա մարմինը սառը և կապտած էր, նրա բիբերը խիստ լայնացած էին, ինչը ցույց էր տալիս, որ նրա ուղեղը չէր գործում: Գրեգը շերիֆի տեղակալ էր եղել Լոս Անջելեսի ոստիկանությունում, այնպես որ, նա գիտեր, թե ինչպես ցուցաբերեր առաջին բուժօգնությունը: Նա ականատես էր եղել բազմաթիվ մահերի: Եթե նա հանդիպեր նման իրավիճակի, երբ ոստիկանության սպա էր, կհայտարարեր, որ տուժածը մահացել է, և քննիչի կկանչեր:

Այնուամենայնիվ, Գրեգը հավատացյալ էր և գիտեր աղոթքի զորության մասին: Նա սկսեց աղոթել և արհեստական շնչառություն տալ իր որդուն: Մի քանի րոպե անց եկան շտապ օգնության աշխատողները: Գրեգը թույլ տվեց, որ մասնագետները կատարեին իրենց գործը, իսկ ինքը շարունակեց աղոթել: Շտապ օգնության թիմն աշխատեց երեխայի հետ քառասունհինգ րոպե, բայց չկարողացավ կյանքի վերադարձնել նրան: Էլեկտրասրտագրման սարքն ամբողջ ընթացքում ուղիղ գիծ էր ցույց տալիս: Շտապ օգնության աշխատողներն այլևս չէին ցանկանում շարունակել այն, ինչն, իրենց կարծիքով, մոլեռանդություն էր:

Ի վերջո, Գրեգն աղոթեց. «Հա՛յր, ես այլևս հավատք չունեմ: Ես սպառեցի իմ հավատքը, բայց գիտեմ, որ Քո Խոսքում Դու խոսում ես մեկ այլ հավատքի մասին» (նա խոսում էր հավատքի պարգևի մասին, որ գրված է Ա Կորնթացիների 12.9-ում):

Գրեգի խոսքերով՝ նա ձեռքի նման մի բան զգաց իր գլխավերևում: Հենց այդ պահին նա զգաց, որ իր հոգուց մեծ ուժ և իշխանություն բարձրացավ, և նա գոչեց իր որդուն.

– Դու կապրե՛ս և չե՛ս մահանա: Հիսուսի անունո՛վ:

Հանկարծ էլեկտրասրտագրման սարքն սկսեց ազդանշաններ տալ, և զարկերակային շարժ երևաց էկրանին: Շտապ օգնության աշխատողները լցվեցին խանդավառությամբ: Երբ Զասթինին իջեցրին տան աստիճաններից և դրեցին շտապ օգնության մեքենայի մեջ, նրա մարմնի գույնը կապույտից փոխվել էր վարդագույնի, նրա աչքերը լիովին վերականգնվել էին, իսկ մարմինն արդեն տաք էր:

Գրեգն այնքա՜ն էր ոգեշնչվել: Նրա որդին կենդանի էր և առողջ: Այժմ նա վկայություն ուներ մեծ հրաշքի մասին և կարող էր պատմել իր բոլոր ընկերներին, թե ինչ արեց Աստված: Այնուամենայնիվ, նա չգիտեր, որ պայքարն իր որդու կյանքի համար դեռ նոր էր սկսվել:

Բժիշկները տեղեկացրին, որ տղան անգիտակից վիճակում է: Հետազոտություններից հետո նրանք պարզեցին, որ նրա երիկամների հյուսվածքները դուրս էին գալիս կաթետերով: Ոչ մասնագիտական լեզվով դա նշանակում է, որ նրա ներքին օրգանները քայքայվում էին: Բժիշկներն ասացին Գրեգին, որ եթե նրա որդին ապրի, նա կլինի բույսի պես: Ավելի ուշ նրանք ասացին, որ նրա ուղեղը կգործի երեք ամսական երեխայի ուղեղի պես, իսկ նրա մտավոր զարգացման գործակիցը հավասար կլինի 0.01-ի:

Յոթ ամիս շարունակ նրա ընտանիքն աղոթում էր և հրաժարվում էր հանձնվել, ի վերջո, Զասթինը հանկարծ արթնացավ անգիտակից վիճակից: Հայրը նստած էր նրա անկողնու մոտ, երբ դա տեղի ունեցավ, և սկսեց հաջորդաբար հարցեր տալ որդուն՝ անմիջապես պատասխաններ ստանալով:

Զասթինը միջնակարգ կրթություն ստացավ, ավարտեց Լոս Անջելեսի համալսարանը և սովորեց Աստվածաշնչյան դպրոցում՝ ստանալով պատվոգրեր բոլոր այդ հաստատությունների կողմից: Նա նույնիսկ իր դասարանի նախագահն էր միջնակարգ դպրոցում: Այսօր նա հրաշալի ընտանիք ունի:

«Հայրի՛կ, ես Հիսուսի հետ էի»

Երեք օր անց այն բանից հետո, երբ Զասթինին դուրս գրեցին հիվանդանոցից, Գրեգը նկատեց, որ իր որդու երեսը լուսավորվում է:

– Ի՞նչ է կատարվում, Զասթի՛ն,– հարցրեց նա:

– Հայրի՛կ, ես Հիսուսի հետ էի,– պատասխանեց Զասթինը: Երբ հեռուստացույցն ընկավ լոգարանի մեջ, ես ոչինչ չզգացի: Մի մեծ հրեշտակ բռնեց իմ աջ ձեռքը և դուրս հանեց ինձ մարմնիցս: Մենք թռչեցինք մի թունելով. մեր թռիչքն ավելի ու ավելի էր արագանում: Հասանք լույսի արագությանը, մինչև որ վայրէջք կատարեցինք Երկնքի փողոցներից մեկում:

Զասթինը պատմեց իր հորը, որ Երկնքի փողոցները ոսկեպատ չեն. դրանք պատրաստված են մաքուր ոսկուց, և նա տեսնում էր այդ փողոցների միջով: Երկրի վրա ոսկին չի կարող այնքան լիարժեք մաքրված լինել, որքան Երկնքում, բայց իր ամենամաքուր վիճակում ոսկին թափանցիկ է: Նույնիսկ երկրի վրա այն հաճախ օգտագործվում է պատուհանների պատրաստման մեջ՝ դրանց ոսկեգույն երանգ հաղորդելու համար (այդպես պատրաստում էին հին տիեզերագնացների սաղավարտների ապակիները, օդաչուների խցիկների պատուհանները որոշ ինքնաթիռներում, նաև՝ պատուհանները որոշ շենքերում):

Զասթինը պատմեց, որ առաջին մարդիկ, ովքեր ողջունեցին իրեն այդ երկնային փողոցում, իրենց մահացած բարեկամներն էին: Նա տվեց այդ մարդկանց անունները, թեև երբեք չէր հանդիպել նրանցից մի քանիսին, և չգիտեր նրանց անունները (նրա մայրը և հայրը ճանաչեցին այդ մարդկանց): Այդ խմբում մի կին կար, ում անունը Ֆիլիս էր: Նա իրենց հարևանն էր: Զասթինի մայրն աղոթել էր նրա հետ և առաջնորդել էր նրան Հիսուսին՝ Զասթինի էլեկտրահարվելուց մեկ ամիս առաջ: Այդ կինը մահացել էր Հիսուսին ընդունելուց երկու շաբաթ անց:

Զասթինը խոսում էր այդ մարդկանց հետ, երբ հանկարծ ինչ-որ ձայներ լսեց, և նրան շրջապատող մարդիկ սկսեցին հեռվանալ. նա տեսավ Հիսուսին:

Տերը տարավ Զասթինին երկնային շրջագայության: Երկնային քաղաքում շատ փողոցներ և շենքեր կային: Այն իսկապես մեծ էր: Ծաղիկները, խոտը և նույնիսկ քարերը կենդանի էին և ներդաշնակ երգում էին: Զասթինն ասաց, որ թվում էր՝ դրանք փառաբանում էին Աստծուն: Երբ նա դնում էր իր ոտքը որևէ խոտի կամ ծաղկի վրա, այն չէր վնասվում, այլ անմիջապես վերադառնում էր նախկին տեսքին: Զասթինը նկատեց, որ բոլոր գույներն արտահայտիչ և վառ էին՝ շատ ավելի վառ, քան երկրի վրա: Այդտեղ նույնիսկ կային այնպիսի գույներ, որոնք նա երբեք չէր տեսել: Նա նույնպես արտոնություն ունեցավ տեսնելու իր մոր, հոր, եղբոր և քրոջ առանձնատները:

Այդ ամենից հետո նրան մեծ ցնցում էր սպասվում. Հիսուսն ասաց, որ ինքը պետք է երկիր վերադառնար: Զասթինը չէր ուզում հեռանալ

Երկնքից, բայց Հիսուսը տարավ նրան մի վայր, որտեղից մի քող վեր քաշեց: Ձասթինը տեսավ, որ իր հայրը ետ էր կանչում իրեն: Հիսուսն ասաց.

– Նա քո հայրն է և քեզ ետ կանչելու իշխանություն ունի:

Ավարտելով իր պատմությունը՝ Ձասթինը խնդրեց հորը, որպեսզի ետ չկանչի իրեն, եթե ինքը կրկին մահանա: Երբ Գրեգը պատմեց ինձ այդ մասին, դա զվարճալի թվաց: Երկինքն այն աստիճան գերազանց է երկրից, որ, ինչպես ես պարզեցի, այն մարդիկ, ովքեր ճաշակել են այն, միշտ մեծ դժվարությամբ են ետ վերադարձել:

Պողոսը նույնպես ներքին պայքար ուներ այդ պատճառով: Նա գրում է այդ մասին Փիլիպեի եկեղեցուն. «Ես փափագում և ցանկանում եմ հեռանալ (ազատվել այս աշխարհից, մեկնել) և լինել Քրիստոսի հետ, որովհետև դա շատ ավելի լավ է» (Փիլիպեցիների 1.23, AMP): Ոչ թե ուղղակի լավ է, այլ՝ շատ ավելի լավ է: Պողոսը ճաշակել էր Աստծո քաղաքը և կամենում էր վերադառնալ այնտեղ, բայց նա որոշեց մնալ՝ Աստծո թագավորության օգտի համար:

Հետագայում Ձասթինը պատմեց իր հորը, որ երբ Երկնքում էր, տասը տարեկան չէր: Նա չափահաս տղամարդու մարմին ուներ: Շատերը, ինչպես և Ձասթինը, հավատում են, որ հայտնվելով մեր փառավորված մարմիններում՝ բոլորս երեսուներեք տարեկան ենք լինելու: Դա տրամաբանական է թվում, քանի որ այդ տարիքում Հիսուսը խաչվեց, և Աստծո Խոսքն ասում է. «Այո՛, թանկագի՛ն ընկերներ, մենք արդեն Աստծո զավակներ ենք և չենք կարող նույնիսկ պատկերացնել, թե ինչպիսին կլինենք, երբ Քրիստոսը վերադառնա: Բայց հաստատ գիտենք, որ երբ Նա գա, մենք կլինենք Նրա նման» (Ա Հովհաննես 3.2, NLT):

Ահա միայն մեկը այն բազմաթիվ պատմություններից, որոնք ես կարող էի պատմել: Ինչպես և Աստծո Խոսքը, այն ցույց է տալիս, որ Երկինքն իրական է: Նրանք, ովքեր հավատարմորեն ծառայում են Հիսուսին, մուտք կգործեն այդ քաղաքը, երբ գնան այս երկրից:

Հոգու, անձի և մարմնի փրկությունը

Ինչպես արդեն նշեցի, մարդու հոգին նոր արարած է դառնում այն պահին, երբ նա ընդունում է Հիսուսին՝ որպես Տեր: Նա ակնթարթորեն վերստեղծվում է՝ Հիսուսի նմանությամբ: Հովհաննես առաքյալը հաստատում է այս փաստը. «Ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք *այս աշխարհում»* (Ա Հովհաննես 4.17): Ինչպես տեսնում եք, Հովհաննեսը դիմում է հավատացյալներին, ովքեր այստեղ՝ երկրի վրա են, ոչ թե

նրանց, ովքեր արդեն գնացել են՝ իրենց վարձատրությունն ստանալու համար: Այն մարդը, ով ճշմարտապես վերստին ծնված է, կատարյալ է դառնում Աստծո Հոգով այստեղ և հիմա:

Անմիջապես մեր հոգու փրկությունից հետո սկսվում է մեր անձի փրկության ընթացքը: Ինչպես արդեն նշեցինք, անձը բաղկացած է մտքից, կամքից և զգացմունքներից: Մեր անձը փրկվում կամ վերափոխվում է Աստծո Խոսքով և Աստծո Խոսքին հնազանդվելով: Հակոբոս առաքյալը հաստատում է սա՝ ասելով. «Ուստի, իմ սիրելի եղբայրնե՛ր... ամեն աղտեղություն և չարության առավելությունը դե՛ն գցեք և խոնարհությամբ ընդունե՛ք *ձեր մեջ սերմված խոսքը*, որ կարող է *ձեր հոգիներն* (կամ՝ անձերը) *ապրեցնել:* Բայց խոսքը *անո՛ղ եղեք*, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.19, 21,22): Կարևոր է նշել, որ Հակոբոսն անձի փրկության մասին իր խոսքն ուղղում էր *եղբայրներին*, ոչ թե անհավատներին: Նա շեշտադրում էր խոսքի և՛ լսելը, և՛ կատարելը:

Անձը՝ մարդու միակ մասն է, որի փրկված լինելու աստիճանը որոշում ենք մենք: Մենք կարող ենք արագացնել մեր անձի փրկության գործընթացը՝ լսելով Աստծո Խոսքը և հնազանդվելով: Այնուամենայնիվ, մենք կարող ենք նաև դանդաղեցնել այդ գործընթացը՝ անտեսելով այն, ինչ Աստված ասել է: Մեր անձերի վերափոխումն անչափ կարևոր է՝ մեր հավատքի ընթացքը բարեհաջող ավարտելու համար:

Վերջապես, մենք ունենք ևս մեկ մաս, որը պետք է փրկվի՝ մեր մարմինները: Ուշադրությա՛մբ կարդացեք այն, ինչ Պողոսը գրում է այս մասին:

> «Որովհետև մենք գիտենք, որ երբ այս երկրային վրանը, որում մենք ապրում ենք, քանդվի (երբ մահանանք և թողնենք մեր մարմինները), մենք տուն կունենանք Երկնքում՝ հավիտենական մարմին՝ պատրաստված մեզ համար անձամբ Աստծո կողմից, և ոչ թե մարդկանց ձեռքերով: Մենք հոգնում ենք մեր այս մարմիններում և փափագում ենք այն օրվան, երբ կհագնենք մեր երկնային մարմինները՝ նոր հագուստի պես: Որովհետև մենք չենք լինի հոգիներ՝ առանց մարմինների, այլ՝ նոր երկնային մարմիններ կհագնենք: Մեր մահացող մարմինները դրդում են մեզ՝ հառաչանքներ և հոգոցներ հանել, բայց այնպես չէ, որ ուզում ենք մահանալ և ընդհանրապես մարմին չունենալ: Մենք ուզում ենք մտնել մեր նոր մարմինների մեջ, որպեսզի այս մահացող մարմինները կլանվեն հավիտենական կյանքով: Ինքը՝ Աստված, պատրաստել է մեզ սրա համար, և որպես երաշխիք՝ տվել է մեզ Իր Սուրբ Հոգին: Այնպես որ, մենք միշտ վստահ ենք, թեև գիտենք, որ քանի դեռ ապրում ենք այս մարմիններում, մենք Տիրոջ հետ չենք: Ահա թե ինչու ենք ապրում հավատալով, և ոչ թե տեսնելով: Այո՛, մենք լիովին վստահ ենք և ավելի կցանկանա-

յինք հեռանալ այս մարմիններից, քանի որ այդ դեպքում մենք Տիրոջ հետ կլինեինք» (Բ Կորնթացիների 5.1–8, NLT):

Այս խոսքերը մեծ հույս են տալիս մեզ և նույնիսկ մաքրում են մեր անձերը: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը պարզապես չի նշում այն փաստը, որ մենք հավիտենական մարմիններ կունենանք, այլ հիմնվում է դրա վրա: Մեկ այլ հատվածում նա գրում է. «Որովհետև այս կործանվողը պետք է հագնի անկործանելին, և այս մահացողը՝ անմահությունը» (Ա Կորնթացիների 15.53, NIV): Մեր մարմինները կլինեն ճիշտ Հիսուսի մարմնի պես, որովհետև Աստծո Խոսքում գրված է. «...Նրա հարությանը... նման կլինենք» (Հռոմեացիների 6.5), և «Սիրելինե՛ր, հիմա Աստծո որդիներ ենք, և տակավին հայտնված չէ, թե ինչ պիտի լինենք: Բայց գիտենք, թե երբ որ Նա հայտնվի, Նրա նման կլինենք» (Ա Հովհաննես 3.2):

Տեսնենք, թե ինչպիսին էր Հիսուսի մարմինը հարությունից հետո: Մենք կունենանք Նրա մարմնի բոլոր հատկանիշները, երբ տեղի ունենա մեր մարմնի փրկությունը: Եկեք սկսենք այն բանից, թե ինչ կատարվեց հենց գերեզմանի մոտ այն առավոտ, երբ Նա հարություն առավ: Մարիամ Մագդաղենացին առաջինը հայտնաբերեց դատարկ գերեզմանը և լաց եղավ՝ մտածելով, որ Տիրոջ մարմինը գողացել էին:

«[Նա] ...դարձավ իր ետին կողմը, և Հիսուսին տեսավ կանգնած, և չգիտեր, թե Հիսուսն է: Հիսուսը նրան ասաց. «Կի՛ն, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես որոնում»:

Նա էլ, կարծելով թե պարտիզպանն է, ասաց. «Տե՛ր, եթե Դու վեր առար Նրան, ասա ինձ՝ ո՞ւր ես դրել, որ ես վեր առնեմ»» (Հովհաննես 20.14,15):

Հիսուսի տեսքը չէր տարբերվում հասարակ մարդու տեսքից: Նա նման չէր ֆանտաստիկ ֆիլմերում պատկերված այլմոլորակայիններին: Մարիամը չճանաչեց Նրան, որովհետև նա չէր համարձակվի հավատալ, որ Հիսուսը ողջ էր: Նա տեսավ, թե ինչպես Հիսուսին դաժանաբար սպանեցին, իսկ հետո թաղեցին: Միայն, երբ Հիսուսն անձամբ խոսեց նրա հետ, նա հավատաց, որ իր առջև կանգնած էր Տերը: Նա շփոթեց Հիսուսին պարտիզպանի հետ: Այնպես որ, Նրա մարմինը շատ նման է մեր մարմնին:

Հիսուսի մարմինն իր տեսքով չէր տարբերվում սովորական մարդու մարմնից: Այնուամենայնիվ, մենք պետք է հարցնենք՝ Մարիամը տեսիլքով տեսնում էր Նրա հոգի՞ն, թե՞ Նա իսկապես մարմին ուներ: Այս հարցը պարզորեն պատասխանվում է մեկ այլ պատմության մեջ, որում

Հիսուսը հայտնվեց Իր աշակերտներին: Նա ասաց. «Ինչո՞ւ եք շփոթված: Ինչո՞ւ համար խորհուրդներ են վեր կենում ձեր սրտերում: Տեսե՛ք Իմ ձեռքերը և Իմ ոտքերը, որ Ես Ինքս եմ. շոշափե՛ք Ինձ և տեսե՛ք, որովհետև հոգին մարմին և ոսկորներ չունի, ինչպես Ինձ եք տեսնում, որ ունեմ» (Ղուկաս 24.38,39):

Հիսուսը մարմին և ոսկորնե՛ր ուներ: Ուրեմն, մենք նույնպես կունենանք դրանք: Բայց ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը ոչինչ չասաց արյան մասին: Պատճառն այն է, որ Նրա արյունը թափվեց Աստծո Շնորհքի գահի առջև: Այժմ, իմ համոզմամբ, Նրա երակներում հոսում է Աստծո փառավոր կյանքը:

Հիսուսը նույնպես կարող էր կերակուր ուտել: Գրված է. «Եվ քանի որ դեռ չէին հավատում ուրախությունից և զարմացած էին, ասաց նրանց. «Կերակուր ունե՞ք այստեղ»: Եվ նրանք խորոված ձկան կտոր տվին Նրան և մեղրախորիսխ: Եվ առավ, կերավ նրանց առջև» (Ղուկաս 24.41–43):

Հիսուսը մեկ անգամ չէ, որ կերավ Իր աշակերտների ներկայությամբ: Կան ևս երկու գրի առնված դեպքեր. մեկը՝ մի մարդու տանը, ում Նա հանդիպեց Էմմաուսի ճանապարհին, և մյուսը՝ երբ Նա ծովի մոտ նախաճաշ պատրաստեց Իր տասնմեկ աշակերտների համար: Նշանակում է՝ մենք ուտելու ենք մեր փառավոր մարմիններով:

Իր փառավորված մարմնով Հիսուսը կարող էր խոսել, երգել, քայլել, առարկաներ բռնել և այլն՝ ինչպես հասարակ մարդ, բայց Նա նույնպես կարող էր անցնել պատերի միջով և մեկ ակնթարթում անհայտանալ:

Միգուցե հարցնեք. «Նա մարմին և ոսկորներ ուներ, բայց կարող էր անցնել պատերի միջով և անհայտանա՞լ»: Իհա՛րկե: Կարդացե՛ք, թե ինչ է գրում Հովհաննեսը. «Այդ երեկո՝ շաբաթվա առաջին օրը, աշակերտները հավաքվել էին փակ դռների ետևում, որովհետև վախենում էին հրեա առաջնորդներից: Հանկարծ Հիսուսը կանգնեց այդտեղ՝ նրանց միջև» (Հովհաննես 20.19, NLT):

Յուրայինների հետ այս հանդիպման ընթացքում Հիսուսը խնդրեց Թովմասին՝ դնել մատը Իր ձեռքերի ափերի մեջ, և մտցնել ձեռքն Իր կողի մեջ: Կրկին մենք հստակորեն տեսնում ենք, որ Հիսուսը մարմին և ոսկորներ ուներ: Այդ դեպքում, ինչպե՞ս Նա հանկարծակի կանգնեց նրանց միջև, թեև դռները փակված էին: Նա մտավ պատի միջով և պարզապես հայտնվեց: Բացի այդ՝ Նա հեշտությամբ անհայտանում էր, ինչի մասին նույնպես գրված է: Գրված է, որ Նա հաց կիսեց այն մարդկանց հետ, որոնց հանդիպեց Էմմաուսի ճանապարհին, «Եվ նրանց աչքերը բացվեցին, և Նրան ճանաչեցին: Եվ Նա աներևույթ եղավ նրանցից» (Ղուկաս 24.31):

Մենք նույնպես կկարողանանք անհայտանալ և հայտնվել մեկ այլ վայրում մեր հարություն առած մարմիններով: Սա բացատրում է, թե ինչպես մենք կկարողանանք անցնել մեծ տարածություններ նոր երկնքի և նոր երկրի ժամանակ: Այս ունակությունն անհրաժեշտ կլինի մեզ, որովհետև Աստծո քաղաքը 2250 կիլոմետր երկարություն և նույնքան լայնություն ունի, և բացի այդ՝ մենք կարիք կունենանք ճանապարհորդելու դեպի մյուս գալակտիկաները: Նույնպես կկարողանանք սավառնել օդում. հիշե՛ք, որ Հիսուսը վեր գնաց դեպի Երկինք՝ Իր աշակերտների հետ քառասուն օր շարունակ հաղորդակցվելուց հետո: Այն բաներից մեկը, որ Ձասթինը պատմել էր իր հորը (այլ մարդիկ, որոնք եղել են Երկնքում, և որոնց ես ճանաչում եմ, պատմում են նույնը) այն էր, որ մարդը կարող է քայլել, սավառնել կամ ակնթարթորեն մեկ այլ վայր տեղափոխվել: Իր շրջագայության ընթացքում Ձասթինը երբեմն քայլում էր, իսկ երբեմն սավառնում էր՝ մեկ վայրից մյուսը հասնելու համար:

Քրիստոսի հազարամյա թագավորությունը

Մենք պետք է խոսենք Աստծո քաղաքի տեղափոխման մասին, բայց նախ՝ անդրադառնանք դրան նախորդող իրադարձություններին: Եկեղեցու ժամանակաշրջանն ավարտվելու է յոթամյա Մեծ պատուհասով: Անօրինության մարդը՝ հակաքրիստոսը, ի հայտ կգա և շատերին կմոլորեցնի: Նա կհակառակվի այն ամենին, ինչն Աստված է կոչվում և երկրպագություն է ստանում, և կմեծարի իրեն: Նա կհալածի սրբերին և շատ ազգերի կառաջնորդի մեծ խավարի և Աստծո դեմ ապստամբության մեջ:

Այս ժամանակաշրջանում Տերը կգա Իր սրբերի ետևից: Ոմանք հավատում են, որ դա տեղի կունենա նախքան այդ յոթամյակի սկիզբը, մյուսները՝ դրա կեսից, իսկ ոմանք՝ դրա վերջում: Այս գրքում չեմ անդրադառնա այդ հարցին: Կարևորն այն է, թե արդյո՞ք մենք պատրաստ ենք:

Մի քանի անգամ Նոր կտակարանում Պողոսը խոսում է Եկեղեցու «հափշտակվելու» մասին: Այդ հատվածներից մեկում գրված է հետևյալը.

> «Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա Երկնքից, և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն, և հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու, և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք» (Ա Թեսաղոնիկեցիների 4.15–17):

Խոսքն այստեղ Քրիստոսի երկրորդ գալստյան մասին չէ, որովհետև այս անգամ Քրիստոսը չի գալու երկիր, այլ հանդիպելու է Իր հավատարիմներին ամպերի մեջ: Երկրորդ գալուստը տեղի կունենա յոթամյա Մեծ պատուհասի ավարտին, երբ Հիսուսը վերադառնա սպիտակ ձիով՝ առաջնորդելով երկնային բանակները կամ Իր սրբերի բազմությունն իրենց թվով (տե՛ս Հուդա 14):

Հակաքրիստոսը, սուտ մարգարեն, համաշխարհային առաջնորդները և ազգերի բանակները կհավաքվեն, որպեսզի կռվեն Տիրոջ և Նրա բանակի դեմ: Այդ մեկօրյա պայքարում Հիսուսը կզարկի նրանց Իր սրով, և երկնքի թռչունները կուտեն նրանց մարմինները: Այս իրադարձությունը կոչվում է Արմագեդոն, քանի որ այն տեղի է ունենալու Մեգիդոյի դաշտավայրում, որը գտնվում է Կարմեղոս սարից մինչև Երուսաղեմն ընկած տարածքում (տե՛ս Հայտն. 16.16 և 19.11–21):

Ամբողջ աշխարհում կլինեն բազմաթիվ մարդիկ, ովքեր ո՛չ կապստամբեն Տիրոջ դեմ այդ պատերազմում, ո՛չ էլ կնվիրվեն հակաքրիստոսին: Շատ աստվածաբաններ հավատում են, որ նրանք կենդանի կմնան և կապրեն մյուս ժամանակաշրջանում, որը սովորաբար կոչվում է Քրիստոսի հազարամյա թագավորություն: Նրանք կմնան իրենց երկրներում և ենթակա կլինեն Քրիստոսի համաշխարհային իշխանությանը: Նրանք կունենան բնական մարմիններ և կշարունակեն բնակեցնել երկիրը:

Այնպես որ, ըստ էության, երկիրը բնակեցվելու է երկու տեսակի մարդկանցով՝ ովքեր կենդանի կմնան Արմագեդոնի պատերազմից հետո, և սրբերով, ովքեր կվերադառնան Հիսուսի հետ: Սրբերը կունենան փառավորված մարմիններ՝ Հիսուս Թագավորի նմանությամբ, և կիշխեն Նրա հետ երկրի վրա: Դժվար չէ հասկանալ, թե ինչպես այս երկու տեսակի մարդիկ կհաղորդակցվեն: Դա տեղի կունենա նույն կերպով, ինչպես որ Հիսուսն էր հաղորդակցվում Իր հետևորդների հետ հարությունից հետո: Փառավորված սրբերը կկարողանան խոսել, քայլել, ուտել և շփվել բնական մարմիններ ունեցող մարդկանց հետ:

Աստվածաշունչը ցույց է տալիս, որ այդ ընթացքում լինելու է համաշխարհային խաղաղություն, կամ, ավելի ճիշտ՝ տիեզերական խաղաղություն, քանի որ սատանան և նրա դևերը կապվելու են հազար տարով: Չեն լինի պատերազմներ, նախապաշարմունքներ, ատելություն, ամոթ, հանցագործություններ, հիվանդություններ և այլն, քանի որ բոլոր ազգերը դառնալու են Աստծուն: Միքիա մարգարեն գրում է.

> «Վերջին օրերում Տիրոջ տաճարը Երուսաղեմում դառնալու է ամենակարևոր վայրը երկրի վրա: Մարդիկ ամբողջ աշխարհից գալու են այդտեղ՝ երկրպագելու համար: Շատ ազգեր գալու են և ասելու են. «Եկե՛ք

բարձրանանք Տիրոջ սարը, դեպի Իսրայելի Աստծո տաճարը: Այդտեղ Նա կսովորեցնի մեզ Իր ճանապարհները, որպեսզի մենք հնազանդվենք Նրան»: Որովհետև այդ օրերում Տիրոջ ուսմունքը և Նրա Խոսքը դուրս կգան Երուսաղեմից: Տերը միջազգային վեճեր կլուծի: Բոլոր ազգերը կծեծեն իրենց թրերը խոփերի, և իրենց նիզակները՝ գերանդիների: Բոլոր պատերազմները կդադարեն, և զորավարժանքներին վերջ կտրվի: Ամեն մեկը կապրի հանդարտորեն իր տան մեջ՝ խաղաղությամբ և բարգավաճելով, որովհետև վախենալու ոչինչ չի լինի: Ամենակարող Տերը խոստացե՛լ է սա» (Միքիա 4.1–4, NLT):

Երկրի վրա համաշխարհային բարգավաճում կսկսվի. միջազգային ֆինանսական համակարգն ապահով կլինի, քանի որ ազգերը կպահեն Աստծո օրենքները: Դա զարմանալի ժամանակ է լինելու:

Մեծ Սպիտակ գահի դատաստանը

Հազար տարվա ավարտից հետո սատանան կարճ ժամանակով կարձակվի բանտից: Նա բոլոր ազգերին խաբելու թույլտվություն կստանա: Սա չի վերաբերի փառավորված մարմին ունեցող սրբերին, այլ միայն՝ բնական մարմին ունեցող ազգերին՝ այն մարդկանց, ովքեր մնացել են Արմագեդոնից հետո և նրանց, ովքեր ծնվել են Հազարամյա թագավորության ընթացքում:

Ապստամբները մեկտեղ կհավաքվեն և կշրջապատեն Երուսաղեմ քաղաքը՝ պատերազմի համար, և այդ ժամանակ Աստծո կրակը կիջնի երկնքից և կսպառի նրանց: Սատանան կգցվի կրակով և ծծումբով վառվող լիճը և կչարչարվի օր ու գիշեր՝ հավիտյանս հավիտենից: Նա այլևս ազատ չի արձակվի (տե՛ս Հայտն. 20.7–10):

Դրան անմիջապես կհետևի Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Դժոխքը (Հադեսը) կտա բոլոր սերունդների մեռելներին՝ սկսած Ադամի օրերից մինչև այդ վերջին պատերազմը: Ովքեր մուտք չգործեցին Եհովայի ուխտի մեջ Հին ուխտի ժամանակաշրջանում և չհնազանդվեցին Հիսուսի իշխանությանը դրանից հետո, կկանգնեն Թագավորի առջև և հաշիվ կտան, ինչպես որ մենք տեսանք Անկախի, Խաբվածի և Հուսահատ սրտի դատաստաններում: Ամեն մարդ, ում անունը գրված չէ Կյանքի գրքում, հավիտյան կնետվի Կրակի լիճը՝ սատանայի և նրա դևերի հետ:

Նոր երկինքը և նոր երկիրը

Հենց որ ներկայումս գոյություն ունեցող երկինքը և երկիրը մաքրվեն կրակով (տե՛ս Բ Պետր. 3.10–13), ի հայտ կգան նոր երկինքը և նոր երկի-

ը: Հովհաննես առաքյալը գրում է. «Եվ ես տեսա նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջին երկինքը և երկիրն անցան» (Հայտնություն 21.1):

Հովհաննես առաքյալը շարունակում է՝ նկարագրելով, որ Նոր Երուսաղեմն իջնելու է վերևից և հավիտյան լինելու է երկրի վրա: Այս քաղաքը կոչվում է Գառան կինը կամ հարսնացուն, որովհետև այն կլինի Տիրոջ բոլոր փրկվածների տունը՝ սկսած Ադամից մինչև այն մարդիկ, ովքեր ընդունվեցին փառքի մեջ Քրիստոսի երկրորդ գալստյան ժամանակ: Հովհաննեսն ընդհանուր կերպով նկարագրում է Նոր Երուսաղեմը.

> «Եվ նա տարավ ինձ Հոգով՝ դեպի մի մեծ, բարձր սար, և ցույց տվեց ինձ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որն իջնում է Երկնքից՝ Աստծուց: Այն լցված էր Աստծո փառքով և պսպղում էր թանկարժեք քարի պես, և բյուրեղյա պարզություն ուներ՝ հասպիսի պես: Դրա պարիսպները լայն և բարձր էին, տասներկու դարպասներով, որոնք հսկվում էին տասներկու հրեշտակների կողմից... Ամեն կողմից՝ արևելքից, հյուսիսից, հարավից և արևմուտքից երեք դարպասներ կային...
>
> Այն հրեշտակը, ով խոսում էր ինձ հետ, ոսկե չափման փայտ ուներ ձեռքում, որպեսզի չափեր քաղաքը, դարպասները և պարիսպը: Երբ նա չափեց այն, պարզեց, որ քառակուսի էր՝ նույնքան լայն, որքան և երկար: Իրականում, այն խորանարդի ձև ուներ, որովհետև դրա երկարությունը և լայնությունը և բարձրությունը 2250 կիլոմետր էր՝ ամեն կողմից: Դրանից հետո նա չափեց պարիսպները և պարզեց, որ 65 մետր հաստություն ունեին (հրեշտակը սովորական մարդկային չափման միավոր էր օգտագործում):
>
> Պարիսպը կառուցված էր հասպիսից, և քաղաքը մաքուր ոսկուց էր՝ ապակու պես պարզ: Քաղաքի պարիսպը կառուցված էր հիմնաքարերի վրա, որոնք ներզարդարված էին տասներկու թանկարժեք քարերով... Տասներկու դարպասները մարգարիտներից էին՝ ամեն մի դարպասը մեկ մարգարիտից: Եվ գլխավոր փողոցը մաքուր ոսկի էր՝ ապակու պես պարզ» (Հայտնություն 21.10–21, NLT):

Այս քաղաքը հափշտակիչ է. այն հրաշալիք է, որի նման մենք ոչինչ չենք տեսել այս երկրում: Այն հոյակապ, պայծառ և պերճաշուք է լինելու: Դրանում չի լինի ոչ մի ապականություն, որովհետև այն ամբողջովին մաքուր է:

Հովհաննեսը շարունակում է իր նկարագրությունը.

> «Եվ հրեշտակը ցույց տվեց ինձ մի մաքուր գետ՝ կյանքի ջրով, բյուրեղի պես պարզ, որը հոսում էր Աստծո և Գառան գահից՝ անցնելով գլխավոր փողոցի մեջտեղով: Գետի ամեն կողմից աճում էր մեկական կյանքի ծառ, որը տասներկու պտուղ էր բերում՝ ամեն ամիս թարմ պտուղ տալով: Տերևներն օգտագործվում էին որպես դեղամիջոց՝ ազգերին բժշկելու համար:

Այլևս ոչ մի անիծված բան չի լինի: Որովհետև Աստծո և Գառան գահն այդտեղ կլինի, և Նրա ծառաները կերկրպագեն Նրան: Եվ նրանք կտեսնեն Նրա երեսը, և Նրա անունը գրված կլինի նրանց ճակատներին: Եվ այդտեղ չի լինի գիշեր. լույսերի կամ արևի կարիք չի լինի, որովհետև Տեր Աստված կլուսավորի նրանց: Եվ նրանք կիշխեն հավիտյանս հավիտենից» (Հայտնություն 22.1–5, NLT):

Ուշադրություն դարձրեք՝ Աստվածաշունչը հստակ հայտնում է, որ մենք կտեսնենք Աստծո երեսը: Մենք կտեսնենք այն, ինչ Մովսեսը փափագում էր, և ինչից մերժվեց: Որքա՜ն զարմանալի և ոգեշնչող է դա:

Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ կյանքի ծառի տերևները բժշկություն կբերեն *ազգերին:* Այս պնդումը մի շարք հետաքրքիր հարցեր է առաջացնում: Ինչպիսի՞ մարդկանցից են բաղկացած լինելու այդ ազգերը, քանի որ սրբերը բնակվելու են Նոր Երուսաղեմում: Ո՞ւմ վրա են սրբերն իշխելու հավիտյանս հավիտենից: Արդյո՞ք այս ընթացքում լինելու են բնական կերպով ծնված մարդիկ: Եսային պատասխանում է այս հարցին:

«Ահա Ես ստեղծում եմ նոր երկինք և նոր երկիր՝ այնքա՜ն հրաշալի, որ ոչ ոք այլևս չի մտածի նախկինների մասին: Ուրա՛խ եղեք, հավիտյան ցնծացե՛ք Իմ ստեղծագործության մեջ: Եվ ահա, Ես կստեղծեմ Երուսաղեմը՝ որպես երջանկության վայր: Նրա ժողովուրդը [փրկված սրբերը] ուրախության աղբյուր կլինեն: Ես կցնծամ Երուսաղեմում և կլցվեմ բերկրանքով Իմ ժողովրդի համար: Եվ լացի և ողբի ձայն այլևս չի լսվի» (Եսայի 65.17–19, NLT):

Այժմ Եսային խոսում է Երուսաղեմից դուրս գտնվող մարդկանց մասին.

«Երեխաներն այլևս չեն մահանա ընդամենը մի քանի օրեկանում: Մեծահասակներն այլևս չեն մահանա՝ առանց օրերը լրացնելու: Մարդիկ այլևս ծեր չեն համարվի հարյուր տարեկանում: Միայն մեղավորները կմահանան այդքան երիտասարդ տարիքում: Այդ օրերում մարդիկ կապրեն իրենց կառուցած տներում և կուտեն իրենց խաղողի այգիների պտղից: Անցյալի նման չի լինի, երբ զավթիչները խլում էին տները և առգրավում խաղողի այգիները: Որովհետև Իմ ժողովուրդը ծառերի պես երկար կապրի և ժամանակ կունենա՝ վայելելու իր աշխատանքի արդյունքը: Նրանք զուր տեղը չեն աշխատի, և նրանց երեխաները դատապարտված չեն լինի տարաբախտության: Որովհետև նրանք Տիրոջից օրհնված ժողովուրդ են, և նրանց երեխաները նույնպես օրհնված կլինեն: Ես կպատասխանեմ նրանց նույնիսկ՝ մինչև նրանց կանչելը: Մինչ նրանք կխոսեն իրենց կարիքների մասին, Ես կպատասխանեմ նրանց աղոթքներին: Գայլը և գառը

միասին կկերակրվեն: Առյուծը խոտ կուտի՝ եզան պես: Թունավոր օձերն այլևս չեն խայթի: Այդ օրերում ոչ ոք չի վնասվի և չի կործանվի Իմ սուրբ սարում: Ես՝ Տերս, խոսեցի» (Եսայի 65.20–25):

Շատերը սխալմամբ վերագրում են այս հատվածը Քրիստոսի հազարամյա թագավորությանը: Այնուամենայնիվ, այստեղ պարզորեն գրված է այն ժամանակաշրջանի մասին, երբ գոյություն ունեն *նոր երկինքը և նոր երկիրը:* Ուսումնասիրելով և՛ Հովհաննես առաքյալի, և՛ Եսայի մարգարեի խոսքերը՝ տեսնում ենք, որ այս շրջանում Աստծո քաղաքից դուրս ապրող մարդիկ կան: Նրանք կառուցում են իրենց տները հավիտենության մեջ, տիեզերական խաղաղության և բարգավաճման պայմաններում: Այս մարդիկ չեն կարող լինել սրբերը, ովքեր բնակվում են սուրբ քաղաքում, որովհետև նրանք արդեն ունեն տներ՝ կառուցված անձամբ Հիսուսի կողմից (տե՛ս Հովհ. 14.2–4):

Ուշադրություն դարձրեք, որ այս մարդիկ երեխաներ են ունենալու: Սա նույնպես չի կարող վերաբերել փառավորված սրբերին, քանի որ Հիսուսը պարզ ասաց, որ փառավորված մարմին ունեցող մարդիկ երեխաներ չեն ծնելու, որովհետև նրանք չեն ամուսնանալու: Նա ասաց. «Որովհետև հարությունում ո՛չ կին են առնում, և ո՛չ մարդի գնում, այլ՝ Երկնքում Աստծո հրեշտակների նման են» (Մատթեոս 22.30): Սա ևս մեկ փաստ էր, որը Զասթինը հաստատեց Երկնքում շրջագայելուց հետո:

Այս ազգերը կբնակեցնեն նոր երկիրը և կհարստացնեն այն՝ ցանելով, հնձելով և կառուցելով: Նրանք անխոչընդոտ կերպով կշատանան և կլցնեն երկիրը՝ ինչպես Ադամը և Եվան, եթե չլիներ նրանց անկումը:

Ինչպե՞ս կարելի է տրամաբանորեն բացատրել սա: Կա մեկ տարբերակ, որը, թեև, կարող է վիճարկելի լինել. Հազարամյա թագավորության սկզբից մարդկանց բնական կյանքը կերկարի, որովհետև մեր վերջին թշնամին՝ մահը, կկործանվի (տե՛ս Ա Կորնթ. 15.26): Հիսուսը կկործանի մահվան անեծքը՝ թե՛ հոգևոր, թե՛ նյութական: Այդ իսկ պատճառով, մարդկությունը կարող է ապրել մինչև այդ Հազարամյա թագավորության ավարտը:

Հազարամյա թագավորության ավարտին հնարավոր է, որ բնական մարմին ունեցող մարդիկ ստանան հավիտենական կյանքի պարգևը, եթե չապստամբեն Աստծո դեմ այն կարճ ժամանակվա ընթացքում, երբ սատանան ազատ արձակվի: Սաղմոսերգուն գրում է. «Դրա համար ազգերը հավիտյանս հավիտենից կփառաբանեն Քեզ» (Սաղմոս 45.17, NLT): Այս տարբերակը կարող է հավանական լինել, եթե այս մարդիկ դառնան այնպիսին, ինչպիսին Ադամն ու Եվան էին՝ մինչև անկումը: Ադամը չէր ստեղծվել մահանալու համար, այլ՝ հավիտյան ապ-

ռելու: Այս պարգևը կորսվեց նրա անհնազանդության պատճառով. նրա պատճառով իր ցեղն ընկավ մահվան և կործանման անեծքի տակ:

Միայն Քրիստոսով փրկվածները, ովքեր փառավորված մարմիններ ունեն, կբնակվեն Նոր Երուսաղեմում: Այնուամենայնիվ, Աստծո Խոսքից երևում է, որ բնական մարմին ունեցող մարդիկ կկարողանան գալ այդ քաղաքը, ճաշակել դրա պտուղը և երկրպագել Տիրոջը: Այս մասին գրում է Հովհաննեսը.

> «Երկրի ազգերը կքայլեն [Նոր Երուսաղեմի] լույսի մեջ, և այս աշխարհի իշխանները կգան և կբերեն իրենց փառքը դրա մեջ: Դրա դարպասները բնավ չեն փակվում օրվա վերջում, որովհետև գիշեր չկա: Եվ բոլոր ազգերը իրենց փառքն ու պատիվը կբերեն այդ քաղաք» (Հայտնություն 21.24–26, NLT):

Սկզբում մարդն անկում ապրեց՝ տեղի տալով մեղքի գայթակղությանը: Դրա պատիժը մահն էր՝ և՛ նյութական, և՛ հոգևոր, որն ավարտվում էր հավիտենական մահով: Այնուամենայնիվ, մարդու անկումը չկասեցրեց Աստծո սկզբնական հավիտենական ծրագիրն այն մասին, որ մարդը պետք է ապրի այս երկրի վրա:

Մի՞թե Աստծո ծրագիրը կարող է ձախողվել մարդու անհնազանդության պատճառով: Ո՛չ: Փոխարենը, Աստված վերածեց մարդու պարտությունն օրհնության՝ Քրիստոսի փրկության միջոցով՝ ստեղծելով անկում ապրած մարդկությունից *փառավոր երկնային ժողովուրդ*, որը *կառավարելու* է մարդկությունը նոր երկրում: Սա օգնում է մեզ հասկանալ Հիսուսի խոսքերը՝ հավատարիմ տնտեսին. «Լավ, բարի ծառա, որովհետև քչում հավատարիմ եղար, տասը քաղաքի վրա իշխանությո՛ւն ունեցիր» (Ղուկաս 19.17): Հնարավո՞ր է, որ Հազարամյա թագավորության ժամանակ և նոր երկրի հավիտենական ժամանակաշրջանում քաղաքներ լինեն:

Եթե մարդկությունն անկում չապրեր, Աստված չէր ունենա փառավորված մարդկանց դասակարգ, որը կօգներ Իրեն՝ հավիտյանս հավիտենից կառավարել այս երկիրը և տիեզերքը: Նա կանխատեսեց սա Իր հավիտենական իմաստությամբ: Ահա թե ինչու է Հիսուսը կոչվում «Գառը... որ աշխարհի սկզբից մորթված է» (Հայտնություն 13.8):

Աստծո սկզբնական ծրագիրն էր՝ բնակեցնել այս երկիրը հավիտյան ապրող բնական մարդկանցով, և այն կիրականանա՝ սկսած Հազարամյա թագավորությունից և նոր երկրի հավիտենական ժամանակաշրջանում: Հիսուսի խոսքերն ամբողջովին կկատարվեն. «Գա Քո արքայությո՛ւնը, լինի Քո կա՛մքը՝ ինչպես Երկնքում, այնպես էլ՝ երկրի

վրա» (Մատթեոս 6.10): Երկրի վրա կլինի այնպես, ինչպես Ձասթինը տեսավ Երկնքում. գեղեցիկ նոր գույներ, կենդանի բույսեր և քարեր, որոնք գովերգում են Աստծուն, կատարյալ ճարտարապետություն, կենդանի ջրեր և այլն: Մի խոսքով՝ ճշմարտապես կատարյալ աշխարհ:

Եսային ավարտում է իր մարգարեական գիրքը՝ գրելով հետևյալը նոր երկնքի ժամանակաշրջանի մասին.

> ««Ինչպես որ Իմ նոր երկինքը և երկիրը կմնան, այնպես էլ դուք միշտ կլինեք Իմ ժողովուրդը՝ այն անունով, որը երբեք չի անհայտանա»,– ասում է Տերը:– «Ամբողջ մարդկությունը կգա՝ երկրպագելու Ինձ շաբաթից շաբաթ և ամսից ամիս: Եվ երբ նրանք դուրս գնան, կտեսնեն նրանց մահացած մարմինները, ովքեր ապստամբել են Ինձ դեմ: Որովհետև որդերը, որոնք ուտում են նրանց, երբեք չեն մահանա, և կրակը, որն այրում է նրանց, երբեք չի մարի: Ովքեր անցնեն նրանց կողքով, բացարձակ սարսափով կնայեն նրանց»» (Եսայի 66.22–24, NLT):

Այս միտքը խիստ սթափեցնող է, բայց ամբողջ հավիտենության ընթացքում մենք կկարողանանք գնալ այնպիսի վայր, որտեղից երևալու է, թե ինչ սարսափելի ճակատագրի են արժանացել սատանան, նրա հրեշտակները և այն մարդիկ, ովքեր ապստամբեցին Տիրոջ դեմ: Միգուցե սա Աստծո իմաստությունն է՝ մշտապես պահել բոլոր ստեղծվածների առջև մեղքի և ապստամբության սարսափելի հետևանքները: Մտածե՛ք այդ մասին. սատանան ապստամբեց, թեև ոչ ոք չգայթակղեց նրան: Եթե Աստված պահի այս տեսարանն Իր ստեղծագործության առջև ամբողջ հավիտենության ընթացքում, այն խիստ արդյունավետ կերպով կզսպի բոլորին՝ Լյուցիֆերի և իր հրեշտակների մեղքի մեջ ընկնելուց:

Ինչպես արդեն նշվեց, փառավորված սրբերը կապրեն Աստծո քաղաքում՝ Նոր Երուսաղեմում: Մինչև Հազարամյա թագավորության սկիզբը նրանք կկանգնեն Քրիստոսի ատյանի առջև, որպեսզի ստանան իրենց վարձատրությունները և հավիտենական ծառայողական դիրքերը՝ Հավիտենական Թագավորին ծառայելու համար: Մենք ավելի խորը կուսումնասիրենք Քրիստոսի ատյանը հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ 10

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՏՅԱՆԸ

«Բայց դու ինչո՞ւ համար ես դատում քո եղբորը, կամ ինչո՞ւ ես քո եղբորն անարգում. որովհետև ամենքս Քրիստոսի ատյանի առջև պիտի կանգնենք... Ուրեմն մեզնից ամեն մեկն իր անձի համար պիտի հաշիվ տա Աստծուն»:
— Հռոմեացիների 14.10,12

Բոլորս կանգնելու ենք Քրիստոսի ատյանի առջև: Ո՞ւմ է դիմում Պողոսն այս հատվածում, հավատացյալների՞ն, թե՞ անհավատներին: Դիտարկելով այս խոսքերն իրենց համատեքստով՝ կարող ենք համոզվածությամբ ասել, որ նա դիմում է հավատացյալներին: Պողոսը խոսում է այն մասին, թե որքան վատ է, երբ քրիստոնյան դատում կամ անարգում է իր եղբորը՝ ասելով, որ այդպես վարվողները հաշիվ են տալու:

Այնպես որ, Աստծո առջև դատաստանի են կանգնելու ոչ միայն անհավատները, ինչպես տեսանք նախորդ գլուխներում: Քրիստոնյաները նույնպես կանգնելու են Աստծո գահի առջև, որպեսզի հաշիվ տան իրենց երկրային կյանքի համար: Այս ճշմարտությունը նաև շեշտադրվում է Կորնթացիներին ուղղված Պողոս առաքյալի երկրորդ նամակում, որն ուսումնասիրեցինք նախորդ գլխում.

> «...Մենք ավելի կուզեինք հեռանալ այս մարմիններից, քանի որ այդ դեպքում Տիրոջ հետ կլինեինք: Այնպես որ, մեր նպատակն է՝ մշտապես հաճեցնել Նրան թե՛ այստեղ՝ այս մարմնով, թե՛ այս մարմնից դուրս: Որովհետև բոլորս պետք է կանգնենք Քրիստոսի առջև՝ դատվելու համար: Ամեն մեկս կստանանք այն, ինչին արժանի ենք՝ այն բարու կամ չարի համար, որը գործել ենք մեր մարմիններում: Քանի որ մենք գիտենք Աստծո այս հանդիսավոր երկյուղի մասին, մենք մեծ ջանք ենք անում՝ մարդկանց համոզելու համար» (Բ Կորնթացիների 5.8–11, NLT):

Կրկին, ակնհայտ է, որ Պողոսը չի խոսում մեղավորների դատաստանի մասին, այլ՝ քրիստոնյաների: Գրված է. «Մենք ավելի կուզեինք հեռանալ այս մարմիններից, քանի որ այդ դեպքում Տիրոջ հետ կլի-

նեինք»: Այս հատվածը հստակ ցույց է տալիս, թե ում է դիմում Պողոսը: Ոչ մի անհավատ Տիրոջ հետ չի լինի, երբ հեռանա իր մարմնից: Նա անմիջապես կտեղափոխվի դժոխք, իսկ նրա հավիտենական տունը լինելու է Կրակի լիճը:

Ինչպես արդեն ասացինք, անաստված և անհավատ մարդիկ կանգնելու են Մեծ Սպիտակ գահի դատաստանի առջև: Այս դատաստանը լինելու է շատ ավելի ուշ հավատացյալների դատաստանից, որի մասին գրված է վերևում բերված հատվածում:

Արագորեն վերանայենք այն, ինչ սովորեցինք նախորդ գլխում: Հիսուսը երկիր կվերադառնա երկնային զորքերի հետ, պարտության կմատնի հակաքրիստոսին, կբանտարկի սատանային և հազար տարով կհաստատի Իր իշխանությունը Երուսաղեմում: Դրանից հետո սատանան ազատ կարձակվի անդունդից և կարճ ժամանակով բոլոր ազգերին խաբելու թույլտվություն կստանա: Երկնքից իջնող կրակը կսպառի նրանց, ովքեր կապստամբեն Աստծո դեմ, իսկ սատանան հավիտյան կնետվի Կրակի լիճը: Դրանից հետո բոլոր անաստված և անհավատ մարդիկ հարություն կառնեն դժոխքից, որպեսզի կանգնեն Մեծ Սպիտակ գահի առջև: Հիսուսն անվանում է սա «դատաստանի հարությունը» (տե՛ս Հովհ. 5.29): Ում անունները գրված չեն Կյանքի գրքում, կնետվեն Կրակի լիճը:

Հավատացյալների դատաստանը տեղի կունենա շատ ավելի վաղ, քան Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Դրա ժամանակը հստակ նշված չէ Աստծո Խոսքում: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ այն տեղի կունենա ինչ-որ ժամանակ եկեղեցու հափշտակվելուց հետո և Քրիստոսի Հազարամյա թագավորությունից առաջ: Այնպես որ, այս երկու խոշոր դատաստանների միջև լինելու է մոտավորապես հազար տարվա ժամանակահատված (սա այն փաստերից մեկն է, որն արտացոլված չէ Աֆաբելի այլաբանության մեջ):

Գրեթե կրկնելով Հռոմեացիների թղթում գրվածը՝ Բ Կորնթացիների 5.10-ը հայտնում է. «Որովհետև ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև»: Ե՛վ Հռոմեացիների 14-րդ գլխում, և՛ Բ Կորնթացիների 5-րդ գլխում «ատյան» բառը թարգմանված է հունարեն «բեմա» բառից: «*Թրոնգի համաբարբառը*» սահմանում է այս բառը հետևյալ կերպով. «աստիճան, ատենաբեմ [բարձրացված հարթակ], այսինքն՝ ատյան [դատարան]»[1]: Ըստ «Միջազգային Աստվածաշնչյան Ընկերության Մեկնությունների ժողովածուի»՝ «Ատյանը՝ դատական աթոռ էր Հռոմի կայսրության քաղաքային դատարաններում: Պողոսն օգտագործում է այս համեմատությունը՝ խոսելով Քրիստոսի դատական գոր-

ծունեության մասին»[2]: Հիմնվելով այս ամենի վրա՝ մենք կօգտագործենք *Քրիստոսի ատյանը* բառակապակցությունը, երբ խոսենք հավատացյալների դատաստանի մասին:

Քրիստոսի ատյանը բառացիորեն Աստծո դատարանն է: Աստվածաշունչը հայտնում է, որ Հայրը հանձնել է ամբողջ դատաստանը Որդուն (տե՛ս Հովհ. 5.22): Հիսուս Քրիստոսը ոչ միայն մեր Փրկիչն է, այլև մեր Դատավորը, և շուտով Նա կդատի Իր տունը: «Դատաստան» բառն ամենապարզ կերպով նկարագրելու համար կարելի է ասել, որ այն վճիռ է՝ հիմնված հետաքննության վրա, որի արդյունքը լինելու է «կողմ» կամ «դեմ»:

Անթիվ մարդիկ եկեղեցում տեղյակ չեն, որ իրենք հաշիվ են տալու այն ամենի համար, ինչ արել են իրենց կարճ երկրային կեցության ընթացքում: Շատերը սխալական պատկերացում ունեն այն մասին, որ իրենք որևէ կերպով չեն դատվելու, քանի որ արդեն փրկված են: Իհարկե, Հիսուսի արյունը մաքրում է մեզ այն մեղքերից, որոնք թույլ չէին տա մեզ մուտք գործել Աստծո թագավորություն. այնուամենայնիվ, այն չի ազատում մեզ դատաստանից, որի ժամանակ քննվելու են մեր թե՛ լավ, թե՛ վատ գործերը, որոնք գործել ենք փրկվելուց հետո:

Հավիտենական որոշումներ

Այն դատաստանները կամ վճիռները, որոնք կկայացվեն մեր վերաբերյալ Քրիստոսի ատյանում, հավիտենական կլինեն. դրանք ընդմիշտ նույնը կմնան և որևէ կերպով չեն փոփոխվի:

Մի պահ կանգ առեք և հիշեք այս գրքի առաջին գլուխները, որոնցում մենք փորձում էինք մտովի հասկանալ հավիտենությունը: Հակոբոսը պնդում է, որ մեր ժամանակավոր կյանքն այս երկրի վրա անհայտացող գոլորշի է (տե՛ս Հակոբ. 4.14): Սա այն փոխաբերական ձևն է, որով նա համեմատում է մեր ութսունից հարյուր տարի տևող կյանքը հավիտենության հետ: Եթե նա տիրապետեր այն մաթեմատիկական գիտելիքներին, որոնք մենք ունենք այսօր, նա ավելի հստակ կձևակերպեր իր ասածը: Մաթեմատիկա սովորելու ամենավաղ փուլում ես իմացա, որ ցանկացած բան՝ բաժանած հավերժության, հավասար է զրոյի:

80 տարի ÷ հավերժություն (հավիտենություն) = 0

100 տարի ÷ հավերժություն (հավիտենություն) = 0

Եթե բաժանենք կամ համեմատենք ցանկացած թիվ հավերժության հետ, արդյունքը զրո է լինելու: Կարևոր չէ, թե քանի տարի դուք կապրեք

այս երկրում: Նույնիսկ եթե ապրեք 150 տարի մինչև մահանալը, կյանքն այս երկրի վրա զրո է, եթե այն համեմատենք հավիտենության հետ: Դա նշանակում է, որ այն ամենը, ինչ մենք՝ Հիսուս Քրիստոսին հավատացողներս, անում ենք այս զրոյական ժամանակահատվածում, որոշելու է, թե *ինչպես* ենք անցկացնելու հավիտենությունը: Հիշեք՝ մեր արծագանքը Հիսուսի խաչին, Նրա փրկարար շնորհքին՝ որոշում է, թե *որտեղ* ենք անցկացնելու հավիտենությունը: Այնուամենայնիվ, այն, թե ինչպես ենք մենք ապրում մեր քրիստոնեական կյանքը, որոշելու է, թե *ինչպիսին* է լինելու մեր հավիտենական կյանքը Նրա թագավորության մեջ:

Հիշո՞ւմ եք, որ մեր այլաբանության մեջ Եսասերը և մյուսները, որոնց նա հանդիպեց Մեծ սրահի ետին շարքերում, զղջում էին, որ վատնեցին իրենց կարճ ժամանակն էնդելում: Նրանք անցկացրին իրենց հնգամյա կյանքի մեծ մասը՝ ձգտելով իրենց ցանկություններին և շահերին, փոխարենը լիովին նվիրվեին Ձեյլոնի կամքը կատարելուն: Այսպիսով, մինչև իրենց կյանքի ավարտը նրանք ստիպված էին ապրել իրենց իրական ներուժից շատ ավելի ցածր, քանի որ նրանցից ամեն մեկը հնարավորություն ուներ աշխատելու և ապրելու ավելի մոտ Ձեյլոնին, կամ նույնիսկ թագավորելու Ձեյլոնի կողքին նրա քաղաքում: Անկախ այն բանից՝ նրանք հաջողություն ունեցան դպրոցն ավարտելուց հետո, թե՝ ոչ, այժմ նրանց ապագան վերջնականորեն որոշված էր: Նրանց կյանքի հաջորդ 130 տարիները լինելու էին նրանց կարճ՝ հինգ տարիների անմիջական հետևանքը: Մտածե՛ք այդ մասին. 130 տարին՝ 5 տարվա հետ համեմատած: Դա շատ երկար ժամանակ է: Այս երկրի վրա շատ քչերն են կարողանում նույնիսկ մոտենալ այդ թվին: Երանի՜ թե Եսասերը և մյուսները գիտակցեին սա, քանի դեռ իրենց ժամանակն էնդելում չէր սպառվել: Այդ դեպքում նրանց կյանքն, ամենայն հավանականությամբ, այլ կերպ կդասավորվեր:

Որքան էլ սթափեցնող լինի մեր այլաբանության օրինակը, այն անկարելի է համեմատել մեր քննարկվող թեմայի հետ: Մեկ այլ օրինակ բերենք: Պատկերացրեք, որ ձեզ տրվել է մեկ օր, և այն, թե ինչպես կանցկացնեք այդ քսանչորս ժամը, կորոշի ձեր կյանքը հաջորդ հազար տարվա ընթացքում: Փորձեք պատկերացնել, թե ինչ է նշանակում հազար տարին: Հազար տարի առաջ Ամերիկայի Միացյալ Նահանգները դեռևս չկար. Քրիստոֆեր Կոլումբոսը դեռ ճանապարհ չէր ընկել՝ նոր աշխարհը բացահայտելու համար. նույնիսկ Անգլիայի զավթումը նորմանդացիների կողմից դեռ տեղի չէր ունեցել:

Հազար տարին շատ երկար ժամանակ է: Այնուամենայնիվ, այդ մեկ օրը կորոշի ձեր վարձատրությունը՝ այն դիրքը, որը դուք կզբաղեցնեք,

այն աշխատանքը, որը կկատարեք, այն մարդիկ, որոնց հետ կաշխատեք, այն, թե որտեղ և ինչպիսի տան մեջ կապրեք, նույնիսկ ձեր պատուհանից երևացող տեսարանը և ձեր կյանքի ամեն մանրուքը՝ հազար տարով:

Ձեր կարծիքով, դուք կփորձեի՞ք լավագույնս վարվել: Ինչպե՞ս կապրեիք այդ օրը: Այն կտարբերվե՞ր ձեր ներկա կյանքից: Դուք կփոխեի՞ք ձեր առաջնահերթությունները: Կարելի՞ է ասել, որ Տիրոջը հնազանդվելը բացարձակ առաջնահերթություն կդառնար ձեզ համար: Արդյո՞ք դուք ավելի մեծ ուշադրությամբ կկարդայիք Նրա Խոսքը և կձգտեիք ավելի ջանասիրաբար հնազանդվել դրան: Դուք կձգտեի՞ք ազդել մարդկանց վրա՝ Նրա թագավորության համար: Դուք այլ կերպով կվերաբերվեի՞ք նրանց... Ձեր կյանքի փոփոխությունների ցուցակն անվերջ է: Այնուամենայնիվ, սա անկարելի է համեմատել այն բանի հետ, ինչի մասին մենք հիմա խոսում ենք, քանի որ բաժանելով մեկ օրը 365.000 օրվա (հազար տարվա համարժեքը)՝ կստանանք որոշակի թիվ, ոչ թե՝ զրո:

Եկեք ավելի առաջ գնանք: Պատկերացրեք, որ այն, թե ինչպես դուք կանցկացնեք այդ մեկ օրը, կորոշի ձեր կյանքը հաջորդ մեկ միլիոն տարվա ընթացքում՝ այն, թե ինչ դուք կունենաք, այն աշխատանքը, որը կկատարեք, այն մարդիկ, որոնց հետ կաշխատեք, թե որտեղ և ինչ տան մեջ կապրեք, ինչ մեքենա կվարեք և այլն: Փորձե՛ք պատկերացնել այդ ժամանակը: Մենք չենք կարող ըմբռնել դա, քանի որ մարդկությունը գրեթե վեց հազար տարի գտնվում է այս երկրի վրա: Այնպես որ, դա կլիներ 150 անգամ ավելի երկար, քան ամբողջ մարդկության կյանքը մեր մոլորակում: Դա ինքնին անըմբռնելի է: Այնուամենայնիվ, դա նույնպես ոչինչ է այն բանի համեմատ, ինչի մասին խոսում ենք, քանի որ բաժանելով մեկ օրը 365.000.000 օրվա (մեկ միլիոն տարվա համարժեքը)՝ կրկին կստանանք որոշակի թիվ, ոչ թե՝ զրո: Նույնիսկ եթե բերեի այս օրինակը միլիարդ կամ տրիլիոն տարվա համար՝ համեմատելով դրանք մեկ օրվա հետ, մենք կրկին որոշակի թիվ կստանայինք:

Այնպես որ, անկախ այն բանից, թե որքան ենք մենք ապրում այս երկրի վրա՝ մեր ժամանակն այստեղ՝ հավիտենության համեմատ զրո է: Միգուցե հենց սա՞ է պատճառը, որ Պողոս առաքյալը մեծ հրատապությամբ հորդորում է մեզ այնպես ապրել, որ առավելագույն վարձատրությունը ստանանք: Կորնթացիներին ուղղված իր նամակում նա գրում է, որ ամեն մարզիկ մրցում է՝ հաղթելու համար, իսկ հետո նա դիմում է բոլորիս.

> «Դուք նույնպես պետք է այնպես վազեք, որ հաղթեք: Բոլոր մարզիկները խստորեն սահմանափակում են իրենց: Նրանք անում են դա, որ-

պեսզի ժամանակավոր մրցանակ շահեն, իսկ մենք անում ենք դա հավիտենական մրցանակի համար: Այնպես որ, ես վազում եմ ուղիղ դեպի նպատակը, և իմ ամեն մի քայլը նպատակաուղղված է: Ես նման չեմ բռնցքամարտիկի, որի հարվածները վրիպում են: Ես վարժեցնում իմ մարմինը մարզիկի պես՝ սովորեցնելով, թե ինչ պետք է անի այն» (Ա Կորնթացիների 9.24–27, NLT):

Ըստ Պողոսի՝ մեր կյանքն ունի նպատակ, որը հավիտենական և անթառամ մրցանակ ստանալն է: Այս կյանքում մենք պետք է վազենք՝ հաղթելու համար: Եվ որպեսզի հաղթենք, պետք է խիստ կարգապահություն և ինքնատիրապետում ունենանք և նպատակաուղղված կյանք վարենք:

Տարիներ շարունակ ես զբաղվել եմ սպորտով: Երբ մասնակցում էի Միացյալ Նահանգների Թենիսի ասոցիացիայի խաղերին, Դեվիսի գավաթի պատանեկան խաղերին և Ուսանողական սպորտաձևերի ազգային ասոցիացիայի I Դիվիզիայի թենիսի մրցաշարերին, ես շատ էի մարզվում: Խաղադաշտում մնում էի օրական գրեթե վեց ժամ և երբեմն հարյուրավոր հատուկ հարվածներ էի կատարում իմ մարզչի և թիմակիցների հետ: Ես գրքեր էի կարդում՝ խաղադաշտում մտավոր ամրությունը պահպանելու մասին: Ես մարզվում էի նաև խաղադաշտից դուրս. զբաղվում էի ծանրամարտով, վազքով, պարանացատկով, ձեռնածությամբ՝ ձեռքերի և աչքի համակարգումը բարելավելու համար, և շատ այլ բաներով: Այն աստիճան նպատակաուղղված էի, որ մայրս սպառնաց տեղափոխել իմ մահճակալը մեր տան մոտակայքում գտնվող թենիսի խաղադաշտերը: Ես չէի զբաղվում որևէ այլ բանով կամ այլ սպորտաձևով, որը կարող էր խոչընդոտել իմ առաջընթացը: Ես այդպես էի վարվում, որպեսզի հաղթեի, որպեսզի չեմպիոն դառնայի, որպեսզի լավագույնը լինեի և վարձատրություն ստանայի:

Աստծո թագավորության մեջ ամեն ինչ մի փոքր այլ է: Մենք չենք մրցում այլ մարդկանց հետ, այլ միայն՝ ինքներս մեզ հետ, և մեր նպատակն է՝ հաճելի լինել Հիսուսին մեր բոլոր գործերում (տե՛ս Բ Կորնթ. 5.9): Ուշադրությամբ կարդալով Աստծո Խոսքը՝ մենք տեսնում ենք Տիրոջ ցանկություններն այն բանում, թե ինչպես վերաբերվենք մարդկանց, ինչին ձգտենք, ինչին նվիրենք մեր ժամանակը, ում կյանքում ազդեցություն թողնենք հավիտենության համար, ինչպես նվիրատվություն կատարենք Աստծո թագավորության համար, ինչպես օգնենք մարդկանց, ինչպես ներենք և այլն: Հետագայում ավելի խորը կքննարկենք այս ամենը: Իմաստն այն է, որ մենք պետք է ապրենք՝ հաղթելու համար:

Վարձատրությունների լայն շրջանակ

Աստվածաշունչը ցույց է տալիս, որ հավատացյալներին տրված հավիտենական վարձատրությունները տարբեր են լինելու: Բացի այդ՝ լինելու է վարձատրությունների լայն շրջանակ: Կան մարդիկ, որոնց բոլոր գործերը կորչելու են և այրվելու են իրենց աչքի առջև, այնինչ մյուսները հավիտյան թագավորելու են Քրիստոսի հետ (տե՛ս Ա Կորնթ. 3.15, Հայտն. 3.21):

Շատերը ցնցվում են՝ իմանալով, որ իրենց վարձատրությունը կարող է *կորսվել,* իսկ գործերը՝ *այրվել:* Նրանք չեն հավատում, որ Երկնքում կարող է նման բան տեղի ունենալ: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը պարզ խոսում է այս մասին:

Մինչև այս խոսքերը կարդալը, թույլ տվեք ասել, որ շատ անգամ Աստվածաշնչում կառուցելը կամ շինելը օգտագործվում է որպես փոխաբերություն և վերաբերում է մարդու կյանքը կառուցելուն: Այլ դեպքերում Աստվածաշունչը խոսում է եկեղեցու մասին՝ որպես շինության կամ տաճարի: Երկու դեպքում էլ մենք պատկերվում ենք որպես շինարարներ, որոնք ազդեցություն են թողնում մեր իսկ կյանքի, այլ մարդկանց կյանքերի կամ ընդհանուր առմամբ՝ եկեղեցու վրա: Մինչև գրքի ավարտը՝ ես հաճախակի կանդրադառնամ այս փոխաբերությանը: Այսպիսով, Պողոսը պարզ ցույց է տալիս հետևյալը.

> «Դուք նույնպես Աստծո շինությունն եք... Բայց ամեն մեկը պետք է զգույշ լինի, թե ինչպես է կառուցում: Որովհետև Աստված արդեն դրեց Հիսուս Քրիստոսին՝ որպես միակ հիմքը, և այլևս ոչ մի հիմք չի կարող դրվել: Ոմանք կօգտագործեն ոսկի և արծաթ և թանկարժեք քարեր՝ հիմքի վրա կառուցելու համար. մյուսները կօգտագործեն փայտ և խոտ և հարդ: Եվ ամեն մարդու աշխատանքի որակը կերևա, երբ Քրիստոսի Օրը բացահայտի այն: Որովհետև այդ Օրը կրակը կհայտնի ամեն մեկի գործը. կրակը կփորձի այն և ցույց կտա դրա իրական որակը: Եթե այն, ինչ կառուցված էր հիմքի վրա, դիմանա կրակին, կառուցողը վարձատրություն կստանա: Բայց եթե ինչ-որ մեկի գործն այրվի, նա կկորցնի այն, բայց ինքը կփրկվի, ասես թե կրակից պրծած լինի» (Ա Կորնթացիների 3.9–15, TEV):

Մենք ենք որոշում, թե ինչպես ենք կառուցելու, և մենք ունենք երկու հիմնական ընտրություն մեր կյանքի ամեն մի պահը կառուցելու համար: Առաջինը՝ մենք կարող ենք ձգտել դեպի ժամանակավոր բաները՝ այն, ինչը հաճելի է մարմնին (փայտը, խոտը և հարդը): Երկրորդը՝ մենք կարող ենք ապրել՝ ըստ մեր վերստին ծնված հոգու ցանկության՝ հետևելով Աստծո հավիտենական Խոսքին (ոսկի, արծաթ և թան-

կարժեք քարեր): Այն, թե ինչպես ենք կառուցում կամ անցկացնում մեր կյանքը, կորոշի, թե ինչ կլինի մեզ հետ, երբ Աստծո ներկայության կրակը փորձի մեր գործը:

Ստուգվելու են ո՛չ միայն մեր գործերը. մեր մտքերը, դրդապատճառները և մտադրությունները նույնպես ի հայտ են բերվելու: Ահա թե ինչու է հավատացյալների համար կարևոր լսել Աստծո Խոսքը, ուշադրություն դարձնել դրան և թաքցնել այն մեր սրտերում, որովհետև այն մշտապես «բացահայտում է, մաղում է, վերլուծում է, դատում է սրտի մտքերը և նպատակները» (Եբրայեցիների 4.12, AMP): Ոչինչ չի կարող թափանցել մեր սրտի խորքերը այնպես, ինչպես Աստծո Խոսքը:

Եթե ականջ դնենք մարդկային դատողությանը, տրամաբանությանը, հոգեբանությանը կամ իմաստությանը, մեր մտքերը և սրտի դրդապատճառները կընթանան դեպի ժամանակավոր բաները, և շատ հաճախ նույնիսկ չենք հասկանա դա՝ ինչպես Եսասերը՝ մինչև Դատաստանի սրահը մուտք գործելը: Այս պատճառով Հիսուսն զգուշացնում է.

> «Այն, ինչը թաքնված է, ի հայտ կբերվի, և այն, ինչը ծածկված է, կգտնվի և հայտնի կդառնա: Ուրեմն, ուշադիր եղեք, թե ինչպես եք լսում, որովհետև ով ինչ-որ բան ունի, նրան ավելին կտրվի, և ով ոչինչ չունի, նույնիսկ այն փոքրը, որը նա կարծում է, թե ունի, կվերցվի նրանից» (Ղուկաս 8.17,18, TEV):

Հիսուսն ասում է մեզ, որ այն, ինչ մենք *լսում ենք* կամ ինչին *ուշադրություն ենք դարձնում*, թափանցում է մեր սիրտը և ձևավորում է մեր մտքերն ու մտադրությունները, որոնք իրենց հերթին որոշում են, թե ինչպես ենք կառուցում մեր կյանքը: Մենք պետք է մեծ ուշադրությամբ ականջ դնենք Աստծո Խոսքին, քանի որ այն լույս է մեր ճանապարհին: Առանց դրա մենք միանշանակ կշեղվենք ճիշտ այնպես, ինչպես մարդը կմոլորվի ճանապարհից խավար գիշերով: Միգուցե որոշ ժամանակ դուք ճիշտ քայլեք, բայց ի վերջո՝ կմոլորվեք:

Շեղվելով՝ մենք սկսում ենք կառուցել մեր կյանքը՝ հիմնված ժամանակավոր արժեքների վրա: Դա չի բացահայտվի, քանի դեռ Աստծո Խոսքի լույսը չի լուսավորել: Պողոսը շարունակում է այս միտքը. «Բայց երբ ինչ-որ բան բացահայտվում և հանդիմանվում է լույսից, այն տեսանելի և պարզ է դառնում» (Եփեսացիների 5.13, AMP):

Եթե մենք շեղվենք, կարող է կատարվել երկու բան. առաջին և լավագույն տարբերակն այն է, որ մենք կլսենք Աստծո Խոսքը (քարոզների միջոցով, այն անձամբ ընթերցելու ժամանակ, նաև՝ ընկերոջից կամ հոգևոր առաջնորդից), և այն կհանդիմանի մեր խիղճը: Ահա թե ինչու է

անչափ կարևոր մշտապես ընթերցել Աստծո Խոսքը: Եթե մենք իմաստուն ենք, արագորեն կապաշխարենք և ներում կխնդրենք մեր մտքերի, դրդապատճառների կամ մտադրությունների համար: Այնուամենայնիվ, եթե մեր խիղճը բթանա շարունակ սխալներ գործելուց, մեզ համար դժվար կլինի լսել Աստծո Խոսքը, իսկ եթե մեր խիղճը տաղվի կամ այրվի, դա գրեթե անհնարին կլինի: Ահա թե ինչու է Աստվածաշունչը խոսում մեր խիղճը մաքուր պահելու կարևորության մասին (տե՛ս Առակ. 4.23, Բ Տիմոթ. 1.3): Եթե մենք պաշտպանենք և մաքուր պահենք մեր խիղճը, հեշտորեն կզգանք Կենդանի Խոսքի ներգործությունը մեր սրտում:

Երկրորդ տարբերակը, որը գերադասելի չէ, այն է, որ մեր դրդապատճառները կբացահայտվեն Դատաստանի գահի առջև: Եթե դա տեղի ունենա, մենք կկորցնենք այն վարձատրությունը, որը կարող էինք ստանալ: Այնպես որ, դուք պետք է հարցնեք ինքներդ ձեզ՝ արժե՞ հակառակվել Աստծո Խոսքի հանդիմանություններին: Ամեն անգամ, երբ անեք դա, ձեր սիրտն ավելի կխստանա և կհայտնվի ավելի մեծ խաբեության մեջ: Մենք չենք հասկանա մեր վիճակը, և այն կբացահայտվի միայն Աստծո փառքի լույսի ներքո՝ Դատաստանի գահի առջև:

Պատրաստվել մեր հավիտենական ապագային

Մեր դատաստանի ժամանակ ոչինչ անհայտ չի մնալու: Ի հայտ է գալու և բացահայտվելու է ամեն ինչ: Ահա թե ինչու է Պողոսն անվանում Դատաստանի գահը «Տիրոջ ահավորությունը»: Դատաստանի ժամանակ մանրակրկիտ ստուգվելու են մեր դրդապատճառները, մտադրությունները, մտքերը, խոսքերը, գործերը և այլն: Ըստ Աստվածաշնչի «Մեսիջ» թարգմանության Ա Կորնթացիների 3.9 և 12–15-ի՝ Պողոսի խոսքերը կառուցման և դատաստանի մասին, անչափ տպավորիչ են:

> «Կամ, այլ կերպ ասած՝ դուք Աստծո տունն եք... Մեծ ուշադրություն դարձրեք ձեր շինարարական նյութերն ընտրելիս: Վերջում ստուգում է լինելու: Եթե օգտագործեք էժանագին կամ ցածրորակ նյութեր, դուք կբռնվեք: Ստուգումը մանրակրկիտ և խստապահանջ է լինելու: Դուք չեք կարողանա թաքցնել ոչ մի թերացում: Եթե ձեր գործն անցնի ստուգումը, շատ լավ, իսկ եթե ոչ՝ կառույցի ձեր մասը կքանդվի և կրկին կկառուցվի, բայց դուք չեք կործանվի. դուք կմնաք, բայց՝ մի կերպ»:

Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես չեմ ուզում մի կերպ կենդանի մնալ Քրիստոսի ատյանի առջև, քանի որ այդտեղ է որոշվելու մեր հավիտենական ճակատագիրը:

Պատկերացնո՞ւմ եք, թե որքան զարմացած կլինեն շատերը: Մեր այլաբանության մեջ ամեն մի կերպար լիովին հանկարծակիի եկավ իր դատավճռից՝ բացի Բարեգործից, ով պատրաստ էր: Մյուսները լրջորեն չէին վերաբերվել այն տարրական վարդապետություններին, որոնց մասին իրենք պետք է տեղյակ լինեին ամենասկզբից:

Ես մշտապես տեսնում եմ, թե ինչպես են այս աշխարհի իմաստուն մարդիկ պատրաստվում իրենց ապագային: Նրանք լավ են սովորում դպրոցում, որպեսզի կարողանան հաջող կարիերա կառուցել: Անմիջապես աշխատանքի անցնելով՝ նրանք տուն են գնում և արագորեն վճարում են դրա համար: Նրանք նույնպես խնայողական հաշիվներ և անհատական կենսաթոշակային փաթեթներ են ձեռք բերում: Ոմանք ներդնում են իրենց ավելորդ գումարները, որպեսզի դրանք աշխատեն իրենց համար: Նրանք անում են այդ ամենը, որպեսզի պատրաստվեն իրենց ապագայի համար. նրանք չեն ցանկանում կարիքի մեջ հայտնվել, հատկապես՝ տարեց հասակում: Եթե այդ մարդիկ պատրաստվեին իրենց կենսաթոշակային տարիքին այնպես, ինչպես շատ հավատացյալներ պատրաստվում են հավիտենությանը, նրանք մեծ դժվարություններ կունենային: Ի տարբերություն եկեղեցու շատ մարդկանց՝ նրանք շատ մտահոգված և վախեցած են:

Պատկերացրեք մի մարդու, ով առաջին օրը՝ թոշակի է անցել, և նրա հետ տեղի է ունենում հետևյալը: Նախ՝ կենսաթոշակային համակարգը սնանկանում է և միջոցներ չունի՝ նրան ամեն ամիս թոշակ տալու համար: Բացի այդ՝ այն բանկը, որտեղ նրա բոլոր խնայողություններն են, փակվում է՝ դադարեցնելով իր գործունեությունը: Նրա բոլոր խնայողությունները կորում են: Նույն օրը այդ մարդն արթնանում է կրակի մեջ. նրա տունն այրվում է: Նա փախչում է տնից առանց որևէ բանի՝ բացի իր վրայի հագուստից: Նրա աչքերի առջև կրակը վերջնականորեն կործանում է այն ամենը, ինչ պատկանում էր իրեն:

Ինչպիսի՜ ողբերգական օր: Այնուամենայնիվ, Պողոսը ցույց է տալիս, որ հենց սա տեղի կունենա որոշ քրիստոնյաների հետ Դատաստանի գահի առջև: Կրկի՛ն լսեք նրա խոսքերը. «Բայց եթե գործն այրվի, կառուցողը մեծ կորուստ կկրի: Կառուցողը կփրկվի, բայց՝ ինչպես մի մարդ, ով հազիվ է ազատվել մեծ կրակից» (Ա Կորնթացիների 3.15, NLT): Աստծո թագավորության մեջ գտնվող իմաստուն մարդիկ գիտակցում են, որ մենք չենք կառուցում ապագա՝ մեր ծերության տարիների համար. մենք պատրաստվում ենք հավիտենությա՛նը:

Իմաստուն մարդիկ, որոնց մասին ես խոսում եմ, նրանք են, ովքեր ծրագրում են իրենց հավիտենական ապագան: Նրանց կյանքը նպա-

տակաուղղված է, և նրանք գիտեն, որ իրենց հավիտենական ճակատագիրը որոշվում է այն բանով, թե ինչպես են իրենք ապրում այս աշխարհում: Նրանք փառավոր կերպով մուտք կգործեն Աստծո թագավորություն, ոչ թե մի կերպ ներս կմտնեն այն բանից հետո, երբ իրենց բոլոր գործերը կայրվեն և կկործանվեն: Կարդացե՛ք, թե ինչ է գրում Պետրոսն այս մասին.

> «Ուրեմն, իմ եղբայրնե՛ր, է՛լ ավելի եռանդուն կերպով հաստատ դարձրեք ձեր կոչումը և ընտրությունը: Որովհետև, եթե անեք այս բաները, դուք երբեք չեք ձախողվի և ջերմ ընդունելություն կստանաք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական թագավորության մեջ» (Բ Պետրոս 1.10,11, NIV):

Ջերմ ընդունելությունն այն է, որ Տերը կասի մեզ. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, Ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտի՛ր քո Տիրոջ ուրախությունը» (Մատթեոս 25.21):

Վերջերս Տերը մի տեսիլք ցույց տվեց: Ես տեսա Աստծո թագավորության հաղթողներին, որոնք շարքերով մուտք էին գործում Աստծո քաղաքը: Նրանք անցնում էին ոսկե փողոցներով՝ մինչ ճանապարհների եզրին գտնվող բազմությունները ցնծում էին: Հիսուս Թագավորը նստած էր մի բարձր հարթակի վրա. ամբողջ քաղաքը տեսնում էր Նրան: Հավատարիմ զինվորները շարունակում էին քայլել՝ բերելով Հիսուսին Իր ավարը, իսկ բազմությունները ցնծում էին: Այդ տեսիլքի մեջ ես զգում էի, որ Տերն ասում էր Իր զինվորներին. «Կեցցե՛ք»:

Տերը խոսեց իմ սրտին. «Դու ուզում ես լինել այդ զինվորներից մե՞կը, ովքեր բերում են Ինձ համար հնձած պտուղները, թե՞ ճանապարհի եզրին կանգնած և ցնծացող մարդկանցից մեկը»: Ես որոշում կայացրի ավելի, քան նախկինում՝ հաստատ դարձնել իմ կոչումը և ընտրությունը: Ես վճռականորեն գիտակցեցի, որ ցանկանում եմ բավականությամբ լի ժպիտ տեսնել իմ Տիրոջ երեսին, երբ Նա վերանայի իմ կյանքը, ոչ թե տրտմած հայացք՝ այն գիտակցումից, որ այն ներուժը, որը Նա տվել էր ինձ, կորսվել է:

Ես նույնպես մտադրված եմ հայտնի դարձնել այս ճշմարտությունն իմ բոլոր սերնդակիցներին, ովքեր սիրում են Աստծուն, որպեսզի նրանք մուտք գործեն Նրա փառավոր ներկայության մեջ այն ավարով, որին Նա լիովին արժանի է, և տեսնեն մեր Հոր փառավոր ժպիտը: Մենք ենք որոշում՝ արդյո՞ք ջերմ ընդունելության կարժանանանք Երկնքում՝ այս երկրում կատարած ծառայության միջոցով: Այս ճշմարտությունը՝ հաջորդ գլուխները գրելու գլխավոր պատճառն է:

Հաջորդ գլուխներում

Հաջորդ գլուխներում կքննարկենք այն գլխավոր բնագավառները, ըստ որոնց մենք կդատվենք կամ կվարձատրվենք: Թեև չենք կարողանա մանրամասնորեն քննարկել ամեն ինչ, սակայն կանդրադառնանք ամենակարևոր հարցերին: Մենք լավ հիմք կդնենք, որի վրա դուք կկարողանաք հավիտենական նշանակություն ունեցող կյանք կառուցել:

Որպես ամփոփում՝ դանդաղորեն կարդացե՛ք Պետրոսի խոսքերը: Թույլ տվեք, որ դրանք հիշեցնեն ձեզ այն ճշմարտությունները, որոնք իմացաք այս գլխում: Այս հատվածի բանալի բառերը և արտահայտություններն է՛լ ավելի կյանքի կկոչեն ձեզանում այն, ինչը սովորեցինք: Պետրոսի խոսքերը նույնպես կպատրաստեն մեզ այն նյութի համար, որը կուսումնասիրենք հաջորդ գլխում:

> «Այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստվածահաճո կյանքի համար, հրաշքով տրվել է մեզ՝ Աստծո մոտ մեզ Հրավիրողին անձամբ և մտերմորեն ճանաչելու միջոցով... Այնպես որ, ժամանակ մի՛ կորցրեք և սկսե՛ք կառուցել այն բանի վրա, ինչը տրվել է ձեզ՝ լրացնելով ձեր հիմքային հավատքը լավ բնավորությամբ, հոգևոր հասկացողությամբ, սթափ կարգապահությամբ, ջերմեռանդ համբերությամբ, երկյուղալի ակնածանքով, ջերմ ընկերասիրությամբ և առատաձեռն սիրով, և թող որ սրանցից ամեն մեկը հարմարեցվի մյուսի հետ և զարգացնեն միմյանց: Երբ այս հատկանիշները գործեն և ավելանան ձեզանում, ձեր կյանքում ոչինչ չի ուշանա. ոչ մի օր չի անցնի՝ առանց վարձատրության, մինչ դուք հասունանում եք մեր Տեր Հիսուսի ճանաչողությամբ... Այնպես որ, ընկերնե՛ր, հաստատե՛ք Աստծո հրավերը՝ ուղղված ձեզ, և այն, որ Նա ընտրեց ձեզ: Մի՛ հետաձգեք դա. արե՛ք դա հիմա, և ձեր կյանքը հաստատված կլինի, և դուք ուղիղ ու բաց ճանապարհով մուտք կգործեք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական թագավորության մեջ: Քանի որ վտանգները շատ են, թեև դուք լիովին տեղեկացված եք այս ճշմարտությունից և կյանքից, ես նույնիսկ մեկ րոպե չեմ դադարի գրավել ձեր ուշադրությունն այս բաների նկատմամբ: Սա այն պաշտոնն է, որին ես նշանակվել եմ՝ սթափ պահել ձեզ հաճախակի հիշեցումներով, և ես կկատարեմ այն, քանի դեռ ապրում եմ» (Բ Պետրոս 1.3,5–8,10–13, MSG):

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՉՈՐՍ, ԳԼՈՒԽՆԵՐ 8-10

1. Հավանաբար, Աֆաբելի քաղաքացիների դատաստանի ամենատպավորիչ դրվագներից մեկն այն էր, որ նրանք նոր անուն էին ստանում: Մտածե՛ք այն մասին, թե ով էիք դուք, և ինչպիսին էիք՝ մինչև Քրիստոսին ընդունելը, և թե ինչպես Հիսուսը փոխեց ձեր կյանքը: Ձեր կարծիքով և հաշվի առնելով ձեր կյանքում մինչ օրս տեղի ունեցածը՝ ինչպե՞ս ձեր անվան պատմությունն արդեն իսկ կարող է փոխված լինել:

2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ է Երկինքն ուրախության վայր, որտեղ կսրբվի ամեն արցունք մարդկանց աչքերից, թեև հավատացյալները կարող են մեծ կորուստ կրել իրենց կյանքի ընթացքի պատճառով:

3. Ձեր իսկ բառերով բացատրե՛ք, թե դատաստանի ժամանակ ինչն առանձնացրեց Բարեգործին իր հասակակիցներից: Ի՞նչ մենք կարող ենք սովորել նրա օրինակից:

4. Իններորդ գլխում գրված էր այն մասին, թե ինչպիսին է Երկինքը՝ համաձայն Աստվածաշնչի: Կա՞ր արդյոք այնպիսի բան այդ նկարագրության մեջ, ինչը զարմացրեց ձեզ, և ո՞րն էր դա:

5. Տասներորդ գլխում գրված է. «Իհարկե, Հիսուսի արյունը մաքրում է մեզ այն մեղքերից, որոնք թույլ չէին տա մեզ մուտք գործել Աստծո թագավորություն. այնուամենայնիվ, այն չի ազատում մեզ դատաստանից, որի ժամանակ քննվելու են մեր՝ թե՛ լավ, թե՛ վատ գործերը, որոնք գործել ենք փրկվելուց հետո»: Ինչպիսի՞ն էր ձեր սկզբնական արձագանքն այս պնդմանը: Ի՞նչ եք դուք մտածում հիմա՝ այս բաժինն ավարտելուց հետո:

ԲԱԺԻՆ ՀԻՆԳ

ԳԼՈՒԽ 11

ԱՍՏՈ ՏՈՒՆԸ

«...Դուք նույնպես միասին կառուցվում եք
որպես Աստծո բնակարան...»:
— Եփեսացիների 2.22

Մենք կբաժանենք հավատացյալի դատաստանը երկու խոշոր բաժինների: Առաջինը մեր մասնակցությունն է Աստծո թագավորությունը կառուցելու մեջ՝ համաձայն մեր կոչումների և պարգևների: Երկրորդը՝ մարդկանց կյանքերը կառուցելն է, ինչը, իհարկե, ընդգրկում է նաև մեր կյանքը: Ինչ վերաբերում է մարդկանց կյանքերը կառուցելուն, հաշվի է առնվելու նրանց վրա մեր ունեցած ազդեցությունը: Ինչ վերաբերում է մեր կյանքը կառուցելուն, հաշվի է առնվելու այն, թե որքանով ենք համագործակցել Աստծո շնորհքի հետ՝ մեզանում քրիստոսանման բնավորություն ձևավորելու համար: Վերջինը, անկասկած, Աստծո Խոսքին արձագանքելու, հավատալու և հնազանդվելու հետևանք է: Մեր վարքը և գործերը, խոսքերը, մտքերը և դրդապատճառները քննվելու են բոլոր դեպքերում:

Նախ մենք կանդրադառնանք այն բանին, թե ինչպիսի դատաստանի է ենթարկվելու մեր մասնակցությունն Աստծո թագավորությունը կառուցելու մեջ, ինչից հետո կխոսենք մեր անձնական կյանքի մասին:

Ի՞նչ կարող եք անել Ինձ համար

Մենք կարող ենք կառուցել Աստծո թագավորությունը միմիայն Սուրբ Հոգուն հնազանդվելով, քանի որ մենք չենք կարող հավիտենական արժեք ունեցող որևէ բան անել՝ առանց Հիսուս Քրիստոսի շնորհքի: Աստծո Խոսքն ասում է. «Եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում շինողները» (Սաղմոս 127.1): Այս խոսքը պարզորեն ցույց է տալիս, որ մենք կարող ենք կառուցել առանց Սուրբ Հոգու, բայց մեր կառուցածն անարժեք կլինի հավիտենության լույսի ներքո: Այն կայրվի Դատաստանի գահի առջև: Անչափ կարևոր է, որ հասկանանք սա:

Հին կտակարանում Աստված պատվիրում է մի խումբ մարդկանց, ովքեր զբաղված էին Իրեն ծառայելով.

«Երկինքը՝ Իմ գահն է, և երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը: Ի՞նչ տուն կարող եք կառուցել Ինձ համար, ի՞նչ վայր, որ Ես բնակվեմ այդտեղ: Ես Ինքս եմ ստեղծել ամբողջ տիեզերքը: Ինձ հաճելի են այն մարդիկ, ովքեր խոնարհ և ապաշխարող են, ովքեր վախենում են Ինձնից և հնազանդվում են Ինձ» (Եսայի 66.1,2, TEV):

Պարզ ասած՝ Տերը նկատի ունի. «Ես Աստված եմ: Դուք լիովին գիտակցո՞ւմ եք, թե իրականում Ով եմ Ես: Ձեր կարծիքով, ի՞նչ կարող եք անել Ինձ համար»: Գաղափարն այն մասին, որ մենք կարող ենք այնպիսի բան ստեղծել, ինչն Աստծուն անհրաժեշտ կլինի, նման է այն բանին, որ մի խումբ մրջյուններ ասեն մի մարդու. «Մենք տուն կկառուցենք քեզ համար»: Որքա՜ն ծիծաղելի է: Մենք ոչինչ չենք կարող անել մեր ուժերով՝ մեր վեհ, անըմբռնելի և զարմանալի Աստծուն ծառայելու և հաճեցնելու համար: Իրականում, Նա չունի մեր կարիքը:

Այնուամենայնիվ, Աստված ցույց է տալիս, թե ով կարող է հաճեցնել և օգտակար լինել Իրեն: Այն մարդիկ, ովքեր խոնարհ և ապաշխարող են, ովքեր վախենում են Աստծուց և հնազանդվում են Նրան: Աստված Իր թագավորությունը կառուցելու արտոնություն է տալիս այդպիսի մարդկանց: Ինչպե՞ս նրանք կարող են օգտակար լինել նման անսահման Աստծուն: «Ոչ թե զորությամբ, և ոչ թե ուժով, այլ՝ Իմ Հոգով,– ասում է Զորաց Տերը» (Զաքարիա 4.6): Արդյունավետ է այն աշխատանքը, որում մարդը համագործակցում է Սուրբ Հոգու հետ: Միայն այդ դեպքում է, որ մշակի աշխատանքը զուր չէ:

Գործակիցներ

Գոյություն ունի մի ապշեցնող ճշմարտություն. որքան էլ մեծ և զարմանալի լինի մեր Տեր Աստված, Նա, Իր իսկ որոշմամբ, սահմանափակեց Իր գործունեությունն այս երկրի վրա հենց ամենասկզբում, երբ իշխանություն տվեց մարդուն մեր մոլորակի վրա: Հետևաբար, Աստծուն կարելի է սահմանափակել:

Միգուցե սա զարմացնի ձեզ, բայց Աստվածաշնչում բազմաթիվ օրինակներ կան այս մասին: Աբրահամի ժառանգները «սահմանափակեցին Իսրայելի Սուրբին» (Սաղմոս 78.41, NKJV): Մեկ այլ հատվածում Հիսուսն ասաց Իր երկրի հոգևոր առաջնորդներին. «Այսպես դուք զրոյացնում եք և դատարկ ու անարդյունավետ եք դարձնում Աստծո Խոսքը [Աստծո Խոսքի հեղինակությունը] ձեր ավանդությամբ» (Մարկոս 7.13, AMP): Մենք պետք է համագործակցենք Աստծո հետ, որպեսզի իրականացնենք Նրա նպատակը: Այդ նպատակը, ընդհանուր առմամբ, հետևյալն է. ունենալ ժողովուրդ՝ վերափոխված՝ ըստ Հիսուսի պատկերի և նմանության,

որի հետ Նա կարող է բնակվել ամբողջ հավիտենության ընթացքում: Ահա թե ինչու ենք մենք կոչվում Աստծո գործակիցները.

> «Մենք գործակիցներ (աջակիցներ և միասին աշխատող մշակներ) ենք Աստծո հետ և Աստծո համար. դուք Աստծո պարտեզն եք, խաղողի այգին և մշակվող դաշտը, [դուք եք] Աստծո շինությունը» (Ա Կորնթացիների 3.9, AMP):

Գրեթե ամեն անգամ, երբ Նոր կտակարանը խոսում է հավիտենական արժեք ունեցող գործերի մասին, դրանք համեմատվում են դաշտային աշխատանքի կամ շինարարության հետ: Դաշտային աշխատանքի այլաբանությունն օգտագործվում է, քանի որ երկիրն այն դաշտն է, որտեղ ներկայումս տեղի է ունենում Աստծո թագավորության աճը: Ամբողջ Երկինքը ցնծում է՝ հետևելով, թե ինչպես են սրբերը կառուցում Աստծո թագավորությունն այս երկրի վրա: Շինարարության փոխաբերությունն օգտագործվում է, քանի որ Աստված փնտրում է մշտական բնակարան, և մենք՝ այն կենդանի քարերն ենք, որոնցից Նա կազմում է Իր բնակարանը:

Պետրոսը գրում է. «Հիմա Աստված կառուցում է Իր հոգևոր տաճարը ձեզանով՝ ինչպես կենդանի քարերով» (Ա Պետրոս 2.5, NLT): Պողոսը գրում է. «Միասին մենք Նրա տունն ենք... խնամքով իրար միացված Նրանում» (Եփեսացիների 2.20,21, NLT): Այնպես որ, ըստ էության, մենք այս երկրի վրա ենք, որպեսզի կառուցենք Աստծո փառավոր տաճարը կամ *տունը*՝ մարդկանց փրկության բերելու, սովորեցնելու, ծառայելու և նմանատիպ գործունեության միջոցով: Յուրաքանչյուրս ունի իր դերը՝ և՛ որպես անարատ կենդանի քար, և՛ որպես շինարար, որի շնորհիվ կենդանի քարերը հարմարեցվում են, միանում են իրար և դառնում են փառավոր տուն Աստծո համար: Այս այլաբանությունը նկարագրում է մեր պարտավորությունները մեր կյանքում և Աստծո թագավորության մեջ, որոնց համար բոլորս հաշիվ ենք տալու:

Տուն՝ անհատական նախագծով

Եթե ես շինարար լինեմ, նախքան որևէ գործ սկսելը կնախագծեմ այն տունը, որը պետք է կառուցեմ: Պատրաստված գծագրերի վրա կնշվեն, թե ինչպես պետք է կառուցել այդ տունը և ինչ շինանյութեր է պետք օգտագործել: Բայց սա դեռ վերջը չէ: Ամեն մի շինարար գիտի, որ իր գործի ամենակարևոր մասերից մեկը՝ ենթակապալառուների աշխատանքը ճիշտ կազմակերպելն է: Նա պետք է պայմանավորվի տան հիմնակառույցը կանգնեցնողների, բետոնագործների, ջրմուղագործների, էլեկտրատեխնիկների, սալիկներ տեղադրողների և շատ այլ մարդկանց հետ: Հենց այս

մարդիկ են փաստացիորեն կառուցում տունը: Եթե նրանց աշխատանքների հերթականությունը ճիշտ կազմակերպված չլինի, անխուսափելիորեն խառնաշփոթ է սկսվելու: Օրինակ՝ պատկերացրեք, թե ինչ կլինի, եթե գիպսաստվարաթղթի տեղադրման աշխատանքները նշանակվեն էլեկտրալարերն անցկացնելուց և ձայնամեկուսացումը կատարելուց առաջ:

Եթե ենթակապալառուներից մեկը վատ աշխատանք կատարի կամ ուշացնի ժամկետները, շինարարը կկանչի մեկ այլ մարդու՝ նրա աշխատանքը կատարելու համար: Նոր նշանակված աշխատողը պետք է գա կարճ ժամանակում և, հավանաբար, ստիպված կլինի քանդել նախկին ենթակապալառուի սխալ կառուցած հատվածը: Եվ նույնիսկ եթե ենթակապալառուներից մեկը չհասցնի կատարել իրեն հանձնարարված աշխատանքը, շինարարը կանի ամեն ինչ՝ գործն ավարտելու համար:

Ես նույնպես նկատել եմ, որ երբ շինարարը *տուն է կառուցում իր համար*, նա մանրախնդրորեն գտնում է լավագույն ենթակապալառուներին: Նա ապահովում է նրանց լավագույն նյութերով և անհրաժեշտ ամեն ինչով՝ գործը ճիշտ կատարելու համար: Նա մեծ ուշադրությամբ վերահսկում է ամբողջ աշխատանքը: Աստված՝ *Իր տան* Շինարարն է, բայց Նրա տունը՝ քաղաք է, որը բաղկացած է մարդկանցից:

Սովորաբար հատուկ տներին անուններ են տալիս: Օրինակ՝ Անգլիայի թագուհու տունը կոչվում է Բուքինգհեմյան պալատ: Միացյալ Նահանգների նախագահի տունը կոչվում է Սպիտակ տուն: Կան այլ տներ, որոնց մասին միգուցե չեք լսել: Դերասանուհի Ֆիլիս Կալվերտի տունը կոչվում է Տուն՝ բլրի վրա: Դերասան և ռեժիսոր Չարլզ Այվեն Վենսի տունը կոչվում է Կաղնիների տնակ: Վիպասան Չարլզ Դայերի տունը կոչվում է Հին սարդոստայն: Եվ այսպես շարունակ: Այնուամենայնիվ, Աստված անվանել է Իր տունը շատ ավելի վաղ, քան որևէ մարդ մտածել է այդ մասին: Նա Սիոն է անվանել Իր հավիտենական տունը, որը դեռ կառուցման ընթացքի մեջ է: Գրված է.

> «Որովհետև Տերը Սիոնին ընտրեց, հավանեց նրան Իրեն բնակարան շինելու համար: Այս է հավիտյան Իմ հանգիստը, այստեղ կբնակվեմ, որովհետև սրան հավանեցի» (Սաղմոս 132.13,14):

Եթե դուք արտոնություն եք ունեցել կառուցելու ձեր երազանքի տունը, գիտեք, թե ինչպիսի ոգեշնչմամբ և ակնկալիքով եք սպասում, որ ավարտեք: Դուք ցանկանում եք հանգստանալ այդ տանը և ուրախություն ու խաղաղություն գտնել այդտեղ:

Լիզան և ես անհատական նախագծմամբ տուն կառուցելու արտոնություն ունեցանք 1990-ական թվականների կեսին: Երբ դեռ ապրում էինք Ֆլորիդա նահանգի Օռլանդո քաղաքում, Ռոբերտ անունով

մի հայտնի շինարար, ով սիրում էր մեր ծառայությունը, այցելեց մեզ և ասաց. «Ես ուզում եմ տուն կառուցել ձեզ համար»: Այդ ժամանակ մենք շատ փոքր տուն ունեինք և մտածեցինք, որ նրա գները շատ բարձր կլինեին մեզ համար: Երբ մենք մերժեցինք նրա առաջարկը, նա ասաց. «Ես կկառուցեմ դա Աստծո գնով»: Ինչպես հետագայում պարզվեց, նա նույնիսկ մեկ սենթի շահույթ չէր ունեցել այդ տնից:

Մինչև այդ մենք երկու տուն էինք ունեցել: Երկուսն էլ փոքր տներ էին՝ կառուցված ըստ պատրաստի նախագծերի. այսինքն՝ մենք որևէ կապ չունեինք դրանց նախագծման մեջ: Ես երբեք չեմ մոռանա, երբ մեր զրույցից մի քանի օր անց Ռոբերտը եկավ մեր փոքրիկ տունը, նստեցինք մեր խոհանոցի սեղանի շուրջ, դատարկ թուղթ փռեց սեղանին և ոգեշնչված ասաց. «Նկարե՛ք ձեր երազանքի տունը»:

Մենք ցնցված էինք. չէինք պատկերացնում, որ կարելի էր նման բան անել: Կինս անմիջապես գործի անցավ և սկսեց նկարել: Նա տարիներ շարունակ երազում էր այդ հնարավորության մասին: Քիչ անց ես նույնպես ներգրավվեցի այդ գործի մեջ: Մենք մեծ ուրախությամբ էինք անում դա, և որքան ավելի էինք հասկանում, որ կարող ենք նախագծել մեր տունն՝ ինչպես ուզում ենք, այնքան մեր ոգեշնչումն ավելանում էր: Ոչինչ չէր սահմանափակում մեզ:

Դրանից հետո մեր երազանքի տունը՝ նկարած թղթի վրա, ուղարկվեց ճարտարապետների և նախագծողների մոտ: Մի քանի օր անց Ռոբերտը ցույց տվեց մեզ տան վերջնական նախագիծը: Մենք անհամբեր սպասում էինք շինարարության սկզբին:

Այն պահից, երբ Ռոբերտի շինարարական թիմն սկսեց փորել հողը, և աշխատանքներն սկսվեցին, մենք շինհրապարակ էինք գնում ամեն օր, իսկ երբեմն՝ օրը երկու անգամ, ամբողջ շինարարության ընթացքում: Մենք այնքա՜ն էինք շտապում. հազիվ էինք համբերում, մինչև որ մեր տան ևս մեկ մասը կառուցվում էր: Այդ մի քանի ամիսները տարիներ թվացին մեզ, իսկ օրերը՝ շաբաթներ, քանի որ ակնկալում էինք մեր տան ամեն հերթական աշխատանքի կատարումը և, ի վերջո, սպասում էինք, որ տեղափոխվելու էինք այդտեղ: Մենք զարմանքով հետևում էինք, թե ինչպես էր մեր երազանքը՝ նկարած դատարկ թղթի վրա, կյանքի կոչվում մեր աչքի առջև:

Մեր վերապրումները կարելի է շատ աննշան կերպով համեմատել Աստծո զգացմունքների և Իր երազանքի տան ավարտին սպասելու հետ, սակայն Նա մի քանի ամսից շատ ավելի է սպասում դրան: Նա սպասում է Իր տան ավարտին աշխարհի ստեղծագործությունից ի վեր: Գրված է. «Տերը շինեց Սիոնը» (Սաղմոս 102.16), և «Սիոնի միջից՝ գեղեցկության կատարելությունից, Աստված փայլում է» (Սաղմոս 50.2):

Աստված մի քանի հազար տարի է՝ աշխատում է Իր տան վրա: Նա նախագծել է այն՝ նախքան մարդուն ստեղծելը: Շնորհիվ Իր ամենագիտության՝ Նա գիտեր, որ մարդն անկում էր ապրելու, թեև դա Իր ծրագիրը և Իր գործը չէր: Այնպես որ, Իր կանխագիտությամբ Նա որոշեց կառուցել Սիոնը, որը բաղկացած կլինի փրկագնված մարդկությունից:

Աստված պետք է սկսեր հիմքից և գլխավոր անկյունաքարից, որն անձամբ Հիսուս Փրկիչն է: Հայրն ասում է Նրա մասին. «Տե՛ս, ես մի քար եմ դնում Սիոնում՝ փորձված քար, թանկարժեք անկյունաքար՝ որպես հաստատ հիմք» (Եսայի 28.16, NIV): Քանի որ Հայրը նախագծեց և ծրագրեց Իր տունն արարչագործությունից առաջ, Հիսուսը կոչվում է «Գառը... որն աշխարհի սկզբից մորթված է» (Հայտնություն 13.8): Պետրոսը գրում է. «Որ սկզբից ճանաչված էր՝ աշխարհը ստեղծվելուց առաջ» (Ա Պետրոս 1.20):

Հիսուսը ոչ միայն հիմքը և գլխավոր անկյունաքարն է, այլև՝ գլխավոր ենթակապալառուն: Հիսուսը չթերացավ Իր հանձնարարության մեջ, այլ անթերի կատարեց այն: Անմիջապես Իր խաչելությունից առաջ Նա աղոթեց Իր Հորը. «Ես *ավարտեցի* այն գործը, որը Դու տվել էիր Ինձ, որ անեի» (Հովհաննես 17.4, NKJV):

Հայր Աստված սկսեց Իր տան ամբողջական նախագիծը՝ որոշելով հստակ ժամանակ Հիսուսի աշխատանքի համար (տե՛ս Գաղատ. 4.4): Դրանից հետո Նա նշանակեց մնացած ենթակապալառուներին՝ մեզ բոլորիս: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, մենք պետք է լինենք ոչ միայն Նրա տան ենթակապալառուները, այլև կառուցման նյութը: Ինչպես Պողոսը գրում է. «[Նա] ընտրեց մեզ Նրանով *աշխարհն ստեղծելուց առաջ*, որ մենք սուրբ և անարատ լինենք Նրա առջև» (Եփեսացիների 1.4): Նշանակում է՝ մենք Նրա տան կառուցման նյութն ենք՝ այդ տան կենդանի քարերը:

Աստված նաև ընտրեց մեզ՝ որպես ենթակապալառուների, քանի որ գրված է. «Որովհետև մենք Աստծո գործակիցներն ենք՝ ստեղծված Քրիստոս Հիսուսում, *որպեսզի կատարենք այն բարի գործերը, որոնք Աստված նախապես պատրաստել է մեզ համար»* (Եփեսացիների 2.10, NIV): Ուշադրություն դարձրեք, որ Նա նախապես որոշել է մեզ հանձնարարված առաջադրանքները: Աստվածաշնչում գրված չէ, որ մեր առաջադրանքները տրվել են աշխարհը հիմնադրելուց ի վեր, թեև դա, անկասկած, հնարավոր է: Իհարկե, մենք գիտենք, որ «...գործերն աշխարհի սկզբից կատարված էին» (Եբրայեցիների 4.3): Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է մեր անձնական առաջադրանքներին, միակ բանը, որ մենք գտնում ենք այն է, որ դրանք տրվել են մեր ծնվելուց առաջ: Դավիթն ասում է. «Դու տեսար ինձ մինչև իմ ծնվելը: Իմ կյանքի

ամեն օրը գրված էր Քո գրքում: Ամեն վայրկյանը ծրագրված էր, երբ իմ օրերից ոչ մեկը դեռ չէր եղել» (Սաղմոս 139.16, NLT):

Մեր կյանքի գործը նախասահմանվել էր, մինչև որ մենք ձևավորվեցինք մեր մոր որովայնում: Այս ճշմարտությունը գրված է Երեմիայի գրքում. «Ես ճանաչեցի քեզ՝ մինչև որ ձևավորեցի քեզ քո մոր որովայնում: *Մինչև քո ծնվելը Ես առանձնացրի քեզ և նշանակեցի որպես Իմ պատվիրակ՝ աշխարհին»* (Երեմիա 1.5, NLT): Պողոս առաքյալը նույնպես գրում է. «Բայց երբ որ բարեհաճեց Աստված, որ իմ մոր որովայնից ինձ որոշել է և Իր շնորհքով կանչել է...» (Գաղատացիների 1.15,16): Այս վկայությունները միայն հաստատում են Դավթի խոսքերը, որ մինչև ծնվելը բոլորս առանձնացված ենք եղել, որ հատուկ գործ կատարենք Աստծո համար:

Այնպես որ, գոյություն ունի մի զարմանալի ճշմարտություն. Աստված գիրք է գրել ձեր մասին մինչև ձեր ծնվելը՝ որոշելով ձեր կյանքի ամեն մի վայրկյանը, երբ ձեր օրերից ոչ մեկը դեռ չէր եղել: Հարցն այն է, թե արդյո՞ք մենք կկատարենք այն, ինչ որոշված է մեզ համար: Սողոմոնը գրում է.

> «Ես գիտեմ, որ այն ամենը, ինչ Աստված անում է, կմնա հավիտյան: Ոչինչ չի ավելացվի դրան, և ոչինչ չի պակասեցվի դրանից: Աստված անում է դա, որ մարդիկ վախենան Իր առջև: Այն, ինչ կա, արդեն եղել է, և այն, ինչ պետք է լինի, արդեն եղած է, և Աստված հաշիվ է պահանջում անցածի համար» (Ժողովող 3.14,15, NKJV):

Այս խոսքերում այնքա՜ն բան է գրված: Առաջին հերթին, Աստված ծրագիր ունի: Ոչինչ չի կարող խանգարել դրա իրականացմանը, և մարդկությունը ոչինչ չի կարող ավելացնել դրան: Սողոմոնը շարունակում է՝ ասելով, որ այն ամենը, ինչ ներկայումս կատարվում է, շատ վաղուց Աստծո մտքում է եղել: Այն, ինչ կատարվելու է ապագայում, նույնպես շատ վաղուց եղել է Աստծո ծրագրում: Այնուամենայնիվ, մենք պետք է հաշիվ տանք այն ամենի համար, ինչ արդեն արվել է: Արդյո՞ք մենք քայլ ենք արել դեպի այն ամենը, ինչ Աստված պատրաստել էր մեզ համար: Միգուցե մենք ամեն ինչ փչացրե՞լ ենք կամ թերացե՞լ ենք մեր գործի մեջ: Միգուցե Աստված ստիպված է եղել նշանակել մեկ ա՞յլ մարդու՝ կատարելու համար այն առաջադրանքն Իր հիմնական ծրագրում, որի համար մենք էինք կանչված եղել:

Այս պահին ես պետք է մի կարևոր հայտարարություն անեմ: Ամեն մարդու կյանքում աստվածային կոչում կա: Մեզնից ամեն մեկն Աստծո տան ծրագրի կարևոր մասն է: Այնպես որ, լավ կլինի, որ մենք իմանանք հետևյալ ճշմարտությունը.

> Ինչ վերաբերում է ձեր կոչմանը, դուք չեք դատվելու ըստ այն գործերի, որոնք արել եք, այլ՝ ըստ այն գործերի, որոնց համար կանչված եք եղել:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Դատաստանի գահի առջև Հիսուսը կարող է ասել.

– Ավետարանիչ Անդերսո՛ն, Ես կանչել էի քեզ՝ հպվելու բազմաթիվ մարդկանց: Առա՛ջ եկ և հաշի՛վ տուր նրանց համար:

Այդ մարդը կարող է գալ Հիսուսի առջև՝ շփոթված և դողալով, և ասել.

– Տե՛ր, Դու ուզում էիր ասել՝ հաշվապահ Անդերսոն, այնպես չէ՞: Ես հաշվապահական ընտրություն եմ ունեցել: Դա իմ աշխատանքն էր: Ես աշխատում էի շատ եկեղեցիների և շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ: Շատերը մուտք գործեցին Քո թագավորություն այդ ծառայությունների միջոցով: Դու շփոթե՞լ ես ինձ ինչ-որ մեկի հետ:

Տերը կարող է պատասխանել.

– Ո՛չ: Ես կանչել էի քեզ մինչև քո ծնվելը՝ շահելու բազմաթիվ մարդկանց Ինձ համար Ասիայում: Հաշի՛վ տուր այն մասին, թե որտեղ են նրանք: Եթե դու հնազանդվեիր Ինձ, մեծ վարձատրություն կստանայիր այն պտղի համար, որը կհավաքեիր Իմ թագավորության համար: Իսկ հիմա քո գործերը կայրվեն, քանի որ Դու չես հնազանդվել ինձ:

Կարող է լինել նաև հետևյալը: Հիսուսը կարող է ասել.

– Հաշվապահ Զո՛նս, Ես կանչել էի քեզ՝ հատուկ գործի համար: Առա՛ջ եկ և հաշի՛վ տուր դրա համար:

Այդ մարդը կարող է շփոթված առաջ գալ և դողալով ասել.

– Տե՛ր, Դու ուզում էիր ասել՝ հովիվ Զոնս, ճի՞շտ է: Ես ինը հարյուր անդամ ունեցող եկեղեցու հովիվ եմ եղել: Զրոյից եմ կառուցել այդ եկեղեցին:

Տերը կարող է պատասխանել.

– Ո՛չ, Ես կանչել էի քեզ՝ լինելու գործարար ոլորտում: Դու պետք է խոշոր հաշվապահական ընկերություն կառուցեիր, որը կօգներ Իմ որոշ եկեղեցիներին և ծառայություններին արդյունավետ կատարել այն, ինչի համար Ես կանչել էի նրանց: Եթե դու ջանասիրաբար փնտրեիր Ինձ, Ես ցույց կտայի քեզ դա: Այդ ժամանակ բոլոր մարդիկ, որոնց կյանքում այդ ծառայություններն ազդեցություն կթողնեին, կհաշվեգրվեին քեզ. դու կվարձատրվեիր ամեն մի մարդու համար: Իսկ այժմ ոչինչ չես ստանա քո գործի համար, քանի որ չես հնազանդվել Ինձ:

Ես նույնպես նշանակել էի քեզ կարգ ու կանոնի ծառայության ղեկավար մի եկեղեցում, որը գտնվում էր այն քաղաքի մյուս մասում, որում դու սկսեցիր քո եկեղեցին: Թեև այդ եկեղեցու անդամների թիվն ընդամենը հինգ հարյուրից մի փոքր ավելի էր, սակայն նրանք հպվեցին շատերին այդ քաղաքում: Եթե դու հնազանդվեիր Ինձ, բոլոր քսան հազար մարդիկ, որոնց նրանք բերեցին հավիտենության մեջ, կհաշվեգրվեին քեզ, որովհետև դու կլինեիր այն եկեղեցու կարևոր մասը, որտեղ Ես կանչել էի քեզ: Քանի որ դու այդ եկեղեցում չէիր, վարձատրություն չես ստանա այդ քսան հազար մարդու համար:

Թույլ տվեք մի իրական դեպք պատմել: Մեր ծառայության խորհրդի անդամներից մեկը, ով իմ մտերիմ ընկերն է, մի ծաղկունք ապրող եկեղեցի է հովվում Միացյալ Նահանգների հարավ-արևելյան մասում: Նա սկսեց իր եկեղեցին 1991 թվականին՝ քսաներկու մարդկանցով, և հիմա այն գրեթե չորս հազարի է հասնում: Նրա եկեղեցին այն եկեղեցիներից մեկն է, որտեղ ես շատ հեշտորեն եմ քարոզում, քանի որ մարդիկ հոգևոր քաղց ունեն: Այդ եկեղեցին շատ մարդկանց է փրկության բերել և աշակերտել:

Եկեղեցին արագորեն աճում էր բազմաթիվ աղոթքների, ազդեցիկ քարոզների և մեծ աշխատանքի շնորհիվ: Նրանք գեղեցիկ շենք կառուցեցին՝ շատերին տեղավորելու համար: Մի քանի տարի անց իմ ընկերը նկատեց մի աչքի ընկնող ալեհեր և միշտ լավ հագնված տղամարդու, ով հաճախում էր ծառայություններին: Նա նույնպես նկատեց, որ ամեն ծառայության ընթացքում նրա աչքերից արցունքներ էին հոսում, և զգաց, որ դրանք ուրախության արցունքներ չէին:

Ի վերջո, այդ մարդը մոտեցավ հովվի օգնականներից մեկին և պատմեց, որ 1981 թվականին Տերը պարզ ասել էր իրեն, որ ինքը պետք է եկեղեցի սկսեր այդ քաղաքում: Մի քանի օր անց նա տեսել էր երազում այն շենքը, որտեղ իր եկեղեցին հավաքույթներ էր անցկացնելու: Այդ երազն այնքա՜ն վառ էր, որ նա մի պրոֆեսիոնալ նկարչի էր գտել, ով օգնել էր նրան պատկերել իր տեսած շենքը: Դրանից հետո նա բախվել էր դժվարությունների և հրաժարվել էր եկեղեցի սկսել: Նա ծառայել էր այլ քաղաքներում կարճ ժամանակով, և ի վերջո կրկին զբաղվել էր գործարարությամբ:

Այնուհետև նա բացում է մի խնամքով ծալած թուղթ և ասում այդ հովվի օգնականին, որ այդտեղ նկարչի կողմից պատկերված շենքն է, որը նա նկարել էր 1981 թվականին: Նայելով այդ նկարին՝ հովվի օգնականն ապշում է: Դա նույն շենքն էր, որն իմ ընկերը տարիներ անց կառուցել էր, և որտեղ նրանք հավաքույթներ էին անցկացնում: Այդ ժամանակվանից իմ ընկերը մխիթարել է այդ մարդուն, բայց նա ասում է, որ իր համար շատ դժվար է հաղթահարել իր զգացմունքները: (Իհարկե, Աստված չի ցանկանում, որ նա ապրի դատապարտության մեջ, այլ՝ սովորի, աճ ունենա և հասկանա, թե ինչպես ինքը կարող է արդյունավետ ծառայել Աստծուն մինչև կյանքի ավարտը):

Մի քանի տարի առաջ այս թեմայով քարոզում էի մի մեծ համաժողովի ընթացքում: Ծառայությունից հետո մի հովիվ՝ շատ ազդված և մի փոքր վրդովված, մոտեցավ մեր թիմի անդամներից մեկին և հարցրեց.

– Նա լուրջ չէր խոսում այդ մասին, այնպես չէ՞:

– Նա նկատի ուներ այն, ինչ ասաց,– պատասխանեց իմ թիմի անդամը:– Սա գրված է Աստծո Խոսքում: Իսկ ի՞նչ է պատահել:

Այդ հովիվը, ով հիսունն անց էր, պատասխանեց.

– Երբ ես երիտասարդ էի, վառ երազ տեսա այն մասին, որ ապրում էի Ֆիլիպիններում և ծառայում էի այդ ժողովրդին: Այդ երազն այնքա՜ն իրական էր, որ ես համոզված էի, որ տեղափոխվելու այդ երկիր: Բայց դա այդպես էլ տեղի չունեցավ, և ես արդեն երեսուն տարի է՝ եկեղեցու հովիվ եմ:

Մեր թիմի անդամը մեղմորեն պատասխանեց.

– Եվ ի՞նչ եք դուք պատրաստվում անել:

Այդ հովիվը ոչինչ չասաց, պարզապես հեռացավ:

Մեկ տարի անց մեր թիմի անդամը լուր ստացավ այդ մարդուց: Նա այլևս հովիվ չէր: Նա փոխանցել էր եկեղեցին իր օգնականներից մեկին և այժմ մեծ հաճույքով ապրում էր Ֆիլիպիններում: Այդ նախկին հովիվը գրում էր. «Առաջին անգամ իմ կյանքում ես զգում եմ, որ անում եմ հենց այն, ինչի համար ստեղծվել եմ»:

Թույլ տվեք պատմել մեկ այլ պատմություն, որը հաստատում է այս ճշմարտությունը: Կարճ ժամանակ առաջ իմ ընկերներից մեկը հանդիպում կազմակերպեց իմ և ԱՄՆ-ի Ռազմածովային նավատորմում ծառայող մի «ծովային փոկի»* հետ: Այս գիրքը գրելու ժամանակ այդ մարդը դեռ զինվորական ծառայության մեջ էր: Այնպես որ, նրա ինքնությունը պաշտպանելու համար, ես կփոխեմ նրա անունը և Փոլ կանվանեմ նրան: Երկու ժամ շարունակ երկյուղածությամբ լսում էի նրա վկայությունը:

Արդեն մոտավորապես քսան տարեկանում Փոլը երկամյա Աստվածաշնչյան դպրոց էր ավարտել և պրակտիկա էր անցնում մի եկեղեցու երիտասարդական ծառայության մեջ: Իր պրակտիկայի երկրորդ ամառվա ընթացքում Փոլին մեղադրեցին եկեղեցու աղջիկներից մեկի հետ սեռական կապ ունենալու մեջ: Փոլն ասաց ինձ.

– Ձո՛ն, ես չէի կենակցել այդ աղջկա հետ: Նույնիսկ գրավիչ չէի համարում նրան: Այնուամենայնիվ, եկեղեցու առաջնորդները ոչ միայն հավատացին այդ լուրին, այլև չմոռացան այն, և ես կորցրի ամեն ինչ: Ոչ ոք այլևս չէր վստահում ինձ: Նրանք արատավորեցին իմ անունը և խնդրեցին (թեև իրականում հարկադրեցին) ինձ՝ հեռանալ:

Փոլը շարունակեց.

– Ես փնտրում էի Աստծուն այնպես, ինչպես երբեք չէի փնտրել: Մեկ անգամ աղոթքի մեջ լսեցի, թե ինչպես Աստված հստակ ասաց. «Ես չեմ կանչել քեզ եկեղեցական ծառայության մեջ, այլ կանչել եմ զինվորական ծառայության մեջ»:

Փոլը դիմեց Ցամաքային ուժերի, Ծովային ուժերի և Օդային ուժերի հավաքագրող կենտրոններ, բայց նրան ոչ մի տեղ չընդունեցին: Մնացել էր միայն ռազմածովային նավատորմը:

---

* Հատուկ նշանակության զորքեր ամերիկյան ռազմածովային նավատորմում, որոնց անվան հապավումը (SEAL) նման է անգլերեն «փոկ» բառին:

Երբ Փոլը դիմեց ռազմածովային նավատորմ, հավաքագրող սպան սկսեց թվարկել առկա հաստիքների ցուցակը: Փոլը խիստ հիասթափվեց, որովհետև դրանցից ոչ մեկն արձագանք չէր գտնում իր սրտում՝ որպես առաջնորդություն Աստծուց: Ձանալով բաց չթողնել նորակոչիկին՝ սպան առաջարկեց նաև հատուկ ծրագրեր ռազմածովային նավատորմի շրջանակներում: Իմ նոր ընկերն ասաց, որ լսելով «ծովային փոկերի» մասին՝ նա հասկացավ, որ հենց դա պետք է ընտրեր: Նա ստորագրեց զինվորական ծառայության պայմանագիրը:

Հավաքագրող սպան փորձեց տարհամոզել Փոլին, քանի որ շատ քչերն էին անցնում «ծովային փոկերի» նախապատրաստական ծրագիրը: Նա տեղեկացրեց Փոլին, որ այդ հավաքագրման գրասենյակ դիմողներից ոչ մեկը չի անցել այդ ծրագիրը, և որ այն համարվում է ամենածանր զինվորական պատրաստությունը ամբողջ աշխարհում: Այնուամենայնիվ, Փոլը մեծ վճռականություն և ոգեշնչում էր զգում, քանի որ պետք է կատարեր առաջին քայլը դեպի Աստծուց որոշված ճանապարհը: Նա պնդեց, որ պետք է ընդգրկվեր հենց այդ խմբում:

Այնուամենայնիվ, դրա ճանապարհին երկու լուրջ խոչընդոտ կար: Առաջինը՝ Փոլը լողալ չգիտեր: Նա ստիպված էր աղոթել դրա համար և ի վերջո ինքնուրույն լողալ սովորել: Երկրորդը, ինչն ավելի հետաքրքրական է դարձնում նրա պատմությունը, այն է, որ երբ նա երեխա էր, նրա ականջների մեջ հաճախ բժշկական խողովակներ էին դնում. նա բազմաթիվ վիրահատություններ էր տարել՝ ականջների խոռոչները բացելու համար: Այդ պատճառով արդեն երիտասարդ հասակում, երբ նրա ականջների խոռոչները նույնիսկ մի փոքր թրջվում էին, նա տանջալի ցավ էր զգում, որին հաճախ ականջների ուժգին բորբոքում էր հաջորդում: Չնայած այդ ամենին՝ նա ի սրտե հավատում էր, որ Աստծո կանչն այնպիսի բան չէր լինի, ինչին ինքը կարող էր հասնել իր ուժերով:

Փոլն ինքնուրույն լողալ սովորեց և սկսեց ջանասիրաբար աղոթել, որ իր ականջները բժշկվեն: Ամենօրյա ջրային մարզումները ցավ էին պատճառում նրան, բայց նա չէր հանձնվում: Չորս ամիս շարունակ դիմանալուց և ամեն օր ուժգին ցավ զգալուց հետո Փոլն արդեն կարող էր ոչ միայն լողալ, այլև սուզվել մեծ խորությունների մեջ՝ բացարձակապես առանց ցավ զգալու: Նա բժշկվել էր և պատրաստ էր մասնակցելու «ծովային փոկերի» նախապատրաստական ծրագրին:

Նախապատրաստական ծրագիրն անցնելիս Փոլը բախվեց շատ մեծ դժվարությունների, բայց ի վերջո անցավ այն և միացավ այդ պատերազմներով թրծված եղբայրությանը: Նա արդեն տասնչորս տարվա «ծովային փոկ» էր: Նա կարող էր պատմել շատ պատմություններ այն մասին, թե ինչպես էր Աստված միջամտել իրենց զինվորական առա-

քելությունների ժամանակ, և այն էլ՝ այնպիսի հրաշագործ ձևերով, որ նրան լսելիս փշաքաղվում էի:

Այդ երեկո ես գիտեի, որ նստած էի Աստծո մեծ ծառայողի կողքին, ով կանչված չէր ամբիոնի ետևում կանգնելու համար: Նա կանչված էր՝ հասնելու զինծառայողներին և ծառայելու մեր ազգին: Այսօր Փոլը հասարակ «ծովային փոկ» չէ. նա «ծովային փոկերի» հրահանգիչ է: Նա թույլ տվեց Աստծուն շտկել իր ընթացքը, որպեսզի մուտք գործեր այն բարի գործի մեջ, որը ծրագրված էր իր համար:

Ես շատ օրինակներ եմ լսել մարդկանց մասին, ովքեր, ի տարբերություն Փոլի, չեն կատարել իրենց նախասահմանությունը: Ես ինքս եմ նման օրինակներ տեսել: Ավելի քան քսան տարի շարունակ եղել եմ բազմաթիվ եկեղեցիներում ամբողջ աշխարհով: Տեսել եմ ավագ հովիվների, ովքեր, ինչպես ես գիտեի իմ սրտում, կանչված էին հովվի օգնականներ լինելու: Ես տեսել եմ գործարար մարդկանց, ովքեր, ինչպես ես գիտեի, պետք է լրիվ ժամանակվա ծառայության մեջ լինեին, և նույնիսկ հովիվների, ովքեր կանչված էին գործարար աշխարհում: Տեսել եմ մարդկանց կորպորատիվ կառավարման կամ գործարար ոլորտներում, ովքեր սխալ տեղում էին. նրանք աշխատում էին ինչ-որ մեկի մոտ, քանի որ վախենում էին, որ կձախողվեին, եթե սկսեին իրենց սեփական գործը: Ես նույնպես տեսել եմ մարդկանց, ովքեր անհավատարիմ էին իրենց ղեկավարներին, քանի որ ցանկանում էին սեփական գործն ունենալ:

Ես տեսել եմ մարդկանց, ովքեր ամուսնացել են Աստծո կամքին հակառակ, ինչի պատճառով չեն կատարել իրենց կոչումը: Մյուսները ենթարկվել են իրենց ընկերների ազդեցությանը կամ խնդիրների մեջ են հայտնվել նրանց պատճառով և կրկին չեն կատարել իրենց կոչումը: Ես տեսել եմ մարդկանց, ովքեր ընկել են հանգստի, սպորտի, փողի կամ իշխանությանը ձգտելու ծուղակը: Կարելի է անթիվ օրինակներ բերել, բայց իմաստն այն է, որ այդ հավատացյալները չեն կատարել իրենց կոչումն Աստծո տան կառուցման ծրագրի մեջ:

Այս խոսքերը սթափեցնում են մեզ, բայց բարի լուրն այն է, որ մեզնից ոչ ոք չպետք է շեղվի այն ուղուց, որն Աստված դրել է մեր առջև: Աստված՝ մեր պատմության հեղինակն է, և Նա ի զորու է առաջնորդել մեզ, որ ավարտին հասցնենք այն: Մենք պետք է տանք մեզ հետևյալ հարցը. ինչպե՞ս իմանամ, թե ինչի համար եմ կանչված՝ որպես ենթակապալառու: Մենք կպատասխանենք այս կարևոր հարցին հաջորդ գլխում: Նույնպես կխոսենք այն մասին, թե ինչպես վերադառնանք, եթե շեղվել ենք ճիշտ ճանապարհից:

ԳԼՈՒԽ 12

ԿԱՆՉՎԱԾ՝ ԱՍՏԾՈՒՑ

«Որովհետև Աստծո պարգևները և Նրա կանչը երբեք ետ չեն վերցվում»:
— Հռոմեացիների 11.29, NLT

Շատերը սարսափում են այն մտքից, որ մարդը կարող է շեղվել Աստծո ծրագրից՝ նույնիսկ հետևելով այնպիսի բաների, որոնք բարի կամ աստվածապաշտ են թվում: Նման արձագանքը կարելի է հասկանալ: Այնուամենայնիվ, հիշեք, որ մենք կանչված չենք՝ վախենալու ձախողումից կամ պատժից. մենք կանչված ենք, որ ունենանք Աստծո երկյուղը: Տիրոջ երկյուղը պահում է մեզ Նրա խորհրդի մեջ, Ում մասին գրված է. «Քո ականջները կլսեն Նրան: Անմիջապես քո ետևից մի ձայն կասի. «Սա է այն ճանապարհը, որով դու պետք է գնաս՝ դեպի աջ կամ ձախ»» (Եսայի 30.21, NLT): Այնպես որ, եկեք խոսենք այն մասին, թե ինչպես իմանանք մեր տեղն Աստծո տան կառուցման մեջ:

Առաջինը. դուք ջանասիրաբար փնտրե՞լ եք Աստծուն:

Եթե ձեզ հարցնեն, թե արդյո՞ք կատարում եք ձեր նախասահմանությունը, միգուցե մտածեք. *«Ես կուզեի, որ այդպես լիներ: Բայց չգիտեմ, թե ինչի համար եմ կանչված»:* Առաջին հարցը, որը պետք է տաք ձեզ այն է, թե արդյո՞ք դուք ջանասիրաբար փնտրել եք Աստծուն: Գրված է, որ Աստված վարձատրում է Իրեն ջանասիրաբար և հավատքով փնտրողներին (տե՛ս Եբր. 11.6), ոչ թե նրանց, ովքեր ժամանակ առ ժամանակ են փնտրում Նրան՝ լի հարցերով և կասկածներով: Եթե ինչ-որ մեկը ջանասիրաբար փնտրի Աստծուն՝ լիովին ակնկալելով, որ պատասխան կստանա, Աստված ցույց կտա, թե որն է նրա կոչումն այս աշխարհում:

Այն բանից հետո, երբ ես փրկվեցի Փուրդյու համալսարանի տղաների հանրակացարանում, անմիջապես սկսեցի փնտրել Աստծո կամքը: Ես սովորում էի ինժեներական ֆակուլտետում և ամեն երկրորդ կիսամյակին աշխատում էի «ԱյԲիէմ» ընկերությունում: Այն գործոններից

մեկը, որոնք դրդեցին ինձ իմանալ իմ կոչումը՝ Աստծուն հնազանդվելու ցանկության հետ մեկտեղ, մի իրադարձություն էր, որը տեղի ունեցավ իմ փրկությունից ամիսներ անց: Ես մի գրասենյակում էի ութ-տասը այլ ինժեներների հետ, ովքեր տոնում էին իրենց կոլեգաներից մեկի երեսունութերորդ տարեդարձն այդ ընկերությունում: Մենք պարզապես զրուցում էինք, և այդ մարդն ասաց բոլորիս.

– Այս երեսունութ տարվա ընթացքում ամեն օր ես ատելությամբ եմ աշխատանքի եկել:

Մյուս ինժեներները համաձայնեցին կամ քմծիծաղ տվեցին. բոլորը՝ բացի ինձնից: Ես ապշել էի:

Ես նորեկ էի այդ փորձառու մասնագետների միջև և զարմացա, թե ինչու ոչ ոք չասաց հակառակը: Եվ հարցրի.

– Ինչո՞ւ եք երեսունութ տարի աշխատել այստեղ, եթե ատում եք այս գործը:

Նա շրջվեց, նայեց ինձ և ասաց.

– Սա պարզապես աշխատանք է:

Ես ինքս էի սկսել հակակրանքով աշխատանքի գալ: Իմ հայրը նույնպես ինժեներ էր. նա ասում էր, որ դա լավ մասնագիտություն է, որ այդ աշխատանքն ապահով է և լավ է վարձատրվում: Բայց այդ դեպքը փոխեց իմ կարծիքը: Ես մտածեցի. *«Ոչ մի փող, ոչ մի ապահովություն և ոչ մի այլ բան չի խանգարի ինձ կատարել այն, ինչի համար ես այս աշխարհ եմ եկել»:* Ես որոշում կայացրի այդ գրասենյակում, որ կիմանամ, թե ինչի համար եմ կանչված, և թե որն է հաջորդ քայլը դեպի իմ կոչումը:

Ես հայտնաբերեցի, որ Աստված ցույց կտա ձեր կյանքի կոչման ընդհանուր պատկերը, եթե դուք փնտրեք Նրան ձեր հոգևոր ընթացքի վաղ շրջանում: Այլ կերպ ասած՝ Նա ցույց կտա ձեզ վերջը՝ սկզբից: Երիտասարդ հասակում Աստված հայտնեց Հովսեփին, որ նա մեծ առաջնորդ է լինելու, և նույնիսկ նրա հայրը և եղբայրները ծառայելու են նրա հովանու ներքո: Այնուամենայնիվ, անցան տարիներ, մինչև որ դա կատարվեց: Մովսեսը գիտեր, որ առաջնորդելու էր Իսրայելի ժողովրդին դրանից առնվազն քառասուն տարի առաջ: Դավիթն իմացավ, որ թագավոր էր լինելու, երբ դեռ պատանի գառնարած էր, բայց անցան շատ տարիներ, մինչև որ նա սկսեց առաջնորդել Իսրայելը: Նույնը կատարվեց շատ այլ մարդկանց հետ:

Ես ծրագրում էի բակալավրի աստիճան ստանալ Փուրդյու համալսարանում՝ որպես ինժեներ, շարունակել ուսումս՝ ստանալով տնտեսական կառավարման մագիստրոսի աստիճան Հարվարդի համալսարանում և աշխատել ամերիկյան խոշոր ընկերությունների բարձրագույն կառա-

վարման ոլորտում: Ես ամուսնանալու էի, տարեկան մի քանի անգամ արձակուրդ էի վերցնելու և տալու էի իմ ամբողջ եկամտի տասներորդ մասն Աստծուն: Ես այդպես էի պատկերացնում Նրան ծառայելը:

Որքան ավելի էի փնտրում Աստծուն, այնքան ավելի էի զգում, որ կանչված եմ ծառայության համար: Ինձ դա նույնպես դուր չէր գալիս, բայց ես բավականին խելացի գտնվեցի՝ հասկանալով, որ եթե հնազանդվեմ Աստծուն, ես կկայանամ կյանքում և բավականություն կստանամ իմ կյանքից: Հենց որ ես ասացի Աստծուն, որ կհնազանդվեմ Նրան, ինչ էլ Նա ասի, Աստված սկսեց ցույց տալ իմ կոչման ընդհանուր պատկերը:

Դեռևս 1980-ական թվականների սկզբում Աստված ցույց էր տվել ինձ, որ ապագայում ես ազդեցություն եմ թողնելու շատ ազգերի վրա Աստծո Խոսքով, եթե հնազանդ մնամ Նրան: Կարիք չկա ասել, որ դա անհասանելի թվաց ինձ: Ես չէի պատկերացնում, թե ինչպես դա կարող էր տեղի ունենալ: Ես մեծացել էի փոքրիկ քաղաքում և չէի ճանաչում ազգային կամ միջազգային ազդեցություն ունեցող ոչ մի ծառայողի:

Ինչպես Հովսեփի և Դավթի դեպքում, Աստված ցույց է տալիս մեզ վերջնական պատկերը, բայց ոչ՝ այն քայլերը, որոնք մենք պետք է անենք, որպեսզի հասնենք դրան: Նա այդպես է վարվում, որպեսզի մենք շարժվենք հավատքով, ոչ թե մեր դատողությամբ: Մենք պետք է ձգտենք հնազանդվել Նրա ասածին և քայլել դեպի նպատակը: Այնուամենայնիվ, հաճախ հաջորդ քայլն անելիս մեզ թվում է, թե գնում ենք ոչ թե դեպի մեր նպատակը, այլ՝ բոլորովին հակառակ ուղղությամբ: Հովսեփը երազ տեսավ մեծ առաջնորդ լինելու մասին, ինչից հետո ստրկության վաճառվելը և տասը տարի շարունակ ստրուկ մնալը այնքան էլ տրամաբանական չէին թվում: Ահա թե ինչու է գրված. «Վստահի՛ր Տիրոջը քո ամբողջ սրտով. մի՛ ապավինիր քո մտքին: Փնտրի՛ր Նրա կամքը քո բոլոր գործերի մեջ, և Նա կառաջնորդի քո շավիղները» (Առակաց 3.5,6, NLT):

Մի քանի ամիս անց՝ համալսարանի ավարտական տարում, ես մնացի համալսարանական հանրակացարանում, մինչ մյուս ուսանողները չորսօրյա արձակուրդի էին Գոհության տոների կապակցությամբ: Ես ծոմ էի պահում և աղոթում էի՝ փնտրելով Աստծո առաջնորդությունը և կամքն իմ կյանքում: Երկու ամիս անց առաջնորդություն ստացա հաջորդ քայլի համար, և թվում էր՝ այն լիովին հակառակ էր այն քայլերին, որոնք ես կարող էի անել դեպի ծառայությունը: Միակ տրամաբանական տարբերակը՝ Աստվածաշնչյան դպրոց ընդունվելն էր, բայց Տերն առաջնորդեց ինձ, որ դիմում ներկայացնեմ ինժեների աշխատանք ստանալու համար: Ահա թե ինչու է Աստված պատվիրում մեզ չապավինել մեր մտքին:

Համալսարանում ես ծանոթացել էի շատ ընկերությունների հետ, և գրեթե անմիջապես հասկացա, որ պետք է աշխատեմ Տեխաս նահանգի

Դալլաս քաղաքի Ռոքվել ընկերությունում: Դա անտրամաբանական էր թվում, որովհետև Դալլասում չկային Աստվածաշնչյան դպրոցներ, որոնց մասին ես տեղյակ էի: Տասներեք աշխատանքային առաջարկ ստացա տարբեր քաղաքներից, որոնցից մի քանիսում Աստվածաշնչյան դպրոցներ կային, և բոլորն առաջարկում էին ավելի բարձր աշխատավարձ, քան Ռոքվելում: Այնուամենայնիվ, ես պարզապես հնազանդվեցի:

Դալլաս հասնելուն պես գնացի մի եկեղեցի, և Տերը ցույց տվեց ինձ, որ պետք է տնկվեմ այդտեղ: Ես հոգևոր աճ ունեցա այդ եկեղեցում՝ ծառայելու միջոցով: Այդ եկեղեցում ծառայելն սկիզբ դրեց այն ընթացքին, որը և բերեց ինձ այնտեղ, որտեղ հիմա գտնվում եմ:

Երկրորդը. դուք տնկվե՞լ եք Աստծո տան մեջ

Ահա և երկրորդ պատճառը, թե ինչու շատերը չեն իմանում Աստծո կամքն իրենց համար: Նրանք չեն տնկվում տեղական եկեղեցում: Աստծո Խոսքը հայտնում է մեզ. «Տիրոջ տան մեջ տնկվածները մեր Աստծո սրահներում կբուսնեն» (Սաղմոս 92.13):

Այն մարդիկ, ովքեր տնկվում են Աստծո տան մեջ (որն այսօր տեղական եկեղեցին է), կբուսնեն կամ կծաղկեն *Աստծո սրահներում: Աստծո սրահներից* մեկը՝ Քրիստոսի ատյանն է: Այնպես որ, մենք ծաղկունք կապրենք և՛ հիմա, և՛ Դատաստանի ժամանակ, եթե տնկվենք և արմատ գցենք տեղական եկեղեցում: Սա Աստծո ծրագիրն է:

Եկեղեցին կարգված է Տիրոջ կողմից, ոչ թե մարդկանց: Հիսուսն ասում է. «Ես... կշինեմ Իմ եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի այն» (Մատթեոս 16.18): Ուշադրություն դարձրեք *«շինել»* բառին: Ինչպե՞ս Հիսուսը կարող է շինել կամ կառուցել Իր եկեղեցին, եթե Ինքը ֆիզիկապես այստեղ չէ: Պատասխանն է՝ Իր մարմնի, այսինքն՝ մեր միջոցով: Կրկին՝ սա է պատճառը, որ մենք Նրա գործակիցներն ենք (կամ՝ ենթակապալառուները): Նա տալիս է մեզ Իր շնորհքը, կարողությունները, պարգևները և գերբնական զորությունը: Այնուամենայնիվ, մենք պետք է զիջող և հնազանդ անոթներ լինենք՝ Նրա գործը կատարելու համար: Հարցը հետևյալն է՝ արդյո՞ք մենք բարձրացնում ենք Նրա եկեղեցին՝ համագործակցելով Նրա հետ, թե՞ առաջնորդվում ենք սեփական ծրագրերով:

Հիսուսը հիմնել է համաշխարհային եկեղեցին, որը ենթաբաժանված է տեղական եկեղեցիների: Այս պնդման անթիվ օրինակներից մեկը Նրա խոսքերն են Հայտնություն գրքում՝ ուղղված յոթ առանձին տեղական եկեղեցիների, որոնք գտնվում էին Եփեսոսում, Զմյուռնիայում, Պերգամոնում, Թյուատիրում, Սարդեսում, Ֆիլադելֆիայում և Լավոդիկեում:

Աստվածաշնչում եկեղեցին նաև անվանվում է Քրիստոսի մարմին: Եվ ինչպես որ ընդհանուր եկեղեցին ենթաբաժանված է տեղական եկեղեցիների, այնպես էլ ընդհանուր Քրիստոսի մարմինը ենթաբաժանված է տեղական մարմինների:

Տերն Ինքն է որոշում Իր ժողովրդի տեղն Իր մարմնում: Պողոսն ասում է մեզ. «Բայց հիմա Աստված անդամները՝ նրանց ամեն մեկը դրեց մարմնի մեջ՝ ինչպես կամեցավ» (Ա Կորնթացիների 12.18): Միգուցե հետևյալ արտահայտությունը զարմացնի ձեզ, բայց *մենք չենք որոշում, թե որ եկեղեցի գնալ. Աստվա՛ծ է որոշում դա:*

Կա՛նգ առեք և մի պահ մտածե՛ք այս մասին: Շատերն ընտրում են, թե որ եկեղեցին հաճախեն, ասես խոսքը մթերային խանութների մասին է, փոխարենը հարցնեն Աստծուն, թե որտեղ է Նա ցանկանում, որ իրենք լինեն: Ինչպե՞ս դուք կարող եք կատարել ձեր կոչումը, եթե չեք գտնվում Նրա մարմնի ճիշտ մասում: Մարդու մարմնի ամեն մի մասը խնամքով միացված է համապատասխան հատվածների՝ համաձայն Աստծո ծրագրի: Ձեռքը մեծ դժվարություններ կունենար, եթե այն միացված լիներ ծնկապանակին: Նույն կերպով, մենք պետք է փնտրենք Աստծո կամքը, երբ պատրաստվում ենք տեղափոխվել որևէ քաղաք կամ միանալ որևէ տեղական եկեղեցու:

Մեզնից ամեն մեկն ունի իր դերը տեղական եկեղեցում: Գրված է.

> «Արդ դուք Քրիստոսի մարմինն եք և մեկ-մեկ՝ Նրա անդամներ: Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. առաջ...» (Ա Կորնթացիների 12.27,28):

Դրանից հետո Պողոսը թվարկում է մի շարք գլխավոր ծառայություններ տեղական եկեղեցում: Թեև այս հատվածում նա սպառիչ ցուցակ չի տրամադրում մեզ, մենք գիտենք այլ նորկտակարանյան հատվածներից, որ ամեն մի հավատացյալ Քրիստոսի մարմնի մասն է, և ամեն մեկը կենսականորեն կարևոր դեր է կատարում, որը չի տարբերվում մեր մարմնի մասերի դերից: Եթե մենք չենք գործում այն մարմնի մեջ, որում նշանակված ենք, տեղական եկեղեցին հաշմանդամ է դառնում, ինչպիսին որ կլիներ ձեր մարմինը, եթե ձեր անդամներից ինչ-որ մեկը (օրինակ՝ ոտքը, աչքը կամ երիկամը) գործեր անկախ ձեզնից, բոլորովին չգործեր կամ առանձնանար մարմնից:

Ցավալին այն է, որ Հիսուս Քրիստոսի ծառայությունը չի իրականանում մեր քաղաքներում և գյուղերում, որովհետև տեղական եկեղեցիները ծանր հաշմանդամ են: Ո՞րն է պատճառը: Հաճախ պատճառը ոչ թե անարդյունավետ առաջնորդներն են, այլ հավատացյալները, ովքեր ցանկանում են անկախ լինել: Կարո՞ղ եք պատկերացնել, եթե իմ աչքը,

ոտքերը, ոտնաթաթերը կամ մարմնիս մեկ այլ մաս որոշեր, որ անելու է՝ ինչ ցանկանա: Զարմանալի է, թե ինչ է Աստված կարողացել կատարել Ամերիկայում, եթե հաշվի առնենք մեր տեղական եկեղեցիների վիճակը:

Ո՞րն էր պատճառը, որ առաջին եկեղեցին՝ ի հակադրություն մեր օրերի, արագորեն և բուռն կերպով աճում էր: Եկեք տեսնենք.

> «Նրանք միացան այլ հավատացյալների հետ և նվիրվեցին առաքյալների ուսմունքներին ու շփմանը, Տիրոջ ընթրիքին բաժնեկցելուն և աղոթքին... Եվ հավատացյալները մշտապես միասին հավաքվում էին... Նրանք ամեն օր միասին երկրպագում էին Տաճարում, հանդիպում էին տներում՝ Տիրոջ ընթրիքի համար, և կիսվում էին իրենց կերակուրով մեծ ուրախությամբ և առատաձեռնությամբ՝ ամբողջ այդ ընթացքում փառաբանելով Աստծուն և վայելելով բոլոր մարդկանց բարյացակամությունը: Եվ ամեն օր Տերն ավելացնում էր նրանց խմբին այն մարդկանց, ովքեր փրկվում էին» (Գործք 2.42–47, NLT):

Դուք տեսնո՞ւմ եք, որ հավատացյալները տնկված էին տեղական մարմնում: Նրանք միասին երկրպագում էին, լսում էին միևնույն ուղերձները, ընդհանուր տեսիլք ունեին և միաբան էին: Արդյունքում եկեղեցին առողջ աճ ուներ: Մարդիկ ծառայում էին Տիրոջն իրենց տեղական եկեղեցու միջոցով, և այդ ծառայությունն ազդում էր նաև նրանց ընտանեկան կյանքի վրա:

Առաջին եկեղեցու հավատացյալների համար տեղական եկեղեցու մասնիկը լինելը նրանց կյանքն էր: Որոշ ժամանակ անց նույնիսկ խնդիր առաջացավ, երբ որոշ այրիների սնունդ չէր տրամադրվում: Առաքյալները համախմբեցին հավատացյալների տեղական մարմինը և ասացին նրանց, որ լավ չէ, որ առաջնորդները թողնեն Աստծո Խոսքի ծառայությունը՝ կերակուր մատակարարելու համար. «Նայե՛ք ձեր մեջ, եղբայրնե՛ր,– ասացին առաքյալները,– և ընտրե՛ք յոթ տղամարդու, ովքեր հարգանք են վայելում, լցված են Սուրբ Հոգով և իմաստությամբ: Մենք կնշանակենք նրանց այս գործի համար» (Գործք 6.3, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ առաջնորդները չասացին. «Մեզ կամավորներ են պետք: Ինչ-որ մեկը կարո՞ղ է ժամանակ տրամադրել՝ այս կանանց ծառայելու համար»: Ո՛չ, բոլոր հավատացյալները նվիրված ծառայում էին, որովհետև նրանք տնկված էին տեղական եկեղեցում: Անձամբ ես հավատում եմ, որ ամեն մի անդամ հույս ուներ, որ ինքը կընտրվեր՝ ծառայելու համար: Ընտրվեցին յոթ տղամարդիկ.

> «Նրանց կանգնեցրին առաքյալների առջև և աղոթք անելով՝ ձեռք դրին նրանց վրա:

Եվ Աստծո Խոսքն աճում էր, և աշակերտների թիվը խիստ շատանում էր Երուսաղեմում, և քահանաներից էլ շատ բազմություն հնազանդվում էր հավատքին» (Գործք 6.6,7):

Առաքյալները ձեռնադրեցին այդ յոթ մարդուն: Այն օծությունը, որը նրանք փոխանցում էին, նախատեսված չէր ամբիոնից ծառայելու, տնային խմբերում սովորեցնելու, փառաբանություն և երկրպագություն առաջնորդելու կամ ծառայողական ճանապարհորդության գնալու համար: Այն նախատեսված էր եկեղեցու այրիներին սնունդ մատակարարելու համար: Զարմանալի՜ է:

Այնուամենայնիվ, ուշադրություն դարձրեք՝ հենց որ այդ յոթ տղամարդիկ ստանձնեցին իրենց ծառայությունը Քրիստոսի մարմնում, որքան էլ այն անկարևոր թվար, *Աստծո Խոսքը տարածվեց,* և աշակերտների թիվը խիստ *շատացավ* Երուսաղեմում: Այստեղ մենք մի զարմանալի փաստ ենք հայտնաբերում: Գործք առաքելոց առաջին գլխից մինչև հինգերորդ գլխի ավարտը մի քանի անգամ օգտագործվում է «ավելանալ» բառը՝ Երուսաղեմի եկեղեցու աճը նկարագրելու համար: Ահա որոշ դեպքեր.

«...Եվ այդ օրը մոտավորապես երեք հազար մարդ *ավելացավ նրանց»* (Գործք 2.41, NKJV):

«Եվ Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր եկեղեցու հետ» (Գործք 2.47):

«Եվ Տիրոջ հավատացյալները հետզհետե *ավելանում* էին բազմություններով՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք» (Գործք 5.14, NKJV):

Մինչև այս պահը, միայն առաքյալներն էին կատարում ծառայության գործը տեղական եկեղեցում, և Պետրոսը միակ քարոզիչն էր, որի մասին գրված է:

Այնուամենայնիվ, ինչ-որ պահի հավատացյալները գիտակցեցին, որ ամեն մեկը երկու կարևոր պարտականություն ունի: Առաջինը՝ հռչակել և սովորեցնել Ավետարանը այլ մարդկանց: Երկրորդը՝ կատարել որևէ գործ տեղական եկեղեցում:

Գործք 5.42–6.1-ում գրված է, թե ինչ տեղի ունեցավ, երբ բոլոր հավատացյալները գիտակցեցին, որ պետք է պատմեն Հիսուսի հարության զարմանալի պատմությունը. «Եվ ամբողջ օրը չէին դադարում տաճարում և տներում սովորեցնել և Հիսուս Քրիստոսին ավետարանել: Եվ այն օրերում, երբ որ աշակերտները շատացան...»: Պետրոսը ոչ մի դեպքում չէր կարող քարոզել ամեն տանը, որովհետև այդ ժամանակ

չկար ռադիո, հեռուստատեսություն և ինտերնետային կապ: Այստեղից տեսնում ենք, որ բոլոր հավատացյալները հռչակում և սովորեցնում էին Հիսուս Քրիստոսի Ավետարանն իրենց հարևաններին: Ուշադրություն դարձրեք, որ այժմ եկեղեցում աշակերտները ոչ թե ավելանում էին, այլ՝ շատանում: Սա առաջին անգամն է Գործք առաքելոց գրքում, երբ գրված է հզոր աճի մասին:

Այնուամենայնիվ, սրանով շատացումը չի ավարտվում: Հենց որ հավատացյալներն ստանձնեցին իրենց ծառայությունները եկեղեցում (որի օրինակը՝ այրիներին ծառայող մարդիկ էին), գրված է, որ հավատացյալների թիվը ոչ թե պարզապես շատանում էր, այլ՝ *խիստ շատանում* էր: Խիստ շատանալը նշանակում է՝ *աննախադեպ աճ*:

Թույլ տվեք ցույց տալ ձեզ տարբերությունը ավելացման և շատացման (կամ՝ խիստ շատացման) միջև: Պատկերացրեք, որ կա մի հովիվ, ով ամեն ամիս 10.000 մարդ է շահում Տիրոջ համար: Դուք կհամարեի՞ք, որ նրա ծառայությունն արդյունավետ է: Ամենայն հավանականությամբ՝ այո՛: Բայց գիտե՞ք, թե որքան ժամանակ կպահանջվեր, որպեսզի նա հասներ ամբողջ աշխարհին: Պատասխանը ցնցող է՝ 50.000 տարի, և այն էլ՝ եթե այդ ընթացքում ոչ ոք չծնվի և չմահանա: Այսինքն՝ ութ անգամ ավելի երկար, քան մարդկության կյանքն այս երկրի վրա: Դա անհնա՛ր է:

Այժմ թույլ տվեք խիստ շատացման օրինակ բերել: Օրինակ՝ դուք շահում եք երկու մարդու և ընդգրկում եք նրանց ձեր տեղական եկեղեցում: Հաջորդ ամիս նրանցից երկուսն էլ երկուական մարդ է առաջնորդում Տիրոջը և ընդգրկում է եկեղեցում: հաջորդ ամիս այդ չորսն անում են նույնը, և հաջորդ ամիս այդ ութ մարդկանցից ամեն մեկը երկու մարդ է առաջնորդում Տիրոջը և միացնում եկեղեցուն: Եթե այսպես շարունակվի, գիտե՞ք, թե որքան ժամանակ կպահանջվի՝ Ավետարանն ամբողջ երկրի բնակչությանը հասցնելու համար: Պատասխանն է՝ ընդամենը երեսուներեք ամիս: Այո՛, կպահանջվի երեք տարուց պակաս ժամանակ: Սա խիստ շատացումն է:

Այժմ հասկանո՞ւմ եք, թե ինչպես կարող էր Աստվածաշնչում տեղի ունենալ հետևյալը.

> «Սա շարունակվեց երկու տարի, մինչև որ Ասիայի [գավառի] *բոլոր* բնակիչները՝ հրեաները, ինչպես նաև հույները, լսեցին Տիրոջ Խոսքը...» (Գործք 19.10, AMP):

Բոլոր բնակիչնե՛րը: Եթե Աստվածաշնչում գրված է՝ *բոլորը*, նշանակում է՝ խոսքն ամեն մեկի մասին է: Այստեղ գրված է ոչ թե քաղաքի,

այլ՝ մի ամբողջ տարածաշրջանի մասին: Նրանք չունեին արբանյակներ, հեռուստատեսություն, ռադիո, սոցիալական ցանցեր, և նույնիսկ՝ հեծանիվներ: Սա աննախադեպ աճ է:

Խիստ շատացման համար անհրաժեշտ է հավատացյալների առողջ մարմին: Առողջ մարմինը բաղկացած է տեղական եկեղեցում տնկված հավատացյալներից, ինչը նշանակում է, որ նրանք ծառայում են այդ տեղական եկեղեցում (կերակրում են այրիներին, պահպանում են կարգ ու կանոնը, հսկում են ավտոկայանատեղին, ողջունում են մարդկանց, քարոզում են Ավետարանը բանտերում, ծառայում են երեխաներին և այլն): Այդ ծառայող մարդիկ նույնպես հասցնում են Ավետարանն իրենց աշխատակիցներին և հարևաններին և միացնում են նրանց իրենց տեղական եկեղեցուն: Հիշեք՝ Հիսուսը պատվիրեց աշակերտել բոլոր ազգերը, ոչ թե պարզապես դարձի բերել նրանց: Մենք պետք է տեղական եկեղեցի բերենք այն մարդկանց, որոնց քարոզում ենք, որպեսզի նրանք սովորեն այն ամենը, ինչ Հիսուսը պատվիրեց մեզ (տե՛ս Մատթ. 28.20): Անհրաժեշտ է տեղական եկեղեցու լիարժեք մարմին, որում գործում են բոլոր պարգևները, որպեսզի մարդիկ հասունանան Քրիստոսի մեջ:

Բանալին՝ տեղական եկեղեցում տնկված լինելն է, որովհետև այդտեղ մենք ծաղկունք կապրենք: Փիլիպոսը՝ յոթ տղամարդկանցից մեկն էր, որոնց ընտրեցին այրիների սեղաններին ծառայելու համար: Այնուամենայնիվ, հետո Գործք առաքելոց գրքում նրա անունն արդեն Փիլիպոս ավետարանիչ է: Նրա ծառայությունն ընդլայնվեց և ընդգրկեց բազմաթիվ քաղաքներ: «Եվ հետևյալ օրն այնտեղից դուրս ելանք մենք՝ Պողոսի ընկերներս, եկանք Կեսարիա և Փիլիպոս ավետարանչի տունը մտնելով, որ այն յոթից էր, նրա մոտ մնացինք» (Գործք 21.8):

Թեև Փիլիպոսն արդեն մեծ ավետարանիչ էր, և Տերը նրան այլ քաղաք էր տեղափոխել, նրան դեռ ճանաչում էին որպես այն յոթ տղամարդկանցից մեկը, ովքեր սնունդ էին մատակարարում այրիներին: Տեղական եկեղեցում ծառայելը առանցքային դեր կատարեց Փիլիպոսի համար՝ օգնելով նրան մտնել իր կյանքի կոչման մեջ: Ես ասում եմ մարդկանց հետևյալը. «Միգուցե դուք մեծ կոչում ունեք, բայց այն պատշաճ կերպով չի հասունանա, եթե սկիզբ չառնի տեղական եկեղեցում տնկվելուց»:

Թույլ տվեք կրկնել սաղմոսերգուի բառերը. «Տիրոջ տան մեջ տնկվածները մեր Աստծո սրահներում կբուսնեն» (Սաղմոս 92.13): Մտածե՛ք *«տնկված»* բառի մասին: Որպեսզի հասկանաք, թե ինչպես է գործում Աստծո թագավորությունը, դուք պետք է մտածեք ցանքի և հունձքի օրենքի մասին: Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ եթե նրանք չհասկանային սերմի, հողի և հունձքի սկզբունքները, չէին

կարող հասկանալ Իր առակներից ոչ մեկը (տե՛ս Մարկ. 4.13): Պարզ ասած՝ Աստծո ամբողջ թագավորությունն այնպես է,

> «...որպես թե մի մարդ սերմ գցեր հողի մեջ: Եվ գիշեր– ցերեկ քնի և վեր կենա, և սերմը բուսնի և աճի այնպես, որ նա չգիտի: Որովհետև երկիրն ինքն իրեն պտուղ է բերում՝ առաջ խոտը, հետո հասկը, և նրանից հետո լցված ցորեն՝ հասկի մեջ: Բայց երբ որ պտուղը կտա, շուտով կուղարկի մանգաղը, որովհետև հունձքը հասել է» (Մարկոս 4.26–29):

Ենթադրենք՝ մի բուռ տարբեր տեսակի սերմեր ունեմ, և բոլորը մրգատու ծառերի սերմեր են, բայց ես ծանոթ չեմ դրանց: Միակ միջոցը, որով կարող եմ իմանալ, թե ինչ սերմեր ունեմ, դրանք ցանելն է: Հողի մեջ դնելուց որոշ ժամանակ անց ես կիմանամ, թե ինչ սերմեր էին դրանք:

Ամեն մեկիս ներսում Աստված դնում է նախասահմանված կոչում և պարգևներ՝ այդ կոչումն իրականացնելու համար. «Նա նորովի ստեղծեց մեզ Քրիստոս Հիսուսում, որպեսզի մենք անենք այն բարի բաները, որոնք Նա վաղուց ծրագրել է մեզ համար» (Եփեսացիների 2.10, NLT), և «Որովհետև Աստծո շնորհքը և կոչումը զղջալ չունի» (Հռոմեացիների 11.29): Ըստ Հիսուսի՝ իմ կոչումը և պարգևներն իմ ներսում են՝ սերմի տեսքով: Եթե ես տնկվեմ եկեղեցում, ես կհասնեմ այն կոչմանը, որն Աստված տվել է ինձ: Հակառակ դեպքում՝ ես կարող եմ օգտագործել իմ պարգևները ոչ այնպես, ինչպես նախատեսել է իմ Ստեղծողը: Այնպես որ, մի՛ խաբվեք հաջողությամբ՝ ըստ այս աշխարհի չափանիշների: Միգուցե դուք մեծ հաջողության հասնեք՝ շնորհիվ ձեր պարգևների, բայց գործածեք դրանք Տիրոջ ծրագրին անհնազանդ կերպով:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Այս աշխարհում կան շատ երգիչներ, ովքեր հրաշալի ձայն ունեն և իրենց կատարումով կարող են հուզել մարդկանց՝ մինչև արցունքները: Այդ պարգևը տրվել էր նրանց, որպեսզի փառավորեին Աստծուն և դրդեին մարդկանց՝ փնտրել Նրա սիրտը և ցանկությունները: Այնուամենայնիվ, նրանք այնպես էլ չկատարեցին իրենց նախասահմանությունը, քանի որ չփրկվեցին և չտնկվեցին որևէ տեղական եկեղեցում:

Ես կարող եմ բազմաթիվ օրինակներ բերել այն մարդկանց մասին, ովքեր չեն ընդունել Հիսուսին իրենց կյանքի ընթացքում: Այնուամենայնիվ, կան մարդիկ, ովքեր նվիրել են իրենց սիրտը Հիսուսին, բայց անկանոն կերպով են հաճախում եկեղեցի: Նրանք չեն կատարում իրենց բարձրագույն կոչումն Աստծո թագավորության մեջ, քանի որ տնկված չեն: Միգուցե նրանք կանչված են, որ ազդեցություն թողնեն մարդկանց վրա եկեղեցուց դուրս, և միգուցե նրանք անում են դա որոշ չափով, բայց նրանց ազդեցությունը շատ ավելի մեծ կլիներ, եթե տնկված լինեին եկեղեցում:

Մարդը կարող է զգալ, որ որոշակի պարգևներ ունի և, իր կարծիքով, լավագույնս գործածել դրանք: Այնուամենայնիվ, ինչպես որ դուք չեք կարող իմանալ, թե ինչ ձև, ամրություն և այլ հատկանիշներ կունենա ծառը, քանի դեռ այն սերմի տեսքով է, այդպես էլ չեք կարող իմանալ, թե ինչպիսի կոչում է Աստված տվել ձեզ, մինչև չտնկվեք տեղական եկեղեցում: Սա Աստծո ծրագիրն է, ոչ թե մարդունը:

Հաջորդ խնդիրն այն է, որ հավատացյալներն այլ եկեղեցի են գնում, երբ իրենց եկեղեցում խնդիրներ են առաջանում: Այսօր մարդիկ հեշտությամբ հեռանում են եկեղեցուց, եթե ինչ-որ սխալ բան են տեսնում, հատկապես՝ առաջնորդների մոտ: Միգուցե խնդիրն այն է, թե ինչպես են առաջնորդները ղեկավարում եկեղեցին, ինչպես են հավաքվում զոհաբերությունները, կամ ինչպես են ծախսվում գումարները: Եթե մարդկանց դուր չի գալիս այն, ինչ քարոզում է հովիվը, նրանք հեռանում են: Միգուցե հովվին դժվար է մոտենալ կամ, ընդհակառակը՝ նա ազատ կերպով է շփվում մարդկանց հետ: Կամ խնդիրն այն է, որ մարդը քիչ ուշադրություն է ստանում իր համայնքի անդամներից: Այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել: Փոխարենը պայքարեն իրենց դժվարությունների հետ և պահպանեն հույսն իրենց սրտում, մարդիկ փախչում են այնտեղ, որտեղ, թվում է, հակառակություն չկա:

Եկեք ճիշտը խոսենք: Հիսուսը՝ եկեղեցու միակ կատարյալ հովիվը և անդամն է: Այդ դեպքում, ինչո՞ւ ենք մենք՝ արևմտյան մշակույթի մարդիկս, փախչում խնդիրներից, փոխարենը համարձակ ընդունենք և հարթենք դրանք: Մենք սկսում ենք գնալ եկեղեցուց եկեղեցի՝ անթերի առաջնորդներ և անդամներ ունեցող համայնք փնտրելով:

Բայց հիշեք՝ սատանան փորձում է վիրավորել մեզ և հեռացնել այն տեղից, որտեղ Աստված կարգել է մեզ: Մեր թշնամին ուզում է արմատախիլ անել մարդկանց այն տեղից, որտեղ Աստված տնկել է նրանց: Եթե նա կարողանա հեռացնել ձեզ, նշանակում է՝ նրա ծրագիրը հաջողվեց: Եթե դուք անսասան մնաք նույնիսկ մեծ դժվարությունների ժամանակ, դուք կխափանեք նրա ծրագրերը և կիրականացնեք Աստծո ծրագիրը:

Կրկին՝ «Տիրոջ տան մեջ *տնկվածները* մեր Աստծո սրահներում կբուսնեն»: Ի՞նչ կկատարվի բույսի հետ, եթե երեք շաբաթը մեկ այն տեղափոխեն: Այդ բույսի արմատները կթուլանան, և այն լիարժեք չի աճի և չի հասունանա: Եթե որևէ բույս շարունակ տնկվի տարբեր տեղերում, կմահանա:

Շատերը եկեղեցուց եկեղեցի են գնում՝ փորձելով զարգացնել իրենց ծառայողական կոչումը: Եթե նրանց չեն ընդունում այնտեղ, որտեղ նրանք կարգված են, վիրավորանքը հեշտորեն գլուխ է բարձրացնում:

Եթե արվում է այնպիսի բան, ինչի հետ նրանք համաձայն չեն, նրանք վիրավորվում և հեռանում են: Նրանք գնում են՝ մեղադրելով եկեղեցու առաջնորդներին: Այդ մարդիկ կուրորեն չեն տեսնում իրենց իսկ բնավորության թերությունները և չեն հասկանում, որ Աստված մաքրում է իրենց այն ճնշման միջոցով, որին իրենք ենթարկվում են: (Այս ճշմարտությունը չի սահմանափակվում ծառայությամբ, այլ վերաբերում է նաև ամուսնությանը, աշխատանքին և այլ հարաբերություններին):

Եկեք սովորենք բույսերի և ծառերի օրինակով, որն Աստված ցույց է տալիս մեզ: Երբ պտղատու ծառի շիվը տնկում են հողի մեջ, այն պետք է դիմանա ուժգին անձրևներին, քամիներին և կիզիչ արևին: Եթե այդ շիվը խոսել իմանար, կասեր. «Խնդրո՛ւմ եմ, հեռացրե՛ք ինձ այստեղից: Տարե՛ք այնտեղ, որտեղ չկան ուժասպառ անող շոգեր և քամոտ փոթորիկներ»:

Եթե այգեպանը լսեր այդ շիվին, իրականում, վնաս կհասցներ դրան: Ծառերը դիմանում են կիզիչ արևին, քամիներին և անձրևներին՝ իրենց արմատներն ավելի խորացնելու միջոցով: Նրանց դժվարությունները՝ նրանց դիմացկունության աղբյուրն են: Նրանց շրջապատող բնության տարրերի խստությունն ստիպում է նրանց կյանքի այլ աղբյուր որոնել: Ի վերջո, նրանց արմատներն այնքան խորն են գնում, որ նույնիսկ ամենաուժգին փոթորիկները չեն կարող խանգարել նրանց պտղաբերությանը: Իմանալով այս մասին՝ մենք չպետք է հակառակվենք այն դժվարություններին, որոնք Աստված թույլ է տալիս, որպեսզի հաստատի մեզ մեր կոչման մեջ:

Երրորդը. ձեր կյանքում կա՞ն ետ պահող հանգամանքներ

Վերջին պատճառը, թե ինչու մարդիկ չեն բացահայտում և չեն կատարում իրենց կոչումը, նրանց ետ պահող հանգամանքներն են: Այդ ծանրությունները թույլ չեն տալիս մարդկանց անցնել և ավարտել իրենց ընթացքը:

Պողոսը գրում է իր մասին. «Բայց ես համարում եմ, որ իմ կյանքը ոչինչ չարժե ինձ համար. ես միայն ցանկանում եմ ավարտել իմ առաքելությունը և այն գործը, որը Տեր Հիսուսը տվել է ինձ» (Գործք 20.24, TEV): Պողոսը քաջատեղյակ էր իր կյանքի առաքելության մասին: Նա ուներ գործ, որը պետք է ավարտեր, և նա նույնպես տեղյակ էր, որ այն դեռ ավարտված չէր: Ինչպե՞ս կարող էր իմանալ այդ մասին: Նույն կերպով, ինչպես Հիսուսը, ինչպես Պետրոսը (տե՛ս Բ Պետր. 1.14), և ինչպես մյուսները, ովքեր փնտրում են Աստծուն, տնկվում են եկեղեցում և հարատևում են: Տերը հայտնում է դա ամեն մեկին, ով չի համարում իր կյանքն ավելի կարևոր, քան Աստծո կամքը: Ահա և վերջին պայմանը.

եթե մենք լիովին նվիրենք մեր կյանքն Աստծո ցանկալի ծրագիրը կատարելուն, մենք ոչ միայն կիմանանք մեր կոչումը, այլև կկատարենք այն:

Մենք այս մասին Ավետարաններում օրինակ ենք գտնում: Մի անգամ, երբ Հիսուսը մի քաղաքից մյուսն էր գնում, տեղի ունեցավ հետևյալը. «Եվ եղավ, որ նրանք գնալիս՝ ճանապարհին մի մարդ Նրան ասաց. «Ես Քո ետևից կգամ, որտեղ որ գնաս, Տե՛ր»» (Ղուկաս 9.57):

Այս խոսքերն ասող մարդը ոգեշնչված, ջերմեռանդ և անկեղծ էր: Նա ցանկանում էր հետևել Հիսուսին մինչև վերջ: Այնուամենայնիվ, Հիսուսը տեսնում է սրտի իրական դրդապատճառները և այն ծուղակները, որոնք քողարկված են խանդավառության ետևում: Նա տեսավ այն, ինչը ետ էր պահում այդ մարդուն և թույլ չէր տալիս նրան կատարել իր կոչումը, և ասաց նրան. «Աղվեսները որջեր ունեն, և երկնքի թռչունները՝ բույներ, բայց մարդու Որդին տեղ չունի, որ գլուխը դնի» (Ղուկաս 9.58):

Ամենայն հավանականությամբ, այդ մարդը հարմարավետ և ապահով կյանք էր վարում՝ ըստ այս աշխարհի չափանիշների: Միգուցե նա լավ աշխատանք ուներ, արդեն վճարել էր իր տան հիփոթեքային պարտքի զգալի մասը և կենսաթոշակային փաթեթ էր ձեռք բերել իր ծերության տարիների համար: Հիսուսը ոչ երկիմաստ կերպով մատնացույց արեց այս աշխարհի ապահովությանը՝ ասելով, որ Ինքը տեղ չունի գլուխը դնելու համար:

Ես գրեթե տեսնում եմ, թե ինչպես Նա և բազմության մեջ գտնվող այլ մարդիկ դանդաղորեն ետ գնացին և, ի վերջո, հեռացան: Ամենայն հավանականությամբ, այդ մարդն ուզում էր ասել. «Հիսո՛ւս, ես կպահպանեմ կարգ ու կանոնը Քո հավաքույթների ժամանակ, կնվագեմ փառաբանության թիմում և նույնիսկ կկայանեմ տարեց մարդկանց մեքենաները, ովքեր կհաճախեն Քո համաժողովին մեր քաղաքում»: Այնուամենայնիվ, Հիսուսին հետևելու հրապուրանքը հանկարծ կորցրեց փայլը, և Նրան ծառայելու բարի մտադրություններն արագորեն չքացան: Այնպես որ, այդ մարդը, ինչպես և շատերը, հեռացավ, քանի որ նա մտադրված էր աջակցել Հիսուսին, բայց ոչ՝ լիովին տրվել Նրան:

Հիսուսը նայեց մեկ այլ մարդու, ով դեռ պատրաստակամ էր, և ասաց. «Հետևի՛ր Ինձ»:

> «Եվ նա ասաց. «Տե՛ր, հրամա՛ն տուր, որ գնամ՝ առաջ իմ հորը թաղեմ»: Հիսուսը նրան ասաց. «Թող մեռելներն իրենց մեռելներին թաղեն, իսկ դու գնա Աստծո արքայությո՛ւնը քարոզիր»» (Ղուկաս 9.59,60):

Ինչպիսի՜ խիստ պատասխան: Միգուցե ոմանք մտածեն, որ Հիսուսը սաստկությամբ և մի փոքր կոպտորեն պատասխանեց նրան: Այնուամե-

նայնիվ, մենք պետք է հասկանանք այդ ժամանակվա մշակույթը: Աստվածաբաններն ասում են, որ համաձայն ավանդույթի՝ երբ ընտանիքի հայրը մահանում էր, առաջնեկը պարտավոր էր թաղել նրան: Իր պարտավորությունը կատարելու դեպքում նա ստանում էր կրկնակի ժառանգություն՝ մյուս որդիների համեմատ: Այնուամենայնիվ, եթե առաջնեկը չկատարեր հորը թաղելու պարտավորությունը, կրկնակի չափը կանցներ երկրորդ որդուն:

Այդ մարդը կենտրոնացած էր փողի վրա: Ամենայն հավանականությամբ՝ նա սիրում էր հարմարավետ կյանք վարել, ինչն ի վերջո թույլ չէր տա նրան՝ հետևել Հիսուսին: Նա կշեղվեր կամ այնպիսի որոշումներ կկայացներ, որոնց հիմքում կլիներ փողը, ոչ թե Աստծո ծրագիրը:

Ես գրեթե համոզված եմ, որ ստանալով այս հրահանգը Տիրոջից՝ այդ մարդը շատերի հետ միասին սկսեց ետ գնալ: Նրա պատասխանը կարող էր այսպես հնչել. «Հիսո՛ւս, ես կծառայեմ Քո համաժողովներին մեր քաղաքում: Ես կերգեմ երգչախմբում կամ կնվագեմ հարվածային գործիքների վրա: Ես կարո՛ղ եմ դա: Ես մեծ սիրով կանեմ այդ բաները և ոչինչ չեմ պահանջի իմ ծառայության դիմաց»: Հիսուսին հետևելու ոգեշնչումը կորցրեց գրավչությունը նրա և բազմաթիվ մարդկանց համար:

Ուշադրություն դարձրեք՝ այդ մարդը չասաց, որ չի հետևելու Հիսուսին: Նա ասաց, որ հետևելու է Նրան, բայց նրա պարտության բանալին *«հրաման տուր... առաջ»* բառերն են: Նա մտադրված էր իրականացնել այն, ինչ ցանկանում էր, մինչև իր կյանքը Հիսուսին նվիրելը:

Եթե մենք ցանկանում ենք իմանալ Աստծո ծրագիրը մեր կյանքի համար և կատարել այն, մենք չպետք է կարևորենք ոչ մի բան ավելի, քան Նրա կամքը: Ես տեսել եմ անթիվ հավատացյալների, ովքեր դադարել են հնազանդվել Աստծուն, քանի որ որոշել են նախ՝ զբաղվել իրենց առաջնահերթություններով: Որքա՜ն ցավալի է, որ նրանք չեն կատարել իրենց կոչումը, և անհրաժեշտ է գտնել այլ մարդու՝ նրանց գործն ավարտելու համար: Ի՞նչ է լինելու նրանց հետ Դատաստանի գահի առջև:

Վերադառնանք մեր պատմությանը: Բազմությունն ավելի էր նոսրանում, բայց ևս մեկ կամավոր առաջ եկավ.

> «Մի ուրիշն էլ ասաց. «Տե՛ր, Քո ետևից կգամ, միայն թե առաջ հրաման տուր ինձ, որ իմ տանը բարև մնա ասեմ»: Հիսուսն էլ նրան ասաց. «Ով ձեռքը մաճի (կամ՝ գութանի) վրա է դնում և ետևին նայում, հարմար չէ Աստծո արքայության համար» (Ղուկաս 9.61,62):

Կրկին, ուշադրություն դարձրեք *«առաջ»* բառին: Ակնհայտ է, որ այդ մարդը շատ մոտ էր իր ընտանիքին, նա ուներ ընկերներ, գուցեև՝նշա-

նած: Նա պարզապես ուզում էր քննարկել Գալիլեացի Մարդուն հետևելու իր որոշումը նրանց հետ: Ի վերջո, նրա մտերիմներն էին որոշելու, թե արդյո՞ք նա կծառայեր Հիսուսին: Տերն իսկույն հակառակվեց դրան՝ ասելով, որ նա հարմար չի լինի Աստծո թագավորությանը ծառայելու համար:

Ես գրեթե տեսնում եմ, թե ինչպես է այդ մարդը հեռանում մեկ այլ ստվար խմբի հետ: Պատկերացնում եմ, որ նա ասում է. «Հիսո՛ւս, ես կարող եմ հասարակական կապեր ստեղծել և մարդկային ռեսուրսներ հայթայթել: Ես կարող եմ դառնալ Քո ծառայության խորհրդատուն և իսկապես լավ աշխատողներ գտնել Քեզ համար: Ես նույնպես կարող եմ վարձել մեր տեղական համաժողովների սրահը, երբ հաջորդ անգամ հավաքույթներ անցկացնես մեր քաղաքում: Եվ երբ Դու գաս, ես կկազմակերպեմ կարգ ու կանոնի և մարդկանց ողջունող թիմերի աշխատանքը: Ես նույնիսկ անձամբ կծառայեմ Քեզ, եթե ցանկանաս: Ես պատրա՛ստ եմ ծառայել Քեզ»:

Ամենայն հավանականությամբ, այդ պահին խանդավառված հետևորդների ստվար բազմությունը նոսրացավ Հիսուսի աչքի առջև՝ հասնելով մինչև գրեթե յոթանասուն մարդու: Սկզբում, հավանաբար, ներկա էին հազարավոր մարդիկ, բայց Նա հայտնեց Իր տեսանկյունը մարդկանց ետ պահող երեք խոշոր հանգամանքների՝ ապահովության, փողի և փոխհարաբերությունների վերաբերյալ: (Կան նաև այլ հանգամանքներ, որոնք ետ են պահում մարդկանց, օրինակ՝ հաճույքները, ձգտումներն այնպիսի բաների հանդեպ, որոնք չեն համապատասխանում Աստծո կամքին, և այլն, բայց իմ տարիների փորձառության ընթացքում տեսել եմ, որ այս երեքը գլխավոր հանգամանքներն են):

Կարդալով Ավետարանները՝ շատերն անտեսում են Ղուկասի հաջորդ անչափ կարևոր խոսքը, քանի որ այն հաջորդ գլխում է: Այնուամենայնիվ, թույլ տվեք հիշեցնել ձեզ, որ Ղուկասի գիրքը՝ ամբողջական երկար նամակ է: Հետագայում եկեղեցին ավելացրեց գլուխները և խոսքերը՝ հեշտորեն հղումներ անելու նպատակով: Ահա թե ինչ է գրում Ղուկասը.

> «Սրանից հետո Տերն ուրիշ յոթանասուն հոգի էլ կարգեց և նրանց երկուերկու Իր երեսի առջև ուղարկեց այն բոլոր քաղաքները և տեղերը, որտեղ որ Ինքը գնալու էր: Եվ ասում էր նրանց. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ...»» (Ղուկաս 10.1,2):

Այս խոսքերն այնքա՛ն շատ բան են ասում: Նախ և առաջ, ուշադրություն դարձրեք «սրանից հետո» բառերին: Մենք պետք է հարցնենք՝ ինչի՞ց հետո: Պատասխանն է՝ այն բանից հետո, երբ Հիսուսի աչքի առջև բազմությունը նոսրացավ, մինչև որ մնացին մի խումբ

մարդիկ, ովքեր դեռ ասում էին իրենց մտքում. *«Կարևոր չէ, թե ինչ գին է պետք վճարել՝ Նրան հետևելու համար: Ես ուզում եմ, և ես կանե՛մ դա»:* Նրանք լսեցին Հիսուսի պատասխաններն ապահովության, փողի և փոխհարաբերությունների վերաբերյալ և որոշում կայացրին, որ ոչինչ չի խանգարի իրենց՝ կատարել Աստծո կոչումը:

Դրանից հետո Հիսուսը *կարգեց* նոր թիմի անդամների, որոնք, ամենայն հավանականությամբ, մինչև այդ մնացած միակ մարդիկ էին: Նոր կտակարանում «կարգել» և «ընտրել» բառերը գործածվում են որպես հոմանիշներ: Կարգված մարդն ընտրվել է, իսկ ընտրված մարդը՝ կարգվել: Հիսուսը մի բան է ասում Մատթեոսի Ավետարանի երկու տարբեր հատվածներում: Եթե Նա նույնությամբ կրկնում է Իր ասածը երկու տարբեր հատվածներում, նշանակում է՝ մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք այդ խոսքերին: Ահա այդ արտահայտությունը. «Որովհետև շատերն են կանչված, բայց քչերն են ընտրված» (Մատթեոս 20.16, 22.14):

Շատերն են կանչված: Քանի՞սը: Ճիշտ կլինի ասել, որ կանչված են բոլորը: Բոլոր հավատացյալների կյանքում կանչ կա, և նրանք ունեն անհրաժեշտ պարգևներ՝ այն իրականացնելու համար: Այնուամենայնիվ (և սա կարող է խիստ զարմացնել ձեզ), միայն քչերն են ընտրված կամ կարգված՝ այդ կանչն իրականացնելու համար: Ինչո՞ւ են քչերը կարգված: Քանի որ միայն քչերը կթողնեն իրենց բոլոր ցանկությունները, ապահովությունը, ձգտումը փողի հանդեպ, խոչընդոտող փոխհարաբերությունները և այլ բաներ՝ իրենց կանչն իրականացնելու համար:

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսն ասաց. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ» (Մատթեոս 9.37): Այն, որ մեր սերունդը փրկված չէ, Աստծո մեղավորությունը չէ, որովհետև Աստված «կամենում է, որ ամեն մարդ փրկվի և ճշմարտության գիտությանը գա» (Ա Տիմոթեոս 2.4): Մենք ենք, որ պետք է կանգնենք Նրա ատյանի առջև և հաշիվ տանք, թե ինչու մեր սերունդը չի փրկվել: Եթե մենք կատարենք մեր կոչումը, չենք դատվի: Այնուամենայնիվ, եթե թույլ տանք, որ այս աշխարհի ետ պահող հանգամանքները խոչընդոտեն մեզ, մեր դատաստանն զգաստացնող կլինի:

Միգուցե ասեք. «Ես մի մարդ եմ՝ շատերի մեջ»: Ի՞նչ կլիներ, եթե ձեր լյարդն ասեր. «Ես մարմնի անկարևոր անդամ եմ, և ոչ ոք չի նկատում ինձ և իմ աշխատանքը: Այնպես որ, ես կանեմ՝ ինչ ուզում եմ, և ոչ թե այն, ինչի համար ստեղծված եմ»: Ինչպես գիտեք, առանց լյարդի մարմինը լուրջ խնդիրներ կունենա: Ի՞նչ կլիներ, եթե նույնը ասեին թոքերը, ոտքը, ոտնաթաթը կամ՝ մարմնի մեկ այլ մաս: Եկեղեցու ամեն անդամ նույնքան կարևոր է, որքան մարմնի ամեն մի անդամը:

Ահա մի զգաստացնող փաստ. Հիսուսն ասում է մեզ, որ միայն քչերը կկատարեն իրենց նախասահմանությունը՝ որպես Աստծո տան ենթակապալառուներ: Յուրաքանչյուր հավատացյալ կանչված է՝ կառուցելու համար, բայց քչերը կիրականացնեն իրենց կոչումը: Սա նշանակում է, որ հավատացյալների դատաստանին կանգնողների մեծ մասը կորուստ կկրի և փառավոր վարձատրություն չի ստանա:

Ես գիտեմ, որ սա ուրախալի լուր չէ: Այնուամենայնիվ, կա նաև բարի լուր. դուք կարող եք սկսել հենց այս պահից: Դուք կարող եք ծնկի իջնել, աղոթել և խնդրել Աստծուն ներել ձեզ այն ամենի համար, ինչը դուք հանդուրժել եք, և ինչի պատճառով չեք հնազանդվել Նրա կամքին, իսկ հետո քայլ առ քայլ առաջ շարժվել: Սմիթ Վիգլսվորտը, ով քսաներորդ դարի մեծ ավետարանիչներից էր, սկսեց իր ծառայությունը, երբ արդեն հիսունն անց էր. երբեք չափազանց ուշ չէ:

Հիշե՛ք, որ գոյություն ունեն պայմաններ՝ արդյունավետ կերպով կառուցելու համար: Առաջինը՝ հավատքո՛վ փնտրեք Աստծուն: Երկրորդը՝ տնկվե՛ք այն տեղական եկեղեցում, որն Աստված ցույց է տալիս ձեզ, և հնազա՛նդ եղեք այդ տեղական մարմնի առաջնորդներին: Եվ երրորդը՝ ազատվե՛ք այն ամենից, ինչը ետ է պահում ձեզ: Երբ Աստված ցույց տա այն ծանրությունները, որոնք ետ են պահում ձեզ, խնդրե՛ք, որ Նրա սուրը կտրի դրանց կապերը ձեր անձի կամ մարմնի հետ: Նրա շնորհքը բավական է՝ ձեզ ազատելու համար:

Ամբողջ վարձատրությունը[1]

Մինչև հաջորդ գլխին անցնելը, ես կխոսեմ ևս մեկ բանի մասին: Կան մարդիկ, ովքեր այդպես էլ չեն սկսել կառուցել Աստծո տունը կամ դադարել են կառուցել այն: Նրանք շեղվել են ժամանակավոր փառք ունեցող բաներով՝ այս աշխարհի հարստության, ազդեցության, իշխանության կամ հաճույքների հանդեպ մոլուցքով, ինչպես նաև՝ մարդկանց հաճեցնելով: Այս ամենն ի չիք է դառնալու: Մի՛ խաբվեք, մի՛ շեղվեք և մի՛ մոլորվեք: Կենտրոնացա՛ծ մնացեք: Դուք գո՛րծ ունեք անելու Քրիստոսում, և ձեր գործը պետք է ավարտի՛ն հասցվի:

Կլինեն մարդիկ, որոնց կյանքի որոշ ժամանակահատվածի կամ, նույնիսկ, ամբողջ կյանքի գործեր չեն մնա: Դրանք կքանդվեն և չեն լինի Աստծո հավիտենական տան մասը: Կարո՞ղ եք պատկերացնել դա:

Որպեսզի օգնեմ ձեզ հասկանալ այս խոսքերի լրջությունը, թույլ տվեք վերադառնալ մեր տան կառուցմանը: Քանի որ ես ամեն օր գնում էի տան շինհրապարակ, ենթակապալառուները շատ լավ էին ճանաչում ինձ և «քարոզիչ» էին անվանում:

Ամեն անգամ, երբ մեքենաս մոտենում էր շինհրապարակին, աշխատողների ռոք երաժշտության ձայնը մարում էր: Ինձ տեսնելուն պես նրանցից մեկն արագորեն վազում էր դեպի նվագարկիչը և անջատում էր: Ես ներքուստ ժպտում էի, քանի որ նրանք երկյուղածություն ունեին աստվածային իրողությունների հանդեպ: Մենք մի փոքր զրուցում էինք: Ես բավականին հետաքրքիր զրույցներ եմ ունեցել այդ մարդկանց հետ, ինչպես նաև մի քանի հրաշալի հնարավորություններ՝ նրանց ծառայելու համար:

Հիշում եմ, որ մեր զրույցներից մեկի ժամանակ ենթակապալառուները պատմում էին ինձ այն գեղեցիկ տների մասին, որոնց կառուցման մեջ իրենք մասնակցություն էին ունեցել: Նրանցից ասես լույս ճառագեր, երբ պատմում էին իրենց աշխատանքի մասին: Կարելի էր տեսնել նրանց մեծ գոհունակությունը և բավականությունը գերազանց աշխատանքների մեջ մասնակցություն ունենալու շնորհիվ: Նրանցում ամոթի նշույլ անգամ չկար. նրանք միայն ուրախանում էին այն աշխատանքով, որից օգուտ են ստացել այլ ընտանիքներ, և որոնք հայտնի են գեղեցիկ տների սիրահարներին:

Թույլ տվեք մեկ քայլ առաջ գնալ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես է իրեն զգում այն մարդը, ով կառուցել է Սպիտակ տունը Վաշինգտոնում: Պատկերացրեք այն օրը, երբ նրա երեխան տուն է գալիս դպրոցից և պատմում է, որ իրենք սովորել են իրենց երկրում ամենահայտնի տան մասին, և խանդավառությամբ հայտարարում է, որ իրենց դասարանն էքսկուրսիայի է գնալու՝ այն տեսնելու համար:

Պատկերացնո՞ւմ եք այն թրթիռը, որով այդ մարդն ասում է իր որդուն կամ դստերը, որ ինքը մասնակցություն է ունեցել է այդ տան կառուցմանը: Պատկերացնո՞ւմ եք նրա զգացմունքները, երբ նա էքսկուրսիայի է գնում իր երեխայի դասարանի հետ դեպի Փենսիլվանիայի պողոտա, 1600 հասցեն: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ է նա զգում՝ տեսնելով իր երեխայի ոգեշնչումը և հպարտությունն այն պահին, երբ նրա դասարանցիներն իմանում են, որ ինքը մասնակցություն է ունեցել այն տան կառուցմանը, որտեղ ապրում է Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը:

Նման մի բան կարելի է ասել նաև մեր մասին, սակայն մենք չենք աշխատում այնպիսի տան վրա, որը մեկ օր քանդվելու է և փոխարինվելու է: Մենք աշխատում ենք այն տան վրա, որը հավիտյան լինելու է ամբողջ տիեզերքի ուշադրության առարկան: Այո՛: Հիշե՛ք Միքիա մարգարեի խոսքերը. «Եվ շատ ազգեր պիտի գնան և ասեն. «Եկեք վե՛ր գնանք Տիրոջ սարը և Հակոբի Աստծո *տունը*, որ Նա մեզ սովորեցնի Իր ճանապարհները, և որ մենք գնանք Նրա շավիղներով, որովհետև *Սիոնից* պիտի դուրս գա օրենքը» (Միքիա 4.2):

Տիեզերքի ամբողջ գործունեությունը պտտվելու է այդ տան շուրջ: Այն իմաստությունը և օրենքները, որոնք կառավարելու են ամբողջ տիեզերքը, ելնելու են դրանից: Եվ զարմանալին այն է, որ այն նույնքան գեղեցիկ է լինելու տասը տրիլիոն տարի անց, որքան այն օրը, երբ ավարտվի:

Մեկ անգամ ես Ամերիկայի Միջին Արևմուտքում գտնվող մի մեծ եկեղեցում էի: Այդ եկեղեցու փառաբանության ավագը պատմեց, որ Աստված վառ երազ էր ցույց տվել իրեն: Այդ երազում նա Երկինք էր գնացել, որտեղ տեսել էր մի մեծ ծառայողի և շփվել էր նրա հետ: Այդ դեպքը տեղի էր ունեցել այդ ծառայողի ննջելուց մեկ տարի անց: Այդ մարդը ծառայել էր ավելի քան վաթսուն տարի՝ մինչև վերջ հավատարիմ մնալով, և գնացել էր դեպի իր վարձատրությունը մեր հազարամյակի սկզբում: Նա մեծ ժպիտով ասել էր այդ եկեղեցու փառաբանության ավագին. «Այստեղ շատ ավելի լավ է, քան ես պատկերացնում էի»:

Նրանք զրուցել էին տարբեր հարցերի շուրջ, ինչից հետո այդ ծառայողը շրջվել էր և ցույց էր տվել իր կատարած գործը Սիոնում: Այն ահռելի էր: Նրա հավատարմության ազդեցությունը շատ ավելին էր, քան ինքը կարող էր երազել, և այն իր աչքերի առջև էր: Նա կարող էր մատնացույց անել իր գործը, ինչպես այն ենթակապալառուները, ովքեր պատմում էին ինձ իրենց գործերի մասին: Ինչպիսի՜ հավիտենական վարձատրություն:

Պարզապես պատկերացրեք, որ ամբողջ հավիտենության ընթացքում դուք կկարողանաք ցույց տալ ձեր մասը Նրա տան կառուցման մեջ ոչ միայն ձեր ժառանգներին, այլև անթիվ մարդկանց, ովքեր կգան տեսնելու Սիոնը՝ Աստծո փառավոր տունը: Պատկերացնո՞ւմ եք, որ ամբողջ հավիտենության ընթացքում մարդիկ մոտենալու են և նայելու են Աստծո տան գեղեցկությանը՝ խոսելով այն մասին, թե ինչ ներդրում եք դուք ունեցել:

Դիտարկենք մեկ այլ տարբերակ: Պատկերացրեք, որ ձեր գործը որևէ կերպով ներկայացված չէ այդտեղ, քանի որ դուք բարեհաջող ավարտ չեք ունեցել: Պատկերացնո՞ւմ եք, որ ազգերը գալու են, որպեսզի տեսնեն, թե ինչ եք արել, և դուք ոչինչ չեք կարողանա ցույց տալ նրանց ամբողջ հավիտենության ընթացքում, որովհետև այն հատվածը, որը պետք է կառուցվեր ձեր կողմից, քանդված և փոխարինված է: Հիշե՛ք Պողոսի խոսքերն Աստվածաշնչի «Մեսիջ» թարգմանությունից.

> «Եթե ձեր գործն անցնի ստուգումը, շատ լավ: Եթե ոչ, կառույցի ձեր մասը կքանդվի և կրկին կկառուցվի» (Ա Կորնթացիների 3.14,15):

Սա իսկապես որ հավիտենական կորուստ է: Ցավոք, սա իրականություն է: Բայց թանկագի՛ն ընկեր, ես չեմ ցանկանում, որ դա պատա-

հի ձեզ հետ: Աստված նույնպես չի ցանկանում դա: Եվ հիմա դուք կարող եք որոշում կայացնել, որ ձեզ հետ նման բան չի պատահի: Աստված շնորհք է տվել ձեզ՝ Սիոնը կառուցելու համար: Ինչպես գրում է Հովհաննես առաքյալը.

> «Զգո՛ւյշ եղիր, որ չկորցնես *այն մրցանակը*, որի համար մենք այսքան շատ աշխատել ենք: Զանասե՛ր եղիր, որ ստանաս քո *ամբողջ վարձատրությունը»* (Բ Հովհաննես 8, NLT):

Տերն այնպես է արել, որ Իր զավակներից յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ստանալու ամբողջական վարձատրություն՝ Իր տունը կառուցելու համար: Ձեր աշխատանքը երբեք չի անցնի, երբեք չի հնանա և երբեք փոխարինվելու կարիք չի ունենա: Եթե դուք ապավինեք Աստծո շնորհքին և արդյունավետ կառուցեք, բյուրավոր հրեշտակներ և մարդիկ հավիտյանս հավիտենից կհիանան ձեր գործով:

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՀԻՆԳ, ԳԼՈՒԽՆԵՐ 11,12

1. Մենք գիտենք, որ Աստված կարիք չունի, որ որևէ բան անենք Իր համար, բայց Նա ուզում է, որ մենք գործենք Իր հետ: Ի՞նչ է սա հայտնում մեզ Նրա, Նրա թագավորության և մեր մասին:

2. Սաղմոս 139.16-ը հայտնում է մեզ, որ նույնիսկ մեր ծնվելուց առաջ Աստված գիրք է գրել՝ մեր ամբողջ կյանքը: Ինչպե՞ս կարող ենք իմանալ, թե ինչ է Աստված գրի առել մեր եզակի պատմություններում:

3. Հնարավոր է (միգուցե նաև հեշտ է) անցկացնել մեր կյանքը թվացյալ բարի գործեր անելով, բայց այդպես էլ չկատարել այն, ինչի համար կանչված ենք: Կա՞ արդյոք այնպիսի բնագավառ ձեր կյանքում, որը դուք անգործության եք մատնել վախի և հիասթափության պատճառով: Պետք չէ՞ արդյոք փնտրել Աստծուն և խնդրել, որ Նա նորոգի այդ բնագավառը:

4. Տասներկուերորդ գլխում խոսեցինք երեք պայմանների մասին, որոնց միջոցով կարող ենք կառուցել մեր կյանքը՝ համաձայն Աստծո կամքի. Նրան ջանասիրաբար փնտրելը, Նրա տան մեջ տնկվելը և մեզ ետ պահող հանգամանքներից ազատվելը: Այս երեքից ո՞րն է ավելի շատ վերաբերում ձեզ: Ինչպե՞ս դուք կարող եք աճ ունենալ դրանցում:

5. Հավիտենության մեջ մենք կարող ենք ստանալ ամբողջական վարձատրություն, մասնակի վարձատրություն և նույնիսկ՝ ոչ մի վարձատրություն: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է ամբողջական վարձատրությունը:

ԲԱԺԻՆ ՎԵՑ

ԳԼՈՒԽ 13

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

«Հնձողները լավ վարձատրություն են ստանում, և այն պտուղը, որը նրանք հնձում են, մարդիկ են, որոնք բերվել են դեպի հավիտենական կյանքը: Ինչպիսի՜ ուրախություն է սպասվում թե՛ ցանողին, թե՛ հնձողին: Դուք գիտեք ասացվածքը. «Մեկը ցանում է, իսկ մյուսը հնձում է»: Եվ այն ճշմարիտ է»:

— Հովհաննես 4.36,37, NLT

«Նա, ով ցանում է, և նա, ով ջրում է, աշխատում են որպես մեկ թիմ՝ նույն մտադրությամբ: Բայց և այնպես, նրանք վարձատրվելու են անհատապես՝ ըստ իրենց ծանր աշխատանքի»:

— Ա Կորնթացիների 3.8, NLT

Այն մարդիկ, ովքեր հավատարմորեն ծառայում են Աստծո թագավորության մեջ՝ կառուցելով Նրա տունը, պատկառելի հավիտենական վարձատրություն կստանան: Մենք կվարձատրվենք մեր գործի համար անհատապես՝ ըստ մեր կատարածի: Մեզնից ամեն մեկը տարբեր պարտականություններ ունի, բայց մեր բոլոր տարբեր կոչումները տալիս են մեկ արդյունք՝ մարդիկ, ովքեր հավիտենական փրկություն են ստանում:

Շատերը հավատում են, որ միայն միլիոնավոր կյանքերի հպվող ծառայողները կկանգնեն Երկնքի առաջին շարքերում և կստանան մեծագույն վարձատրությունները: Այնուամենայնիվ, դա ճշմարիտ չէ: Աստված չի վարձատրում այնպես, ինչպես մարդիկ: Նա վարձատրում է՝ ըստ արդար գործերի՝ հիմնված հնազանդության վրա: Եթե Նա վարձատրեր ըստ մարդկային չափանիշների, Աստծուն ծառայելը կնմանվեր գործարար ձեռքբերումներ ունենալուն: Ինչպես տեսանք նախորդ երկու գլուխներում, ամեն ինչ բոլորովին այլ կերպ է: Աստված դատում և վարձատրում է համաձայն մեր կոչման՝ այն գործի, որի համար Նա զորություն է տվել մեզ:

Զորացված՝ շնորհքով

Մ.թ. 56 թվականին՝ իր ընթացքն ավարտելուց գրեթե տասը տարի առաջ Պողոսը գրեց, որ ինքն «առաքյալներից հետինն» է (Ա Կորնթացիների 15.9): Սա տարօրինակ կթվա այն մարդկանց, ովքեր ուսումնասիրել են եկեղեցու պատմությունը: Պողոսն ազդեցություն էր թողել այդ ժամանակվա ամբողջ հայտնի աշխարհի վրա և ունեցել էր ավելի մեծ ձեռքբերումներ Աստծո թագավորության համար, քան որևէ մարդ իր օրերում: Անկասկած՝ նա իր ժամանակվա մեծագույն առաքյալն էր: Այդ դեպքում, ինչպե՞ս կարող էր նման բան ասել: Միգուցե նա պարզապես չափազանցնո՞ւմ էր: Դա անհնար է. անկարելի է ստել Սուրբ գրքերը գրելիս: Սուրբ Հոգին թույլ կտար, որ այս պնդումը գրվեր միայն՝ եթե Պողոսն իրականում հավատար իր խոսքերին:

Պատասխանը շարունակության մեջ է. «Բայց *Աստծո շնորհքով եմ՝ ինչ որ եմ*, և Նրա շնորհքը, որ Ինձանում է, ունայն չեղավ, այլ *նրանց ամենից ավելի աշխատեցի. սակայն ոչ թե ես, այլ Աստծո շնորհքը, որ ինձ հետ է»* (Ա Կորնթացիների 15.10):

Հետաքրքիր է, որ Պողոսը խոստովանում էր, որ իր ձեռքբերումներն ավելին էին, քան մյուս առաքյալներինը, բայց նա դեռ իրեն համարում էր նրանցից ետինը: Նրա խոսքերը բացատրում են այս թվացյալ հակասությունը. «Բայց Աստծո շնորհքով եմ՝ ինչ որ եմ»: Պողոսն առանձնացնում էր իրեն այն ամենից, ինչ Աստծո շնորհքն անում էր իր միջոցով: Նա քաջատեղյակ էր, որ չէր կարող ոչինչ ավելացնել այն կոչմանը, որն Աստված տվել էր իրեն, և ո՛չ էլ իրեն տրված կարողությունից ավելի մի բան կատարել: Այս ամենն ամփոփվում է մեկ բառով՝ *«շնորհք»*: Եվ սա վերաբերում է բոլոր հավատացյալներին, ինչ կոչում էլ նրանք ունենան:

Թույլ տվեք կիսվել իմ ծառայողական փորձառությամբ: Իմ կողմից գրված գրքերն այժմ թարգմանված են ավելի քան հինսուն լեզուներով և միլիոնավոր օրինակներով տարածվել են աշխարհով մեկ: Մենք անթիվ վկայություններ ենք ստացել այն մասին, որ դրանք փոխում են մարդկանց կյանքերը:

Հաճախ մարդիկ մոտենում են ինձ և հարցնում, թե որն է իմ գրքեր գրելու գաղտնիքը: Ես ծիծաղում եմ իմ ներսում՝ հիշելով, թե որքան վատ էի տիրապետում գրավոր անգլերենին, մինչև որ Աստծո շնորհքը դրսևորվեց իմ կյանքում: Ինձնից ժամեր էր պահանջվում՝ երկու էջանոց շարադրություն գրելու համար, և թվում էր՝ ես փչացնում էի նոթատետրիս կեսը, մինչև որ կարողանում էի գրել առաջին պարբերութ-

յունը: Այժմ, երբ գրում եմ, բառերը դուրս են թռչում ինձնից: Իմ գրած գրքերից ես շատ ավելի լավատեղյակ եմ, քան ցանկացած մարդ: Իրականում, ես պարզապես առաջին մարդն եմ, ով կարդում է դրանք:

Մեկ անգամ հրավիրված էի հարցազրույցի ազգային հեռուստաալիքներից մեկում, և խոսքն իմ գրքերի ուղերձների մասին էր: Այնուամենայնիվ, այդ հարցազրույցի ընթացքում հաղորդավարն սկսեց ավելի շատ կենտրոնանալ ինձ և իմ ձեռքբերումների, քան՝ իմ ուղերձների վրա: Ես շատ անհարմար զգացի, և սկսեցի փնտրել Սուրբ Հոգու առաջնորդությունն իմ ներսում՝ մեր զրույցի ընթացքը փոխելու համար:

Մի քանի վայրկյանից ընդմիջումն էր, որից հետո ամենահարմար պահն էր՝ ասելու այն, ինչ Սուրբ Հոգին տվեց ինձ: Ես մեջբերեցի Սողոմոնի խոսքերը. «Իմացել եմ, որ այն, ինչ Աստված անում է, հավիտենական է. նրա վրա չի ավելացվի, և նրանից չի պակասեցվի, և Աստված արել է, որ վախենան Նրա երեսից: Ինչ որ կա, այն արդեն կար, և ինչ որ լինելու է, այն արդեն եղած է, և Աստված կորոնի անցկացածը» (Ժողովող 3.14,15):

Ես շարունակեցի.

– Կան անթիվ հովիվներ և ծառայողներ, ովքեր կատարում են այն, ինչի համար Աստված կանչել է իրենց: Ոմանք հովվում են հարյուր անդամից բաղկացած եկեղեցիներ գյուղական տարածքներում: Մյուսները ծառայում են կորսված և տառապյալ մարդկանց՝ զարգացող ազգերի մեջ: Նրանք ցանել են իրենց կյանքը միսիոներական դաշտերում: Մյուսներն ամեն օր աշխատում են խոշոր քաղաքների կենտրոնական շրջաններում. նրանք դնում են իրենց կյանքերը, որպեսզի օգնեն այն մարդկանց, ում մյուսներն անարժան են համարում: Ուրիշները հավատարմորեն ծառայում են Աստծուն գործարար դաշտում, և այսպես շարունակ: Ամենայն հավանականությամբ՝ այդ մարդիկ երբեք հրավեր չեն ստանա այս հաղորդմանը, բայց նրանցից շատերը կկանգնեն Երկնքի առաջին շարքերում, որովհետև նրանք հնազանդ են այն գործի մեջ, որի համար կանչված են եղել, և նրանք արել են դա մաքուր դրդապատճառներով:

Ես շարունակեցի.

– Ինչ վերաբերում է ինձ, Աստված կանչել է՝ կատարելու հատուկ աշխատանք Նրա համար, և այն հպվել է բազմաթիվ մարդկանց: Ահա թե ինչու եք դուք հրավիրել ինձ այս հաղորդմանը: Այնուամենայնիվ, ես ոչինչ չեմ կարող ավելացնել այն ամենին, ինչի համար կանչված եմ: Ես չեմ կարող ընդլայնել, բարելավել կամ ավելի շատ տարածել այս աշ-

խատանքը իմ կարողությամբ: Միակ բանը, որը կարող եմ անել, ամեն ինչ խառնաշփոթի վերածելն է, և դա երկյուղ է առաջացնում ինձանում:

Մեր հարցազրույցն անմիջապես հանդիսավոր դարձավ: Հաղորդավարը, ով նույնպես միջազգային ծառայության ղեկավար էր, հասկացավ իմ խոսքերը և փոխեց հարցազրույցի ուղղությունը՝ կրկին անդրադառնալով մարդկանց ծառայելուն:

Այս խոսքերը վերաբերում են յուրաքանչյուրին: Միգուցե դուք կանչված եք՝ լինելու կին և մայր, ծառայելու ձեր տեղական եկեղեցու մանկական բաժնում և բարեխոսելու ձեր աղոթքի սենյակում: Եթե հավատարմորեն անեք դա մինչև վերջ, դուք մեծ վարձատրություն կստանաք ձեր հնազանդության համար: Միգուցե դուք կանչված եք՝ լինելու ձեր եկեղեցու բանտերի ծառայության մեջ, հպվելու մարդկանց գործարար բնագավառում և մեծ նվիրատվություններ կատարելու ծառայության գործի համար: Եթե հավատարմորեն անեք դա մինչև վերջ և կատարեք ձեր ծառայությունը սրտանց՝ ինչպես Տիրոջ համար, դուք կվարձատրվեք նույն կերպով, ինչպես այն ավետարանիչը, ով փրկության է բերել հոծ բազմության:

Կարելի է անթիվ նման օրինակներ բերել: Անձամբ ես հավատում եմ, որ Երկնքի առաջին շարքերում մենք կտեսնենք բազմաթիվ մայրերի, գործարար մարդկանց, հասարակ աշխատավորների և այլոց, ովքեր Տիրոջից կստանան մեծագույն վարձատրությունները:

Աստծո բանակն այս երկրի վրա

Հիսուս Քրիստոսի եկեղեցին՝ Աստծո բանակն է այս երկրի վրա: Բոլորս կստանանք դիրքեր և պարգևներ՝ մեր առաքելությունը կատարելու համար: Տարիներ առաջ Տերն արթնացրեց կնոջս և մի մեծ բանակ ցույց տվեց նրան Հոգու մեջ: Գիշերվա ժամը չորսն էր, բայց նա անմիջապես արթնացրեց ինձ, որպեսզի պատմեր, թե ինչ էր տեսել տեսիլքով: «Ձո՛ն,– ասաց նա,– դա ռազմական միավորում էր, որտեղ ամեն մեկը գիտեր իր զինվորական կոչումը, դիրքը և պարտականությունները: Նրանք քայլում էին գերազանց կարգով, և բոլոր պաշտոնների մեջ բաց տեղեր կային, որոնք, ինչպես տեսա, համալրվում էին նոր մարդկանցով: Ես տեսա, որ ես և դու տեղափոխվեցինք դեպի մեր ծառայության դիրքերը: Կարիք չկար, որ ինչ-որ մեկը նայեր մյուսին՝ հասկանալու համար, թե ինչ ուղղությամբ է պետք քայլել: Բոլորը կատարյալ միաբանության մեջ էին, որովհետև նրանց հայացքը Տիրոջ վրա էր»:

Նա շարունակեց՝ ասելով այնպիսի բան, ինչը գրավեց իմ ուշադրությունը. «Ոչ ոք չէր ցանկանում մյուսի դիրքը: Բոլորը գոհ էին՝ ծառայելով այն վայրում, որը Տերն ստեղծել էր իրենց համար»:

Դուք հասկացա՞ք սա: Ոչ ոք ամբողջ բանակում չէր նախանձում մյուսի ծառայությանը: Ամեն մեկը գոհ էր և երջանիկ՝ գործելով իր դիրքում:

Մտապահելով սա՝ վերադառնանք մեր անհատական նախագիծ ունեցող տան օրինակին: Հիշե՛ք, թե ինչ է գրված Աստվածաշնչում. «Տունը կշինվի իմաստությամբ» (Առակաց 24.3): Գոյություն ունի երկու տեսակի իմաստություն, որոնցով մենք կարող ենք կառուցել՝ մեկն ի վերուստ է, իսկ մյուսը՝ ոչ:

> «Ո՞վ է ձեզանում իմաստուն և խելացի, թող իր բարի վարքով ցույց տա իր գործերը իմաստության հեզությամբ: Բայց եթե դառը նախանձ և հակառակություն ունեք ձեր սրտերում, մի՛ պարծեցեք և սուտ մի՛ խոսեք ճշմարտության դեմ: Այս իմաստությունը վերևից իջած չէ, այլ՝ երկրավոր, շնչավոր և դիվական: Որովհետև՝ ուր որ նախանձ և կռիվ կա, այնտեղ անկարգություն և ամեն չար բաներ կան» (Հակոբոս 3.13–16):

Անկախ այն բանից, թե ինչ ենք մենք անում, և թե որքան լավ է դա թվում, եթե մեր շարժառիթները լի են նախանձով և եսասիրական ձգտումներով, նշանակում է՝ մենք կառուցում ենք մարմնավոր, ոչ սուրբգրային և դիվային դրդապատճառներով, ինչը ոչ մի դեպքում չի վարձատրվի:

Վեբսթերը սահմանում է նախանձը որպես «դժգոհության և ագահության զգացում՝ կապված մեկ այլ մարդու առավելությունների, հաջողության, ունեցվածքի և այլնի հետ»[1]: Եթե նայենք Աստծո կանչին այս աշխարհի աչքերով, նախանձն անխուսափելի կլինի: Կային քարոզիչներ, ովքեր նախանձում էին Պողոսի կոչմանը: Նա գրում է. «Ճշմարիտ է, որ ոմանք քարոզում են Քրիստոսին՝ ելնելով *նախանձից* և մրցակցությունից, բայց այլ մարդիկ անում են դա բարի կամեցողությունից: Վերջիններն անում են դա սիրով՝ իմանալով, որ ես այստեղ եմ Ավետարանի պաշտպանության համար: Առաջինները քարոզում են Քրիստոսին *եսակենտրոն ձգտումներով»* (Փիլիպեցիների 1.15–17, NIV):

Այդ ծառայողները գոհ չէին այն կոչումից, որն Աստված տվել էր իրենց. նրանք ցանկանում էին ունենալ Պողոսի հաջողությունը: Այդ *նախանձն* առաջացել էր նրանց *եսակենտրոն ձգտումներից:* Ձգտումը՝ ինչ-որ բանի հասնելու ուժգին և եռանդուն ցանկություն է: Երբ մեր ձգտումները եսակենտրոն են, մենք կենտրոնանում ենք ինքներս մեզ վրա, ոչ թե՝ այլ մարդկանց օգտի: Նման դրդապատճառը միայն անկարգություն և վիճաբանություններ է առաջացնում և դուռ է բացում ամեն չար բանի համար:

Աստվածային իմաստությունը, ի տարբերություն եսակենտրոն ձգտումների, բորբոքում է ոչ թե *մեր եսակենտրոն ձգտումները,* այլ բոր-

բոքում է մեզանում *ջերմեռանդություն Աստծո թագավորության հանդեպ:* Այն կառուցում է՝ ըստ Գլխավոր Նախագծողի ուզածի և Նրա սրտի ցանկության: Այս իմաստության մասին գրված է. «Բայց վերին իմաստությունը, նախ և առաջ, սուրբ է, և հետո՝ խաղաղարար, հեզ, հլու, ողորմությամբ և բարի պտուղներով լի, անկողմնասեր, անկեղծ» (Հակոբոս 3.17):

Աստծո իմաստությունը սուրբ է: Այլ կերպ ասած՝ այն երկերեսանի չէ. այն չունի աստվածապաշտության կերպարանք՝ խառնված նախանձով կամ եսասիրական դրդապատճառներով: Աստծո իմաստության շարժառիթը՝ Տիրոջը հավատարիմ լինելը և Նրա առաջադրանքներն ուրախությամբ ընդունելն է: Աստծո իմաստության նպատակն է՝ ոչ թե լինել մեծագույնը, այլ լինել հնազանդ Նրա կանչին: Այն կդրդի ձեզ ցնծալ Աստծո թագավորության առաջխաղացմամբ, անկախ այն բանից՝ դա տեղի է ունենում մե՞ր, թե՞ այլ մարդկանց միջոցով:

Աստվածային իմաստությունը մշտապես կենտրոնանում է այլ մարդկանց օգտի վրա, ոչ թե՝ սեփական: Այն խաղաղարար է, չի վիճաբանում, չի գոռոզանում, չի քննադատում և չի տիրապետում մարդկանց: Դրա հիմնական դրդապատճառն այն է, որ մարդիկ աստվածապաշտությամբ վարվեն և կատարեն իրենց կոչումը: Կան մարդիկ, ովքեր սիրում են ծառայությունը և հանդուրժում են մարդկանց, բայց կան մարդիկ, ովքեր սիրում են մարդկանց և դիտարկում են իրենց ծառայությունը որպես նրանց ծառայելու միջոց: Վերջին տեսակի մարդիկ առաջնորդվում են Աստծո իմաստությամբ:

Աստվածային իմաստության մեկ այլ հատկանիշը *հնազանդությունն* է: Երբ մենք գոհ ենք մեր կոչումից, մենք հնազանդ կլինենք Աստծո անմիջական և լիազորված իշխանությանը: Մենք տեսնում ենք Աստծո տան կառուցման ընդհանուր պատկերը, որը վերահսկում է միայն մեկ Ճարտարապետ, Նախագծող և Շինարար: Նա լիազորել է Իր իշխանությունը, կարողությունները և առաջադրանքները Իր եկեղեցու տարբեր մարդկանց: Դատաստանի գահի առջև մեծ վարձատրություն կստանան նրանք, ովքեր հնազանդ կմնան իրենց առաջնորդներին: Այն հովիվների օգնականները, ովքեր եկեղեցիներ են բաժանել, այն աշխատողները, ովքեր թեև աշխատավարձ են ստացել իրենց ղեկավարներից, բայց կառուցել են իրենց գործը նրանց գործի հիման վրա, և բոլոր այդպիսի մարդիկ ահռելի կորուստ են կրելու դատաստանի ժամանակ, նույնիսկ եթե նրանք մեծ արդյունքների հասած լինեն իրենց ապստամբությամբ:

Թույլ մի՛ տվեք, որ արդյունքները խաբեն ձեզ: Մենք կարող ենք մեծ արդյունքի հասնել, բայց, միևնույն է, անհնազանդ լինել Աստծո իշխա-

նությանը: Հիշե՛ք Մովսեսին: Տերը պատվիրեց նրան խոսել ժայռին, որպեսզի ջուրը հրաշքով բխի: Նա չհնազանդվեց: Փոխարենը՝ բարկությամբ զարկեց ժայռին: Ջուրը, միևնույն է, բխեց և այնքան, որ բավականացրեց երեք միլիոն մարդու անապատում: Մարդիկ միգուցե ասում էին. «Իհա՛րկե, Աստված լսում է Մովսեսին: Ինչպիսի՜ զորություն»:

Այնուամենայնիվ, երբ նրանք խմեցին և վերջացրին, Աստված մի կողմ կանչեց Մովսեսին և ասաց, որ նա չի մտնի Խոստման երկիր՝ իր անհնազանդության պատճառով: Մովսեսն արդյունքների հասավ, այն էլ՝ հրաշագործ արդյունքների: Բայց հաջողության ցուցանիշը ոչ թե արդյունքներն են, այլ՝ հնազանդությունը: Աստվածային իմաստությունն արմատացած է Տիրոջ երկյուղի մեջ, որի համար Աստծո կամքը բարձր է ցանկացած իրավիճակից, երևույթից և մարդուց: Այն մարդիկ, ովքեր ունեն Աստծո երկյուղը, լիարժեք կերպով հնազանդ են Նրա իշխանությանը:

Եկեք վերադառնանք իմ կնոջ տեսիլքին: Նա ասաց ինձ այդ առավոտ. «Ձո՛ն, բոլոր զինվորները ճիշտ նույն դեմքն ունեին»: Այլ կերպ ասած՝ այդ բանակն անդեմ էր: Սա ցույց է տալիս, որ Աստված չունի դիրքեր գերաստղերի համար: Երբ հասկանանք սա, մենք այլևս չենք ցանկանա այլ մարդու դիրքը եկեղեցում և չենք ապստամբի մեր առաջնորդների դեմ՝ ավելի բարձր դիրք ունենալու համար: Մեր առաջխաղացումը կգա ի վերուստ, միայն՝ եթե տնկված մնանք:

Տարբեր մակարդակներ

Ավետարաններում գրված են երկու նմանատիպ առակներ, որոնցից ամեն մեկը պատկերում է այլ ճշմարտություն Դատաստանի գահի վերաբերյալ: Այդ առակներից մեկը տաղանդների մասին է, իսկ մյուսը՝ մնասների: Տաղանդների մասին առակը շեշտադրում է այն ճշմարտությունը, որ բոլոր հավատացյալների կոչումը և պարգևները միևնույն մակարդակի վրա չեն:

> «Որովհետև՝ ինչպես մի մարդ, որ օտար երկիր էր գնում, իր ծառաներին կանչեց և իր ունեցածը նրանց հանձնեց: Եվ մեկին հինգ քանքար տվեց, և մյուսին՝ երկու, և մյուսին՝ մեկ, յուրաքանչյուրին իր կարողության չափով, և շուտով գնաց» (Մատթեոս 25.14,15):

Օտար երկիր գնացող մարդը խորհրդանշում է Հիսուսին, իսկ ծառաները՝ մեզ: Տաղանդը՝ դրամական չափ է, բայց քանի որ մենք առակ ենք դիտարկում, այն, հավանաբար, այլ բան է խորհրդանշում:

Տարբերակներից մեկը, որին ես անձամբ հավատում եմ, այն է, որ տաղանդները խորհրդանշում են մեր կոչման և պարգևների տար-

բեր մակարդակները: Օրինակ՝ որոշ մարդկանց ծառայությունն այնպիսի մակարդակի վրա է, որ նրանք հասնում են ազգերի, մյուսները՝ քաղաքների, իսկ ուրիշները՝ տնային խմբերի որևէ եկեղեցում: Որոշ գրողներ հասնում են միլիոնավոր մարդկանց, մյուսները՝ հազարավորների, իսկ ուրիշները՝ հարյուրավորների: Ինչ-որ մեկը, ով առաջնորդ լինելու պարգև ունի, կարող է հազարավոր անդամներ ունեցող եկեղեցի կառուցել, այնինչ մյուսները կարող են աշխատել միայն միջին կամ փոքր չափ ունեցող եկեղեցիներում: Կան գործարար մարդիկ, որոնց ձեռնարկատիրական կարողությունները թույլ են տալիս կառուցել ընկերություններ, որոնց միջոցով նրանք հարյուր հազարավոր դոլարներ են տրամադրում Աստծո թագավորության համար: Մյուսների ընկերությունները միլիոնավոր դոլարների եկամուտ ունեն, այնինչ ուրիշները կառուցում են մի քանի ընկերություններ, որոնց շնորհիվ կարող են միլիոնների կամ միլիարդների հասնող միջոցներ տրամադրել Աստծո թագավորության համար:

Եկեք վերադառնանք մեր առակին: Ուշադրություն դարձրեք երկու կարևոր պնդումներին: Առաջինը՝ բոլոր ծառաներն ինչ-որ բան ստացան: Նշանակում է՝ եկեղեցում չկա որևէ մարդ, որ կոչում չունենա (նաև՝ դրան ուղեկցող պարգևներ): Երկրորդը՝ կոչումների և պարգևների տարբեր մակարդակները տրվեցին՝ ըստ նրանց կարողության: Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ Աստված է կարողություն տալիս մեզ: Չկա այնպիսի արժեքավոր բան մեր կյանքում, որը մենք չենք ստացել, որովհետև Աստվածաշունչը պնդում է. «Որովհետև ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունես դու, որ չես առել, և եթե առել ես, ինչո՞ւ ես պարծենում չառածի պես» (Ա Կորնթացիների 4.7):

Այս առակում հինգ տաղանդի կոչում և պարգևներ ունեցող մարդը կրկնապատկեց իր մեջ կատարած ներդրումը: Երկու տաղանդ ունեցող մարդն արեց նույնը: Անձամբ ես համոզված եմ հետևյալում. թեև Աստված տվել է Իր պարգևներն ամեն մեկիս, մենք պետք է համագործակցենք այլ մարդկանց հետ, որպեսզի ունենանք այն արդյունքը, որը Նա ցանկանում է:

Այնուամենայնիվ, մեկ տաղանդի կոչում ունեցող մարդը կարող էր համարել, որ իր մեջ ներդրված ավանդն աննշան էր: Նրա կարծիքով՝ իր տերը անազնիվ, անխոհեմ և խիստ էր: Նա կարող էր մտածել. *«Ինչո՞ւ ես ստացա ավելի քիչ, քան մյուսները: Ինչո՞ւ նրանք համազգային կամ համաքաղաքային ազդեցություն ունեն: Ինչո՞ւ նրանք ունեն քարոզելու, երգելու կամ գրելու կարողություն, իսկ ես՝ ոչ: Ինչո՞ւ իմ ընկերությունը չունեցավ այնպիսի աճ, ինչպես մյուսներինը»:* Եվ այսպես

շարունակ: Այնպես որ, նա թաքցրեց իր տաղանդը: Նա չկատարեց իր կոչումը: Նա օգտագործեց իր պարգևն իր համար կամ այնպիսի բնագավառներում, որոնք օգուտ չբերեցին Աստծո թագավորությանը:

Երկար ժամանակ անց այդ ծառաների տերը եկավ՝ նրանց հետ հաշիվ տեսնելու: Առաջին երկուսը, ովքեր կրկնապատկեցին իրենց վստահվածը, վարձատրվեցին նույն գովեստի խոսքերով. «Նրա տերն էլ ասաց նրան. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. Մտի՛ր քո տիրոջ ուրախությունը» (Մատթեոս 25.21): Հինգ տաղանդի կոչում և պարգևներ ունեցող ծառան չստացավ ավելի մեծ գովեստ, քան երկու տաղանդի կոչում և պարգևներ ունեցողը, քանի որ երկուսն էլ հավատարիմ և ջանասեր էին: Սա կրկին հաստատում է, որ Աստված միայն պահանջում է հավատարիմ լինել այն բանում, ինչ Ինքը տվել է մեզ:

Մեկ տաղանդ ունեցող մարդը խստորեն հանդիմանվեց, և նրա տերը պատվիրեց վերցնել նրան վստահվածը և տալ այն երկուսից մեկին: Անհավատարիմ ծառան մեծ կորուստ կրեց, իսկ հավատարիմը ստացավ նույնիսկ ավելին:

Հիշում եմ 1992 թվականը, երբ Աստված պատվիրեց ինձ գիրք գրել: Աղոթքի ժամանակ ես գրեթե ծիծաղեցի անհավատությունից՝ չհավատալով իմ սրտում լսածին: Ես տանել չէի կարողանում գրավոր անգլերենը: Եթե ինչ-որ մեկն ասեր, որ ես պետք է գիրք գրեմ, այնպես կծիծաղեի, որ նա շփոթված կգնար:

Այնուամենայնիվ, տասն ամիս անց երկու կին եկան ինձ մոտ երկու շաբաթվա տարբերությամբ և տվեցին միևնույն մարգարեական խոսքը. «Ձո՛ն, եթե դու չգրես այն, ինչ Աստված տվել է քեզ, Նա կտա այդ ուղերձը մեկ այլ մարդու, իսկ դու կդատվես»: Ես դող զգացի և հավատքով քայլ արեցի, իսկ մնացածն արդեն անցյալում է: Եթե ես չհնազանդվեի, ինչ-որ մեկը կգրեր այս ուղերձները, իսկ ես կկորցնեի ինձ վստահված տաղանդը:

Բազմապատկել մեզ տրվածը

Մենք լայնորեն քննարկեցինք այն, որ դուք ոչինչ չեք կարող ավելացնել ձեր կոչմանը կամ պարգևներին: Այժմ ուշադրություն դարձնենք այն բանին, որ ամեն հավատացյալ պետք է *բազմապատկի* իրեն տրվածը: Այս ճշմարտությունը հստակ երևում է մնասների մասին առակում, որը թեև նման է տաղանդների մասին առակին, բայց մեծապես տարբերվում է դրանից: Հիսուսն ասում է.

«Մի ազնվական գնաց հեռու երկիր, որ թագավորություն առնի իր համար և ետ դառնա: Եվ իր տասը ծառաներին կանչեց, տասը մնաս տվեց նրանց և ասաց. «Բանեցրե՛ք՝ մինչև որ գամ»» (Ղուկաս 19.12,13):

Մնասը, ինչպես և տաղանդը, դրամական չափ է: Բայց այս առակում յուրաքանչյուրն ստացավ մեկական մնաս, այսինքն՝ նույն չափը: Այդ իսկ պատճառով, մնասները չեն խորհրդանշում մեր կոչման և պարգևների մակարդակը, ինչպես տաղանդները: Մնասը խորհրդանշում է Աստծո Խոսքի ճշմարտությունները, մեր հավատքի հիմքերը, Աստծո սերը՝ սփռված մեր սրտերում, և այն օրհնությունները, որոնք տրվում են ամեն հավատացյալի՝ Աստծո հետ ուխտ ունենալու պատճառով: Ամեն մարդ ստացել է նույն չափը. ոչ ոք լրացուցիչ չափ չի ստացել՝ սկզբի համար:

Այս առակն այն մասին է, թե ինչ ունի յուրաքանչյուր հավատացյալ Քրիստոսի մեջ: Աստվածաշնչում գրված է. «Ուրեմն, ոչ ոք չպարծենա մարդկանցով, որովհետև ամեն բան ձերն է» (Ա Կորնթացիների 3.21,22): Եվ կրկին՝ «Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնությամբ երկնավոր բաներում Քրիստոսով» (Եփեսացիների 1.3): Այս օրհնությունները մերն են Քրիստոսում, բայց դրանք յուրացվում և դրսևորվում են այս երկրում մեր հավատքի միջոցով: Եվ դրանք բազմապատկվում են մեր հնազանդությամբ, աղոթքներով և զոհաբերություններով: Ահա թե ինչու ազնվականը, ով խորհրդանշում է Հիսուսին, ասում է իր ծառաներին (ովքեր խորհրդանշում են մեզ). «Բանեցրե՛ք՝ մինչև որ գամ»: Մենք պետք է վերցնենք այն, ինչ տրվել է մեզ, և *բազմապատկենք* դա Աստծո փառքի համար:

Տեսնենք, թե ինչ արդյունքների հասան այդ ծառաները.

«Եվ եղավ, որ նա թագավորությունն առած ետ դառավ և ասաց, որ կանչեն այն ծառաներին, որոնց տվել էր արծաթը, որ իմանա, թե ով ինչ շահեց: Եվ առաջինն եկավ ու ասաց. «Տե՛ր, քո մնասը շահեց տասը մնաս»: Եվ նրան ասաց. «Լավ, բարի ծառա, որովհետև քչում հավատարիմ եղար, տասը քաղաքի վրա իշխանությո՛ւն ունեցիր»: Եվ երկրորդն եկավ ու ասաց. «Տե՛ր, քո մնասը հինգ մնաս շահեց»: Նրան էլ ասաց. «Դու էլ հինգ քաղաքի վրա եղիր»: Եվ ուրիշն էլ եկավ ու ասաց. «Տե՛ր, ահա քո մնասը, որ վարշամակի մեջ պատած պահում էի»» (Ղուկաս 19.15–20):

Ազնվականը խստորեն հանդիմանեց վերջին մարդուն, և այն մնասը, որը նա ուներ, վերցվեց և տրվեց նրան, ով մեկ մնասից տասն էր շահել: Տերն ասաց. «Սրա համար ասում եմ ձեզ, թե ամեն ունեցողին կտրվի, և չունեցողից՝ *ինչ էլ որ ունի, վեր կառնվի»* (խոսք 26):

Այս առակում Հիսուսը խոսում է տասը ծառաներից միայն երեքի հետ: Կրկին, այս առակի կարևոր տարբերությունն այն էր, որ ամեն մեկն սկսեց նույն չափով, բայց մեկը տասնապատիկ ավելացրեց իր ունեցածը, մյուսը՝ հնգապատիկ, իսկ երրորդն ընդհանրապես ոչինչ չավելացրեց: Մենք նույնպես տեսնում ենք, որ վարձատրությունները տարբերվում են ըստ այն բանի, թե որքան արդյունավետ են ծառաները: Նրանց հաջողությունը որոշեց, թե քանի քաղաքի վրա էին իշխելու:

Այն, թե ինչպես ենք մենք բազմապատկում մեզ ավանդվածը, որոշելու է, թե որքան իշխանություն է մեզ վստահվելու Հազարամյա թագավորության ընթացքում, ինչպես նաև՝ նոր երկրի և նոր երկնքի ժամանակ: Հավատարիմները կիշխեն Քրիստոսի հետ, բայց բոլորը չեն ունենա նույն իշխանությունը: Մեր աշխատասիրությունն այստեղ որոշելու է, թե ինչ չափով ենք մենք իշխելու Նրա հետ հավիտենության մեջ: Ամեն մեկս սկսել ենք նույն կերպով՝ մեկական մնասով. այնպես որ, հավատարիմ կինը և մայրը, ով ջանասիրաբար ծառայում է եկեղեցում, կարող է պարգևատրվել միևնույն չափով, ինչպես ավետարանիչը, ով Քրիստոսին է առաջնորդել հարյուր հազարավոր մարդկանց:

Այս առակը ցույց է տալիս, որ ամեն մեկը կարող է շատ անգամ բազմապատկել իր մնասը: Մեր անձնական կյանքում կարող ենք տարածել կամ կառուցել Աստծո թագավորությունն այնքան շատ կամ քիչ, որքան ցանկանանք. ինքներս ենք որոշում դա: Իրականում, որոշ հարցերում մենք լիովին անսահմանափակ ենք: Միգուցե դուք չընդունեք սա, բայց թույլ տվեք ցույց տալ սա օրինակների միջոցով: Ես կարող եմ շատ օրինակներ բերել, բայց ընդամենը մի քանիսը կարող են բացել ձեր սրտի դուռն այս հոգևոր սկզբունքի համար: Այնուամենայնիվ, մինչև դրանց անցնելը նախ՝ կարդանք Պետրոս առաքյալի խոսքերը.

> «Շնորհքը... շատանա ձեզ վրա Աստծո և մեր Տեր Հիսուսի գիտությամբ: Ինչպես որ Նրա աստվածային զորությունը շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է...» (Բ Պետրոս 1.2,3):

Շնորհքը կարող է *շատանալ* կամ *բազմապատկվել* մեր կյանքում: Հակոբոսը գրում է. «Բայց Նա ավելի ու ավելի շնորհք է տալիս մեզ» (Հակոբոս 4.6, AMP): Միայն Նրա շնորհքով մենք կարող ենք այնպիսի գործեր անել, որոնք արժեք կունենան Աստծո թագավորության մեջ: Այս կարողությունն ավելանում է Աստծուն մտերմորեն ճանաչելու շնորհիվ: Ահա թե ինչու ամեն հավատացյալ պետք է որակյալ ժամանակ անցկացնի Աստծո հետ: Մենք պետք է աղոթենք, կարդանք Աստծո Խոսքը և Աստծուց ոգեշնչված գրքեր, լսենք օծված քարոզներ, և այդ

ընթացքում նայենք ու լսենք Սուրբ Հոգուն՝ սպասելով Նրա հայտնությանը: Երբ այսպես վարվենք, շնորհքը կավելանա մեր կյանքում, և մենք ավելի արդյունավետ կդառնանք:

Ես բացահայտել եմ, որ որքան ավելի եմ ճանաչում Աստծուն և Նրա ճանապարհները, այնքան ավելի արդյունավետ եմ դառնում: Եթե բութ սայրով կացին ունենամ, ինձնից մի ամբողջ օր կպահանջվի ծառ կտրելու համար: Այնուամենայնիվ, եթե ես սրեմ այն, կարող եմ օրական հինգ ծառ կտրել՝ նույնքան ուժ գործադրելով: Ահա թե ինչ է տեղի ունենում, երբ շնորհքը շատանում կամ բազմապատկվում է մեր կյանքում: Մենք ավելի արդյունավետ ենք դառնում:

Ես հիշում եմ, որ տարիներ առաջ մենք վկայում էինք համասեռամոլների շքերթի մասնակիցներին Տեխաս նահանգի Դալլաս քաղաքում: Երկու ժամ շարունակ ես այդ կորած մարդկանց հետ խոսում էի Հիսուսի մասին, իսկ նրանք այնպես էին նայում ինձ, կարծես ես այլ աշխարհից լինեի: Ոմանք գրեթե իմ խոսելուն զուգահեռ պատասխանում էին ինձ աստվածաշնչյան հատվածներով: Ես զգում էի, որ առջևումս ասես անանցանելի պատ լիներ: Դա նման էր բետոնի վրա սերմեր գցելուն:

Հանկարծ Տերը շշնջաց. «Նայի՛ր Ինձ, և Ես ցույց կտամ, թե ինչ անես»: Հաջորդ երեսուն րոպեի ընթացքում Աստված առաջնորդեց ինձ մի քանի հոգու մոտ և խոսքեր տվեց, որ խոսեի նրանց հետ: Այս անգամ մարդիկ ընդունում էին իմ ասածները, և երեք տղամարդ իրենց կյանքը հանձնեցին Հիսուս Քրիստոսին: Երբ ես սկսեցի հետևել Սուրբ Հոգուն և լսել այն, ինչ Նա խոսում էր իմ սրտում, իմ արդյունավետ լինելու կարողությունն ավելացավ:

Ես տեսել եմ սա իմ կյանքի ամեն բնագավառում: Աստծո Խոսքի մեջ աճ ունենալուն զուգահեռ կարողանում էի ավելին անել՝ ավելի կարճ ժամանակում: Ես գտա ճշմարտության ճանապարհներ, որոնք խնայեցին ժամեր, օրեր և նույնիսկ ամիսներ ինձ համար: Աղոթքներն ավելի զորավոր են դառնում, Աստծո ներկայությունն սկսում է ավելի ուժգին դրսևորվել, և ես կարողանում եմ ավելի արդյունավետ կերպով հպվել մարդկանց կյանքերին: Աստվածաշունչը խոստանում է սա.

> «Տիրոջ երկյուղը՝ իմաստության սկիզբն է: Սուրբին ճանաչելը հանճար է տալիս: Իմաստությունը կշատացնի քո օրերը և կավելացնի տարիներ քո կյանքին» (Առակաց 9.10,11, NLT):

Այս հատվածում երկու խոստում կա. ավելացած տարիներ, այսինքն՝ երկար կյանք և շատացած օրեր: Երկրորդ խոստումը նույնը չէ, ինչ ավելացած տարիները, քանի որ դա ոչ անհրաժեշտ կրկնութ-

յուն կլիներ: Այն նշանակում է՝ նույն ժամանակահատվածում ավելին հասցնելու կարողություն: Մեկ այլ հատվածում այս նույն հատկանիշը կոչվում է «երկար օրեր». «Որովհետև նրանք երկար օրեր և կենդանության տարիներ և խաղաղություն կշատացնեն քեզ համար» (Առակաց 3.2): Այս խոսքի հեղինակը գրում է Աստծո Խոսքին ականջ դնելու մասին, ինչպես և Պետրոսը՝ վերևում բերված սուրբգրային հատվածներից մեկում: Ուշադրություն դարձրեք, որ մարդուն տրվում են ոչ միայն երկար տարիներ, այլև երկար օրեր: Աստծուն լսելը և հետևելը ավելացնում է մեր ժամանակը:

Բազմապատկում՝ զոհաբերելու միջոցով

Նա, ով մտերմորեն ճանաչում է Աստծուն, ուրախ և առատաձեռն զոհաբերող է դառնում, քանի որ Նա մեծ պարգևներ տվող Աստված է: Նա տվեց մեծագույն պարգևը Իր Որդուն: Աստծո համար Հիսուսից թանկ ոչինչ չկա: Տերը երբեք անկարևոր և անարժեք նվերներ չի տալիս: Նա տվեց Հիսուսին, որովհետև սպասում էր մեծ հունձքի՝ բազմաթիվ որդիների և դուստրերի, որոնք մուտք էին գործելու Իր ընտանիք, և Նրա սպասված հունձքը դեռ հավաքվում է:

Հավատքով զոհաբերելը՝ մեր ունեցածը բազմապատկելու ևս մեկ անխափան միջոց է: Մեր զոհաբերությունները բազմապատկում են այն, ինչ պատկանում է մեզ, և հավիտենական ազդեցություն են թողնում մարդկանց վրա, ինչպես և այն դեպքում, երբ Հայրը զոհաբերեց Հիսուսին մեզ համար: Հիսուսը հատուկ ասում է մեզ. «Ասում եմ ձեզ՝ օգտագործե՛ք այս աշխարհի հարստությունը, որ ընկերներ շահեք ձեզ համար, որպեսզի երբ այն այլևս չլինի, դուք ընդունվեք երկնային բնակարանների մեջ» (Ղուկաս 16.9, NIV): Եթե մենք պատշաճ կերպով օգտագործենք մեր փողը, այն կազդի մեր կյանքի որակի վրա Երկնքում և Նոր Երուսաղեմում՝ այն ժամանակ, երբ այդ փողն այլևս չի լինի: «Ինչպես գրված է՝ Նա [բարերարը] ցրում է. Նա տալիս է աղքատներին. Նրա արդար, բարի, մեծահոգի և բարերար գործերը կշարունակվեն և կմնան հավիտյան» (Բ Կորնթացիների 9.9, AMP):

Մարդը կարող է աղքատ լինել ոչ միայն ֆինանսապես, այլև՝ հոգով: Ինչ-որ մեկը կարող է միլիոնավոր դոլարներ ունենալ, բայց հոգով աղքատ լինել: Դրա օրինակներից մեկը Զաքեոսն է: Հիսուսն ասաց՝ նկարագրելով Իր առաքելությունը. «Տիրոջ Հոգին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ: Նա Ինձ ուղարկել է *աղքատներին* ավետարանելու...» (Ղուկաս 4.18): Ավելի ուշ Նա մի քաղաք է մտնում, գտնում է այդտեղ

ապրող ամենահարուստ մարդուն և դիմում է նրան մեծ բազմության առջև՝ ասելով. «Այսօր Ես պետք է հյուր լինեմ քո տանը» (Ղուկաս 19.5, NLT): Թեև Զաքեոսն այդ քաղաքի ամենահարուստ մարդն էր, նա, ինչպես պարզվեց, ամենաաղքատն էր: Այլ կերպ ասած՝ նա մյուսներից ավելի շատ էր գիտակցում, թե որքան ուներ Աստծո կարիքը: Հիսուսը ծառայեց շատ հարուստ մարդկանց, ովքեր լավ գիտակցում էին, որ Աստծո Խոսքի կարիքն ունեին:

Ծառայությունները բարձրանում են, որպեսզի կատարեն Հիսուսի գործը՝ ազդարարեն և սովորեցնեն Աստծո Խոսքն աղքատներին: Աստծո գործին ֆինանսներ նվիրաբերելով՝ մենք ցանում ենք աղքատների կյանքի մեջ, և մեր գործերը կմնան հավիտյան: Քանի դեռ դուք սերմ ունեք,– իսկ Աստված ասում է, որ կտա ձեզ սերմ,– դուք կարող եք բազմապատկել ձեր ջանքերը՝ Աստծո թագավորությունը կառուցելու համար:

Ինչպե՞ս է ձեր պարգևը բազմապատկվում: Եթե դուք, օրինակ, խնձորի սերմ ցանեք, մեկ օր խնձորների հունձք կունենաք: Բայց ավելի կարևորն այն է, որ բոլոր այդ խնձորների մեջ նոր սերմեր կլինեն: Եթե այդ սերմերը ցանվեն, դրանք ավելի մեծ հունձք կտան, և այսպես շարունակ: Նույնը ճշմարիտ է մեր ֆինանսների դեպքում: Տեսեք, թե ինչ է Պողոս առաքյալը գրում կորնթացիներին՝ նրանց զոհաբերությունների մասին.

> «Որովհետև սա եմ ասում, թե՝ խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի, և առատությամբ սերմողն առատությամբ էլ կհնձի: Ամեն մեկը՝ ինչպես որ սրտի հոժարություն կա, ոչ թե տրտմությամբ կամ հարկադրանքով, որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին» (Բ Կորնթացիների 9.6,7):

Մեր բազմապատկված հունձքն ուղիղ համեմատական կլինի մեր ցանքի չափին: Ուշադրություն դարձրեք, որ Աստված չի որոշում մեր ցանքը. մենք ենք որոշում, թե որքան ենք ցանկանում տալ: Եթե մենք, հավատքից և սիրուց դրդված, որոշենք առատաձեռն լինել, մեր նվիրատվությունները մեծապես կավելանան. «Նա, Ով սերմ է մատակարարում ցանողին և հաց՝ կերակուրի համար, նույնպես *կմատակարարի* և *կավելացնի* ձեր *սերմացուների պաշարը* և կշատացնի *ձեր արդարության հունձքը»* (Բ Կորնթացիների 9.10, NIV):

Տերը կմեծացնի մեր սերմացուների պաշարը՝ նման խնձորների օրինակին, որը քիչ առաջ բերեցի: Եթե մենք ցանենք այն, ինչ ունենք, ավելի շատ սերմ կստանանք: Սա կշարունակվի այնքան, մինչև որ մենք այնպիսի սերմացուների պաշար ունենանք, որ կարողանանք մեծապես օրհնել մարդկանց:

Մեր զոհաբերությունների միջոցով Աստված կշատացնի *մեր արդարության հունձքը:* Ահա թե ինչն է իսկապես ոգեշնչող: Սա նշանակում է, որ մեր հավիտենական վարձատրությունների հունձքը կավելանա. մենք վարձատրություն կստանանք նաև այն մարդկանց համար, որոնց հպվել ենք մեր զոհաբերություններով: Այնպես որ, ըստ էության, մենք բազմապատկում ենք մեր մնասները՝ նման մեր առակի ծառաներին:

Գործընկերություն

Երբ օգնություն ենք տրամադրում մարդկանց, հատկապես՝ կարիքավորներին, ովքեր չեն կարող հատուցել մեզ, մենք վարձատրություն ենք ստանում և՛ այս կյանքում, և՛ դատաստանի ժամանակ: Բացի այդ, մենք կարող ենք բազմապատկել Աստծո թագավորությունը կառուցելու մեր ջանքերը՝ *գործընկեր դառնալով* Ավետարանի տարածմանը: Ահա թե ինչ է Պողոսը գրում Փիլիպեի հավատացյալներին, ովքեր ֆինանսապես աջակցում էին իր ծառայությանը.

> «Բայց ճիշտ և գովեստի արժանի և վեհանձն է ձեր կողմից իմ կարիքների համար միջոցներ նվիրաբերելը և ինձ հետ իմ դժվարությունները կիսելը: Եվ դուք՝ փիլիպեցիներդ, ինքներդ լավ գիտեք, որ իմ Ավետարանի ծառայության վաղ օրերին, երբ գնացի Մակեդոնիայից, ոչ մի եկեղեցի (համայնք) չէր համագործակցում ինձ հետ և չէր բացում [դեբետային և կրեդիտային] հաշիվ՝ տալու և ստանալու համար, բացի միայն ձեզնից: Որովհետև նույնիսկ Թեսաղոնիկեում դուք ուղարկեցիք [ինձ աջակցություն] իմ կարիքների համար ոչ միայն մեկ անգամ, այլև երկրորդ անգամ» (Փիլիպեցիների 4.14–16, AMP):

Պողոսը խոսում է այն մասին, որ փիլիպեցի հավատացյալներն իր ծառայության *գործընկերներն* էին: Գործընկերությունը սահմանվում է որպես «հարաբերություն անհատների կամ խմբերի միջև, որը բնութագրվում է համագործակցությամբ և փոխադարձ պարտավորություններով՝ որոշակի նպատակի հասնելու համար»[2]: Առողջ, Աստծուց տրված գործընկերությունը մշտապես թույլ է տալիս դրանում ներգրավված անձանց անել ավելին, քան այն, ինչն ինքնուրույն անելու մասին նրանք չէին էլ կարող երազել:

Ինչպես ասացի, Հիսուսը հանձնարարեց մեզ գնալ ամբողջ աշխարհով և *աշակերտել* բոլոր ազգերին, ոչ թե պարզապես դարձի բերել նրանց: Այս հանձնարարությունը վերաբերում է ամեն հավատացյալի: Այնուամենայնիվ, եթե բոլոր հավատացյալները լրիվ ժամանակով միսիոներական դաշտ գնային, որպեսզի կատարեին այս հանձնարա-

ությունը, ինչպե՞ս էր Ավետարանը ֆինանսավորվելու: (Կրկին՝ ահա այն պատճառներից մեկը, թե ինչու է Աստված տարբեր կոչումներ և պարգևներ տալիս ամեն մարդու): Տերը ոչ մի դեպքում չէր նախատեսել, որ ծառայողներն ստանան իրենց անհրաժեշտ դրամական միջոցները հրեշտակների միջնորդությամբ կամ երկնքից ընկնող փողի միջոցով: Փոխարենը՝ Նա զոհաբերելու արտոնություն է տվել Իր մարմնին՝ ստեղծելով գործընկերությունը:

Աստված կանչել է որոշ մարդկանց և օժտել է նրանց ծառայության պարգևներով՝ բազմությունների հասնելու համար: Ինչպես արդեն նշեցինք, Նա տալիս է հատուկ պարգևներ, կարողություն և օծություն՝ այս նպատակն իրականացնելու համար: Նա եկեղեցում չի տվել այս առաջադրանքը բոլորին, այլ՝ որոշ մարդկանց (տե՛ս Եփես. 4.11): Նա Իր ծրագրի մեկ այլ անբաժանելի մաս հանձնարարել և վստահել է եկեղեցու մնացած մարդկանց: Նրանք պետք է աշխատեն, եկամուտ կամ աշխատավարձ ստանան և Ավետարանով հասնեն իրենց ազդեցության շրջանակում գտնվող մարդկանց: Այնուամենայնիվ, եթե դուք աշխատում եք լրիվ ժամանակով, ինչպե՞ս կարող եք բազմությունների հասնել: Պատասխանը՝ գործընկերությունն է:

Եթե դուք ունենայիք այնպիսի ապրանք, որը կարող էր փոխել մարդկանց կյանքերը, բայց ի վիճակի լինեիք ամեն ամիս պատրաստել ընդամենը երկու օրինակ, անհնարին կլիներ հասցնել այն ձեր քաղաքին, ձեր երկրին կամ ամբողջ աշխարհին: Այնուամենայնիվ, եթե լիներ մի ընկերություն, որը հատուկ սարքավորումներ ունենար՝ այդ ապրանքից ամսական հազարավոր օրինակներ արտադրելու համար, դուք կդառնայիք նրանց գործընկերը, որպեսզի կատարեիք ձեր առաջադրանքը: Այդ դեպքում դուք պարզապես չէիք հասնի ամսական երկու մարդու (անձնական ավետարանչության և աշակերտելու օրինակը), այլ՝ հազարավոր մարդկանց, որոնց կհասներ այդ ընկերությունը: Դուք արդյունավետ կերպով կբազմապատկեիք ձեր տաղանդները և ջանքերը՝ հասարակ գործընկերության միջոցով:

Պողոսի խոսքը՝ ուղղված փիլիպեցիներին, վերաբերում է հենց այս սկզբունքին: Նա շարունակում է. «Ես ոչ թե ձգտում կամ սպասում եմ [ձեր] պարգևին, այլ ձգտում և սպասում եմ այն *պտղին, որը հաշվեգրվում է ձեզ* [օրհնության հունձքին, որը կուտակվում է ձեր հաշվին]» (Փիլիպեցիների 4.17, AMP):

Ուշադրություն դարձրեք «այն պտղին, որը հաշվեգրվում է ձեզ» արտահայտությանը: Փիլիպեցի հավատացյալները բազմապատկում էին մարդկանց հասնելու և սովորեցնելու իրենց ջանքերը. նրանք դրամական

միջոցներ էին ցանում Պողոսի կյանքի և ծառայության մեջ՝ որպես նրա գործընկերներ: Նրանք տալիս էին ժամանակավորը՝ վերածելով այն հավիտենականի, և արդյունքում բազմապատկվում էր թե՛ մեկը, թե՛ մյուսը:

Պողոսը գրում է, որ գործընկեր դառնալով՝ դուք կունենաք «օրհնության հունձք, որը կուտակվում է ձեր հաշվին»: Խոսքը ձեր երկնային հաշվի մասին է: Երբ դուք կանգնեք Քրիստոսի ատյանի առջև, դուք կվարձատրվեք ոչ միայն այն մարդկանց համար, որոնց անձամբ հպվել եք ձեր աշխատավայրում, բնակավայրում, ուսումնական հաստատությունում և այլուր, այլև հազարավոր կամ միլիոնավոր մարդկանց, որոնց դուք հասել եք և աշակերտել եք Աստծուց կարգված ծառայությունների գործընկեր լինելով: Ահա թե ինչու է Աստվածաշունչը կոչ անում մեզ. «Տվե՛ք առատաձեռնությամբ, որովհետև ձեր նվերները հետագայում կվերադառնան ձեզ: Բաժանե՛ք ձեր նվերները շատերին» (Ժողովող 11.1,2, NLT):

Եթե դուք հետևողականորեն նվիրատվություններ կատարեք Աստծուց նշանակված ծառայություններին (որոնց թվում է նաև ձեր տեղական եկեղեցին), դուք կհպվեք մարդկանց նրանց գործունեության միջոցով: Դուք բաժին կունենաք նրանց բոլոր գործերից, քանի որ նրանց գործընկերն եք: Ահա մի ոգեշնչող լուր. որքան շատ ներդնեք, այնքան մեծ կլինի ձեր վարձատրությունը:

Իմացե՛ք, որ Աստված գնահատում է ձեր նվիրատվությունը ոչ այնքան գումարի չափով, որքան այն հավատարմորեն ցանելով: Հայր Աստված փնտրում է սրտից բխող նվիրատվություններ: Նա սիրում և օրհնում է այդ սրտի դիրքը, ոչ թե պարզապես գումարի չափը: Օրինակ՝ ինչ-որ մեկը կարող է հավատարիմ լինել ամսական երեսուն դոլար նվիրաբերելու մեջ, բայց այդ մարդու համար դա իսկապես զգալի գումար է: Աստված կդիտարկի այդ նվիրատվությունը ոչ թե ուղղակի որպես դրամական չափ, որովհետև այն տրված է նվիրաբերողի անձնական կարիքները հոգալու հաշվին: Միգուցե մեկ այլ մարդ ամսական հազար դոլար նվիրաբերի, բայց այդ միջոցները տրվեն նրա ավելցուկից. այդ նվիրատվությունն զգալի գումար չի լինի նրա համար, և նա ոչինչ չի զոհի՝ դա անելով: Երկուսն էլ հրաշալի են և թանկ են Աստծո համար, բայց Աստված համարում է, որ ավելի շատ տալիս է երեսուն դոլար նվիրաբերողը: Այս տեսանկյունը նկարագրվում է իր երկու լուման զոհաբերող այրի կնոջ օրինակով (տե՛ս Մարկ. 12.41–44):

Մենք նույնպես պետք է մտապահենք, որ Աստված բազմապատկում է մեր նվիրատվություններն այս երկրային կյանքում, ինչը թույլ է տալիս մեզ ավելի մեծ նվիրատվություններ անել: Աստվածաշունչը պնդում է. «Կան մարդիկ, ովքեր [առատաձեռն կերպով] ցրում են, բայց

է՛լ ավելի շատ են ունենում» (Առակաց 11.24, AMP): Մտածե՛ք այս մասին: Ձեր ներդրումները շատանում են ոչ միայն հավիտենության մեջ, այլև՝ բնական աշխարհում, և սրանով դուք ավելի շատ մարդկանց հասնելու հնարավորություն եք ունենում: Սա մի շրջան է, որը շարունակ վերսկսվում և ընդլայնվում է:

Քսաներկու տարի առաջ գործարար մարդկանց մի խումբ, որոնց ես ճանաչում եմ, միաբանվեցին և որոշում կայացրին նվիրել իրենց եկամուտների որոշակի մասն Ավետարանի տարածմանը: Նրանց սկիզբը փոքր էր, բայց ամեն տարի նրանց ներդրումներն ավելանում էին: Նրանք կայուն մնացին իրենց նվիրատվությունների և համագործակցության մեջ: Նրանց նվիրատվություններն այնքան մեծացան, որ առաջին տասը տարվա ընթացքում դրանք կազմում էին ավելի քան 120 միլիոն դոլար: Նրանք վերցրել էին իրենց մնասը և բազմապատկել էին այն Աստծո թագավորության համար: Նրանց վարձատրությունը մեծ կլինի:

Եկեղեցում կան բազմաթիվ գործարար մարդիկ, որոնց ձեռնարկությունները մեծ հաջողություն ունեն. այնուամենայնիվ, շատերն Աստծո թագավորության համար տալիս են միայն իրենց եկամուտների չնչին մասը: Թեև, հասարակության կարծիքով, նրանք շատ հաջողակ են, ինչպե՞ս Տերը կվերաբերվի նրանց կյանքին: Նույնիսկ եթե նրանք միլիոնավոր դոլարներ վաստակած լինեն, մի՞թե չեն դատվելու՝ ինչպես այն մարդը, ով թաքցրեց իր մնասը: Նրանք չբազմապատկեցին այն, ինչ տրվել էր իրենց, Աստծո թագավորության համար: Այս կերպով ապրող մարդիկ *չեն շարժվում հավիտենությամբ:*

Վերջերս գոլֆ էի խաղում մի գործարարի հետ, ով երբեմն նվիրատվություններ էր անում մեր ծառայությանը: Խաղից հետո նա տարավ ինձ իմ հյուրանոցը: Ճանապարհին նա ասաց.

– Ձո՛ն, ես գրեթե հիսուն տարեկան եմ: Ես շատ եմ աշխատել, որպեսզի իմ ընկերության շրջանառությունը հասցնեմ ինը միլիոն դոլարի: Ամեն ինչ լավ է, իմ ընկերությունը կանոնավոր գործում է, կինս և երեխաներս ապահովված են իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Ինչո՞ւ ես պետք է օրնիբուն աշխատեմ հաջորդ տասը տարվա ընթացքում, որպեսզի հասցնեմ իմ ձեռնարկության շրջանառությունը երեսունից քառասուն միլիոն դոլարի:

Ես հասկացա, որ նա չէր համարում իրեն Աստծո տան կառուցման կարևոր մասը: Նա դիտարկում էր ինձ որպես կարևոր անձնավորություն Աստծո թագավորության մեջ, սակայն նա չէր տեսնում իր կարևորությունը:

Ես արագորեն պատասխանեցի նրան մեկ այլ հարցով.

– Պատկերացրու, որ ես ասեի քեզ. «Ես շատ եմ աշխատել. գրել եմ տասնյոթ գիրք, ճանապարհորդել եմ տասնմեկ միլիոն կիլոմետր և քարոզել եմ հազարավոր ուղերձներ: Իմ կյանքն ապահով է, իմ ծառայությունը կանոնավոր գործում է, կինս և երեխաներս ապահովված են իրենց ամբողջ կյանքի ընթացքում: Ինչո՞ւ ես պետք է օրնիբուն աշխատեմ, որպեսզի նոր գրքեր գրեմ, նոր ուղերձներ քարոզեմ և ճանապարհորդեմ: Կարծում ես՝ ի՞նչ կպատասխաներ Հիսուսը:

Նա ծիծաղեց և ասաց.

– Ես չէի ցանկանա քո տեղը լինել՝ երբ որ կանգնեի Նրա առջև:

– Դու հենց նոր պատասխանեցիր քո հարցին,– անմիջապես ասացի ես:

Ես թույլ տվեցի, որ նա մի պահ մտածի, իսկ հետո շարունակեցի.

– Այն պարգևները, որոնք Հիսուսը տվել է ինձ՝ Նրա թագավորությունը կառուցելու համար, քարոզելը և գրելն են: Այն պարգևը, որը Հիսուսը տվել է քեզ՝ Նրա թագավորությունը կառուցելու համար, փող վաստակելն է՝ Իր թագավորության մեջ ներդրումներ կատարելու համար: Դու չես տեսնում ընդհանուր պատկերը: Ես սահմանափակ եմ Հիսուսին ծառայելու մեջ՝ քո հնազանդությամբ կամ անհնազանդությամբ, ինչպես որ իմ բերանը չէր կարողանա քարոզել այն մարդկանց, որոնց պետք է քարոզեր, եթե իմ ոտքերը որոշեին այլևս չգործել և չտանել ինձ նրանց մոտ:

Այդ մարդը ցնցված էր:

Ես զանգահարեցի նրան վեց ամիս անց և հարցրի, թե ինչպես է: Նա պատասխանեց.

– Ձո՛ն, այն խոսքերը, որոնք դու ասացիր ինձ վեց ամիս առաջ, ամեն օր հետապնդում են ինձ՝ լավ իմաստով: Ես օրնիբուն աշխատում եմ, որպեսզի կարողանամ ավելի մեծ շահույթ ստանալ և ավելի շատ զոհաբերել:

Ինձ դուր է գալիս նրա խոնարհությունը:

Կինս և ես ճանաչում ենք մեկ այլ գործարարի, ով հաստատվեց մեր եկեղեցում և սկսեց մեծ եռանդով ծառայել. նա ծառայում էր այնտեղ, որտեղ դրա կարիքը կար: Նա գիտեր, որ կանչված էր ոչ թե լրիվ ժամանակվա ծառայության համար, այլ՝ գործարար ոլորտում լինելու: Նա որոշեց ապրել իր եկամտի 10 տոկոսով և զոհաբերել 90-ը: Նա հասավ իր նպատակին, բայց նույնիսկ այդ 10 տոկոսով շատ գեղեցիկ մեքենա և շքեղ տուն ուներ: Նրա համագործակցությունն Աստծո թագավորության հետ ընդլայնեց նրա գործը, և նրա 10 տոկոսն ավելացավ: Նա կիրառեց Հիսուսի սկզբունքը. ով հավատարիմ է քիչ բաներում, հավատարիմ կլինի նաև շատ բաներում:

Կա ևս մեկ պատճառ՝ գործընկեր դառնալու համար: Մենք կարող ենք հատուցել այն ծառայություններին, որոնք հպվել են մեր կյանքին:

Պողոսը գրում է. «Եթե մենք ցանել ենք հոգևոր բարիք [հոգևոր բարիքի սերմը] ձեր մեջ, [արդյոք չափազանց] մե՞ծ բան է, եթե հնձենք ձեր նյութական ստացվածքից: Եթե մյուսներն արդարացիորեն ակնկալում են սա ձեզնից, չէ՞ որ մենք էլ [ավելի մեծ հավակնություն ունենք]» (Ա Կորնթացիների 9.11,12, AMP):

Այս աշխարհում գործում են միևնույն սկզբունքները: Եթե ձեր ընկերներից մեկը նվեր տա ձեզ, դուք շնորհակալական երկտող չեք ուղարկի մեկ այլ ընկերոջ: Դուք շնորհակալություն կհայտնեք նրանից, ով օրհնել է ձեզ, և դրանով է՛լ ավելի կամրապնդեք ձեր հարաբերությունները: Աստված այսպիսին դարձրեց գործընկերությունը հատուկ նպատակով. որքան ավելի շատ մարդկանց է հպվում առանձին ծառայությունը, այնքան այդ ծառայության ֆինանսական կարիքներն ավելի են մեծանում: Այնպես որ, եթե նրանք, ովքեր կրել են ինչ-որ ծառայության ազդեցությունը՝ դրամական միջոցներ տրամադրելով այդ ծառայությանը (նույնիսկ եթե նրանց ներդրումը նման լիներ այրի կնոջ երկու լումային), նրանք լիովին կհոգային այդ ծառայության պահպանման և ընդլայնման բոլոր ծախսերը:

Պողոսն ավարտում է փիլիպեցիներին ուղղված իր խոսքը՝ գրելով հետևյալը.

> «Բայց ես ստացել եմ [ձեր ամբողջական վճարումը] և ավելին. ես ունեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ է ինձ, և առատորեն մատակարարված եմ՝ այժմ, երբ ընդունել եմ Եպոփրադիտոսից այն պարգևները, որոնք դուք ուղարկեցիք ինձ: [Դրանք] ընծայի և զոհաբերության անուշահոտ բուրմունք են, որն Աստված ընդունում է, և որը հաճելի է Նրան: Եվ իմ Աստված առատորեն մատակարարի [մինչև վերջ լցնի] ձեր ամեն մի կարիքը՝ ըստ Իր հարստության՝ փառքով, Քրիստոս Հիսուսում» (Փիլիպեցիների 4.18,19, AMP):

Խոստումն այն մասին, որ Աստված կմատակարարի ամեն մի կարիք Իր հարստության չափով, տրված է տարբեր ծառայությունների գործընկերներին: Եթե դուք տասանորդ եք տալիս և որևէ ծառայության գործընկեր եք, կարող եք հիմնվել այս խոստման վրա. դուք երբեք չեք հայտնվի կարիքի մեջ:

Բազմապատկում աղոթքի միջոցով

Մեր ջանքերը բազմապատկելու միջոցներից ևս մեկը աղոթքն է: Ինչպես և մեր նյութական միջոցները տարբեր ծառայություններին տրամադրելու դեպքում, մենք կարող ենք հավիտենական ազդե-

ցություն թողնել բազմաթիվ մարդկանց կյանքում, որոնց կհանդիպենք միայն Երկնքում: Դա տեղի կունենա, երբ մենք աղոթենք մարդկանց, ընտանիքների, եկեղեցիների, քաղաքների և ազգերի համար: Մենք նույնպես կարող ենք հպվել մարդկանց՝ աղոթելով ծառայությունների համար: Մեր ծառայությունն ունի և՛ ֆինանսական, և՛ աղոթքի գործընկերներ: Աղոթքի գործընկերն այն մարդն է, ով հանձն է առնում ամեն օր աղոթել «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության համար:

Մարդիկ հաճախ են մոտենում ինձ և ասում. «Ես ամեն օր աղոթում եմ ձեզ համար»: Ես միշտ տեսնում եմ՝ նրանք անկե՞ղծ են, թե՞ պարզապես ասում են դա: Ես ասում եմ իրականում աղոթող մարդկանց. «Ձեր աղոթքը մեծագույն բանն է, որը կարող եք անել՝ մեզ օգնելու համար», և դա ճշմարի՛տ է: Երբ մարդիկ աղոթում են, ծառայության ազդեցությունը տարածվում է՝ հպվելով ավելի շատ մարդկանց: Բացի այդ՝ աղոթքի շնորհիվ Աստված շարժում է մարդկանց սրտերը, որպեսզի նրանք նվիրատվություններ կատարեն Իր գործի համար: Այնպես որ, եթե ես ստիպված լինեի ընտրություն կատարել աղոթքի գործընկերոջ և ֆինանսական գործընկերոջ միջև, կընտրեի առաջինին: Այնուամենայնիվ, երկուսն էլ խիստ անհրաժեշտ են:

Բազմապատկում ծառայելու միջոցով

Գոյություն ունի մեր ջանքերը բազմապատկելու ևս մեկ միջոց՝ տարբեր ծառայություններին ծառայելը: Մեր կազմակերպությունն ունի բազմաթիվ օգնականներ և աշխատողներ, որոնց Լիզան և ես մշտապես հիշեցնում ենք, որ Դատաստանի գահի առջև նրանց կհաշվեգրվի ամեն մի մարդու կյանքը, որին հպվում է մեր ծառայությունը:

Ես գիտեմ այս մասին Դավթի խոսքերից՝ ուղղված մարտից վերադարձած իր բոլոր զինվորներին: Ա Թագավորաց 30-րդ գլխում գրված է, որ Դավիթը հետապնդեց ամաղեկացիներին և վերադարձրեց այն ամենը, ինչ գողացվել էր Իսրայելի ճամբարից: Երբ Դավիթը և իր մարդիկ վերադարձան ճամբար, Դավթի հետ գնացած զինվորներից մի քանիսը չէին ցանկանում ավարով կիսվել նրանց հետ, ովքեր մնացել էին՝ ընդհանուր ունեցվածքը հսկելու համար: Բայց լսե՛ք Դավթի պատասխանը.

> ««Մենք հավասար ենք կիսվում՝ թե՛ նրանք, ովքեր գնում են մարտի, և թե՛ նրանք, ովքեր հսկում են մեր ունեցվածքը»: Այդ ժամանակվանից Դավիթն օրենք դարձրեց դա ամբողջ Իսրայելի համար, և մարդիկ մինչև օրս հետևում են դրան» (Ա Թագավորաց 30.24,25, NLT):

Դավիթը՝ Քրիստոսի խորհրդապատկերն էր: Այնպես որ, եթե գրված է. «Այդ ժամանակվանից Դավիթն օրենք դարձրեց դա ամբողջ Իսրայելի համար, և մարդիկ մինչև օրս հետևում են դրան», նշանակում է՝ այս սկզբունքը մինչև օրս վերաբերում է Հիսուսին և Նրա եկեղեցուն: Դատաստանի գահի առջև այն ամենը, ինչ կատարվել է որևէ ծառայության կողմից, չի վերագրվելու միայն ծառայության ղեկավարին, այլև նրանց, ովքեր հավատարմորեն ծառայել են, զոհաբերել են և աղոթել են, նույնիսկ եթե նրանք չեն եղել մարտի դաշտում:

Վերաբերմունքը կարևոր է

Մենք արդեն նշել ենք, որ մեր ծառայության համար վարձատրություն ստանալու կարևորագույն պայմաններից մեկը մեր վերաբերմունքն է: Հաշվի են առնվելու ոչ միայն մեր գործերը, այլև դրանց ետևում գտնվող դրդապատճառները, որոնք իրենց հերթին ձևավորվում են ձեր վերաբերմունքով: Աստված ասում է. «Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.19):

Ես հիշում եմ մի շրջան, երբ չորություն էի զգում իմ հոգևոր կյանքում: Թվում էր՝ ես ոչինչ չէի ստանում մեր եկեղեցական ծառայություններից, հատկապես՝ իմ հովվի քարոզներից: Ես բոլորովին թարմություն չունեի:

Ես աշխատում էի ութ հազար անդամ ունեցող եկեղեցում և հաշվետու էի անմիջապես հովվին, բայց սկսել էի քննադատել նրան: Մեկ օր՝ առավոտյան, Աստված խոսեց ինձ հետ. «Խնդիրը քո հովվի մեջ չէ, այլ՝ քո մեջ»:

Ես ապշած էի: «Ո՞րն է իմ խնդիրը»,– հարցրի:

Տերը հարցրեց ինձ, թե ի՞նչ է գրված Եսայի 1.19-ում: Ես մեջբերեցի վերևում բերված խոսքը, ինչպես որ հիշում էի, և Նա շարունակեց. «Ահա՛ և քո խնդիրը: Դու շարունակ ասում ես, որ չես կերակրվում, և դա ճիշտ է, որովհետև դու չես ուտում երկրի բարիքը»:

Ես հակառակվեցի. «Ես հնազանդ եմ: Անում եմ այն, ինչ իմ հովիվը խնդրում է»:

Տերը պատասխանեց. «Ես չասացի, որ եթե հնազանդ լինես, կուտես երկրի բարիքը: Ես ասացի՝ եթե դու *հոժար* և հնազանդ լինես»: Նա շարունակեց. «Հնազանդությունը կապված է քո գործերի հետ, իսկ *հոժարությունը*՝ քո վերաբերմունքի: Իսկ քո վերաբերմունքից վատ հոտ է գալիս»:

Տերը ցույց էր տալիս, որ ես հնազանդվում էի և նույնիսկ հնազանդ տեսք ունեի, բայց քննադատում էի, տրտնջում և դատապարտում էի. իմ վերաբերմունքն ազդում էր իմ ծառայելու դրդապատճառների վրա:

Ես անմիջապես ապաշխարեցի, և հաջորդ ծառայությանը Երկինքը բացվեց: Ես կրկին ստանում էի Աստծուց: Երբ իմ հովիվը քարոզում էր, աչքերիցս արցունքներ էին հոսում: Ես մտածում էի, թե որքան բան էի բաց թողել ամիսներ շարունակ՝ իմ վերաբերմունքի պատճառով: Կարճ ժամանակ անց ինձ համար պարզ դարձան Պողոսի հետևյալ խոսքերը՝ ոգեշնչված Սուրբ Հոգուց. «Որովհետև սա էր ձեզ գրելու իմ նպատակը՝ ստուգել ձեր վերաբերմունքը և տեսնել, թե արդյո՞ք կդիմանաք այդ ստուգմանը, արդյո՞ք հնազանդ և միաբան եք [իմ պատվերներին հետևելու մեջ] ամեն ինչում» (Բ Կորնթացիների 2.9, AMP):

Ես հասկացա, որ Աստված ստուգելու է, թե ինչ վերաբերմունքով ենք մենք հնազանդվում Իր կամքին: Ես չեմ խոսում այն մասին, որ պետք է հանդուրժել սատանայի հարձակումները, որովհետև Հիսուսը գին է վճարել, որ ազատի մեզ այդ բաներից: Մենք պետք է մշտապես հակառակվենք թշնամուն՝ հավատքի, աղոթքի և Աստծո Խոսքը խոսելու միջոցով: Ես խոսում եմ այն մասին, թե ինչպես ենք մենք վերաբերվում այն ճանապարհին, որն Աստված ընտրել է մեզ համար: Պողոսը գրում է այս մասին. «Ձեր վերաբերմունքը պետք է լինի նույնը, ինչ Քրիստոս Հիսուսինը» (Փիլիպեցիների 2.5, NLT): Հիսուսը ոչ միայն խմեց այն բաժակից, որն Աստված պատրաստել էր Իր համար, այլև հոժարությա՛մբ արեց դա: Ահա թե ինչու է Պողոսը պատվիրում. «...մշտապես նորոգվե՛ք ձեր մտքի հոգով [ունենալով թարմ մտավոր և հոգևոր վերաբերմունք]» (Եփեսացիների 4.23, AMP):

Մենք պետք է այսպես վարվենք, քանի որ մեր վերաբերմունքը կազդի մեր դրդապատճառների վրա, իսկ Դատաստանի գահի առջև մենք կվարձատրվենք ոչ միայն մեր գործերի համար, այլև դրանց ետևում թաքնված դրդապատճառների: Կրկին կարդանք Պողոսի խոսքերը.

> «Որովհետև բոլորս պետք է հայտնվենք և երևանք՝ ինչպես որ կանք, Քրիստոսի ատյանի առջև, որպեսզի ամեն մեկը ստանա [իր վճարը]՝ ըստ իր մարմնում կատարած գործերի՝ թե՛ բարի, թե՛ չար [հաշվի առնելով նրա նպատակը և դրդապատճառները, և այն, թե ինչ ձեռքբերումներ է նա ունեցել, ինչով է զբաղված եղել, և ինչպիսի գործերի է նվիրել իրեն և իր ուշադրությունը]» (Բ Կորնթացիների 5.10, AMP):

Ես տրտմում եմ, երբ տեսնում եմ, որ մարդիկ դառնությամբ են ծառայում Աստծուն: Նրանք դադարել են նայել կյանքին հավիտենության տեսանկյունից: Նրանք շարունակում են ծառայել, բայց հոգնում են, նախանձում են և եսակենտրոն են դառնում: Շատերն են սկսել ջերմեռանդությամբ, սակայն բարեհաջող ավարտ չեն ունեցել: Նման վերաբեր-

մունքը և դրդապատճառները դարձել են ավելի շատ մարդկանց անկման պատճառը, քան ցանկացած այլ բան, որը կարող եմ մտաբերել: Ահա թե ինչու է Աստծո Խոսքն զգուշացնում մեզ. «Զգո՛ւյշ կացեք, որ մեկը ետ մնացող չլինի Աստծո շնորհքից, որ մի դառն արմատ վեր չբուսնի և նեղություն տա, և նրանով *շատերը* պղծվեն» (Եբրայեցիների 12.15):

Ուշադրություն դարձրեք, որ համաձայն այս խոսքի՝ շատերը կարող են պղծվել: Ես շարունակ տեսել եմ այս երևույթն իմ՝ ավելի քան երեսուն տարվա լրիվ ժամանակվա ծառայության ընթացքում: Այս խոսքը՝ Աստվածաշնչի «Էմփլիֆայդ» թարգմանությամբ, խրախուսում է մեզ «հեռատես լինել և զգուշորեն հետևել [մեկս մյուսին]»: Մենք պետք է այնպես հաղորդակցվենք մեկս մյուսի հետ, որ այս դառնությունը չկարողանա բույն դնել մեզանում, որովհետև մենք չենք ցանկանում, որ մեր սիրելիները ձախողվեն կամ չստանան իրենց ամբողջական վարձատրությունը որևէ վերաբերմունքի պատճառով, որն արմատ էր գցել նրանց սրտում և այդպես էլ չէր հեռացվել:

Այս հարցում կինս և ես շատ ուշադիր ենք մեր չորս երեխաների և մեր աշխատողների հանդեպ: Մենք կանչված ենք լրիվ ժամանակով ճանապարհորդելու համար, և մեր երեխաներին շնորհք է տրված՝ մեր կենսառճին հարմարվելու համար: Այնուամենայնիվ, մենք չենք ուզում, որ նրանք կորցնեն այդ շնորհքը: Մենք խրախուսում ենք նրանց, հորդորում ենք ճիշտ վերաբերմունք ունենալ և ուժեղ լինել:

Հիշում եմ, որ մեկ անգամ, երբ նստած էի չորս որդիներիս հետ, ասացի նրանց.

– Տղանե՛ր, դուք լավ գիտեք, որ ամսվա մեծ մասը ես տանը չեմ լինում: Ձեր մայրը նույնպես ամսվա մեջ մի քանի օր տանը չի լինում: Պատճառն այն է, որ Աստված այդպիսի կոչում է տվել մեզ: Նա որոշել է, որ մենք հենց այդ կերպով հպվենք մարդկանց՝ Նրա փառքի համար, և կառուցենք Նրա թագավորությունը:

Ես շարունակեցի.

– Դուք կարող եք դիտարկել Աստծո կանչը մեր կյանքում երկու ձևով: Կարող եք մտածել, որ մնում եք առանց ձեր ծնողների և չունեք սովորական ընտանեկան կյանք: Կամ՝ կարող եք դիտարկել սա որպես *ձեր* ծառայությունը, ոչ միայն ձեր ծնողներինը: Սա ձեր ծառայությունն է այն իմաստով, որ դուք ցանում եք ձեր ծնողներին և ուղարկում եք նրանց՝ հպվելու հազարավոր մարդկանց և իրագործելու Աստծո նպատակները նրանց կյանքում: Եթե դուք այսպիսի վերաբերմունք ունենաք, վարձատրություն կստանաք Քրիստոսի ատյանի առջև ամեն մի մարդու համար, որի կյանքում մենք ազդեցություն ենք թողել: Այնուա-

մենայնիվ, եթե մտածեք, որ ինչ-որ բան եք կորցնում, դուք ոչ մի վարձատրություն չեք ստանա այն մարդկանց համար, որոնց հպվում է մեր ծառայությունը: Այնպես որ, տղանե՛ր, իմ ասածը կարելի է ամփոփել մեկ բառով՝ *վերաբերմունք:*

Որդիներս ընդունեցին իմ խոսքերը. արդյունքում նրանք երբեք չէին տրտնջում մեր ճանապարհորդությունների պատճառով: Իրականում հաճախ, երբ Լիզան և ես երկմտում էինք որևէ հրավեր ընդունելու համար, մեր որդիները խրախուսում էին մեզ, որ համաձայնեինք: Մենք յուրահատուկ հարաբերություններ ունենք նրանց հետ: Նրանցից ամեն մեկը սիրում է Աստծուն, և բոլորը ծառայում են մեզ հետ մեր ծառայության մեջ: Փա՜ռք Աստծուն Նրա զարմանալի շնորհքի համար: Մեր որդիները բազմապատկում են իրենց մնասները՝ սկսած մանկությունից:

Ես ասում եմ նույնը մեր աշխատողներին.

– Դուք կարող եք համարել, որ պարզապես աշխատում եք այստեղ. այդ դեպքում, ի վերջո, կհոգնեք և կդառնանաք, և ոչ մի վարձատրություն չեք ստանա Քրիստոսի ատյանի առջև: Բայց դուք կարող եք մտածել, որ արտոնված եք հպվելու միլիոնավոր մարդկանց կյանքերի: Ամեն մի գիրք, որը փոստով ուղարկում եք, ամեն մի էլեկտրոնային նամակի, որ դուք օգնում եք մեզ՝ պատասխանել, ամեն մի մարդու, որին դուք հասնում եք սոցիալական ցանցերի միջոցով, ամեն մի հավաքույթ, որը դուք կազմակերպում եք, և մնացած բոլոր գործերը, որոնք անում եք, դարձնում են ձեզ այն գործունեության կարևոր մասը, որն Աստված իրականացնում է այս ծառայության միջոցով: Դուք ազդեցություն եք թողնում այն մարդկանց վրա, որոնց Աստված որոշել է հպվել այս ծառայության միջոցով: Դուք նման եք Դավթի զինվորներին, ովքեր մնացել էին՝ բանակի ունեցվածքը հսկելու համար»:

Նրանք ընդունում են այս ճշմարտությունը և ճիշտ վերաբերմունք ունեն: Որպես առաջնորդ՝ ես պետք է կյանքի խոսքեր խոսեմ, որոնք կօգնեն պահպանել այս վերաբերմունքը, թեև, ի վերջո, ամեն մարդ ինքն է պատասխանատու իր վերաբերմունքի համար:

Ճիշտ վերաբերմունք ունենալն օգնում է մեզ՝ բազմապատկել մեր մնասները և բարեհաջող ավարտել մեր ընթացքը: Աստված կառուցում է իր տունը. ինչպիսի՜ մեծ արտոնություն է Նրա գործակիցը լինելը: Այնպես որ, կարևոր չէ, թե որքան աննշան է թվում ձեր գործը. հիշե՛ք, որ ամեն մի մասնիկ կենսականորեն կարևոր է: Դո՛ւք եք ընտրում՝ լինել արդյունավե՞տ, թե՞ ոչ արդյունավետ: Ես ունեմ միևնույն հույսը ձեզ համար, ինչ Հովհաննես առաքյալը. «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերին, որ չկորցնենք այն, որ վաստակեցինք, այլ՝ որ ամբողջ վարձքն առնենք» (Բ Հովհաննես 8):

ԳԼՈՒԽ 14

ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

«Բայց դու գիտես... թե ինչպես եմ ես ապրում,
և թե որն է իմ կյանքի նպատակը:
Դու գիտես իմ հավատքը, և թե որքան
ժամանակ եմ ես չարչարվել:
Դու գիտես իմ սերը և համբերությունը»:
— Բ Տիմոթեոս 3.10, NLT

Հավիտենության մեջ մենք նաև կվարձատրվենք կամ կորուստ կկրենք այն պատճառով, թե ինչ ազդեցություն ենք թողել մարդկանց կյանքում: Սա վերաբերում է ոչ միայն մեր ծառայությանը, այլև մեր անձնական կյանքին (որը նույնքան կարևոր է). այսինքն՝ գնահատվելու է այն, թե ինչպես ենք մենք ապրել և վերաբերվել մարդկանց:

Այն, թե ինչպես ենք դիտարկում մարդկանց, ձևավորում է մեր վերաբերմունքը նրանց հանդեպ՝ կա՛մ կառուցողական, կա՛մ կործանարար կերպով: Եթե մենք համարենք, որ ուրիշներն ավելի ցածր են մեզնից, մենք այդպես էլ կվերաբերվենք նրանց: Մենք կանտեսենք նրանց կարիքները և մեծամտորեն կխոսենք նրանց հետ: Եթե մենք գնահատենք մարդկանց, կձգտենք կառուցել և զորացնել նրանց՝ ելնելով գթասրտությունից և սիրուց:

Եթե մարդկանց դիտարկենք որպես միջոց, մենք կշահագործենք նրանց, հատկապես այն դեպքում, եթե արժևորենք մեր երազանքները, կարիքները կամ ցանկություններն ավելի, քան նրանց: Եթե մենք դիտարկենք մարդկանց՝ որպես Աստծո պատկերով ստեղծվածների, ովքեր անչափ թանկ և արժեքավոր են, մեր դրդապատճառը կլինի նրանց օրհնելը, նույնիսկ եթե դա լինելու է մեր հաշվին: Սա կոչվում է քրիստոսանման վարք:

Եսասիրության ամրությունները

Մինչև Հիսուսին ճանաչելը ես շատ եսակենտրոն անձնավորություն էի: 1979 թվականին՝ Իմ դարձի գալուց հետո, Սուրբ Հոգին ստիպված էր հարձակում գործել իմ վարքի եսասիրական ամրությունների վրա:

Այնպես որ, իմ առաջին տասնամյակը Քրիստոսի մեջ ուժգին պայքարների շրջան էր:

Կյանքիս ամրություններից մեկը սեռական կիրքն էր: Ես չէի կարողանում հակառակվել պոռնոգրաֆիայի գայթակղությանը: Ես ազատագրվեցի դրանից քառօրյա ծոմի արդյունքում: Դա տեղի ունեցավ 1985 թվականին՝ վեց տարի տևող պայքարից հետո: Ազատվելուց հետո սկսվեց իմ մտքի նորոգման ընթացքը:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում հայտնաբերեցի այդ կրքի արմատը: Աստծո սերը շարունակ ավելանում էր իմ սրտում, և ես սկսում էի է՛լ ավելի արժևորել մարդկանց: Ես հասկացա, որ իմ նախկին կախվածության հիմքում ծայրագույն աստիճանի եսասիրությունն էր: Պոռնոգրաֆիա դիտելը կամ կանանց ցանկասիրությամբ նայելը նշանակում է պատվազրկել նրանց և վերաբերվել մսի կտորի պես: Ժամանակի ընթացքում ինձանում զզվանք առաջացավ նման բաների հանդեպ:

Իմ մեջ սկսեց է՛լ ավելի հաստատվել հայտնությունն այն մասին, որ կանայք ստեղծված են Աստծո պատկերով և պսակված են փառքով ու պատվով: Ես շատ վաղուց գիտեի այս ճշմարտությունը, բայց դա պարզապես մտավոր գիտելիք էր, ոչ թե՝ իմ էության մասը: Ժամանակի ընթացքում ես բացահայտեցի, թե որքան իրական է, երբ Աստված սկսում է փոխել ձեզ: Երբ առջևումս պոռնոգրաֆիկ պատկերներ էին հայտնվում՝ պաստառների, ամսագրերի կազմերի կամ հեռուստաէկրանի վրա, ես զգում էի, որ դա հարձակում էր՝ ուղղված իմ դեմ: Ես խստորեն բարկանում էի, որ այն անձնավորությունը, ում համար Հիսուսը թափեց Իր արյունը, նսեմացվել է մինչև մսի կտորը: Իմ վերաբերմունքը կանանց հանդեպ փոխվեց, երբ այս հայտնությունն ավելացավ ինձանում:

Ես ցնցված եմ այն բանով, թե ինչպես են տղամարդիկ վերաբերվում կանանց, նույնիսկ՝ եկեղեցու որոշ տղամարդիկ: Նրանց համարում են թերարժեք և պակաս կարևոր, և նույնիսկ արհամարհում են: Սա անմտություն է: Տղամարդիկ և կանայք Աստծո թագավորության հավասար ժառանգներ են, և որպես ավելի ուժեղ անոթներ (ինչը նշանակում է՝ ավելի ուժեղ մարմին, ոչ թե՝ անձ կամ սիրտ)՝ տղամարդիկ պետք է պատվեն ավելի շատ կանանց, քան իրենց: Տղամարդիկ պետք է հարգեն, արժևորեն, գնահատեն, պաշտպանեն և մշտապես ձգտեն բարձրացնել կանանց: Ամուսիննե՛ր, դուք ձեր միության առաջնորդն եք, բայց առաջնորդությունն Աստծո թագավորության մեջ նշանակում է, որ դուք դնում եք ձեր կյանքը ձեր ընտանիքի համար՝ ծառայելու միջոցով: Դա չի նշանակում, որ դուք պետք է իշխեք ձեր կանանց

և երեխաներին: Եթե դուք համարում եք, որ առաջնորդությունը նշանակում է՝ իշխել ձեր կնոջը, ձեր վերաբերմունքը կխոցի և կկործանի նրան, ոչ թե կկառուցի նրա կյանքը: Եվ դուք հաշիվ կտաք դրա համար դատաստանի ժամանակ:

Ընդունված լինելու ցանկությունը

Եսասիրության ևս մեկ դրսևորում, որն Աստված բացահայտեց ինձանում, է՛լ ավելի խաբուսիկ էր: 1980-ական թվականների կեսերին ես աշխատում էի մի եկեղեցում, որի աշխատակազմը բաղկացած էր մոտավորապես 400 մարդուց, իսկ անդամների թիվը գերազանցում էր ութ հազարը: Այն ազդեցություն ուներ մեր երկրի հազարավոր եկեղեցիների վրա:

Այդ ժամանակ ես տանել չէի կարողանում ցանկացած տեսակի առճակատում և ամեն գնով խուսափում էի դրանից: Ես չափազանց բարի և քաղաքավարի էի բոլորի հանդեպ: Մշտապես հաճելի խոսքեր էի ասում մարդկանց, նույնիսկ երբ գիտեի, որ իմ ասածը ճիշտ չէր: Մարդիկ համարում էին ինձ ամենահաճելի աշխատակիցը եկեղեցու ամբողջ աշխատակազմում: Ես պարբերաբար լսում էի այդ մասին այլ մարդկանցից, և դա մեծ բավականություն էր պատճառում ինձ:

Մի անգամ աղոթքի մեջ Աստված հարցրեց ինձ. «Մի՞թե Ա Կորնթացիների 13-րդ գլխում, Ես ասել եմ որ սերը հաճելի է»:

Ես հանկարծակիի եկա և պատասխանեցի. «Ո՛չ»:

Աստված ասաց. «Որդի՛ս, գիտե՞ս, թե ինչու ես դու միայն հաճելի բաներ ասում մարդկանց, նույնիսկ երբ դա ճիշտ չէ»:

«Ո՛չ, ես չեմ մտածել այդ մասին»,– պատասխանեցի:

Նա անմիջապես ասաց. «Դու վախենում ես, որ նրանք կմերժեն քեզ: Ո՞ւմ է ուղղված քո սերը՝ քե՞զ, թե՞ նրանց: Եթե իսկապես սիրես մարդկանց, դու կասես նրանց ճշմարտությունը, անկախ այն բանից՝ նրանց դուր կգա՞, թե՞ ոչ: Դու ավելի մտահոգված կլինես նրանց բարեկեցությամբ և կցանկանաս օգնել, նույնիսկ եթե այդ պատճառով նրանք մերժեն քեզ»:

Ես պարզորեն տեսա իմ եսասիրությունը՝ քողարկված քաղաքավարությամբ. այդ ցավոտ ճշմարտությունը բացվեց ինձ համար: Ես օգտագործում էի մարդկանց, որպեսզի լրացնեի իմ ընդունված լինելու կարիքը: Ես ուզում էի հավանություն ստանալ նրանցից, որպեսզի մեղմեի իմ անապահովության զգացումը: Ես չէի կարևորում մարդկանց օգնելը, այլ ընդամենը ուզում էի ընդունված լինել նրանցից:

Սա է պատճառը, որ անթիվ ծառայողներ քարոզում են Աստծո Խոսքի միայն «դրական» կողմը: Նրանք խուսափում են զգուշացնելուց, շտկելուց և հանդիմանելուց: Նրանք մտահոգվում են, որ դա կվիրավորի եկեղեցու անդամներին, և արդյունքում եկեղեցի հաճախողների թիվը կպակասի, սակայն նրանք ճշմարտապես չեն սիրում իրենց համայնքները:

Ո՞վ է այդպիսի սիրո կենտրոնում՝ ուրիշնե՞րը, թե՞ մարդու «ես»-ը: Եթե մենք տեսնեինք, որ ինչ-որ մեկն աչքակապը հագած քայլում է դեպի ժայռի ծերպը, մի՞թե չէինք գոչի, որ փրկեինք նրան վտանգից: Այնուամենայնիվ, ես լսել եմ, թե ինչ են այդ «սիրող ծառայողներից» ոմանք խոսում, երբ կողմնակի մարդիկ չեն տեսնում նրանց. այն, թե ինչպես են նրանք խոսում մարդկանց մասին, տագնապ է առաջացնում: Նրանք այնպես են վերաբերվում մատուցողներին, առաքիչներին և ընդհանրապես սպասարկման ոլորտում աշխատող մարդկանց, ասես նրանք երկրորդ կարգի քաղաքացիներ են: Ի՞նչ ազդեցություն են նման հավատացյալները թողնում մարդկանց վրա, երբ ոչ ոք չի տեսնում նրանց: Նրանք հաշիվ են տալու այն ազդեցության համար, որը թողել են այն մարդու վրա, ում հետ հաղորդակցվել են:

Սիրալիրությունից դեպի խստությունը

Երբ ես ստացա այս հայտնությունը, ճոճանակն անցավ հակառակ կողմը: Ես խիստ քարոզիչ դարձա: Աստծո սերը մարդկանց հանդեպ դեռ չկար իմ սրտում: Ես ավելի շատ մտածում էի ճիշտ լինելու, քան մարդկանց հավիտենական բարեկեցության մասին: Երբեմն այն եկեղեցիները, որոնցում ես քարոզում էի, վատ դրության մեջ էին հայտնվում իմ պատճառով: Ես դեռ կենտրոնացած էի իմ «ես»-ի վրա, բայց իմ եսասիրությունն արտահայտվում էր այլ կերպով: Իմ վարքը հետևյալ սուրբգրային հատվածի դասական օրինակն էր. «Դուք մտածում եք, որ բոլորը պետք է համաձայնեն ձեր կատարյալ գիտելիքի հետ: Թեև մենք կարող ենք կարևոր զգալ մեզ գիտելիքի պատճառով, սերն է, որ իրականում կառուցում է եկեղեցին» (Ա Կորնթացիների 8.1,2, NLT):

Այսօր ես ետ եմ նայում իմ ծառայության վաղ տարիներին և այնքա՛ն անհարմար եմ զգում ինձ այն պատճառով, որ որոշ հովիվներ ստիպված էին հարթել իրենց եկեղեցում ստեղծված իրավիճակն իմ հեռանալուց հետո: Եթե այդ ժամանակ ես հովիվ լինեի, ոչ մի դեպքում չէի հրավիրի Զոն Բիվերին՝ իմ եկեղեցում ծառայելու: Ես այնքա՛ն շնորհակալ եմ այն առաջնորդներից, ովքեր տեսնում էին Աստծուն և Նրա

ժողովրդին ծառայելու անկեղծ ցանկությունն իմ ներսում, թեև ես դեռ հոգևոր աճի մեծ կարիք ունեի:

Ես այլևս չէի շողոքորթում, որպեսզի ստանայի մարդկանց հավանությունը և խուսափեի մերժվածությունից: Ես խոսում էի ճշմարտությունը և հակառակվում էի մարդկանց, բայց անում էի դա նույն եսասիրական դրդապատճառներով, որոնք դեռ ծածկված էին ինձնից, և որոնցից Աստված մաքրում էր ինձ:

Մի քանի տարի անց մի հայտնի հովիվ քննադատեց ինձ շատ ազդեցիկ առաջնորդների առջև: Նրա խոսքերը հասան ինձ երեք տարբեր աշխարհամասերից: Սկզբում ես շատ բարկացա և հուսալքվեցի, բայց գիտեի, որ վիրավորանքը միայն կհեռացներ ինձ Աստծուց: Ի վերջո, այդ մարդու հարձակումը՝ ուղղված ինձ, ստիպեց, որ աղաղակեմ Աստծուն՝ խնդրելով Նրա սերը այնպես, ինչպես նախկինում երբեք չէի խնդրել: Ես ջերմեռանդորեն խնդրում էի Աստծուն ավելի շատ գթասրտություն տալ ինձ: Առանց իմ հասկանալու՝ ժամանակի ընթացքում Աստված հասունացրեց իմ սրտում Իր սերն Իր թանկ ժողովրդի հանդեպ:

Այս ընթացքում Տերը մի հայտնություն տվեց, որը փոխեց իմ ծառայությունը: Միգուցե մտածում եք, որ շատ խորը բան կլսեք, բայց այն շատ պարզ է: Դուք նույնիսկ կկարծեք, որ այն մի թեթև անհեթեթ է հնչում, մինչև որ մտորեք դրա շուրջ: Ահա այդ հայտնությունը. «Մի գդալ շաքարն օգնում է խմել դեղը»: Ես հասկացա, որ դեղի ազդեցությունը չի թուլանում, երբ դրան քաղցր են ավելացնում: Մարդիկ պարզապես ավելի հեշտորեն են խմում այն, և որպես կանոն, այն նույնիսկ հաճելի է թվում:

Այսօր անթիվ առաջնորդներ ասում են ինձ. «Զո՛ն, ես զարմանում եմ, թե ինչպես դու ծիծաղեցրիր բոլորիս այն ընթացքում, երբ Աստծո Խոսքը զտում էր մեր սիրտը: Դու կյանք ներշնչեցիր նման լուրջ թեմայի մեջ»: Երբ ես առաջին անգամ այդպիսի խոսքեր լսեցի, հասկացա, որ հասունանում եմ Աստծո շնորհքով: Ես այնքա՛ն շնորհակալ եմ Նրան:

Ամենայն հավանականությամբ, այն հովիվը, ով քննադատեց ինձ այլ առաջնորդների առջև, չէր ցանկանում օրհնել ինձ, սակայն նա դարձավ մեծագույն օրհնություններից մեկն իմ կյանքում: Դուք պետք է հիշեք, որ երբեմն Աստված կօգտագործի մարդկանց չար մտադրությունները, որպեսզի օգնի ձեզ մուտք գործել Իր կամքի մեջ: Նա օգտագործեց Հուդայի դավաճանությունը, որպեսզի ի կատար ածեր Հիսուսի խաչելությունը, որը նախասահմանված էր Նրա համար: Նա օգտագործեց Հովսեփի եղբայրների չար մտադրությունները, որպեսզի իրականացներ այն երազը, որը տվել էր նրան և այլն:

Նպատակը՝ Աստծո սերն է

Ընդհանուր առմամբ, հարցն այն է, թե ինչպես ենք մենք տեսնում մարդկանց: Եթե թույլ տանք, որ Աստծո սերը և գթասրտությունն ավելանան մեր կյանքում, մենք չենք անարգի մարդկանց: Եթե համարենք, որ ուրիշներն ավելի ցածր են մեզնից, մենք կքննադատենք, կդատապարտենք, կոպիտ կվարվենք մարդկանց հետ և այլն: Կարդացե՛ք, թե ինչ է Պողոսը գրում հռոմեացի հավատացյալներին.

> «Ինչո՞ւ ես դու քննադատում և դատում քո եղբորը: Կամ ինչո՞ւ ես բարձրից նայում քո եղբորը և անարգում նրան: Որովհետև բոլորս պետք է կանգնենք Աստծո ատյանի առջև... Այնպես որ, ամեն մեկս պետք է Աստծուն հաշիվ տանք մեզ համար (պատասխան տանք դատելու համար)» (Հռոմեացիների 14.10, AMP):

Եթե հավատացյալներն անուշադրության մատնեն երկրորդ մեծագույն պատվիրանը, որը միմյանց սիրելն է, մենք անխուսափելիորեն կընկնենք այն ծուղակը, որի մասին Պողոսը գրում է վերևում բերված հատվածում, այսինքն՝ կսկսենք անարգել մարդկանց: Այս մտածելակերպը հատուկ է այնպիսի մարդկանց, ովքեր ստացել են աստվածաշնչյան գիտելիքներ, բայց չունեն Սուրբ Հոգու պտուղը:

Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Աստված սեր է: Շատ կարևոր է նշել, որ սերը՝ Աստված չէ: Այս երկու արտահայտությունների միջև մեծ տարբերություն կա: Աստծո Անձը, ճանապարհները և մտադրությունները չեն սահմանափակվում այն բանով, թե ինչպես ենք մենք սահմանում սերը, որովհետև ոչ ոք չի ճանաչում սերը, քանի դեռ չի ճանաչել Հիսուսին: Նա է սիրո ճշմարիտ էությունը:

Նույնպես, ոչ մի տեղ Աստվածաշնչում գրված չէ. «Աստված սեր ունի»: Նա ունի զորություն, պարգևներ, իշխանություն, և այսպես շարունակ, բայց Հիսուսը՝ սիրո ճշմարիտ էությունն է: Այդ դեպքում, մենք չպետք է տարբերվենք Նրանից, քանի որ վերածնվել ենք՝ ըստ Նրա բնության: Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Եթե ես կարողանայի խոսել ցանկացած երկրային կամ երկնային լեզվով, բայց չսիրեի մարդկանց, ես միայն անիմաստ աղմուկ կհանեի՝ նման՝ բարձրաձայն կոչնազանգի կամ զրնգացող ծնծղայի: Եթե ես ունենայի մարգարեության պարգևը և եթե իմանայի ապագայի բոլոր խորհուրդները և ամեն ինչ՝ ամեն ինչի մասին, բայց չսիրեի մարդկանց, ի՞նչ օգուտ դրանից: Եվ եթե ես ունենայի հավատքի պարգևը, որ խոսեի սարին, և այն տեղափոխվեր, բայց սեր չունենայի, ես ոչնչով օգտակար չէի լինի ոչ ոքի: Եթե ես տայի իմ ամբողջ ունեցվածքն աղքատներին և նույ-

նիսկ զոհաբերեի իմ մարմինը, ես կարող էի պարծենալ այդ մասին, բայց եթե չսիրեի մարդկանց, ես ընդհանրապես ոչ մի արժեք չէի ունենա» (Ա Կորնթացիների 13.1–3, NLT):

Սերը չի բխում մեր խոսքերից: Մենք կարող ենք ասել, որ հոգում ենք ինչ-որ մեկի մասին, բայց մեր գործերը կարող են ցույց տալ հակառակը: Սերը նաև չի բխում մեր գործերից: Վերը նշված հատվածում Պողոսն ասում է, որ մենք կարող ենք այնպիսի գործեր անել, որոնք անում են միայն մեծագույն սեր ունենալու դեպքում (ամբողջ ունեցվածքն աղքատներին տալը և մարմինը զոհաբերելը), բայց անել դա առանց Աստծո սիրո: Մենք տեսնում ենք, որ ճշմարիտ սերը բխում է մարդու սրտից:

Երբ սիրենք, մենք համբերատար և բարի կլինենք մարդկանց հանդեպ: Մենք չենք նախանձի նրանց հաջողությանը, քանի որ ի սրտե կցանկանանք, որ նրանք հաղթանակներ ունենան: Մենք երբեք չենք պարծենա և կխուսափենք գոռոզությունից ու հպարտությունից: Մենք չենք պահանջի, որ ամեն ինչ մեր ուզածով լինի: Մենք չենք նյարդայնանա մեր անհամբերության պատճառով: Մենք չենք հիշի, երբ մարդիկ սխալ վարվեն մեզ հետ, այլ կներենք և կթողնենք բոլոր պարտքերը: Մենք երբեք չենք ժպտա՝ անարդարություն տեսնելով, այլ կձգտենք ողորմությանը և ճշմարտությանը: Մենք երբեք չենք հրաժարվի ոչ ոքից և չենք կորցնի մեր հավատքը մարդկանց հանդեպ, այլ միշտ կհավատանք նրանց համար լավագույնին: Մենք միշտ անմեղ կհամարենք մարդկանց այն դեպքում, եթե նրանց մեղավորությունն ապացուցված չէ, և նույնիսկ եթե պարզվի, որ նրանք մեղավոր են, մենք հույս կունենանք, որ նրանք կապաշխարեն և կվերականգնվեն: Մենք հույսով լցված կլինենք և կդիմանանք ամեն նեղության՝ Աստծո թագավորության կամ մեկ այլ մարդու բարեկեցության համար: Ըստ էության, մեր կյանքի նպատակը կլինի մարդկանց՝ Աստծո մեջ կառուցելը, ինչը հնարավոր է միայն՝ եթե նրանք նմանվեն Քրիստոսին և կատարեն Նրա կամքն իրենց կյանքում:

Առաջնորդը, ով ազդեցություն թողեց շատերի վրա

Մի քանի տարի առաջ մասնակցեցի իմ մտերիմ ընկերներից մեկի հոգեհանգստի արարողությանը: Նրա անունը Ձեք Ուոլես էր: Նա հիմնադրել էր «Դետրոյտի համաշխարհային ավետարանչություն» եկեղեցին Միչիգան նահանգի Դետրոյտ քաղաքում: Այս եկեղեցին, որի անդամները տարբեր ռասայական պատկանելիություն ունեին, ընդամենը

տասը տարում հասել էր չորս հազարի: Զեքը Զիմբաբվե էր ուղևորվում, որպեսզի քարոզեր մի ավետարանչական հավաքույթի ժամանակ, սակայն ինքնաթիռից իջնելուց հետո նա սրտի կաթված ստացավ և մահացավ:

Հազարավոր մարդիկ եկան Զեքի հոգեհանգստի արարողությանը՝ ծառայությունների ղեկավարներ ամբողջ Միացյալ Նահանգներից, պետական պաշտոնյաներ, խոշոր ընկերությունների փոխնախագահներ, ինչպես նաև բազմաթիվ հասարակ աշխատավոր մարդիկ, անտուն թափառականներ, նաև մայրեր, ովքեր ապրում էին պետական նպաստներով: Այդ մարդիկ գտնվում էին նրա եկեղեցու ազդեցության շրջանակում: Շատերը, ովքեր չէին ճանաչում Հիսուսին՝ որպես Տեր, նույնպես մասնակցեցին նրա հոգեհանգստի արարողությանը: Նրանց թվում էին հյուրանոցների և ռեստորանների աշխատակազմերի անդամներ և այլ մարդիկ այդ քաղաքում, որոնց կյանքում նա անձամբ ազդեցություն էր թողել:

Զեքի եկեղեցուն չպատկանող մարդկանց ներկայությունը չզարմացրեց ինձ: Զեքը և ես շատ ժամանակ ենք անցկացրել միասին, և ես այնքա՛ն օրհնված էի այն բանով, թե ինչպես էր նա վերաբերվում մարդկանց: Նա վերաբերվում էր ամեն մեկին՝ որպես արժեքավոր և թանկ անձնավորության: Նա մեծ թեյավճարներ էր տալիս մատուցողուհիներին և հյուրանոցների աշխատողներին: Ես երբեմն մի փոքր վարանում էի՝ մտածելով, որ միգուցե դա չափազանցություն էր, բայց այդ անմիտ մտածելակերպը շտկվեց, երբ մի անգամ Զեքն ասաց, թե որքա՛ն արժեքավոր և թանկ էին այդ մարդիկ Աստծո համար: Երբ դուք Զեքի հետ էիք, նա պարզապես չէր համոզում ձեզ, որ դուք ամենակարևոր մարդն եք. դուք իսկապես ամենակարևոր մարդն էիք նրա համար:

Հոգեհանգստի արարողությունը տևեց չորս ու կես ժամ: Նրա ընկեր-ծառայողներից շատերին խնդրեցին կիսվել մի քանի րոպեով: Այն բանից հետո, երբ մեզնից չորս կամ հինգ մարդ խոսեցին այն մասին, թե որքան մտերիմ էինք մենք Զեքի հետ, և թե որքան թանկ էր նա մեզ համար, մի շատ հայտնի ծառայող ոտքի կանգնեց և ասաց. «Ես կարծում էի, որ ես էի նրա լավագույն ընկերը»: Բոլորը ծիծաղեցին:

Բոլորս գիտեինք, որ Զեքը համարում էր ամեն մեկիս իր ամենամոտ ընկերը և այդպես էլ վերաբերվում էր մեզ: Այդ մեծ առաջնորդը, իր ավետարանչական հավաքույթներով և հեռուստատեսային հաղորդումներով, ազդեցություն թողեց ոչ միայն ազգերի, այլև այն մարդկանց վրա, որոնց հետ անձամբ շփվում էր: Նրա համար կարևոր չէր՝ դուք խոշոր ընկերության գործադիր տնօրե՞ն եք, թե՞ պետական նպաստ

եք ստանում: Զեքը գիտեր, թե ինչպես շփվեր ձեզ հետ և ինչպես սիրեր ձեզ՝ որպես մարդու: Զեքը ոչ միայն հավատարիմ էր իր կոչման և պարգևների մեջ, այլև բազմապատկում էր իր մնասները կյանքի ամեն բնագավառում:

Պահակը, ով ազդեցություն թողեց շատերի վրա

Դուք երբեք չեք տեսնի ամբիոնի ետևում մարդկանց, ովքեր շատ մեծ ազդեցություն են ունեցել իմ կյանքում: Այդ մարդկանցից մեկը Մայքն է, ով ֆինանսական բաժնի աշխատակից էր «Ռոքվել Ինտերնեյշնլ» ընկերությունում: Ես ծանոթացա նրա հետ քրիստոնյա դառնալուց երկու տարի անց: Աշխատավայրում մեր գրասեղաններն իրար մոտ էին, և մենք զրուցում էինք Աստծո մասին ընդմիջումների և ճաշի ժամերին: Հետագայում սկսեցինք ժամեր շարունակ շփվել կա՛մ իմ, կա՛մ նրա տանը, ինչպես նաև՝ եկեղեցում: Մայքի անկեղծությունը և գործնական իմաստությունը՝ հիմնված Աստծո Խոսքի վրա, շատ մեծ ազդեցություն թողեցին իմ կյանքում: Ես նույնպես տպավորված էի այն բանով, թե ինչպես էր նա պատվում, սիրում և հարգում իր կնոջը, երեխաներին և յուրաքանչյուրին, ում հանդիպում էր:

Ես հեռացա «Ռոքվելից» և ծառայող դարձա: Կարճ ժամանակ անց Մայքը նույնպես հեռացավ աշխատանքից և հիմնադրեց իր հաշվապահական ընկերությունը, որը մինչև օրս գործում է: Նրա գործը շատ հաջողված էր: Նա օգնել է ավելի քան տասներկու հազար հաճախորդի՝ հարկային հայտարարագրեր լրացնել և հաշվապահական հաշվառում իրականացնել, և նրանցից հինգ հազարը դարձել են նրա մշտական հաճախորդները: Նրանք աշխատում էին Մայքի հետ տարիներ շարունակ՝ նրա անկեղծության և ազնվության շնորհիվ:

Վերջերս հարցրի Մայքին, թե իր հաճախորդներից քանիսի՞ն է նա քարոզել Աստծո Խոսքը: Նա պատասխանեց.

– Զո՛ն, ամենահամեստ հաշվարկներով՝ մոտավորապես 90 տոկոսին:

Նշանակում է՝ նա քարոզել է ավելի քան տասը հազար մարդու: Ես ապշած էի: Ես շարունակեցի՝ հարցնելով, թե քանիսի՞ն է նա փրկության առաջնորդել: Նա պատասխանեց.

– Հարյուրավոր մարդկանց: Անցյալ շաբաթ, օրինակ, իմ կուբացի հաճախորդներից մեկը, ընդունեց Տիրոջը, և աղոթեցի, որ նա բժշկվի քաղցկեղից:

Մայքը նույնպես օգնել է, որպեսզի շատ ծառայություններ ճիշտ կառուցեն իրենց հաշվապահությունը: Մայքն օգնում էր նաև մեր ծառայությանը, երբ այն դեռ կազմավորման փուլում էր: Նա հասկացավ, որ Աստ-

ված կանչել էր ինձ, և տարիներ շարունակ պատրաստում էր իմ հարկային հայտարարագրերը՝ առանց որևէ վճարման: Մայքն ազդեցություն է թողել բազմաթիվ մարդկանց կյանքերում շատ տարբեր ձևերով:

Հիշում եմ, որ մեր երկարատև զրույցների ընթացքում Մայքը պատմում էր մի պահակի մասին, ով ազդեցություն էր ունեցել իր կյանքի վրա ավելի շատ, քան ցանկացած մարդ: Վերջերս ես զանգահարեցի նրան և կրկին հարցրի այդ մարդու մասին: Մայքը լաց լինելով ասաց.

– Զո՛ն, իմ ինը մորաքույրներից և քեռիներից վեցն ավարտել են իրենց կյանքը հոգեբուժարանում, և մայրս նույնպես նրանց թվում էր: Իմ երկու պապերը հրազենով սպանվել են: Ընտանիքս շատ խառնաշփոթ կյանք ուներ, և նրանց ճակատագիրն սպասում էր նաև ինձ:

Այնուամենայնիվ, ֆինանսական դժվարությունների պատճառով մայրս ուղարկեց ինձ մեկ այլ ընտանիք, որպեսզի նրանք հոգային իմ մասին: Ես յոթ տարի ապրեցի այդ մարդկանց հետ: Այդ ընտանիքի հայրը պահակ էր տեղական թղթի գործարանում: Նրա անունը Չառլի էր: Նրա անկեղծությունը և նվիրվածությունը Հիսուսի հանդեպ և սերը մարդկանց հանդեպ քանդեցին անեծքն իմ կյանքում: Ամեն շաբաթ նա եկեղեցի էր տանում ինձ և սովորեցնում էր Աստծո ճանապարհները: Նրա ազդեցիկ լինելն օգնեց ինձ՝ դառնալ այնպիսին, ինչպիսին այսօր կամ: Մեկ անգամ իմ աղջիկը շարադրություն էր գրել և վերնագրել էր «Մեծագույն մարդը, ում երբեք չեմ ճանաչել»: Այն Չառլիի մասին էր:

Հավանաբար, դուք երբեք ոչինչ չէիք իմանա Չառլիի մասին որևէ տեղից, եթե չլիներ այս գիրքը: Այնուամենայնիվ, նրա ազդեցությունը տարածվեց դեպի այն հազարավոր մարդիկ, որոնց ծառայեց Մայքը: Նա հպվեց նաև իմ կյանքին՝ Մայքի միջոցով: Այնպես որ, այն միլիոնավոր մարդիկ, որոնց ես ծառայելու արտոնություն եմ ունեցել, անուղղակի կերպով շահվել են Աստծո համար նաև Չառլիի միջոցով: Դուք տեսնո՞ւմ եք, թե ինչպես մի հասարակ պահակ բազմապատկեց իր մնասները: Մեկ օր նա մեծ վարձատրություն կստանա դրա համար:

Ազդեցություն ապագա սերունդների վրա

Սա հիշեցնում է ինձ մի իրական պատմություն, որն իմ աշխատակիցներից մեկը վերջերս կարդաց ինձ համար: Այն մի աթեիստի մասին է, որի անունը Մաքս Զուքս էր, և մի աստվածավախ մարդու, որի անունը Զոնաթան Էդվարդս էր: Ահա այդ պատմությունը.

> «Մաքս Զուքսն աթեիստ էր և անօրեն մարդ էր: Նա ամուսնացավ մի անպարկեշտ աղջկա հետ: Նրանց միության արդյունքում ծնված մարդ-

կանցից 310-ը մահացան որպես մուրացկան, 150-ը հանցագործներ էին, 7-ը՝ մարդասպաններ, 100-ը՝ հարբեցողներ. նրանց սերունդների կանանց կեսից ավելին մարմնավաճառ էր: Այն նահանգը, որտեղ նա ծնվել էր, ստիպված էր ընդհանուր առմամբ մեկ ամբողջ և մեկ քառորդ միլիոն դոլար ծախսել նրա 540 ժառանգների համար:

Բայց փա՛ռք Աստծուն՝ այս սկզբունքը երկկողմանի է: Գոյություն ունի մեկ այլ ընտանեկան արձանագրություն, որը պատմում է ամերիկացի մեծ ծառայող Զոնաթան էդվարդսի սերունդների մասին: Նա ապրում էր նույն ժամանակ, ինչ Մաքս Զուքսը, բայց ամուսնացավ մի աստվածապաշտ աղջկա հետ: Հայտնաբերվել է առնվազն 1394 մարդ, ովքեր եղել էին Զոնաթան էդվարդսի ժառանգները: Նրանցից 13-ը դարձել էին համալսարանների նախագահներ, 65-ը՝ համալսարանական պրոֆեսորներ, 3-ը՝ ԱՄՆ-ի սենատորներ, 30-ը՝ դատավորներ, 100-ը՝ իրավաբաններ, 60-ը՝ բժիշկներ, 75-ը՝ ցամաքային և ծովային զորքերի սպաներ, ևս 100-ը՝ քարոզիչներ և միսիոներներ, 60-ը՝ հայտնի հեղինակներ, մեկը՝ ԱՄՆ-ի փոխնախագահ, 80-ը՝ տարբեր աստիճանի պետական պաշտոնյաներ, 295-ը ավարտել էին բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև նրանց թվում էին նահանգապետներ և նախարարներ՝ այլ երկրներում: Այն նահանգը, որտեղ նա ծնվել էր, նույնիսկ մեկ սենթ չէր ծախսել նրա ժառանգների վրա»[1]:

Սա մնասները բազմապատկելու ևս մեկ միջոց է: Այս մարդիկ՝ Չառլին, Մայքը և Զոնաթան էդվարդսը, ազդեցություն են թողել բազմաթիվ մարդկանց կյանքերում: Նրանց ազդեցությունը շարունակել է տարածվել սերնդեսերունդ: Այնուամենայնիվ, նրանք հպվել են բազմաթիվ մարդկանց, որոնց մասին մենք խոսեցինք, ոչ թե հրապարակային ծառայությամբ, այլ՝ իրենց անձնական կյանքով:

Աստված տալիս է այս արտոնությունը յուրաքանչյուրիս: Այն, թե ինչպես եք դուք վերաբերվում ոստիկանին, ինչպես եք խոսում ձեր հովվի հետ, ինչպես եք վերաբերվում ձեր երեխաներին, ինչպես եք տնօրինում ձեր միջոցները, ինչ եք խոսում մարդկանց մասին և այլն, ազդեցություն է թողնում ձեզ շրջապատող մարդկանց վրա: Այսպիսով, դուք կկառուցե՞ք մարդկանց կյանքերը, թե՞ գլորման քար կդառնաք:

«Այո՛, մեզնից ամեն մեկը պետք է անձամբ հաշիվ տա Աստծուն: Այնպես որ, այլևս մի՛ դատապարտեք մեկդ մյուսին: Փոխարենը՝ որոշում կայացրեք այնպես ապրել, որ խոչընդոտ չդնեք մեկ այլ քրիստոնյայի ճանապարհին... Եկեք ձգտենք ներդաշնակությանը՝ եկեղեցում, և փորձենք կառուցել մեկս մյուսին» (Հռոմեացիների 14.12,13,19):

Պողոսն ուղղակիորեն կապակցում է սա Աստծո Դատաստանի գահի հետ: Այդտեղ մանրակրկիտ ձևով քննվելու է մեր ազդեցությունը

մարդկանց վրա: Անչափ կարևոր է, որ մշտապես հիշենք սա, որպեսզի հաղթանակներ ունենանք, ոչ թե շարունակ մտածենք ինքներս մեր մասին:

Ռեբեկա Ռուտեր Սպրինգերն ապրում էր տասնիններորդ դարում: Նրան շնորհվել էր երկարատև այցելություն դեպի Երկինք՝ նախքան նրա հեռանալը կյանքից՝ իր հավիտենական վարձատրությունն ստանալու համար: Վերադառնալով՝ նա գրեց իր դասական դարձած գիրքը, որը կոչվում է *«Ինտրա Մուրոս»:* Դրանում նա մեջբերում էր իր ազգականներից մեկի խոսքերը, որի հետ շատ ժամանակ էր անցկացրել Երկնքում: Նա գրում էր, որ այդ ազգականը՝ իր ամուսնու եղբայրը, մտերիմ էր Տիրոջ հետ: Այդ մարդն ասել էր հետևյալը.

> «Երանի՜ մենք հասկանայինք, քանի դեռ մահկանացու ենք, որ օրըստօրե կառուցում ենք հավիտենության համար: Այդ դեպքում, մեր կյանքը կփոխվեր շատ առումներով: Ամեն մի սիրալիր խոսք, ամեն մի մեծահոգի միտք, ամեն մի անձնազոհ արարք գալիք կյանքում հավիտենական գեղեցկություն ունեցող սյուն կդառնա»[2]:

Մարդկանց դեպի Հիսուսն առաջնորդելը

Մեծագույն ազդեցությունը, որը կարող ենք թողնել մարդկանց կյանքում, նրանց դեպի Քրիստոսն առաջնորդելն է: Հասկանալով, թե ինչպիսին են լինելու հավիտենական դատաստանները՝ դուք կձգտեք պատմել մարդկանց փրկության ծրագրի մասին: Գրված է. «Նա, ով իմաստուն է, գրավում է մարդկանց [Աստծո համար՝ որպես մարդկանց ձկնորս. նա հավաքում է և ստանում է նրանց *հավիտենության* համար]» (Առակաց 11.30, AMP):

Երբ նորահավատ էի, ճնշվածություն էի զգում՝ մտածելով, որ պետք է քարոզեի Ավետարանը նրան, ում հանդիպում էի: Այնուամենայնիվ, հետագայում սովորեցի ապավինել Սուրբ Հոգու առաջնորդությանը այն հարցում, թե երբ և ինչ պետք է խոսեմ: Ես հասկացա, որ նույնիսկ Հիսուսն ասաց, որ միայն անում է՝ ինչ տեսնում է Իր Հորն անելիս: Աստծո հետ մեր ընթացքի մեջ գոյություն ունի հոսք, ոչ թե հարկադրանք, որը տհաճություն է առաջացնում և վանում է մարդկանց:

Այնուամենայնիվ, մարդկանց հավիտենական կյանքին առաջնորդելու մղումը մշտապես մեզ հետ կլինի, մինչև մեր երկնային տունը գնալը: Եվ Աստծո սերը բորբոքում է այս ցանկությունը: Երբ դուք Քրիստոսին եք առաջնորդում ինչ-որ մեկին, բոլոր հրեշտակները, ինչպես նաև՝

անձամբ Աստված, ցնծում են անասելի ուրախությամբ: Հիսուսն ասում է. «Հնձողները լավ վարձատրություն են ստանում, և այն պտուղը, որը նրանք հնձում են, մարդիկ են, որոնք բերվել են դեպի հավիտենական կյանքը» (Հովհաննես 4.36, NLT):

Ես արտոնություն ունեցա առաջնորդելու իմ կնոջը դեպի Տերը մեր առաջին ժամադրությանը: Հիսուսին ընդունելուց կարճ ժամանակ անց որոշում կայացրի չժամադրվել ոչ մի աղջկա հետ, մինչև որ Աստված բերեր ինձ մոտ իմ կնոջը: Ես գիտեի, որ Աստված բերեց Եվային Ադամի մոտ, և մտածեցի, որ Նա կարող էր անել նույնը ինձ համար:

Մինչև քրիստոնյա դառնալը ես ժամադրվում էի շատ աղջիկների հետ: Դարձի գալուց հետո ժամադրվեցի մի քանի քրիստոնյա աղջիկների հետ և հասկացա, որ դա խանգարում է Աստծո հետ իմ ընթացքին: Ամեն անգամ, երբ խզում էի հարաբերությունները հերթական աղջկա հետ, երկուսիս ներսում էլ ցավ էր առաջանում: Կարճ ժամանակ անց հասկացա, որ դա օգտակար չէր ինձ համար: Այնպես որ, ես որոշեցի աղոթել՝ որևէ աղջկա ժամադրելուց առաջ:

Այդ ժամանակ իմ կինը թեթև վարքի տեր աղջիկ էր: Մի ուսանող ասաց ինձ, որ նա ամենաթեժ աղջիկն է ամբողջ համալսարանում: Չգիտեմ՝ արդյո՞ք դա լիովին ճիշտ էր, բայց մոտ էր ճշմարտությանը: Երբ սկսեցի շփվել Լիզայի հետ, ես արդեն մեկ տարի չէի ժամադրել ոչ մի աղջկա, և մասամբ այն պատճառով, որ ամեն անգամ, երբ հարցնում էի Տիրոջը, Նա պատվիրում էր ինձ չգնալ ժամադրության: Այնուամենայնիվ, ես զգացի Սուրբ Հոգու առաջնորդությունը, որ պետք է հրավիրեի Լիզային մեր առաջիկա Աստվածաշնչյան ուսումնասիրության զբոսախնջույքին, և նա համաձայնեց:

Զբոսախնջույքից հետո Լիզան և ես զբոսնելով վերադարձանք համալսարան, և ես քարոզեցի նրան Ավետարանը կեսգիշերից մինչև գիշերվա 01:30-ը: Նա ընդհատեց ինձ՝ խնդրելով, որ անմիջապես փրկության առաջնորդեի իրեն: Այդ իրադարձությունից կարճ ժամանակ անց երկուսս էլ գիտեինք, որ մեր ամուսնությունն Աստծո կամքն էր: Կարող եմ անկեղծորեն ասել, որ ես իսկապես շահեցի մեր ամուսնությունից: Ես չէի դառնա այնպիսին, ինչպիսին այսօր եմ, եթե նա կողքիս չլիներ:

Լիզան հպվել է միլիոնավոր կյանքերի: Նա պտղաբեր հեղինակ է և անարդարության դեմ պայքարող ջատագով: Նա քարոզում է բազմաթիվ համաժողովներում, որոնք անցկացվում են աշխարհով մեկ: Ի՞նչ կլիներ, եթե ես չօգտագործեի՝ նրան դեպի Աստծուն առաջնորդելու հնարավորությունը: Ի՞նչ կլիներ, եթե ես վախենայի, որ նա կծաղրեր

ինձ, և չպատմեի Հիսուսի մասին: Համոզված եմ՝ Աստված կուղարկեր մեկ ուրիշին: Ես բաց կթողնեի Աստծո լավագույն ընտրությունն ինձ համար և բաժին չէի ստանա բոլոր այն մարդկանց համար, որոնց կյանքում նա հավիտենական ազդեցություն է թողել: Փա՜ռք Աստծուն Նրա պարգևների համար:

Հիշեք՝ սերմը կբազմապատկվի, բայց սերմն աննշան է թվում: Երբեք թեթևորեն մի՛ վերաբերվեք Սուրբ Հոգու առաջնորդությանը. առավել ևս՝ մի՛ անտեսեք Նրան: Ամենից «աննշան» բաները, որոնց Աստված առաջնորդել է ինձ, իմ կյանքում վերածվել են ամենից ակնառու բազմապատկման գործոնների: Աստված ցանկանում է, որ դուք բազմապատկում ունենաք ձեր կյանքում, և ցանկանում է վարձատրել ձեզ դրա համար:

Վերջին հորդորը

Այնքա՜ն բան է դրված խաղաքարտին: Մենք չենք կարող թեթևամտորեն վերաբերվել այն ժամանակին, որը վստահվել է մեզ այս երկրի վրա: Մարդկանց հավիտենությունը կախված է այն բանից, թե արդյո՞ք կհնազանդվենք Աստծո ծրագրին: Նրա կամքն է, որ բոլորը փրկվեն և նմանվեն Հիսուսին: Նա չի ցանկանում, որ ինչ-որ մեկը ետ մնա:

Մի ամբողջ սերունդ կորսվեց անապատում Եգիպտոսից դուրս գալուց հետո: Նրանց տանում էր բոլոր ժամանակների մեծագույն առաջնորդը, բայց միևնույն է՝ նրանք ձախողվեցին: Մենք կարող ենք հրաշալի առաջնորդներ ունենալ, բայց մեր սերնդի մեջ Գլխավոր Շինարարի ծրագիրը կատարելը կախված է մեզնից: Նա հայտարարեց. «Եվ արքայության այս Ավետարանը ամբողջ տիեզերքում կքարոզվի՝ բոլոր հեթանոսներին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը» (Մատթեոս 24.14): Եկեք բաց չթողնե՛նք մեր առաջադրանքը. հիմա՛ է ժամանակը: Այն մոտեցել է, և Նա մեր դռան մոտ է: Եթե չկատարենք մեր կոչումը, Աստված ստիպված կլինի բարձրացնել մեկ այլ սերունդ, ինչպես Հեսուի սերունդն էր, որպեսզի ավարտի Իր տունը, որովհետև Նա արդեն հայտարարել է, որ Իր տունը լեցուն է լինելու:

Մենք կատարում ենք Աստծո ծրագրի մեր մասը, երբ բազմապատկում ենք այն, ինչ Նա վստահել է մեզ: Մի՛ հուսալքվեք: Անկարևոր մի՛ համարեք ձեր գործը: Մի՛ կորցրեք ձեր ջերմեռանդությունը: Մի՛ հեռացրեք ձեր հայացքը Նոր կտակարանի երկնային տեսիլքից, որը պարզորեն պատկերվեց այս գրքում: Ձեր սերնդակիցներն սպասում են ձեզ: Ոմանք հուսահատորեն կարիք ունեն, որ հայտնեք նրանց Հիսուսին,

իսկ ուրիշները կարիք ունեն ստանալու Նրա խրախուսանքը և ուժը ձեզնից: Ձեր հավիտենական նախասահմանությունը նույնպես սպասում է ձեզ: Դուք հաջողության կհասնեք, եթե լիովին ապավինեք Նրա շնորհքին: Նա հավատարի՛մ է:

Ես դիմում եմ ձեզ որպես Աստծո թագավորության համաքաղաքացիների: Կատարե՛ք ձեր կոչումը և հաստա՛տ դարձրեք ձեր ընտրությունը: Անցե՛ք ձեր ընթացքը մինչև վերջ: Դուք ետ կնայեք տասը միլիոն տարի անց և կցնծաք, որ ճիշտ վարվեցիք: Դուք չեք կարող չափից շատ նվիրված լինել Աստծո կամքին: Այնպես որ, վազե՛ք ձեր ասպարեզը՝ հաղթելու համար:

Որպես վերջին խրախուսական խոսքեր՝ ուղղում եմ Պողոսի ջերմեռանդ աղոթքներից մեկը՝ բոլոր սրբերի համար.

> «Թող որ Տերն ավելի ու ավելի աճեցնի ձեր սերը մեկդ մյուսի և մարդկանց հանդեպ, որ ձեր սերն այնքա՛ն մեծանա, որքան մեր սերը՝ ձեր հանդեպ: Այսպես Նա կզորացնի ձեզ, և դուք կատարյալ և սուրբ կլինեք մեր Աստծո և Հոր ներկայության մեջ՝ երբ մեր Տեր Հիսուսը գա նրանց հետ, ովքեր պատկանում են Իրեն» (Ա Թեսաղոնիկեցիների 3.12,13, TEV):

Աստվածաշնչում գրված են բազմաթիվ խոսքեր հավիտենական վարձատրությունների մասին՝ շատ ավելի, քան կարելի է զետեղել այս գրքում: Դուք կարող եք գտնել մի շարք հատվածներ հավիտենական դատաստանների և վարձատրությունների հիմնական բնագավառների մասին DrivenByEternity.com/EternalRewards հղումով (անգլերենով):

ՀԱՐՑԵՐ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՎԵՑ, ԳԼՈՒԽՆԵՐ 13,14

1. Ձեր կյանքում կա՞ն այնպիսի բնագավառներ (միգուցե նույնիսկ գլխավոր բնագավառներից մեկը), որոնք անկարևոր կամ անհետաքրքիր եք համարում: Մտածե՛ք դրանց մասին երկնային տեսանկյունից: Ինչո՞ւ ձեր հավատարմությունն այդ անկարևոր թվացող բնագավառներում կարող է կարևոր լինել Աստծո համար:

2. Մեզնից շատերը բնազդորեն մրցակցում կամ համեմատվում են մարդկանց հետ: Ինչպե՞ս է փոխվում մեր մոտեցումն Աստծո թագավորության նկատմամբ, երբ չենք համեմատում մեզ ուրիշների հետ:

3. Արդյո՞ք ձեր կյանքում բազմապատկում կա: Կարո՞ղ եք արդյոք ավելի լավ կերպով տնօրինել ձեր ժամանակը, աղոթքները, տաղանդները և միջոցները:

4. Այս գրքի ամենասկզբում մեջբերեցինք Ա Հովհաննես 4.17-ը, որտեղ գրված է, որ մենք կարող ենք վստահություն ունենալ Քրիստոսի ատյանի առջև: Կարո՞ղ եք բացատրել այս խոսքը ձեր ներկա գիտելիքներով:

5. Ինչպե՞ս կարող եք նպատակաուղղված կերպով հավիտենական նշանակություն ունեցող կյանք կառուցել՝ սկսելով հենց այս պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ.

ԻՆՉՊԵՍ ՓՐԿՈՒՄՅՈՒՆ ԱՏԱՆԱԼ

«Եթե դավանես քո բերանով, որ Հիսուսը Տեր է, և հավատաս քո սրտում, որ Աստված հարություն տվեց նրան մեռելներից, կփրկվես: Որովհետև քո սրտում հավատալով է, որ արդարանում ես Աստծո առջև, և քո բերանով դավանելով է, որ փրկվում ես»:

— Հռոմեացիների 10.9,10, NLT

Աստված ցանկանում է, որ դուք հավիտենական հաջողություն ունենաք: Նա ի սրտե մտահոգված է ձեզնով և ցանկանում է, որ կատարեք Իր ծրագիրը ձեր կյանքի համար: Այնուամենայնիվ, կա միայն մեկ ճանապարհ դեպի ձեր նախասահմանությունը. դուք պետք է ընդունեք փրկությունն Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Հիսուսի մահվան և հարության շնորհիվ Աստված ճանապարհ պատրաստեց, որպեսզի մուտք գործեք Իր թագավորությունը՝ որպես Իր սիրելի որդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա ծրիաբար հավիտենական և առատ կյանք պարգևեց ձեզ: Փրկությունը՝ Աստծո պարգևն է ձեզ. դուք չեք կարող որևէ բան անել, որ վաստակեք փրկությունը կամ արժանանաք դրան:

Այս թանկ պարգևն ստանալու համար, առաջին հերթին դուք պետք է խոստովանեք Ձեր Արարչից անկախ ապրելու մեղքը (որովհետև սա ձեր գործած բոլոր մեղքերի արմատն է): Ապաշխարությունը՝ փրկություն ստանալու խիստ կարևոր պայման է: Պետրոսը պարզորեն նշեց սա Գործք առաքելոց գրքում՝ այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկություն ստացավ. «Ուրեմն, զղջացե՛ք և ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19): Աստվածաշունչը հայտնում է, որ մեզնից ամեն մեկը ծնվել է որպես մեղքի ստրուկ: Այս ստրկությունն սկիզբ է առել Ադամի մեղքից, ով առաջինը գիտակցաբար անհնազանդ եղավ Աստծուն: Ապաշխարելով՝ դուք որոշում եք կայացնում այլևս չհնազանդվել ձեր «ես»-ին և սատանային, ով ստի հայրն է, այլ՝ հնազանդվել ձեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով զոհել է Իր կյանքը ձեզ համար:

Դուք պետք է հանձնեք Հիսուսին ձեր կյանքի իշխանությունը: Հիսուսին որպես Տեր ընդունելը նշանակում է, որ դուք թույլ եք տալիս Նրան ղեկավարել ձեր կյանքը (հոգին, անձը և մարմինը) և այն ամենը, ինչ պատկանում է ձեզ. Նա բացարձակ իշխանություն է ստանում ձեր կյանքում: Այն պահին, երբ անեք սա, Աստված կազատի ձեզ խավարից և կտեղափոխի Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցում կկատարեք խավարից դեպի լույսը և կդառնաք Նրա զավակը:

Եթե ուզում եք փրկություն ստանալ Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

«Երկնայի՛ն Աստված, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքերի համար: Շնորհակալություն, որ չես թողնում ինձ այս վիճակում, քանի որ ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո Միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ես ապաշխարում եմ, որ եղել եմ Քեզնից անկախ և հավիտյան հանձնում եմ իմ կյանքը Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ, որ Դու իմ Տերն ու Փրկիչն ես: Ե՛կ իմ կյանքի մեջ Քո Հոգով և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ: Ես ուրանում եմ խավարի գործերը, որոնց մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար: Ես կապրեմ Քեզ համար՝ Քո շնորհքով, քանի որ Դու տվել ես կյանքդ ինձ համար, որ հավիտյան ապրեմ:

Շնորհակալություն, Տե՛ր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերում է, և համաձայն Քո Խոսքի՝ ես երբեք չե՛մ ամաչի»:

Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ այս հրաշալի լուրը պատմել մեկ այլ հավատացյալի: Նույնպես կարևոր է, որ դուք միանաք որևէ տեղական եկեղեցու, որը հավատում է Աստվածաշնչին, և հաղորդակցվեք այլ մարդկանց հետ, ովքեր կխրախուսեն ձեզ հավատքի մեջ: Կարող եք ազատորեն կապ հաստատել մեր ծառայության հետ (այցելե՛ք MessengerInternational.org կայքը), և մենք կօգնենք ձեզ եկեղեցի գտնել ձեր բնակավայրում:

Դուք հենց նոր ոտք դրեցիք ամենազարմանալի ճանապարհի վրա: Մաղթո՛ւմ եմ ձեզ առատ հայտնություններ, շնորհք և ընկերություն Աստծո հետ ձեր ամենօրյա կյանքում:

ԱՇՈՒՄՆԵՐ

Գլուխ 1

1. *«Վեբսթերի անգլերենի լիակատար բառարան»* (Նյու Յորք, «Gramercy», 1993թ.), «հավիտենություն» բառահոդվածը:
2. *«Ամերիկյան ժառանգության անգլերենի բառարան»*, չորրորդ հրատարակություն (Նյու Յորք, «Houghton Mifflin», 2000թ.), «հավիտենություն» բառահոդվածը: Հավիտենություն. «*հավիտենական լինելու վիճակ կամ հատկանիշ.* հավիտենական. *ժամանակից դուրս գոյություն ունեցող.* այստեղից՝ *ժամանակից դուրս գոյության վիճակ»:*
3. Մերիլ Ֆ. Անգեր, *«Անգերի նոր աստվածաշնչյան բառարան»*, Ռ.Կ. Հարիսոնի խմբ. (Չիկագո, «Moody», 1998թ.), «BibleSoft PCStudyBible», 4-րդ թող.:
4. Ռոբերտ Յանգ, *«Յանգի Սուրբ գրքի բառացի թարգմանությունը»* (Գրանդ Ռեփիդս, Միչիգան, «Baker», 1986թ.):

Գլուխ 3

1. Հայտնություն 2.23, AMP
2. Ղուկաս 16.2
3. Եբրայեցիների 4.13, AMP
4. Հովհաննես 8.24
5. Գործք 4.12, AMP
6. Հակոբոս 2.10, TLB
7. Եփեսացիների 2.8,9, NLT (*Աստված* անունը փոխվել է *Զեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
8. Ժողովող 9.5,6, NLT
9. Առակաց 24.20, NLT
10. Առակաց 13.13
11. Մատթեոս 22.13,14
12. Հայտնություն 22.14,15
13. Տիտոս 1.16, NLT *(Աստված* անունը փոխվել է *Զեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
14. Ղուկաս 6.46, TEV
15. Մատթեոս 7.21–23, TLB *(Երկինք* բառը փոխվել է *Աֆաբելի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
16. Հակոբոս 2.14, 17–20, NLT *(Աստված* անունը փոխվել է *Զեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
17. Եզեկիել 18.25, 27,28, TLB
18. Սաղմոս 50.16–21, TLB
19. Մատթեոս 22.13
20. Առակաց 30.12
21. Մատթեոս 24.12,13, TEV
22. Բ Պետրոս 2.20,21, TEV *(Հիսուս Քրիստոս* անունը փոխվել է *Զեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
23. Եզեկիել 18.24–27, NLT
24. Մատթեոս 24.13
25. Հայտնություն 3.5, NASB
26. Առակաց 21.16, NIV

27. Մատթեոս 22.13,14
28. Եբրայեցիների 10.26,27,30,31, NLT *(Աստված* անունը փոխվել է *Զեյլոնի՝* պատմությանը համապատասխանելու համար)
29. Հակոբոս 3.1, NLT *(եկեղեցի* բառը փոխվել է *դպրոցի,* և *Աստված* անունը փոխվել է *Զեյլոնի՝* պատմությանը համապատասխանելու համար)
30. Մարկոս 9.42
31. Ղուկաս 12.45–48, NLT
32. Հուդա 13, TEV
33. Մատթեոս 22.13,14
34. Հայտնություն 16.5–7, TEV

Գլուխ 4

1. *«Ամերիկյան ժառանգության բառարան»*, երրորդ հրատարակություն (Նյու Յորք, «Houghton Mifflin», 1992թ.), «տարրական» բառահոդվածը:

Գլուխ 5

1. Ֆիլմերի վերանայումներ. *«Մատրիցա»*, http://www.pluggedinonline.com/movies/movies/a0000128.cfm, մուտքը՝ սեպտեմբերի 5, 2005թ.:
2. Ալեքսանդր Ռոբերտսի և Զեյմս Դոնալդսոնի խմբ., *«Նիկիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Պոլիկարպոս. նամակ փիլիպեցիներին», 10 հատոր (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 1:
3. Ալեքսանդր Ռոբերտսի և Զեյմս Դոնալդսոնի խմբ., *«Նիկիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Պոլիկարպոս. նամակ փիլիպեցիներին», 10 հատոր (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 2:
4. Ալեքսանդր Ռոբերտսի և Զեյմս Դոնալդսոնի խմբ., *«Նիկիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Կղեմես Հռոմեացի. նամակ կորնթացիներին», 10 հատոր (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 32:
5. Ալեքսանդր Ռոբերտսի և Զեյմս Դոնալդսոնի խմբ., *«Նիկիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Կղեմես Հռոմեացի. նամակ կորնթացիներին», 10 հատոր (Գրենդ Ռեփիդս, Միչիգան, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 34:
6. Դեյվիդ Ու. Բերկոտի խմբ., *«Վաղ քրիստոնեական հավատալիքների բառարան»* («Hendrickson Publishers, Inc.», 1998թ.), էջ 586:
7. Նույնը:
8. Ջոշ ՄաքԴաուել, *«Վճռական վկայություն»* (Սան Բերնարդինո, Կալիֆոռնիա. «Here's Life Publishers», 1972թ.), էջեր 50–52:

Գլուխ 6

1. Քենեթ Հեգին, *«Ես հավատում եմ տեսիլքներին»* (Տալսա, Օկլահոմա, «Faith Library Publications», 1984թ.), էջեր 68–71 (երկրորդ հրատարակություն, տասներորդ տպագրություն):
2. ՄԱԸ Ձեռնարկների շարքից, 1961–1997թթ., Միացյալ Աստվածաշնչյան Ընկերություն:
3. Դեյվիդ Ու. Բերկոտի խմբ., *«Վաղ քրիստոնեական հավատալիքների բառարան»* («Hendrickson Publishers, Inc.», 1998թ.):
4. Նույնը:
5. Նույնը:
6. Նույնը:
7. Նույնը:

8. *«Ամերիկյան ժառանգության անգլերենի բառարան»*, չորրորդ հրատարակություն. «Houghton Mifflin Co.», 2004թ. (ծրագրակազմի հրատարակություն):

Գլուխ 8

1. Ղուկաս 14.12–14
2. Մարկոս 12.43,44, TEV
3. Կողոսացիների 1.28 (*Քրիստոս* անունը փոխվել է *Ջեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
4. Եզեկիել 13.10,11, NIV
5. Ա Կորնթացիների 3.12–15, NLT
6. Ա Թեսաղոնիկեցիների 2.19,20, NLT
7. Մատթեոս 12.36,37, TEV
8. Առակաց 12.14, TEV
9. Երեմիա 11.20, NKJV
10. Երեմիա 17.10, NLT *(Տեր* անունը փոխվել է *Ջեյլոնի*՝ պատմությանը համապատասխանելու համար)
11. Ըստ Մատթեոս 25.34–40-ի (TEV)
12. Բ Կորնթացիների 9.10,
13. Բ Կորնթացիների 9.9, AMP
14. Ղուկաս 14.11, AMP
15. Ղուկաս 19.14, NLT
16. Հայտնություն 2.26,27, NIV
17. Մատթեոս 25.21

Գլուխ 9

1. Պատմության անունները փոխված են՝ գաղտնիության համար:

Գլուխ 10

1. Ջեյմս Սթրոնգ, *«Սթրոնգի Աստվածաշնչի սպառիչ համաբարբառ»* (Փիբոդի, Մասաչուսեթս, «Hendrickson Publishers», 1988թ.):
2. «Biblesoft»-ի *«Սթրոնգի նոր սպառիչ համաբարբառ»*, (Սիեթլ, Վաշինգտոն, «Biblesoft Inc.», 4-րդ թող., 1994թ.):

Գլուխ 12

1. Այս հատվածը փոփոխված է այն նյութից, որն առաջին անգամ հայտնվեց իմ *«Անկոտրում հոգի. այն զորությունը, որի կարիքը դուք ունեք՝ երբեք չհանձնվելու համար»* գրքում (Կոլորադո Սփրինգս, Կոլորադո, «Waterbrook Press», 2011թ.), էջեր 217–219:

Գլուխ 13

1. *«Վեբսթերի անգլերենի լիակատար բառարան»* (Նյու Յորք, «Gramercy», 1993թ.), «նախանձ» բառահոդվածը:
2. *«Ամերիկյան ժառանգության անգլերենի բառարան»*, չորրորդ հրատարակություն. «Houghton Mifflin Co.», 2004թ. (ծրագրակազմի հրատարակություն):

Գլուխ 14

1. Լեոնարդ Ռեյվենհիլ, «Սոդոմում Աստվածաշունչ չկար» (Մինեապոլիս, Մինեսոտա, «Bethany House», 1971թ.), էջ 155:
2. Ռեբեկա Ռուտեր Սփրինգեր, *«Իմ երազը Երկնքի մասին», տասնիններորդ դարի դասական հոգևոր աշխատություն, որի սկզբնական վերնագիրն էր «Ինտրա Մուրոս»* (Ցինցինատի, Օհայո, «Harrison House»), էջ 21:

ԿՅԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ԹՇՆԱՄԱՆՔԻ

Ընդունե՛ք ձեր ինքնությունը և իրականացրե՛ք ձեր կյանքի նպատակը՝ շփոթությամբ և մրցակցությամբ լի այս աշխարհում:

Մենք դիտարկում ենք մարդկանց որպես թշնամիների և սահմանափակում ենք մեր կյանքը՝ շարունակ համեմատվելով և մրցակցելով նրանց հետ: Նման վերաբերմունքը խորը հիմքեր ունի: Մենք թշնամի ունենք, ով հարձակում է գործում մեր մտքի, կամքի և զգացմունքների վրա: Նրա նպատակն է՝ թշնամացնել մեզ թե՛ ինքներս մեզ, թե՛ մեկս մյուսի հետ: Մենք ասես փակ շրջանում ենք, որը մեկուսացնում է մեզ մարդկանցից, կասկածի է ենթարկում մեր ինքնությունը և սահմանափակում է մեր արդյունավետությունը:

«Կյանք՝ առանց թշնամանքի» գրքում հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը ցույց է տալիս, թե ինչպես է հայտնությունն Աստծո սիրո մասին քանդում այս սահմանափակումները: Դուք կսովորեք այլևս չդիտարկել մարդկանց որպես թշնամիների և սերտ հարաբերություններ կկառուցեք ձեր փափագելի Ստեղծողի հետ, ինչի շնորհիվ կբացահայտեք ինքներդ ձեզ և մտերմորեն կճանաչեք Նրան:

Լիզայի առողջ աստվածաշնչյան ուսմունքը՝ հագեցած մեր օրերի վերաբերյալ մարգարեական խորաթափանցությամբ և համեմված հումորով ու ավյունով, կոչ է անում ձեզ քայլ անել դեպի կյանք՝ առանց թշնամանքի:

Դիտե՛ք և ներբեռնե՛ք լրացուցիչ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հետևյալ կայքից:

CloudLibrary.org
CLOUD LIBRARY

«Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության նպատակն է՝ օգնել անհատներին, ընտանիքներին, եկեղեցիներին և ազգերին գիտակցել և վերապրել Աստծո Խոսքի վերափոխող զորությունը:

Շնորհիվ այս գիտակցման՝ կփոխվեն թե՛ մարդիկ, թե՛ ամբողջ բնակավայրեր, և հասարակությունը գործուն կերպով կպայքարի այս աշխարհը կեղեքող անարդարության դեմ:

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որը թույլ է տալիս ամբողջ աշխարհում գտնվող հովիվներին և առաջնորդներին ստանալ անվճար թվայնացված ուսումնական նյութեր՝ իրենց լեզուներով:

Այցելե՛ք **CloudLibrary.org** կայքը և օգտվե՛ք Զոն և Լիզա Բիվերների մի շարք այլ նյութերից ավելի քան 80 լեզուներով:

էլեկտրոնային գրքեր, աուդիո և վիդեո ուսուցումներ, աուդիո գրքեր, Աստվածաշնչեր...

CLOUD LIBRARY

Ցանկանում եք ավելի՞ն: Տեսածրե՛ք պատկերակը.

ԱՖԱԲԵԼ
ԱՈՒԴԻՈ ԹԱՏՐՈՆ



«Աֆաբելը» էպիկական այլաբանություն է՝ գրված Զոն Բիվերի կողմից: «Աֆաբելը» պատկերում է երկրային տիրույթից դուրս գտնվող իրականությունը և ներկայացնում է բազմաթիվ ճշմարտություններ Աստծո թագավորության մասին: Անչափ կարևոր է, որ հավատացյալները հավիտենական հեռանկար ունենան, սակայն, երբեմն այնքան էլ հեշտ չէ ըմբռնել հավիտենությունը:

Միացե՛ք վեհանձն Զեյլոն թագավորին, խավարի տիրակալ Դագոնին, Անկախին և մյուսներին, և բացահայտե՛ք հիասքանչ Աֆաբել երկիրը և սարսափազդու Լոնի խավար սահմանները: Այս պատմությունը մարտահրավեր կնետի ձեզ, երբ դրա հերոսները բացահայտեն այն, ինչ կա ձեր սրտում:

Դուք մեծ հետաքրքրությամբ կունկնդրեք «Աֆաբել» աուդիո թատրոնի բոլոր մասերը: Այս դինամիկ և պատկերավոր նյութը «Հավիտենությամբ շարժվողները» ուղերձի մասերից մեկն է:

Նույնպես հասանելի է CloudLibrary.org կայքում

CLOUD LIBRARY

ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Զոն Բիվերի «Հավիտենությամբ շարժվողները» հավաքածուի մի մասն է: Կարդալով և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք կարող եք գտնել գրքին կից DVD սկավառակում, ինչպես նաև՝ ներբեռնել CloudLibrary.org կայքից, դուք ամբողջությամբ կուսումնասիրեք այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Շնորհիվ դասընթացի՝ ձեր քրիստոնեական ընթացքը կզորանա, և դուք կկարողանաք ավելին անել Աստծո համար:

«Հավիտենությամբ շարժվողները» հավաքածուն բաղկացած է հետևյալ մասերից.

- *«Հավիտենությամբ շարժվողները» գիրք*
  Այս դասընթացի միակ տպագրված մասը:
  Գիրքը նույնպես առկա է հավաքածու-սկավառակում՝ PDF ձևաչափով:
- *«Հավիտենությամբ շարժվողները» DVD սկավառակ*
  Կից սկավառակը պարունակում է այս դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարողանա նվագարկել այն ձեր տնային DVD նվագարկիչով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետների, համակարգիչների և սմարթֆոնների մեջ:
- *«Հավիտենությամբ շարժվողները» աուդիո գիրք*
  «Հավիտենությամբ շարժվողները» գրքի բոլոր բաժինները՝ ընթերցված հայերենով, MP3 ձևաչափով:
- *«Հավիտենությամբ շարժվողները» վիդեո դասեր*
  Բոլոր 6 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:
- *«Ալֆաբել» աուդիո թատրոնը՝ MP3 ձևաչափով*
  Աուդիո ներկայացում՝ MP3 ձևաչափով:
- *Հավելյալ նյութեր*
  Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է Զոն և Լիզա Բիվերների այլ գրքեր և նյութեր, ներառյալ՝ *«Կյանք՝ առանց թշնամանքի», «Բարի՞, թե՞ Աստված», «Պատմություն ամուսնության մասին» և «Սուրբ Հոգի»* էլեկտրոնային գրքերը:

ԱՅՍ ԴԱՐՆԱՑԻ ԲՈԼՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆՎԵՐ ԵՆ ՁԵԶ ՀԱՄԱՐ



Ազատորեն կրկնօրինակե՛ք այս DVD սկավառակը, պատճենե՛ք դրանում առկա նյութերը, ուղարկե՛ք դրանք ձեր ընկերներին էլեկտրոնային փոստով, պատճենե՛ք տեքստը և տեղադրե՛ք «Word» ֆայլերի մեջ, տրամադրե՛ք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնե՛ք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել: Տարածե՛ք այս նյութերն ամենուր, որտեղ մարդիկ քաղց ունեն Աստծո Խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

Հավելյալ տեղեկություն *«Հավիտենությամբ շարժվողները»* հավաքածուի նյութերի մասին.

- *Դուք չեք կարող նվագարկել այս DVD սկավառակի նյութերը սովորական վիդեո նվագարկիչով:* Քանի որ DVD սկավառակը պարունակում է տարատեսակ նյութեր, օրինակ՝ վիդեո, աուդիո և տեքստային ֆայլեր, դրանք կարելի է նվագարկել և դիտել միայն համակարգչի կամ այլ թվային սարքի միջոցով:
- Դուք կարող եք բեռնել *MP4 ձևաչափի վիդեո ֆայլերը* ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել *MP3 ձևաչափի ֆայլերը* ձեր աուդիո նվագարկիչի, սմարթֆոնի կամ համակարգչի մեջ:
- Դուք կարող եք բեռնել *PDF ձևաչափի ֆայլերը* ձեր պլանշետի կամ համակարգչի մեջ: Դուք կարող եք հեշտորեն կարդալ, տպել կամ կրկնօրինակել դրանք, ինչպես նաև՝ տեղադրել հատվածներ գրքերից ձեր իսկ ֆայլերի մեջ:
- Դիտե՛ք և ներբեռնե՛ք լրացուցիչ ուսումնական նյութեր բազմաթիվ լեզուներով հետևյալ կայքից:

CloudLibrary.org
CLOUD LIBRARY

Դուք կարող եք դիտել և ներբեռնել այս դասընթացը, ինչպես նաև Զոն և Լիզա Բիվերների բազմաթիվ այլ ուսմունքներ՝ այցելելով «Մեսինջեր ինտերնեյշնլ» ծառայության անվճար ինտերնետային կայքը.

CloudLibrary.org

Դուք կարող եք դիտել և ներբեռնել լրացուցիչ նյութեր բազմաթիվ լեզուներով YouTube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերից:

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅՈՒՆ Է ՊՊԱՍԱՎՈՒՄ ՁԵԶ

Պատկերացրեք, որ դուք մասնակցում եք մի փորձի, ըստ որի ձեր հաջորդ 24 ժամը որոշելու է ձեր մնացած կյանքի որակը: Այդ փորձը հաշվի է առնելու ամեն ինչ՝ սկսած ձեր աշխատանքից մինչև այն թաղամասը և տունը, որտեղ ապրում եք, որպեսզի որոշի, թե ինչպես եք դուք անցկացնում այդ մեկ օրը: Ինչպիսի՞ մոտեցում կցուցաբերեիք այդ օրվա նկատմամբ: Ձեր վարքը նպատակաուղղվա՞ծ կլիներ, թե՞ դուք ինքնահոսի կթողնեիք ամեն ինչ և հույս կունենայիք, որ ամեն բան բարեհաջող կստացվի:

Միգուցե այս գաղափարն անհավանական թվա, բայց այն պարզապես հորինված չէ: Նման կերպով մեր այսօրվա որոշումներն ազդելու են մեր հավիտենական կյանքի վրա:

«Հավիտենությամբ շարժվողները» գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերն օգտագործում է դիպուկ այլաբանություն և վկայակոչում է բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներ՝ պարզորեն պատկերելով այն, թե ինչպես է մեր երկրային կյանքը որոշում մեր հավիտենական կյանքը:

Այն կյանքը, որն սպասում է մեզ այս աշխարհին հրաժեշտ տալուց հետո, պարզապես ինչ-որ վայր չէ, որտեղ մենք հայտնվելու ենք. այն շատ ավելին է: Մի՛ սպասեք՝ մինչև որ չափազանց ուշ լինի: Բացահայտե՛ք, թե ինչպես ապրեք, որ ձեր կյանքը նշանակություն ունենա այսօր և հավիտյան:

ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՀԱՎԻՏԵՆՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԸ» «DVD» ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Ջոն Բիվերը և նրա կինը՝ Լիզան, «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրներն են: Ջոնը քարոզիչ է, նաև՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխզիջման՝ նա համարձակությամբ և ջերմեռանդորեն քարոզում է ճշմարտությունը: Նա ցանկանում է սատարել տեղական եկեղեցիներին և ապահովել առաջնորդներին քրիստոնեական նյութերով՝ անկախ նրանց բնակության վայրից, լեզվից կամ ֆինանսական վիճակից: Մինչև օրս նրա նյութերը թարգմանվել են ավելի քան 90 լեզուներով, և միլիոնավոր օրինակներով բաժանվել են ամբողջ աշխարհում գտնվող հովիվներին և առաջնորդներին: Երբ Ջոնը տանն է, սովորաբար փորձում է համոզել Լիզային միասին գոլֆ խաղալ, նաև շփվում է իր չորս որդիների, հարսի և թոռնիկների հետ:

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքում.
CloudLibrary.org

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

CLOUD LIBRARY
Ցանկանում եք ավելի՞ն
Տեսնե՛ք պատերազմը